Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՄԿՐՏԻՉ
ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՓԱՐԵԿԱՅԻ

ՎԵՊ

ԵՐԵՎԱՆ «ԱՐԵՎԻԿ»
1989

Մարգսյան Մ. Դ.

Ս 259 Գրիգոր Նարեկացի։ Պատմավեպ։ / Մկրտիչ Մարգսյան; Եր.։ Արևիկ, 1989.— 384 էջ։

Տասներորդ դարի Հայաստանի համայնապատկերի վրա բարձրանում է հայ մեծագույն բանաստեղծ Գրիգոր Նարեկացու լուսավոր կերպարը։ Կենսագրական աղքատիկ տեղեկությունները լրացվել են գրողի երևակայությամբ՝ ավելի մեծ տարածք թողնելով հեղինակի ստեղծագործական ոգորումներին։

Ս $\frac{4803080201\ (74)}{707\ (01)\ 89}$ 16 — 89 ԳՄԴ 84 2 7 — 4

ISBN 5-8077-0177-1

© «Արևիկ» հրատարակչություն, 1989

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մայրս տնքում էր, վերջապես դարձավ ինձ.

—Որդիս,— ասաց,— գլխավացն ինձ կերավ, «Նարեկ» կարդա, թող չքվի...

Վերցրի աշխարհաբարի վերածված «Նարեկն» ու սկսեցի բարձրաձայն կարդալ։ Մայրս լուռ էր։ Նայեցի նրան։ Հայացքում այնպիսի վիրավորանք ու նախատինք կար, որ անմիջապես ցած դրի գիրքը։

— Ես խնդրեցի աստծո լեզվով «Նարեկ» կարդալ, գրաբար, իսկականը...

Հասկացա։ Բացատրվելու հարկ չկար։ Վերցրի Վենետիկյան «Նարեկն» ու ընտրեցի «Աղոթք վասն բժշկության» առաջարկվող Գ բանը (գլուխը) և սկսեցի կարդալ։ **«Եւ արասցես լինել դեղ առ ճնարս ցաւոց նոգւոց և մարմնոց քոց ստեղծուածոց՝ զայս կարգեալ սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո բարձրեալ...»**: *Մայրս լսում էր, ստեպ-ստեպ խաչակնքելով, լայն հորանջելով, պառավությունից խամրած նրա աչքերը ի զարմանս ինձ՝ փայլում էին։ Աղոթքն ավարտելուն պես, մայրս վեր կացավ, վերցրեց ափաչափ «Նարեկն» իմ ձեռքից, համբուրեց ու վերադարձրեց.*

— Մեռնեմ զորությանը, գլխացավս անցավ, ապրե՛ս, տղաս...

Մայրս՝ առողջացավ։ «Նարեկը» բուժեց նրան։ Ոչինչ չկա զարմանալու, ոչ մի առեղծված։ Այնքան մեծ է «Նարեկի» հմայքը և հավատը նրա գերբնական ու առեղծվածային զորության նկատմամբ, որ «Նարեկը» շրջանառության մեջ է ժողովրդական առօրյա, առտնին, տոնական, հարսանիքի, սգի, հիվանդության և եկեղեցական ժամերգություններին, մարդկանց հաղորդում է հույս ու լույս, հոգեկան անդորր ու ապաքինում, ուղղակիորեն ազդելով նրանց հոգեկան աշխարհի վրա և կատարում է զարմանք հարուցող հրաշագործություններ։ Եվ կարևորագույնը. նա հանճարեղ

պոեմ է, գեղարվեստական եզակիություն, որ առանց վախենալու մրցակցությունից և սնապարծությունից կարելի է դնել համաշխարհային գրականության ցանկացածդ գլուխգործոցի կողքին։ «Նարեկը» Մոսկվայում պայթեց թթվածնավոր ռումբի նման, խոստովանեց մոսկովյան բարձրակարգ ընթերցողը։ Նարեկացուն «ապստամբ հանճար» կոչեցին ֆրանսիացիները և նրան կանգնեցրին Դոստոևսկու կողքին, «Մատյանի» մեջ պեղելով մեր դարի և մեր ժամանակակցի մտահոգությունները։

Մոտենալով Նարեկացուն, ես պետք է խոստովանեմ, չէի պատկերացնում այն մեծ դժվարությունները, որ հետո, աշխատանքի ընթացքում, ծառացան իմ առջև։ Կրոնա-խոհական փիլիսոփայությունը, չթաքնվող խորհրդապաշտությունը, տագնապներն ու ընդվզումները, մարգարտաշող տողերի տակ պայթող ըմբոստությունն ու աստծո երեսին նետված շանթող մեղադրանքները վեպը տանում էին ներքին մենախոսության ճանապարհով, և ես առաջին պահ վախեցա, որ վեպը կատանա ստատիկ բնույթ, քիչ շարժում և խոհերի ու մտորումների գերկուտակում։ Դժվարությամբ հայտնագործվեց սյուժեն շարժուն, դինամիկ դարձնելու միջոցը՝ հնարքը։ Դրա մեջ պետք է որոնել նաև իմ որոշ «անհավատարմությունը» փաստերին և գրական ու իրական փաստերի համադրումը՝ հօգուտ գրականի։

Սա փաստագրական վեպ չէ։ Փաստական խիստ աղքատիկ տեղեկությունները բանաստեղծի կյանքի ու գործի մասին եթե վեպը որոշ իմաստով զրկում են վավերականությունից, միաժամանակ ազատում են հեղինակին փաստերին գերի մնալուց և նպաստում գրական փաստերի ազատ օգտագործմանն ու ստեղծագործական աշխատանքի առավել լայն հնարավորությանը։

Այսքա՜ն։

ՀԵՂԻՆԱԿ

ՄԻՆՉԵՎ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ...

Հանճարը ծնվում է ժամանակի պահանջով։ Աստվածատուր շնորհները անհատին ուղեկցում են և մղում ժամանակաշրջանի շիկացած, հրատապ, նույնիսկ պայթուցիկ խնդիրների գեղարվեստականացմանը։ Եվ կատարվում է հայտնության հրաշքը։ Անհատը, որ ժամանակի ծնունդն է, զավակը, ինքն է դառնում ժամանակի, իր դարաշրջանի ծնողը, նետվում է նույնիսկ ժամանակից առաջ, որպես իր օրերի հոգևոր օրենսդիրը, որպես դարերի ու հազարամյակների սահմանները չճանաչող մարգարե։ Հանճարի հայտնության հրաշքը՝ աստվածատուր շնորհների և ժամանակի շահագրգռությունների համաքայլի, միասնության մեջ է։

Ի՞նչ էր կատարվում աշխարհում հայոց մինչև Նարեկացու հայտնությունը, ինչպե՞ս նախապատրաստվեց նրա ծնունդը։

Դանակը հասել էր ոսկորին, սպառվել ժողովրդի համբերությունը։ Երկու հարյուր տարի անընդմեջ ծխում էր ազատագրման ընդվզման անթեղված հույսը և ահագնանում պայքարը Արաբական խալիֆայության դեմ։ Եվ վերջապես հույսը, երազանքը դարձավ իրականություն։ Սասունցիների և խութեցիների ապստամբությունը Հովնան Խութեցու գլխավորությամբ ավարտվեց ոչ միայն հայերի փայլուն հաղթանակով, այլև խթանեց Աղվանքի և Վիրքի ազատագրական ընդվզումները։ Արաբական երկդարյա տիրապետությունը, չնայած խալիֆայության ճիգերին, հոգեվարքում էր, արագորեն գնում էր դեպի կործանում։ Հայոց պատմության երկնակամարում բարձրանում էր Բագրատունյաց հարստության շողշողուն աստղը, որը պատմական մեծ առաքելություն ուներ կատարելու։ Նա արաբական լծի խորտակումից բացի պետք է վերականգներ հայկական պետականությունը, որն Արշակունյաց թագավորության անկումից հետո չորսևկես դար գահազուրկ էր։

Զգալով մահվան վտանգը, մոտիկությունը՝ գազանը զորահավաքի է ենթարկում ոչ միայն իր վերջին ուժերը, այլև ճարպկությունը, այլև խորամանկությունը։ Հայաստանի կառավարիչ արաբական ոստիկան

Ահմադ Իբն Խալիդը հայկական հարցն արագորեն և վերջնականապես լուծելու տենդով բռնված, դավադրություն սարքեց, որ հայերի համար պետք է վերջանար ազգային աղետալի ողբերգությամբ, ավարտվեց սակայն ավելի քան զավեշտական ձևով։ Դավադիրն ընկավ իր իսկ սարքած դարանը, ոչ միայն խայտառակ պարտություն կրեց, այլև դավադրության խափանումով հայ աշխարհը թոթափեց արաբական տիրապետության երկդարյա ծանր լուծը։

Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու կողմից զինաթափ են արվում Ահմադ Իբն Խալիդի զորքերն ու ազատ արձակվում, իսկ իրեն՝ ոստիկանին, որ Հայաստան էր մտել շուքով ու փայլով և պատվո հեծելազորի ուղեկցությամբ, Աշոտ Բագրատունու որդին՝ Շապուհը, ջորու վրա նստեցրած, տանում է մինչև Միջագետքի սահմանը և բաց արձակում. «Գնա՛, գնա՛ այնտեղ, որտեղից եկել ես»։

Ամենայն հավանականությամբ, այս անցքերը տեղի են ունեցել 874—875 թվականներին։ Հեռատես ու բանիմաց Աշոտ Բագրատունին կարողանում է կարճ ժամանակում կարգավորել միմյանց ծվատող և երկրի միասնականությունն ու պետականությունը թուլացնող նախարարների վեճերն ու երկպառակտումները, օգտագործելով և՛ բարեկամական կապերը (զորեղ նախարարներին խնամիանալով), և՛ դիվանագիտությունը, և՛ զորաց ուժը, քանզի Աշոտ Բագրատունին հզոր էր նաև ռազմական առումով։ Նա կարգավորում է իր աշխարհի հարաբերությունները նաև հարևանների՝ Վրաստանի, Աղվանքի, Աբխազիայի և այլոց հետ, իհարկե, շմոռանալով հզորներին՝ Բյուզանդիային և Արաբական խալիֆայությանը։ Վերջինիս էլ հայ նախարարները խնդրում են, որ Աշոտ Բագրատունուն թագադրի և հռչակի Հայաստանի թագավոր։ Ամիրապետը ճարահատյալ, չցանկանալով, համաձայնում է։ Հայ իշխաններին մերժելու նա ուժ և զորություն չուներ, բացի այդ իր մերժումը հայերին կտաներ խալիֆայության մրցակից ու հակառակորդ Բյուզանդիայի կողմը։ Ամիրայության շահերը պահանջում էին՝ ճանաչել Աշոտ Բագրատունուն հայոց թագավոր։ Ամիրապետի որդին Իսա Իբն Շայխը ժամանեց Հայաստան, խալիֆայից Աշոտին բերելով թագ, թագավորական ծիրանի, պարգևներ, նժույգներ, զենքեր և զարդեր։ Եվ արաբական լուծը թոթափելուց տասը տարի անց՝ 884 կամ 885 թվականին, վերականգնվում է հայոց պետականությունը։ Նախարարները, Գևորգ կաթողիկոսը հանդիսավոր կերպով թագադրում են Աշոտ Բագրատունուն, որին շուտով թագավոր ճանաչեց նաև Բյուզանդիան։

Պետականության վերականգնումը, խաղաղության հաստատումն ու Աշոտ Բագրատունու խաղաղ ու շինարար գործունեությունը հսկայական

նշանակություն ունեցան հայոց աշխարհի բարգավաճման ու հզորացման համար։ Նվաճողների և ներքին երկպառակությունների դավերից ու խարդավանքներից ծվատված բաժան-բաժան երկիրը, թեև մեծ ջանքերի գնով, թեև դժվարությամբ, միավորվեց, ամբողջացավ և ամբողջանալով, հզորացավ, և հզորանալով ի լուր, ի տես աշխարհի՝ շահեց հեղինակություն և հզորներին հավասարվելու հնարք ու իրավունք։ Հայ շինականի քրտինքը նորից ծաղկեցրեց հողը, վերստին կենդանացան արհեստները, աշխուժացավ առևտուրը, մեծացան ու շենացան քաղաքները, վերընձյուղվեցին հայոց տաղերգությունը, ճարտարապետությունը և մանրանկարչությունը։ Աշոտ Բագրատունին բավականաչափ զորեղ, ընդարձակ և բարգավաճ երկիր թողեց հետնորդներին։

Չքվեց Արաբական խալիֆայությունը։ Ընկավ խալիֆայությունը, սակայն արաբների մի մասը չհեռացավ Հայաստանից։ Կազմավորվեցին, այսպես կոչված, արաբական ամիրայություններ, որոնք հաստատվեցին քաղաքներում, ուր գոյություն ուներ արաբ ազգաբնակչություն։ Գյուղերը զուտ հայաբնակ էին, իսկ արաբական գյուղեր Հայաստանում չկային։ Ամիրայության եզակի հենարանը արաբ տարրն էր, որ հիմնականում բաղկացած էր ռազմիկներից։ Ամիրայություններ կազմավորվեցին Մանազկերտում, Գողթնում, Բերկրիում, Դվինում և այլ քաղաքներում, դառնալով Բագրատունյաց թագավորության սովորական հպատակներ։ Իրենց գոյությամբ ամիրայությունները իսկական չարիք դարձան երկրի համար։ Խախտեցին ազգի միատարրությունը, երկրի կենտրոնական մասերում ստեղծելով օտար ազգաբնակչություն, որը հետագայում ծանր ազդեցություն ունեցավ հայ միասնական պետականության վերականգնման համար։ Ամիրայությունները սկզբից մինչև վերջ մնացին հայ թագավորության և պետականության երդվյալ թշնամիներ, թեև արտաքուստ ընդունում էին պետության և պետականության իրավունքն իրենց նկատմամբ։ Բավական էր սակայն, որ Հայաստանը ենթարկվեր նվաճողների հարձակմանը, որպեսզի ամիրայությունները, անկախ կրոնից ու ազգությունից, միավորվեին, դաշնակցեին հայոց թշնամիների հետ։ Ամիրայությունների դեմ պայքարելն ավելի դժվար էր, քան հայ կենտրոնախույս ուժերի՝ նախարարների դեմ։ Եթե վերջիններս ծառանում էին թագավորների դեմ, ապա կամ ինքնուրույնություն ձեռք բերելու, կամ արքայական գահին տիրելու համար։ Իսկ ամիրայությունները պայքարում էին գահի դեմ, պետականության դեմ, որոնցով ու դաշնակցելով օտար նվաճողներին։ Նրանց դեմ պայքարելու խնդիրը բարդ էր, ավելի զոհողություն, ավելի խոհեմություն, ավելի դիվանագիտություն էր պահանջում, քանզի նրանց հպատակեցնելու յուրաքանչյուր փորձ կա-

ող էր հարևան մահմեդական պետությունների հետ հարաբերությունների սրման կամ ընդհարման առիթ հանդիսանալ։

Ատրպատականի լայնածավալ տարածքի վրա զորեղանում էր Սաջյան ամիրայությունը, որ օգտվելով խալիֆայության թուլությունից դարձել էր ինքնուրույն իշխանություն և հասկանալի պատճառներով չէր հանդուրժում պետականության վերականգնումը Հայաստանում և նրա հզորանալը։ Ընկավ խալիֆայությունը, սակայն ուժեղացավ Ատրպատականի ամիրայությունը, աչքը շլելով հարևան Հայաստանի վրա։ Գազանի նման դարանած՝ նա սպասում էր հարմար առիթի, որ կատարեր իր արյունոտ ցատկը հայոց աշխարհի վրա։ Սակայն հեշտ չէր բզկտել ազատությունը վերանվաճած մի երկիր, որ գիտեր և՛ ազատության, և՛ իր հենած արյան գինը, և՛ ճանաչում ու վստահ էր իր ուժին։

Աշոտ Բագրատունուն փոխարինեց որդին՝ Սմբատը, արժանավոր հոր արժանավոր որդին։ Պատմում է Ստեփան Տարոնեցին. «Սրա և հոր իշխանության օրոք շենություն, խաղաղություն էր մեր հայոց աշխարհում, ըստ մարգարեության՝ ամեն ոք իր որթի և թզենու ներքո էր հանգստանում»։ Զորեղ էր հայոց երկիրը։ Սմբատի գերիշխանությունը ճանաչում էին ոչ միայն հայ հզոր նախարարությունները, այլև վրաց գահերեց իշխան Ատրներսեհը, Աղվանքի Համամ թագավորը, Մանազկերտի և Խլաթի արաբ ամիրաները։ Սմբատը առևտրական պայմանագիր կնքեց Բյուզանդիայի կայսր Լևոն Իմաստասերի հետ, որի նշանակությունը, իհարկե, լոկ առևտրական չէր, այլ քաղաքական դաշինք Բյուզանդիայի հետ։ Պայմանագրի նշանակությունը շատ ճիշտ կռահեց Ատրպատականի ամիրա Ափշինը։ Նա զորաժողով գումարեց ու հարձակվեց Հայաստանի վրա։ Սմբատը հակադրեց նրան 30 հազարանոց բանակը՝ ահարկու մի ուժ, որից սասանեց Ափշինը և տեսնելով, որ խոփը քարին պիտի առնի, գերադասեց ահից ծնված «բարեկամության» օգնությունը, զորքը ետ քաշեց և ցանկացավ հանդիպել իր բարեկամ Սմբատին։ Հանդիպեցին փոխադարձ նվերներով ու սիրալիրություններով և «եղբայրացած» բաժանվեցին։ Բայց խուլ պայքարը շարունակվում էր «բարեկամների» միջև։ Այնուհետև, խաղին խառնվեց Միջագետքի կուսակալ Ահմադ Շայբանին, որն արդեն թաթը դրել էր երկրի հարավ-արևմտյան նախարարությունների վրա։ Սմբատը 60 հազարանոց բանակով ելավ նրա դեմ և դավաճանությամբ պարտվեց։ Դավաճանը Արծրունյաց տնից էր՝ Գագիկ Աբումրվանը, երկպառակության որդը նորից սկսեց կրծել հայոց հզորությունն ու կենաց ծառը։ Սմբատի պարտությունը զգալիորեն թուլացրեց հայոց հզորությունը։ Պահը հարմար էր, և վերստին արթնացավ Ափշինը։ Սմբատի և Ափշինի միջև սկսվեցին անընդմեջ մարտերը փոփոխակի հաջողություններով։ Ափշինին փոխարինեց Յուսուֆը, առավել նենգ և նպատակին հասնելու մեջ ավելի հետևողական մի անձնավորություն։ Օգտագործելով երկրի կենտրոնախույս ուժերի, մասնավորապես Արծրունիների փառամոլ ու դավաճանական տրամադրությունները, այնուհետև հայոց սպարապետ Աշոտ Բագրատունու կամովին իրեն հանձնվելը և որոշ իշխանների վատ, անարի պահվածքը, Յուսուֆն սկսում է հայոց արքային որսալու իր տևական հետապնդումները։ Փրկության ելք չգտնելով, ի վերջո, Սմբատ թագավորը հանձնվում է թշնամու ողորմածությանը, բայց Յուսուֆը դրժում է իր գրավոր խոստումը, կտտանքների ենթարկում նրան, ապա գլխատում։

Սակայն գնալով ահագնանում է հայոց դիմադրող ոգին։ Հայերը պարտված չէին։ Կուտակվում և պայթելու առիթ ու ելք էր որոնում ժողովրդական ցասումը, երբ պատմության երկնակամարում փայլատակեց նահատակ Սմբատի որդու՝ Աշոտ Բ-ի բարկացայտ, արդար ու կորովի սուրը։ Զարմանալի թագավոր էր Աշոտը։ Գահ ունենալով, նա գահ չտեսավ, գահանիստ չունեցավ։ Մեկուկես տասնամյակ (914—929) թագավորելով՝ նա նույնիսկ անկողին չտեսավ։ Նա՝ ՄԵԾ ՎՐԻԺԱՌՈՒՆ, սուր էր բարձրացրել հայրենի թշնամիների և հորը տանջամահ անողների վրա և այդ սուրը երբևէ չհամակերպվեց պատյանի անգործությանը, չցանկացավ պատյան մտնել։ Պատմիչը վկայում է, որ Աշոտը մոլեգնորեն հարձակվեց թշնամիների վրա, ասես հոնական պատերազմ էր մղում սարակինոսների դեմ, և սրաթև արծվի նման նետվելով թշնամու վրա, ի սուր սուսերի մաշելով նրա զորքերը, կարճ միջոցում վերանվաճեց իր հոր պետության բոլոր ամրոցները։ Ռազմավարական բացառիկ տաղանդը, հմտությունն ու քաջությունը նրան դարձրին Աշոտ Երկաթ։ Խուսափելով բաց ճակատամարտից, նա հարձակվում էր հանկարծակի ու սրընթաց, և շփոթահար թշնամին մինչ կխորհեր դիմադրվելու հնարքի ու հնարավորության շուրջ, արդեն հաղթանակը խլված էր լինում նրանից։ Ժողովուրդը սիրեց իր թագավորին, քանզի նա բերում էր ազատություն և պարգևում հաղթանակի բերկրանքն ու հպարտությունը։ Աշոտ Երկաթի հաջողությունները ցրում էին բռնության ամպերն ու խաղաղություն նվաճում հայ բազմաչարչար ժողովրդի համար։ Միտումնավոր էր եղել հայոց աստվածը նրա նկատմամբ, օժտելով անընկճելիության, հզորության երկաթյա կամքով և սիրահարի խենթությամբ ու թուլության հասնող փխրունությամբ։ Որքան դաժան ու անզիջում էր նա իր հայրենիքի թշնամիների նկատմամբ, նույնքան քնարական մեղմություն և տղամարդկային տաք արցունքներ ուներ իր սիրեցյալի հանդեպ։ Որքան անողոք էր և անբեկ կենտրոնախույս, հայրենի հզորությունը փոշիացնող

ուժերի նկատմամբ, այնքան զորավարժ էր ու պաշտող հայրենի քաջերին ու նահատակներին։ Հայ էր ոտքից գլուխ, հայի դժվար հոգեբանությամբ ու ճակատագրով։ Այս զարմանալի Աշոտ Երկաթը կուրացրեց Ուտյաց իշխան Մովսեսին, որ ապստամբել էր իր դեմ, նույնպիսի արարքի համար նույն պատիժը սահմանեց իր աներոջ՝ Սահակ Սևադա իշխանի համար։ Նման հակասական բնավորություն ունեցող արքաներն ու պետական գործիչները սովորաբար լինում են թույլ ու անհաջողակ և իրենց կյանքն ու գործունեությունն ավարտում են անփառունակ ձևով։ Աշոտ Երկաթին սակայն սատարեց ժողովուրդը, հավատաց նրան և նրա զենքի զորությանը, ժողովրդական տաղերով պանծացրեց ու եկեղեցական հիմներով բուրվառեց նրա հաղթանակները, և ժողովրդի հավատին արքան պատասխանեց նորանոր հաղթանակներով՝ համարյա ամբողջությամբ ազատագրելով Բագրատունյաց հողերը։ Այնուհետև Աշոտ Երկաթը հարձակվեց Տփղիսի վրա, ջախջախեց Յուսուֆի զորքերը, գերեց ատրպատականցի արաբ մեծամեծներին՝ գերության մեջ գտնվող հայ իշխանների և նախարարների հետ փոխանակելու համար։

Սակայն թշնամին նենգ էր ու համառ, հեշտ անձնատուր լինողներից չէր։ Անհաջողություններից ու պարտություններից կատաղած Յուսուֆը դավեր էր որոճում սողոսկելու հայ իշխանատենչ նախարարների մեջ։ Որոնում էր թույլ օղակներ՝ միսը ոսկորից բաժանելու և հաշվեհարդար տեսնելու հայ ժողովրդի և հայոց արքայի հետ։ Եվ նա գնաց քստմնելի ու դաժան վրիժառության։ Խոշտանգում էր խաղաղ բնակչությանը, չհարցնելով կին ու տղամարդ, ծեր ու մանուկ։ Որտեղ ի զորու էր լինում ճնշել ժողովրդին, գերում, տեղահանում և քշում էր ստրկավաճառության շուկաները։ Վատթարանում էր երկրի վիճակը։ Ներազգային խժդժությունները արդեն ուղղվում էին թագավորի դեմ։ Ապստամբում է Ցլիկ Ամրամը։ Պատերազմ էր բորբոքվում Աշոտ Երկաթի և նրա հորեղբոր որդու՝ Աշոտ սպարապետի միջև, որին Հայաստանից հեռանալուց առաջ թագադրել էր Յուսուֆ ոստիկանը։ Դավաճանությունները, երկպառակությունները քայքայում էին երկրի տնտեսական և ռազմական հզորությունը, իսկ Բշիր ոստիկանը, օգտագործելով պատեհ առիթը, հալածում և հետապնդում է հայոց արքային։ Աշոտ Երկաթի վճռական գործողությունները պատակտիչ ուժերի դեմ շարժել էին նախարարներից ոմանց, նույնիսկ Հովհաննես կաթողիկոսի զայրույթն ու դժգոհությունը։ Հալածված՝ հայ իշխաններից և արաբ ոստիկանի համառ հետապնդումներից, Աշոտ Երկաթը մի քանի տասնյակ մարդկանցով ապաստանում է Սևանա կղզում, շրջապատված արաբական մեծաքանակ զորագնդերով։ Պատմիչներից ու գրողներից շատերը հակված են այն մտքին, որ Աշոտ Երկաթի

ինքնամեկուսացումը Սևանա կղզում արդյունք էր ծանր հուսահատության և բարոյական ցույց, խոովք՝ ի լուր և ի տես իշխանների տիրադավ և դավաճանական գործողությունների։ Կարևորը թագավորի արարքի գնահատությունը չէ, այլ ինքնաբանտարկման հետևանքը, որ հայոց պատմությանն ու ռազմավարությանը պարգևեց «Ծովամարտ» կոչվող մի հերոսամարտ, որը հայ ոգու, հայ կամքի և հայ զենքի փայլուն հաղթանակներից է։ Բշիրի բանբերներին արքան վերադարձրեց խաղաղությամբ, վստահեցնելով, որ կհամաձայնի նրա ողորմածությանը։ Եվ հակառակորդի աչքի առջև, տասնմեկ նավակներում յոթ տասնյակ խիզախ ու կորովի զինվորներ տեղադրելով, իր «նավատորմիկով» լողաց դեպի ափ և հանկարծակի նետերի տեղատարափով, անդիմադրելի և ահավոր կորուստներ պատճառելով հակառակորդին, մատնեց խուճապի։ Ընտիր և քաջակորով աղեղնավորները, որոնք «գրեթե մաղու ոչ վրիպեին», այնպիսի ջարդ տվին թշնամուն, որ գլխակորույս փախչող Բշիրը անգամ ժամանակ չունեցավ լրջորեն խորհելու իր հետագա անելիքի մասին։ Փախուստի ճանապարհին, ցանկանալով դույզն ինչ փրկել իր սասանված հեղինակությունը և պարտության խայտառակությունը, նա փորձեց դրավել Քեղա ամրոցը։ Բախվեց Գևորգ Մարզպետունու զորագնդին և երիցս ջարդուփշուր ու մազապուրծ, իր գնդի մնացորդներով իրեն հազիվ գցեց Դվին։

Աշոտ Երկաթը իր եղբորը՝ Աբասին, թողեց բավական բարվոք վիճակում գտնվող մի երկիր, ուր թեև չէր լուծված ներքին միասնականության կնճռոտ հարցը, վերջնականապես չէր պարտված արտաքին թշնամին, սակայն և առաջինները, և վերջինները այնքան զորեղ չէին, որ կարողանային սասանել վերընթացի մեջ գտնվող Բագրատունյաց գահը։ Աբասը թագավորեց երկար, թագավորեց խաղաղությամբ, շենացրեց աշխարհը, քաջազոր զորությամբ «յաղթող եղել շուրջանակի» և վտարեց հայ աշխարհից ասպատակներին և ասպատակելու վտանգը։ Հայաստանն այլևս հարկատու չէր օտարներին։ Երկրում սկսեց աշխուժանալ տնտեսական և մշակութային կյանքը։ Հայոց լեռնաշխարհից վտարված մուսաները վերստին տուն դարձան և հայ մտքի ու սրտի մարգարիտները միահյուսեցին ժողովրդի քրտինքից ծնված բարիքներին։ Շուրջ երկու հարյուր տարի ընդհատված շինարարական աշխատանքներն արթնացան նոր ուժով, հատկապես մեծ թափ ստացավ քաղաքային շինարարությունը։ Մեծացան ու շենացան քաղաքները, որոնց ծաղկումն ու եկեղեցական շինարարության վերելքը պարտադրեցին խոշոր ճարտարապետների ծնունդը։ Վանական համալիրների ծնունդը բերեց վանական դպրոցների, ձեռագրերի ծաղկման և նկարազարդման արհեստանոցների, գրչա-

տների, գրատուն-գրադարանների ստեղծման և գիտության վերընթացի լայն հնարավորություններ։ Սկզբնավորվեց հոգևոր մշակույթի մի նոր շրջան։

Քաղաքների ծաղկումն իր հերթին բերեց քաղաքացիական շենքերի ու կառուցվածքների, կամուրջների, ճանապարհների, իջևանատների ծավալման անհրաժեշտություն։ Նաև երկրի բնական հարստությունների օգտագործման պարտադրանք։ Սկսվեց երկաթի, պղնձի, ծծումբի, աղի, բորակի, ոսկու, արծաթի հանքավայրերի շահագործումը։ Հայաստանը թևակոխում էր զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանը։ Երկունքով էր բռնված երկիրը։ Սպասվում էր մեծ անհատների հայտնություն։ Եվ նրանք հայտնվում էին անհերթ հաջորդականությամբ։ Պատմիչը, ճարտարապետը, ծաղկողը, քարգործը, տաղերգուն լցնում էին մեր մշակույթի դատարկ տարածքները։ Արհեստավորների հոչակը իրենց ոսկե ձեռքերի դրոշմներով արտահանվում էր մոտ ու հեռու երկրներ՝ Մերձավոր Արևելքից մինչև Վենետիկ և Կովկասյան լեռներից մինչև Հինդ ու Չինումաչինի հեռավոր ու հեքիաթային աշխարհները։ Հայ կյանքը վերածնվում էր։ Մեծերով վերազինվում էին մշակույթն ու գիտությունը։

Տասներորդ դարում Աշոտ Ողորմած Բագրատունին Անին հոչակեց հայոց մայրաքաղաք։ Անին բուռն վերընթաց էր ապրում և կարճ ժամանակամիջոցում հատեց աշխարհի մեծ քաղաքների սահմանները և դուրս եկավ միջազգային ասպարեզ։ Այստեղ, Անիում, ստեղծվեցին քաղաքաշինության, ճարտարապետության, մանրանկարչության և այլ արվեստների այնպիսի արժեքներ, որ նրա հոչակը տարան աշխարհից աշխարհ։ Հազար ու մեկ եկեղեցիների քաղաք կոչելը եթե չափազանցություն է, չնայած այդպես էին կոչում օտարները, սակայն անկասկած է հարյուր ու մեկ եկեղեցիների գոյությունը։ Անին կարճ միջոցում ի մի բերեց հայոց մշակութային ու գիտական մտքի ձեռքբերումները և աշխարհի չորս ծագերն արտահանեց ոչ միայն հայ վարպետների հրաշագործությունները, այլև մտքի ու հանճարի փայլատակումները։ Ճարտարապետ Տրդատը ոչ միայն նախագծեց ու կառուցեց Արգինայի կաթողիկոսարանը, Անիի մայր տաճարը, անիական և ոչ անիական և բազում այլ կառույցներ, այլև կորով ու խիզախություն ունեցավ ձեռնամուխ լինելու բյուզանդական ճարտարապետության գլուխգործոցի՝ Այա-Սոֆիայի տաճարի վերականգնմանը, աշխարհի զարմացած աչքի առջև վերականգնելով նրա կուսական ամրողջությունը, քմահաճ գմբեթը, որին մերձենալու քաջություն չունեցան աշխարհի հոչակված ճարտարապետները։ Արծրունյաց աշխարհում ճարտարապետական հրաշքներ էր կերտում Մանուելը։ Աղթամարի Սուրբ Խաչ տաճարը նրա գլուխգործոցը եղավ և մեր

ճարտարապետության փառքերից մեկը։ Տրդատը և Մանուելը համարյա Գրիգոր Նարեկացու ժամանակակիցներն էին։ Նրա ժամանակակիցներից էին նաև Սանահինի ու Հաղպատի, Տաթևի ու Գնդեվանքի, Խծկոնքի ու Բջնիի և բազում այլ ուրիշ ճարտարապետական մեծագործությունների արարիչները, Գրիգոր Նարեկացու ժամանակակիցներից էին նաև «Մլքի թագուհու» ավետարանի և էջմիածնի ավետարանի ծաղկողներն ու մանրանկարիչները։ Խաղաղությունը ոսկեորում էր հայոց աշխարհը, բացում ապրելու, ստեղծելու, ստեղծագործելու և ստեղծելով՝ գոյատևելու հնարքն ու խորհուրդը։ Դարերով շղթայված ժողովրդի տաղանդը պարարտ հողի մեջ ընկած հունդի նման ծլել, ծլարձակել էր և բռնել վերելքի ուղին։ Նախանարեկացիական հայտնություններից հիշարժան են նաև խաչքարերի, այդ ասեղնագործ քարեղեն հրաշքների հայտնությունը, որոնք այնուհետև դառնում են հայկական քարարվեստի բազմադարյան ուղեկիցները։ Մեծացող քաղաքներից ու շեներից արդեն լսվում էին «Հայրենների», միջնադարյան Հայաստանի աշխարհիկ տաղերի ելևէջները.

— Թուխ, ամ տուր հատմի կալեդ,
Թե չէ կառնում պագ մ'երեսեդ...
— Կտրիճ, թե գնել կարես,
Ճորտակ, ու չեմ ծանտրագնոշ...
— Թուխ, ամ ծոցուդ գին հրամէ,
Գընեմ զքեզ, թե գնել կարեմ...

Ահավասիկ հայրեն Անիի կյանքից, տխուր իրողության մի պատկեր.

Քո ձագն ի Անի տեսա,
Ի Անի ու սուրբ Նշանի։
Քո ձագդ ի ծախողի գրկին,
Կու նայեր ի դեմ գնողին,
— Ծախեցեք ու մի՛ վախեք,
Վա՛յ հազար իմ կորսընողին...

Դժբախտաբար այս հայրենների մեջ մարդավաճառության, գերեվաճառության սոսկալի պատկերներն են, բնորոշ միջնադարյան Անիի կյանքին ու բարքերին, որոնք իրենց ծննդով նույնպես հասակակից են Գրիգոր Նարեկացուն։ Հայրենները կատարելագործվելով, ներառնելով հայրենիքի, սիրո, սոցիալական, պանդխտության և այլ թեմավտակներ, կարկաչում են միջնադարյան խավարի, մշուշների և քարուտների միջով, որպեսզի ուշ միջնադարում սնեն խոշորագույն սիրերգակ Նահապետ Քուչակի քնարը։

Իններորդ դարի հայ քաջարի ռազմիկ, նաև տաղերգու Եսայի Աբու Մուսեի անմահության հաղթաթուղթը լոկ մի բանաստեղծություն է։ Ուրիշ ոչինչ նրանից մեզ չի հասել։ Հայրենասիրական այդ տաղի մեջ կարդում ենք.

Դու՝ նպատակ, և աղեղն իմ՝ խոցոտիչ,
Դու՝ ախոյան, և մանկունքն իմ՝ հաղթանակ,
Դու՝ ոսոխ, և զորք իմ՝ դատապարտիչք,
Քո՝ պատերազմ, և մեր՝ հաղթություն,
Քո՝ մարմին, և իմ նիզակ,
Քո՝ պարանոց, և իմ սուսեր...

Բանաստեղծությունն ուղղված է արաբ Բուղա ոստիկանին, որի զորագնդի դեմ Քթիշ լեռան վրա ճակատամարտել է Եսայի Աբու Մուսեն։ Սակայն նախանարեկյան այս տաղն անկասկած արյունակցական հարազատություն ունի «Նարեկի» հետ և՛ արտաքին՝ ոճական կառույցով, և՛ ներքին՝ արյան և ոգու հարազատությամբ։ Իմացե՞լ է Գրիգոր Նարեկացին այս տաղի հեղինակին, եղե՞լ է ծանոթ այս բանաստեղծությանը, թե ոչ, դժվար է ասել, բայց հաստատ է մի բան, որ հայ բանաստեղծությունը այդ օրերին արդեն ունեցել է այն ազգային դիմագիծը, հայտնագործել է այն մեծ խորհուրդը, այն ճանապարհը, որով հետագայում պետք է ընթանար միջնադարյան հայ քնարերգությունը։

Իններորդ դարի վերջերին և տասներորդի սկզբներին հայ մշակույթը հաղթարշավում էր բոլոր ուղղություններով։ Քնարերգությունը, ճարտարապետությունը, մանրանկարչությունը, քարարվեստը (քանդակագործություն, խաչքար), ասես խոսքերը մեկ արած, նախապատրաստում, բացում և մաքրում էին ճանապարհը խոշոր խութերից, պատրաստվում ընդունելու հայ վաղ վերածննդի մեծաց մեծին՝ Գրիգոր Նարեկացուն։ Պետք է ծնվեր նա, ո՞ւմ սատանաները՝ հրեշտակ, բարեպաշտները՝ սուրբ, անաստվածները՝ աստված պիտի հռչակեին։ Նա աշխարհին պիտի բերեր տիեզերական մաքրության, կատարելության և աստվածային գթասրտության ու խղճի խորհուրդը, որը համառորեն, տենդորեն պետք է որոներ աստծո մեջ մարդուն և մարդու մեջ՝ աստծուն։ Աստծուց պահանջեր մարդկային վերաբերմունք մարդու նկատմամբ, մարդուց՝ աստվածային կատարելություն։ Վիճեր աստծո հետ և ընդվզեր աստծո դեմ, աղոթեր մարդու հոգու փրկության ու նզովեր նրան՝ մեղքերի ու արատների համար։

Գրիգոր Նարեկացու մանկության խաղընկերն է Սասունցի Դավիթը։ Միասին տասներորդ դարում մտան ասպարեզ։ Սասնա և Խութի լեռնե-

ռում այդ ժամանակ արդեն հյուսվում էր Սասնա ծռերի դյուցազնավեպը։ Ժողովուրդը ազգովի՝ կռում էր Թուր Կեծակին, որ կայծակելու էր դար ու դարեր՝ հանուն ազատության ու արդարության։ Արդեն լսվում էր Քուռկիկ Ջալալու բարակ խրխինջը։ Ժողովրդի տառապանքներից ու խիզախումներից զորեղանում էր թլոր շաղգամակերը, որ բարուրում իսկ չէր հանդուրժում և խորտակում էր երկաթյա շղթաները։ Նա սնվում էր կորեկի հացով և հայրենյաց սիրով։ Նրա երրորդ հարվածը, որ խորտակեց Մսրա Մելիքին, շարունակական կյանք ունեցավ և հարվածի շառաչյունը խառնվեց հայ ժողովրդի գոյատևման հազարամյա պայքարին։ Ի վերջո, ազատագրական պայքարը հասնում է իր ապոթեոզին՝ հաղթանակում է ազատատենչ հայ ժողովուրդը՝ Սասունցի Դավիթը, իսկ վերջնագծում ազատագրական պայքարը միահյուսվում է սոցիալական անարդարությունների դեմ մղվող պայքարին և Սասնա տան վերջին շառավիղը, անկարող լինելով հաղթահարելու չարիքը (նրա, այսինքն, արդարության ծանրության տակ գետինն այլևս չէր դիմանում, «հալևորցել էր), շարունակելու պայքարը, փակվում է ժայռի մեջ և սպասում, որ «աշխարք ավերվի, մեկ էլ շինվի»։

Երբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկույզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլենք էդտեղեն։

Սակայն պայքարն ավարտված չէր։ Սոցիալական շարժումներին հարկավոր էր հագցնել սրբազան արտահագուստ, որ անխոտոր ու հաղթական լիներ ավարտը։ Հայաստանում մոլեգնում էին Թոնդրակյան գյուղացիական կռիվները՝ եկեղեցու և վանական տիրույթների տերերի դեմ։ Ուռճացել էին վանքերը, վանքապատկան հողերը։ Գյուղացիների, շինականների հացն հանապազօրյա խժռում էին աստծո սպասավորները՝ աստծո և սրբերի անունից, վստահ երկնայինների սրբազան անձեռնմխելիությանն ու հավատի ամրությանը։ Բայց կրոնավորների, երկնային և աշխարհիկ սրբերի բանակներն ու մինչև ատամները զինված իշխանական զորագնդերն անկարող եղան կանգնեցնելու սովյալների ու ըմբոստների գրոհները, թեև փորձեցին արյամբ հագեցնել ապստամբների քաղցն ու ծարավը և արյամբ հանգցնել նրանց արդար ցասումը։ Ապստամբությունն առաջանում էր հրդեհի արագությամբ ու սաստկությամբ, բռնելով երկրի հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը։ Նրա կայծերը դուրս էին նետվում հայոց սահմաններից, և իշխանական ամրոցներն ու վանքերը դյուրավառ թղթի նման կուլ էին գնում ըմբոստության ճարակին։ Այն հունդերը, որ գցել էր Սմբատ Զարեհավանցին

գյուղացիության պայքարի արգավանդ հողում, երկու հարյուր տարի շարունակ մարտական վիճակի մեջ էր պահում շինականին և ահ ու սարսափի մեջ՝ հոգևորականությանը։ Համառությունը ծնում է դաժանություն։ Դաժանացան հայոց երկրի և հավատի տերերը, դաժանացան նաև ապըստամբները։ Պայքարն ընդունել էր սուր գաղափարական բնույթ։ Զենքի ավերածությանը միացան զրպարտությունները, բանսարկությունները, խարդավանքները, մատնությունները և պայքարի նողկալի ու անմարդկային այլ ձևեր։ Պայքարը սրվեց ու տեղափոխվեց վանքերն ու եկեղեցիները։ Սկսեցին հալածվել առաջադեմ և մտածելու ընդունակ հոգևորական գործիչները։ Թոնդրակյանի խարանը դարձավ մահակ ու պայթում էր և մեղավորի, և ավելի շատ անմեղ մարդկանց գլխին։ Բանադրվում և աղվեսադրոշմով խարանվում էին բոլոր նրանք, ովքեր փոքրինչ կասկածի տեղիք էին տալիս և ովքեր եռանդուն չէին թոնդրակյանների դեմ մղվող պայքարում։ Ովքեր պակաս անգթություն էին ցուցաբերում թոնդրակյանների նկատմամբ, նույնիսկ նրանք, ովքեր լռում էին։ Բոլորը, բոլորը աստծո թշնամիներն էին՝ հերձվածողներ, հեթանոսներ և այլն։ Թեժ տեղամասում էր գործում Գրիգոր Նարեկացին։ Այսօր դժվար է ասել, թե Խոսրով Անձևացի եպիսկոպոսի որդի Գրիգորը՝ Գրիգոր Նարեկացի կդառնա՞ր, եթե չլինեին թոնդրակեցիների պայքարի տաքնամյակները, թեև մեծ, հանճարեղ ածականները բոլոր դեպքերում նրա համար գոյականներ էին, աստվածատուր, բնածին իրենը, ինչպես սեփական մաշկը, ինչպես սեփական արյունը, ինչպես սեփական անունը... Մեծ մարդասերը հեշտությամբ չկարողացավ որոշել, չէր էլ կարող որոշել իր տեղն այդ պայքարում։ Աստծո՞ հետ, թե՞ շինականի... Իհարկե, աստծո, իհարկե, եկեղեցու։ Նույնիսկ ընդվզեց թոնդրակյանների դեմ։ Գրեց իր հռչակավոր «Թուղթը», անարգանքի սյունին գամելով ապստամբներին։ Սակայն ապստամբ էր նաև ինքը, և նրան չհավատացին։ Վերստին մեղադրեցին թոնդրակյանության մեջ՝ երկինքն ի վեր ընդվզող և աստծո հետ բանավիճող ապստամբ հանճարին։ Սակայն ինքը չէր կարող և չկարողացավ երկընտրանքը հաղթահարել, քանզի ժողովրդի պայքարին հակվելը կնշանակեր դավաճանել աստծուն ու եկեղեցուն և հակառակը։ Եվ բանաստեղծն ապրեց այս դժվարին դրաման՝ ինքնաբզկտմամբ, ինքնաձաղկումով, ինքնայրումով։ Ծառացավ աստծո դեմ, ընդվզեց և անիծեց թոնդրակեցիներին։ Քննության առավ աշխարհի սեն ու սպիտակը։ Հազար անգամ խռովեց, հազար անգամ զղջաց, հազար անգամ մեղա եկավ, հազար անգամ հաշտվեց աստծո հետ։ Մարդկային թերությունների և արատների համար հաշիվ պահանջեց նրանից։ Աստծո թերացումների համար հարձակվեց մարդկանց վրա, մեղադրեց նրանց աստվածուրացության մեջ և այլն, և այլն։

Հայ աշխարհի հեղաբեկումներից ծնվեց Գրիգոր Նարեկացին։ Խռովյալ, աստվածախանդ բանաստեղծը...

ԿՂԶՈՒՄ

— Որդյակ ի՛մ, Աղթամարում տոնախմբություն է, շինականներն ու ազատները, զորականներն ու վաճառականները, տներն իշխանաց ու նախարարաց ուխտագնաց են կղզին, մենք էլ ենք երթալու...

— Ե՞րբ ենք երթալու, ուսուցի՛չ...

— Առավոտ լուսույն, առավել ստույգ, լուսումութի սահմանին պիտի համփա ելնենք։

— Առիթն ի՞նչ է, ուսուցիչ,— հարցրեց Գրիգորը, նայելով Անանիա Նարեկացուն, որը մորուքը մատների մեջ խճճելով, ակնդետ էր ծփացող լճի հեռուներում երևացող թամբաձև կղզուն։

— Սուրբ Խաչ տաճարի արարման կես դարն է, զավակս, Հայաստան աշխարհի աստվածակերտ կառույցներից է, տիրոջն արժանի սրբատեղի և հավատավորին արժանի ուխտատեղի, դու այնտեղ եղել ես, Գրիգորիկ, եղե՞լ ես...

— Եղել եմ, ուսուցիչ, դու ես տարել։ Անմոռաց է կապույտի մեջ նավարկող ճերմակաքար կղզին, որի վրա բարձրանում է տաճարը՝ եռագոտի բարձրաքանդակներով, դրվագված, ասեղնագործված զարմանահրաշ պատկերներով։ Այդ ամենն անմոռաց են...

Աղամամութին, կարճատև ճիգերից հետո, երբ լույսն արշավեց աշխարհի վրա, նրանց նավակը մոտեցավ կղզուն և կառանվեց։ Կղզին մարդաշատ էր և արթուն։ Ուխտավորները կամ չէին քնել, կամ էլ արթնացել էին վաղուց և շարժման մեջ էին, աղմկոտ ու հանդիսավոր իրարանցման մեջ. նավակներն ու բեռնանավերը ապրանք էին բեռնաթափում, ապա աճապարում ետ, վերստին բեռնավորվելու, կղզի տեղափոխելով հսկայական քանակությամբ ուտելիք և գինի, ուխտավորների խմբեր ու մատաղացու անասուններ, լարախաղացներ, նվագածուներ և աճպարարներ, վրաններ ու վառելիք։ Թիվ չկար երիտասարդ մայրերին, որոնց գրկանոցներում ճչում էին բկլիկ ու առողջ մանկիկները, բերել էին կնքելու Ս. Խաչ վանքի ավազանում։ Թիվ ու համրանք չկար նվագածու խմբերին, գուսաններին, մանավանդ նրանց, որոնք զբաղված էին վրաններ խփելով, որպեսզի այրող արևից ստվերներ գողանան, քանզի կղզին քար էր ու

ժայռակոփ, և ծառերը գաճաճ ու անստվեր։ Ափին աղմուկ կար, հետո լրս-վեց կանացի ճիչ ու վայնասուն.

— Կղզուց օտարեք կաքավողներին. նրանց ներկայությունը սուրբ վայրերում աստվածընդդեմ է։ Մեղսական են նրանք, պագշոտ ու ցանկասեր, ախտավարակ և, մանավանդ, հերձվածող...

— Ջրասույզ արեք դրանց, սատանան՝ սատանայի ծոց...

Կարգապահպան վանականներն ու սպասավորները ժրաջանորեն ու կոպտաբար դեպի ջուրն էին հրում մի խումբ կաքավողների, որոնց ճիչն ու աղաղակը խլացնում էին կղզու բոլոր ձայները։ Պարող կանայք սկսեցին կռվել։ Նրանց բերող լաստը վերադառնում էր և ափից բավականին հեռու էր։ Կանայք կռվում էին կյանքի համար, քանզի հանդարտ ու առավոտյան արևի տակ տաքացող լիճը բաց բերանով սպառնում էր կլանել նրանց ջահել ու ծաղկուն մարմինները։ Նրանց ծովն էին հրում։

— Ուսուցիչ, մի՞թե աստվածընդդեմ չէ կաքավողների հետ նման ձևով վարվելը։ Ախր, նրանց ջրասույզ են անում...

— Նրանք անսուրբ են, Գրիգորիկ, իսկ վայրը սրբազան է և աստծո ոգեղեն նստավայրերից գուցե լավագույնը։ Անսրբությանը՝ մարմնականին ու տուփանքին, գումարվում են նաև թոնդրակյան խժդժությունները ու հերետիկոսական այպանքը, որոնք դատապարտելի են, վտանգավոր...

Հետո լսվեց մի ահավոր գոռոց։ Կաքավողներից մեկը խածել էր իրեն խոշտանգող երիտասարդ վանականի կոկորդն ու պոկվել նրանից։ Վանականը արյան մեջ խեղդվելով, թավալվում էր ու ջղաձգվում, իսկ հետամուտ զորականները աղջկան հալածում էին դեպի բարձրադիր ժայռը, որի տակ դավադրաբար ծփալով խշշում էին ալիքները։ Կատարվեց անսպասելին։ Աղջիկը, որ հալածվում էր դեպի քարափը, շեշտ մոտեցավ ժայռի պռնկին, մի պահ, մի վայրկյան ասես արգելակվեց և ապա նետվեց ներքև։ Մի քանի քայլ էր Գրիգորին բաժանում կաքավողից։ Նույնիսկ ճիգ արեց բռնելու աղջկան, բայց ուշ էր արդեն։ Կաքավողը սիրտ ցավեցնելու չափ գեղեցիկ էր, ու հրարձակ աչքերն այդ պահին՝ վճռական ու ատելավառ։ Պատկերը շքեղ էր ու զարհուրելի։ Քանդվող շրջազգեստից դուրս նետվող ճապուկ մարմինը մի պահ մնայն բոցավառվեց ներկանների զարմանքից լայն բացված աչքերի մեջ և անհայտացավ ալիքներում։

— Սատանան՝ սատանայի ծոց...— թքեց հնասպառ կարգապահպանը։

— Բայց նա լողում է, լողում,— ճչացին ներկաները։

Կաքավողն իրոք լողում էր։ Արդեն բավական հեռու էր ափից։ Լողում էր արագ, թեթև, ոսկեգույն մազերը ձուլվել էին ոսկեծուփ ալիքներին, իսկ լույս թևերն ասես պարում էին, կաքավում կղզում չկայացած պարը՝ ալիքների վրա։

— Բռնել նրան, նա մարդասպան է նաև, նա սպանեց աստծո սպասավորին... Նավակները իջեցնել ծով...— հրամայողն իշխան էր, որին Գրիգորը տեսնում էր առաջին անգամ։

Կրոնավորը չէր մեռել, նրան պատգարակով վանք տարան, որ վանական բժիշկը բալասաններ և աստծո հավատարմին խլեր մահվան երախից։ Մինչդեռ միջոցը ճակատագրական էր կաքավողի համար։ Նավակներն արագն սուրում էին նրա հետևից։

— Հասե՛ք, արա՛գ, արա՛գ...— գոռում էր ամբոխը։

Գրիգորը դողում էր ամբողջ մարմնով։ Սփրթնել էր, շրթունքները դողդողում էին, չգիտեր ուր գնալ, ինչպես պոկել հայացքը լողացող աղջկանից, որ նետի նման սուրում էր ալիքների միջով։ Գրիգորը չէր ցանկանում աղջկա մահը։ Ի՞նչ էր արել կաքավողը։ Չէր ցանկացել կամավոր մեռնել։ Իսկ ո՞վ է ցանկանում մեռնել։ Ոչ ոք։ Կյանքն այդ աղջկան պարգևել է տերն ինքը, իսկ տիրոջ ծառաները վայրագորեն, բոնի կերպով ցանկանում են այն խլել նրանից։ Ինչո՞ւ, ո՞ր իրավունքով։ Գրիգորը, որ հոյանցիկորեն տեսել էր կաքավողին, գիտեր, որ նա անսահման գեղեցիկ է, որ նման գեղեցկությունը արդարություն է իմաստավորում, որ նա իրոք արդար է, ինչպես առավոտյան արևը և, եթե այսօր նա կաքավեր ուխտավորների համար, ապա կրկնակի, բազմակի կգեղեցկանար այս ուխտագնացությունը, և ուխտավորների ուխտը ընդունելի կլիներ։ Եվ դողում էր, վախենում, որ հանկարծ չսպանեին աղջկան և մընթներ այս լուսե, այս շքեղ առավոտը։

— Հասե՛ք, հասե՛ք,— մռնչում էր ամբոխը։

Նավակները կորաձև մոտենում էին կաքավողին։ Փախչողի և հետապնդողների միջև գնալով փոքրանում ու կրճատվում էր տարածությունը։ Երևի աղջիկը սկսել էր հոգնել, երևի գնալով ահագնանում և կատաղի էր դառնում հետապնդումը։

— Աստվա՛ծ իմ...— մրմնջում էր Գրիգորը։

— Վա՞տ ես զգում, Գրիգորիկ,— բռնելով տղայի դողացող թևը, հարցրեց ուսուցիչը՝ Անանիան։

— Այո՛, ուսուցիչ,— կմկմաց տղան։

— Հաճո տեսարան չէ, որդիս։ Քեզ նմանները իրավունք չունեն ակնդետ լինելու այս հետապնդմանը։ Հեռանանք այստեղից, Գրիգոր...

— Չեմ կարող, ուսուցիչ,— տնքաց տղան։

— Ուրեմն գոցիր աչքերդ,— հորդորեց Անանիան։

— Չեմ կարող, ուսուցիչ, չեմ կարող, ախր, մե՞ղք է կաքավողը... Ախր, նրան կսուզեն, կկործանեն,— բողոքեց։

— Կամաց, Գրիգորիկ,— սեղմեց նրա ուսն ուսուցիչը։— Իմացիր, որդի՛ս, այս աղջիկը դատապարտված է, նրան անպայման կսուզեն, եթե չես կամենում հեռանալ, ուրեմն դիմացիր...

Իսկ հետապնդումը շարունակվում էր։ Կաքավողի շուրջ գնալով սեղմվում էր օղակը և ափը արձագանքում լողորդների յուրաքանչյուր շարժումին։ Ափին խոնված բազմության մեջ արդեն լսվում էին ձայներ հօգուտ փախստականի։ Կաքավողի թեթևասահ լողը, նրա խուսափուկ, անբռնելի և անորսալի ընթացքը, շարժումների զարմանալի նրբագեղությունը, սրընթաց ճեղքումները սկսում էին ոգևորել ժողովրդին, որն աղմուկ-աղաղակով քաջալերում էր լողորդուհուն.

— Տառեխ ի, տառե՛խ...

— Փախի՛ր, կաքավ, փախի՛ր...

— Ամոթ է, վերջ տվեք ի սեր աստծո, չեք տեսնում, որ տերն ինքն է զորավիգ կաքավողին...

— Մարդասպաններ, աստվածակերներ, բավակա՛ն է...

Հետապնդումը շարունակվում էր, և ափը դեռ հեռու էր և հազիվ թե այն փրկություն լիներ կաքավողին։ Ծռում էր բազմությունը, չարացած և հազարաշք, դիտելով ողբերգական ներկայացման վերջին արարը։ Օրհասն արդեն մոտ էր։ Նավակները կտրել էին նրա ճանապարհը և գոցել հետդարձի ուղին։ Աղջիկը ճարպկորեն խույս տվեց մոտեցող նավակից, որի վրա թիակը նիզակի նման բարձրացրած և հարվածի պատրաստ կանգնել էր զորականը։ Կաքավողը սահեց նավակի կողքով, արագորեն սուզվեց և ապա հայտնվեց ազատ տարածության մեջ, նավակից բավականաչափ հեռու։ Նավակը վերստին թափ առավ ու սուրաց նրա հետևից, թիակը շեշտակի կիսաշրջան կատարեց օդում և թափով իջավ ներքև.

— Ա՜խ...— հառաչեց ափը։

Հարվածն առանց քսվելու աղջկան չլմփաց ջրին, և հարվածողն իր իսկ թափից ընկավ լիճը։ Ափը խանդավառ ծափահարեց կաքավողին, քանզի նա ճարպկորեն փախել էր հարվածից և այժմ իր դահիճն իր ձեռքին էր։ Հաջորդ պահին նա ճանկեց հակառակորդի օձիքը և սուզվելով, խոշտանգողին քաշեց ներքև, ջրի տակ։ Երկար, անասելի երկար թվաց ներջրյա մարտը, աղջիկը հանկարծ խցանի նման դուրս նետեց իրեն, և նրա ձեռքին զորականի սաղավարտն էր ու թիակը։

— Կեցցե՛ կաքավողը, աղջկան փա՜ռք...— միաբերան եղավ ժողովուրդը։

— Վանահայր, կյանք շնորհիր քաջուհուն, նա աստվածաշնորհ է...

— Վանահա՛յր, հրամայիր դադարեցնել հետապնդումը, ամբոխը հուզված է և հակամետ անկարգության,— խոսում, խնդրում էին նույնիսկ իշխանազուները։— Կաքավողը հերձվածող չէ, այլ տիրոջ ստրկուհին, այլապես քո ծառաները զոհ չէին գնա չարաղետ միջոցին...

Իսկ լճի հեռուներում ավարտվում էր ողբերգությունը։ Մոտ գտնվող նավակից նետահարեցին աղջկան։ Նա թռչունի նման թափահարեց թևերն ու դադրեց կրծքին, մարմինը երկարեց ալիքներին և նետը կոկորդում՝ անշարժացավ։ Երկար, երկար օրորվում էր նրա կիսամերկ մարմինը փշաքաղված լճի մակերևույթին և ամբոխի աչքում, մինչև քշվեց լճի հեռուներն ու կուլ գնաց նրան։

— Ափսո՜ս...— հառաչեց ափը։

— Օրը վատ սկսվեց, Գրիգորիկ,— ասաց Անանիան,— ժողովուրդն այս պարագային հակամետ է սխալվողին և հակառակ, միշտ հակառակ բռնությանը։ Եթե անգամ հերձվածող էր կաքավողը, ապա ոգեկործան և դժնարարո եղան աստծո սպասավորները, պատճառ դառնալով երեք հոգու կործանման...

Ամբոխը հուզված էր, եռում էր։ Հայհոյում էին։ Ոմանք գործված անարդար վարմունքի դեմ, ոմանք ակամայից, անկարող զեկավարել ներքին բանավեճն ու հոշոտող զայրույթը։ Հայհոյանքները չունեին հասցե և հասցեատեր։

Գրիգորի հոգում կուտակված ցավը, պոռթկալու հնար ու ելք չունենալով, դառնում էր խղճի ձայն ու արցունք և դատարկում նրա մաքուր տխրությունն ու վիշտը։ Կաքավողի մահը հուզել էր նրան մինչև հոգու խորքը։ Նրա մեռած ու կրծքին թափված լուսե թևերը մեխվել էին կոպերի տակ. «Աստված չի ների այս անաստվածությունը։ Աստված բարեգո՜ւթ է։ Աստված չի կարող տեսնել ու անտարբեր մնալ, երբ սպանվում են լույսն ու գեղեցկությունը։ Աստված ամենատե՜ս է։ Աստված կօգնի արդարին և արդարությանը։ Աստված ամենահա՜ս է։ Կաքավողին սպաննեցին, մարեցին նրա մարմնավոր լույսը, բայց նրա ոգեղեն էությունն անմահ է, քանզի նա իր կյանքի վերջին ցոլանքներն ու գեղեցկությունն սպառեց բյուրերի աչքերի առջև, որ հիշվելիք է։ Եվ աստված նրա հետ է, որովհետև գեղեցիկ էր նրա մահը և արժանի աստծո ուշադրության։ Իսկ աստված համակ խիղճ է և արդարության հիմնադիր ու պաշտպան»։

— Ի՞նչ ես խորհում, որդիս,— խոսեց ուսուցիչը։ Գրիգորն ասես արթնացավ ոչ այն է քնից, ոչ այն է արթնությունից։ Հայացքը դատարկ էր՝ քաշված ներս, հոգու այն խորքերը, որ տեսանելի չեն նույնիսկ իրեն, որոնց գոյությունը դեռևս անմեկնելի է, անբացատրելի ու անպատկերելի։ Նայում էր իր մեջ, իր հոգուն։ Եվ իր մտքինն ու սրտինն առաքում

երկնային տիրոջը, որպես նրա առաքինության ու արդարության անկասկածելի հատկանիշ։ Ուսուցիչը նրա հայացքում ոչինչ չտեսավ։ Պատանին սիրտը թաքցրել էր հայացքից։ Հայացքը թափառում էր ներաշխարհում և դիպչելով հարցականների ու չգտնելով պատասխաններ, որոնում էր վերստին ինքնահայտնագործման տենդագին շարշարանքներում։ Հոգում երկնահաս բարձունքների կարոտ ուներ, բայց ոչ կարողություն։ Թռիչքների մոլուցք, բայց անվարժ ու թույլ էին թևերը։ Բանավիճելու ցանկություն, բայց չէր ճանաչում ընդդիմախոսին։ Պայքարելու խնդիր, բայց մարզված չէր։ Աստծո հետ խոսելու երազանք, բայց չգիտեր նրա լեզուն։ Հոգում փոթորիկներ կային, ինքն անկարող էր նավարկել։ Եվ միայն ի պատասխան ուսուցչի հարցման կարողացավ մրմնջալ.

— Ախր կաքավողը...— Եվ լռեց։

— Մոռացիր նրան, Գրիգոր, մոռացի՛ր։ Մոռացիր և մյուսներին։ Կյանքը, հոգիս, դժվար, շա՜տ դժվար բավիղներ ու պարունակներ ունի։ Մեր կյանքի տերը աստված ինքն է, եթե մեր արժանիքների հեղինակն աստվածն է, ապա մեր մեղքերի տերը մենք ենք, զավակս։ Այսօրվա չար դիպվածի համար էլ մենք ենք պարտ մեղանչել տիրոջ առջև։ Մոռացիր կաքավողի մահը, զի վարձակները՝ նրանց նախատատերը ծնունդ էին հեթանոսական ժամանակների, ծառա այլ աստվածության, որ ղեկավարվում է սատանայի կամքով։ Մոռացի՛ր...

— Բայց կաքավողն անմեղ էր, ուսուցիչ...

— Որտեղի՞ց է քեզ հայտնի նրա անմեղությունը...

— Նա գեղեցիկ էր, ուսուցիչ, հայտնապես գեղեցիկ...

— Գեղեցկությունը անմեղության չափանիշ չէ, տղաս։

— Եվ ոչ էլ չափանիշ է մեղքի։ Գեղեցկությունը աստվածային պարգև է, տաղանդ, սիրելիդ իմ ուսուցիչ...

— Գեղեցկությունը բորբորիտի և հերձվածողի համար ղենք է՝ հոգևոսպան, ոգեկործան և չարադետ...

— Բայց կաքավողը մի՞թե այդպիսին էր, ուսուցիչ...

— Հայտնի չէ, Գրիգորիկ, հայտնի չէ...

— Նա՝ այդ աղջիկը, նաև արի էր, քաջ էր, ուսուցիչ...

— Իսկ եթե նա ծառայում էր սատանային, ապա...

— Գեղեցկությունն ու քաջությունը միասին սատանային չեն կարող ծառայել։ Ոչ էլ սատանան է ի զորու իշխել այդպիսի մեկին։

Գրիգորը լռեց։ Ուսուցչապետը շփոթված էր. «Այս պատանու մեջ սաղմնավորվում է աստվածային հանճարը։ Ես այլևս անկարող եմ նրա հետ բանավիճել, տրամաբանել և մանավանդ հավատացնել ու համոզել։ Եվ զգայուն է հոգին տավիղի լարի նման։ Եվ պայծառ է միտքը։

Նրա մեջ խմորվում է երկրիս վաղվա հոգևոր հացը։ Տե՛ր, դու լեր օգնական այս անպատրաստ հոգուն, քո սիրեցյալը սեպիր և մեր գալիք փառքերից մեկը»։

Փողոց հնչեցին։ Երևաց Ս. Խաչ վանքի վանահայրը։ Ուր որ է սկսվելու էին Ս. Խաչ վանքին նվիրված հանդիսությունները։ Սպասում էին աշխարհիկ իշխանության, նախարարների և իշխանների ժամանելուն։ Շքեղ ու ծանրաշարժ նավեր և լաստեր էին կառանվում ափին։ Իշխաններն ու բդեշխները ժամանում էին զորաց թիկնազորով և իշխանական դրոշներով։ Շուտով կղզին ամբողջապես ծածկվեց գույնզգույն վրաններով, որոնց վրա փողփողում էր դրոշների բազմագույն անտառը։ Ներկայացել էին Ռշտունյաց, Մոկաց, Անձևաց, Բզնունյաց, Քաջբերունյաց, Ապահունյաց, Արծրունյաց տերերը և բազմաթիվ այլ տներ։ Ժամանել էին նաև նախարարությունների հոգևոր պետերը։ Աղթամարի կղզում ասեղ գցելու տեղ չկար։ Ստիպված էին հրամայել, որ ռամիկներն ու շինականները ազատեն կղզին։ Թիկնազորայինները և զինվորները ջանադրաբար սկսեցին կղզուց դուրս վանել բյուրավոր ռամիկների և մանավանդ մուրացիկների, գործի դնելով կղզում կառանված լաստերն ու նավակները, բացի զինանշաններով ու դրոշներով զարդարված նավերից։ Աղմուկ բարձրացավ։ Անեծքների ու բողոքի ձայներ լսվեցին։ Շատերը մատաղի անասուններով ու հիվանդներով էին ժամանել՝ հայցելու Սուրբ Խաչի օգնությունը, որ ախտազերծեր իրենց հարազատներին, հետևաբար չէին կամենում թողնել կղզին։

— Մենք աստծո դուռն ենք եկել, ոչ թե իշխանների,— հանդգնեց մեկը,— աստծո առջև բոլորս հավասար ենք...

— Կտրեք դրա լեզուն,— զորականներից մեկն էր, որ մտավ ամբոխի մեջ։— Ո՞վ էր հանդգնողը, ո՞վ էր հաչում իշխանների վրա։

Ամբոխը մռայլ ու սպառնագին լռությամբ ետ քաշվեց, ճանապարհ բացելով երիտասարդ ու ժրաջան զորականի առջև։

— Հարյուրապետ, որդի՛ս,— առաջ եկավ ալեհեր շինականը,— զուր եք ամբոխը տեղահան անում։ Ոչ ոք իշխաններին չի վիրավորել։ Այդ նրանք են, որ քշում են մեզ սուրբ կղզուց։ Եկել ենք երկրպագելու տիրոջը։ Մեղքերս խոստովանենք, մատաղ անենք ու նվիրատվություն մեր և մեր անցավորաց հոգիներին՝ ի փրկություն և ի գոհություն աստծո... Սուրբ Խաչը զորավոր է, զավակս...

— Հեռացե՛ք, հայրիկ,— մեղմացավ զորականը,— հրամանը հերքելը ոչ իմ, ոչ էլ քո բանն է...

Ամբոխը մոլտաց։ Հայտնի չէ, թե ինչով կավարտվեր այս վեճը, եթե չլավեր փողերի ձայն և հանդիսությունների արարողապետը չազդարարեր.

— Ոստանից ժամանեց Վասպուրական աշխարհիս տերը՝ Աշոտ-Սահակ արքան...

Պատվո զորաշար կազմվեց։ Դրանիկ դասակներն ու թիկնազորն անշարժացան լճափից մինչև տաճարի մուտքը բռնող տարածքին։ Հնչեցին կտրուկ հրամաններ.

— Զգա՜ստ...

Արևի տակ փայլեցին, մերկացան սրերը։ Դրոշները ծփացին։ Նիզակներն անտառվեցին և զորական շարքերի միջով, ընտանյոք հանդերձ, քայլ քայլեց արքան՝ ողջերթի ցնծագին բացականչությունների ներքո։ Տաճարի մուտքի առջև նրան դիմավորեց երկրի աշխարհիկ և հոգևոր պետերի ընտրանին.

— Ողջո՜ւյն նախարարացն Վասպուրական աշխարհի, ողջույն ծառայիցն աստծո...

— Ողջո՜ւյն արքային Վասպուրական աշխարհի,— միաձայն ողջունեց ընտրանին։

Արքան, հոգևորականների երգեցողության հնչյունների ներքո, մտավ տաճար։ Հանդիսություններն սկսվեցին։

— Աստվածային տաճարին մերձ զինավառ զորաց ներկայությունը մի՞թե անպատշաճ չէ,— լսվեց մեկի դժգոհ ձայնը։

— Ստիպված են, շինականն անհանգիստ է, հսկում են, որ անկարգություն չլինի, թոնդրակյաններն ամենուր են...

Բյուրավոր մոմերից ցերեկացած տաճարի պատերին անշարժացած սրբություններին էր հասնում խունկի բաց կապտավուն և ախորժահոտ ծուխը, որից աստվածամոր հայացքը շարժվում էր, և նա ասես սիրո և գորովանքի խոսքեր էր մրմնջում մանուկ Հիսուսին։ Տաճարը լցվում ու լցվում էր ուխտավորներով. դժվարացել էր շնչելը։ Եվ խստահայաց էր տիրոջ դեմքն այնքան, որ Գրիգորը վախեցած, ասես հրամանով, խաչակնքեց և հայացքը փախցրեց նրա որմնանկարից։ Ասես մեղավոր էր, ասես մեղանչել էր։ Աստծո դեմքից սրբվել էին գթասրտությունն ու ներողամտությունը և քարացել՝ պահանջկոտ հպատակության, անսահմանվիրումի հրամայող խորհուրդը։ Ժամերգությունն սկսվել էր, և տաճարի երգչախումբը թնդացնում էր օրհներգությունը.

Աղաչեմ առ քեզ, Քրիստոս փրկիչ,
Լուր զձայն աղաղակի յուսացելոցս ի քեզ,
Զերծոյ զմեզ նեղչաց մերոց...

Գրիգորը զմայլանքով լսում էր շարականը, և նրա անհագ, ագահ հայացքը թափառում էր տաճարով մեկ։ Ասես մարդկային ձեռք չէր դիպել

պատերին ու կամարներին, քիվերին ու սյուներին, տաճարն ասես երկնքից էր իջել, շքեղ ու ոչ ծանրանիստ և աստվածային հրաշքի արարումը հավիտենական գտել էր իր բնակատեղին։ «Ես քեզ չեմ տեսել, տե՜ր իմ, քանզի դու չես երևում անարժաններին, բայց ես իմ աչքով տեսնում և հայացքով շոշափում եմ քեզ ձոնված այս տաճարը, նա արժանի է քո մեծությանն ու վեհությանը, դու էլ աստվածայնորեն արժանի համարիր քեզ նրա վեհությանն ու հանճարակերտ հրաշքին»։ Եվ կծեց լեզուն։ Թունավոր միտք էր, որ իջավ հոգուն և խեղդվեց այնտեղ։ Տաճարի հրաշքը հայտնապես հուզել էր նրան։ Ո՞ւմ տալ առաջնությունը. միտքը սրվում էր ոչ հարկավոր ուղղությամբ։ Նա աստծո էության մեջ տենդորեն որոնում էր աստվածայինը, որ հաղորդվեր և հաղորդակցվեր։ Իսկ տաճարի կատարյալ ձևերի մեջ ճանաչել ու ընկալել էր ոգու կատարելությունը և ջանում էր համատեղել, որովհետև եթե աստված հավատ է, ապա ոգի է կատարելությունը, աստվածությունն ու կատարելությունը՝ արարելու ներշնչանք, ապրելու գաղտնիք և աստծուն մերձենալու և հաղորդակցվելու հնարք ու միջոց։ Աստված կատարելություն է և կատարելությունը աստվածային ներշնչանք է։ Գրիգորը փորձում էր մոտեցնել երկու եզրերը, սակայն ծայրերն իրար չէին գալիս։ Տաճարի հեղինակը՝ Մանուել ճարտարապետը վաղուց ոչ ևս է, չկա։ Սակայն տաճարն այս նրա անմահության վկայականն է և նրա կատարելության քարեղեն վավերականը։ Ուրեմն, թույլ տուր, երկնավոր, կատարյալը սրբացվի, աստվածացվի, չէ՞ որ այն կատարելություն է, որակի մաքրություն։ Չէ՞, չէր ստացվում։ Մտքերը ցավում էին, չէին բանաձևում, ինչպես հարկն է։ Հետո հայացքը սուրաց գմբեթն ի վեր, աղավնիներն այնտեղ սեր էին զունդունում, որ անլսելի էր ժամերգության խմբաձայնի մեջ։ Գուրգուրում էին իրար աղատ, անամոթ և անպայման երջանիկ։ Երկար նայում էր։ Հետո փախցրեց հայացքը, ամաչեց։ Թռչուններ են անմեղ ու կրքոտ, անտեղյակ, անհաղորդ իրենց սրբապղծությանը։ Մտել են աստծո տաճարը և սիրավառ զունդունոցի հնչյուններն են խառնում ժամերգությանը։ Եվ ճիշտ են նրանք, և սիրավայրը ճիշտ է ընտրված։ Չէ՞ որ աստված սեր է։ Աղավնիներն իջան աստվածամոր որմնանկարը լուսավորող լուսամուտագոգին։ Միասին՝ կտուց կտցի։ Գրիգորի հայացքը ևս վայրէջք կատարեց դեպի աստվածամոր պատկերը։ Տղան գոցեց աչքերը, շփոթվել էր։ Աստվածամայրը ծանոթ թվաց։ Մի թաքուն խորհրդավոր ժպիտ պահվել էր նրա շրթունքների անկյունում։ Հրավիրող, ձգող էություն ուներ որմնանկարը։ Տղան աչքերը չէր կամենում բացել, նա արդեն գիտեր, որ տեսածը ոչ այլ ոք է, քան կաքավողը, որին ժամ առաջ ջրասույզ արին։ «Եթե նա այստեղ աստվածուհի է, ինչպե՞ս, այդ ինչպե՞ս

սատանա դարձրին այնտեղ։ Աստվածուհին՝ սատանա... Անկարելի է։ Իսկ եթե տիրոջ ծառաներն ու սպասավորները թաքնված սատանաներ են, այլապես ինչպե՞ս կարող էին աստվածակերպ կնոջը սատանա հռչակել և շարաշար ու դժնի մահվամբ ջրասույզ անել»։ Ճիգ արավ, բացեց աչքերը։ Աստվածամայրն արտասվում էր։ Թվաց, այո՛, թվաց և պատանին չկարողացավ մեկնել հրաշքի էությունը։ Թևատարած ջահի մոմը թեքվել և կաթիլ-կաթիլ արցունքի նման կաթում և թրջում էր աստվածամոր այտերը։ Հրաշք չկար, կար հրաշքի ընկալումը, պատրանքը, տեսիլքը։ «Ջրասույզ արին, սպանեցին, իսկ նրա լուսեղեն կրծքով սնվում, կերակրվում է աստծո որդին, բոլոր աստվածությունները, աշխարհն ամբողջ, իսկ նրան ջրասույզ արին...»։

— Դու արտասվո՞ւմ ես, զավակս...— Անանիան էր։

— Զգիտեմ, ուսուցիչ, տկար է հոգիս, ինձ տանջում են տեսիլքները...

— Ի՞նչ տեսիլք է, Գրիգո՛ր...

— Աստվածամայրն արտասվում է, ուսուցիչ...

Անանիան նայեց աստվածամոր որմնանկարին և առաջին պահ ցընցվեց։ Նկարն արտասվում էր։ Չէ՛, խաբկանք չէր։ Արցունքները գլորվում էին այտերն ի վար, կուրծքն ի վար, կաթկթում Հիսուսի կուշտ դեմքին։ Հետո ճանաչեց, ընկալեց խաբկանքի գաղտնիքը։ Շրջվեց դեպի Գրիգորն ու դժվարությամբ ժպտալով, ասաց.

— Մոմն է կաթում, մոմն է արտասվում, մոմն է կենդանացնում որմնանկարը, մի հուզվիր, որդիս...

— Աստվածամա՛յրը, աստվածամայրը ծանոթ չէ՞ քեզ, ուսուցիչ...

— Զավակս, քեզ ի՞նչ է պատահել...

— Նայիր, ուսուցչապետ, լավ նայիր, աստվածամայրը խեղդված կաքավողն է...

Անանիան գունատվեց։ Օդը չէր հերիքում։ Պատկերն իրոք ծանոթ թվաց։ Կաքավողն էր։ Ուրեմն որմնանկարիչը կաքավողի մեջ տեսել է, հայտնագործել աստվածամորը։ Հայտնագործությունը զարմանք ու վախ պատճառեց ականավոր իմաստասերին ու գիտունին։ Չէ՛, այստեղ խառն է սատանայի մատը։ Իսկ ո՞ւր մնաց մաքրությունը, անսեղությունը։ Աստծո որդին կաքավողի գրկում։ Շնչասպառ էր լինում։ Դարձավ Գրիգորին.

— Դու հորինում ես, որդի՛ս, դու զգայուն ես և քեզ թվացել է։ Աղոթիր, զավա՛կս, աղոթիր, դատարկիր սիրտդ տիրոջ առջև, աստված կցրի կասկածներդ և հավատդ ու համոզմունքներդ կբուժի։ Աղոթի՛ր...

Ուսուցչապետը զայրացել էր, դառնացել։ Որմնանկարը հայտնապես վիրավորել էր տիրամորը, վիրավորել աստծո որդուն։ Հիսուսը կաքավողի գրկին, լրբի կուրծքը բերանին... Որպիսի՜ սատանայախաղ, ինչպիսի՜ աստվածապղծություն։ Թոնդրակը մտել է նաև այս տաճարը։ Մտել գաղտագողի, մտել հեթանոսի անթաքույց անամոթությամբ։ Հարկավոր է մտածել ու գտնել տաճարի սրբությունն ու մաքրությունը պաշտպանելու գուցեև անհնարին հնարքը։ Բայց ինչպե՞ս աստիճանազրկել, ինչպե՞ս անվավեր ճանաչել այս աստվածամորը, որ, ո՞վ իմանա, որքան ժամանակ պաշտվել է որպես սրբություն և աստվածություն, որն ունկնդրել է ամբոխի հեծեծանքներն ու բողոքները, բուժել հիվանդ ու անկամ հոգիներ, դարձել հույս ու հավատ։ Անանիան հասկանում էր, որ նման քայլի գնալ հնարավոր չէ, ինքը չի գնա այդ քայլին։ Հավատի պահապանների կարծրությունը կփշրի իր փխրուն հեղինակությունը, և ինքը կդիտվի որպես աստվածության թշնամի։ Նման համարձակությունը համազոր է ինքնասպանության։ Ո՞վ է նկարիչը։ Որոնել է պետք և կտրել աչը, այլապես նա բորբորիտներով և հեթանոսներով կլցնի աստծո տաճարը և ամեն աստվածություն կհալածի ու կփախցնի այստեղից։

— Աղոթիր, Գրիգոր, հոգիդ մաքրիր կասկածներից...

— Կասկածներ չունեմ, ուսուցիչ, համոզմունքս ամուր է, տիրամայրը կաքավողն է։

— Մտքերդ մեղավոր են, Գրիգոր, աղոթի՛ր...

— Փաստը, իրական փաստն է մեղսական, ուսուցիչ, աղոթքս ո՞ւմ ուղղեմ... Չէ՞ որ տիրամորը նետահարեցին, ջրասույզ արին...

Հետո կրոնավորների շքերթը եպիսկոպոսի առաջնորդությամբ, խունկ ու աղոթք բուրվառելով, պտույտ գործեց տաճարի շուրջը։ Հանդեսը հոյակապ էր։ Զարդարված էին կրոնավորները, շրջազգեստների մեջ փայլում էին իշխանների, բդեշխների, սեպուհների և նրանց թիկնազորի շարքերը։ Հոգեզմայլ մեղեդիները ճեղքում էին ամբոխի աղմուկն ու ծավալվում շորսդին, ծավալվում դեպի վեր՝ առ աստված, խունկի ախորժ բուրմունքը խեղդել էր արևի տակ այրվող ու քրտնաշաղախ մարմինների կծվահոտը։ Մուրացկանները ազատների գրպաններից դրամ շորթելու տենդագին եռուզեռի մեջ էին։ Իշխանական և նախարարական դրոշները գույնզգույն ծավալումով հետևում էին ամպհովանուն, որի տակ արծաթ խաչը ձեռքին քայլ էր անում հոգևոր առաջնորդը։ Ձեռքեր էին երկարվում դիպչելու նրան, ծնկաչոք՝ նրա քղանցքին, նրա աջին էին հպվում մոլեռանդ հավատացյալների շուրթերը, որոնց մեջ աղոթքի ու օրհնանքի շշուկներ կային։ Աղթամար կղզում ասեղ գցելու տեղ չկար։ Հանդիսա-

կանների մի մասը նույնիսկ նստելու հնար ու տեղ չուներ, որ խոնջացած մարմիններին ու երկար ճանապարհ կտրած ոտքերին հանգիստ տար։

Ժողովրդական հանդիսություններն ավելի տեսարժան էին։ Ռշտունիքից ժամանած վոշիկները կոխ էին բռնում ոչ ձեռնասուն արջերի հետ, գետնում նրանց, զարմանք պատճառելով ողջ շրջապատին։ Սասնա ծռերը մենամարտում էին ջահել ցուլերի հետ, իսկ ածդահա և մկանուտ Հովոն երեք ցուլ գետնեց, իր հզոր բազուկներով աքցանելով նրանց պողերը, որոնք ճարճատյունով ջարդվում ու մնում էին նրա զորեղ ափերի մեջ։ Ի վերջո, Հովոն այնքան հանդգնեց, մինչև գոմշացուլը հարվածեց նրա որովայնին և ապա վրա պրծավ իր զոհին, նրան դարձնելով մսի ու ոսկորի շաղախ։ Արյան հոտից խելագարված անասունը կճղակներով քանդում էր գետինը և ծանր, ահեղ ճակատը առաջ նետած՝ նոր զոհեր որոնում։ Բերանից կանաչ փրփուր էր կաթում և արյունով լցված աչքերում ատելություն ու վրեժ կար մարդ էակի նկատմամբ։ Շրջապատող ամբոխը խուճապահար դեսուդեն փախավ, միջամտեցին նիզակավոր և սուսերավոր զորականները, որոնք կտոր-կտոր արին գազազած անասունին, անսահման ուրախություն պատճառելով աղքատներին և մուրացիկներին, որոնք ակնթարթ արագությամբ թոցրին մսակտորները։ Տարոնցիները հրավառ շորերով և հանդուգն ճարպկությամբ լարախաղացներ էին բերել, որոնք կարողանում էին գլուխկոնծի տալ պարանի վրա և ձեռքերի վրա քայլել մի ծայրից մյուսը։ Ասում էին, որ նրանց աստվածային շնորհը պարգևել է սուրբ Կարապետը, որին իրենց գոհունակությունն էին հղում լարախաղացները յուրաքանչյուր դժվարին ելույթից հետո։ Մոկացի աճպարարները կախարդված ամբոխի առջև գեղեցկուհիներ էին սղոցում, անջատում գլուխը մարմնից և ապա վերստին ամբողջացնելով նետում պարի հրապարակ, որ կաքավեն։ Անձևացիները կրակ էին կուլ տալիս և դաշույններ մխում իրենց կոկորդն ի վար։ Հետո բոբիկ ոտքերով քայլ էին քայլում փշրված ապակե անոթների և սատանայի եղունգի վրա, առանց ոտքերն արյունոտելու։ Վազում էին ասեղների, սրածայր գամերի և մեխերի վրայով և ասում էին, որ իրենց գործի գաղտնիքը բերել են Հնդկաց աշխարհից։ Միաժամանակ կարող են կարճ մի միջոց մեռնել և ապա կենդանանալ։ Զարմանքից չոված հայացքների առջև մեռնում էին, կարողանում էին խեղդել շունչը, կանգնեցնել սիրտը և ապա կենդանանում էին, ասես հրամայելով արյանը, որ վերստին վարդագույնով ներկի իրենց դեմքն ու մարմինը, շնչառությանը, որ լցվի դատարկված թոքերը, սրտին, որ նորից մուրճահարի կրծքավանդակը։ Հայոց ձորից ժամանած ըմբիշները իրենց ուսերին գերաններ էին պահում և այնքան ծանրաքարեր կախում, որ գերանը ծալվում էր ու ջարդվում։ Ծաղկոտն

գավառից ժամանած հյուրերին վանել ու հալածել էին իրենց երկիրը, քանզի Թոնդրակն էր ծխում նրանց հողում, քանդելով աստծո տաճարները և պատուհասելով նրա սպասավորներին։

Ապա ծայր առան երգն ու պարը։ Գինու սեղանները զարդարում էին գուսաններն ու նվագածուները, որոնց շնորհքի ճանապարհը ձգվում էր դեպի մարդկանց սրտերը։ Երգում էին սեր ու կարոտ, փառաբանում նախապապերի քաջագործությունները, նրանց ազնվությունն ու վեհանձնությունը, հավատարմությունն առ հայրենի հողն ու սիրույն.

Արան չուզեց մեղմել սարսուռները մարմնիդ,
Արան չցանկացավ սերդ, մինչդեռ արյունդ խենթ
Պղպջում էր ինչպես եռման գինին
Եվ կարոտում էր սովյալը ինչպես...
Շամիրա՜մ,
Քեզ մերժեց Արան, մերժումն արյան գին էր...

Երգում էր գուսանը։ Բամբիռը թրթռում էր, մերթ հառաչում, մերթ որոտում։ Գրիգորը լսում էր հափշտակությամբ, վերացած, հուզմունքից ուռչում էր սիրտը և հպարտությունից զորեղանում հոգին։ Եվ երգն ընդունում որպես բալասան ցավի, ինչպես կարոտյալը հանդիպման հնարավորությունը. «Մեր նախնիքը մեզ կտակեցին ոչ միայն իրենց քաջությունը և հայոց աշխարհի փրկության համար մեռնելու պատրաստակամությունը, այլև թողեցին իրենց երգը, որի ձայնը չի կարողանում կողոպտել նույնիսկ ժամանակը»։ Մոտիկ վրանում մեկ այլ գուսան պանծացնում էր Վարդանին, և երգը կտրեց, խլացրեց Գրիգորի մտածումները.

Չիմացյալ մահը մահ է արդարև,
Իսկ իմացյալը անմահություն է,
Վարդանը ընկավ և պարտվեց ոսոխը,
Վարդանը ընկավ և պարտվեց միջոցը,
Վարդանը ընկավ և մահը պարտվեց,
Անմահությունը հպատակ դարձավ
Եվ ընկերացավ հավերժին ինքը,
Չի տվեց կյանքը, արյունը կարմիր,
Չտվեց սակայն իր հայրենիքը...

Դրամներ էին նետում գուսանին։ Ոգևորվել էին երգով։ Երգում էին նրա հետ, ծափահարում էին։ Գուսանի ձայնը քաղցր էր, երգն իմաստուն ու աշխարհիկ։ Նրան ճանաչում էին և խնդրում էին երգել Անի քաղաքի ազատ, ոչ պարկեշտ երգերից, որ Աղթամար կղզու տերերը մերժում էին որպես հոգին աղտոտող և կամքը անարի դարձնող երգեր։ Գուսանի հա-

յացքը շոշափում էր ունկնդիրների դեմքերը։ Կարող է խանգարեին, արգելեին երգը։ Իսկ երգը արգելք չի ընդունում, նրան շղթայակապ զնդան չես ուղարկի։ Երգը թևավոր է, քանց արծիվ, արագընթաց, քանց եղնիկ և հաղթող՝ առյուծի պես։ Իսկ երգիչ-գուսանը միշտ էլ ենթակա է և՛ զընդանի, և՛ խոշտանգման.

Փողոցն ի վար արի,
Վերև կուգամ ի տես,
Սերը կույր չէ, տղա՛,
Եթե ճամփան գիտես.
Թե կորցրել ես ճամփադ
Ծոցիկս բաց կանեմ,
Որ ծոցիկիս լույսով
Քո ճամփան լույս անեմ...

Սասունից և Խութից ժամանած ասացողների ու գուսանների ասքը ցնցեց Գրիգորի ողջ էությունը, վերընթաց ալացքով խանդավառեց հոգին, աչքերից արտասուքներ կորզեց և ստիպեց մի ամբողջ միջոց քարանալ ասացողներին ականջալուր։ «Սասունցի Դավիթ» վիպերգն էր նոր-նոր լույս ընկել, լսում էր առաջին անգամ։ Հայոց լեռներից պոկված և լեռնականների սրտից քամված ասք էր մի, որ պատմում էր արաբ կեղեքիչների դեմ արյունակիցների քաջագործությունները։ Որպիսի՜ հոգի և մեծահոգություն, զարմացել էր Գրիգորը, և ո՞վ է հյուսել այս վիպասքը. շինականը՝ ուրիշ էլ ով, ռամիկը, այս ասացողները։ Նրանք մեզ՝ գրիչներիս, տաղերգուներիս դրեցին այնպիսի ծանր բեռան տակ, որ մեր նվաստ ուժերը հազիվ դիմանան նմանը, հավասարը, առավելը արարելուն։ Նորից արտասվեց, երբ մանավանդ բամբիռը քաղցր ծլնգոցով ձայնակցեց ասացողին։

Հոգին ծփում էր քաղցր անհանգստությամբ, ինչ-որ մեծ բանի սպասումով։ Նախազգացմանը հավատում էր, ու թեև օրն սկսվել էր ողբերգությամբ, ու թեև աչքերի ու սրտի մեջ վառվում էր կաքավողի մարմինը որպես անաստված եղելություն և գեղեցկության ու անմեղության պարտություն՝ բուռ ուժերից, այնուամենայնիվ, հոգու ինչ-որ թաքուն անկյունում շողում էր բերկրանքի մի լույս, անանուն հրճվանք, անծանոթ մի հուզում, որն անուն չուներ, որը չգրված տողի կամ ասքի, աստվածային արարման կանխազգացումն էր, թե ուրիշ մի երևույթ, չգիտեր։ Իր կյանքում նա մատյաններից ու ձեռագրերից բացի, իր ուսուցչի իմաստուն դասերից բացի, համարյա ոչինչ չէր լսել, չէր տեսել, չէր հաղորդակցվել, թեև տենչացել էր առավելն իմանալ։ Հոգու խորքում խոստովանում էր, որ գուսաններից ու ասացողներից այսօր առավել սովորեց, քան շատ մագաղաթներից։ Նա հրաշքի էր սպասում, նրա պատանի հոգում փոթորիկ ու խառնակություն կար, որոնք եթե շարժարում էին, ապաքաղցրորեն, առանց ճնշելու և պարտադրելու ներքին էությանը։ Նրա ճակատագիրը կանխորոշված էր, նա հոժարակամ ընդունել էր հոր կամքը՝ իրեն Նարեկավանքի դպրանոցին և աստծուն ընծայաբերելու խստաշունչ որոշումը։ Պարտավոր էր վանքի դպրոցն ավարտելուն պես, նրա մամոտ ու խոնավ խցերում պարպել իր կյանքը և ուժերի ներածին չափով ծառայել իր աստծուն։ Նա աչքի էր ընկել որպես տաղերգու, որպես իմաստասեր և ուշիմ բանավիճող, խելացի ու աշխատասեր սան։ Նրանից լուրջ ակնկալություններ ունեին իր ուսուցիչները, մանավանդ իր արյունակից ուսուցչապետ Անանիա Նարեկացին, որի ամուր ձեռքերի մեջ հասունանում էր Գրիգորը։ Բայց վերջերս նրա երիտասարդ հյութերով լցվող մարմինն ապրում էր մի անորոշ անհանգստություն։ Մարմինը արթնացել և օրորում էր հոգին անմեկնելի, անհասկանալի մի տաք զգացումով։ Գրիգորը դեռևս չէր ճանաչում իր մարմինը, նրա մեծ պահանջները, սակայն հոգին ևս որոշակի փոփոխությունների էր ենթարկվել և ստեպ-ստեպ նրան հաղորդում էր այն քաղցր անհանգստությունը, որի մեջ թաքնված էր մի անանուն սպասում, որը պետք է ունենար, անպայման ունենար ճակատագրական նշանակություն և թոցներ նրա հոգին անծանոթ զգացմունքի կախարդական աշխարհը։ Նա թափառում էր կղզում, տաճարի բակում, տաճարի շուրջ. փորձում էր ճանաչել իր հայրենի աշխարհի մեծատուններին, նրանց, ովքեր Հայաստան աշխարհի ամենամեծ՝ Արծրունյաց նախարարության ուժն էին, միտքն ու զորությունը։

Մի վրանի մոտով անցնելիս հայացքը հայացքի առավ։ Զարմանալի խոշոր ու տաք աչքերը մի պահ նայեցին հոգուն և ապա... անէացան։ Շանթահարվել էր, նման բան իր հետ երբեք չէր պատահել, նման շիկացած զգացմունք երբեք չէր ապրել։ Երկու շրջան գծեց տաճարի շուրջ և նորից հայտնվեց նույն վրանի առջև։ Ներքին հրամանը նրան ստիպում էր թեկուզ գողունի, սակայն նայել վրանի կողմը։ Տեսիլքը չկրկնվեց։ Աղջիկը չկար։ Վրանի շքեղ դուռծածկոցը, որ բազմագույն կապերտ էր, փակվել էր նրա որոնող հայացքի առջև։ Քայլ արավ առաջ և հանկարծ թվաց, որ կապերտը շարժվեց և հայացքը նետահարեց սիրտն այս անգամ թիկունքից։ Արագ շրջվեց, բայց ծածկոցը լուռ էր, համր ու անշարժ։ Նորից շրջան արավ տաճարի շուրջ, նորից հայտնվեց վրանի առջև, բայց վրանի ներսն այդպես էլ չտեսավ։ Ո՞ւմ վրանն է, ո՞ր աշխարհից են այս ուխտյալները, ո՞վ է այն աղջիկը, որի հայացքը նետահարելու տաղանդ ունի։ Ցավով մտածեց, որ առանց աղջկան տեսնելու ինքը

Նարեկ վերադառնալու ուժ չի ունենա։ «Ես ցանկանում եմ նրան, ես նրան պետք է ասեմ, որ նման անհանգստացնող աչքեր չեմ տեսել։ Հետո կասեմ, որ անունն ասի, հետո ես նրա անունով տաղեր կհորինեմ։ Իսկ հետո... Իսկ ի՞նչ կասի ուսուցչապետը, չէ՞ որ նա ուսուցանում է գիտություններ, աստվածաբանություն։ Նա վանականի սքեմ է ուզում ինձ հագցնել և գիտունի թիկնոց ուսերիս տեսնել։ Նարեկավանքի կրթարանում սերը հալածական է, մուտք չունի։ Բայց ես այդ աղջկա աչքերն եմ տեսել մի պահ, միայն մի պահ, այստեղ սիրո և հրապուրանքի հարց չկա, չկա։ Ո՞վ է աղջիկը»։ Որոնում էր ուսուցչապետին։ Եվ գտավ։ Անանկան Նարեկավանքի վարժարանի մի խումբ ուսուցիչների հետ նստած էր իրենց՝ Անձևաց խոսրովի վրանում։ Խոսում էին։ Ստեպ-ստեպ հոլովվում էր Սմբատ Զարեհավանցի անունը։ Կանգնել էր, լսում էր և չէր լսում։ Անիծում և սուր քննադատության էին ենթարկում եկեղեցու այդ չարամիտ թշնամուն, որ իր հետևից տանում էր ախտավոր և աստվածասպան շինականների բանակներ։ Քանդում և ավերում եկեղեցիներ, խլում եկեղեցականների ինչքն ու հարստությունները, վանքերն ու տաճարները և անարգ ձևով մահին հանձնում աստծո ծառաներին։ Չէր ցանկանում լսել։ Սմբատ Զարեհավանցու մասին շատ էր լսել։ Նրա անունը բազմիցս հոլովվել էր դպրանոցում։ Հիմա այդ անունը, որ մահվան ընկերակցությամբ էր շրջում վանականների ու քահանաների շրջանում, ատելի էր իրեն և այդ անունը լսել չէր կամենում։ Իր ցավն ուրիշ էր։ Աչքերի առջև աչքեր կային, որ հայտնապես վրդովել էին նրա հոգու խաղաղությունը։

— Հարցում ունեմ, ուսուցիչ,— խոսեց Գրիգորը։

— Հարցրու, զավակս,— շրջվեց նրան Անանիան։

— Ո՞ւմն է այն զմրուխտագույն վրանը...— հարցրեց և այտերին արյան հորձանքն զգաց։ Ասես նվիրական ու սրբազան գաղտնիք էր հաղորդում ուսուցչին։ Անանիան թափանցող հայացքով զննում էր Գրիգորին, զգում էր տղայի հուզմունքն ու շփոթվածությունը. «Ի՞նչ է պատահել քեզ, զարմիկս»,— ասում էր հայացքը։ Հետո նրա հայացքը կանգ առավ զմրուխտագույն վրանին։

— Մեր հարևան Մանակերտ շենի Սահակ տանուտերինն է, որդիս։ Իսկ ի՞նչ է պատահել։

— Ոչինչ, ուսուցիչ, վրանը հիրավի գեղեցիկ է, ցանկացա իմանալ։

— Անճաշակ է, Գրիգորիկ,— չհավատաց Անանիան իր աշակերտին։— Այդ վրանի ներսում տոթը հավիտենական նստվածք ունի և շընչելն իսկ դժվար է, որովհետև անթափանց է օդի և հովի համար։

«Նա կարդում է իմ մտքերը, նա չի հավատում իմ խոսքին։ Մեծ մարդ է Անանիան, և ես նրան չարաչար խաբեցի։ Ուրիշ պատճառ չգտա

հարցման և ստիպված խաբեցի նրան։ Չէի կարող, չէ՛, չէի կարող ասել, որ այդ տոթ վրանում տոթ է ոչ այնքան շոգից ու արևից, որքան այն աչքերից, որոնք հիմա լափում են հրդեհվելուն անպատրաստ իմ հոգին։ Նրան խաբելու իրավունք չունեի, սակայն չխաբել ես չէի կարող։ Ներիր, սիրելիդ իմ ուսուցիչ, ների՛ր...»։

— Պոռնկացնում է շինականներին, ազատներին և նույնիսկ անազատներին։ Չի ընդունում եկեղեցական օրինական պսակը և ազատ, մարմնական սեր է քարոզում... Եվ ի՞նչ խառնակություն է սարքել մեր աշխարհում։ Ուրանալ ամեն աստվածություն, հափշտակել վանական ու եկեղեցական ինչքն ու սեփականությունը, խիզախել աստծո սահմանները և նրան հաղորդակցվելը որոնել առանց միջնորդ եկեղեցականների, մահվան ենթարկել նրանց, սերը պոռնկության վերածել, եկեղեցական սրբազան ծեսերը խաբեություն համարել, որ մեկն ասեմ... Իսկ կաքավողն այդ շամբշոտ ու սատանայակերպ հերձվածողներից չէ՞ր, այդ բոզերից...

— Ո՛չ, բյուր անգամ ոչ,— չգիտես ինչու նեղսրտեց Անանիան,— կաքավողը նրանցից չէր։ Ժամանել էր կաքավելու։ Վանականներն ու ոստիկանները նրան մղեցին ինքնապաշտպանության։ Մահկանացուին մահվամբ պատուհասելու իրավունքը լոկ աստծունն է, լոկ նրանը։ Իսկ մեզանք առանց դատի ու դատավորի պատուհասեցին, մահ սահմանելով կաքավողին։ Գործեցին նույն հանցանքը, որում մեղադրվում են թոնդրակյանները...

— Մի՞թե, ուսուցչապետ,— կասկած հայտնեց բանավիճող ուսուցիչը։

— Այո՛, հաստատապես,— պատասխանեց Անանիան,— կաքավողը Վանա շեներից էր, այլ ոչ թե Ծաղկոտն գավառից, ուր հաստատվել են հնթանոսները։ Կաքավողները պարզապես սխալ վայր էին ընտրել։ Սուրբ խաչ վանքը կաքավողների իրավունքներից դուրս է, սակայն նրանց մեռցնելը ծայր անօրինական է...

— Դու ճանաչո՞ւմ էիր նրան, ուսուցչապետ,— հարցրեց զրուցակիցը։

— Դու էլ ես ճանաչում, ուսուցի՛չ, դու էլ,— զայրույթից կասկարմիր կտրեց Անանիան,— գնա տաճար, այնտեղ է նա աստվածամոր հանդերձով և մանուկ Քրիստոսը գրկին։ Գնա՛, կարդա որմանկարը և համոզվիր...

Նստածներին ասես օձ խայթեց։ Ընդոստ վեր թռան։ Մի՞թե...

— Գնացե՛ք առանց աղաղակի և ձեր կարծիքը պահեք, սեղմեք ատամների տակ։ Եթե ժողովրդի, մանավանդ հոգևոր պետերի ականջն

ընկնի այս բանը, հուզումներ կսկսվեն։ Գնացեք, հետո սառ ու սթափ խելքով կխորհենք մեր անելիքը...

Անանիայի վերջին հայտարարությունն ուղեկցվում էր Նարեկավանական դպրոցի ուսուցիչների վախեցած մրմնջոցով և խաչակնքումներով։ Նրանք քայլեցին դեպի տաճար, ստուգելու, փարատելու կամ հաստատելու իրենց լսած ահավոր նորությունը։ «Իսկ ես ի՞նչ ունեմ այստեղ,— խորհում էր Գրիգորը,— ժողովուրդը խրախճանում է, երգում են գուսանները, նվագածուները դղրդացնում են պարեղանակներ, իսկ սրանք՝ իմ ուսուցիչները, ցանկանում են քննել անքննելին, մեկնել անմեկնելին։ Սահմանել աստծո անսահման տիրույթների և անսահմանափակ իրավունքների սահմանները, որ չեն ճանաչում։ Մի՞թե աստծո իրավունքների մեջ գոյություն ունի մահ գործադրելը։ Չէ՞ որ աստված ինքն է ստեղծել աշխարհն ու մարդուն։ Ստեղծողը կարո՞ղ է մահին հանձնել իր ստեղծածը, մանավանդ որ աստված բարի է և էությունն է բարի։ Մահվան գործադրումը աստվածային աշխատանք չէ։ Մահվան պարտադրանքները աստծո հակառակորդների՝ սատանաների ու հոգեառ էակների հասույթն են, նրանց անաստված ասպարեզը։ Աստված սեր է, նա պարտադրում է սերը որպես աստվածային պարգև, որպես հոգու մաքրություն և ազնվություն, նաև մարմնական ցանկությունները գոհացնելու անհրաժեշտություն։ Առանց սիրելու, առանց սիրո կյանքը նորոգելու և շարունակելու հնարքն անկարելի կդառնա։ Առանց սիրո չի ծագի արևն աշխարհի վրա, ծաղիկներն ու ծառերը չեն ծաղկի, մրգերով չեն պտղավորվի աշունները ու կմեռնեն տաղերն ու տաղերգուները։ Առանց սիրո անհնար կլինի նվիրվածության և սիրո խոսքերն ուղղել առ աստված։ Առանց սիրո կկորցնենք, կկործանենք նույնիսկ իրեն՝ աստծուն։ Վախենում եմ, տե՜ր, սիրո իրավունք հայցել քեզանից, զի ես ուխտել եմ ծառայել միայն քեզ, հագնել վանականի սքեմը և ճգնավորի քուրձը։ Եթե այդ աչքերի գերին դառնամ, կդրժեմ ուխտս և հոգիս կմատնեմ սատանաներին։ Ես հոգիս ի բուռ կհաղթահարեմ այդ աչքերի հոգեկործան հմայքը, իսկ դու ներիր ինձ մեղավոր մեղքերի ու ցանկությունների համար, ների՜ր...»։

Խորհում էր հոգու ինքնամաքրման շուրջ, մեղանչում չունեցած մեղքերի, հոգեկործան մտքերի ու ցանկությունների համար։ Խորհում էր... Սակայն, պահ չանցած, սարսափով նկատեց, որ կանգնած է ջրբուխտագույն վրանից մի քանի քայլ հեռու։ Իրեն չենթարկվող ոտքերը բերել են այստեղ և մեխվել, բխովվել։ Իրեն չենթարկվող հայացքը գամվել է վրանի մուտքին։ Իրեն չենթարկվող սիրտը սարսման անհամբերությունից ջարդում է կրծքավանդակը։ Կանգնել ու մնացել էր, ո՞ւր գնալ։ Ի՞նչ

անել։ Ցանկանում էր փախչել։ Փորձեց փախչել։ Կռահեց, որ փախչում է ինքն իրենից, որ ամբողջ էությունը մնացել է վրանի մոտ, իսկ ինքը հալածվում էր իր իսկ էությունից, որպեսզի պարտված վերստին վերադառնա իր էությանը։ Նորից մի շրջան գծեց տաճարի շուրջ։ Նորից լսեց գուսանների հայրենանվեր տաղերը, նորից դիտեց լեռնական պարերը։ Երկար կանգնեց լարախաղացի ճարպկություններին և պարին ակնդետ, նույնիսկ լիաթոք քրքջաց ծաղրածուի սրամտությունների վրա։ Շրջապատը լցված էր շոգեհարվող մսի զգլխիչ բուրմունքով, որ համովանում էր պղնձե կաթսաներում։ Մարդկանց մատաղի միս էին բաժանում, օրհնված միս։ Շրջապատը թնդում էր՝ «Մատաղդ ընդունելի լինի»։ Ինչ-որ մեկը նրա ափը խցկեց լավաշի մեջ փաթաթված մսակտոր։ Վերցրեց ակամայից.

— Մատաղն ընդունելի լինի,— ասաց։ Եվ ուտելիքը տարավ բերանը։ Մատաղը մատուցողը սպասումով նայում էր նրան։ Միսը համով էր, ախորժաբեր։ Նոր զգաց, որ քաղցած է. ամբողջ օրը բերանը բան չէր դրել։ Ագահաբար կուլ տվեց և շեշտ նայեց դիմացինին.

— Դու Անձևաց Խոսրովի որդին ես, այնպես չէ՞...

— Այո՛,— պատասխանեց,— անունս Գրիգոր է, իսկ դու որտեղի՞ց գիտես...

— Ճանաչում եմ,— ասաց դիմացինը,— ասում են՝ աստծուն տաղեր ես ձոնում, ճի՞շտ է...

— Ճիշտ է,— զարմանքով հաստատեց։

— Ասում են՝ իմաստասիրության ասպարեզում մրցակից չունես, ճի՞շտ է...

— Այդ մասին հարցրու ուսուցչապետ Անանիային։

— Ինքն է ասում,— պատասխանեց դիմացինը,— Անանիան ինքն է ասում։

— Եթե ուսուցչապետն է ասում, ես ուրիշ պատասխան չունեմ...

— Ասում են՝ քո շնորհքն աստվածածին է,— հարցերի տարափ էր տեղում անծանոթը։

— Չգիտեմ,— ցանկացավ վերջ դնել դիմացինի հարցասիրությանը,— իրապես չգիտեմ, բայց ախր ո՞վ ես դու, որ ինձնից լավ գիտես...

— Ես Մանակերտի տանուտեր Սահակն եմ,— ներկայացավ անծանոթը։— Ձերոնց բոլորին ծանոթ եմ, ճանաչում եմ։ Մենք միմյանց այցելելու, գնալ-գալու, իրար հյուրընկալվելու հինավուրց սովորույթն ունենք, նույնիսկ հեռավոր բարեկամական կապեր...

Գրիգորը, խածելով շրթունքները, հազիվ կարող եղավ ճիչը զսպել։ Այլևս չէր լսում նրան։ Ականջները թշշում էին, ասես տաք ջուր էին

սրսկում ունկերի մեջ։ Լայն բացված աչքերի դեմ զմրուխտագույն վրանն էր։ Ոտքերի կամքին հլու, ենթակա հրամայող, ղեկավարող ներքին ձայնին, նորից եկել, հասել էր այստեղ...

— Քաղցած ես երևում, զավակս,— նորից խոսեց տանուտերը։

— Այո՛, քաղցած եմ,— ասաց և փոշմանեց։ «Հիմա վրան կհրավիրի։ Եվ ես չեմ դիմանա այն աչքերի ճնշմանը։ Վրան կհրավիրի, և ես խոսելու, մանավանդ ուտելիքից օգտվելու ուժ չեմ ունենա։ Վրան կհրավիրի, և ես աղջկա աչքերի մեջ կկորցնեմ ինքս ինձ, իմ ուխտը և... իմ աստծուն»։ Եվ վախեցած իր իսկ խոստովանությունից՝ շառագունեց։ Ցանկացավ հրաժարվել ուտելիքից, իսկ տանուտերը նրան արդեն քաշում էր դեպի զմրուխտագույն վրանը։ Եվ Գրիգորը գնում էր։ Ուզո՞ւմ էր գնալ՝ չգիտեր, բայց գնում էր առանց առարկելու։ Հետո տանուտերի ձայնը լսեց.

— Աղջիկս, Դրախտի՛կ, հյուր եմ բերել։ Մատաղը մեծ քրեղանով մատուցիր, տղան քաղցած է...

Ցանկանում էր առարկել, որ քաղցած չէ՝ չառարկեց։ Ուզում էր մուտքից ետ դառնալ, չկարողացավ։ Իսկ Դրախտիկը ճառագեց, ճառագայթեց արևի շողքի նման՝ միանգամից, ծիծաղախիտ, ծաղկուն, դյուրաթեք ու փխրուն, և կողքի քաշվելով, բարձրացրեց վրանի փեշը, ճանապարհ տալով մտնողներին։

— Բարև, Դրախտի՛կ,— առանց կմկմալու, ներքին մի զորեղ ուժի օգնությամբ խոսեց տղան։

— Բարև, Գրիգորիկ,— ժպտալով խոսեց աղջիկը։

Եթե Գրիգոր ասեր, ինքն այդքան չէր հուզվի։ Գրիգորիկ անվանումն այնքան մտերմիկ ու փաղաքուշ հնչեց աղջկա շուրթերից, աչքերն այնպես տաք ու սրտահույզ նայեցին իր աչքերին, երջանկության մոտիկությունն այնպես խլացրեց աշխարհի բոլոր ձայները, հոգու բոլոր վայրիվերումները, ընդվզումները բոլոր հալվեցին, անէացան և զմրուխտագույն վրանը վերածվեց աստվածավայրի, և Դրախտիկը՝ աստվածամոր։

— Դու ինձ ճանաչո՞ւմ ես, Դրախտիկ,— ասես երազի մեջ լսեց իր ձայնը։

— Իհարկե, ճանաչում եմ, հայրիկս ասաց, որ դու տաղերգու ես և իմաստասեր, որ աստծո աչը քո հովանավորն է։ Իսկ այսօր ես բազմիցս տեսա քեզ և հանդեսին, և մեր վրանի առջև,— ու խորամանկ ժպտաց։

Ուրեմն, մատնել է ինքնիրեն, և աղջիկը նկատել է իր անտարող ուշադրությունը և կրկնվող թափառումները վրանի շրջակայքում։ «Մատնված եմ,— խորհեց և դրանից սիրտը թեթևացավ։— Ավելի լավ։ Սակայն մատնված է նաև Դրախտիկը։ Ուրեմն, նրա հայացքն էլ հետապնդել է

ինձ, նկատել նույնիսկ ամբոխի մեջ, նույնիսկ գոց վրանի ինչ-որ թաքուն դիտակետից։ Առաջին անգամն ենք տեսնում միմյանց, և արդեն մեր գաղտնիքները թափանցիկ են ու բացահայտված»։ Տանտիրոջ ձայնը նրան արթնացրեց մտածումներից.

— Գնամ, որոնեմ մերոնց, ուշացան...— Եվ գնաց։ Դրախտիկը զբաղված էր մատաղով և լիքը քրեղանը ձեռքին, մոտեցավ Գրիգորին։

— Ամբողջը պիտի ճաշակես, որ չնեղանամ,— կոտրատվեց։

— Ամբողջը ինչպես ճաշակեմ, Դրախտիկ, շատ-շատ է...

— Իսկ եթե ես խնդրեմ...

— Խնդիրքդ չեմ կարող կատարել, Դրախտիկ, հրամանդ կուզեմ...

— Ուրեմն հրամայում եմ,— ծիծաղեց աղջիկն ու ուտելիքը հրեց նրա առջև։

Ուտում էր։ Զարմացել էր, որ կարողանում է ուտել աղջկա ներկայությամբ, իսկ Դրախտիկը բռունցքը կզակին դիմհար տված, նայում էր նրան և գոհունակ ժպտում։

— Շա՜տ, շա՜տ է,— գդալը խրեց ճաշի մեջ,— այլևս ուտել չեմ կարող...

— Հրամանը հրաման է,— չնահանջեց աղջիկը,— ինքդ քո խոսքը մի դրժիր։ Ես քեզ համար պահած գինի ունեմ, այ այն գավի մեջ, եթե ախորժակդ խեղճացել է, գինի ըմպիր՝ թող բացվի...

— Ես ցանկանում եմ հանդիպել քեզ, Դրախտիկ...

— Ինչի՞ համար, Գրիգորիկ...— աղջիկը ժպտում էր նազանքով, սատանայավարի։

— Չգիտեմ, Դրախտիկ, չգիտեմ...

Կարմրեց, շփոթվեց, մսաջուրը թափեց վրան և ավելի շփոթվեց։ Աղջիկը երևի չէր սպասում պատասխանի կամ չէր ցանկանում պատասխան լսել։ Բանը խոստովանության չհասավ։ Նայում էր աղջկան գդալը ձեռքին, և թափվող մսաջուրը յուղոտ խալեր էր նկարում սև թիկնոցին։ Չէր նկատում զգեստի կեղտոտվելը, երևի չէր նկատում նաև աղջիկը։ Նայում էր, բայց չէր նկատում։ Պահը ճակատագրական թվաց Գրիգորի համար։ Երևի տեսության կանչեր աղջկան կամ բացեր, պարզեր իր խոովքը նրա առջև։ Սակայն սառել, մնացել էր։ Դրախտիկը նրա աչքերի առջև ասես փոխարկվում էր աստվածուհու և արագորեն հեռանում իրենից։ Մշուշված աչքերի առջև և մշուշված հոգու մեջ ծնվում էր աստվածուհին, նրան սիրելու, սիրտը բացելու միտքն իսկ սարսափեցնում էր իրեն։ «Երջանկությունը որքան մոտենում է ինձ, այնքան հեռու և անհասանելի է դառնում, և սարսափելի, սարսափելի է դառնում նրան բռնելը։ Մեր միջև կանգնած է աստված ինքը։ Ես իրավունք չունեմ հոգիս մեր-

կացնելու այս գեղեցկուհու առջև, քանզի կկործանեմ ոգիս, որ հանձնել եմ տիրոջ ողորմածությանն ու նրան ծառայելուն։ Առանց այն էլ այս հանդուգն, գայթակղիչ և ամբարիշտ մտքերն ինձ նետում են սատանայի բերանը։ Եթե չբացեմ սիրտս Դրախտիկին, ուրեմն կկործանեմ իմ երջանկությունը, թեև կհաշտեցնեմ հոգիս աստծո հետ։ Չէ՛, ճանապարհ չկա։ Հոգիս երկու աստվածությունների բախումներին չի դիմանա։ Եվ ինչո՞ւ են իրար խանգարում այս երկու աստվածությունները՝ սերն ու հավատը։ Նրանց բարեկամությունը կվեհացներ, կսրբազործեր սիրո իրավունքը, և հավատն էլ կլուսավորվեր սիրով։ Այս ինչ երջանկություն է, որ կողքին կանգնած է սարսափը, որից սառչում է սիրող մարդու տաք հոգին։ Քեզ եմ դիմում, երկնային տեր, հաշտեցրու ինձ ինձ հետ, ոգիս ու հոգիս սերտացրու, միավորիր։ Քեզ եմ դիմում, Դրախտիկ, եթե թուլանա կամքս ու սիրո առջև նկուն դառնամ և սերդ խնդրելիս լինեմ, մերժիր ինձ, վիրավորիր, վնդիր, զի մերժվելը նույնպես պատիժ է և մեղքը քավելու թեկուզև անստույգ միջոց։ Այլապես, եթե աստված չհանդուրժի իմ հոգու դավաճանությունը, ուրեմն ես կորած եմ և քեզ, և աստծո համար, օգնիր ինձ, Դրախտիկ...

— Մեր գինին քամված է սև խաղողից, Գրիգորիկ, խմիր, մտքերդ կպարզվեն և կխաղաղվի հոգիդ, խմի՛ր...

Դատարկեց լիքը գավաթը։ Նաև երկրորդը։ Գինին սառն էր, ծարավը կոտրվեց։ Քաղցր թմրությամբ օրորվեցին մտքերը, չքմեղ դարձան մեղքերը, մեղավորության զգացումը չքվեց։ Միավորվեցին, նույնացան կարելին ու անկարելին, ընդունելին և անընդունելին, պարտականությունն ու պարտազանցությունը։ Եվ աստված մարդացավ նրա աչքին, դարձավ հարազատ և պաշտելի, առավել պաշտելի, քանզի պաշտամունքը հարբստացավ սիրով և աստծո ու իր միջև պաշտոնական տարածքը լցվել էր սիրով ու ջերմությամբ։ «Եթե սիրելով պաշտեմ քեզ, տեր երկնային, ապա պաշտելի կլինես կրկնակի և հավիտյանս հավիտենից։ Իսկ եթե պաշտամունքը պարտադրվի, ապա կստրկանա ոգին և աստվածությունդ կհեռանա հոգիներից։ Ես՝ քո պարտապանը, ստրուկը քո, չնչին քո ենթական, անքավելի մեղավորը, ցանկանում եմ սիրելով պաշտել քեզ։ Սիրելով, մի՛յն սիրելով... Իմաստուն ուսուցչապետ Անանիան հեթանոսություն է համարում որմնանկարիչ վարպետի արարքը, որ կաքավողի տեսքով է արարել տիրամորը։ Չեմ կարող դատապարտել վարպետի մեկնությունը, որ կամեցել է աստվածաստեղծ մարդ-արարածին ու աստվածուհուն հաշտեցնել ու մարդու միջով նայել աստծուն, քանզի աստված մարդ-արարածին կերտել է իր իսկ պատկերով։ Վարպետը կշռել, իմաստավորել է աստծո արարչագործության էությունը։ Ո՛վ տեր երկնային, չէ՞

որ քո նմանությամբ ես արարել մարդուն, ուրեմն, մի՞թե հանցանք է մարդուն պատկերել աստծո նմանությամբ, մանավանդ, որ կաքավողի գեղեցկությունն իրոք աստվածային է։ Կաքավողի ջերմությամբ նա կենդանացրել է որմնանկարը։ Արյուն ներարկել նրան, կենսաթրթիռներով շարժման մեջ դրել տաք արյունը։ Աչքերը լուսավորել մայրական գութով ու գորովանքով և կնոջ կենսասիրությամբ։ Խոովկան շրթունքներին հեշտասեր փափկություն հաղորդել, որպեսզի որմնանկարը հավերժանա, քանզի անկենդան նկարը չի կարող կյանքով ու սիրով լցնել շրջապատը, մանավանդ աստվածացնել նույնիսկ աստվածուհուն»։

— Դրախտիկ, քաղցրիկս, ես հարբած եմ, թույլ տուր հեռանալ...

— Մի քիչ սպասիր, Գրիգորիկ, մերոնք կերևան։

— Չէ՛, ես գնամ։ Ես կորոնեմ քեզ, Դրախտիկ, իսկ հիմա գնամ, քանզի գինով եմ, իսկ դու վտանգավոր գեղեցիկ ես...

Դրախտիկը ծիծաղեց, հետո լրջացավ։ Տղայի ակնարկը հասավ սրտին։ Շրթունքները շարժվեցին, սակայն խոսել չկարողացավ։ Կանգնել, նայում էին իրար, հիանում իրարով և չէին մոտենում։

— Հասկացա, դու վանական ես, Գրիգորիկ, աշխարհիկ չես։ Պարտքի ու պարտականության տակ ես։ Թող բարի լինի քո ճանապարհը, մանավանդ տաղերգու և գիտուն ես միաժամանակ...

— Ես քեզ կորոնեմ, Դրախտիկ, իմ ճանապարհը նոր է սկսվում և կեռմանները բյուր են լինելու, չկա ճամփա առանց վայրիվերումների և ոլորանների։ Ես քեզ կորոնեմ...

— Հաջողություն քեզ, Գրիգորիկ...

Ոտքերը դժվարությամբ էին կրում մարմնի ծանրությունը։ Գինին թեթևացրել էր հոգին և ծանրացրել մարմինը։ Մտքերը պայծառ էին։ Գինին արյան հետ շրջում էր մարմնի մեջ և զվարթացրել էր մտքերը։ Տղամարդավարի զսպեց իրեն, ինչպիսի՞ վիթխարի ջանք պահանջվեց Դրախտիկին կրծքին սեղմելու խելագար ցանկությունը զսպելու համար։ Ապագան անլուծելի խնդիրներ ուներ, որոնք ի չիք էին դարձնում աշխարհիկ կյանքին խառնվելու նրա ցանկությունը։ Աստծո ու վանքի օրենքներն անբեկանելի էին և անխաթարելի։ Հոգին երկնչում էր և իր, և մանավանդ Դրախտիկի համար։ Եթե իմանար, որ Դրախտիկի համբույրը իրեն գերեզման տանելու պատճառ կդառնար, իր վերջը կլիներ, չէր նահանջի, չէր երկնչի, իր կյանքը տեղնուտեղը կնետեր նրա աստվածությանը երկրպագելուն, իսկ Դրախտիկի անվան հետ խաղալը, անհեռանկար, անիրավունք, ապագա չունեցող սիրով այպանելը համարում էր սրբապղծություն։ Այնքան բուռն էր սերն աղջկա նկատմամբ, որ պետք է իրեն մղեր խելագար և այպանելի արարքների կամ կարողանար ար-

գելակել զգացմունքները և մտքի զգաստությամբ ու հրամանով չեզոքացներ, խլացներ այն ամենը, ինչ կարող էր վարկաբեկ անել աղջկա բարի և ազնիվ անունը։

Իսկ վրանի տակ Նարեկավանքի ուսուցիչներն ու վանականները քննում էին տեսածը։ Նրանց միջև վեճ գոյություն չուներ, միաձայն էին որմնանկարչին պատժելու և խարանելու որոշման մեջ, բայց ինչպես իրագործեին այդ որոշումը։ Սուրբ Խաչ տաճարի միաբանությունը հզոր էր, իսկ իրենք ենթակա նրան։ Միաբանության խորհուրդը որմնանկարը ճանաչել էր որպես աստվածուհի, որպես սրբություն, բյուրավոր ու բյուրավոր սրտեր էին թպրտացել տիրամոր պատկերի առջև, նվիրական տաղեր ու մեղեդիներ էին գովերգել նրան, բյուրավոր խունկ ու մոմ քանի՜ տարի գուրգուրել էին նրան, երկրպագել էին նրան և այս պարագային, երբ որմնանկարը բարոյական և հոգևոր վիթխարի ազդեցություն և իրավունք է նվաճել, համարյա անկարելի է նրա աստվածությունը վերանայելը, ավելին, ճանաչելը և խորտակելը, միաժամանակ, որմնանկարչին խարանելն ու պատժելը։ Տաճարի հոգևոր առաջնորդներն ավելի շուտ կպատժեին նարեկացիներին, քան հարվածի տակ կդնեին իրենց հեղինակությունը։

— Թող մնա տեղում։ Քանզի վեճը տաճարի հետ ավելի անհեռանկար է, քան այդ նկարի գոյությունը,— ներկաներին համոզում էր Անանիան։

— Լրբի, շամբշոտի և անառակի նկարը Սուրբ Խաչ տաճարի որմի՞ն,— տաքացել էին վիճողները,— դա սրբապղծության, աստվածապանության այնպիսի օրինակ է, որ երկնային տերը մի օր շանթով ու կրակով կոչնչացնի այս հանճարեղ կառույցը հիմնահատակ...

— Իսկ եթե երկնավորը ընդունելի է համարում որմնանկարը, չէ՞ որ աստվածամայրը գոնե արտաքինով, գոնե առերևույթ գեղեցկուհի է, մայրությամբ իմաստավորված և բանականությամբ հավատ ներշնչող... Չլինենք մենք՝ ժամանակակիցներս, ո՞վ է ճանաչելու կաքավողին, կամ հիմա այս պահին, ո՞ր հավատացյալն է, որ կասկածում է աստվածուհու իսկությանը...

Խոսողը վերստին Անանիան էր։

— Բայց դու չե՞ս վախենում տիրոջ բարկությունից։ Նա ամենատես է, ուսուցչապետ։ Նրանից թաքնվելը կամ սրբապղծությունը թաքցնելը անհնար հանդգնություն է և անքավելի հանցանք...

— Չգիտե՛մ, չգիտե՛մ...— թույլ դիմադրում էր Անանիան։— Ինձ քաջ հայտնի է, որ աստվածուհու հանդերձով, աստվածուհի ընդունված

ու ճանաչված կաքավողն ավելի անխոցելի և անհաղթելի է, քան մեր թեկուզև անկասելի և աներկբայելի կարծիքը նրա նախատիպարի մասին։

Գրիգորը լսում էր նրանց խոսք ու զրույցը։ Ոչ ոքի հետ համաձայն չէր։ Նա հայտնագործել էր իր աստվածուհուն, որի լուսեղեն կերպարը աղերսում էր վերածվել հարության տաղի, վերածվել լույսի ու ոգեղեն հրավառության, վերածվել հիմնի և լցնել մարդկային հոգիները սիրո և երկնային մեղեդիներով։ Գրիգորի սիրտը երգում էր։ Հնար լիներ կնստեր, գուրգուրանքով մագաղաթին կսեղմեր փետրագրիչը և Դրախտիկին կվեհացներ աստվածամոր անունով և կդներ անմահների շարքում.

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ
Ծաւալանայր յառաւօտուն
Երկու փայլակնաձև արեգական նման,
Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթեր...

Երգում էր Գրիգորի սիրտը, և նա այլևս ցանկություն չուներ լսելու իր ուսուցիչների անպտուղ, անլիցք վեճը, քանզի հարթված էր համարում աստվածամոր կերպարը ցոլացնող Դրախտիկի և աստվածամոր վեճը։ «Ինչո՞ւ են վիճում։ Ի՞նչ աներ որմնանկարիչը։ Ո՞ւմ նկարեր տաճարի որմին, աստվածամո՞րը, որին չի տեսել երբևէ, թե նրան, որին ճանաչում է անձամբ և նրա անթերի ու կատարյալ դիմագծերի ու մարմնաձևերի մեջ հայտնագործում է մարդկայնորեն կենդանի իր աստվածուհուն։ Ես Դրախտիկին աստվածամայր կհռչակեմ, կերգեմ նրան և կջանամ, որ մարդիկ նրան ճանաչելով սիրեն և սիրելով պաշտեն, իսկ իմ ուսուցիչները հուզվել են այնքան, որ այլևս ի վիճակի չեն գեղեցկության մեջ աստվածություն տեսնելու...»։

Գինին օրորում էր քաղցրորեն, և գինուն ու տաղին միացած տերը նրա հոգին սպառնում էին դարձնել սատանայատեղի, սակայն աշխարհիկ արարքների հանդեպ այլևս բաց էր հոգին, և վանական կյանքի խիստ ու պահանջկոտ իրականությունը գոնե ժամանակավորապես նահանջել էր նրա մտապատկերներից։ Հոգին ափեափ ենթարկված էր սիրույն և լինելության, արարում պահանջող տաղերի իշխանությանը։

Մինչդեռ խստորեն շարունակում էր ծավալվել Նարեկավանքի կրոնավորների վեճը։ Կես քուն, կես արթուն Գրիգորը լսում էր իր ուսուցիչներին, որոնք այժմ շոշափում էին խիստ գաղտնի և ուսուցիչների ենթակայությունից դուրս միջոցների գործադրում։

— Հարկավոր է ջրախեղդ անել որմնանկարչին,— փսփսոցով խարդավում էր Գաբրիել վարդապետը,— հայտնի է, որ հիսուն ամ առաջ տաճարն ամբողջապես, ի թիվս նաև որմնապատկերները, արարել է

Մանուել ճարտարապետ-նկարիչը։ Խաթարված մասերի վերանորոգումը հանձնարարվել է Հուսիկ ծաղկողին, որը ապրում է Սուրբ Խաչ տաճարի տարածքում։ Վտանգավոր այր է նա և աստծո թշնամի։ Հուսիկ ծաղկողը տարիներ առաջ վոնդվել է Նարեկավանքի միաբանության կողմից որպես անհուսալի այր ու հերձվածող և հայտնվել այստեղ, բույն դնելով այս հզոր, աստծո սիրելագույն վայրում։ Պարտ ենք միջոցների դիմել, քանզի աստվածամոր պատկերի մեջ նստած է կաքավող սատանայի ոգին, որ աղտոտում է տաճարի սրբությունը և փորձ փորձում թոնդրակյան խառնակություն աճեցնել այնտեղ, ուր աստված առ այսօր անձեռնմխելի է և կայուն են նրա սրբազան օրենքները։ Ուսուցչապետ,— դիմեց Անանիային,— գործն այդ աստվածահաճո հանձնարարիր մեզ և մենք առանց բանավիճելու և համոզելու կղզու միաբանությանը, աշխարհից թաքուն կպատժենք հերձվածողին...

— Ջրասույզ անելո՞վ,— հեգնեց Անանիան։

— Աստվածության փրկության համար բոլոր միջոցները, դաժանությունն իսկ, ընդունելի են,— ճշգրտեց իր մտքերը Գաբրիելը։

— Ես, հարգելի ուսուցիչ և վարդապետ, գիտությամբ և միայն գիտությամբ, աստվածաբանական ճշմարտության դիրքերից իմ «Հակաճառության» մեջ այպանել, հերքել եմ թոնդրակյան խռովարարների ուսմունքը, ցույց տվել նրանց սնամեջ և ապականված էությունն ու վարքուբարքը։ Իմ պայքարը մտքի պայքար է, իսկ զենքով թող գործեն իշխանությունները...

— Գոնե գործելու իրավունք տուր, ուսուցչապետ...

— Իմ ունկը խուլ է և աչքս կույր ձեր խնդիրքին, լսո՞ւմ եք, մնացածը խորհեցեք ինքներդ, մնացածի հետ ես աղերս չունեմ...

Գրիգորին չհասավ իր ուսուցչի պատասխանը, քնած էր արդեն, այլապես հույժ զարմանք կապրեր, որ իր պաշտելի ուսուցիչն ու արյունակիցը, իր անձը պահելով մեկդի, իրավունք արտոնեց գիտությամբ ու աստվածային հոգսերով ապրող իր ծառայակիցներին գործելու ոչ եկեղեցու, այլ աշխարհիկ օրենքների դաժանությամբ։ Գրիգորը չլսեց նաև, որ տաճարի ու վանքի ծառաները լրտեսներ են առաքելու Ապահունյաց գավառ, որպեսզի ահաբեկչությամբ ու զենքով շարքից հանեն թոնդրակյանների ղեկավար անձանց, որոնք ծաղրում և ոչինչ են համարում առաքելական եկեղեցու բազմաթիվ սրբազան խորհուրդները։ Գրիգորը երազների մեջ էր։

... Լիճը լիզում էր ափերը։ Ալիքները թեթև շպաղով փշրվում էին գլաքարերին ու ավազին, ապա նահանջում՝ դիպչելով ափերի կոշտությանն ու փշաքաղված, սովոր խշշոցով նորից ափակոծում։ Քարափը

բարձրադիր չէր, բայց պսակված էր գաճաճ ծառերով, որոնք գուրգուրանքով գրկել էին գետակի նեղլիկ ճանապարհը, դառնալով նրա զվարթ ընթացքի ուղեկիցները։ Գետակը փոքր էր, սակայն այնքան սրընթաց, որ թրի նման խրվում էր լճի մարմինը, կիսելով նրա ջրերը, մինչև որ լիճը զսպում էր նրա խրխնջացող արագությունը և գրկելով նրան, լուծում էր իր ծոցում։

Դրախտիկը բոկոտն էր։ Ոտքերը կախել էր ալիքների մեջ, գլուխը թաքցրել ծառի ստվերում և լսում էր Գրիգորին, որի ձայնն ու ջրի կարկաչը միահյուսվում էին, սակայն չխանգարելով իրար։

— Գրիգորիկ, դո՞ւ ես արարել տաղը,— մտախոհ խոսեց աղջիկը,— ո՞ւմ ես ձոնել...

— Աստվածամորը,— պատասխանեց բանաստեղծը։

Աղջիկը չհավատաց։ Դժգոհություն սարքեց դեմքին, ուռեցրեց շրթունքներն ու խոսեց նորից։

— Դու խաբում ես ինձ, խաբում ես,— աչքերում խորամանկ կայծեր բռնկվեցին,— դու այդ տաղը ձոնել ես քո սիրած աղջկան։ Կարծում ես, չեմ հասկանո՞ւմ...

Գրիգորը ժպտաց, քանզի իրավացի էր աղջիկը։ Աստվածամայրն այնքան երկրային, այնքան հողեղեն էր, որ տաղը սիրո սարսուռներով էր լցրել և իր, և Դրախտիկի սիրտը։

— Ինչի՞ց իմացար, Դրախտիկ...

— Գրիգոր, խոստովանիր, որ սիրահարված ես,— անկեղծացած աղջիկը տղային մղում էր խոստովանության, ցանկանալով ճանաչել տաղի հերոսուհուն, որի նկարագրի մեջ կարողացել էր որսալ տղայի սրտի և գրչի ուղղությունը և ձգտում էր վիճակի պարզեցման։ Գրիգորը դժվարանում էր խոստովանել իսկությունը, թեև համոզված էր, որ Դրախտիկն անպայման հայտնագործել է իր գաղտնիքը։

— Սիրահարված եմ,— երկար լռությունից հետո խոսեց տղան։

— Ո՞ւմ...— դողաց աղջկա ձայնը։

— Քե՛զ,— չդիմացավ տղան,— քեզ, Դրախտիկ։ Սակայն անհեռանկար և անհուսալի է այդ սերը։ Ես պատրաստվում եմ վանական դառնալ, այդպիսին է հորս կամքը, ուսուցչապետ Անանիայի կամքը, երևի նաև տիրոջ կամքը...

— Իսկ քո՞ կամքը...— աղջկա ձայնի մեջ ընդվզման շեշտեր հնչեցին։ Շուրթերից վարդ էր կաթում և աչքերից լույսն արեգական։

— Միայն իմ կամքը քիչ է, Դրախտիկ...

— Իսկ ի՛մ, ի՛մ կամքը...— բողոքեց աղջիկը։— Հանդիպեցիր, որ սիրտդ բացես և ապա մեկեն մերժե՞ս սիրո հեռանկարը...

— Կամքն աստծունն է...— Գրիգորի ձայնի մեջ ցավ կար և կամքի կորուստ,— աստված ամենազոր է, Դրախտիկ...

— Սերն աստված է արարել, Գրիգորիկ։ Մենք կատարում ենք նրա պատվիրանը, քանզի նա է պատգամել Ադամին և Եվային, թե՝ «սիրեցեք զմիմյանս»։ Այդպես չէ՞, Գրիգոր...

Ի՞նչ պատասխաններ իր սիրո համար մարտնչելու պատրաստ աղջկան, որը ոչ միայն արձագանքել էր իր սիրույն, այլև ցանկանում էր փրկել հենց նոր գտած սերը, ցանկանում էր հրահրել իր՝ Գրիգորի ինքնատիրությունն ու զորացնել կամքը։

— Ես քեզ սիրում եմ, Դրախտիկ, ես քեզ սիրում եմ, ես քեզնից աստվածուհի կարարեմ, քեզ աստվածուհի կհռչակեմ և ապա կերկրպագեմ որպես աստվածուհու, բայց ոչ հողեղեն կնոջ։ Ես ինձ զրկել եմ այդ իրավունքից, իմ կամքը հանձնել աստծո ողորմածությանը։ Աստվածային օրենքները վերանայման ենթակա չեն, աստված խիստ է թերացողների և անկամների նկատմամբ և նրա զայրույթին արժանանալը՝ կործանարար։

Աղջիկը սարսափից ու ցավից թաց ու լայն բացված աչքերով նայում էր նրան և չգիտեր ինչ ասեր, ինչ պատասխաններ տղային։ Ում դեմ ասես կհանդգներ, կկանգներ, երկնավորից բացի։ Դրախտիկը խեղճացավ և անզոր համառությամբ պնդեց իրենը։

— Գրկիր ինձ, Գրիգորիկ, համբուրիր ինձ, խեղդիր ինձ քո գրկում։ Այր ու կին դառնալու իրավունքը եթե մերը չէ, գոնե բաժանվելիս սիրով հեռանանք՝ դու քո վանական խուցը, ես իմ կուսանաց անապատը, քանզի եթե դու ուխտել ես ծառայել երկնային տիրոջը, ես էլ այսօրվանից ուխտ եմ անում դառնալ նրա ջերմեռանդ ստրկուհին։ Միևնույն է, ուրիշինը լինել անկարող եմ...

Եվ գրկվեցին։ Տրված սիրո իշխանությանը, մոռացան ժամ ու ժամանակ։ Նրանց չէր կարողանում կարգի կոչել անգամ սթափությունը և ամենազավադիրը՝ վախը, կծկվել էր վախից, և սերը գգվանք ու համբույր դարձած տիրել էր նրանց էությանը, տոնելով իր կարճատև հաղթանակը։

...— Բաժանվենք, Գրիգորիկ...

— Բաժանվենք, Դրախտիկ...

Կանգնել ու նայում էին միմյանց։ Չէին կարող բաժանվել։ Գիտեին, որ սերը թեև ապագա չունի, սակայն նրանն է ներկան, գիտեին, որ անկարող են հեռանալ իրարից, անկարող են չհանդիպել։ Գրիգորը ցավով ու դառնությամբ խոստովանում էր ինքն իրեն, որ նման գեղեցկության չէր հանդիպել ոչ մի անգամ, նույնիսկ որմնանկարիչների և ծաղկողների

նկարներում։ «Մեղա քեզ, երկնավոր, որ խախտեցի ուխտս և գրկեցի այս երկրային աստվածուհուն։ Մերժելով սերը, ես իմ մեջ հաղթեցի մարդուն, որ քեզ ավելի մոտենամ։ Սակայն վախենում եմ, ով բարձրյա՛լ, որ կորցնելով նրան, կորցնեմ նաև աստվածությունդ ճանաչելու հնարքը։ Հասկացիր և ներիր ինձ, ներիր մեզ։ Դրախտիկը կամավոր է գրվում քեզ ծառայելու գործին։ Անապատ է մեկնում, որ իրեն զրկի բողոքելու հնարավորությունից։ Ստրկանում է աստվածությանդ, որ ազատ բարքերը չսպանեն իր ոգին և կրքերը չղեկավարեն մարմինը, կուսանաց անապատում նա ծոմ ու պասով կչարչարի մարմինը, որ ոգին չընդվզի մարմնի դեմ, ոչ էլ մարմինը կարոտի աշխարհիկ վայելքների։ Իսկ ես, տեր, կերգեմ քեզ, տաղեր կարարեմ, որ հոգիս մաքրեմ քո լույսով ու բարությամբ, որ արժանանամ փրկությանը հոգուս։ Դու, որ ստեղծել ես ինձ, դու, որ ցանկանում ես քո ծառային վանքի նվիրյալը տեսնել, որքան շնորհակալ կլինեի, եթե դատարկեիր սիրտս սեր կոչվող անբալասանելի հիվանդությունից կամ ուժ ներարկեիր նկուն հոգուս՝ սիրո դեմ հաղթանակ տանելու համար։ Այլապես մեղսական մտքերը հաղթահարելն ավելի դժվար է, քան մահվան դեմ ծառանալը։ Կատարյալ դարձրու մեզ, որ մեղքեր չգործենք, չվրդովենք քո երկնային անդորրը։ Հանիր սատանան մեր միջից և մաքրիր, ախտահանիր, զի ախտավոր ենք ամենքս և մեղավոր բյուր հանցանաց ու մեղքերի ծանրությամբ։ Քո պատկերն ես տվել մեզ, տուր նաև մաքրությունդ, կատարյալ լինելու քո հնարը»։

— Բաժանվենք, Դրախտիկ...

— Բաժանվենք, Գրիգորիկ...

Նայում էին իրար։ Բայց ո՞ւր գնային։ Մտում էր Վանա ծովն իրիկնային թեթև քամուց, աղմկում էր զվարթաձայն գետակը։ Իսկ իրենք գիտեին, որ այնքան հեշտ չէր միմյանցից բաժանվելը և ժամանակից գողանում էին սիրո արագընթաց թռչող պահերը։

— Գիտես, Գրիգորիկ, ես կցանկանայի, որ դու քաջաբազուկ զորական այր լիներիր... Մեծ զորավար...

— Ինչո՞ւ, Դրախտիկ, մի՞թե ավելի լավ չէ տաղերգու և իմաստասեր լինելը։ Չէ՞ որ ժողովուրդն ասում է, թե՝ զորականի խելքը թրի ծայրն է...

— Ո՜չ, Գրիգորիկ, զորականի թրի ծայրին ամենից առաջ հայրենիքի փրկությունն է ու պատիվը...

— Մարդկային արյուն ոթելն է նրա աշխատանքը, արհեստը...

— Հայրենյաց թշնամիների արյունը ոթելը հայրենասիրություն է, Գրիգորիկ։ Իսկ վանքերի ներսում, երբ սառչում է մարդկային արյունը, մի՞թե գերադասելի է։ Եթե դու զորական լիներիր, ինձ կնետեիր ձիուդ

թամբին, կգողանայիր ինձ, չէիր երկնչի ոչ երկնավոր, ոչ էլ երկրավոր իրավունքատերերից...

— Մեղավոր մտքեր ունես, Դրախտիկ, սիրունս։ Կարելի չէ այդպես խորհել...

— Ես չեմ կամենում կորցնել իմ սերը, չեմ կամենում։ Սերը հարկավոր է պաշտպանել, զի այն բռնություն չի հանդուրժում։ Ես մեր սերն եմ կամենում փրկել։ Կամենում եմ ապրել սիրո համար, մեռնել սիրելով։ Իմ սիրտը ափեափ սեր է, սրտիս կամքը ամենասուրբ հրամանն է ինձ համար...

— Ոգիդ կորցնելու գնո՞վ...

— Կկորցնեմ քեզ, կկորցնեմ նաև ոգիս։ Առանց քեզ, քիչ առաջ ասացի՝ անապատ կգնամ, իսկ քեզ հետ, Գրիգորիկ, չեմ հրաժարվի նույնիսկ դժոխքից...

— Ախ, Դրախտիկ, ինչպես համոզեմ քեզ, որ այդ մտքերը ոգեկործան են, երկնային տերը չի հանդուրժում հոգու և մարմնի անկարգությունները, իսկ ես ուխտել եմ նրա նվիրյալը դառնալ, ուխտել եմ մերժել աշխարհիկ բոլոր շփերթությունները...

— Սուտ ես բարբառում, Գրիգորիկ։ Սերը դու շփերթություն ես համարում, երբ այն ամենաօրինական իրավունքն է մարդու։ Ես աստծուց չեմ վախենում, զի սիրում եմ նրան։ Դու երկնչում ես նրանից, քանզի պաշտում ես նրան և առավել, պաշտում ես, վախենալով նրանից։ Վախը սեր չի ծնում, Գրիգորիկ, վախն ամլացնում է սիրո պտղաբերող հանճարը։ Վախը պարտադրում է խոնարհություն, շողոքորթություն և կամազրկություն...

— Քո բերանով խոսում են մեր ոտոխները, Դրախտիկ։ Նրանք հերձվածող են։ Դու արդար ես, իմ արեգակ արդար, մի՛ խոսիր, բա՛վ է, ես վախենում եմ քո հոգու համար...

— Թե որ քո ճանապարհը որոշ էր և սերդ պիտի զոհեիր վանքին և աստծուն, էլ ի՞նչ էիր ուզում ինձանից։ Ի՞նչ էիր աղերսում Դրախտիկից։ Ո՞ւր էիր գալիս տեսություն, ո՞ւր էիր գլխահան անում ինձ... Ինչո՞ւ էիր ուխտագնացի նվիրումով շրջագծում մեր վրանը...

— Չգիտեմ, Դրախտիկ, չգիտեմ,— տնքաց Գրիգորը։ Չգում էր, որ պարտվելու է։ Նա նման շեշտակի, անթաքույց և ծանր խոսակցության պատրաստ չէր։ Հասկանում էր, որ հոգին երկփեղկված է. սերն իրենն է պահանջում, աստված՝ իրենը, և երկուսն էլ պահանջկոտ են։ Տիրոջից երկնչում էր և սիրում, այո՛, սիրում և պաշտում էր նրան։ Ուխտել էր լինել իր հավատարիմ հավատավորը։ Պաշտամունքն առ աստված, այնուամենայնիվ, երկնային տիրոջը ոչ թե մոտեցնում, այլ հեռացնում էր նրանից, քանզի պաշտողի և պաշտվածի միջև ընկած է երկնքի ու երկրի անհատակ անդունդը։ Դրախտիկի սերն ուրի՞շ է։ Լուսեղեն ու ցավոտ, վեհացնող ու խանդավառող է նրա սերը։ Առանց նրա դատարկ է մեծ աշխարհը, նրանով տաղն ու բանաստեղծությունը, խելագար հրճվանքն ու արարման երջանկությունը լցնում էին նրա հոգին ափեափ, և նա հավատում էր, որ իր հոգին աստծո տիրույթում է, որ ինքն աստվածանում է և ի զորու է խոսք խոսել աստծո հետ։

— Գրիգորիկ, փախցրու ինձ, հա՞...— խնդրեց աղջիկը։— Գնանք հեռու, ուր քեզ չեն ճանաչում։ Մեղանչելով կքավենք մեր մեղքերը, եթե սիրելը մեղք է։ Աստված մեզ կհասկանա, կների։ Աստված գթասիրտ է, մենք իրապես նրան չենք ճանաչում։ Մենք թող որ նրա հավերժական պարտապանը դառնանք, միայն պաշտպանենք մեր սերը... Փախցրու, տար ինձ այստեղից...

— Չեմ կարող, Դրախտիկ, մեր սերը թող նվիրական լինի, գաղտնի լինի...

— Եթե սիրելն արգելված է, ուրեմն արգելքը դրված է սիրո բոլոր դրսևորումների վրա, Գրիգոր։ Աստծուց անկարելի է բան թաքցնել։ Նրա համար գաղտնիքներ չկան։ Դու շփոթված ես և կամքդ ընկճված է...

Գրիգորը զգում էր, որ աղջիկը ծանոթ էր Թոնդրակյանների անիծյալ վարդապետությանը և սարսափում էր դրանից։ Այս աղջիկը ավելի քաջ է տրամաբանում, քան ես, ե՛ս, որ վանական դպրոցի աշքն եմ։ Նա ոչ մի կերպ և ոչնչով չի ցանկանում փորել իր սերը։ Նա քաջասիրտ է և հանդուգն, իսկ ես, ես արժանի չեմ նրան։ Արժանի չեմ նաև տիրոջը, նրա հետ անկեղծ չեմ։ Վանքը, մերժելով ընտանիքը, բոլորանվեր սեր է պահանջում։ Ընտանիքը չի խանգարում վանքին այս պարագայում և ոչ էլ կարողանում է հաղթահարել վանական արգելքները։ Գոյություն ունի անկման երկու տեսակ՝ մարմնական և բարոյական։ Առաջինը սովորական է, երկրորդը՝ կրկնակի անկում է, կրկնակի մահ, քանզի բոլոր աստվածընդդեմ արարքները ենթակա են պատժի և դատաստանի։ Եթե ականջալուր լինեմ աստվածակերպ այս աղջկան, ճակատս կզարդարեմ աղվեսաղրոշմի խարանով և հոգիս կհանձնեմ տարտարոսին։ Իսկ եթե մերժեմ այս սիրունին, մահն ավելի գերադասելի կդառնա, քան ապրելը։

Հոգու ցավից ու անորոշ վիճակից խոնարհվել և ճկվել էր Գրիգորի կամքը։ Դրախտիկը ցանկանում էր, ճգնում բարձրացնել, արիացնել նրան, իսկ նա վախեցած էր, շփոթված, ճակատից թափվում էր քրտինքը։ Վերջապես նա իմացավ նաև սրտի տեղը, որովհետև նվում էր սիրտը, ցավում ու ծակում։ Եվ բալասանը պետք է որ սերը լիներ, որ մերժում էր ինքը, մերժելով նաև բուժելու հնարը։

— Գրիգորիկ, սիրելիդ իմ, չփեսայացած փեսացուս, չծնված որդուս հայրը, իմ միակը, իմ եզակին, ես նորից եմ հարցնում, բաժանվե՞նք իրարից, հեռանա՞նք...

— Ես քեզանից հեռանալ չեմ կարող, Դրախտիկ, ես առանց քեզ չկամ, հավատա...

— Ուրեմն, փեսայացիր ինձ, Գրիգորիկ...

— Չեմ կարող, Դրախտիկ, քեզ համար պատրաստ եմ մեռնելու, իսկ փեսայանալ անկարող եմ, անուժ, կամքիս տերն աստված է...

— Ուրեմն, իրավունք տուր, որ վերստին ես լինեմ իմ սրտի տերը, հոգիս ի բաց արձակիր և տուր ինձ մեռնելու հնարավորություն, որ առանց քո սիրո երջանկություն է...

— Չեմ կարող, առանց քեզ չեմ կարող, չեմ կարողանում նաև քեզ հետ, ժամանակ տուր գտնելու առանց քեզ՝ քեզ հետ լինելու անհնար հնարքը...

— Այդ հնարքն արդեն դու պեղել ես, Գրիգորիկ, տաղերում կսիրես ինձ, կձոնես շարականներ, ինձ աստվածուհի-կհռչակես, որմնանկարներին և բարձրաքանդակներին կքանդակես իմ պատկերը։ Ես միշտ կլինեմ քեզ հետ, միշտ կլինեմ քոնը, բայց դու երբեք չես լինի ինձ հետ, չես լինի իմը, չե՛ս լինի, չե՛ս լինի... Ի վերջո, ես երբեք չեմ ցանկանում լինել աստվածամայր, ես ուզում եմ կին լինել, քո կինը, Գրիգորիկ...

— Կլինես, աստվածամայր, Դրախտիկ, այդքանն էլ ինձ բավական է...

— Մեղք է աստվածամայրը, ես լեցուն եմ մեղքերով, Գրիգորիկ, աստվածամոր տեղը իմը չէ...

— Քոնն է, քո՞նը, Դրախտիկ...

— Իմ տեղը քո գիրկն է, Գրիգորիկ...

Եվ շփոթված պատանու առջև հանկարծ ճառագայթեց արևը, Դրախտիկի գիրգ թևերը վերածվեցին արևի շողերի և նա սուրաց դեպի երկինք։ Նրան բռնել փորձեց Գրիգորը, բայց ապարդյուն, քանզի լույսն անհնար է բռնել։ Եվ Դրախտիկը լուծվեց ու միացավ արևին։

— Դրախտի՜կ...— ցավով ճչաց ու արթնացավ։

Առաջինը, որ տեսավ, ուսուցչապետ Անանիայի դեմքն էր, որ թեքվել էր վրան և զարմանքով նայում էր իր զարմիկին։ Աչքերում կոշտություն կար և անփայլ կարեկցանք.

— Քեզ ի՞նչ է պատահել, որդի՛ս։ Երեսիդ գույն չկա, գինու հոտ է փչում քեզանից, ինչպես գինու տկճորից։ Հոգիդ նեղության մեջ է, Գրիգոր, վարմունքդ վանականի չէ։

— Երազիս մեջ տիրամորը նվիրված տաղ էի արարել, ուսուցիչ...

— Դրախտի՞կ էր քո տիրամոր անունը, չմոռանաս, զարմիկս, որ աստվածամոր անունը Մարիամ է, սուրբ Մարիամ...

***

Կղզին հանկարծ խառնվեց, իրար անցավ։ Զորականներ համախմբվեցին և հնչեցին խստաշունչ հրամաններ։

— Ծով նետեցին, ծով նետեցին,— գոռացին այս ու այն կողմից։

— Ո՞ւմ նետեցին, ո՞վ նետեց,— տեղում էին հարցեր առանց պատասխան ստանալու։

Արևը թեքվել էր մայրամուտ և այրվում էր լճի ջրերում։ Շառագունել էր արևմուտքը, շառագույն էր լճի արևմտյան կեսը։ Տաճարի ոսկեզօծ մեծ խաչը խրվել էր մայրամուտի արնագույն շառափի մեջ։ Կղզու սպիտակ մարմինը ստվեր էր նետել, շոշափում էր լճի առափնյա ջրերը, ուր աղմուկով վազում էր խուճապահար ամբոխը։

Կղզու արևմտյան ափին աղմուկն ավելի շատ էր, ձայների ընդհանուր խռով մռլտոցի մեջ դժվար էր տարբերակել խոսքերը աղմուկից։ Հետո մարդիկ վազեցին դեպի տաճարը, շփոթված էին, վախեցած և երկարժամանակ չէին կարողանում հասկացնել կատարվածը։

— Վանականին, այնտեղ...

— Ի՞նչ արեցին,— հարցնում էին բոլորը միանգամից։

— Տասը հոգուց ավելի էին, սարսափելի մարդիկ էին, ասում էին՝ կաքավողի մահը սև վեղարավորներին չենք ներելու։

— Ովքե՞ր էին...

— Չգիտեմ,— հևասպառ խոսում էր գուժկանը,— բռնեցին վանականին, վզից քար կապեցին ու նետեցին ծովը, ծովը նետեցին...

— Ովքե՞ր էին,— հարյուրապետը ցանկանում էր իմանալ, ինչ-որ ձևով, նշաններով ճանաչել հանցավորներին,— ի՞նչ մարդիկ էին, շինականնե՞ր էին...

— Շինականներ էին...

— Հետո ի՞նչ եղան, ո՞ւր գնացին...

— Փախան դեսուդեն, տարբեր կողմեր, խառնվեցին ամբոխին...

Զորականները հանկարծ շատացան, շատացան և վերածվելով զորաշղթայի, շուրջկալեցին կղզին։ Ձեռքերը սրերի երախակալներին, նիզակները հորիզոնադիր բռնած, դաժանացած զինվորները ցաքուցրիվ մարդկանց քշում էին դեպի զինվորների մյուս շարքը, ուր ամենայն բծա-

խնդրությամբ ստուգում էին, կասկածելիներին առանձնացնելով և ուղեկցելով տաճարի մերձակայքում կառուցված արգելախցերը։

Զանգակի ձայն լսվեց։ Դեպի զորաշքթան էր շարժվում վերքերի ու աղտի մեջ կորած մեկը, որի կրծքից կախ ծլնգացող զանգակը ազդարարում էր բորոտի ներկայությունը։

Զորաշքթան բացվեց, շփոթված զինվորները հապճեպ ճանապարհ բացեցին բորոտի առջև։ Վարակվելու ահը մեծ էր։ Բորոտը հանգիստ քայլ արավ բազմության կողմը, երբ հարյուրապետը հանկարծ ծառացավ նրա առաջ։

— Ինչպե՞ս հայտնվեցիր կղզում, ո՞վ բերեց քեզ այստեղ,— սրի ծայրով հեռավորության վրա պահելով բորոտին, խոսեց նա։

— Լաստով անցա, թաքցրի զանգակը,— խոստովանեց բորոտը։

— Սրիկա, թաքցրել ես ու խլացրել զանգակի ձայնը և կղզի սողոսկել, որ ախտահարես, վարակես առողջ մարդկանց, սրիկա՛,— և ծանր ապտակն իջավ այլանդակի քիթ-մուրթին։ Կատարվեց զարմանալի բան։ Դեմքն ասես պոկվեց ու ընկավ ներքև։ Ամբոխն ահից ընկրկեց, առաջին հետաքրքրասերները փախան.— Ա՜հ...

— Դիմակն ընկավ, դիմա՜կը...— Սպան հասցրեց երկրորդ հարվածը և դիմակազերծ անծանոթը փռվեց գետնին,— շղթայել սրան...

Բարձրացրին։ Երիտասարդ էր։ Բերանի անկյուններից արյան բարակ շիթերը դանդաղ հոսում էին օձիքն ի վար։ Աչքերը տխուր էին։ Ոչ սարսափ, ոչ շարժություն՝ տխրությունից բացի։ Դեմքը կանոնավոր էր։ Սև այտամորուսները իջնում և խառնվում էին փոքրիկ և խիտ մորուքին։ Ձեռքերն արագ շղթայեցին, և հարյուրապետը կիպ մոտեցավ և ֆշշացրեց նրա դեմքին.

— Ո՞վ ես դու...— շարագուշակ էր ձայնը,— չասես՝ կսպանեմ...

— Ի՞նչ կարևոր է, թե ով եմ ես, իսկ եթ կսպանես՝ հայտնի բան է։

— Դո՞ւ ջրասույզ արիր վանականին, խոսիր...

— Ես ջրասույզ արի վանականին, խոստովանում եմ...— հանդարտ պատասխանեց շղթայվածը։

— Ինչո՞ւ, հերձվածող սրիկա, ինչո՞ւ...

— Կաքավողն իմ հարանացուն էր։ Ինչո՞ւ սպանեցիք նրան։ Նա կաքավել էր ցանկանում, նա ուզում էր զարդարել այսօրվա հանդեսը։ Եթե ինձ չսպանեք, ես խոստանում եմ կործանել այս տաճարի ողջ միաբանությունը, ողջ ոճրաբույնը։ Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման...

Անանիա ուսուցչապետը ուսուցիչներով առաջ եկավ և սկսեց ուշադիր զննել շղթայակապ երիտասարդին։ Եվ զարմանքից լայնացան աչքերը.

— Դու այստեղ, այս վիճակում, Հուսիկ ծաղկող...

— Ես, ուսուցչապետ, և դժբախտաբար այս վիճակում։

— Աստծո ծառադ մարդասպանի դերում։ Կարելի՞ բան է, Հուսիկ վարդապետ։

— Դու զուր ես ինձ վարդապետ կոչում, հայր Անանիա։ Չէ՞ որ դուք ինձ բանադրեցիք, զրկեցիք ամեն ինչից։ Դուք աղվեսադրոշմով խարանել փորձեցիք իմ ճակատը, երբ ես հանդգնեցի անհամաձայն լինել քո «Հակաճառությանցին»։ Եվ ես փախա...

— Հերձվածողների բույնը՝ Թոնդրա՞կ, այո՞...

— Թոնդրակյանների համայնքը, ուսուցչապետ, ազնիվ ու բարեկամ մարդկանց համայնքը։

— Եվ ծպտված եկար այստեղ մարդասպանության և աստվածասպանության արհեստին կատարելապես տիրապետա՞ծ...— կաղկանձեց Կունծիկ աբեղան։

— Լսիր, սատանայապետ, մարդասպանությունը դու դատապարտելու իրավունք չունես, դու լրտեսությունը, մատնությունը դատապարտելու իրավունք չունես, այլապես դա նման կլիներ ինքնախարազանման, ինքնադատափետման և, մանավանդ, ինքնասպանության, որոնք կատարածելու դու քաջություն չունես, սակայն հաճո կլիներ և մեր աշխարհին, և նույնիսկ աստծուն, եթե դու այդ քաջությունն ունենայիր... Կմաքրվեր մեր աշխարհը և կփրկվեր աստված իր ամենավտանգավոր թշնամուց, քանզի դու նաև խելոք ես ու իմաստասեր, թեև արյունն ու անեծքն են քո ճանապարհի միակ ցուցանիշները...

— Նզովյալ լինես,— ատամների միջից ֆշշացրեց Կունծիկը,— հայտնի բան է, որ աստծուն և աստծո որդուն հայհոյողը, ողջ ուխտին հայհոյելու և ամբաստանելու քաջություն էլ կունենա։ Նրա կյանքը խլելը դեռևս նրա հասանելիք պատժաչափը չէ։ Հարկավոր է հատել նրա լեզուն արմատից, որ միայն կլանչել կարողանա, ինչպես շունն է կլանչում լուսնի վրա։ Հատել նրա աչը, որ մեսրոպյան գրերով սրբություններ պղծել չկարողանա։ Կուրացնել նրան, որ աստվածային լույսը խռովի նրանից և ուրեղի խավարումը կատարյալ դառնա։ Տարեք սրան և չշտապեք սպանել և դրանով իսկ փրկել խսկական պատժից։

— Չարության մեջ ձեզ դժվար է հաղթել, Կունծիկ աբեղա, իսկ բարությունը քեզնից հալածական քո թշնամին է։ Անանիա վարդապետի խելքը ևս մեծագույն չարիք է աշխարհիս հայոց, զի նրա հետ անհնար է չափվել։ Նրա խելքը հաղթական գործիք է, զենք՝ ճշմարտությունը հակառակ դեմքով ցուցանելու գործում։ Սատանայական այդ զենքը պարտություն չի ունենա։ Անվրեպ զենք է քո խելքը, ուսուցչապետ...

— Ցցի հանել սրան,— շտապեց Ռշտունյաց երիտասարդ իշխանիկը, որ հասել էր դեպքի վայրը,— կտոր-կտոր անել...

— Ա՜յ, ես դրանից եմ վախենում,— խոսեց ուսուցչապետը,— իշխանիկ, ցցի հանելը քրիստոնեից համար օրինական չէ, անօրեններին է հատուկ։ Հետո ցցի հանելը մեղմ պատիժ է այս հերձվածողների, շեղվածների, բորբորիտների համար։ Սրան հարկավոր է...

— Արգելախուց տանել,— լսվեց հզոր ու տիրական մի ձայն, և Գրիգորը շրջվեց ու տեսավ Վասպուրականի տիրոջը՝ Աշոտ-Սահակ ալ.քային։

— Կղզուց դեպի ցամաք ընթացողներին խուզարկել և բոլոր կասկածելիներին բանտարկել, տանջամահ անելու սպառնալիքով և գործադրումով ստիպել մատնելու մարդասպաններին և աշխարհիս անդորրը խառնակողներին։

Եվ պատվո զորաշղթայի միջով քայլեց դեպի արքայական ծանրազարդ նավը։ Կղզին դանդաղորեն, կաթիլ-կաթիլ, մեկիկ-մեկիկ դատարկվում էր մարդկանցից։ Յուրաքանչյուր անծանոթ և կասկածելի մարդու բաժինը ծեծն էր, և կղզին լցվել էր վայնասունով։ Որոնում էին մեղավորների և գործում էին մեծագույն մեղքը՝ անմեղ ու մեղավոր մտրակելով և գանահարելով։ Թագավորի հրամանը կատարվում էր այնպիսի փութաջանությամբ և եռանդով, որ կշարժեր նույնիսկ Բեհեղզեբուղ սատանայապետի նախանձը։

— Օրն սկսվեց ողբերգությամբ և ողբերգությամբ էլ ավարտվեց,— իրադրությունը գնահատեց Անանիան և շրջվեց դեպի տաճարը,— Հայր մեր, որ յերկինս ես,— դողդողաց նրա փափուկ ու կրծքային ձայնը,— քո որդիներն այսօր զոհ են չարի ու ամբաստանության... Հերձվածողները ճգնում են մեզ խլել քեզանից, նրանք մեր ոգու մեջ բաց ճեղքեր են որոնում, որ խցկվեն, ապականեն ու կաթվածահար անեն քեզանով հարուստ մեր ոգին։ Նրանք քանդում և հրկիզում են քո եկեղեցիներն ու տաճարները, որպեսզի մեր ձայնը խլացնեն և քեզ չհասնի։ Նրանք աստծո տրդուն խլում են քեզանից և հոչակում հողեղեն, որպեսզի հրովարտակեն նաև քո հողեղեն, երկրային որդիներիդ և պաշտողներիդ ոչնչացնելու իրավունքը։ Նրանք թալանում են մեր ինչքն ու հարստությունը, որպեսզի աղքատի, չունևորի վիճակը մեզ ստիպի դժգոհելու քեզանից և արժանանալու քո ոչնչացնող բարկությանը։ Քեզանից խլում են քեզ պաշտողներին ու երկրպագուներին, որպեսզի դու, երկնային տեր, զրկվես մեր արտահույզ օվսաննաներից և քո փառքը խնկարկողներից, որպեսզի քեզ քաշեն հողեղենների գարշ ճահիճը։ Տե՛ր, ողջ լեր և մեզ օգնեա դատապարտելու նրանց կատարած հանցանքի ճիշտ պատժաչափով և երկրի երեսից ջնջելու նրանց գարշահոտ և ապականիչ գոյությունը...

Աչքերից գլորվում էին արցունքի խոշոր կաթիլներ և անհետանում մորուքի փառահեղ և սպիտակ հյուսվածքի մեջ։ Գրիգորի հոգին երկվության մեջ էր։ Չնայած ջերմեռանդությանն ու անկեղծ տրտմությունից և տագնապից ծնված նրա խոսքերին, Գրիգորը հայտնապես զգում էր, որ նրա աղոթքն առ աստված առավել խստաշունչ և ավելի քան անհամատեղելի է պայծառ հոգևորականին, գիտունին և ուսուցչապետին։ «Այո՛, հորեղբայրս շարացած է և գուցե իրավունք ունի շարանալու։ Սակայն ինչո՞ւ է դաժանությունը հոչակում մարդկանց մոլորությունները դատաստանելու միակ միջոցը։ Բանավեճը եթե բաժինն է հոգևոր պետերի ու գիտունների, ապա հրով ու սրով վիճակի կարգավորման գործը հեռու է նրանցից և զորականների մենաշնորհն է։ Թող կարգ ու կանոն սահմանեն նրանք, համոզելն ու ճշգրտելը թողնելով մտքի ու ոգու մարզին։ Դաժանացել ես, ուսուցչապե՛տ, մեղմիր բարկությունդ, մեծագործ այր, որպեսզի այն չվերափոխվի կրքի և մարդկանց մղի պատժիչ գործողությունների։ Երբ բախվում են գաղափարները, և վեճն անլուծելի է, ի վերջո հարցը լուծվում է զենքի միջոցով, դա հայտնի բան է։ Սակայն աստծո տիրույթը զենքով մտնելը աստվածընդդեմ մեղք է և աստված կարող է պատժել օրինազանցներին, իսկ աստծո պատիժը ոգու և հոգու կորուստ ու կործանում է միաժամանակ։ Դադարիր, ուսուցչապետ, որպեսզի դու հաղթես, այլապես դաժանությունը կարող է զզրկել քեզ քո հեղինակությունից ու մեծությունից»։

— Օրն սկսվեց ողբերգությամբ և ողբերգությամբ էլ ավարտվեց,— նորից կրկնեց Անանիան,— այս խառնակությունը դեռ շատ ջուր կվերցնի,— և բարձրացավ տեղից։— Ի՞նչ եք ասում, գուցե հավաքենք վրանը, պահ է մեկնելու, իրիկնաժամ է...

Կղզին դանդաղորեն դատարկվում էր։ Կապույտ երեկոն հայտնագործում էր տաճարի սպիտակ, մարմնագույն նստվածքը մուգ կապույտի մեջ։ Ճարտարապետի հանճարը բարձրաքանդակների, խոյակների, որմնասյուների այնպիսի հրավառություն էր սարքել, որ թվում էր, թե հրաշակերտ կառույցն ուր որ է թևերը կտարածի և թեթևորեն կճախրի դեպի վեր, դեպի երկինք, դեպի աստծո բարձունքները։ Մակույկները, լաստերը դանդաղորեն և անտրամադիր լքում էին Աղթամար կղզին, ուր մարդվային հառաչանքներն ու անեծքները շարունակում էին ճնշել տաճարի հանդիսավոր լռությունը։ Այդ պահին Գրիգորի աչքին երևութացավ Դրախտիկը։ Նրանց ընտանիքը վերադառնում էր տուն։ Աղջիկը շարաճճիորեն ժպտում էր Գրիգորին, թափահարելով ձեռքերը.

— Գրիգո՛ր, չդրժես խոսքդ, ես քեզ կսպասեմ մեր շենում...

ԴԵՊԻ ԱՆԻ

Դժվար ու վտանգներով լեցուն ճանապարհը երկար տևեց։ Իրարանցումն ու խառնակությունը Հայաստան աշխարհը տատանում էին, ինչպես փոթորիկի ալիքները հողմավար նավը։ Գրիգորը փայլուն կերպով ավարտել էր Նարեկա համբավավոր ճգնակենցաղ միաբանության կրթարանը, ձեռնադրվել սարկավագ և միաբանության անդամ։ Մեծահամբավ էր արդեն։ Նրա տաղերը, շարականները նվաճում էին երկրի վանքերն ու եկեղեցիները, կրթարանները՝ զարդարելով պատարագներն ու ժամասացությունները։ Մինչդեռ երիտասարդ կրոնավորը Անձևաց աշխարհից տակավին դուրս չէր դրել ոտքը։ Խնդրեց հոր՝ Խոսրովի և ուսուցչապետի՝ Անանիայի համաձայնությունը, որպեսզի թույլ տրվեր հայաշխարհի մասին իր գիտելիքները լրացնելու, ամրապնդելու շրջագայությամբ, քանի որ ավելի նշանակալից է մեկ անգամ տեսնելը, քան բյուր անգամ ականջելը։

— Ժամանակը բարի չէ,— նկատեց Անանիան,— խառնակ է վիճակը երկրիս, ճանապարհները վտանգավոր և ավազակներով ու ավարառուներով լեցուն։ Ժամանակը ճամփորդելու չէ, զավակս...

— Իսկ ե՞րբ է հանգիստ եղել աշխարհը հայոց, ե՞րբ է որ խառնակ չի եղել մեր հայրենյաց վիճակը, ուսուցչապետ։ Գոնե այժմ, երբ խրժդրժությունները ներքին են և ոչ օտարածին, երբ դիմացինդ գոնե հասկանում է քո լեզուն, հարմար է պահը Հայաստան աշխարհը շրջագայելու և ճանաչելու...

Անանիան տարակուսանքով շարժեց գլուխը։ Համաձայն չէր զարմիկին։

— Չես հասկանում, զավակս,— դիմեց Գրիգորին,— ներքին խժդժությունները առավել վտանգ ունեն և առավել անողոք են։ Թոնդրակյան խավարամոլները լոկ եկեղեցու թշնամիները չեն։ Նրանք թշնամի են բոլոր նրանց, ովքեր ինչքի և կարողության տեր են, ովքեր շներ չեն բոկոտն ու սովալլուկ, նրանք թշնամի են իշխանության, հարստության, իրավունքի և կարգուկանոնի, թշնամի են այն ամենին, ինչ մարդուն մարդ է պահում և տարբերում անասունից։

— Ես դա գիտեմ, ուսուցչապե՛տ, բայց ես հայ մարդ եմ, իմ թշնամին գիտե իմ լեզուն, կհասկանա ինձ, այնտեղ ուր օտարը սրով կլուծի հարցը, այստեղ գուցե բավ լինի միայն լեզուն...

— Ուրեմն, դու ծպտված պետք է շրջես մեր աշխարհում, զավակս։ Դու բարեկրոն ու բարեկիրթ, քանքարավոր և, միաժամանակ, անփորձ երիտասարդ ես, որ կարող է հայտնվել հերձվածողների և անաստվածների շրջապատում և դառնալ քավության նոխազ։ Իմացի՛ր, թանկարժեք է այն արյունը, որն ազնվական է, այն անունը, որ իշխանական է, և այն հավատը, որ լուսավորչական է և աստվածանվեր։ Դու քո անունով, արյունով և հավատով հակադարձ ես հեթանոսաց և հերձվածողների...

Երկար խորհեցին, մտածեցին և ի վերջո գտան հնարը։ Ծպտված Գրիգորին կընկերակցի վանքի ծառան՝ Հակոբիկը, և նրանք կճանապարհվեն որպես թափառող գուսաններ, իրենց հետ ունենալով ուտելիքով թեթևակի բեռնված գրաստը։ Վերջնական նպատակակետը պետք է լինի Անին, հայոց աշխարհի նոր ու արագընթաց ծաղկում ապրող Բագրատունյաց մայրաքաղաքը։

Առաջին օրը գիշերեցին լճափին։ Տաք գիշեր էր։ Իրենք՝ հանգստի կարոտ և արթնացան լուսադեմին, երբ ադամամութը թանձր էր ու կոշտ, և լճից փչող թույլ քամին թափանցում էր ոսկորները։ Ցրտել էր, ցուրտն էլ արթնացրեց նրանց։ Գրիգորը երկար ճմրտկոտում էր մարմինը, վազվզում, մինչդեռ լիճն ու ցամաքը, երկինքը նաև տարբերակվելու ճիգերի մեջ էին։ Աստղերը մեծ էին, երկրին մոտ։ Երկնքի այդ կերպը անծանոթ էր նրան։ Հետո, երբ մութը թուլացավ և թույլ, անլվա կապույտը սկսեց մեկիկ-մեկիկ կլանել աստղերը, երևաց լճի սպասուն երեսը, Գրիգորը խաչակնքեց ջերմեռանդորեն, որովհետև արևելքում հայտնվող կարմրավուն բիծն ազդանշանում էր արևի հայտնվելը։ Երկինքը ծննդյան ցավի մեջ էր։ Մութը նահանջում էր դժվարությամբ, մարտնչելով, իսկ վերևից ճնշում ու ճնշում էր լույսը՝ քայլ առ քայլ տատանելով մթությունը և հրելով ու քշելով լեռնագագաթներից ներքև։ Հետո լույսը տիրացավ ու թառեց լեռնագագաթներին, ոսկեզօծեց նրանց ալեհեր գագաթները։ Ասես միանգամից արթնացան հսկաները, և նրանց՝ Սիփանի, Վարագի, Նեմրութի, Արտոսի, Տավրոսի գրկում ժպտալով ու նազանքով, ծփծփալով ու սրսփալով արթնացավ գեղեցկուհին՝ Վանա լիճը։ Ճանապարհը փաթաթվել էր լճափին և ոլորվում էր դեպի հյուսիս, դեպի Ոստան, դեպի Վան։ Հետո պետք է թեքվեին դեպի արևելք, դեպի Ազատն Մասիս և մայր Արաքսի ափով շարունակեին իրենց ընթացքը դեպի քաղաքամայր։ Ճանապարհը գեղեցիկ էր, գյուղերը ծաղկուն ու շեն։ Շինականները գուսանի կարիք ու կարոտ ունեին, և Գրիգորը, որի ձայնը զիլ էր ու ախորժալուր, կարողանում էր հինավուրց ավանդություններն ու ասքերը բարեխղճորեն մատուցել մարդկանց։ Հայկի ու Բելի, Արա Գեղեցիկի և հայ նախնյաց մեծագործությունների հոլովումով վաստակել ոչ միայն հացը հանապազօրյա, այլև շեներում ճանաչվել որպես շնորհաշատ գուսան, որի հանդիսականներին թիվ ու համրանք չկար։

Անմոռանալի տպավորիչ եղավ Ազատն Մասիսի երևութանալը հորիզոնում։ Նախ, կարծեց ամպակուտակումներ են, հետ չքվեցին ամպերը, նրանցից ազատված Մասիսը հանճարեղացավ դեմ-դիմաց՝ հյուսիսում, փոքր Մասիսը գրկին սեղմած։ Նախճավան քաղաքի իշխանատանը նրանց թալանեցին։ Գողացան նախ գրաստը, որ կրում էր նրանց ուտելիքը և հագուստները։ Գողի ձեռքին բռնեցին Գրիգորի դրամով լեցուն քսակը։ Ինչպես էր թոցրել կապայի գրպանից, չհասկացան։ Հանցագործն ամենայն սառնասրտությամբ երդվեց և փորձում էր հավատացնել, որ քսակն իրենն է, այլ ոչ թե Գրիգորինը։

— Ավազակ ես դո՛ւ,— չդիմացավ երիտասարդ տաղերգուն։

— Ե՞ս,— սպառնալից առաջ եկավ հանցագործը։

— Իհարկե դու, ավազա՛կ...

Դանակի փայլը նկատեց անմիջապես, ետ-ետ գնաց, ոտքն առավ քարին և տապալվեց մեջքի վրա։ Ընկնելն էլ փրկեց նրան, իսկ հաջորդ վայրկյանին հանցագործը ինչ-որ մեկի ահեղ հարվածից գլորվել էր ներքև և կիտակենդան ափլփում էր, բերանը բաց ու խուփ անելով։ Հակոբիկը բարձրացրեց փոշեթաթախ Գրիգորին, և նա տեսավ իր առջև կանգնած ազատարարին, որը ժպտալով մեկնեց դրամապանակը։

— Ի՞նչ ուժ ունես,— գովեց Գրիգորը։

— Գործս, բանս ուժի հետ են,— ասաց,— կոփամարտիկ եմ, անունս Մուշեղ է։

Գողը դժվարությամբ վեր կացավ ու օրորվելով չքվեց, հեռացավ։ Գրիգորը կարծում էր, որ նա անպատճառ կդիմի իշխանին։

— Դա բացառված է,— ասաց Մուշեղը,— գողը իշխանին չի դիմի, իսկ դուք որտեղի՞ց եք և ո՞ւր եք գնում,— հարցրեց նա Գրիգորին։

— Անձևաց աշխարհից, գուսաններ ենք,— ասաց Գրիգորը,— գնում ենք մայրաքաղաքս հայոց, ասում են քաղաքը մեծանում և շենանում է այնպիսի արագությամբ, որ քաղաքի պարիսպներն անընդհատ շարժման մեջ են, լայնանում են ու լայնանում։

— Ասում եք՝ Անձևաց աշխարհի՞ց եք,— Մուշեղի դեմքին ստվեր իջավ,— խելոք են ձեր աշխարհի մարդիկ, դաժան են ձեր աշխարհի մարդիկ, երդվյալ մարդատյացներ են ձեր աշխարհի մարդիկ։ Նրանց աչքին բոլորը հերձվածողներ են և սատանայի գործակիցներ։ Ես ծանոթ եմ ձեր մարդկանց, նրանց գործերին։ Նարեկա վանքի Անանիա վանահոր «Հակաճառությանը», թեև անվրեպ իմաստասիրություն է՝ ստվածաբանական թեքումով, սակայն անմարդկային ու անպիտան՝ և՛ եկեղեցու համար, որին պաշտպանում է, և՛ թոնդրակյանների համար, որոնց դատափետում է և ամբաստանում...

Գրիգորը զարմացել էր։ Խոսողն ասես կոփամարտիկ չէր, այլ ուրիշ մեկը։ Եվ այդ ուրիշն անկասկած թոնդրակյան էր կամ նրանց հարող։ Ո՞վ է այս մարդը, մտածում էր Գրիգորը, ի՞նչ անել, բանավիճե՞լ, թե ասպարեզը թողնել նրան, որ բաց անի իր հոգին ու իր մտքերը և մատնի իր ով լինելը...

— Ես գուսան եմ, եղբայր Մուշեղ։ Իմ գործը հեռու է իմաստասիրությունից։ Բայց այն, ինչ դու ես ասում, քննության չի դիմանում։ Ինչպես կարող է անվրեպ աշխատասիրությունն անմարդկային լինել...

— Լինում է, լինում,— դառը ժպտաց Մուշեղը,— միշտ չէ, որ աստծո անունից խոսողը բարբառում է ի շահ ժողովրդի, որին աստծո անունով թալանում են ու խաբում։ Հողածինը ներկայացնում որպես աստված, եկեղեցու գողերին և ավարառուներին՝ որպես աստծո ծառաներ և սպասավորներ, որպես աստվածային կարգուկանոնի պաշտպաններ։ Այ ես, սիրելիդ իմ գուսան, ճանաչում եմ Նարեկա վանքի գրիչ-տաղերգուներից մեկին, որին Գրիգոր են հորջորջում (Գրիգորը հուշմունքից գունատվեց, նրա մեջքին ասես մրջյուններ շարժվեցին)։ Տաղերգու է, բազմաշնորհ և աստվածաշնորհ։ Եթե նրան Անանիա ուսուցչապետն իր ուսկանը չգցի, մեր տաղերգությունը կարող է սքանչանալ ու լուրջ ակնկալիքներ ունենալ Գրիգոր տաղերգուից։

— Դու կոփամարտիկ չես, Մուշեղ, դու ուրի՞շ ես...— խոսեց Գրիգորը։— Ասա վերջապես ո՞վ ես դու։ Ո՞ւր ես գնում և ի՞նչ առաքելությամբ...

— Իհարկե, իմ կոչումը կոփամարտիկ լինելը չէ,— հեշտ համաձայնեց Մուշեղը,— թեև իմ զբաղմունքի մեջ այդ գործը մեծ տեղ ունի։ Ես Կճավա վանքի վանականներից եմ։ Մեր վանքը գնահատում է թոնդրակյաններին որպես հայ աշխարհիս կրոնական և աշխարհիկ կյանքի բարենորոգիչների։ Թոնդրակյանների ծայրահեղություններն անգամ ունեն արդարացի գիծ և ուղղություն։ Նրանք հոգում են ժողովրդի մասին, որը կողոպտվում է աստծո ծառաներից և իշխանական տներից։ Ես, սիրելիդ իմ Գրիգոր, աճապարում եմ քաղաքս Անի, ուր գործում է թոնդրակյանների զորեղ համայնքը։ Նրանց պետք է քաջալերել, զինել նրանց միտքը, որպեսզի լավ գործի մեջ չնկատվեն թերիներ, սխալներ և չդառնան վարկաբեկիչ փաստեր ձերոնց և ձերոնց նման մտածողների աչքին։

Երեք օր մնացին Նախճավանում։ Հանգստանում էին, դրամ վաստակում, որ ճամփու ուտելիք ունենան, իշխանատներում Գրիգորը գուսանական երգեր ու ասքեր էր տաղերգում և սառը գինով կտրում երբեք չհագեցող ծարավը, քանզի Նախճավանի ջուրը տղմահոտ էր, համը՝ տհաճ, ծանր փորհարինքը կարող էր անկողնուն գամել մարդկանց, այն

էլ ամառվա աստծո կրակ շոգին։ Քաղաքն ամայի էր թվում։ Իշխանական տները բարձրացել էին Սիսականի զով լեռները։ Սակայն անվերջանալիորեն շատ ու աշխույժ էր վաճառականների անցուդարձը, որոնք ուղտերի քարավաններով և ջորիների ու գրաստների շարաններն իրենց առաջը գցած գնում էին դեպի Դվին ու Անի և այնտեղից դեպի Վասպուրական և Ատրպատական աշխարհները։ Իջևանատներում ասեղ գցելու տեղ չկար։ Գողությունն անխուսափելի էր։ Նրանց չէին մոտենում, գողանալիք չկար, չունեին։ Տաղերգում էին և վաստակում հանապազօրյա հացն ու գինին։ Սյունիքում էլն և լուրերի ճամփան երկար չէր։ Լուրեր էին պտտվում, որ շինականները կողոպտում են Տաթևի հարստությունները և կոտորում վանականներին, որ ցուրաբերդցիների խռովությունները թեև հանգցնում են իշխանական տների ու զորաց միջամտությամբ, սակայն շինականներն անզսպելի են և անկոտրում։ Նախճավանում նրանց գտնվելու երրորդ օրվա լուսադեմին քաղաքը լցվեց փախստականների սարսափահար բազմությամբ, որոնք հալածվում էին Սյունյաց իշխանական զորքերի ու ոստիկանների կողմից։ Փախստականները բռնել էին քաղաքի նեղլիկ ու փոշոտ փողոցները, շատերը չէին դիմանում հարթավայրի սպանիչ շոգին և նետվում էին ջրհորների վրա։ Տեսարանը զարհուրելի էր։ Մայրերի հոգնատանջ ու ցամաք կրծքներին նվում էին անոթի և հիվանդ ծծկերները։ Տղամարդիկ ընթանում էին փախստականների հետին շարքերում, հետապնդողներին դիմագրավելու համար։ Շատերը զինավառ էին ու կատաղի, քանզի հետապնդողներն ավելի քան դաժան էին ու արյունարբու։ Քաղաքի մայր եկեղեցու բակում կռիվ բորբոքվեց՝ անգութ, անողորմ, արյունռուշտ։ Ջիավոր հետապնդողները հարձակվում էին շարժվող յուրաքանչյուր արարածի վրա՝ ծեր թե մանուկ, կին թե տղամարդ։ Բազմությունը ձիերի սմբակների տակ տրորվում էր, նետվում դեսուդեն, սակայն անօգուտ։ Եկեղեցու բակում ընդհարումն ավելի կատաղի ընթացք ունեցավ։

— Անօրեններ, ինչո՞ւ եք սրահարում կանանց ու մանկանց,— գոռում էին բոլոր կողմերից։

— Սրահարե՛լ, սրահարե՛լ,— հրամանները հատու էին, և լացն ու կականը, վայնասունն ու հառաչանքներն ի վիճակի չեղան մեղմելու հալածողների դաժանությունն ու արթնության կոչելու գութն ու խղճմտանքը։

Տղամարդ փախստականները բռունցքվեցին եկեղեցու դարպասի առջև և արագորեն դեպի ներս էին հրում յուրայիններին, իրենց ընտանիքներին ու, մանավանդ, երեխաներին, որպեսզի կարողանային փրկել գոնե նրանց մի մասը։ Պարզվեց, որ շինականների բռունցքը ոլորելն այնքան էլ հեշտ չէ։ Քարեր թռան դեպի հեծյալները։ Քարերի անձրև էր տեղում

հալածողների վրա՝ անվրեպ, մահացու և հեծյալներից ոչ քչերը տապալվելով ձիերից, ընկնում էին խռովարարների սրերից ու դաշույններից։

— Սատակել աստծո թշնամիներին,— ձայնը հրեշավոր բարձր էր և լսվեց եկեղեցու զանգակատնից։ Նախճավանի մայր եկեղեցու հոգևորականությունն ու սպասավորները միացան հալածողներին և վանքի բակում պատսպարվածներին երկաթյա ու պղնձե աշտանակներով սկսեցին քշել դեպի մարտնչող իշխանական հեծյալների սրերի ու նիզակների բերանը։ Հոգևորականներից ոմանց ձեռքերին նույնիսկ սրեր ու դաշույններ փայլեցին։ Փախստականներն ընկան երկու կրակի մեջ։ Դրությունը վատացավ, դարձավ անհույս։ Գրիգորը, որ իջևանատան տափակ կտուրից սրտադող ու արցունքն աչքերին դիտում էր այս սպանդը, քիչ էր մնում խելագարվեր կրոնավորների անմարդկայնությունից ու անաստված վայրագությունից։ Նրանք անգթորեն կոտորում էին մանկանց ու կանանց.

— Աստվա՜ծ իմ, ինչո՞ւ ես թույլ տալիս սպասավորներիդ կատարելու այս նախճիրը։ Աստվա՜ծ, մի՞թե չես տեսնում այս ամենը։ Իսկ եթե տեսնում ես ու լռում, ուրեմն դու...

Եվ լեզվի տակ ճխլվեց բառը։ Աստծուն կպչելը մահացու մեղք թվաց, աստվածապղծություն, սակայն աչքերի առջև կատարվում էր հրեշավոր մի բան, որը գնահատելու ուժ և իրավունք չէր գտնում իր մեջ երիտասարդ տաղերգուն։ Իսկ եկեղեցու ավագ քահանան ավելի խստասիրտ ու դաժան, քան զինվորները, զանգակատնից ղեկավարում էր յուրայինների գազանությունները։

— Սպասիր, գուսան, ետևիցս չգաս, ես հիմա կվերադառնամ...

Մուշեղն էր։ Թռավ իջևանատան ցածրիկ կտուրից, հասավ պարիսպներին և շրջվեց դեպի եկեղեցու բակը։ Շուտով կորավ Գրիգորի տեսադաշտից և ուր գնալը չիմացվեց։ Զնգում ու թնդում էին եկեղեցու զանգերը։ Տագնապ էին հնչեցնում, և նախճիրը շարունակվում էր առավել ու առավել։ Հետո հանկարծ, ասես հրամանով, դադարեց զանգերի ղողանջը։ Հետո մարդկային մի ոռնացող մարմին հայտնվեց օդում, ինչ-որ ահռելի ուժով նետվեց զանգակատնից ու ջախջախվեց սալաքարերին։

— Ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ...— մարեց մեռնողի ոռնոցը։

Նույնպիսի թռիչքով սալաքարերին զարկվեց ավագ քահանան, և նրա փշրված գանգից դուրս թափվեց արյանը շաղախված դեղնավուն նյութը, որին ուղեղ են անվանում։ «Ի՜նչ ուղեղ, շարության և ոճիրների անոթ, որ արժանիորեն կրեց պատիժը։ Ուրեմն, արդար ես դու, տե՜ր, նա քո սպասավորը չէր, այլ գործընկերը սատանայի, որի պատիժն արդար էր և

աստվածահաճո...»։ Հանկարծ եկեղեցու դռանը նա տեսավ Մուշեղին, Կճավա վանքի միաբանության վանականին ու կոփամարտիկին, որի ձեռքին վերուվարում էր հսկայական երկաթյա ձողն ու շամփրում անգութ եկեղեցականներին։ Նա արդեն եկեղեցու բակում դրության տերն էր և աջ ու ահյակ հարվածներով տապալում էր եկեղեցու առանց այն էլ ոչ ստվար սպասավորներին։ Այստեղ շտկվում էր վիճակը։ Եկեղեցու դուռը բաց էր և ասես շներից հալածված և միմյանց գլխի կուտակված կանանց ու երեխաների բազմությունը հեղեղի նման հոսեց բաց դռներից ներս։ Դռները փակվեցին և դեմ-դիմաց մնացին շինականներն ու զորականները։ Միմյանց էին բախվում տղամարդիկ և առավել ուժգնորեն, քանզի առայժմ ապահով էր թոնդրակյանների թիկունքը, կանայք ու երեխաները պատսպարված էին եկեղեցում։ Հալածողներին ոչ մի կերպ չէր հաջողվում ճեղքել պաշտպանվողների երկաթյա բուռնցքը։ Կռվող կողմերի դրությունը, հոգեվիճակը հավասար չէր։ Փախստականները կռվում էին հուսահատ քաջությամբ, մահն արհամարհելով, որովհետև կռվում էին փրկելու իրենց հալածական կանանց ու երեխաներին, հետևաբար, նահանջելու տեղ ու հնար չունեին։ Նետվում էին հեծյալների վրա, կեռերով քաշելով ձիերից ներքև և գործի դնելով սրեր ու տապարներ, դաշույններ ու դանակներ, նույնիսկ ատամները, խածելով իրենց խոշտանգիչների կոկորդները՝ խեղդում, խեղում, սպանում։ Իսկ զորականները բնավ միտք չունեին իրենց կյանքն սպառելու խաժամուժի ձեռքով։ Նրանք էլ տուն ու ընտանիք ունեին, ուր սպասում էին իրենց և քանի՜-քանի անգամ ընկրկեցին խուճապահար։ Զորականները հորդորում էին, հրամայում, սպառնում՝ առա՜ջ, բնաջնջե՛լ, ոչնչացնե՛լ...

Մուշեղը նորից երևութացավ։ Նրա ձեռքերում վերստին վերուվարում էր երկաթյա ձողը։ Նա ճանապարհ էր բացում կռվողների միջով և ընթանում էր դեպի հարյուրապետը։ Արագորեն հայտնվեց նրա թիկունքում։ Համհարզը նկատեց.

— Հարյուրապետ, փախի՛ր...

Հարյուրապետը հասցրեց դեմքով շրջվել դեպի կոփամարտիկը։ Սուրը բարձրացավ ու կորագծով իջավ Մուշեղի երկաթյա ձողին։ Զորեղ բախումից կայծեր թռան։ Թուրը մեջտեղից երկու կես եղավ, սակայն արյուն երևաց նաև Մուշեղի դեմքին։ Թուրն, այնուամենայնիվ, թեթևակի քսվել էր և վերից վար ակոսել Մուշեղի դեմքը։ Հսկայական երկաթյա ձողը նորից բարձրացավ ու իջավ։ Գանգը կիսեց ձմերուկի նման և փրթեց արյունը։ Հարյուրապետն անշունչ էր և հրամայող այլևս չկար, որովհետև ծանր վերքեր ունեին նաև տասնապետները և այլևս ի վիճակի չէին հրամայելու զորաց։ Եվ զինվորները ընկրկեցին։

Հետո տեղի ունեցավ աննախադեպ, զարմանալի մի բան։ Լրացուցիչ ուժեր ստացան փախստականները։ Խմբի առջևից ձիու վրա զինավառ, հրացայտ հայացքը դեսուդեն հածելով, առաջանում էր շքեղ մի կին։ Սաղավարտի տակից ուսերն ի վար ալիքվում էին սև գանգուրները։ Զրահ ուներ հագին, որ շողշողում էր արևի տակ։ Նրան հետևող խումբը թեև հետիոտն, սակայն զինավառ էր ու հմայվածի նման ընթանում էր իր տիրուհու հետևից.

— Սաթե՜նը, Սաթենի՜կը...— նկատեցին կռվողները։

Հալածողների դրությունը դարձավ հուսահատական։ Զորականները կնոջը տեսնելուն պես կախարդվածների նման կանգ առան, ձեռքերն ասես թուլացան ու զենքերը նետեցին Սաթենիկի նժույգի առջև։ Գերիներ էին այլևս։

— Ես կհաշվեմ, թե քանի դիակ կա մերոնցից,— խոսեց կինը,— յուրաքանչյուր սպանվածի դիմաց թրատել կտամ ձերոնցից մեկին, իսկ կանանց ու երեխաների յուրաքանչյուր սպանվածի դիմաց՝ կսպանեմ ձերոնցից երկուսին։ Համաձա՞յն եք, շինականնե՛ր...

— Համաձայն ենք, տիրուհի,— պատասխանեցին միաբերան։

— Խնայիր մեզ, տիրուհի, խնայի՜ր...— ողբում էին գերյալները։

— Իսկ դուք խնայեցի՞ք սրանց,— մատնացույց արեց դիակները,— խնայեցի՞ք... Ակն ընդ ական, ատամ ընդ ատաման։ Այդպե՞ս է, շինականնե՛ր...

— Այդպես է, տիրուհի...— եղավ պատասխանը։

Սաթենիկի ձայնը թավ էր, փափուկ ու կրծքային։ Ձայրույթի մեջ առավել երկնային էր թվում, քան երկրային։ Գրիգորը նման վախճանի չէր սպասում։ «Այս կինը խոշոր արարների առաջնորդներից է, երկնային տե՛ր, այս ի՞նչ է կատարվում աշխարհում հայոց։ Ինչո՞ւ են սրվել տերն ու շինականը, ինչո՞ւ են յուրայինները ոթում միմյանց արյունը։ Ախր, մեր ազգը արյան գերկուտակումներ չունի։ Մեր ժողովուրդը փոքր է, փոքր ածու, սակավարյո՛ւն։ Ինչո՞ւ են սարքել այս սպանդը։ Եվ ո՞վ է արդարը, և ո՞վ է մեղավորը։ Ո՞վ է այս կինը, որ ըմբոստացել է երկրայինների ու երկնայինների հզորության դեմ։ Ի՞նչ սխալ է կատարվում աշխարհում հայոց, որ աստծո անունն անգամ անկարող է հանգցնել հրդեհը, որ ճարակում է մարդկանց հոգիները, խլում նրանց կյանքը։ Ինչո՞ւ է դաժանացել մարդ արարածը։ Նա, որ աստծու պատկերն ունի, մի՞թե չի երկնչում աստծուց։ Եվ մի՞թե աստված արտաքինով նմանեցնելով իրեն մարդ արարածին, հոգ չի տարել նրա հոգու մասին, թողել է, որ մարդկային հոգին դառնա սատանայինը։ Ինչո՞ւ համար է այս խելացնոր

ապանդը, այս կռիվը մարդկանց միջև և մարդու մեջ, ինքն իր դեմ, ուրիշի դեմ, աշխարհի դեմ, ինչո՞ւ...»։

Գրիգորը զարմանքից պլշած աչքերով նայում էր սպառազեն կնոջը։ Սաթենիկը սաղավարտը ետ էր հրել, և նրա սպիտակ ու բարձրագնա ճակատին խոնվել էին ագռավաթույր գանգուրների անհնազանդ փնջերը։ Աչքերը սև էին ու խոշոր, հրացայտ նաև։ «Կինը ժամանակավորապես լքել է այս կնոջը, քանզի հայացքը սրափայլ է և ատելավառ։ Սաթենիկը հրեշտա՞կ է, թե սատանա։ Այս գեղեցկուհու հոգում սատանան անկարող է բնակվել,— խորհում էր երիտասարդ վանականը,— իսկ հրեշտակը, որ երկնչում է մահվանից, լքել է նրան։ Այսքան ուստվածային կին ուսերն ի վար, մեջքն ի վար։ Մի՞թե նման կինը կարող է անարդար, անվայելուչ պահել իրեն տիրոջ նկատմամբ։ Ի՞նչն է ցավեցրել սրա կանացի հոգին և մերկացրել սուրը։ Հավատավորի ատելություն է, ոչ թե անհավատի։ Անկեղծ ու ազնիվ է նրա ատելությունը։ Նա ապավինել է ատելությանը, հավատում է ատելության և վրեժխնդրության կործանիչ ճշմարտությանը։ Նա փրկում է մոլորված մարդկանց, նրանց մոլորությունը համարելով իր ճշմարտությունն ու հավատը։ Օգնիր ինձ, տե՛ր, հաղթահարելու իմ շփոթված հոգու երկվությունը, մարիր կասկածներս, համոզիր ինձ, որ այս կինը դև է, սատանա է, հերձվածող է, հեթանոսուհի է, այլապես ես կնետվեմ նրա ձիու սմբակների տակ, կգրկեմ նրա մուճակները, կերկրպագեմ նրան որպես ամենակատարյալի և մատաղի գառ կդառնամ նրա վայրագ գեղեցկությանը, օգնի՞ր...»։

Հայացքը նորից կանգ առավ Սաթենիկին և նրա վրնջացող նժույգի կողքին տեսավ կռփամարտիկ Մուշեղին, որը խոնարհաբար համբուրում էր Սաթենիկ հրամանատարի աջը։ Խստահայաց կնոջ մարդիկ հավաքում էին զոհվածներին՝ շինականներին մի կողմ, զորականներին՝ մյուս։

— Ես ձեզ կտանեմ Սիսական աշխարհ և բարեկամ շեներում դուք կգտնեք ապահովություն և մի կտոր հաց։ Այստեղ դուք ապրել չեք կարող։ Շոգը կխեղդի ձեզ, ջուրը փորհարինքով կսպանի ձեր մանկիկներին, իսկ իշխանաց զորքերը կՊրատեն ձեզ։ Լեռներում բարեկամները շատ են և կսատարեն ձեզ։ Իսկ հիմա շարժեք գերիներին։ Նրանց այստեղ դատաստանել չի կարելի։ Նրանց հետ կխոսենք քաղաքից դուրս, քաղաքից հեռու...

Եկեղեցու դռները բացվեցին, և դուրս հոսեց մարդկային հեղեղը։ Մարդիկ վազում էին դեպի Սաթենիկը։ Կանայք համբուրում էին նրա ոտքերը, փեշերը, ձեռքերը։

— Շուտ պիտի գայիր, աղջիկս։ Այսքան արյուն էլ չէր թափվի...— արտասվելով խոսում էր պառավներից մեկը։

— Ճանապարհն ազատ չէր, մայրիկ, բեռնված էր զորաց խմբերով...

— Աստված քեզ կյանք տա և արև, աղջի՛կս...— օրհնեց պառավը։

Մուշեղն անշարժացել էր Սաթենիկի առջև, որը շարժվելու նշան արավ և թեքվեց կռփամարտիկի կողմը.

— Շնորհակալ եմ, հայր սո՛ւրբ, դու փրկել ես շատերին, գուցե միանաս մեզ...

— Չէ՛, տիրուհի, մեր միաբանությունը ևս անելիքներ ունի։ Ես աճապարում եմ Անի։ Անիում ևս խաղաղ չէ։ Բայց Անին թագավորանիստ է, այնտեղ լինելու կարիք կա։

— Ուրեմն, բարի ճանապարհ քեզ և հաջողություն քո ուխտին,— ձեռքը բարձրացրեց Սաթենիկը։

Ձին ոստնեց ու սլացավ առաջ։

***

— Դու ճանաչո՞ւմ էիր այդ Սաթենիկին,— երբ ամեն ինչ հանդարտել էր, խոսեց Գրիգորը։— Թեև զուր և անպատեհ է հարցս, քանզի նա քեզ գիտե հականե-անվանե...

— Այո՛, ես գիտեմ նրան, նա ազնվականուհի է, Գրիգոր։ Նա հիանալի գիտե թոնդրակյանների ուսմունքը, սակայն Սաթենը, կամ Սաթենիկը, ժառանգել է ցուրաբերդցիների եկեղեցաընդդեմ խռովության ոգին։ Սյունյաց աշխարհում ևս եկեղեցու սպասավորները հեղինակազուրկ են և իրենց դեմ են հանել շինականների արդար զայրույթը։ Նրանց խռովքի և ատելության բոցը ևս անշիջանելի է, ինչպես թոնդրակյաններինը։ Բայց հարկ է, որ արագ կերպով հեռանանք այս քաղաքից, քանզի ճանաչողներն ինձ կարող են մատնել պատժիչների ձեռքը և կախաղանի պարանից ազատվելը կլինի անհնար...

Նրանք աճապարեցին իջևանատուն, մախաղները լցրին ուտելիքով և փոքրիկ տիկերով եռացրած ու սառեցրած ջուր վերցրին, քանի որ ճանապարհը պետք է անցներ տոթակեզ անապատով, կիզիչ արևի տակ և անհնար էր լինելու նույնիսկ ջրհորների ջուր ճարելը։

— Արաքսի ափով և Մասսյաց ուղղությամբ,— ճշգրտեց ուղին Մուշեղը և նրանք բռնեցին Դվնո ճանապարհը։ Քաղաքը շուտով մնաց հեռվում, և բացվեց Արարատյան դաշտի հեռանկարը՝ Մասիսներով պսակված։ Ճանապարհը հարթ էր և փոշոտ։ Ստեպ-ստեպ հանդիպում էին ուղտերի քարավաններ։ Շոգի և մոծակների հարձակմանն անտարբեր և

համբերատար հանդարտությամբ քայլում էին ուղտերը, զնգզնգացնելով վզներից կախ զանգակները։ Օձերը ծուլորեն ոլորվում էին ճամփամիջով, քանդվելով պարանի նման, փոշու վրա թողնելով իրենց ընթացքի գալարները։

— Հարկավոր է գիշերել շեներում, ոչ թե դաշտում,— խոսում էր Մուշեղը,— այս կողմերում սողուններին և զեռուններին թիվ-համրանք չկա։ Կխայթեն, սիրելի գուսան, կխայթեն, թեև շեներում ևս պակաս չէ վտանգը, եթե իմանան՝ ովքեր ենք մենք և ում են հյուրընկալել իրենք...

Գրիգորն անհանգիստ էր օրվա ահավոր պատկերներից։ Նրա աչքերի առջև կրկնվում և վերակրկնվում էր օրվա արյունոտ անցուդարձը բոլոր մանրամասներով։ Ականջներում ձիերի սմբակների տակ ճիլտվող մանուկների և կանանց սրտակեղեք աղաղակներն էին, շաչող սրերի սպանիչ փայլատակումները, մեռնողների ու վիրավորների հառաչանքներն ու անեծքները։ Մեկ-մեկ նայում էր կողքից ընթացող Մուշեղի մտածկոտ և ներամփոփ դեմքին։ Եվ եղավ մի պահ, որ նույնիսկ վախեցավ նրանից։ Այդ մարդն իր աչքերի առաջ սպանեց եկեղեցու ավագ քահանային, ժամհարին, փշրեց պատժիչ զորաց հարյուրապետի գանգը և շարքից հանեց երևի տասնյակ զորականներ։ «Նրա համար ոչ մի դժվարություն չէ ինձ մեկ հարվածով գետնելն ու մահին հանձնելը։ Սակայն այս զարմանալի մարդու մեջ բոլորովին տեսանելի չէ մարդասպանը, որն արթնանում է երևի այն ժամանակ, երբ պետք է կանխել ոճիրն ու սպանությունը, երբ սպանությամբ միայն փրկվում են անմեղ մարդիկ։ Նա վստահելի է, հուշում է ինձ նեղքին ինչ-որ ձայն, միայն չպղտորվի խաղաղությունը»։

— Հեշտ ես մարդ սպանում, հայր սուրբ։— Թվում է, Մուշեղը չլսեց նրան։ Քայլում էր գլխահակ, ինքն իր մեջ ներփակ, անխոս, մեկ-մեկ հայացքը թափառում էր Մասսյաց սպիտակ մաքրությանը։

— Ես երբեք մարդ չեմ սպանում,— ի վերջո ուշացումով պատասխանեց Մուշեղը,— ես վնասազերծում եմ սպանողներին, այն մարդկանց, որոնց մեջ գազանայինը, չարությունն ու անգթությունը չարիք են դառնում անպաշտպան և թույլ մարդկանց համար։ Ես չեմ կարող անտարբեր, խուլ ու կույր ձևանալ մանավանդ եկեղեցական այն պետերի նկատմամբ, որոնք քարոզում են խոնարհություն՝ եթե խփեն քո այտին, ապա դու դեմ արա նաև մյուսը։ «Մի սպանաներ, մի շնանար», կարդում ենք սուրբ գրքում։ Մինչդեռ դու քո աչքերով տեսար, թե ինչպես, ինչպիսի՜ անգթությամբ են սպանում անզորներին և աստծո աչքից ընկածներին։ Նրանց, այդ սպանողներին սպանելը ես հանցանք չեմ համարում, այլ՝ սխալների ուղղում։ Զսպանեի ավագ քահանային, նա կսպաներ հարյուրից ավելի մանկանց ու կանանց, չսպանեի հարյուրապետին, նա կսրաբեր բոլոր շինականներին, ովքեր փախել էին հետապնդումից և ցանկանում էին ապրել և փրկել իրենց գերդաստանները։

— Աստված մի՞թե չի պատժի նման սպանությունների հեղինակներին,— անկեղծացավ Գրիգորը։— Չէ որ նա ամենատես է, հայր սուրբ, նաև գթասիրտ, նաև արդար...

— Աստված այստեղ գործ չունի, գուսան իմ։ Աստված վախենում է իր այդ գազանացած սպասավորներից, որոնք իր անունով գործում են ամենայն անաստվածություն... Մի՛ հավատա այդ սպասավորներին քո գաղտնիքները, քո հոգու տվայտանքները, մտքերը, նրանք այդ բոլորը կշրջեն քո դեմ, կամբաստանեն քեզ, կխլեն քո հեղինակությունը և ամենայն չարիք կպատճառեն քեզ։ Փորձիր, տառապիր ինքդ լեզու գտնել բարձրյալի հետ, մերժիր եկեղեցու միջնորդությունը, այլապես ոչ աստված կլսի քո ձայնը, ոչ էլ երկնային սրբությունները կհասկանան քեզ...

— Ուղղակի հաղորդակցվելու համար աստված անմատչելի է, հայր սուրբ։ Նրան չեն կարող չհասնել այն ձայները, որ խունկի բուրմունքով և մոմերի հրավառությամբ եկեղեցիները հրավիրում են նրա ուշադրությունը։ Անպատշաճ է աստծո հետ խոսակցել դեմ-դիմաց։ Աստծո հեղինակությունն անսահման է, հայր սուրբ, և հողեղեններս իրավասու չենք տատանելու այդ հեղինակությունը, զի մեր միջև ընկած է երկրի և երկնքի վիթխարի տարածությունը։ Մտքերդ վախեցնող են, հայր սո՛ւրբ, և ավելի են խտացնում իմ կասկածները ճշմարտության նկատմամբ...

— Իսկ դու մի կասկածիր, գուսան, խոսիր աստծո հետ ինքդ և փարատիր կասկածներդ, որովհետև միջնորդված խոսքն ի խորոց սրտի, միջնորդները հասցնում են տիրոջը աղավաղելով նրա էությունը...

Խոսելով չնկատեցին, որ մութը կամաց աղոտում է դաշտավայրի պայծառ լուսավորությունը, որ արևը ոսկե ժապավենի նման պակել է Մասսյաց գագաթներն ու խորհրդավոր լեռը մոտենում է իրենց, երկարելով իր վիթխարի ստվերը։ Առջևում շեն երևաց։ Շներ հաչեցին։ Մոտիկում կով բառաչեց, հետո միանգամից բառաչեց նախիրը։ Կովերի բառաչի մեջ հորթերին հանդիպելու կարոտն էր զգացվում և երևի անհանգստացնում էին կաթնառատ կրծերը, երազելով հորթերի խտացնող ու ցավեցնող դնչիկների հպումները։

Գիշերեցին այգեպանի հոլիկում։ Տեր էր ու խոսքաշեն։ Թույլտվություն հայցեցին։

— Հյուրն աստծունն է,— ասաց,— գիշերելու տեղ ունեմ, բայց գինուց բացի ոչինչ չունեմ հյուրասիրելու... Պիտի գոհանաք...

Խոսեցին դեսից-դենից։ Ճաշակեցին սառը, հրաշալի գինին։ Լեզուները բացվեցին, սակայն ձեթի ճրագը անընդհատ հանգելու հոգեվարքի մեջ էր, ձեթն սպառվում էր։ Հանգցրին։

— Պիտի քնեք այգու մեջտեղում գետնից բարձր կառուցված հոլիկում, այդպես անվտանգ է, սողունները ձեզ չեն հասնի, իսկ մոծակների դեմն առնելու հնարք չունեմ։ Մեր շինականները հյուրասեր են, բայց այս անտեր մոծակները հյուրերի հոգին հանելու և նրանց փախցնելու վարպետներ են։ Բայց խնդրում եմ փախչելու փորձ չանել, ո՞ւր կարող եք փախչել նրանցից։ Դուք ոտավոր, նրանք թևավոր...

Պառկեցին։ Բայց ոչ ոք քնել չէր կարողանում։ Ծերունին էլ երկար տնքաց, տնքտնքաց, հազաց ու նստեց տեղաշորի մեջ։ Հարցնելիք ուներ։

— Տեսնում եմ, որ դուք կապ ունեք աստծո և եկեղեցու հետ,— խոսեց նա,— հայոց աշխարհում խառնակություն է, ինձ մի բան հասկացրեք, ինչո՞ւ են թարսվել եկեղեցու և շինականների գործերը։ Հոգևոր հայրերն այլևս չեն կարողանում շինականներին համոզել, որ իրենք աստծո տեղապահն են երկրի վրա։ Աստծո որդուն երկնային չեն համարում, ասում են հողածին է, ասում են՝ եթե մեռել է, ուրեմն մեռել է, էլ հարյավ ու հարություն չկա ի մեռելոց։ Հազար բան են ասում։ Էսպես որ գնա, շուտով խռովյալ ժողովուրդը ոտք կդնի նաև աստծո սահմանները։ Գոնե դուք ասացեք, մենք՝ ոչ լուսավորյալներս ինչպե՞ս բաժանենք թացն ու չորն իրարից։ Երկու օր առաջ մեր շենն էր եկել անծանոթ մեկը և եկեղեցում՝ կնունքի ժամանակ, երբ նորածնին սուրբ ավազան մտցրին ու մեռոնել ցանկացան, հարձակվեց տերտերի վրա. «Չե՞ս ամաչում էդ քո երկար միրուքից, ասում է, որ էդ կեղտաջրի մեջ ես մտցնում արդար մանկանը։ Սո՛ւտ է, ասում է, կնունքն էլ, մեռոնն էլ...»։ Իրար անցան։ Տերտերը խաչը բարձրացրեց ու շրա՜խկ դրա գլխին։ Սա էլ գավազանով չարդեց տերտերի ուսոսկրը։ Տուրուդմփոց սկսվեց։ Ով ում էր խփում՝ չհասկացանք։ Էդ աղմուկի մեջ էլ անծանոթը կորավ։ Բայց աղմուկն ու ծեծկռտոցը շարունակվեցին։ Մի բան գլխի ընկա, որ շինականների մի մասը համակիր էր նրան և նրա խոսքերը շինականների սրտով էր։

— Դու քո հարցին ինքդ էլ պատասխանեցիր, ծերունի,— խոսեց Մուշեղը,— շինականը ոտքի է ելել, քանզի նրան թալանում են ոչ միայն աշխարհիկ տերերը, այլև աստծո ծառաները։ Մեռոնի էդ երկու կաթիլը, որ կաթեցնում են սուրբ ավազանում և օծում նորածնին, ասա ինձ, քանի՞ դրամ է նստում շինականի վրա...

— Հինգ ոսկի դրամ,— ասաց ծերունին։

— Քո այգու բերք ու բարիքը մի տարում քանի՞ ոսկի դրամ է տալիս քո գերդաստանին...

— Տասնհինգ-քսան, նայած տարուն,— պատասխանեց ծերունին։

— Իսկ եկեղեցին տարվա մեջ քանի՞ անգամ է ձեռք երկարում քո քսակին...

— Հաշիվը կորցրել ենք,— խոսեց ծերունին,— տնօրհնեք է՝ տալիս ենք, մեղքերի թողություն է՝ տալիս ենք, պսակ է՝ տալիս ենք, սուգ է՝ տալիս ենք, խաղողի օրհնություն է՝ տալիս ենք, մի խոսքով։ Աշխարհիկ տերերին հարկատու ենք ու հարկատու՝ տալիս ենք։ Հազար տեսակի հարկ ենք տալիս... Գարուն դուրս եկած-չեկած մեր շենի կեսից ավելին արդեն սովի ձեռքերում է։ Հարկահանների և եկեղեցու պարտքերը մարած-չմարած ընկնում ենք պարտատերի ձեռքը, էսպես է բանը...

— Եթե եկեղեցին այդքան չվերցնի, կարո՞ղ եք ապրել։

— Եթե խղճով վերցնի, մի կերպ կապրենք,— տնքաց ծերունին։— Մեր տերտերն ասում է, թե եկեղեցին թեթևացնում է մեր հոգին, մեր ցավն ու վիշտը հասցնելով երկնային տիրոջը։ Ասում է, որ առանց մեղքերի թողության մենք դժոխքի բաժին կդառնանք և հազար ու մի նման բաներ...

— Սուտ է ասում ձեր տերտերը,— խստացավ Մուշեղի ձայնը։— Ձեր առաքինությունները, ցանկությունները ու մեղքերը ինքներդ հաղորդեք տիրոջը։ Ինքներդ լեզու գտեք նրա հետ...

— Մենք աղոթել չգիտենք։ Աստված մեր լեզուն չի հասկանա...

— Աղոթել հարկավոր չէ։ Շինականի ձեր պարզ լեզվով ինքներդ խոսեք աստծո հետ։ Նա ձեր լեզուն ավելի ճշտիվ կհասկանա, քան ձեր տերտերի, որ լողում է հազար ախտի ու կեղտի մեջ,— վերջացրեց Մուշեղը։

— Ուրեմն դու էլ ես նրանցից, ովքեր եկեղեցու դեմ են և տուրք են տալիս հերձվածողներին, որդի՛,— խոսեց ծերունին,— տերտերին և եկեղեցու սպասավորներին շինականները չեն հարգում, բայց եկեղեցական սրբությունների դեմ ելնելը ևս հեշտ բան չէ։ Ասում են Սիսական աշխարհում, Տաթևի կոզմերը շինականներն ավերում են վանքերն ու եկեղեցիները, անարգում սրբությունները, սպանում ու խաչում են քահանաներին և վանականներին։ Էդպիսի բաներից ես վախենում եմ, որդի։ Աստված կարող է չներել, և մեր մեղավոր հոգին այլևս չի փրկվի տարտարոսի կրակներից։ Ավելի լավ է հեռու մնալ և աստծո տաճարներից, և աստծո բարկությունից։ Եկեղեցին վերցնի թե չվերցնի մեր ինչքն ու դրամը, միևնույն է, հարկահանները կվերցնեն, պարտատերերը կվերցնեն, իշխանները կվերցնեն, կաշառակերները կվերցնեն, գողերը կփախցնեն։ Թալանողների թիվը չի պակասի։ Աշխարհն այսպես եկել է, այսպես էլ կգնա...

— Իսկ երկնային տերը, ծերուկ, մի՞թե նա չի պաշտպանի ձեզ, ում պաշտում եք...

— Դժվար հարց ես տալիս, որդի, կուշտը սոված մանր է բրդում։ Ուժեղը նրա համար է ուժեղ, որ պաշտվում է. ում պաշտում են, նրանից էլ երկնչում են։ Նա վերևն է, դու ներքևը։ Երկնային տերն ամենաարդարն է, բայց նրա հետ լեզու գտնելու համար էլի ուժ է հարկավոր, ուժ և զորություն...

Լռեցին։ Գիշերն ամուր նստել էր Արարատյան դաշտին։ Առվի կողմից գորտերի երգեցողության ձայնն էր, որ շարունակվում էր առանց ընդմիջման։ Լուսինն արծաթել էր այգին շրջապատող բարդիների կատարները։ Պարզորոշ երևում էր արագիլի բույնը, որից մերթընդմերթ լսվում էր մայր արագիլի թույլ կափկափյունը։ Երևի անհանգստանում էր ձագերի համար, թափահարում զորեղ թևերն ու փռում ձագերի վրա։ Մի զրնգուն լռություն էր կախված դաշտի վրա, արծաթալուն մի լռություն, որ պաշտպանվում էր Մասսյաց վիթխարի, երկնամերձ պարսպով, որ լուծված էր նոսր մթությանը։ Իսկ վերևում լույսի մի լայն շերտ էր կախված երկնքից, որ նրա լուսահեր գագաթն էր։ Գրիգորը ոչ մի խոսք չէր փոխանակել զրույցի ընթացքում։ Նա այժմ գիտեր Մուշեղին։ Սանոթ էր կճավա վանքի միաբանությանը և ցանկանում էր, այո՛, այրվում էր Մուշեղի հետ վիճելու ցանկությունից, սակայն չէր համարձակվում։ Նախ զգում էր, որ նրա հետ բանավիճելու համար հարկավոր է ավելի քան պատրաստ լինել։ Որքան էլ անընդունելի լիներ Մուշեղի հայացքները, սակայն նրան՝ այդ հերձվածողին, նա չէր կարողանում ատել, չէր կարողանում ինչպես հարկն է մեղադրել։ Նրա մեջ կար մի զորավոր ուժ, որը և ենթարկող էր, և միաժամանակ առինքնող. և երիտասարդ տաղերգուն ատելու փոխարեն սիրում էր նրան, և անհամաձայն լինելով նրա մտքերին, չէր կարողանում մեղադրել ու այպանել նրան։ Մուշեղը զորավոր այր էր, ընդունակ ամեն տեսակ արարքների։ Գրիգորը տեսնելով նրա ահավոր արարքները Նախճավանի մայր եկեղեցում, իր կամքից անկախ որոնում էր մեղմացուցիչ դեպք հանցանաց, հազար ու մի արդարացուցիչ պատրվակ, որպեսզի Մուշեղին դուրս կորզեր մարդասպանների անիծյալ բանակից, քանզի իր ուղեկիցը միանգամայն հեռու էր սպանության գործից։ «Նա ձեռք է բարձրացնում մարդու վրա այն ժամանակ, երբ հավատացած է, որ դիմացինն այլևս մարդ չէ, այլ գազան, այլ մարդասպան։ Զլիներ այս ահավոր, այս հեթանոս կռիսմարտիկ-վանականը, զորականների ձիերի սմբակների տակ կճխլտվեին բյուր մանկանց դանդերը և սրահար կընկնեին բազմաթիվ, թեկուզ հերձվածող շինականները։ Նրա հետ վիճել, նրան դատափետել ես չեմ կարող, ինչ-որ տեղ նա նույնիսկ

իրավացի է։ Եկեղեցին ու վանքը հիմա ապրում են իշխանատան կյանքով, որ պատշաճ չէ, անընդունելի է աստծուն և աստվածային օրինականությանը։ Վանքերն ու անապատները հեռացել են ճգնակենցաղ և սրբաբարո բնույթից։ Իսկ շինականը, որ ամենաաստվածասերն է, ցանկանում է և իրեն, և իր աստծուն փրկել նման սպասավորներից։ Իսկ թոնդրակյանների ամենաէական ծառայությունն այն է, որ նրանք փոխանակ եկեղեցական բարքերի դեմ ըմբոստանալու, կասկածի տակ են առնում, ո՛չ, ո՛չ, մերժում են եկեղեցական ողջ ծիսակատարությունն ու վերանայում աստվածային ընդունված ու սրբացած օրենքները, ժխտում համարյա ամեն ինչ, բացի աստծո գոյությունից։ Իսկ ես՝ Անանիա մեծահամբավ ուսուցչապետի աշակերտս, որ ուխտել եմ ծառայել ու պաշտպանել այն, ինչ հարյուրամյակներով ընդունվել է ու սրբագործվել, ընկերակցում են մեկին, որ հերձվածող է ու հեթանոս և ոտքի է հանում շինականներին, օրհնելով նրանց խռովությունը։ Նա գիտե իր անելիքը, նա անշեղ ընթանում է թոնդրակեցիների ճանապարհով։ Իսկ ե՞ս... Ե՛ս կամքիս տերը չեմ։ Կամքս ճկվում է, թեքվում եղեգնի նման, հոգիս օրորվում Անանիա ուսուցչապետիս ընդունելի ճշմարտության և Մուշեղ վանականի անօրինական ճշմարտության միջև։ Մեկի թիկունքում աստծո, աստվածային ողջ ծառայությունն է, մյուսինը՝ շինական ժողովուրդը։ Ես ո՞ւմ հետ եմ։ Աստծուն երդվել եմ նրա սպասավորը դառնալ, ժողովուրդը երդում ընդունելու ո՞չ կարիք ունի, ո՞չ էլ ցանկություն։ Ժողովուրդը երդում չպարտադրող սրբություն է։ Ո՞ւմ տալ նախապատվությունը, ո՞ւմ հետ լինել։ Երկուսն էլ թանկ, երկուսն էլ իրար ներհակ ու թշնամի։ Երկուսին ծառայել միաժամանակ անկարելի է, իսկ նրանցից որին ծառայես, մյուսի աչքին դավաճան ես հռչակվելու, թշնամի ես ճանաչվելու։ Աստծո թշնամի՝ հոգեկործան մեղադրանք է, ժողովրդի թշնամի՝ բարոյական ինքնասպանության է հավասար։ Ի՞նչ անել...»։

— Քնե՞լ ես, Գրիգոր,— լսվեց Մուշեղի ձայնը։

— Քունս չի տանում, հայր սուրբ, աչքերս գամվել են Արարատին, իսկ մտքերս աշխարհի հետ են։ Չեմ կարողանում մոռանալ եկեղեցու բակում կատարվածը։ Տեսիլքների են վերածվել տեսածներս։ Լսածներս՝ անեծքի, հոգիս խռովված է և կողմնորոշման կարոտ։

— Քնի՛ր, Գրիգոր, քունն ամենալավ բալասանն է ցաված ու հիվանդացած մտքերի։ Քնի՛ր, լույսը կբացվի և կլավանա ու կսրբի տեսիլները։ Լույսն արդար է...

— Բարի գիշեր, հայր սուրբ,— ասաց Գրիգորը։

— Լույս բարի,— Մուշեղի պատասխանն արդեն քնկոտ էր։

Գրիգորը նախանձով նայեց իր ուղեկցի՝ Հակոբիկի կողմը, որ ոչ մի

հանգամ, երբևէ չէր բացել բերանը խոսելու համար, և միայն այն գործի էր դնում ուտելիս։ Հիմա նա քնած էր խոր և երևի աներազ քնով։ Այս զարմանալի Հակոբիկը նույնիսկ ծանր տեսարաններին բերան չբացեց, ոչնչով չարտահայտեց իր վախն ու երկյուղը, վերաբերմունքը արյունոտ կոտորածի նկատմամբ։ «Երևի նրան ապսպրել են լուռ մնալ, իր տիրոջ ով լինելը չմատնելու համար։ Պարզ է, որ նա կատարում է վանքի պատվիրանը։ Այսինքն, չի խոսում։ Բայց մի՞թե չի տանջվում այս տղան իր տեսածից։ Ինքնամփոփ մարդն առավել դժվար է տանում զարհուրանքը, քանզի չի հաղորդակցվում ոչ ոքի հետ։

Գրիգորն աչքը փակեց միայն լուսադեմին։ Չէ՛, մոծակները չէին մեղավորը, այլ այն զարհուրանքները, այն հոգին հոշոտող, կրծող մտքերը, որոնցից նա ազատվել չէր կարողանում, իսկ այդ պատկերները գիշերվա մթնում կենդանացան, լցրին նրա էությունը վերակրկնումներով, անընդմեջ հոլովվեցին նրա անքուն աչքերի դիմաց և գիշերային տիեզերական տարածքը լցրին ճիչով ու վայնասունով։ Վախենում էր աչք փակել, կղառնային մղձավանջային երազներ և տանջանքն առավել անգութ կլիներ։ Լուսադեմին քնեց, բայց Մուշեղն արթնացրեց։

— Քանի՞ չի արթնացել լույսն արեգական, ճանապարհն առավել հեշտ է հաղթահարելը...

— Նոր էի գոցել աչքերս։

— Իսկ ես բնավ չեմ գոցել։ Երեկվա թեժ մարտը չարչարում է հոգիս, Գրիգո՛ր, հանգստանալ չի թողնում։ Առաջին անգամ ես ականատեսն ու մասնակիցը դարձա կռվի և սպանության...

— Պատահել է, որ աչքիս առաջ սպանել են մարդկանց, տեսել եմ նույնիսկ կաքավողի անողորմ, դաժան սպանությունը մի քանի տարի առաջ Աղթամարում։ Բայց այստեղ բազմամարդ էր կռիվը, և զոհերը հասան տասնյակների...

— Ես էլ եմ հիշում կաքավողի մահը կղզում։ Այդ հանդեսին ես ուժ էի ցուցադրում գերանից ծանրաքարեր կախելով։ Ես տեսա այդ հրաշալի կաքավողի և քաջարի աղջկա անմարդկային սպանությունը։ Նույնպիսի սև օր էր...

Ներունին արդեն աշխատում էր այգում։ Բացում էր ջրի ճամփան և առվի ջուրը զվարթ կարկաչելով լցվում էր մարգերն ու ուժասպառվում ծարավ հողի մեջ ներծծվելով։ Ներունին երգ էր դնդնացնում.

Արև՜, բարով դուրս գաս աշխարհ,
Բարով ծագես, արև՜,
Արդար հողին բերք ու բարիք,
Արդար հոգուն՝ բարև...

— Վաղ ես վեր կացել, ծերունի՛,— դիմեց նրան Մուշեղը,— բարի առավոտ քեզ...

— Բարին ընդ ձեզ,— խոսեց այգեպանը,— թե մութլուսին, մինչև արևի զարթնելը ջրեմ այգիս, ուրեմն կփարթամանա, իսկ եթե արևը շտապի, կայրի, կփչացնի իմ բարիքը։ Իրիկունը ջրել չկարողացա, հերթս չհասավ... Մի քիչ ուշացիր, ա՛րև...

— Բահդ ներքև դիր, այգեպա՛ն, նախաճաշելու պահ է...

Մարգերում ջուրը քլթքլթաց, քլթքլթաց ու լռեց։ Երևի վերին այգիներից կտրեցին։ Ներունին բահը խրեց հողի մեջ։

— Հասցրինք, ծարավդ կոտրեցինք, այգիս,— այգուն դիմելով խոսում էր այգեպանը։ Այգու ծայրին ոտնաձայներ լսվեցին։ Կապտավուն լույսի մեջ աղոտ կերպով երևաց աղջկա կերպարանքը։ Կանգնել ականջ էր դնում։ Նկատել էր օտար մարդկանց, ստուգում էր՝ ովքե՞ր են։ Այդպես եղնիկն է բացատ դուրս գալիս թավուտից, հոտոտելով շրջապատը։ Թըշնամի չլինի՞ հանկարծ։ Հետո ձայն տվեց.

— Պապի՛, պապի՛...

— Վե՞ր ես կացել, Շողեր ջան...

— Հաց եմ բերել, պապի՛...

— Հաց մի՞ն...

— Փարչով էլ գինի։ Գիշերը իշխանի մարդիկ էին եկել մեր շենը, պապի։ Հանցագործներ էին որոնում։ Ասում էին՝ ժոդահա մեկն օգնել է հերձվածողներին և սպանել է մի քանի հոգու։ Նրան են որոնում...

— Քանի հոգի էին, թոռնիկս...

— Երեք հոգի,— աղջիկն առաջ եկավ։ Գրիգորն ուշադիր նայում էր թուխ և սևաչվի աղջկան։ Ոտաբոբիկ էր։ Արձակ մազերն ուսերին թափված։ Ձեռքին կավե փարչն էր, թևատակին՝ ուտելիքը։ Եկավ երգի նման օրորելով բարակ մեջքն ու կանգնեց հյուրերի առջև։ Չգիտես ինչու զարմանք կար դեմքին և ժպտալու, ծիծաղելու պատրաստ հայացք։

— Թոռնիկս է,— ասաց այգեպանը։

— Աստված պահի,— միաձայն օրհնեցին հյուրերը։ Աղջկա հայացքը կանգ առավ Մուշեղի վրա և մնաց։ Նայում էր վիզը եղնիկի նման թեքած, այս անգամ փախչելու պատրաստ և երկյուղած էր հայացքը։

— Հասկացա՛, հասկացա՛,— գյուտ արածի նման խոսեց Շողերը,— նրանք քեզ էին որոնում, քե՛զ... Բայց դու մի վախենա, չեմ մատնի...

— Շողեր, ա՛յ խելառ աղջիկ, ինչե՞ր ես դուրս տալիս։ Այս մարդը վանական է...— սաստեց պապը։

— Նրանք հենց վանական էին փնտրում, ժոդահա վանականի...

— Հիմա ո՞ւր են նրանք,— հարցրեց պապը Մուշեղին նայելով։

— Գիշերով եկան ու գնացին։ Սուսուփուս, որ չլինի հանկարծ մեղավորներին փախցնեն,— հետո մոտենալով Մուշեղին,— դու մարդ ես սպանել, հա՞...

Մուշեղը շփոթված էր։ Անթարթ նայում էր աշխույժ և մարդամոտ աղջկան ու չէր խոսում։ Ի՞նչ ասեր։ Ասեր՝ մարդ չի սպանել։ Աղջիկը չէր հավատա։ Ասեր՝ սպանել եմ՝ կվախեցներ աղջկան։ Խոստովանության անհարմար տեղ էր։ Նա ժպտաց.

— Ես նմա՞ն եմ մարդասպանի, Շողե՛ր...

— Ես մարդասպանի երբեք չեմ տեսել, ի՞նչ իմանամ,— ասաց աղջիկը,— իսկ մարդասպանն ինչպիսի՞ն է լինում...

— Քեզ հետ խոսելը դժվար է,— ժպտաց Մուշեղը։

Այգեպանը նեղացավ թոռան վրա։ Մոտեցավ Շողերին, բռնեց ուսերից ու սպառնալից ասաց.

— Տես, հա՛, էստեղ մարդասպաններ չկան, հերիք է ավել-պակաս դուրս տաս։ Շուտ տուն գնա։ Տնեցիներին ոչ մի խոսք, բացբերա՛ն։ Հանկարծ էս անմեղ մարդկանց հետևից զորականներ չընկնեն։ Սրանք լավ մարդիկ են, Շողեր...

— Բերանս կկարեմ, եղավ, պապի։ Դե արի, արի քեզ պաշեմ ու գնամ...— չափչուփ պաշպշեց պապի ճերմակած ու մացառոտ դեմքն ու շրջվեց դեպի շենի կողմը,—զորականները, պապի, մնացին գիշերելու Առաքելի տանը։ Քիչ առաջ հեռացան դեպի Նախճավանի կողմը։ Առաքելն ասում էր, թե վախենում էին հանդիպել հսկա վանականին, առանց աղմուկի գնացին, հոգևորականի հոգին առնողը զորականին կխնայի՞...

Եվ ցեխոտ ոտքերով թավալելով Շողերը վազեց դեպի տան կողմը։ Ծերունի այգեպանը սպիտակած ունքերի մացառուտից հայացքը սրել էր Մուշեղի վրա։ Դժվար էր գուշակել, կարդալ հայացքի բովանդակությունը։ Բարի չէր, չար չէր, կասկածանք կամ հիացմունք չկար հայացքում։ Ավելի ճիշտ զննող էր հայացքը։ Հետո ձեռքը թափ տվեց և ծառերի շուրջպարի ներքո բացեց դաստախունը։ Հաց ու սոխ, ճիլ պանիր ու հնացած, համարյա սևացած սիբեխի ու շուշանի թթու։ Հակոբիկը նույնպես բացեց իր մախաղը։

— Հարանիքի սեղան է,— ժպտաց ալևորը,— շքե՞ղ սեղան է։

Սեղանը բացելուն պես իր աչքերն աշխարհի վրա բացեց նաև արեգակը, որ մինչ այդ թառել էր Մասսի շալակն ու կամաց դեպի դաշտավայր էր հրում իր ծիրանին։ Այգիներից խոնավություն փչեց։ Արևի ջերմությունից էր, որ հալածում էր ծառաստանների խոնավությունը, որ գոլորշացնելով քաշի վերև։ Ծերունին դանդաղ ծամում էր հացը և գավաթները լցնում սառն ու ախորժահամ գինով։

— Բարի լույս աշխարհին,— ասաց ծերունին, խմեց և խաչակնքեց։

— Եվ խաղաղություն,— լրացրեց Մուշեղը։ Գավաթները դատարկվեցին մինչև մրուր։ Հետո հյուրերը վեր կացան և պատրաստվեցին ճանապարհ ընկնելու։ Ալևորը դժգոհեց.

— Սխալ եք անում։ Արևի տակ մեր դաշտում ճանապարհ գնալն անկարելի է, դժվար։ Ցերեկը շոգ է ու տոթ, իսկ արևահարվելը ծանր հիվանդություն է։ Գիշերը քայլեք, ցերեկը հանգստացեք շեներում...

— Էս կողմի շեներում երևալը ձեռնտու չէ,— ժպտաց Մուշեղը։— Շնորհակալ ենք քեզնից, ալևո՛ր։ Մեր պակասեցրածը թող աստված լրացնի։

— Ապրեք, թող բարի լինի ձեր ճամփան,— օրհնեց ծերունին։— Մի բան էլ ասեմ նոր գնացեք։ Հոգևոր հովիվների հետ ձեր վարմունքն այպանելն իմ գործը չէ, բայց աստծո խաթրին չկպչեք, հանգիստ թողեք նրան...

— Եղավ, ծերուկ, հասկացա՛նք, մենք աստծո խաթրին չենք կպչի, քանզի նրան կպչել անկարելի է, նա ամենազոր է...

Ճանապարհն ուղիղ էր ու փոշոտ։ Վայրիվերումներ չկային։ Գետի ափով, գետին նմանակելով ոլորվում էր ճանապարհը, ասես վախենալով, որ կկորցնի իր երթալիք նպատակը։ Արաքսը հանգիստ էր, սակավաջուր և առանց աղմկելու ափերն համբուրելով տանում էր իր կարմրավուն ջրերը։ Օրվա երկրորդ կեսին Վայոց ձորաբերանին կանգ առան հանգստանալու։ Վայոց ձորի գետը զուլալ էր, աղբյուրաթափ, ալիքները ձորի մութ երախից շառաչյունով մտնում էին հարթավայր և արգելակվում, հանդարտվում, ստեղծելով լողանալու հնարավորություն։ Ջուրը համեմատաբար սառն էր, խոր։ Լողացան, թարմացան։ Իսկ աջ ափին նրանց կանգնեցրեց զորական պարեկը.

— Ովքե՞ր եք, ի՞նչ մարդիկ եք, ո՞ւր եք աճապարում...

— Միանգամից այդքան հարցի պատասխան տալու փոխարեն ասենք, հայ մարդիկ ենք, մեր հողում ենք, ավազակներ չենք, ազատներ ենք, փնտրուքի մեջ չենք, գնում ենք Անի...

— Աստծուն նեղացնողներից չե՞ք...— կասկած հայտնեց պարեկը։— էն կողմում ասում են աստվածուրացություն կա, տեսեք, հա՛...— սպառնաց։

— Երկնավոր տե՛ր,— զարմանք խաղացին, խաչակնքելով։

— Հավատում եմ, հավատում,— համոզվեց զորական պարեկը,— ախր էս ամայի ձորաբերանին ողջ օրն անգործ միայն հարցուփորձում ենք անցուդարձողներին։ Անելիք չկա։ Ամբողջ օրը ընկերներով ձուկ ենք որսում։ Թարմ կարմրախայտ։ Զբաղմունք է։ Գետի ջրով էլ խաշում ենք

ու վաճառում։ Հրեն մեր ծառայատեղին։ Փոքրիկ տնակ է։ Բարի եղեք գնացեք, էժան գնով ձուկ վերցրեք ու ճաշակեցեք։ Հարցուփորձից էլ կազատվեք։ Մեզ դրամ, ձեզ՝ համով ուտելիք...

— Շնորհակալ ենք, զորական,— ասացին ու անցան։

— Եթե գինի ունեք, ուրեմն, մեկ օրվա թագավոր եք, բարի ախորժակ ձեզ...

Ձուկն իրոք համեղ էր, հրաշալի խաշած։ Ուրախ, ասող ու խոսող տղաներ էին։ Կերան, կշտացան։

— Գուցե մեզ ասեք, թե ինչո՞ւ են Վասպուրական և Սյունյաց աշխարհներից եկողներից վախենում մեր հոգևոր և աշխարհիկ տերերը։ Ասում են՝ տերտերների բանը բուրդ է։ Ասում են՝ նրանց կախում են ոտքերից։ Միշտ վերև եք նայել, ասում են, մի քիչ էլ ներքև նայեցեք։— Միծաղում էր զորականը։— Երկնային տիրոջը նայելու իրավունքը հիմա մերն է...

— Զգիտե՞նք,— միամիտ ձևացան։

— Տերտերների վերջն եկել է,— խոսեց զորականը,— մեր շենում մի տերտեր ունեինք, աստծո կրակ, անառակի, հարբեցողի մեկն էր։ Հարսների հետևն ընկնելու գեշ սովորություն ուներ։ Մի անգամ հարբած պահին չէր ճանաչել իր հարսին, մտել էր խոտանոց։ Տղան վրա էր հասել ու հորն այնքան ծեծել, որ տերտերն անկողին էր ընկել և ավանդել հոգին։ Ասացին աստծո պատժին է արժանացել։ Էդ օրվա աստվածն էլ իր սեփական որդին է եղել, հո՞, հո՞, հո՞...— փորը բռնած հոհոում էր գինով զինվորը։— Մա՜հ էդ տերտերներին...

Թողին սուսուփուս հեռացան։

Երկու օր անց հասան Դվին։ Չէին թողնում քաղաք։ Մուտքի առջև Դվնո արաբ ամիրայի զինվորները երկար հարցուփորձում էին նրանց։

— Եթե Սյունյաց կամ Վասպուրական աշխարհներից եք, հեռացե՛ք։ Ամիրայի երկրում գործ չունեք։

— Մենք Գողթն աշխարհից ենք,— ստեցին։ Իսկ սրանք ապացույց էին ուզում.

— Դե որ Գողթն աշխարհից եք, երգ երգեցեք։

— Բեքանդ փակի՛ր,— ֆշշաց Մուշեղը։

Զինվորը նահանջեց։ Վիթխարի հասակով և հզոր ուսերով հսկան չէր կատակում։ Մանավանդ գերանի հաստություն ունեցող նրա ձեռնափայտը սպառնագին վարուվերում էր հուժկու ափերի մեջ։

— Թող անցնեն,— ծուլորեն խոսեց պահակապետը,— սրան մինչև զինաթափենք, մեզնից մի քանիսին կուղարկի դժոխք, թո՛ղ...

— Նստել են մեր երկրի սրտում և դարձել մեծ քաղաքի տերերը։ Այստեղ, այնտեղ, ամենուրեք,— բողոքեց Մուշեղը։ Նրանք քայլեցին դեպի քաղաք։

— Ինչպես նաև Մանազկերտում,— լրացրեց Գրիգորը։

— Այո՛, Մանազկերտում,— մռայլվեց Մուշեղը,— նրա ամիրան՝ Աբու-Լ-Վարդը չէ՞ր, որ սպանեց մեծն Սմբատին...

— Ո՞ւմ,— չհասկացավ Գրիգորը։

— Զարեհավանցուն,— շարացած գոռաց Մուշեղը։— Տես, է՜, թշնամական իրարամերժ հավատներն ինչպես են միավորվում, երբ ոտքի է ելնում շինականը։

Գրիգորն, իհարկե, գիտեր Սմբատ Զարեհավանցու սպանության պատմությունը, որի սպանողին՝ արաբ ամիրային՝ Աբու-Լ-Վարդին գովում ու փառաբանում էին իր ուսուցչապետն ու նարեկա վանքի միաբանությունը, քանզի նա էր գլխատել թոնդրակյան խռովության ղեկավարին, նա էր հասցրել առաջին հարվածը դեռևս մեկ հարյուրամյակ առաջ։ Եվ Մուշեղը ցասումով պատմեց չհնացող պատմությունը։

— Կալանավորված շղթայակապ Սմբատին բերում են ամիրայի պալատը։ «Այդ դու ես խռովում իմ տիրույթների հանգստությունը, շո՛ւն...»,— գոռում է ամիրան։ «Ես ձեռք չեմ տալիս, չեմ հեղինակազրկում ոչ քո աստծուն, ոչ էլ քո աստծո ծառաներին,— պատասխանում է Սմբատ Զարեհավանցին,— ես չեմ ըմբոստանում նաև մեր տիրոջ դեմ։ Իմ խռովությունը աստծո սպասավորների դեմ է»։ «Դու վերաբաժանում ես իմ հպատակների հողերն ու կարողությունը, դո՛ւ հայհոյելով ու կրոտվելով նրանց դեմ, կհասնես նաև ինձ։ Հողեր և ինչք ունենալու գայթակղությունը մեծ է, շինականներին գազանացնում է։ Դու նրանց իմ դեմ ի բաց կարձակես և արյուն կթափվի, շատ արյուն...»։ «Հողերի վերաբաժանումը սուրբ խնդիր է, ամիրա՜,— պատասխանում է Սմբատ Զարեհավանցին,— մենք մեր երկրում հող չունենք, տեղ չունենք, ապրուստ չունենք, մենք եկեղեցուց կխլենք այն և շինականները կապրեն առավել մարդավարի...»։ «Աստծո տները քանդելո՞վ...»։ «Աստծո տունը եկեղեցին չէ, ամիրա՜, աստված երկնքում է, այնտեղ է նրա բնակատեղին»։ «Իսկ ո՞վ է ձեր աղոթքներն ու խոսքը հասցնելու ձեր աստծուն»,—քմծիծաղել է ամիրան։ «Ինքներս...»,—պատասխանել է Զարեհավանցին։ Քահ-քահ ծիծաղել է ամիրան. «Ուրեմն, ճիշտ են ասում, որ դու քեզ Քրիստոս ես համարում, ստոր շինական...»։ «Ես Քրիստոս չեմ, ամիրա՜, Քրիստոսն աստծո որդի չէ, Քրիստոսը սովորական մահկանացու է, և մենք ժխտում ենք նրա երկնային առաջնորդ լինելու հանգամանքը»։ «Ստում ես,— գոռացել է Աբու-Լ-Վարդը,— դու քեզ Քրիստոս ես համա-

ում, որովհետև ժխտում ես նրան և ցանկանում նստել նրա թափուր աթոռին։ Քրիստոսը հարություն առավ երեք օրից հետո, ես քեզ կսպանեմ ու կթաղեմ, եթե երեսուն օրից հետո էլ հարություն առնես, կիմանամ, որ Քրիստոսն ես...»։ «Դու այդ մեկը կանես, ամիրա՛, ինձ սպանելը քեզ համար դժվար բան չէ։ Սակայն դու զուր ես խառնվում մեր՝ հայոց գործերին։ Զբաղվիր քո ալլահով, զբաղվիր քո Մուհամմեդով։ Դու մեր հողում, մեր բերին շոքած, վտարանդի ես դարձնում մեզ մեր ունից, բավական չէ, դեռ խառնվում ես մեր աստծո և եկեղեցու գործերին։ Մահով պատժելու քո իրավունքը կիրառիր քո երկրում, քո Արաբստանում...»։ «Ես քեզ կսպանեմ, շինական, այդ իմ իրավունքն է, բայց ափսո՛ս, որ դու չես տեսնի այն ուրախությունը, որ կապրեն քո ազգակից կլոնավորներն ու աշխարհիկ տերերը։ Նրանք կպանծացնեն իմ անունը որպես փրկարարի...»։ «Որպես դահճի...»,— վրա է բերել Սմբատ Զարեհավանցին։ «Ո՛չ, որպես փրկարարի, որը պաշտպան է կանգնում ոչ միայն իրենց, այլև հայոց աստծուն և Քրիստոսին, որոնց դու չես հավատում և փորձ ես անում խորտակել նրանց և հավատը հայոց։ Ես քեզ կսպանեմ, իսկ դու եթե աստված ես, կարող ես՝ հարություն առ...»։ «Դու կսպանես ինձ, բայց մեռցնել չես կարող, ամիրա, քանզի այն սերմը, որ ես գցել եմ իմ հողում և շինականի սրտում՝ մահ չունի, դու ուժով, հրով, սրով չես կարող քաղհանել, ամիրա, որովհետև արմատները և՛ խորքով, և՛ տարածքով սահմանների չեն ենթարկվում։ Աշխարհն է սնում նրանց արմատները, իսկ սերմերը կերակրում են մարդկային հոգիները և դառնում ուսմունք ու վարդապետություն...»։

— Աբու-Լ-Վարդը շարչարեց ու խայտառակմամբ արավ Զարեհավանցուն, Գրիգոր, բայց Սմբատը չմեռավ, նա հիմա էլ մեջն է ժողովրդի, դուրս է եկել նույնիսկ հայոց սահմաններից և թափառում է երկրից երկիր։ Իսկ այդ ամիրաները, որ առերես ենթակա են մեր երկրի աշխարհիկ մեծերին, առավել ինքնագլուխ են և ինքնիշխան, քան երկրիս նախարարներն ու իշխանները։

Մտան Դվին։ Քաղաքը հանգիստ էր ու անդորր։ Մուշեղն ասաց, որ Դվինի աստղն իջնում է, Անիինը՝ բարձրանում։ Երկար ժամանակ Դվինը եղել է արաբական ամիրաների նստավայրը, եղել է հայոց հոգևոր կենտրոն։ Այստեղ խաչվել են առևտրական ճանապարհները և առևտուրը ծաղկել ու ծաղկացրել է քաղաքը։ Դվինն ունի նույնիսկ իր դրամահատարանը։

Դվինն իրոք հզոր ու մեծ քաղաք էր։ Առաջին հայացքից անդորր ու հանգիստ քաղաքը, հենց ոտք դրեցին շուկայի, առևտրական ու արհեստավորական թաղերը, պարզապես եռում էր, թվում, աղմկում, բյուր

մարդկանց բազմությունները լցնում ու դատարկում էին փողոցներն ու խանութները։ Իշխանատները, հյուրատները, խորտկարանները, արհեստանոցները լցվում էին ու դատարկվում։ Բազում ազգ ու ցեղի, հավատի ու գույնի ամբոխն առնում էր ու վաճառում, ուտում ու խմում, կռվում ու հաշտվում և աղմկում ու աղմկում։ Գրիգորին զարմանք ու հիացմունք պատճառեցին Դվնո մայր տաճարի հոյակերտ կառույցն ու կաթողիկոսական ապարանքը։ Շուկայի մեծ դռան մոտ Գրիգորի դեմ ելավ ներկված մի գեղեցկուհի և նրան հրեց պատի տակ։

— Սիրուն տղա՛, սիրել կուզե՞ս,— անսեթևեթ ու գայթակղիչ ժըպտաց երեսին։ Տղան շփոթվեց, նույնիսկ վախեցավ։ Զարմացած նայում էր կնոջն ու չգիտեր ինչ պատասխաներ։

— Տեսնում եմ, ուզում ես, ինչո՞ւ չպիտի ուզես,— ուստով հպվեց խեղճ բանաստեղծին,— որքա՞ն դրամ ունես...

— Դրամո՞վ պիտի սիրեմ,— զարմացավ Գրիգորը։

— Հապա ինչպե՞ս, ձրի ինչպե՞ս պիտի սիրես ինձ նման կնոջը,— ավելի առաջ եկավ կինը։ Գրիգորը հասկացավ։

— Ճանապարհ տուր,— հրեց կնոջը։— Դրամով առնում են ու վաճառում...

Մուշեղը ետ դարձավ, բռնեց կնոջ թևատակերից ու թեթևորեն բարձրացնելով, տարավ ու ներս հրեց շուկայի դռնից։

— Շնե՛ր,— շնչասպառ չարությամբ հևաց կինն ու անհետացավ բազմության մեջ։ Քիչ անց արաբ զինվորը նույն կնոջ թևից բռնած կանգնեց նրանց դիմաց։

— Սա՞ էր իրեն առաջարկում, տղա,— դիմեց Գրիգորին։ Կինը վախից լայնացած աչքերով նայում էր Գրիգորին և գալարվում զինվորի ձեռքերի կոպիտ աքցանի մեջ։

— Չհասկացա՛,— խոսեց Գրիգորը։

— Ջասա՞ց, որ սիրվրտվել կուզե,— հարցը պարզեցրեց սա։

— Ես այս կնոջը տեսնում եմ առաջին անգամ,— հանգիստ ստեց Գրիգորը, նայելով անառակի ցավից ու վախից ծռմռված դեմքին։

— Ո՛ւմ է խղճում,— նեղացավ զինվորը։

Գրիգորը շարունակեց ճամփան։ «Մեծ քաղաք է,— դառնորեն խորհում էր երիտասարդ տաղերգուն,— այստեղ ազգային ու ժողովրդյան վերքերն ավելի երևացող են, ավելի տեսանելի և պարտադրող։ Ախտերը, ախտածին մտքերը, ախտահարույց զգացմունքները որպես հաճույքի ու ցոփության առարկա վաճառվում են։ Բոլորը մեղավոր են և բոլորն անմեղ։ Հանցագործն ու ազնիվը մեկ մարդու մեջ՝ ահավոր է։ Վաճառում է

իրենն, քանզի ուրիշ վաճառելիք չունի, իսկ ապրել հարկավոր է։ Գնորդը նրա մարմինը գնում է, որովհետև այդ պահին կնոջ մարմնի կարոտ ունի, ինչպես գինու կարոտ, ուտելու ցանկություն, և առնում է այդ մարմինը, որն ախտավոր է, ինչպես թթված գինին, ինչպես բորբոսնած հացը, ինչպես հոտած միրը։ Առնում է. առնելիս գոհ են և՛ առնողը, և՛ վաճառողը, իսկ հետո ախտահարվում է մարմինը և հիվանդանում ու ապականվում են հոգիները։ Եվ վայելքը վերածվում է մի էության, որ մենք կոչում ենք անառակություն։ Հե՜շտ է ասելը։ Անառակ է, քանզի քաղցած է, անտուն է, անտեր է։ Բայց չէ որ նա էլ, այդ սիրունիկն էլ ունի աստվածային պատկերը, ուրեմն, ինչո՞ւ մաքուր չէ, կատարյալ չէ նրա նման։ Ինչո՞ւ կատարյալ չէ մարդը և մինչև դժոխային ո՞ր պարունակը կարող է հասնել նրա անկումը։ Տե՜ր իմ, փրկիր ի չարեն քո զավակներին, այլապես անբարոյականության նեխահոտը կբարձրանա մինչև մաքրամաքուր և անապական քո բարձունքը, տեր դարձիր քո ստեղծածներին»։

— Ի՞նչ է, ուշքդ այդ կնոջ հետ գնաց...— մոտեցավ Մուշեղը։

— Չգիտեմ, հայր սուրբ, չգիտեմ, համենայն դեպս այդ կինը մե՜ղք էր...

— Այո՛, մեղք էր,— խոսեց Մուշեղը,— այնքան անմեղ մեղավորներ կան աշխարհում, Գրիգոր, որ թիվն ու համրանքը հայտնի չէ նույնիսկ աստծուն։

— Իսկ ի՞նչ անել, ի՜նչ...

— Պատժել մեղավորներին...

— Ո՞ւմ, ո՞ր մեղավորներին...

— Հոգևոր ու աշխարհիկ տերերին,— չոր կտրեց Մուշեղը։

— Աղոթենք աստծուն, հայր սուրբ, շարժենք երկնավորի գութը, նա մարդասեր է ու բարեգութ, տաղեր հրավառենք, աղոթքներ հղենք ի երկինս, մոմերով զարդարենք երկնավորի փառքը, խունկ ծխենք և նա մեզ կլսի...

— Դարեր ու դարեր մենք այդ նույնն արել ենք, Գրիգոր, իսկ արդյո՞ւնքը։

— Աստծուն հաղորդակցվողը սուրբ բերան և անբասիր վարք պիտի ունենա, այլապես աստված չի լսի նրա աղոթքը, հայր սուրբ...

— Վերջապես, Գրիգոր, եկար ու եկար այն մտքին, որ հոգևոր տերերը անսուրբ բերան և անբարո վարք ունեն, որ նրանք ի վիճակի չեն փրկել աշխարհս մեղքերից, քանզի իրենք են մեղավորները...

Գրիգորը լռում էր, պատասխանել դժվարանում, պատասխան չուներ։ «Ես այս մարդու հետ բանավիճել չեմ կարող, պատրաստ չեմ։ Նա փորձառու է, խելոք և հանդուգն։ Տրամաբանելու մեջ հմուտ և անողոք։

Ես ինչպես գտնեմ այն պատասխանը, որ կարողանամ ապացուցել իմ ճշմարտությունը և Մուշեղին էլ համոզել այդ ճշմարտության մեջ, երբ այդ պատասխանը չունեմ։ Ես համաձայն չեմ Թոնդրակյան եկեղեցամերժ վարդապետությանը, զի նա հոգիների մեջ սերմանում է ամբարիշտության և խառնակության ոգին։ Ինչպե՞ս համոզեմ նրան, որ եթե մեռնի, կործանվի եկեղեցին, ապա կկտրվի աստծո և նրա հավատավոր հայի կապը։ Ժողովուրդն ինչպե՞ս գտնի աստծո լեզուն, երբ այն գրտնվում է աստծո սպասավորների իրավասության տակ։ Ժողովրդին հասկանալու համար աստված պետք է հասկանա նրան, ժողովրդի լեզուն, իսկ նա՝ աստծուն։ Հակառակ պարագայում խառնակություն կլինի։ Տե՜ր աստված, ինձ մեղավոր համարիր, թեև երբեք չեմ մեղանչել քո դեմ, թեև երբեք չեմ տեսել քո ստվերը, քանզի լույսը ստվեր չունի։ Թույլ տուր միայն աղաղակեմ քո գահն ի վեր և քեզ հասցնեմ մեղքերի մեջ, ախտերի մեջ, հանցանքների ու կասկածների մեջ լալահառաչ քո զավակների հեծծյունը, այլապես նրանք այնքան կապականվեն, այնքան կհեռանան արևվի լույսից ու մաքրությունից, որ նույնիսկ կմոռանան քեզ ու քո սրբազան մեծությունը։ Ես խոսք եմ հայցում քեզանից, տեր իմ, ձայն եմ ուզում և իրավունքի շնորհ՝ չմիջնորդված խոսքի և թող փակվի բերանս, թող արժանանամ քո ամենածանր պատժին, եթե փորձեմ ստել, եթե փորձեմ գոցել ու թաքցնել մեղքերն այս աշխարհի և մարդկանց, որոնց ստեղծել ես դու, հեղինակել նրանց կերպարն ու հոգին, նմանեցրել, պատճենել քեզ։ Իսկ նրանք չարաշահում են քո համբերությունը, անգոսնում քո կատարելությունը և կատարում աստվածընդդեմ արարքներ՝ թաղվելով կեղտի ու ախտի մեջ, պատվազուրկ անելով մարդուն, աստծո ստեղծած մարդուն, երկնային տե՜ր...»։

— Գնանք, Գրիգոր, ժամ է հանգստանալու։ Առավոտյան ճամփա ունենք երթալու։

***

Արարատյան աշխարհում ճանապարհները ծանրաբեռ են՝ աշխույժ ու շարժուն։ Արևելքն ու արևմուտքը, հյուսիսն ու հարավը խաչաձևվում են, հանդիպում միմյանց, ուղտերի երկարավուն քարավաններով, ձիավոր ու հետիոտն ճամփորդներով, որոնք լցրել են Բագրատունյաց մայրաքաղաք՝ Անի տանող ճանապարհները։

Զը՜նգ, զը՜նգ, զը՜նգ, զը՜նգ, ծլնգացնելով զանգակները՝ քարավանները չափում են ճանապարհը։

— Որտեղի՞ց, բարեկամ...

— Անիից...
— Իսկ դուք ո՞ւր եք գնում...
— Անի...
— Ովքեր եք...
— Թաջերներ[1], Բաղդադից, Դամասկոսից...
— Թուշարներ[2], Թավրիզից, Սպահանից...
— Վաճառական Թուրանից...
— Էմպորասներ[3] Կոստանդնուպոլսից...

Նախանձելի շուքով ու վեհապանծորեն, նաև մարգարեի լրջախոհությամբ քայլում են ուղտերը՝ տնքալով բեռների ծանրության տակ։ Վարգում են ձիավորները դեպի ավետյաց երկիր, դեպի Անի։ Արևի տակ խանձվելով շոգից ու տապից քայլում են միայնակ ճամփորդներ, շինականներ ու արհեստավորներ, փերեզակներ ու ավազակներ, մուրացիկներ ու թափառաշրջիկներ, վարձվել ցանկացող զինվորացուներ։ Շղթայի զարկված քայլում են գերիների, ստրուկների շարքեր, զինված ձիավոր հսկիչների հսկողության տակ։ Քշվում են Անիի ստրկավաճառության շուկան։ Գեղանի կանայք ու աղջիկներն առավելություն ունեն, որպեսզի չկորցնեն գեղեցկությունը և վաճառքի գինը՝ բազմած են ձիերին արնից ու շոգից պաշտպանող քողերով ու գլխաշորերով, որոնց արանքից կայծկլտում են նրանց տխուր կամ շարաճճի, լույտի ու կյանքի կարոտ աչքերը։ Քայլում են վարձու մարդիկ, շղթաների ծանր շառաչը խառնելով քարավանների զվարթ զնգոցին։

— Որտեղի՞ց եք գալիս...
— Անիից...
— Իսկ դուք ո՞ւր եք գնում...
— Անի...

Ճանապարհը հյուսիս-արևմուտք ընթանում էր Արարատյան դաշտի ամենաբերրի մասով, բերքառատ այգիներով, այգեստաններով, անտառակներով։ Հորիզոնում երևաց կնճռապատ քառագագաթով և կնճիռների մեջ ձնաշերտերի գծերով Արագածը և առավել աջում՝ Գեղարքունյաց լեռնաշղթան։ Ամեն ինչից երևում էր, որ Մուշեղը եղել է այս կողմերում և ծանոթ է տեղանքին։

— Իսկ Սևանը կտեսնե՞նք,— անհամբերությամբ հարցրեց Գրիգորը։

[1] Թաջեր (արաբ.)— վաճառական
[2] Թուշար (պարսկ.)— վաճառական
[3] Էմպորաս (հուն.)— վաճառական

— Ո՛չ, Սևանը կերկարացնի մեր ճանապարհը,— խոսեց Մուշեղը,— մենք կընկերակցենք սևանածին Հրազդանին, խենթ ու խելառ գետ է...

— Սևանա վանքե՞րն են գեղեցիկ, թե Աղթամարի Սուրբ Խաչը,— միամիտ հետաքրքրասիրությամբ հարցրեց Գրիգորը։

— Աղթամարի Սուրբ Խաչ տաճարը,— անկասկածելի ու անվերապահ գնահատեց Մուշեղը,— Սուրբ Խաչը հանճարեղ է, տղաս, նրա շքեղությունն անդերազանցելի է և անմրցելի...

— Գառնո տաճարը մեր ճանապարհին չէ՞, հայր սուրբ...

— Ո՛չ, Գրիգոր, նա կմնա մեր ճամփի աջում, թառած Գեղամա լեռների քարե ոտքերին...

— Ափսո՜ս,— չկարողացավ զսպել Գրիգորն իր հիասթափությունը,— իսկ Էջմիածի՞նը...

— Էջմիածին կմտնենք, մեր ճանապարհին է...

Գնալով բարձրանում էր ճանապարհը, մտավ Հրազդան գետի կիրճը և շարունակվեց գետի ընկերակցմամբ։ Հետո գետը գնաց խառնվելու մայր Արաքսին, իսկ ճանապարհը սլաքի նման նետվեց մեկդի և խրվեց Էջմիածնի այգիների մեջ։ Նրանց առջև ասես երկնքից կախվեց և փառահեղացավ սուրբ Հռիփսիմեի տաճարը, որի լաջվարդ կապույտում խրված գմբեթը արտասվելու աստիճան հուզեց Գրիգորին։

— Հրաշալի՜ է, հրա՜շք է, հայր սուրբ...— կերկերաց ձայնը,— այս ի՜նչ պարզություն, ի՜նչ թռիչք այս անսեթևեթ, անզարդ ու ազատ ձևերի մեջ։ Ցնդելու բան է, հայր սո՜ւրբ...

Վաղարշապատն իր Էջմիածնի տաճարախմբով աղքատ և ամայի տպավորություն թողեց ճամփորդների վրա։ Մայր տաճարը լքված տեսք ուներ։ Գրիգորը համբուրեց նրա հին ու հողմահար քարերը և մտավ տաճար, ուր կիսախավարի մեջ առկայծում էին մի քանի տխուր և աստծուց խռոված մոմեր։ Տաճարի ծառայապետն եկավ ընդառաջ։

— Բարի լինի ձեր գալուստը,— ասաց,— ո՞ւխտ եք եկել, թե ճամփորդ-այցելուներ եք...

— Ե՛վ մեկը, և՛ մյուսը,— պատասխանեցին։— Մայր տաճարն այսօր լոկ ուխտատեղի է, ոչ ավելին։ Ուրեմն, հաշվիր, թե ուխտավորներ ենք...

— Գոհություն աստծո,— ձեռքերը վեր բարձրացրեց վանականը,— այսօր գոնե կկշտանան տաճարիս նվաստ սպասավորները։ Գոհություն քեզ, տե՛ր...

Վանականը խղճուկ տպավորություն էր թողնում։ Հնամաշ ու գունաթափ սքեմը, կեղտակուր օձիքը և, մանավանդ, մագաղաթի գույնի դեմքը պերճախոս վկայություն էին թերասնման, աղքատ ու խեղճ կյան-

քի։ Տրեխների միջից երևում էին մաշված գուլպաներից դուրս ցցված հողագույն մատները։ Արգահատելի էր վիճակը։ Մուշեղը քմծիծաղով նայում էր նրան։ Ճանապարհին ընկած շեներում նա մի քանի գերան էր ջարդել իր հաղթ ուսերին, Գրիգորը վիպասքել էր և բավականաչափ դրամ և ուտելիք ունեին։ Կարելի էր իրոք օգնել տաճարի սովահար սպասավորներին։

— Զարմանում եմ, ո՞վ աստծո սպասավոր,— հեգնեց Մուշեղը,— կրոնավորները հայոց աշխարհիս ամենայն տեղ այնքան են գիրացել, որ վանքերի ու եկեղեցիների դռները նեղ են գալիս նրանց ելումուտին, իսկ հավատիս ու ազգիս սրբություն սրբոց կենտրոնում, ներիր ինձ մեղավորիս, համեմատությունն անպատշաճ է, նման եք ցամաք ձորի աղվեսների...

Համեմատությունն իրոք անպատշաճ էր ու վիրավորական։ Վանքի Ծառայապետի դեմքը շարությունի կնճիռներից խտացավ ու խստացավ։ Նա առաջացավ դեպի Մուշեղը.

— Մենք հոժար կամոք ենք ընդունել հայոց Մայր տաճարի պահպանությունը, երբ այն այլևս հոգևոր գահանիստ չէ և սրբատեղի է միայն, ուր իջել է միածինը և տաճարի փառքը բուրվառել է սուրբ Գրիգոր Լուսավորիչը, այն ավելի քան կարոտ է ուշադրության և սրբազնագույն պարտականությունն է, որ կատարում ենք և մեզ դատապարտել ենք սովի և աղքատության։ Իսկ դու վիրավորում ես մեզ նրա համար, որ մենք գող և ավազակ չենք ու ձեռքերս չենք խցկում ուխտավորների գրպանները...

— Ներողություն խնդրիր, հայր սո՛ւրբ,— նրա ականջին շշնջաց Գրիգորը,— աղքատությունն այպանք չէ, ամոթ չէ։ Կամեցար հեգնել հարուստ հոգևորականներին, սակայն վիրավորեցիր այս անձնվեր մարդուն...

Մուշեղը գլխով արեց.

— Ներիր ինձ, հայր սո՛ւրբ,— համբուրեց ձեռքը,— ես չէի կամենում։

Շատ չանցած Մայր տաճարի վանականների փոքրաթիվ խումբը, նստած վանքի հարակից այգու ծառերի շվաքում, վայելում էր գառան համով խորոված ու էջմիածնի մեռոն գինին։ Նախքան սեղան նստելը վանքի սպասավորներին ուրախացրին դրամանվիրատվությամբ, հետո հարյուրավոր մոմերով լուսավորեցին ու զվարթացրին Մայր տաճարը, դարավոր պատերն ասես կենդանացան և աստված իր գահախմբով վերստին վերադարձավ իր նստավայրը։

Գինու գավաթները պարպվում էին։ Վանականները խմբերգում ու մեներգում էին։ Կրոնական երգերին մեջընդմեջ ընկերակցում էին աշխարհիկ տխրության ու պանդխտության երգերը։ Վանականների լեզուները բացվել էին։ Նրանք թեև խոսում էին իրենց դժվարին կեցությունից, սակայն անտրտունջ էին իրենց վիճակից և անշահախնդիր իրենց նվիրվածության մեջ՝ էջմիածնի հանդեպ։

— Մեկ շաբաթ առաջ,— պատմում էր նրանցից մեկը,— Դվնո արաբ ամիրայի մարդիկ սպանեցին տաճարի լուսարարին։ Եկել էին կողոպտելու տաճարը։ Ընդդիմացել էր, սպանել էին։ Գանձատեղը չէին գտել, այլապես տաճարը կզրկվեր իր ինչքից և դարավոր սրբություններից։ Մի քանի ամիս առաջ իշխանից զորականներ խնդրեցինք, տվեց։ Հետո նկատեցինք, որ այդ տղաները ոչ թե հսկում են տաճարը, այլ գողեր են հրապուրում, որ միասին թալանեն։ Վռնդեցինք։ Հիմա մենք ենք մեն-մենակ, անզեն ու խեղճ՝ փորձությանդ առջև։ Դեմետրե անունով Բարձր Հայքի կառավարիչ բյուզանդացին քանի անգամ մարդ ուղարկեց, խնդրելով, որ մեր պղնձյա ջահերը վաճառքի հանենք, նույնիսկ մի անգամ ինքը բարեհաճեց ներկայանալ։ Չտվինք։ Նույնիսկ սպառնաց զորքով ներխուժել տաճար։ Վերադարձին ինչ-որ տեղ ձիուց ընկել էր ու գնացել էն աշխարհը, երբ ծառից նրա վրա էր ցատկել հովազը։ Ասում էր. «Մեծ ժողովրդին են վայել նման ջահերը»։ Ասում ենք. «Ջահերն աստծունն են, նրա տաճարը լուսավորելու համար են»։ «Չէ՛,— ասում է,— դուք չունեք շքեղության իրավունք»։ «Մեր ջահերը շքեղ չեն, պղնձից են»,— ասում ենք։ «Բայց ճաշակով են»,— ասում է։ «Ուրեմն, ճաշա՞կն էլ է մեծ և հզոր ազգերի սեփականությունը»։ «Իհարկե՛,— ասում է,— մենք ձեզ օգնում ենք, օգնել ենք ու կօգնենք, որ անօրեն ազգերը ձեզ չուտեն, իսկ դուք՝ երախտամոռներդ, չեք ուզում ձեր փրկարարներին նվիրել կամ վաճառել ձեր ժանգոտած ջահերը»։ Ի՞նչ ասել նմաններին։ «Մեր ժանգոտած ջահերի համար էլ ո՞ւր եք եկել ու հասել էստեղ, հետո դուք արաբների կամ այլ անօրեն ազգերի հետ կռվում եք ոչ մեզ ազատագրելու, այլ ձեր տերության սահմանները լայնացնելու և հարստությունն ու ավարը մեծացնելու նպատակով։ Իսկ եթե կուզեք ճիշտն իմանալ՝ շունն էլ, որսաշունն էլ մի ցեղից են։ Ի՞նչ տարբերություն, թե մեզ ով է թալանում, օրինական հավատավորը, թե անօրենը, երբ երկուսն էլ ավարառու են և զավթիչ»։ «Ձեզ կբանտարկեմ,— ասում է, —դուք իրավունք չունեք մեզ անպատվելու»։ «Իսկ դուք մեզ շղթայելով ազատագրելու իրավունք ունե՞ք...»։ Մի խոսքով... Հույս ունենք, որ Աշոտ Ողորմած Բագրատունին կհիշի էջմիածինը, քանզի վերջերս բոլոր հիվանդ ու անտեր, բորոտ ու ախտավոր վաղարշապատցիները հեռացան այստեղից և թագավորի

հրամանով գնացին քաղաքամայր Անիի կողմերը։ Նրանք հիմա կերակրվում են, բալասանվում հիվանդատներում և ապրում ծերանոցներում։ Թագավորը ժողովրդասեր է, փրկեց էջմիածինը մուրացկաններից ու հիվանդներից։ Եթե մեզ էլ հիշի, ուրեմն, գոհություն աստծուն, որ մենք էլ տեր ունենք և, մանավանդ, տերն ենք սրբատեղիների և հողին հայրենյաց։

Երեկոյացավ։ Լռեցին կյանքի և արթնացան բնության ձայները։ Նրանց հյուրատուն տարան և փայտե հատակի վրա փռեցին կոսկածելի մաքրություն ունեցող ինչ-որ լաթեր, որոնց տարիքը հաստատապես դարավոր թվաց։ Այդ անկողինները լցված էին լվերով և փայտոջիլներով, որոնք մինչև լույս հալածեցին երկար ճանապարհից հոգնատանջ մարդկանց։ Լուսադեմին արդեն ոտքի էին և պատրաստվում էին ճանապարհ ընկնել, բայց վանականները խնդրեցին միասին վայելել առավոտյան ընթրիքը։ Մերժել չէր կարելի և նրանք վերստին բոլորեցին սուփրայի շուրջ։

Օդը թափանցիկ էր, և լույսի առատությունից մոտեցել ու սեղանին էին բոլորել հայոց լեռները՝ Արարատը, Արագածը, Գեղամա լեռնաշղթան։ Տպավորությունն այնպիսին էր, թե իրենք նայում են հայոց կենդանացած պատմությանը։ Սրբությունների հավաքատեղի էր։ Հայոց պատմության վկաները՝ սրբազան լեռներն իրենց հազարամյա վիպերգերով ու վիպասքերով՝ Նոյ նահապետից մինչև Արտավազդ, Լուսավորչի կանթեղից մինչև մեծ լեռան ետևում թաքնված Ավարայր, Մայր տաճարն ու Հռիփսիմեն։

— Հայոց աշխարհի սիրտն է,— կարդաց նրա մտքերը Մուշեղը,— այստեղ է սկզբնապես կազմվել մեր քարավանն ու ահա երկու տասը դար է, ի՜նչ նրա շարունակական ընթացքն անվարան հաղթահարում է ժամանակների դիմադրությունը։ Ի՞նչ ես խորհում, հավատո՞ւմ ես մեր ընթացքի հավերժությանը։

— Իհարկե, հավատում եմ,— խոսեց Գրիգորը,— ես հավատում եմ աստծուն և ինձ թվում է, թող ների ինձ երկնային տերը, որ իմ հավատն առ աստված միտումնավոր է։ Եթե չհավատամ իմ ժողովրդի հավերժությանը, չեմ հավատա նաև աստծո կատարելությանը։ Ես աստծուն տաղերգում եմ, որ նա հաշտ նայի իմ ժողովրդին, միսրոպյան լեզվին, այս սրբություններին։ Ես երկրպագում եմ երկնային տիրոջը, որ նա այս աշխարհից ի չիք դարձնի քեն ու ոխ, ավազակություն ու անառակություն, ախտավարակ և ապականված հոգիներին ու մարմիններին մաքրություն ու կատարելություն պարգևի, այլապես մենք ի՞նչ ունենք առավել նշանակալից ու թանկ, քան մեր պատմությունը, մեր լեզուն, մեր ասքերն ու վիպասքերը, մեր դժվար հողն ու դժվար ճակատագիրը։ Մեր հոգին

երկփեղկված է։ Փոքր ազգերի ու ածուների համար, որպիսին մենք ենք, հոգու և ոգու մաքրությունը գոյության նախադրյալ է։ Առանց մաքրվելու ճամփա անցնելն անհնար է, ինչպես առանց զենքի ճակատամարտելը։ Մենք ընտրել ենք մեր զենքը, որ մեր ոգին է, այդպես են կամեցել մեր պապերը։ Մենք երգի և զենքի ներդաշնությունը գերադասեցինք միայն զենքին ապավինելուց։ Մենք հավատի մեջ դրինք մերը՝ քրիստոնեական բեմի ծիսակատարությանը պարտադրեցինք նաև Լուսավորչինը, որ մեր ոգին հավատի մեջ էլ հայ մնա։ Մենք առավել շատ մարտնչել ենք լեզվի, քան հավատի համար։ Եթե մարտնչել ենք հանուն հավատի, ապա նրա համար, որ լեզուն պահպանենք, քանզի լեզվի կորուստն ավելի մահաբեր է, քան հավատափոխությունը, ես հավատի զինվոր եմ, քանզի հավատով (ոչ միայն կրոնի) է երաշխավորվում փոքր ազգի գոյությունը, այսինքն, ոգու աստվածացումով։ Ես աստծուն ասելիք շատ ունեմ, սուրբ հայրե՛ր, և եթե հոգիս կարողանամ հաշտեցնել նրա հետ, խնդրելու եմ, որ հավատի դրոշը մաքրությունն ու կատարելությունը սեպվի, իսկ մարդկային գեղությունները՝ հավատի կործանում և անհավատություն։ Նայում եմ այս լուսախնդ առավոտին և երջանկորեն խորհում, որ մեծագույն պարգև է այս հողի զավակ, այս հավատի սպասավոր, այս հողի փրկության զինվոր լինելը։ Մեծագույն առաքինություն է այս բոլորի համար զոհվելը նաև։ Մեր անմահությունը պետք է որոնել նաև մեր մեծ զոհերի և զոհվելու կամքի մեջ։

Մուշեղը, նաև վանականները նայում էին զարմանքով քսանամյա Գրիգորին, որ խոսում էր այնպես, ինչպես աստվածատուր մեծերը։ Ոչ ոք չէր կասկածում այլևս, որ շնորհներով լուսավորված են նրա հոգու բոլոր անկյունները, որ նրա մտքերը խիստ երկրային են, հողեղեն և հոգու թռիչքները վերընթաց են ու երկնային։ Ոչ ոք չէր կասկածում, որ եթե նրա տերն ինքն աստվածն է, ապա Գրիգորը և՛ աշխարհինն է, և՛ իր հող ու ջրինը...

— Ես չգիտեմ, ով ես դու, Գրիգոր, թեև կասկածում եմ ով լինելդ, սակայն դա կարևոր չէ։ Ես գնահատում եմ մտքերիդ սրությունն ու թարմությունը, որ երևի քեզ կպարգևի մեծություն, իսկ մեր տառապյալ ժողովրդին՝ մտքի և ոգու առողջություն և ժողովրդին ի սպաս դրվող հանճարի ծնունդ։ Քո կենացը, Գրիգո՛ր, քեզ երկար կյանք և մեծ ճանապարհ հավիտյանս հավիտենից, ամե՛ն...

Ոտքի ելան, պարպեցին գավաթները։ Հետո մտան տաճար աղոթեցին և գոհություն հայտնեցին երկնային տիրոջը, ապա վանականների օրհնանքների ու բարեմաղթությունների տարափի տակ բռնեցին քաղաքամայր Անիի ճանապարհը։

Անին երևաց միանգամից, դեռ քաղաքին չհասած, եռանկյունաձև դարավանդի թեքության վրա, երևաց քաղաքը իր հին ու ծանրանիստ պարիսպներով, իր տակավին նոր կառուցվող պարիսպներով, քանզի քաղաքը նեղվում էր հին պարիսպների մեջ, լոք տալով թռել էր նրանց վրայով և պահանջ կար քաղաքը գոտևորել նոր պարիսպներով նրան անառիկ և անմատույց դարձնելու և միաժամանակ քաղաքի կյանքը միասնական հունի մեջ դնելու նպատակով։ Այնտեղ, ուր վերջանում է Արարատյան մեծ դաշտը, և ճանապարհը շնչասպառ է լինում բարձունքը հաղթահարելիս, երբ սկսվում է Շիրակի դաշտավայրը՝ Ախուրյան գետի աջ ափին փռվել էր Անին՝ հայոց աշխարհի նոր քաղաքամայրը։ Ճանապարհն ուղիղ տարավ դեպի Ախուրյան գետը, որի վրա կառուցված երկհարկանի կամուրջը դեմ էր առնում Ավագ դռանը, որի դարպասները փակ էին այնտեղ խլրտացող բազմաքանակ ամբոխի առջև։ Ոչ մի շարժում դրսից ներս և ներսից՝ դուրս։ Ոչ մի ելումուտ։ Աշտարակներում նստած զինվորները սպառազեն, երկաթյա երեսկալներն իջեցրած դեմքներին և նետ-աղեղները գործի դնելու պատրաստ հսկում էին մոլտացող ամբոխի շարժումները, անընդհատ զգուշացնելով.

— Հեռո՜ւ Ավագ դռնից, կարգ ու կանոնը խախտողները կնետահարվեն։

— Քաղաքում շուրջկալ է, հանցագործ են որսում...

Հետաքրքրասերների բազմությունը գնալով ավելանում և լճանում էր պարիսպների տակ։

— Այնտեղ է, տեսե՛ք, այնտեղ է, համա թե մեծ ձուկ են բռնել...

— Ուռկանը թպրտում է, մեջը որս կա, ո՞վ է, ո՞վ...

Անհասկանալի բան էր կատարվում։ Ավագ դռան աշտարակից, հայտնի չէ ինչ ձևով, կախված էր ձկնորսական ուռկանը, որը շարժվում էր, ցնցվում, իսկ նրա մեջ թպրտացող մարդ արարածը գոռում էր, պաղատում, որ իրեն քաշեն վերև, այլապես ուռկանի պարանը կարող է կտրվել և ինքը կգահավիժի պարսպից անդունդ, ուր ալիքվում ու քարաժայռերին է բախվում Ախուրյանը։

— Աստծո սիրուն, գոռացե՛ք, աղմկե՛ք, որ ինձ փրկեն, բարձրացնեն վերև...

— Փրկեցեք, վա՜խ, վա՜խ, վա՜խ...

— Ի՞նչ է կատարվում,— խոսեց Մուշեղը,— ո՞վ է Ավագ դռնից ուռկանով կախված մարդը, ի՞նչ է նշանակում այս տեսարանը...

Պատասխանել ոչ ոք չի կարող։ Չգիտեն բանն ինչ է։ Իսկ քաղաք մտնել ցանկացողները, մանավանդ քարավանները, գալիս են ու գալիս և դեմ առնում փակ կամրջին և փակ Ավագ դռանը։ Ժամանակ անց աշտարակի վերև պարսպի վրա զինվորները շարժվեցին, մի քանի հոգով ձգեցին պարանը և ուռկանը քաշեցին պարսպի վրա։ Ամբոխն ուրախ ու ցընծուն բացականչություններով արձագանքեց մարդու փրկությանը։

— Զարմանալի է, երկնային հրա՜շք, Ախուրյանից մարդաձուկ են որսում, խենթանալու բան է...

Հետո ամպրոպի նման ճայթեց ամբոխի զարմանքը։

— Ա՜յ ժողովուրդ, մարդաձուկը տերտեր է, բեղ ու մորուքով, փարաջան էլ հագին։

— Տերտեր է, տերտեր է, հո՜, հո՜, հո՜, հո՜, հո՜, հո՜,— քրքջում էր ամբոխը։

Չանցած պահ իսկ՝ Ավագ դռան դարպասները ետ գնացին։ Երկշարք զորականները դուրս եկան և անշարժացան դռան աջ ու ահյակ կողմերում։ Երիտասարդ պճնազարդ սպան դուրս եկավ և հայերեն, ապա հունարեն ու արաբերեն ազդարարեց.

— Քաղաքիս մուտքը բաց է իշխանաց առջև... Խնդրում եմ, տե՛ր իշխաններ...

Ամբոխից պոկվեցին մի քանի հեծյալ խմբեր և առաջացան դեպի Ավագ դուռն ու մտան քաղաք։

Այնուհետև առաջացան հոռոմները։ Քայլում էին ասես սայթաքուն հատակի վրայով, վախենալով չընկնեն հանկարծ ու փշրվեն կամ քսվեն մարդկանց ու աղտոտվեն։ Գոռոզություն ու արհամարհանք էր կաթում նրանց շարժումներից, քայլվածքից, դեմքերից։

— Սրիկանե՛ր,— խոսում էին մարդիկ,— քիչ է մնում քթները բրոնեն, ասես անցնում են շների հոտած լեշերի միջով... Իսկ իրենց վրայի օծանելիքը փայտոջիլի զզվելի հոտ ունի։

— Սրանց նայեցեք, սրա՜նց,— կռիվ էին տալիս, հորձանքվում,— մեզ քսվել չեն ցանկանում, բորոտների մեջ են ընկել, քոսոտնե՛ր... Իսկ քիթ-մուութները կորցրել են անբարո հիվանդություններից,— մատով ցույց էին տալիս անքիթ մի երիտասարդի, որի դեմքից բացակայում էր նաև վերին շրթունքը։

— Մեզ չեն սիրում, բայց մեր ոսկու համար իրենց կնիկներին էլ աճուրդի կհանեն...

Հետո հեզաբարո ուղտերին նստած քաղաք մտան արաբները։ Դեմքերը արևից ու քամուց հողմահարված, գլխանոցների տակից կայծկլտուն հայացքները Անիի Ավագ դռան գլխին փողփողացող Բագրատունյաց

դրոշին։ Մտան իրենց ալլահի անունը մրմնջալով ու ցանցառ մորուքները շոյելով.

— Սրանց ծեծեցին ու խելոքացրին։

— Չէ՛ մի՛, խելոքացրին։ Ամիրայությունները մեր երկրում ավելի հզոր են, քան նախարարությունները...

— Բայց ենթակա են Բագավորին և ստորադաս՝ մեծ նախարարներին...

— Դրանք բոլորն էլ նույնն են,— ընդվզեցին ձայները,— դրանց ալլահը և մեր իշխանաց աստվածը՝ ոսկին է։ Տե՛ս, որքան ապրանք են բերել և որքան ապրանք են տանելու Անիից...

Գնալով նոսրանում էր ամբոխը։ Պարզվեց, որ հավաքված բազմության մեծ մասը վաճառականներ են, որոնց ձիերի, գրաստների, ուղտերի պատկառազդու և ծանրաբեռ քարավանները մեկը մյուսի հետևից հոսեցին ու կուլ գնացին մեծ քաղաքի երախում։ Դռանը մնացին շինականները, գաղթականները, մուրացիկները, ինչ-որ տեղերից, նախարարություններից փախստականները, նույնիսկ շինարարներն ու մանրավաճառ-փերեզակները։

Ավագ դռան աշտարակից փող հնչեց։ Ամբոխը լռեց և դարձավ լսողություն.

— Լսեցե՛ք, ո՞վ մարդիկ, որ քարավանով չեք, քաղաքիս Ավագ դուռը կարող է բացվել միայն վաղն առավոտյան։ Կարող եք այժմ իջնել Ծաղկաձորի և Իգաձորի քարանձավային իջևանատներն ու պանդոկները։

Հավաքված բազմությունը վերստին քանդվեց, վերստին նոսրացավ։ Մարդիկ ստվեր էին որոնում արևից թաքնվելու և պատսպարվելու համար։ Քաղաքի շրջակայքում գլուխ դնելու տեղ չկար, քար էր ու մացառ։ Քարերից այնպիսի տաքություն էր փչում, ինչպես թոնրից։ Ջուր ևս չկար։ Հակոբիկին ձոր ուղարկեցին, ուր քարանձավներն էին իրենց ոչ հարուստ բնակիչներով ու կենվորներով։ Տղան վերադարձավ ջրով լիքը կժով։ Քաղցրահամ, սառցահամ ջուր էր։ Ծարավն ահռելի էր և սառը ջուրը փրկարար բալասանի ներգործություն ունեցավ։ Ծարավի ու տապի վիշապը նահանջեց, շնչելը հեշտացավ։ Սակայն այդ էլ փրկություն չէր, քանզի արևն անընդմեջ հարձակվում էր ու գրոհում։ Ժողովուրդը շուտով դատարկեց կամրջի առջևի հրապարակն ու իջավ այրերը, ուր զով էր ու հանգստավետ։ Այրերը բնակարաններ էին, պանդոկներ, իջևանատներ, նույնիսկ վաճառատներ ու խանութներ։ Իջևանեցին մի հույնի պանդոկում, որ հայերեն գիտեր, հայ կին ուներ և աղջիկներ, որոնք ևս հայեր էին իրենց լեզվով ու դեմքով, խոշորաչվի ու սիրունիկ արարածներ։ Հենց այրի կենտրոնում բխում էր սառն աղբյուրը, որի մեջ սառնություն էին

ընդունում գինով լիքը սափորները։ Բոլորեցին խոնչայի շուրջ, կերան, խմեցին, հանգստացան։ Մուշեղն, այնուամենայնիվ, ցանկանում էր իմանալ կատարվածի մասին։ Այդ ի՞նչ տերտեր էր ուղկանով կախվածը։ Ովքե՞ր էին կախել։ Ինչո՞ւ մեծ քաղաքի բոլոր դռները փակ մնացին եկվորների առջև։ Ի՞նչ է կատարվում մայրաքաղաքում։ Ինչո՞ւ են ուժեղացվել պահակախմբերը։ Ամեն ինչից երևում է, որ քաղաքն անհանգիստ է, խառնակ վիճակում։ Տանտերն ասաց, որ ինքը կարող է բերել պահանջվող տեղեկությունները, եթե մի քիչ համբերություն ունենան, մինչև պահակախմբերը փոխարինվեն պահակներով։ Եվ երեկոյան դեմ նա իրոք եկավ հարկավոր տեղեկություններով.

— Քաղաք են ներթափանցել բազմաթիվ թոնդրակյաններ և բնակվորվել են։ Խժդժություններ են անում, համակիրներ են հավաքագրում, քարոզում իրենց պիղծ ու անաստված ուսմունքը։ Քահանային էլ նրանք են կախել պարսպից, որովհետև վերջինս ոխերիմ էր հերձվածողների ուսմունքին և միշտ պախարակել է նրանց ախտավոր գործունեությունը։ Քաղաքում շուրջկալել են բոլոր մեծ ու փոքր փողոցները, բոլոր հյուրատները, իջևանատները, պանդոկները, զվարճատները և որսում են բոլոր կասկածելիներին և եկվորներին։ Ասում են, որ Մայր տաճարի վանահայրը սպառնացել է բոլոր հերձվածողներին նույն ձևով կախել քաղաքի փակ դարպասներից, սակայն գլխիվայր. «Գուցե արյունը հորձանքվի նրանց մթագնած ուղեղներում և խելքի բերի ճշմարիտ հավատից շեղվածներին։ Իսկ համառողների պատիժն ավելի խստաշունչ կլինի, պարանները կտրելու հրաման կտամ, թող գահավիժեն անդունդն ի վար և իրենց մեղսոտ մարմիններով գիրացնեն Ախուրյանի ձկներին»։

Որքան շատ էր խոսում հույն լրաբերը, այնքան մթագնում և կընճռոտվում էր Մուշեղի դեմքը։ Շուրթերը կծոտելով նա բարձրացավ տեղից, ձեռքը երկարեց դեպի աղբյուրի մեջ սառչող գինու կուժը, անխոս դրեց բերանին և մինչև մրուր քամեց։ Հետո գլուխը դրեց թաղիքի վրա և քնեց հենց դռան առջև, քնեց մինչև հաջորդ առավոտ։ Արթնանալուն պես մոտ կանչեց Գրիգորին.

— Դուք կմտնեք քաղաք, իսկ ես պարտ եմ հեռանալ նույնիսկ այստեղից։ Շուտով կշրջափակեն այս այրերը, իսկ ես ոչնչով չեմ կարողանա ապացուցել իմ ով և ինչ լինելը, իսկ եթե ապացուցեմ, շատ ավելի վատ ինձ համար, ձկներին կերակրելու ավելի հարմար մեկը, քան ես, հազիվ թե ճարվի։ Ես հեռանում եմ այստեղից, հետո ինքս կգտնեմ ձեզ Անիում։

Հեռացավ, մնացին Հակոբիկի հետ։ Չգիտես ինչու Մուշեղի հեռանալը Գրիգորն ընդունեց և՛ տրտմությամբ, և՛ ներքին բեռնաթափումով,

քանզի Մուշեղը երդվյալ թոնդրակյան էր և դեռ ավելին, այդ խռովահույզ սպասավորների գործողությունները շարժող, առաջ մղող ուղեղներից մեկը, ովքեր քամահրանքով են նայում եկեղեցուն և վանքին, կրոնական ծեսերին ու արարողություններին։ Գրիգորը քաշվում, նույնիսկ վախենում էր Մուշեղից։ Զգում էր, որ չի կարող, պատրաստ չէ բանավիճելու նրա հետ և, հետևաբար, շահելու բանավեճը։ Մուշեղը խելոք էր, փորձառու և շրջահայաց։ Վախենում էր, քանզի գիտեր, տեսել էր նրա վիթխարի ուժն ու ամեհի կատաղությունը։ Գրիգորն այժմ ազատ էր իր հին ընկերոջից, որ իր բարեկամն էր ու թշնամին միաժամանակ։

Գրիգորի ծոցագրպանում Անանիա ուսուցչապետի նամակ-մագաղաթագիրն էր՝ ուղղված Անիի տաճարի վանահորը։ Մագաղաթագիրը յուրովի մի անցաթուղթ էր, որ պետք է դյուրություններ ընձեռեր Գրիգորի համար՝ ծանոթանալու քաղաքին, նրա գրիչներին, ծաղկողներին, գիտուններին և իմաստասերներին։

***

Պահակապետի կողքին նստած էր հոգևորականը, որը հարցեր էր տալիս և պատասխաններից փորձում կռահել նրանց ով և ինչ լինելը։ Գրիգորի առջև կանգնել էր բարձրահասակ մեկը, որը հարցերին պատասխանում էր հեգնանքով և բավականին անհարգալից ձևով։ Զորականը սաստեց նրան, փրփրեց.

— Լսի՛ր, քոսո՛տ, դու միաժամանակ անպատվում ես աշխարհիկ և հոգևոր իշխանության մարդկանց, քեզ կարգին պահիր...

— Ի՞նչ եք ցանկանում ինձնից...

— Որտեղի՞ց ես եկել, ինչո՞ւ ես եկել մայրաքաղաք...— երրորդ, թե չորրորդ անգամ կրկնեց զորականը։

— Սյունյաց աշխարհից եմ,— հայացքն առանց թեքելու հարցաքննողների քննախույզ հայացքներից պատասխանեց շինականը,— եկել եմ հայոց թագավորի ոտքը, նա բարի է, ողորմած է մեր Աշոտ թագավորը, խոսք եմ խոսելու, բողոքելու եմ մեր ցավերից... Եկել եմ, քանզի մեր շենն այրեցին աշխարհիկ ու հոգևոր իշխանության մարդիկ, համբաշխելով խաշն ու սուրը, բնաջինջ արին մեր ողջ գերդաստանը, ողջ մնացինք լոկ կողակիցս ու ես...

— Ցուրաբերդի՞ց ես...— ասես քնից արթնացավ եկեղեցականը։— Դու այդ ի՞նչ լեզվով ես բարբառում քո հեթանոսական սրիկայությունները։ Ձեզ բնաջինջ են արել, շանորդի՛, նրանից հետո, երբ դուք հողին հավասարեցրիք Տաթևի եպիսկոպոսարանը, ցուրաբերդցի հերձված...

— Ես Ցուրաբերդից չեմ, Ավելադաշտից եմ,— պատասխանեց շինականը։

— Ավելի վատ,— թնդաց հոգևորականը,— Ցուրաբերդի տեղը ավլել են վաղուց, իսկ Ավելադաշտը տակավին ապստամբ է։ Եկել ես խռովության որոմնե՞ր ցանելու, ո՞ւր է քո կինը...

Շինականը դողաց։ Նման տեղյակության չէր սպասում։ Ուրեմն, արանք ամեն բան գիտեն։ Նրա հայացքն առավ քիչ անդին կանգնած կնոջ վրա։ «Փախչելու միտք ունի»,— փայլատակեց Գրիգորի մտքում։ Շինականը հանկարծ ետ ոստնեց, մեջքով բախվեց Գրիգորին, գլորեց նրան, ոստյունով հասավ կնոջն ու, փետուրի նման թոցնելով, վազեց դեպի մարդաշատ փողոցը։ Սակայն երկու նիզակավոր միանգամից փակեցին ճանապարհը, իսկ սրամերկ զինվորը սուրը դեմ արեց կոկորդին։ Նետեց կնոջը մի կողմ և փորձեց խույս տալ զինվորներից, բայց սուրը, որ կոկորդին էր, նրա վազքի թափից խորը մտավ կոկորդն ու ցայտեց արյունը։ Շինականն ընկավ, թավալվեց ու գալարվեց սալահատակին, հետո անշարժացավ։ Մեռած էր։

— Տարեք դրա լեշը,— ծույլ հրամայեց եկեղեցականը։— Գրանցեք ինքնասպանություն։ Ինքը կոկորդը դեմ արեց սրին, իսկ սուրը դեմ արած կոկորդներին խնայել չգիտե.... Հո՜, հո՜, հո՜...— ծանր ու հոգնած ծիծաղեց հոգևորականը։ Այդ պահին Գրիգորն ատեց նրան, այդ տոուզ, հաստափոր կրոնավորին։ Կսպաներ նրան, եթե զենք ունենար։

— Կնոջն ի՞նչ անենք,— հարցրեց պահակապետը։

— Ուղարկեցեք զվարճատուն, սիրունիկ է, —գնահատեց հոգևորականը հանգիստ դիտելով իրեն քրքրող, իրեն ծվատող, համարյա խելքը կորցրած կնոջը,— թող զվարճացնի մայրաքաղաքիս հյուրերին ու ազատներին...

Գրիգորին բաց թողին առանց հարցաքննության։ Անանիա ուսուցչապետի նամակը մոգական ազդեցություն ունեցավ։

— Ճանապարհը բաց է,— ասաց հոգևորականը,— կգնաս տաճար, այնտեղ էլ վանական միաբանությունում կընակվես...

Դեռ անցակետից չհեռացած, մի խումբ երիտասարդ կանայք ուղղակի գրոհեցին պահակակետը։ Ծիծաղելով, պարելով ու երգելով նրանք ներկայացան և չէին կարողանում զսպել իրենց առողջ մարմինների անհանգստությունը, փորձում էին հրապուրել պահակապետին, անամոթաբար ակնարկներ անելով և կիսամերկ մարմինները ցուցադրելով։ Այս ներկայացումը կրոնավորի վրա պետք է որ անպարկեշտ և անհաճո տպավորություն գործեր, քանզի նա գոցեց աչքերը կամ ձևացրեց, թե ամոթից գոցել է, սակայն կոպերի տակից ածելու բերանի նման նեղ ու սրված հա-

յացքը որսում էր աղջիկների հրապույրները, իսկ պահակապետի հայացքը լայնացել ու պեծին էր տալիս կանանց նայելիս։ Նրանցից առաջինն արդեն մոտենում էր պահակապետին։ Տպավորությունն այնպիսին էր, որ ասես պատրաստվում էր թառելու սպայի ծնկներին.

Քեզ մեկ տաղիկ կասեմ,
Թող արյունդ խաղա,
Արի՛ գիրկը իմ տաք,
Պահակապետ տղա...
Թե իմ ծոցը մտնես,
Վայր կդնես զենքդ,
Զինաթափ կլինես,
Բայց փրկարար սիրով
Ես կբուժեմ վերքդ...

Երգում էր աղջիկը։ Կրոնավորը չարացավ.

— Ինչո՞ւ եք եկել...

— Ձեզ սիրելու...— կարկաչեցին աղջիկները։

— Զվարճանների համար են եկել,— խոսեց զորականը,— բայց որտեղի՞ց են եկել...

— Դա ի՞նչ կարևոր է,— խոսեց նրանցից մեկը,— որտեղ գործ կա, գնում ենք այնտեղ։

— Ախտավարակ չե՞ք,— անկեղծացավ և անկեղծանալով չարացավ կրոնավորը։— Եթե այդպիսին եք, ձեզ զնդան կնետեն։ Հարկ է, որ ազգս առողջ լինի և ոչ ախտավոր։ Իսկ հիմա, այս պահից ես ձեզ այստեղ չտեսնեմ։ Վռնդեցե՛ք, թող կորչեն սատանայի ծոցը։

— Այսինքն, ձեր ծոցը, հայր սո՛ւրբ...— շշփոթվեցին աղջիկները։

— Նզովյալ լինեք, լրբե՛ր,— անիծեց կրոնավորը,— վաճառվող քածեր...

— Ամեն արարած ապրելու համար վաճառում է ինչ-որ բան, հայր սուրբ,— խոսեց երգող աղջիկը,— մենք մեր մարմինն ենք վաճառում, իսկ քեզ նմանները իրենց հոգին... Հաշիվ արեք, ո՞վ է մեզնից ավելի արդարը և ո՞վ առավել մեղավորը...

— Այո՛, այո՛, բայց ո՞ւմ եք վաճառվում դուք և ո՞ւմ եմ նվիրվում ես...

— Դուք՝ սատանային, մենք՝ մարդկանց,— աղջկա աչքերը վառվում էին զայրույթից և ջղաձգվել էր գեղեցիկ ու մաշված դեմքը։

Ապստամբ հոգիներ էին։ Կրոնավորը հևաց չարությունից։ Վեճը նրան հաղթանակ չէր խոստանում, զորական ուժ էր հարկավոր։

— Տղա՛յք, պահակապե՛տ, նիզակներով վանեցեք սրանց, այս նզովյալներին, այս ախտավարակ լրբերին, ազգս կործանողներին, մայրաքաղաքս պղծողներին, պահակապե՛տ, նիզակներով...

Կոպիտ ուժը հաղթեց և կանանց դուրս հրեցին Ավագ դռնից։ Նրանք այլևս այն զվարթախոս, կարկաչուն աղջիկները չէին։ Ասես միանգամից պառավեցին և լաց ու արտասուքով, անեծքներով ու հառաչանքներով գլխիկոր հեռացան Մայր կամրջով, որով այդ պահին քաղաք էր մտնում ինչ-որ արաբ մեծահարուստ, գլխանոցը զարդարած փայլփլուն զմրուխտով։

— Փա՜հ, փա՜հ, փա՜հ, ուտելու բաներ են,— ցանկասիրական ժպիտը յուղոտ դեմքին՝ արաբը նայում էր լալահառաչ կանանց,— սիրունն ե՛ր, ձեզ Դվնո ամիրայություն տանեմ, իմ պալատ տանեմ, եկեք, մեր ոսկին ձեզ փեշքեշ...

— Կորիր դրողի ծոցը, փեշքեշը մեր պատվի արժեքն է, անհավա՛տ...

— Փա՜հ, փա՜հ, փա՜հ... Արմանի աղջիկները մեկ դրամ չարժեն։

Այդ պահին էլ սպառվեց կանանց համբերությունը և նրանց մեջ ավելի բորբոքվեցին, սրվեցին վիրավորանքը, պատվասիրությունը, լրբվածության զգացումը, սովահարության հեռանկարը։ Եվ ասես հրամանով քարերի տարափ տեղաց ձիավոր արաբների վրա, որոնք երեքն էին՝ գլխավորն իր երկու թիկնապահով։ Արաբները չհասցրին նույնիսկ տեսնել կանանց զինակից մանչուկներին, որոնք ռազմամթերք՝ քար էին մատակարարում վագրացած և վրիժառությունից ու չարությունից խենթացած կանանց։ Մարտը երկար չտևեց, շուտով թրաշված, ջարդված գլուխները մնացին լրիվ բաց ու անպաշտպան քարե կարկուտի ներքո։

— Հասե՛ք, օգնեցե՛ք...— աղաղակում էին արաբները, սողալով Ավագ դռան կողմը։

Երբ պահակները տեղ հասան, հրապարակը լրիվ դատարկ էր։ Միայն տուժողներն էին ափլփում կամրջի վրա, ծեծված ու արյունլվիկ։

— Ի՞նչ է պատահել...

— Կանայք քարաջարդ արին սրանց,— ներկայացավ մի ծերունի ականատես։

— Ինչո՞ւ...

— Արաբ վաճառականը հայ կանանց անվանարկեց...

— Ի՞նչ անել,— ծոծրակը քորեց ավագ պահապանը, մտածմունքի մեջ ընկնելով։ Մյուսներն օգնում էին արաբների վերկենալուն և ձիերը հեծնելուն։ Հետո նեղացավ,— դու ամիրա՞ ես,— հարցրեց մեծավորին, թեև գիտեր ով լինելը։

— Վաճառական եմ,— խոսեց փոշեթավալ և արնաթաթախ արաբը։

— Ջահրումար լինե՞ս,— գոռաց վրան ավագ պահապանը։

— Ես կբողոքեմ, ես ձեզ զնդան նետել կտամ...— ֆշշացրեց արաբը, որ չէր սպասում նման շրջադարձի, նման վերաբերմունքի,— ես գիտե՞ք ով եմ...

— Գիտեմ, գիտեմ, կանանցից քոթակված վաճառական ես, իհարկե, գիտեմ։ Իսկ հիմա մտեք քաղաք, Ավագ դռան հետևում բուժանոց կա, թող էնտեղ ձեր քաչալ գլուխները կարգի բերեն...

— Ես Դվնո ամիրայի փեսան եմ,— մոթմոթալով շարունակում էր սպառնալ տուժածը,— ես քեզ կախել կտամ...

— Գնա քո փեսայությանը, գնա քո գործին։ Խելքի արի, տեսնում ես այստեղ քո փեսայությունը գլուխ չեկավ։ Գլուխդ կաղամբի նման տաշտըշել են...

Արաբները գնացին բուժանոց, իսկ պահապանները ծուլորեն որոնելու փորձեր էին անում աղջիկներին որսալու համար, թեև գիտեին, որ նրանց թաքստոցները քարանձավներն են, ուր ապրում են քաղաքի դրժվար ապրուստի տեր մարդիկ։ Գիտեին նաև, որ այրերում զորաբանակ էլ թաքնվի, անհնար է գտնել ու արևերես հանել, և գնացին իրենց բան ու գործին։

***

Գրիգորը երկար թափառեց Անիում։ Քաղաքում անասելի եռուզեռ էր։ Նախապատրաստվում էին Բագրատունյաց պալատի բացման արարողությանը։ Գրիգորը երկար նայում էր ու չէր հագենում հայացքը, չէր կշտանում հոգին. վեհատեսիլ էր պալատը. երկհարկանի, սյունազարդ խոյակները դրվագված զարդաքանդակներով և պատերը բարձրաքանդակներով։ Քնարական նրբագեղության և առնական գեղեցկության մերան էր՝ խրոտաշունչ ու տաք, արքայորեն հպարտ ու պարզ ձևերի մեջ՝ կորովի։ Վարպետները քանդում էին արդեն փայտամածները, և շինությունն ասես դեն էր նետում իր դեմքը, ճակատը ծածկող քողը, և դանդաղորեն բացվում ու հայտնվում էին նրա անթերի ձևերն ու սլացիկ կազմությունը։ «Սուրբ Խաչի նման չէ։ Նրա արտահայտուստն անսահման շռայլ է, նա գեղեցիկ է իր արդուզարդի մեջ, իր անսանձ կուրացնող գեղեցկությամբ, սա իր պարզ ու չափավոր, սակայն ոչ ամաչկոտ հմայքով։ Ասենք, համեմատելու եզրերը քիչ են։ Մի մեծ ընդհանրություն ունեն, երկուսն էլ խիստ հայկական են, խիստ ազգային։ Բայց սա աշխարհիկ շինություն է, երկրային, նա հոգևոր՝ երկնային։ Ճարտար են մեր շինարար վարպետները,

քար են խոսեցնում, ստիպում ու համոզում, և քարը տաղերգում է։ Եվ ինչպե՞ս են արարում, ինչպե՞ս են ստեղծում։ Անկյանք է քարը, երիցս մեռած ու անհոգի։ Ինչպիսի՜ տաք ու աստվածային շունչ ունեն մեր քարգործները, որ կենդանացնում, շունչ ու արյուն են տալիս քարին և հրամայում ապրելու, գոյատևելու և հարատևելու։ Եվ ապրում է քարը, շնչավորի, կենդանի էակի իր կյանքով, մենք ունկնդիր ենք նրա հավերժական շնչառությանը և արյան տաք հորձանքին, որ շարժվում է քարի մարմնում և կենդանացնում, շնչավորում այն։ Եվ աստվածային է վարպետների հնարքն ու հրամանը, և իրենք էլ աստվածատուր են, այլապես ինչպե՞ս կարող են խոսեցնել, ապրեցնել, շնչավորել քարերը, եթե ոչ հանճարի զորությամբ։ Միայն ու միայն հանճարի»։ Երկար նայում էր քարերին, որ այլևս քար չէին, այլ շնչող մարմին ու ոգի, սիրտ ունեցող էակներ, որոնց միասնությունն ու համերաշխությունը դարձել էր պալատ, քարե մեղեդի, քարի ծաղկած մագաղաթ։ Լսում էր քարերի մեջ խլրտացող արյան ձայնը, պահ առաջ աշխարհին ներկայանալու, մարդկանց հրապուրելու անամոթ ու բնական ցանկությունը, աշխարհի կյանքին խառնվելու և մասնակից լինելու նրանց աճապարանքը։

Վարպետը մուրճը կամաց իջեցրեց ներքև և նստեց պալատին դեմհանդիման։ Նայում էր իր իսկ ստեղծածին։ Գրիգորը բռնեց նրա հայացքը, որ հոգնած էր իսկապես, հոգնած և շինությանը նայելիս դանդաղորեն լցվում էր գորովալից մի տաքությամբ, որով միայն ծնողը կարող է նայել իր զավակին։

— Շնորհակալություն, վարպե՛տ,— ակամայից թռավ Գրիգորի բերանից։

Վարպետը շեղակի նայեց երիտասարդ կրոնավորին և զարմացած հարց տվեց.

— Ինչի՞ համար, հայր սո՛ւրբ...

— Պալատի համար, Բագրատունյաց պալատի համար, վարպե՛տ։

— Թող Բագրատունիները շնորհակալ լինեն այս պալատի համար, որդիս, ներողություն, հայր սո՛ւրբ, իսկ դու սպասիր, մի քիչ սպասիր, երբ կառուցենք և ավարտենք Մայր տաճարը, կգա նաև քո շնորհակալության օրը...

— Իսկ ե՞րբ է գալու այդ օրը, վարպե՛տ...— անհամբերությամբ հարց տվեց Գրիգորը։

— Այդ մեկը չգիտեմ, չեմ կարող ասել,— տխրեց վարպետը,— վախենում եմ ուշանա, և ես չկարողանամ իմ մասնակցությունն ունենալ...

Վարպետի հայացքը պարզ էր, թափանցող, նայում էր ուղիղ մարդու սրտին։ Երևում էր ջահել կրոնավորը դուր էր եկել նրան։ Տղան նա-

ցում էր անխառն հիացումի հետ ամաչկոտ մի խոնարհումով, որ վարպետին ստիպում էր հպարտանալու, ավելի խոր ճանաչելու շինարարի իր տաղանդը։ Եղավ մի պահ, երբ վարպետը ցանկացավ ինչ-որ ձևով ինքնագնահատական տալ իր աշխատանքին, հետո չգիտես ինչու թափ տվեց ձեռքն ու անցավ իր բանին։

— Տղա՛յք,— կանչեց նա,— պահ է ճաշի և հանգստի...

Այլևս չնայեց Գրիգորի կողմը։ Այլևս հիացումի ու գովեստի ակնկալիք չուներ և չէր էլ ցանկանում։ Հետո նրա շուրջ հավաքվեցին շինարարները, և նրանք քայլեցին մոտակա խորտկարանը՝ իրենց առաջնորդ ունենալով վարպետին, որը քայլում էր կռացած, ծերունական քայլվածքով։ Գրիգորը զարմանքով էր նայում նրա վերուվարող երկար ձեռքերին։ Չգիտես կռանալո՞ւց, թե աշխատանքից նրա ձեռքերը զարմանալիորեն երկար էին և հասնում էին մինչև ծնկները։ Հայացքով ճանապարհեց նրանց և քայլեց դեպի քաղաքային շուկան։

***

Երկար մնաց շուկայում։Անիի ամենատեսարժան վայրերից էր։ Աշնանային բերք ու բարիքով լցված շուկան բզզում էր փեթակի նման։ Առևտրով զբաղված մարդիկ, վաճառողներն ու գնորդները և Գրիգորի նման սոսկ հետաքրքրության համար շուկայում պարապ շրջողներն այնքան շատ էին, որ հնարավոր չէր ազատ շարժվելը։ Հրմշտոցը, սեղմվելը միմյանց հեշտացնում էին գողերի և գրպանահատների գործը, որոնք հետապնդում էին ամենից առաջ միամիտ, դրամը հուսալի կերպով թաքցնել չկարողացող մարդկանց և թալանում։ Քաղցած էր։ Շուկայի մուտքը տակավին ոտք չդրած, խորովածի հոտն այնպես գրգռեց ախորժակը, որ կախարդված կանգ առավ։ Ի՞նչ անել։ Ուտելո՞ւց սկսել շուկայի շրջագայությունը։ Իսկ ինչո՞ւ ոչ։ Չէ որ շուկա է։ Էլ որտե՞ղ կարող է հագեցնել քաղցը, եթե ոչ շուկայում։ Նախաճաշը համեղ էր, բայց մի փոր ուտելու համար նրան այնպես թալանեցին, որ վաստակած դրամի կեսը թողեց բացօթյա խորտկարանում։

— Թանկ է ձեր ուտելիքը,— կիսաձայն դժգոհեց։

— Կշտացար՝ թանկացավ, քաղցածի համար թանկ-էժան չկա...— խոսեց վաճառողը։

— Այնուամենայնիվ, թանկ է,— իրենը պնդեց Գրիգորը։

— Համով չէ՞ր... Ասա՛, թե անհամ էր, քո դրամը քեզ,— ասպետացավ վաճառողը։

— Շատ համով էր,— խոստովանեց Գրիգորը։

— Անուշ լինի, դե՛, անցիր գործիդ...

Գրիգորը ոչ այն է ամաչեց, ոչ այն է նեղացավ։ «Ճիշտ է ասում»,— գնահատեց մտքում և շարունակեց շրջել շուկայում։ Ամբողջ աշխարհն էր այստեղ, ամբողջ աշխարհը տասնյակ լեզուներով բվվում էր շուկայում, և մարդիկ համարյա անսխալ միմյանց հասկանում էին՝ առնում ու տալիս։ Գինու հոտ էր կանգնած։ Անեցիները գինին առնում էին տուն տանելու համար, շատերն էլ կանգնած խմում էին Արարատյան դաշտի և Կախեթի մեռոնի նման գինիները։ Մրցակցություն կար։ Մեկը վիրավորեց կախեթցի գինեվաճառին։

— Գինիդ թթված է, բարեկա՛մ,— ասաց հենց այնպես, չասելու նման, որից պատվախնդիր վրացին այնպես վիրավորվեց, որ ասողը զղջաց իր միամիտ դիտողության համար։

— Ինձ կսպանեմ, թե գինիս թթված լինի,— ասաց նա, գրպանից հանելով ծալովի դանակը։— Չե՞ք հավատում...— և բացեց դանակը։

— Հավատում ենք, հավատում,— վրա տվին ներկաները։

— Խմեցեք իմ գինին,— չէր հանգստանում գինեվաճառը,— եթե թթված է, ես ինձ կսպանեմ, իսկ եթե թթված չէ, էլ գինի չեմ վաճառի, իմ գինու պատիվն իմ պատիվն է...

Եվ գինով լիքը տիկի կողը խրեց դանակը։ Արյան գույնի և արյան թանձրությամբ դուրս ցայտեց գինին։ Մոտիկ կանգնածները ձեռները երկարեցին վաճառասեղանին դրված կավե գավաթների կողմը, որ լցնեն ու ըմպեն։

— Չէ՛, չե՛մ թողնի խմել,— գոռաց նեղացած վրացին։— Խմել էիք ուզում, գինիս պատվազուրկ չանեիք, հիմա որ նա թափվում է հողին, չեմ թողնի խմել,— թափահարեց դանակով գինված ձեռքը,— գինին կենդանի մարդ է, տե՛ս, արյունն ինչպես է ցայտում, և հողն ինչպես է խմում գինին։ Հող էիր, հող դարձիր, գենացվալե...

Վրացուն հանգստացրին, մխիթարեցին, քանզի նա սպառնում էր ծակել նաև իր մյուս՝ գինով լցված տիկերը։ Ժամանակ չկար, և Գրիգորը քայլեց առաջ։ Շուկայում ոչ միայն ապրանք էին վաճառում, այլև կանայք վաճառում էին իրենց մարմինները։ Մի խոսքով, և՛ ապրանք, և՛ պատիվ ու խիղճ, և՛ մարդկանց էին վաճառում ու գնում դրամով։ Այստեղ աստվածը դրամն էր։ Նա էր շարժման մեջ գնում շուկան։

— Աճպարա՛ր... Աճպարա՛ր...— գոռաց մեկն ականջի տակ։

Գրիգորն աճպարարի հետ գործ չուներ, սակայն հետաքրքրասերների հոսանքը նրան իր մեջ առած, քշեց դեպի փոքրիկ հրապարակը, ուր աճպարարը ցույց էր տալիս իր ձեռքերի ու մատների ճկունությունը և խաբում ամբոխին՝ նրա հիացական բացականչությունների ներքո։ Հետա-

քրքիր էր, և Գրիգորը կանգնեց դիտելու աճպարարի զարմանալի արարքները։ Կիսահարբած հաստափոր մի քաղաքացի կանգնեց աճպարարի դեմ-դիմաց և ասաց, որ չի հավատում նրան, որ նրա շնորհքը խաբեության մեջ է.

— Ժողովրդին հիմարի տեղ ես դրել, խաբում և դրամ ես վաստակում...

— Ճիշտ է, միանգամայն ճիշտ,— հեշտ համաձայնեց աճպարարը,— կարևորը խաբելը չէ, կարևորն այն է, որ մարդիկ չնկատեն, չտեսնեն իմ խաբեությունը։ Աճպարարությունն այն է, որ մարդ չհասկանա, թե ինչպես է խաբվում...

— Դու ինձ չես կարող խաբել,— պարծեցավ հաստլիկը։

— Փորձենք,— ասաց աճպարարը։— Որևէ իր տուր քո գրպանից։

— Վերցրու դանակը,— ասաց հաստլիկը և փոքրիկ, սաթե կոթով դանակը տվեց աճպարարին։ Սա վերցրեց դանակը, բոլորի աչքերի առջև դրեց իր գրպանը և սկսեց իրոք իր աճպարարությունները. ձեռքերի արտասովոր շարժումներով, աչքերը երկինք հառած, քայլում էր ամբոխի առջև, ստեպ-ստեպ մոտենալով մեկին կամ մյուսին։ Հետո շրջեց իր գրպանը, դանակն անհետացել էր, մատնացույց արեց մի երիտասարդի և շրջվեց դեպի հաստլիկը.

— Քո դանակը փնտրիր նրա գրպանում...

Եվ մարդկանց զարմացած աչքերի առջև հաստլիկը իր դանակը հանեց շփոթված երիտասարդի գրպանից.

— Վա՜հ...— հաճույքից ոռնաց ամբոխը։

Գրիգորը կհեռանար աճպարարի ներկայացումից, եթե հաստլիկը նորից չվիրավորեր աճպարարին և նրա արհեստը։ Գործը բարդացավ, հաստլիկը քաշեց գոտուց կախ ոսկու լիքը քսակը.

— Կարո՞ղ ես սա պարտակել...

— Կարող եմ,— վստահ պատասխանեց աճպարարը։

Հետո ամեն բան կատարվեց բավական արագությամբ։ Կրկնվեցին նույն շարժումները, նորից աճպարարը մատնացույց արեց ներկաներից մեկին.

— Քո քսակը որոնիր նրա գրպանում...

Ամբոխը մեկ մարդու նման շրջվեց մատնացույց արված մարդու կողմը։ Հաստլիկը փնչալով շրջում էր խեղճ մարդու գրպանները, քսակը չկար ու չկար։

— Կսպանե՛մ,— խռպոտ ձայնով գոռում էր հաստլիկը,— տուր ոսկիներով լի քսակս...

Բոկ մարդը վախեցած, անխոս նայում էր նրան։ Որտեղի՞ց տար...

— Ո՞ւր է աճպարարը,— որոտաց ամբոխը։ Աճպարարը չկար։ Բազմության մեջ չքացել էր, լուծվել, ինչպես շաքարը ջրում։ Հաստլիկի գինովությունն անցել էր, նա երդվում էր, որ կորցրել է շատ մեծ հարստություն, որ եկել էր շուկա ձիեր գնելու համար, և ահա սրիկա, ավազակ աճպարարը անիրավել է իրեն, սնանկացրել։ Նրա բողոքներն ու անեծքները սակայն չէին հուզում ամբոխին։ Գրիգորն այն տպավորությունն ուներ, որ ամբոխը նույնիսկ ուրախ է հաստլիկի թալանվելու համար։

— Ա՜յ քեզ աճպարար, ա՜յ քեզ ճարպկություն...

— Իսկական աճպարարություն... Միանգամից հարստացավ...

— Դիմացինի հիմարության պատճառով...

Աղմուկն ահագնացավ։ Եվ նացին պահապաններ, շուկայական կրոփիչների (հսկիչների) ուղեկցությամբ։ Գրիգորն այլևս ոչինչ չուներ անելու և քայլ արավ առաջ։ Ցանկանում էր տեսնել մագաղաթ վաճառողներին։ Ասում էին Անիի մագաղաթի նման ոչ մի տեղ չի ճարվի, չկա։ Ասացին, որ մագաղաթ վաճառողները շուկայի մյուս ծայրին են, հարկավոր է կտրել, անցնել շուկան, հասնել մյուս ծայրը, և Գրիգորը քայլեց առաջ։ Սակայն շուկան արագորեն կտրել, անցնելն այնքան էլ հեշտ չէր։ Եռում, բվվում, աղմկում էր բազմամբոխ, բազմալեզու շուկան։ Աշխարհներն այստեղ հանդիպում էին իրար։ Արաբներն ու պարսիկները, հույներն ու աբխազները, վրացիներն ու աղվանները, նույնիսկ հնդիկներն ու խափշիկները։ Երկրների ճամփաները գալիս այստեղ հանգուցում էին արևելքն ու արևմուտքը, հյուսիսն ու հարավը, և հանգույցի կենտրոնում Անին առնում էր աշխարհի բարիքը, վաճառում էր աշխարհի բարիքն ու հարստությունը։ Անին մեծանում էր, շենանում։ «Եվ որտե՞ղ է տեղավորում Անին այս մարդկանց, որտե՞ղ... Այսքան ուղտեր, ձիեր, գրաստներ, եզներ, ապրանքներ, որտե՞ղ... Այո՜, Անին մե՜ծ քաղաք է...»։ Գրիգորի գլուխը թշշում էր տպավորություններից, շրջում էր ասես երազում։ Ոչ մի տեղ չէր կարողանում կանգնել, նայել։ Ժամանակ չկար։ Մի քանի անգամ քիչ մնաց կորցներ Հակոբիկին, որը շշմած քայլում էր իր կողքով, այլևս չտեսնելով ոչինչ, չլսելով ոչինչ, որովհետև տպավորությունները չէին տեղավորվում գլխում, և խեղճ տղան թեև չէր տրտնջում, բայց հետաքրքրություններն այնքան շատ էին, որ այլևս դադարել էին հետաքրքրքիր լինելուց։ Տղան պարզապես հոգնած էր։ Եվ ինչո՞ւ միայն նա, հոգնել էր նաև Գրիգորը, հոգնած էր բազմահազարանոց ամբոխը, որն առևտրի եռուզեռի մեջ, մոռացած հոգնածությունը, առնում էր ու ծախում, խաբում էր ու խաբվում, հարստանում և սնանկանում։ Մի տեղ երաժշտ-

տական գործիքներ էին վաճառում։ Այստեղից նվագի և երգի ձայներ էին լսվում։ Գրիգորը կանգ առավ։ Ճեղքեց բազմությունը, մոտեցավ վաճառողներին։ Ոմանք փորձում էին գործիքների հնչեղությունը, ոմանք նվագում էին, նույնիսկ երգողներ կային։

— Ա՜յ քեզ հետաքրքիր բան,— խոսեց մեկը Գրիգորի ականջի տակ,— չլինի՞ թե այստեղ երգչի կոկորդ էլ են վաճառում։ Է՜յ, ախպեր, մեզ երգչի կոկորդ, երգչի լավ ձայն է հարկավոր,— և հռհռաց։ Բայց կատակը՝ կատակ, մեկը բարձր ու գեղեցիկ ձայնով հայրենի էր երգում.

Ծոցիկս ճերմակ տաճար,
Մոմով մի փնտրիր ծոցս,
Մոմը թույլ է ու անճար,
Արեգական է բոցս...
Վառվելուց դու մի՛ վախիր,
Ու թե վառվես էլ հանկարծ,
Կասեն՝ երանի՞ իրեն,
Սիրուց վառվեց ու հանգավ...

— Ապրե՞ս... Կեցցե՞ս...— հաճույքից թնդաց ամբոխը։

— Հրաշալի երգ էր,— ձայնեցին այս ու այն կողմից։

— Երգիչ են ծախում, երգիչ են ծախում,— գոռացին նորից ականջի տակ,— լավ երգիչն ի՞նչ արժե...

Երգիչը թխամորուս, գեղեցկադեմ մի երիտասարդ, ոգևորված ամբոխի խրախուսանքից, երգեց նոր հայրենի.

Եթե տխմար չես,
Հյուր եկ իմ ծոցին,
Թող մեկտեղ վառվենք
Սիրո թեժ բոցին,
Սիրտս քեզ նվեր,
Մարմինս ընծա,
Սուրբը թո՛ղ խանդի,
Սատանան ցնծա...

Երգիչը լռեց։ Մի պահ լուռ էր նաև ամբոխը։ Երգիչը կանգնել էր պխահակ, հայացքը գետնին և կարծես սպասում էր ժողովրդի վճռին։ Ամբոխը լռեց, լռեց ու հետո մեկեն պոռթկաց.

— Այդ ի՞նչ բարբառեցիր, աղանդավոր սրիկա...

— Սա հոգին սատանային է ծախել...

— Սատանան հենց ինքն է, ի՜նքը...

— Հերձվածող սրիկա, եղծված... Կորի՛ր սատանայի ծոցը...

— Այ ժողովուրդ, ինչո՞ւ եք իրար անցել, մարդը երգեց, ձեզ ի՞նչ վնաս տվեց...

— Շունը շնից, երկուսը՝ մի տնից, ուրեմն դու էլ ես նրանցից...

— Ծեծեցեք էդ հերձվածողին և հանձնեք հսկիչի ձեռքը...

Աղմուկ, քաշկռտուք։ Հետո ինչ-որ մարդիկ անխոս ճանապարհ բացին ամբոխի միջով, և երգիչը, որ բոլորի աչքի առաջ էր, ամբոխի դատաստանի առջև, հանկարծ չքացավ։ Ուշ գլխի ընկան.

— Ո՞ւր փախավ սատանան, հերձվածողը...

— Ո՞ւր է Թոնդրակյան աղանդավորը,— որոնողը հսկիչն էր՝ տիրական ձայնով։

— Սատանաները փախցրին,— ծիծաղեց մեկը նրա երեսին։

— Դուք փախցրիք նրան, դո՛ւք,— սպառնաց սա,— կբանտարկեմ, հա՜...

— Ո՞ր մեկիս,— լսվեց ամբոխի միջից։

— Սռված ենք՝ բանտարկեցեք, գոնե բանտի հացով կապրենք...— Կամավոր բանտարկվել ցանկացողը՝ ցնցոտիների մեջ կոլոլված մի մուրացկան, կանգնեց հսկիչի դիմաց։

— Թյո՛ւ...— Թքեց սա։— Հեռո՞ւ աչքիցս... Թե չէ՝ կգնաս անկելանոց...

Եվ շրջվեց ու քայլեց դեպի ընդառաջ եկող կոփիչները։ Նրանք ինչ-որ բան ասացին, երկար փսփսում էին, հետո արագ հեռացան։

— Որսի հոտ են առել,— նկատեց մեկը,— լրտեսներով ամենուր լցրել են։ Կվնասեն տղին...

— Տեսնում եմ, սիրտդ ցավում է, բարեկա՛մ,— մոտեցավ նրան մեկ ուրիշը։

— Քոնը չի ցավո՞ւմ,— չնահանջեց առաջինը։

— Ուրեմն, քոնը ցավո՞ւմ է, բարեկամ։ Գնանք մի քիչ այն կողմ խոսենք, պարզենք մեր սրտերի վիճակը...

— Լռի՛ր, դու ինձ բարեկամ մի կոչիր, ես քո թշնամին եմ, իմացա՞ր։ Ես քեզ հետ ոչ մի տեղ չեմ գա, դու ինձ կթունավորես, քանզի գործակալ ես։ Իսկ եթե փորձես ուժ գործադրել, ստիպված կլինեմ քեզ սպանել, որովհետև քեզնից փրկվելու միակ միջոցը քեզ սպանելն է... Համ էլ հայ աշխարհը կմաքրվի քեզ նման կեղտից, բարեկա՛մ, այն էլ ի՜նչ բարեկամ...

— Լա՛վ, ես չեմ մոռանա քեզ,— ֆշշաց հակառակորդը,— մի օր կընկնես իմ ձեռքը, այս բոլորը քեզ կհիշեցնեմ...

— Ուրեմն, հույս ունես ապրելու և սպառնում ես, շո՛ւն։ Դու այդ օրը երբեք չես տեսնի...

Գրիգորը լավ չտեսավ դանակի փայլը։ Նա տեսավ, թե ինչպես խուճապահար ընկրկեց ամբոխը։ Տեսավ դանակվածի թպրտոցը, տեսավ դանակողի անշտապ հեռանալը։ Իսկ սպանվողը, որի կոկորդն ամբողջովին կտրել էր դանակը, թպրտաց, թպրտաց ու հանգավ, շրջապատն ու մոտիկ գտնվողներին ողողելով արյան մեջ։ Գրիգորի գլուխը պտտվում էր, սիրտը խառնում։ Հազիվ զսպեց իրեն, որ հետ չտա։ Դեմքն ամբողջովին կորել էր քրտինքի մեջ. «Այս ի՞նչ է կատարվում աշխարհում։ Մի՞թե այսքան հեշտ է մարդ սպանելը։ Բայց գուցե հարկավո՞ր սպանություն էր, թեև սպանությամբ ոչ մի հարց չի լուծվի։ Դժվար է քաղաքում ապրելը։ Այստեղ լրտեսությունն ու ազնվությունը իրարից հեռու չեն։ Պատժում են հայրեն երգողին, պատժում են լրտեսին։ Բայց մի՞թե աստծո առջև նրանք նույն կշիռն ունեն, նույն մեղքն ունեն։ Ինչե՞ր եմ մտածում։ Գլուխս չի աշխատում, մտքերս հիվանդ են։ Կարծես դանակել են իմ տրամադրությունը։ Աշխարհում ամեն տեղ դժվար է։ Մարդը բարեկամ չէ մարդուն։ Իրար են ուտում։ Տիրողն ավելի է անգթացել, իսկ խեղճն ըմբոստացել է։ Աստված մարդու խիղճն է փորձում։ Իսկ մարդկային խիղճը դանակի տակ է, պահապանի հոգածությանն է հանձնված։ Չէ՛, մտածել չեմ կարողանում։ Գնամ այստեղից...»։ Բայց հեռանալ չհաջողվեց։ Հավաքվածներն արդեն գտնվում էին օղակի մեջ։ Նրանց, Գրիգորին ու Հակոբիկին, հրեցին իրենց նախկին տեղը։ Զորական ավագը կարգադրեց։

— Բոլորն իրենց տեղերում մնան...— Ձայնը տիրական էր, ազդու։ Սկվեցին և մնացին տեղում կանգնած։ Սկսվեց ստուգումը։ Բազմությունից առանձնացան երկու-երեք հոգի և կանգնեցին ավագի մոտ։ «Սրանք ամբոխի մեջ գտնվող լրտեսներն են,— մտածեց Գրիգորը,— սրանք պետք է ճանաչեն և մատնեն սպանողին»։ Մեկիկ-մեկիկ բաց էին թողնում հավաքվածներին։ «Երկար կտևի այս հարցուփորձը։ Մինչև մեզ հասնեն, կիջնի իրիկնաժամը»։ Բայց իրենց շուտ հասան։ Հակոբիկին պարզապես դուրս նետեցին հավաքվածների միջից. «Քաշվիր այստեղից, լակո՛տ...»։ Պահակապետը Գրիգորին նայեց այնպիսի թափանցող հայացքով, որ թվաց, թե մերկացրեց։ Մինչդեռ նա շարունակում էր նայել ու նայել անշարժ հայացքով, այնքան անշարժ ու պաղ, որ Գրիգորին թվաց, թե զորականը օձի նման կոպեր չունի։ Եթե շարունակվեր այս դժվարին փորձությունը, Գրիգորն անպայման կուշաթափվեր, կտապալվեր գետնին։ Բայց պահապանը խոսեց, և դա փրկեց Գրիգորին.

— Կրոնավո՞ր ես...

— Այո՛...

— Ի՞նչ գործ ունես այս աշխարհիկ առևտուրի հետ։ Այստեղ նվագարաններ են վաճառում։ Հույս ունեմ դու ոչ հարսանիքի նվագող ես, ոչ էլ թաղման...

— Ես մագաղաթ եմ որոնում...

— Ա՜յ, ինչ եմ ասել, մագաղաթով զբաղվելու իրավունք ունես... Որտեղի՞ց ես...

— Վասպուրականից... Ռշտունիքի Նարեկա վանքից...

— Հեռվից ես եկել,— պահակապետը նայեց լրտես-խորհրդատուներին։ Սրանք նշանացի հասկացրին, որ Նարեկավանքը թոնդրակյան չէ, հավատարիմ է աստծուն և եկեղեցուն։

— Զգո՛ւյշ, աստծո սպասավոր, սրան Անի կասեն։ Տեսնո՞ւմ ես, ինչպես են հավի նման մարդ մորթում, մայրաքաղաք է, ի՞նչ կարող ես անել։ Մարդիկ դարմանի նման կիտվել են իրար վրա։ Սուրբ ու սատանա խառնվել են իրար։ Զգո՛ւյշ, միամտաբար կախաղանի պարանը վզիդ չհագցնեն... Իսկ հիմա գնա, որ իմ հայացքին դիմացար, ուրեմն, արդար ես... Մանավանդ, Նարեկավանքից ես, ասել է՝ աստված քեզ հետ է, դու՝ աստծո...

Գրիգորը դուրս եկավ այս շղթայից և երկար ժամանակ հեռվում կանգնած դիտում էր։ Կգտնե՞ն հանցագործին, թե՝ ոչ։ Բայց հարցուփորձը երկարում էր, հարցուփորձում էին բծախնդրորեն, մանրամասնորեն։ Ջուրը պղտորվել էր, արյուն էր խառնվել ջրին։ Իսկ պղտոր ջրում հեշտ է ձուկ որսալը։ Եթե նույնիսկ սպանողին չկարողանան բռնել, ապա թոնդրակյաններ անպայման կչանթեն։ Հոգնեցին զորականների ջանքերին ականատես լինելուց և շարունակեցին շրջագայությունը շուկայում։ Մագաղաթների այնպիսի բազմազանություն կար, որ առաջին հայացքից Գրիգորը կորցրեց իրեն, ո՞րն է առավել լավը, որի՞ն մոտենալ։ Մեկը մյուսից որակյալ՝ սպիտակ, բարակ, առանց բծերի։ Հորթերի կաշվից պատրաստված այս մագաղաթները թվում էին անձեռակերտ։ «Ինչպիսի՞ վարպետների ձեռք է դիպել սրանց, որ ձեռքի, նույնիսկ վարպետության կնիքը չի երևում»։ Հետո ինքն իր մեջ. «Այս մագաղաթներից եթե մի տրցակ իմը լիներ, ինչպես կծաղկեին վանքի ծաղկողները, գրիչները կարտագրեին իմ տաղերը և կրծքիս կսեղմեի ու աշխարհին կհայտնեի, թե որքան երջանիկ եմ...»։ Հետո հանդգնեց և վաճառողին հարցրեց գինը։ Յուրաքանչյուր մագաղաթ նա մեկ ոսկի դրամ գնահատեց կամ չորս արծաթյա։ Գրիգորը ցավով մտածեց, որ նման թանկարժեք մագաղաթ գնելու ուժ չի ունենա ոչ միայն ինքը, այլև իրենց միաբանությունը։ Եվ ետ քաշվեց։ Հեռվից հիանալն էլ բավական էր։ Այդ ժամանակ նրանց

մոտեցավ մի անձնավորություն և Գրիգորին նշանացի հասկացրեց, որ մոտենա։ Նրա ձեռքին մետաքսի մեջ փաթաթված գիրք կար։

— Անիի Ավետարանն է,— ասաց,— կրկնօրինակված մայրաքաղաքիս գրչատանը։ Վաճառվում է կես գնով, ոչ ավելի...— և բացեց մետաքսն ու ավետարանը հանելով տվեց Գրիգորին,— վերցրու, կես գնով...— փսփսաց։

Գրիգորը բարուրած երեխայի նման գրկեց շքեղ, կաշվեկազմ Ավետարանը։ Ի՞նչ աշխատանք է, տե՜ր աստված։ Ձեռքերը չերմացան։ Հոգին չերմացավ։ Ավետարանը շնչում էր ափերի մեջ։ Բացեց անվանաթերթը և սառեց մնաց։ Արևի տակ բազմերանգ և բազմագույն ճառագայթեցին անվանաթերթը զարդարող խորանի գույները։ Գրիգորի ձեռքը դողաց.

— Ո՛վ բարի մարդ, որքա՞ն արժե այս հրաշքը...

— Ընդամենը հիսուն ոսկի, կես գինն եմ ուզում... Իմացի՛ր, վարպետ Գլակի աշխատանքն է, գրչատնից թաքուն է դուրս բերված... Առ, ձեր տունը աստծով ու աստվածությամբ կլցվի...

— Փող չունեմ, ով բարի մարդ... Չունե՛մ...

— Փող չունես, բայց շուկա՞ ես մտել, այն էլ Անիի շուկան, ուրեմն, դու խելագար ես... Հեռացի՛ր...

Սակայն Գրիգորը ոչ ուժ ուներ Ավետարանը գնելու, ոչ էլ հեռանալու։ Հմայված՝ կանգնել, մնացել էր։ Ոտքերն ասես կպել, մեխվել էին գետնին։ Աչքերի առջև ծփածանվում էին Ավետարանի անվանաթերթի արևային գույները։ Սիրտը խփում էր, այդ թպրտոցը ծանոթ էր։ Սիրտը նման շարություններ էր անում միայն Դրախտիկին հանդիպելիս։ «Այս ի՜նչ ուժով է աշխատել ծաղկողը։ Այդ ի՜նչ վարպետություն է, որ կարող է խենթի նման սիրահարեցնել բանաստեղծ-տաղերգուին։ Այս ի՜նչ ուժ է թաքնված մարդկային տաղանդի մեջ, որ կարողանում է խոսեցնել քարը, հարսանեկան զգեստների մեջ ծիածանել մագաղաթը։ Այս ի՜նչ հրաշք է, ինչպիսի՜ աստվածային արարիչ է տաղանդը, հանճարը...

— Մտքինդ ի՞նչ է, որ սիրահարվածի նման աչքդ չես կտրում Ավետարանից։

— Մտքիս մեջ վատ բան չկա։ Ո՛չ գողանալու, ո՛չ էլ քեզ կուփիչների ձեռքը մատնելու ցանկություն ունեմ։ Պարզապես այսքան շքեղ հրաշքի չէի հանդիպել...

— Էժան լիներ, կնվիրեի, բայց թանկ է, հետո իմը չէ միայն...

— Չէ՛, նման նվեր մտքովս էլ չի անցել ստանալ...

— Դե լավ, ես գնամ, գուցե գնորդ ճարեմ...— և հեռացավ։

***

Շատ էին հոգնել օրվա տպավորություններից ու շրջագայելուց և որոշեցին վերադառնալ իջևանատուն հանգիստ առնելու, հաջորդ օրվան թողնելով շուկայի հետ ծանոթությունը շարունակելու հոգսը։ Նոր էին ոտք դրել փողոցի սալահատակին, երբ նրանց առջևը կտրեց մի ածդահա շինական, որն աչք էր հածում շուրջը, տեսնելու փողոցում անցորդներ, մարդիկ կա՞ն, թե ոչ։ «Թալանելու միտք ունի,— մտածեց,— համա թե թալանելու մարդ գտար...», բայց ածդահան ծիծաղեց և առեղծվածն արագ լուծվեց։

— Մուշե՞ղ... Իսկ ես մտածեցի, որ դու բախտավոր գող չես, քանզի գտել ես աղքատ, անփող եկվորների...

— Ուրեմն ճանաչեցի՛ր... Տեսնում ես, ինձ ավելի շատ սազում է շինականի պարզ զգեստը, քան թե հոգևորականինը...

— Ճիշտ է, բայց ասա, որտեղի՞ց գտար քո չափսի հագուստ։ Ախր, թեև Անին մայրաքաղաք է, բայց քո հասակի ու լայնքի տեր մարդկանց այստեղ էլ որոնել է հարկավոր։

— Պատկերացրու ոչ ոքի չենք որոնել, պարզապես հոգևորականի հագուստը մի կնոջ միջոցով վերափոխել ենք աշխարհիկ հագուստի, այնտեղ քարայրներում... Հետո էլ կաշառքի շնորհիվ կարողացա թափանցել քաղաք։ Ահա և բոլորը...

— Որքան ինձ հայտնի է, դու դրամ չունեիր, որտեղի՞ց գտար հարկավոր դրամը...

— Այստեղի թոնդրակյան համայնքը շատ մեծ է և թոնդրակյանին օգնելու հոգսը նրանց կարևոր օրենքներից է... Քեզ կծանոթացնեմ նրանց հետ, կիմանաս...

Խոսելով քայլեցին քաղաքի ծայրամասը, Դվնո պարիսպների կողմը։ Այստեղ ծուռումուռ, կեղտակուր փողոցների վրա շարված էին մանր, կիսակույր խրճիթներ, որոնց առջև փոշու և լվացքաջրերի մեջ խաղում էին կիսամերկ ու բոկոտն երեխաներ։ Մուշեղը մտավ բազմաթիվ գետնափոր խրճիթներից մեկը՝ Գրիգորի զարմանքից լայնացած աչքերի առջև. «Այդ ինչպե՞ս տեղավորվեց, ինչպե՞ս մտավ այդ փոքրիկ դռնից ներս»։ Գրիգորը նրա ետևից մտավ և ճակատով բախվեց դռան շեմին։

— Խաբվեցիր, Գրիգո՛ր...— ծիծաղեց Մուշեղը։— Կռանալ անպայման հարկավոր է...

Մտան սենյակ, որը հետևի պատի վրա լուսամուտ ուներ և բավական լուսավոր էր։ Սենյակը մաքուր էր։ Անկողինները հավաքված թարեքի

վրա։ «Այս կեղտ ու փոշու մեջ նման մաքրությունն անհավատալի է, անհավատալի է, անկարելի...»,— գնահատեց Գրիգորը։ Բացվեց կողքի սենյակի դուռը, և նրանց ընդառաջ եկավ տարեց տանտիկինը.

— Կյուրեղն ասաց, թող հանգստանա, իրիկնաժամին նա տանը կլինի,— կինը նորից անհետացավ հարևան սենյակում։ Երբ վերադարձավ, ձեռքին սկուտեղ կար, ուտելիքով և գինու կժով ծանրաբեռ։ Սոված էին, վրա ընկան ուտելիքին. հոգնած էին ու ծարավ, վրա տվին սառը գինուն։ Երբ կուշտ էին և ծարավը հագեցել էր, աչքերը փակվեցին իրենք-իրենց։ Արթնացան երեկոյան, Կյուրեղն արդեն եկել էր։ Նորից նորոգվեց սեղանը։ Կարճոտ խոնչայի վրա հայտնվեցին խորտիկները։ Կժի շրթերից նորից գավաթների մեջ կկլկլաց գինին։

— Պահ է վեր կենալու,— առաջինը բարձրացավ Մուշեղը,— արդեն հավաքված կլինեն։

— Գնանք,— ափերով բեղերը սղալեց տանտերը։ Վեր կացան նաև հյուրերը։

Տանտիրուհուն շնորհակալություն հայտնելով, նրանք ծուռտիկ փողոցների լաբիրինթոսից մի կերպ դուրս գալով հայտնվեցին կիսակառույց մի շենքի առջև, որը չնայած կամարների ու խոյակների անավարտ լինելուն, ինչպես ասում են՝ դեռևս շինարարական խանձարուրների մեջ երևում էին ապագա հոյակերտ կառույցի նշանները։ Քարերը սրբատաշ էին, խոյակներն ամբողջական քարից, թեև դեռևս կանգնեցված չէին, զարդաքանդակները նոր-նոր էին ծլում, բողբոջում կառույցի քարերին։ Կիսահրաշքը դուռ չուներ։ Դռան փոխարեն իրար մեխած տախտակներն էին գոցում մուտքը, որը այժմ բաց էր մտնողների առջև։ Ներսում հատակը սալարկված էր, և մարդիկ նստած էին հատակին։ Շոգ, տոթ երեկոն մտնում էր այստեղ և զինաթափվում։ Զով էր, թեև դահլիճը համարյա լեցուն էր մարդկանցով։ Եվ լիքը դահլիճում այնպիսի լռություն էր, որ լսելի էր նույնիսկ ճանճերի բզզոցը։ Երեկոն կամաց փռում էր մութի թևերը։ Դահլիճում մոմեր կայծկլտացին, ծակծկելով մթությունը։

— Հեսուն եկավ...— շշնջաց դահլիճը։— Սկսում ենք։

Հեսու կոչվողը պարզապես մտավ դահլիճ, կանգնեց նրա առաջնամասում։ Նրա դեմքը լավ տեսնելու համար Գրիգորը շատ ճիգ գործադրեց, սակայն անօգուտ, դահլիճի լուսավորությունն աղոտ էր։ Մոմերը չէին կարողանում հաղթահարել մթության թանձրությունը և խավարը չէր պարտվում։ Միայն կարողացավ այնքանը տեսնել, որ Հեսուն թխամորուս էր, ոչ պարթև, շարժումները՝ արագ ու կտրուկ։ Նա բարձրացրեց աչքը։ Եվ դահլիճը մեկ մարդու նման սկսեց երգել իր թոնդրակյան երգը.

Առյուծները միշտ միայնակ, միայնակ են շրջում,
Իսկ գայլերը ոհմակով են, ոհմակով են ուժեղ,
Արծիվները միայնակ են, միայնակ են թռչում,
Թռչունները երամով են, երամով են ուժեղ...
Միահեծան է միշտ արքան, երկրորդ արքա չկա,
Մեկն է աստված տիեզերքում, մեկն է՝ աստված վկա...
Քրիստոսը երկնածին չէ, երկրորդ աստված չկա,
Հողածին է նա էլ մեզ պես, մարդ է՝ աստված վկա...
Ուրեմն թող մեզ սատարի մեր աստծո աջը,
Հավիտյանս հավիտենից կորչի չեղյալ խաչը...

— Կորչի՛, կորչի՛...— թնդաց դահլիճը։ Երգն ավարտվեց։

— Ամեն, ամե՛ն...— հանդարտվեց դահլիճը։

— Հավատակիցներ, թոնդրակյաններ,— սկսեց Հեսուն։ Ձայնը զընգուն էր, պարզ և բարձր,—մեր համայնքը երևի չգիտե, որ հիմա հայոց աշխարհի տարբեր մասերում արյամբ և սրով խաչ են հանվում, խոշտանգվում են մեր ուխտի երդվյալ անդամները։ Սյունյաց աշխարհի Ավելադաշտ շենը այսօր վերածվում է ավերադաշտի, ինչպես անամոթաբար հայտարարել է Սյունյաց աշխարհի հոգևոր առաջնորդ Վահան եպիսկոպոսը։ Ավելադաշտը չի ցանկանում ճանաչել իր շենի քահանային և վռնդել է գյուղից։ Ահա առիթը, որ այսօր արյան և մեծ զոհերի գնով ցանկանում են ծնկի բերել Ավելադաշտի քաջ բնակիչներին։ Շենի վրա հարձակվում է իշխանական զորքը, որոնց հրամանատարում է Մլեհ սեպուհը։ Հոսում է մեր հավատակիցների և գաղափարակիցների ազնիվ և թանկ արյունը։ Եպիսկոպոսը երդվել է աստծո առջև, որ ոչ մի ավելադաշտցի թոնդրակյան ողջ չի թողնելու, բացի ծծկերներից և մանկահասակներից, որոնք կարող են հետագայում դառնալ երդվյալ քրիստոնյաներ։ Ավելադաշտի հերոսների հետ է Սյունյաց պարծանքը՝ իշխանուհի Սաթենը։ Մենք հավաքվել ենք այստեղ ոչ թե ճառեր ճարճատելու, այլ մեր պարտքի մասին խորհելու, Ավելադաշտի փրկության մասին հոգալու։ Մեր համակիրները օր-օրի ավելանում են, սակայն օր-օրի ավելի վայրագ, առավել անողոք են դառնում մեր թշնամիները, և համակիրները վախենում են ցույց տալ իրենց նվիրվածությունը մեր գաղափարներին։ Մեր թշնամին ուժեղ է և հարուստ։ Աշխարհիկ իշխանությունները մեր շարժման հենց սկզբից դեռևս մեծն Սմբատ Զարեհավանցու ժամանակներից կողմնորոշվեցին մեր դեմ և եկեղեցու կողմը։ Շունը շնից, երկուսը՝ մեկ տնից, ասում է ժողովուրդը։ Աշխարհիկ իշխանությունները մեր շարժումը, մեր պահանջները վանքերից և եկեղեցիներից՝ ոտնձգություն համարեցին նաև իրենց դեմ և ոտքի ելան ու եկեղեցուն միանալով միասնական ճակատ կազմեցին մեր դեմ։ Սակայն դա էլ չօգնեց։ Ընկճե-

ցին զենքի ուժով, բայց հոգին մեր մնաց կանգուն, զոհեր տվինք, բայց գաղափարին չդավաճանեցինք։ Արդ, խորհուրդ տվեք, ինչպե՞ս, ինչո՞վ օգնենք Ավելադաշտի ապստամբ շինականներին...

Հեսուին ծափահարեցին։ Տեղից բարձրացավ Մուշեղը։ Դահլիճը լցվեց նրա վիթխարի կերպարանքով և պատից պատ, և հատակից առաստաղ ձգվող հսկայական ստվերով։

— Գաղափարակիցներ, բարեկամներ։ Ավելադաշտին օգնելու համար հարկավոր է անել ոչ միայն հնարավորը, այլև անհնարը, մեր գեղեցիկ խոսքերով և անկեղծ ցավակցություններով Ավելադաշտը ոչ օգնություն կստանա, ոչ էլ փրկություն։ Ես այստեղից կգնամ ոչ թե Մոսկի Կճավա միաբանություն, որի վարդապետներից եմ, այլ Ավելադաշտ՝ օգնելու իմ բարեկամներին՝ նրանց մահու և կենաց կռվին, իմ արյունն ու ավյունը տալու սուրբ նպատակի համար...

— Դու մեն-մենակ կշահես ճակատամարտը,— ծիծաղեց մեկը։

— Բանագնաց ուղարկեցեք, թող սեպուհն իր գլխի ճարը տեսնի, քանի ուշ չէ...— միացավ նրան մեկ ուրիշը։ Դահլիճում ծիծաղի ալիքներ անցան։

— Այս ածդահան կփրկի Ավելադաշտը։

— Խնդրում եմ լռել, սրամտություններ չանել,— սեղացավ Մուշեղը,— մեր ապստամբությունը չի բռնկվում, այլ սկսվում է մեկ այստեղ, մեկ այնտեղ, մինչդեռ մեզ հարկավոր է, որ հայոց աշխարհում միանգամից, միասին բռնկվեն ապստամբությունները, այլապես նրանք կպատրժվեն տերունական զորքերի կողմից և հաջողության չեն հասնի։ Եկեղեցին տակավին ուժեղ է, նա իզորու է հեշտությամբ ջլատելու մեր ուժերը, մեր շարժումները։ Նրան սատարում են աշխարհիկ տիրողները։ Ինչե՞ր ասես չեն անվանում մեզ, էլ հեթանոս ու սատանա, էլ հերձվածող ու պոռնկացող, էլ եղծված և բորբորիտն, հազար անեծք ու հայհոյանք են կախվում մեր գլխին, որոնց պատճառով մեր համակիրները վախենում են միանալ մեզ, իսկ շինականների մի մասը պարզապես երկնչում է աստծո բարկությունից։ Թշնամին գործադրում է առավել ուժեղ միջոցներ։ Նա մեծ հոգածություն է հանդես բերում հոգևոր դասի հոգևոր մաքրության ուղղությամբ։ Նա մաքրում է, զտում հոգևորականությանը կարծեցյալ թոնդրակյաններից, իր իսկ մարդկանց նկատմամբ հանդես բերելով անմարդկային անգթություն և ջարդ, հոշոտելով, անվանարկելով, բանադրելով, կարգալույծ անելով նույնիսկ իրեն նվիրվածներին, որպեսզի փորձության պահերին չխորտակվի նրանց ստրկացող միասնությունը։ Մենք պարտավոր ենք խելամիտ վարվել և օգտագործել նրանց անմարդկային սխալները։ Իսկ հիմա, հարգելի գաղափարակիցներ, ի բան, ի զեն, ի Ավելադաշտ...

Խոսեցին մի քանի հոգի ևս։ Գրիգորն ուշադիր լսեց բոլորին։ Այնուամենայնիվ, Ավելադաշտին օգնելու պատրվակով հավաքված մարդիկ ոչինչ որոշակի չառաջարկեցին, մի երկուսը Մուշեղի օրինակով պարզապես ցանկություն հայտնեցին մասնակցել Ավելադաշտի կռվին, ուրիշ ոչինչ։ Ոչ ոք չգիտեր Ավելադաշտի ստույգ տեղը։ Ոչ ոք չգիտեր ինչո՞վ և ինչպե՞ս կարելի է օգնել սեպուհական զորքերի օղակի մեջ մարտնչող շենին։ Ոչ ոք չէր եղել Ավելադաշտում։ Ժողովն ավարտվեց ժողովականների, Անիի թոնդրակյան համայնքի անդամների բուռն ցանկություններով օգնելու Ավելադաշտին։ Սակայն ցանկությունները բան ու գործի վերածելու ոչ մի խոսք չեղավ։ Ժողովականները վերստին երգեցին իրենց թոնդրակյան հիմնը և աճապարանքով ցրվեցին։

— Ի՞նչ կարծիք կազմեցիր,— վերադարձի ճանապարհին հարցրեց Մուշեղը։

— Կարծիք կազմել չկարողացա,— պատասխանեց Գրիգորը,— ցանկություններ կային, գործ չկար։ Ճանապարհ, որ փրկեր ավելադաշտցիներին կամ գոնե թեթևացներ նրանց հոգսը՝ չգտնվեց։

— Ցանկությունը, Գրիգոր, քիչ բան չէ։ Սակայն ի՞նչ կերպ ցանկությունը գործի վերածենք։ Հո չենք կարող զորական ուժեր մոտեցնել Ավելադաշտին։ Մենք ոչ այդպիսի հնարավորություն ունենք, ոչ էլ մեծ ճակատամարտ բորբոքելու ցանկություն։ Թոնդրակյանները բռնի ուժ գործադրելու ծրագիր չունեն...

— Բայց գործադրում են...— կտրեց Գրիգորը։

— Ճարահատյալ, ինքնապաշտպանության ժամանակ,— խոսեց Մուշեղը։— Ճարահատյալ...

— Դու, հայր սուրբ, շիտակ ես եղել միշտ, և այս հարցում էլ մի մեղանչիր ճշմարտության դեմ։ Կա պատմության անխարդախ ճշմարտությունը։ Ապստամբող կողմը միշտ նախահարձակ է լինում։ Նա է թելադրում նույնիսկ դաժանության չափը։ Եթե թոնդրակյանները ապստամբեին, սակայն չհարձակվեին վանքերի ու եկեղեցիների վրա, հրով ու սրով չխլեին նրանց ինչքը, հոգևորականներին չկախեին զանգակատներից, չբորբոքեին նրանց, չհանեին իրենց դեմ, չէր լինի նաև նրանց անողոք, անողորմ ինքնապաշտպանությունը, որը ուժեղի մոտ վերածվում է հակահարձակման, դրանից բխող բոլոր անցանկալի հետևանքներով։ Ախր, դուք՝ թոնդրակյաններդ, լավ գիտեք, որ եկեղեցին թույլ չի տա իր վարդապետության մեջ հակաքրիստոնեական ուղղումներ մտցնել, որ եկեղեցին կամավոր կերպով չի զիջի իր ինչքն ու հարստությունը շինա-

կանին, որ եկեղեցու ամենավստահելի դաշնակիցը աշխարհիկ իշխանություններն են, որոնց զորքերը փոխադարձ անողոքությամբ ճնշում են թոնդրակյանների ապստամբությունը՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման սկզբունքով...

— Բայց ինչո՞ւ դու չես բարբառում ճշմարտությունից, Գրիգոր, մի՞թե արդար չեն թոնդրակյանների պահանջները...

— Ինձ ու քեզ համար, հայր սուրբ, գուցե նրանք արդար են, բայց մեր և թոնդրակյանների արդարությունը դեռ այս աշխարհի ճշմարտությունը չէ։ Մարտերը թոնդրակյանների դեմ բռնկվում են այն պատճառով, որ հոգևորականությունն ու աշխարհիկ իշխանությունները, նաև շինականների մի մասը, այն էլ զգալի մասը, գտնում են, որ թոնդրակյանները ոչ միայն ճշմարիտ չեն, այլ աստվածադավ են և տիրադավ, հերձվածող են և եղծված, պոռնիկներ են և գողեր, թալանչիներ ու ավարառուներ և ճակատում են նրանց դեմ ամենայն անողոքությամբ... Երբ խոսում են զենքերը, մարդասիրությունն ու գթասրտությունը, ավա՜ղ, նահանջում են...

— Ի՞նչ ես առաջարկում, Գրիգոր, թոնդրակյանները վա՞յր դնեն զենքերը...

— Երբեք։ Հայր սուրբ, թող շարունակեն այս ծանր բանավեճը, բայց ճշմարտությունը թող չթաթախեն արյունով, չխեղդեն արյան ծովի մեջ։ Դաժանությունը չպետք է դարձնեին ապստամբության դաշնակիցը։ Չէ՞ որ դրանով արթնացնում են իրենց հակառակորդի մութ և վայրի բնազդները, ավելի սրելով դրությունը, ապավինելով ամենաահավորին՝ սպանությանը։

— Դու ինքդ ասացիր, թե՝ երբ խոսում են զենքերը, մարդասիրությունն ու գթասրտությունը նահանջում են, ի՞նչ կարող ենք անել...

— Գոնե արյան հեղեղը նվազեր, անողոքությունը փոքր-ինչ տեղի տար բանականությանը, զգաստացներ մարդկանց խիղճը...

— Ճշմարտության և արդարության ճանապարհը միշտ էլ արյունոտ է, Գրիգոր, նրանք կամավոր կերպով չեն հրաժարվի իրենց իրավունքներից և ունեցվածքից, մենք՝ մեր պահանջներից։ Միայն արյունն ու ուժն են ի զորու լուծելու այս թնջկված ծանր վեճը... Արյունը միայն մարդու կյանքի պահպանիչը չէ, արյունը նաև պատմական նման ծանր իրավիճակներում պատմական անհաշտելի վեճերը լուծելու համար է։ Նման պարագայում արյան կորուստը կարող է հանգեցնել իրավիճակի փրկության... Արյունը պարտադրում է պարտություն կամ հաղթանակ։ Միջինը չկա։ Պիտի թափվի արյունը։ Ապստամբության պարտադրանքն է սա...

— Քո ասածների մեջ ճշմարտության մերկապարանոց դաժանություն կա, հայր սո՛ւրբ։ Ես նման դաժանությունը, որքան էլ արդար լինի այն, չեմ ընդունում։ Արարիչը ստեղծել է մարդ արարածին՝ կյանքն ապրելու համար, վայելելու համար, իսկ մենք հանուն ինչի՞ ենք այն խլում մարդուց...

— Հանուն արդար կյանքի, ուրիշ ոչինչ... Մարդու նման ապրելու համար, Գրիգոր։ Լավ, մարդկային կյանքի համար արժե զոհվել, Գրիգոր։ Հանուն մարդկային կյանքի զոհվելը մեծ առաքինություն է...

— Դու, հայր սուրբ, այդ ամենը ասում ես մեծագույն հավատով, բայց հիմա թափվում է ավելադաշտցիների արյունը, խղճի դեմ բան չէ՞ արդյոք ծեր ու մանկան արյան այս կորուստը, որ միևնույն է, ոչնչով չի փոխհատուցվելու։

— Դու քո կասկածները պետք է ստուգես ավելադաշտցիների միջոցով։ Հարցրե՞լ ես նրանց, թե համարյա անզեն շինականներին որտեղից այն հոգեկան կորովը, մեռնելու այն կամքը, որով նրանք ճակատում են իշխանական զորքերի դեմ։ Փոխհատուցումը, սիրելիս, նրանք վաստակում են ազատության մեջ մեռնելու երջանկությամբ...

***

Կիրակի օր էր։ Գրիգորը որոշեց շարունակել ծանոթությունը շուկայի հետ, քանզի քաղաքի կյանքը եռում էր շուկայում։ Աշնանային պաղ արևոտ առավոտ էր։ Եվ նա Հակոբիկի հետ բռնեց շուկայի ճանապարհը։ Փողոցը սալահատակում էին, և շարժումը բավական դժվար էր։ Այդ օրը չէին աշխատում, սակայն մարդկային հոծ խմբերը, որոնք շտապում էին շուկա, խեղդել էին փողոցի նեղ, կիսաքանդ անցուղիները։ Ի վերջո, հաղթահարեցին փողոցի դժվարությունը և բավական ուշացումով դուրս եկան քաղաքի գլխավոր մայրուղու վրա, ուր անտովոր շատ էին զինված զորականները։ Հավաքվել էին նաև մեծ թվով անեցիներ։

— Ի՞նչ է պատահել...

Հարցին մեկը ջղայնացած պատասխանեց.

— Այս աշխարհից չեք, ի՞նչ է։ Չգիտե՞ք, որ այսօր կիրակի է և արքան Սուրբ Նշան եկեղեցում մասնակցում է առավոտյան պատարագին... Ուր որ է պատարագը ավարտվելու է, և ժողովուրդը սպասում է տեսնելու և ողջունելու իր թագավորին...

Իսկ մարդիկ գնալով ավելանում էին։ Նկատելի էր հաշմանդամների՝ կաղերի, կույրերի առատանալը։ Զինվորները գործի անցան, սկսեցին կարգի հրավիրել հավաքվածներին։

— Է՛յ, ժողովո՛ւրդ, հանկարծ ուրկանոցներից բորոտներ հո չե՞ն հայտնվել թագավորանիստս հայոց,— դիմեց մի զորական հավաքված-ներին։

— Չկա՛, չեն երևացել...

— Զգուշացնում եմ, բորոտներին թաքցնելու համար կպատժվեն մեղավորները։ Հանկարծ դուրս չգան թագավորի շքախմբի առջև... Զգուշացնում եմ...

Շատ սպասելու հարկ չեղավ։ Շուտով լրիվ դատարկված փողոցում երևաց արքայական շքախումբը։ Առջևից մի քանի ձիավոր էին ընթանում։ Պճնված զորականներ էին, որոնք ավելի քան արքայավայել նըստած էին նժույգներին։ Հետևից ընթանում էր թագավորը իր ընտանիքով և թիկնազորի մի քանի սպաներ։ Նրանք հետիոտն էին։ Գրիգորին զարմացրեց թագավորական շքախմբի անշուք ընթացքը։ Նույնիսկ չէր երևվում նման պարագաների համար պարտադիր արքայական դրոշը։ Շքախմբի երևալուն պես փողոցում բռնկվեցին ծափերը, հնչեցին ողջույնի բացականչություններ.

— Արևշատությո՛ւն հայոց արքային...

— Աշոտ Ողորմածին՝ փա՛ռք...

— Ճնշվածների, հաշմանդամների բարերարին՝ փա՛ռք...

— Կեցցե՛ արքայից արքան...

Շուտով շքախումբն անցավ այնտեղով, ուր կանգնած էր Գրիգորը։ Գրիգորը վաղուց նկատել էր թագավորին և ակնդետ նայում էր։ Թագավորը հագնված էր անշուք, պարզ, արքայական խույրը նույնիսկ գունաթափ թվաց։ Միրանին, չգիտես ինչու, կարճ թվաց, վրայով չէր։ Ժողովրդի ծափերին ու ողջույններին պատասխանում էր ստեպ-ստեպ աջը բարձրացնելով, այդ պահերին նրա շուրթերը շարժվում էին, երևի պատասխան շնորհակալական և ողջույնի բառեր էր մրմնջում, նրանց առջևով անցնելիս արքան նայեց Գրիգորի կողմը, որը բռնեց նրա հայացքը։ Տաղերգուին զարմացրեց թագավորի թախծոտ հայացքը։ Ասես նայում էր բարակ մշուշի միջից և սև աչքերը գունատ դեմքին՝ տխուր-տխուր էին։ Գեղեցիկ էր, ճակատը լայն, թուխ մորուքի մեջ սպիտակները նկատելի էին, առատանում էին։ Պարթևահասակ էր, քայլքը՝ արքայավայել։ «Գուցե այսպիսին պիտի լինի հայոց թագավորը, պերճանքից ու շուքից հեռու, պիտի լինի իսկական թագավորի նման, ոչ արքայական ու թախծոտ աչքերով։ Այո՛, այսպիսին պետք է լինի մեր թագավորը։ Մենք էլ ենք աշխարհին նայում նման աչքերով, այդ աչքերով նայում ենք մեր պատմությանը, մեր աստծուն։ Այդ հայացքով նայում մեր ուրախությանը և հրճվում ենք նույնիսկ այդ աչքերով։ Իսկական հայոց թագավորի տիպար։ Եվ զարմանալին այն է, որ Աշոտ Ողորմած արքան մեր դժբախտ թագավորների մեջ գուցե ամենաբախտավորներից է։ Սակայն, միևնույն է, նրա աչքերը տխուր են, տխո՛ւր...»։

Այս մտորումների մեջ էր տաղերգուն, իսկ թափորն անցավ։ Այժմ ծափերն ու ողջույնները գնալով հեռանում էին, մարում։ Թագավորական ընտանիքի անդամներին նա կարգին չտեսավ։ Հայացքը բևեռված էր արքային, սակայն վստահ էր, որ նրանց աչքերը ևս արքայական են, տխուր...

Ժողովրդի հավաքված, բռունցքված բազմությունը արքայական շքախմբի հեռանալուց հետո սկսեց քանդվել, ցրվել և նոսրանալ։ Գրիգորը Հակոբիկի հետ քայլեց Սուրբ Նշան եկեղեցու առջև փռված հրապարակը, ուր եռում էր շուկայի ամենատխուր մասը՝ գերեվաճառների շուկան։ Հակոբիկը զարմանքով հարցրեց.

— Մեր աշխարհում կռիվ չկա, հայր սուրբ, հապա որտեղի՞ց են գերիները...

— Կռիվ մեր աշխարհում չկա, ճիշտ է, բայց հարևան աշխարհներում կա, Հակոբիկ։ Այս մեկ։ Գերում են մարդկանց ոչ միայն պատերազմում։ Գողանում են մանուկների, կանանց, հեռացնում իրենց երկրներից, փախցնում հարազատներից և օտարության մեջ վաճառում։ Գերեվաճառությունն Անիում դարձել է շատ եկամտաբեր, մեր մայրաքաղաքն աճում, մեծանում և հարստանում է ոչ թե տարիներով, այլ օրերով։ Աշխատող ձեռք է հարկավոր ամենուրեք՝ տներում, գործատներում, շինարարության վրա և իմացիր, գերին շատ էժան է նստում գնորդներին և բավական եկամտաբեր է վաճառողների համար։

Խոսելով հասան շուկա, ուր այնքան բազմություն էր հավաքվել, որ դժվար էր մոտենալ գերիների խմբերին։ Մի տեղ լացի աղիողորմ ձայն էր լսվում։ Մոտեցան, մանուկներ էին վաճառում։ Մի սիրուն յոթ-ութ տարեկան աղջնակի գնորդները շատ էին և խմբված մարդկանցից յուրաքանչյուրն իր գինն էր առաջարկում։ Գերեվաճառը, որ արաբ էր, ոչ ոքի հետ չէր համաձայնում և անվերջ բարձրացնում էր սակագինը, գրգռելով և համբերությունից հանելով գնորդներին։ Աղջնակի վաճառվելուն խանգարում էր նաև նրա մայրը, որին վաճառում էին տարիքավորների հետ։ Մայրն այնպիսի սրտակեղեք ձայնով էր ճչում ու լալիս, որ Գրիգորի աչքերը թրջվեցին.

— Բարի՛ մարդիկ, խնդրում եմ, աղջկաս գնողը թող ինձ էլ վերցնի։ Ես կբանեմ, կաշխատեմ այնպես, որ չեք փոշմանի, միայն աղջկաս հետ լինեմ...

Արաբ վաճառականը մի երկու անգամ մտրակեց խեղճ կնոջը։ Տեղացի երիտասարդներից մի քանիսը զայրույթով մոտեցան և փորձեցին զսպել անգութ գերեվաճառին.

— Դու այդ կնոջն այլևս չխփես, թե չէ վերջդ վատ կլինի...

Նրանց սպառնալիքը վաճառականին դուր չեկավ։ Նա զայրույթից ճակնդեղի նման կարմրած դեմքով ուղղակի հարձակվեց երիտասարդների վրա։

— Ձեր ի՞նչ գործն է, ովքե՞ր եք դուք, որ խառնվում եք իմ գործին,— և ի հեճուկս նրանց նորից մտրակեց դժբախտ կնոջը։

Երիտասարդներից մեկն առանց ձայն հանելու, առանց պատասխանելու մոտեցավ նրան, մտրակը խլեց ձեռքից, ջարդեց ու դեն շպրտեց։ Հետո դրպանից հանեց ծալովի դանակը, մոտեցավ գերված կնոջն ու կտրեց թոկը, որով կապված էր մյուս գերիներին, ապա նույնքան անշտապ քայլեց դեպի աղջնակը, առանձնացրեց, կապանքներից ազատեց նաև նրան։ Հետո շրջվեց մոր կողմը.

— Վերցրու աղջկադ և փախիր, մենք ձեզ կգտնենք...

Իսկ ընկերներն այդ պահին բռնել էին գերեվաճառին, որպեսզի նա չխանգարի գերիների փախուստին։ Մայր ու աղջիկ փախան և այնպես լուծվեցին ամբոխի մեջ, որ նրանց փնտրելը կլիներ խոտի դեզի մեջ ասեղ որոնել։ Իսկ վեճն այսքանով չվերջացավ։ Գերեվաճառն իրեն քրքրում էր, գոռում, աշխատում էր պոկվել անկոչ պաշտպաններից։ Ի վերջո նրան հանգստացրին, ոսկե դրամով վճարեցին և մոր, և աղջկա համար և հեռացան արաբի հայհոյանքների և սպառնալիքների ներքո։

Գրիգորի, որ այս ամենի լուռ ականատեսն էր ու վկան, սիրտն ուռչում էր հպարտությունից, որ հայ երիտասարդներն ազնիվ արարմունքով ազատեցին գերությունից մորն ու աղջկան։ Հետո հպարտությամբ անդրադարձավ այն փաստին, որ գերեվաճառների մեջ ոչ մի հայ չկա, որ այդ արհեստը հայի համար չէ, որ հայը, ճնշված ու բզկտված հայը, երբեք չի կարող համակրել բռնությունը և ծառայել բռնությանը։

Իսկ մի քիչ անդին գերեվաճառը, տեսնելով շուկայական հսկիչներին, աղմուկ-աղաղակով և լացով գանգատվում էր նրանց.

— Օրը ցերեկով թալանեցին ինձ, ծեծեցին ինձ, փախցրին մորն ու աղջկան, սնանկացրին ինձ...

— Չհավատաք սրիկային,— աղմկեցին ամբոխի միջից,— նրան լիուլի վարձատրել են, այն էլ ոսկե դրամով...

— Հիմա որտե՞ղ են այդ մարդիկ,— հետաքրքրվեցին հսկիչները։

— Գնացել են, մնային ի՞նչ անեին...

— Էհ՛ը, դու, եթե քեզ վարձատրել են, էլ ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ ես ինքդ քեզ պատառոտում...

— Էլի դրամ է ուզում ագահը... Քշեք դրան քաղաքից... Դրանք արժանի չեն մեր քաղաքին...

Հսկիչները մոտենում և զգուշացնում են վաճառականին, որ նա ժողովրդի մեջ հիմարություններ չանի, անկարգությունների տեղիք չտա։ Գերեվաճառը տեսնելով, որ իրեն ոչ միայն չեն ընդառաջում, այլև կարող է ստախոսության և անկարգության համար պատժեն կամ տուգանեն, պարզապես դիվոտում է, սկսում կուրծք ծեծել և զարմանքից քարացած ներկաների առջև երդվել, որ իրեն անիրավել են, թալանել.

— Ալլահը վկա, ով մարդիկ, մուսուլմանն ալլահից սուրբ ոչինչ չունի, թող ալլահը կուրացնի ինձ, թե սուտ եմ խոսում...

— Այ քո գլխին խռով կենա քո ալլահը, եթե նա սիրում է ճշմարտությունը, պետք է, որ քո լեզուն կտրի իր անունով սուտ երդում տալու համար...

Գրիգորին զզվանք պատճառեց վաճառականի պահվածքը, առանց այն էլ ուշ էր, և նա շարժվեց առաջ։ Մի տեղ գերիների շուրջ ահագին բազմություն էր հավաքվել։ Աղմկում էին, խոսում, սակարկում.

— Նման աղջկան ինչո՞ւ են վաճառում։ Այդ սիրունին մի՞թե չէր կարելի ավելի կանոնավոր ձևով տանը պահել։ Նրան ուրիշ բախտ պիտի բաժին հասներ...

— Մարդ ի՞նչ իմանա, թե ինչու են նրան վաճառքի հանել։ Դու այդ աղջկա աչքերին նայիր՝ հովազի կանաչ աչքեր ունի, նրա ճանկռոտցին ո՞վ կդիմանա... Դեռ ժանիքներն էլ ցույց չի տալիս...

Ծիծաղեցին, ավելի մոտեցան գերուհուն.

— Ո՞վ է այս սիրունը, ով բարի սարդ, որտեղի՞ց է լույս ընկել...

— Ալանուհի է, սա իր ամուսնու հետ սրամարտում էր խազարների հետ։ Քաջ կին է, չէ՛, չէ՛, աղջիկ չէ, տեսնում եմ ձեզ դուր է գալիս։ Տարեք, տանը գործ կանի, իսկ գիշերները կզարդարի ձեր անկողինը, մանավանդ, եթե անկողինը թափուր է...

— Իսկ ինչո՞ւ ձեր անկողինը չուզեցիք, որ զարդարի...

— Մենք աղքատ ենք, ես ծեր եմ, իսկ նա շատ թանկ ապրանք է, պարոն...

— Ա՜խ՛ ես,— ծոր տվեց խոսակիցը,— ծեր ձին գարի չի՞ ուտում,— և սրտանց ծիծաղեց։

Իսկ կինը չէր հասկանում հայերեն խոսքը, որովհետև խոսակցությունը չէր շարժում դեմքի ոչ մի մկանը, չէր փոխում կանաչ աչքերի վայրագ և վայրի արտահայտությունը։ Նրանով հետաքրքրվող գեղադեմ

Երիտասարդը մոտեցավ և բռնելով նրա դնչիկից, հայացքը մեխեց նրա աչքերի մեջ։ Գրիգորին մի պահ թվաց, թե կինը կկծի կամ կապտակի Երիտասարդին, քանի որ աչքերի խստությունը, չարությունը լավ բան չէին խոստանում։ Սակայն նման բան տեղի չունեցավ։ Կինը նայեց Երիտասարդին, և նրա կանաչ աչքերը կարծես մեղմացան, տաքացան։

— Դու կարո՞ղ ես ինձ սիրել,— առանց շրջապատին ուշադրություն դարձնելու հարցրեց Երիտասարդը։

Վաճառող խազարը դժվարությամբ թարգմանեց Երիտասարդի հարցը։

— Ես գերի եմ, մարդիկ չեն կարող սիրել նրան, ում փողով առնում են...— Կինը խոսում էր խուլ, կրծքային ձայնով։

— Իսկ եթե ես սիրեմ, փոխադարձ սեր խոստանո՞ւմ ես...

— Չգիտեմ։ Ես սիրում էի իմ ամուսնուն, իսկ նրան սպանեցին...

— Նոր սերը կմոռացնի անցած, հին սերը...

— Իմ սերը հին է, բայց անցած չէ...

— Ես կսիրեմ քեզ, դու արժանի ես սիրո...

— Կուզեի քեզ սիրել, եթե հին սերը թողներ...

— Կթողնի, կթողնի, դու հրամայիր քո սրտին, և նա կհամաձայնի...

— Իմ սրտին նոր սերը միայն կարող է հրամայել, ես անզոր եմ...

— Ես քեզ կտանեմ իմ տունը, որը կդառնա նաև քոնը...

— Դու ցանկանո՞ւմ ես ինձ կնության վերցնել...

— Այո՜, ցանկանում եմ, շա՜տ եմ ցանկանում...

— Չե՞ս հոգնի, չե՞ս հիասթափվի ինձանից... Դու հարուստ ես երևվում, հարուստները երեսառած են...

— Չգիտեմ։ Բայց քեզանից մարդ ինչպե՞ս կարող է հիասթափվել...

— Դու լավ մարդ ես, ես արժանի չեմ քեզ, բայց քո կինը կդառնամ...

Մոտ կանգնածները սրտանց ծափահարեցին։ Գործարքը կայացավ։ Երիտասարդը քսակով լիքը ոսկին մեկնեց գերեվաճառ խազարին։ Մարդիկ չգիտես որտեղից, ումից իմացան գեղեցկուհու գինը, քանի որ այնպիսի զարմացական շշուկ անցավ հավաքվածների մեջ, այնպիսի հսկայական գումար էր վճարել Երիտասարդը, որ շատերն այդքան ոսկի նույնիսկ երազում չէին տեսել...

— Սիրո համար կյանքն էլ կտար, փողն ի՞նչ է...

— Այդ սիրունն ավելին արժե...

— Մարդն իր սիրուն հասավ դրամով, հետո ասում են՝ փողը ձեռքի կեղտ է...

Իսկ երջանիկ հարսնացուն շքեղ կառքի մեջ արդեն սլանում էր՝ փարված փեսացուին։

— Տղան էլ լավն է, հիանալի զույգ կլինեն...

— Բայց աչքիս վտանգավոր կին էր երևում, ընկած-ելած կին...

Գրիգորն արդեն չէր լսում մարդկանց։ Պիտի խոսեին, պիտի ուրախանային, նաև բամբասեին։ Բայց Գրիգորը հուզվեց, հիացավ Երիտասարդի վճռականությամբ, որը հանուն սիրո հաշվի չառավ ոչինչ, հաշվի չնստեց ոչ ոքի հետ, այլ հլու սիրո բռնկմանը՝ գեղեցկուհի ալանուհուն ազատեց գերուհու ստորացուցիչ վիճակից, անպատվությունից, որովհետև նման պայմաններում միայն ամուսնությունն իշխանազնի հետ կարող էր նրան ազատել ստրկական վիճակից։ Անիում ամուսնության և այլ օրենքներն ավելի մայրդասիրական էին, քան այլ վայրերում և այլ երկրներում։

Գրիգորը քայլեց նորից մագաղաթ վաճառողների շարքը։ Մագաղաթներն այնպես էին ձգում Գրիգորին, որ նա չգիտեր ինչպես ազատվել նրանց կախարդանքից։ Զուզելով, չցանկանալով, մեկ անգամ վերստին շոշափեց նրանց փափուկ սպիտակությունը և որովհետև դրամ չուներ, նորից գլխիկոր հեռացավ վաճառասեղանից։

Ինչե՜ր ասես չէին վաճառվում Անիի անծայր և բարիքների մեջ խեղդված շուկայում։ Մագաղաթների շարքից ոչ հեռու վաճառում էին որդան կարմիր կոչված ներկանյութը, տորոնը, մելանաքար և այլ ներկեր, որ գրիչների, ծաղկողների երազանքն են։ Այս ներկերը մեծ պահանջարկ ունեին Բյուզանդիայում ու Եգիպտոսում, և նրանց վաճառականներն Անիի շուկայից բեռնավորում էին իրենց քարավանները։ Շուկայի գորգերի շարքին դեռ չմոտեցած, գույների շառափը խտտացրեց Գրիգորի աչքերը։ Այստեղ անսովոր բազմամարդ էր և աշխույժ առևտուր էր ընթանում Եգիպտոսի, Պարսկաստանի, Բյուզանդիայի, նույնիսկ հեռավոր Բուլղարիայի վաճառականների հետ։ Շուկայում կարելի էր ճարել հնդկական համեմունք, գոհարեղեն, չինական գործվածքներ և հախճապակի, պերճանքի առարկաներ արաբական աշխարհից, Սիրիայից և Պաղեստինից պերճանքի առարկաներ և դեղորայք։ Անիի շուկա էին հասնում ռուսական ապրանքներ. մորթեղեն, մեղրամոմ, վուշե գործվածքեղեն, զգեստներ և այլն, և այլն։ Աշխարհը հանդիպում էր շուկայում, և այդ հանդիպումից շահում էին թե անեցիները, թե օտարները։ Օրը կիրակի էր, և քաղաքն ամբողջովին գտնվում էր փողոցներում և շուկայում։ Գրիգորը տեսածներից այնպես էր հոգնել, որ այլևս ուժ չուներ ոտքի վրա մնալու, թեև Անիի շուկան անվերջ բացում էր նրա առջև իր հրապույրները, ցուցադրում բարիքները։ Նրա ուշադրությունը գրավեց

նաև այն, որ Անիի փողոցներում չէին երևում մուրացիկներ։ Մեկ-երկու անգամ աչքովն ընկան ողորմություն հայցողները, որոնք արագորեն անհետանում էին։ Պարզվեց, որ հսկիչները որսում են նրանց և տեղավորում ուրկանոցներում և անկելանոցներում։ Աշոտ Ողորմածի հրամանն էր, հավաքել նրանց և թույլ չտալ ողորմությամբ ապրելու։

— Այդքան մուրացիկներին կերակրելն ու պահելը դժվար գործ է,— մի անգամ կարծիք հայտնեց Գրիգորը, երբ մուրացկանին տանում էին հսկիչները։

Ներկաներից մեկը քմծիծաղեց։

— Նրանք իրենց ապրուստը վաստակում են,— ասաց նա։

— Ինչպե՞ս...

— Շատ պարզ։ Քաղաքս անընդհատ մեծանում է, անընդհատ կառուցվում։ Հարկավոր են կառուցողներ։ Ահա հավաքում են սրանց և ուղարկում աշխատանքի...

— Պարտադրո՞ւմ են,— հարցրեց Գրիգորը։

— Պարտադրում են։ Այն էլ ուժով, բանում են օրնիբուն։ Էժան բանողներ են՝ մի փոր հացով, մերկությունը ծածկող հնամաշ լաթով, ահա դրանց գինը... Եվ գիտեք, փախչում են պարտադրանքից։ Ազատությանն են կարոտում և ծուլությանը։

— Լավ են մտածել, թե չէ այսքան շենքեր, անընդհատ ընդարձակվող պարիսպներ ինչպե՞ս կկառուցեին, հեշտ չէ գլուխ հանելը։ Եվ շահում է քաղաքամայրը, և կշտանում են սովյալները...

— Այո՛, քաղաքամայրը շահում է և կիսակուշտ ապրում են մուրացկանները։ Եվ թագավորը հռչակվում է Ողորմած, և սրանց աշխատանքով պահվում են հաշմանդամները, որոնք ուտում են այս խեղճերի վաստակը և թագավորին համարում են երկրային աստված ու բարերար։ Մի խոսքով...— ավելացրեց խոսակիցը։

— Թագավորը միանգամայն ճիշտ է, մուրացիկությունը գեղեցիկ բան չէ,— լրացրեց Գրիգորը։

— Գեղեցիկ չէ նաև պարտադրանքը, բռնությունը...

— Այս պարագային պարտադրանքը և բռնությունը արդարացվում են։ Մարդկանց հարկավոր է սովորեցնել աշխատել, հարգել քրտինքը։ Այլապես ինչո՞ւ նույն մուրացկանները գերադասում են ձեռքները պարզած հաց ու դրամ մուրալ, բայց առանց պարտադրանքի չեն գնում աշխատելու կառույցների վրա։ Չեն գնում մարդավարի աշխատելու և ապրելու... Ծուլանում են, քանզի մուրալը մեծ ջանք չի պահանջում, իսկ աշխատելը՝ ջանք է պահանջում...

Խոսակիցը լռեց։ Երևում էր կամ համաձայն էր Գրիգորին, կամ՝ չէ՛ր ցանկանում վիճել հոգևորականի սքեմ հագած երիտասարդի հետ։

Ճաշին հասան իջևանատուն։ Պետք է երեկոյան պայմանավորված տեղում հանդիպեին Մուշեղին։ Արդեն աշունը սպառնում էր ցրտերով, եթե սկսվեին աշնանային տևական անձրևները և ճանապարհները կալնեին ցեխով և անձրևաջրերով, այլևս անհնար կդառնար ժամանակին տուն վերադառնալը։ Հարկավոր էր ճանապարհի դրամ վաստակել և քունել տան ճամփան։ Քաղաքում դա անելը անվտանգ չէր, մանավանդ Մուշեղի համար։ Անիում հյուրերի նկատմամբ խիստ էր վերաբերմունքը։ Մանավանդ հոգևորականությունը, աչալուրջ թոնդրակյան խռովությունների նկատմամբ, ստուգում էր հայաշխարհից ժամանող յուրաքանչյուրին՝ շինականին ու հոգևորականին, չլինի՞ թոնդրակյան կրակով հրդեհեն քաղաքամայր Անիի անհանգիստ խաղաղությունը։ Հարկավոր էր ճանապարհի միջոցներ հայթայթել Արարատյան դաշտի շեներում։

***

Մուշեղի հետ պայմանավորվեցին մի շաբաթ անց ճանապարհվել։

— Հարկավոր է ժամ առաջ հասնել Ավելադաշտ,— ասաց Մուշեղը։— Շինականները, իհարկե, երկար չեն դիմանա իշխանական զորքերի ճնշմանը։ Թող պարտությունը չլինի ամոթալի, թող պատվով ճակատեն թոնդրակյանները հակառակորդի հետ։

— Իսկ չի՞ կարելի, հայր սուրբ, կանխել կոտորածը,— հարցրեց Գրիգորը։

— Ինչպե՞ս, ի՞նչ ձևով, Գրիգոր...

— Հաշտության խնդրանքով բանակցել Մլեհ սեպուհի հետ...

— Երբեք։ Նման անպատվության Ավելադաշտը չի գնա։ Այնուհետև, հակառակորդն էլ չի համաձայնի, հաշտության խնդրանքը կսեպվի թուլության նշան և ստորացուցիչ այնպիսի պայմաններ կառաջարկվեն, որ ընդունելը մահից ավելի վատթար վիճակի մեջ կդնի ավելադաշտցիներին... Պա՞րզ է, Գրիգոր...

— Մեկ հարց ևս, հայր սուրբ, ես էլ եմ ուզում լինել Ավելադաշտում...

— Որտե՞ղ, ավելի ճիշտ, ո՞ւմ կողմում...

— Չգիտեմ,— Գրիգորը տարակուսանքով վերքաշեց ուսերը։

ԱՎԵԼԱԴԱՇՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Արդեն աշուն էր, երբ Գրիգորը թողեց Անին։ Հոգում երկվություն էր, ավելի ճիշտ խառնակություն։ Շատ պարզ երևույթներ հանկարծ բարդացան, դարձան անհասկանալի։ Որոշ սրբություններ՝ անքննելի, անքննադատելի, նույնիսկ անբեկանելի՝ հանկարծ երևացին ստվերներով, դարձան գահընկեց, իսկ աստիճանազրկված մեծությունը կամ սրբությունը, երբ զիջում է պատվանդանը, ընկնում է պատվանդանից, ապա նրա տեղը գարշահոտ ցեխն է, հազար անգամ կոխկրտված ու ապականված։ Այժմ Գրիգորը ցավագնորեն զգում էր, համարյա համոզված էր, որ եկեղեցին իր աստվածասիրական քողի տակ կատարում է ամենաանաստվածը՝ թալանում է շինականին, նրա պարզ, անբասիր աստվածասիրությունը դարձնելով խաբեության զոհ և իր ընչաքաղցությանը հագուրդ տալու հեշտին միջոց։ Հոգեկան որքան կորով պահանջվեց երիտասարդ տաղերգուից, որպեսզի կասկածանքը կարողանար հաղթահարել և ըմբռնել այն պարզ իրողությունը, որ աստծո անբեկանելի էությունը իրոք վարկաբեկ է լինում եկեղեցականների գործերով։ Անին մեծ հեղինակություն էր։ Անին բացեց Գրիգորի աչքերը, լուսավորեց նրա պայծառ էությունը։ Եվ Գրիգորի հոգում խառնակություն էր, փոթորիկ և նրա համար նման ծանրությունը ուղղակի հղի էր կործանարար հետևանքներով։ Նա այն մարդկանցից էր, որոնք անկարող էին թաքնվել աշխարհից ու մարդկանցից, նա արևին նայում էր շիփ-շիտակ, չվախենալով նրա լույսի կուրացնող հզորությունից։ Նա քարեղեն մթությունից նույնպես երկնչելու ոչինչ չուներ, քանզի ի զորու էր մթությունը լուսավորելու իր ոգեղեն լույսով։ Նրա հոգին բաց մատյան էր, որի բարդ էությունը պարզության մեջ է, և չէր կամենում իր հոգին թաքցնել մարդկանցից ու աստծուց, բացի ինքն իրենից, որ դժվարանում էր խոստովանել, ճանաչել խոր հիասթափության, ինքնաժխտման հասնող ինքնադատափետման պատճառները, քանզի ինքն այն աշխարհից էր, որը պարտավոր էր պաշտպանել ինչ գնով էլ լիներ։ Միաժամանակ, չէր կարող թաքցնել այդ աշխարհի ախտավարակ էությունը և սրբազնագույն պարտքն էր համարում մաքրել կեղտը կամ ծառանալ, ընդվզել այդ աշխարհի դեմ, որ իր աշխարհն էր. ծառանալ մաքրության անունից, կատարելության անունից, աստծո անունից։ Հե՜շտ է ասել... Պարտքն իրենն էր ուզում, ճշմարտությունն իրենը։ Եկեղեցուն և նրա սպասավորներին դեմ գնալը գնահատվում էր հերձվածող, աստվածասպան, դավաճան ածականներով, հետևանքը դատն էր, բանադրվելը, աղվեսադրոշմով խարանվելը և դուրս նետվելը աստվածասեր զորաբանակից։ Հակառակն ավելի քան ծանր էր, սպանվում էին ճշմարտությունը, արդարությունը, այն էլ աստծո անունից։ Ինքը չէր կարող ներել ժողովրդակեր հոգևորականներին, աստված կնե՞ր, իհարկե՝ ոչ։ Ինքն աստծո հետ է, կօգնի երկնային տիրոջը ճանաչելու եկեղեցական գործիչների աստվածընդդեմ արարքները։ Մի՞թե եկել է այն ժամանակը, որ աստծո հետ լինելը պետք է ճանաչվի, գնահատվի որպես աստվածասպան գործունեություն, աստծո դեմ հանդգնելու արարք։

— Իսկ դու ի՞նչ կասես, տե՛ր,— կիսաձայն, հազիվ լսելի ձայնով մրմնջաց Գրիգորը,— դու ի՞նչ կասես քո անունը մրոտողներին, քո անունով աշխարհը կործանողներին...

— Անհանգիստ ես, Գրիգոր, ի՞նչ է պատահել...— հարցրեց Մուշեղը։

— Հոգիս տկար է, հայր սո՛ւրբ, կասկածներս դառնում են համոզմունք, իսկ համոզմունքներս լուծվում են, անէանում, դատարկելով հոգիս...

Մուշեղը փորձառու էր, նա զգում էր երիտասարդ գուսանի հոգեկան խռովքի ամբողջ սրությունը, ողբերգությունը, որը զորու չէր հաղթահարել մեծատաղանդ քնարերգուն։ «Կռիվն իր հետ է, իր դեմ և ես իրավունք չունեմ միջամտելու, հեշտացնելու կամ դժվարացնելու նրա կռիվը՝ ինքնամաքրման, կատարելության հասնելու ճանապարհին, որը նաև ինքնահայտնագործման, ինքն իրեն հասնելու և իրենը հայտնագործելու ճշմարիտ ճանապարհն է։ Գրիգորն ունի հանճարի բոլոր նախադրյալները, նման մեծերը կասկածները դժվարությամբ են հաղթահարում, բայց հաղթահարում են հիմնովին, անվերադարձ։ Նա փորձում է հաղթահարել եկեղեցական քարացած օրենքները, որպեսզի մոտենա աստծուն, մոտենա ինքն իրեն, չպետք է խանգարել նրա ինքնակռվին...»։

— Հոգիդ տկար չէ, ավելին՝ ապաքինվում է, Գրիգոր, օգնիր ինքդ քեզ, հեշտացրու ապաքինման դժվարությունները, մի՛ երկնչիր ոչնչից...

— Դժվար է, հայր սուրբ, շա՜տ է դժվար։ Հաճախ ինձ թվում է. թե հաղթահարում եմ մի բարձր լեռ, Արարատից էլ բարձր, լեռ, որ տանում է աստծո տիրույթները, սակայն փեշերիցս, ոտքերիցս, հոգուցս կախված են ախտավարակ էություններ, որ չեն թողնում հաղթահարելու վերջնթաց ճանապարհս, և ես շնչասպառ քիչ է մնում նահանջեմ աստծուն մոտենալու և նրան հասնելու իմ ցանկությունից...

— Մի՛ հուսահատվիր, Գրիգոր, դու կհաղթահարես դեպի աստվածություն տանող ճանապարհը։ Կհաղթահարես նաև քո հոգու ծանրությունը, որը դեռևս պատրաստ չէ աստծո հետ անմիջնորդ հաղորդակցվելուն։

Աստծո աչը քեզ վրա է, Գրիգոր, դու պատրաստվում ես մեծ փորձության, քո մեջ աստված փորձելու է հանճարին...

Գրիգորը լուռ էր, քայլում էր գլխահակ, չնայելով իր շուրջը, չտեսնելով ոչինչ, այլևս չլսելով ոչինչ մինչև Մուշեղի տագնապած ձայնը նրան արթնացրեց մտորումներից.

— Զգո՜ւյշ, օձը, Գրիգո՜ր...

— Ի՞նչ է,— ասես արթնացավ քնից։ Համարյա ոտների տակից արագորեն ճանապարհից դուրս գալարվեց վիթխարի գուրզան, փոշու մեջ թողնելով իր հաստ մարմնի գալարների պատկերը։ Վախեցավ։ Ձայներ թողնելով իր հաստ մարմնի գալարների պատկերը։ Վախեցավ։ Ձայներ Մուշեղը, սողունը կխայթեր, և ամայի ճանապարհին որևէ բալասանող միջոց անկարելի էր գտնել։ Այլևս մտքերը հավաքել չկարողացավ, նրանք բաժան-բաժան եղան, ինչպես քանդված հուլունքաշարը, որը գնաց թունավոր սողունի ետևից, որը նորից անգութ ճիգեր էր անում բևեռվելու հայոց կենսական հարցի՝ շինականի և եկեղեցու դարավոր վեճի վրա, իսկ հայացքը այլևս անկարող էր կտրել Արարատից, որը կախվել էր նրանց ճանապարհին՝ օդեղեն, աննյութեղեն հոյակապությամբ և աչքերը խտտացնող անբասիր սպիտակությամբ։

— Հրապուրում է, դյութում, այդպես չէ՞, Գրիգո՜ր...

— Ավելին, գերում է, աչքերս այլևս ոչինչ տեսնել չեն կամենում, չեն ուզում... Այս ի՞նչ կախարդական լեռ է։ Ինձ թվում է, հայր սուրբ, որ նա շնչավոր, մտածող արարած է մեզ նման, միայն թե մենք մահկանացու ենք, իսկ նա անմահ է, հավերժական։ Ակնդետ մեր ժողովրդի ջարդուփշուր, սակայն ջղուտ քարավանի շարժմանը, որը ցավոք միշտ չէ, որ վերընթաց է, թեև տևական չեն նաև վայրէջքները։ Կարևորը շարժման ուղղությունն է, հայր Մուշեղ, ինձ թվում է, որ շարժումն առաջընթաց է...

Մուշեղը չպատասխանեց, երկար խորհում էր։ Արևը ուր որ է իջնելու էր Արարատի թիկունքը և կարմրավուն գոտով ասես պսակել էր լեռան գագաթը և գոտևորել Արարատի զույգ գագաթները։

— Ես կցանկանայի, Գրիգոր, որ մեր ժողովրդի կյանքը հարատևեր իր լեռան հետ, իր լեռան չափ...

— Տա՛ աստված,— խաչակնքեց երիտասարդ տաղերգուն, նայելով սուրբ լեռանը, և նրա աչքերում Մուշեղը տեսավ արցունքի անհնազանդ կաթիլներ, որ գլորվում էին այտերն ի վար։

Աշունը բազմագույնով էր ներկել Արարատյան դաշտը, արարելով գույների շքեղ հրավառություն, գործի դնելով նկարչի իր ողջ հանճարը, ներկապնակի բոլոր գույները և փափուկ մի ջերմությամբ այժմ նայում էր իր իսկ ստեղծագործությանը։ Այգիների գույների մեջ խրված շենները

անցորդներին նայում էին մրգերի ժպտացող քաղցրությամբ, առատությամբ, որի ծանրության տակ ճկվել էին ծառերի ճյուղերը և մի մասն էլ կիտված էր այգիներում՝ ծառերի տակ։ Ծարավը հագեցնում էին արեվահամ երիտասարդ գինով, որ շինականները հյուրասիրում էին մարդկանց։ Ճանապարհն արդեն ծանոթ էր նրանց և մինչև Նախճավան անցան առանց լուրջ պատահարների, եթե կարելի է այդպես ասել. ուտելխմելով, մանավանդ, որ համարյա բոլոր շեներում նրանց ընդառաջ էին գալիս հարսանքավորները։ Աշուն էր, Արարատյան դաշտում լիության, հարսանիքների շրջան։ Հրաժարվել անկարելի էր. անկեղծ ուրախության տերերը նույնքան անկեղծորեն նեղանում էին անցորդներից, երբ սրանք հրաժարվում էին մասնակից լինել իրենց ուրախությանը, հաց կտրել սեղանից, մի գավաթ գինով օրհնել երիտասարդների միությունը։ Եվ այն պահերին, երբ մի թաս գինով Գրիգորը բարեմաղթում էր զույգերին երջանիկ կյանք և բազմաթիվ զավակներ, երբ տեսնում էր նորապսակների երջանկությունից և սիրուց փայլող խոնավ հայացքները, սիրտը ուռչում էր և՛ ուրախությունից, և՛ տխրությունից, և՛ տաք կարոտը, ընկերացած արևահամ գինուն, օրորում էր նրան, նրա էության մեջ ներարկելով սիրո դեռևս տաք սարսուռները, որոնց ինքը մնաց անհաղորդ, որոնք այժմ այրում էին նրա ջահել արյունը և հրամայաբար հուշում սիրելու բնական ցանկության մասին. «Երկնային տեր, ինչո՞ւ ամենամեծ զոհողությունը պահանջեցիր ինձանից։ Չէ՞ որ կյանքը նվիրաբերելը առավել հեշտ է, քան սերը զոհելը։ Չէ՞ որ այս էլ քանի տարի սիրով խենթացած քո ստրուկը չի կարողանում մոռանալ իր սիրած աղջկան, չի կարողանում հաղթահարել սեր կոչված հանճարի ասեմ, թե մեղքի սրտակեր դիմադրությունը։ Ես չեմ կարողանում մոռանալ Դրախտիկին։ Չի եղել մի օր, մի պահ, որ նրա կարոտը լքի ինձ, թողնի մենակ, թողնի իմ հոգին միայն աստծուն։ Տո՜ւր այն աստվածային հնարը, որ ես կարողանամ մոռանալ Դրախտիկին, այլապես մեղա քեզ, տե՛ր, բյուր անգամ մեղա, չցանկանալով դույզն ինչ դիմադիր լինել կամքիդ, ես, հողեղենս, իմ կամքից անկախ, հակառակ իմ կամքի, հակառակ աստվածությանդ հզորությանը, դավաճան պիտի հռչակվեմ, քանզի իմ հոգում Դրախտիկը զբաղեցնում է նաև այն տարածքը, որը միայն քեզ է պատկանում։ Ի՞նչ անեմ, տե՛ր, դու ես ինձ ստեղծել, իմ մեղքերի մեջ դու քո բաժին մեղքն ունես, տե՛ր, ինչո՞ւ ինձ այսպես ստեղծեցիր, որ սիրտս չի հանդուրժում բանականության իշխանությունը և հավասար ասպարեզ է ուզում։ Ո՞վ է մեղավոր, դո՞ւ, որ ստեղծողն ես, թե ես, որ քո ստեղծածն եմ։ Տե՛ր իմ, աշխարհը կատարելության կարիք ունի։ Մարդը աստվածանալու, աստված մարդանալու հնարը եթե պեղվի, աշխարհը կատարյալ կդառնա։

երկնային տե՛ր, օգնիր մարդկանց քեզ նմանվելու, քեզ ավելի լավ հասկանալու։ Մի կարճ պահ մարդացիր նաև ինքդ... Օգնի՛ր, օգնի՛ր, օգնի՛ր քո անարժան պաշտողիդ՝ հաղթահարելու կասկածները, օգնիր հասկանալու քեզ, մոտենալու մեծությանդ՝ քեզ ավելի լավ ճանաչելու, պաշտելու և ծառայելու համար»։

Իսկ տանտիրոջ հարկի տակ շարունակվում էր ուրախությունը, թընդում էր դհոլը, ճչում էր զուռնան, և երջանիկ հարսը Գրիգորի տաք ու պղտոր հայացքի առջև կամաց փոխարկվում էր Դրախտիկի։ Չէ՛, չէ՛, ինքը փոքր-ինչ շատ էր խմել, ենթարկվել էր գինու նենգ ազդեցությանը։ Հարկավոր էր վեր կենալ և շարունակել ճանապարհը, այլապես մի անզգույշ արարքով կարող է փչացնել հարսանեկան հանդեսը և իրեն վարկաբեկ անել։

— Վեր կենանք, հայր սո՛ւրբ, գինին արդեն թշնամիս է, պետք է թողնել սեղանը...

— Գնանք, Գրիգո՛ր, լուսանում է, մինչև ճամփա ելնելը արևը կծագի...

Ու շարունակվում էր ճանապարհը։ Մինչև գինու զորությունը թողնելը Գրիգորը Դրախտիկի հետ քննարկում էր իր սիրո, իր սրտի հարցերը այնպես, կարծես Դրախտիկն իր կողքին էր, վիճում էին, նույնիսկ խոռվում, վերստին հաշտվում։ Իսկ երբ անցնում էր գինու ազդեցությունը, չքանում, անէանում էր Դրախտիկը, թողնելով Գրիգորին իր անմարելի կարոտի հետ։ Այդ պահերին նոր մեկ-մեկ բացվում էր Գրիգորի լեզուն, խոսում էր Մուշեղի հետ, որը նույնպես խիստ մտահոգ էր և ինչ-որ բան թաքցնում էր Գրիգորից։ Սա զգում էր Մուշեղին, հասկանում էր նրա մտահոգությունը խիստ նման իրենին, քանի որ այդ պահերին խիտ ունքերի տակից նրա սև ու խոշոր աչքերը նայում էին երազուն և կարծես գուրգուրում էին մեկին, որը տեսանելի էր միայն իրեն և ուրիշ ոչ ոքի։

— Աչքերիդ մեջ կարոտ եմ կարդում, հայր սո՛ւրբ,— հանդգնեց մի անգամ։

Մուշեղն ասես արթնացավ քնից, աչքերի արտահայտությունը փոխվեց վայրկենապես, կարծես իրեն բռնել էին գողության մեջ, արագացրեց քայլերը և հառաչեց, հառաչեց բարձրաձայն և ուրիշ ոչինչ։ Երկար ժամանակ չխոսեց այլևս։ «Անպայման սիրահարված է,— որոշեց Գրիգորը,— և թունդ է սիրահարված, բայց ո՞ւմ...»։ Գլուխ էր ջարդում Գրիգորը և իր հարցին պատասխանել չկարողացավ, հանձնվեց իր կարոտներին։

Նախճավանում Մուշեղը չէր հանդգնում երևալ մարդաշատ փողոցներում, իսկ կրոնավորներից պարզապես թաքնվում էր, փախչում, քանզի պանդոկում կամ պատահական խոսակցություններից պարզվեց, որ իշխանական և եկեղեցական ուժերի պարտությունը թոնդրակյանների կողմից վերագրվում է Սաթենին և այն ածդահա կրոնավորին, որը փոխեց կովի ընթացքը և այլն, և այլն։ Մուշեղի միջամտությունն այդ բախման մեջ տակավին չէր մոռացվել, ավելին, իրողությանը գումարվել էր նաև ժողովրդական վերադիրը և այժմ անծանոթ հոգևորականին այնպիսի գերբնական արարքներ էին վերագրում, որ կարելի էր կարծել, թե ինչ-որ վիպասք է պատմվում, մանավանդ, որ այդ վիպասքը զարդարված է գերբնական գեղեցկությամբ և քաջությամբ օժտված հերոսուհով, որն ավելի գրավիչ և հավաստի է դարձնում պատումը։ Պատմում էին և՛ թշնամիները, և՛ մարդիկ, որոնց դիրքորոշումը և դավանանքն անհնար էր պարզել։ Պատմում էին, և բոլորի շուրթերին պատումը նույն բովանդակությունն ուներ, նույն մանրամասները, միայն թե թշնամիների՝ հակաթոնդրակյանների շուրթերին պատմությունը համեմվում էր անեծքներով, նզովքներով և նույնիսկ հայհոյանքներով։ Մուշեղը զգում էր իր վիճակի վտանգավորությունը և խուսափում էր հասարակության մեջ երևալուց։ Գրիգորը նկատեց, որ նրան լրտեսում կաս որոնում են ինչ-որ մարդիկ, և անհանգստացավ։ Եթե ճանաչվեր Մուշեղը՝ անհնար կլիներ նրան կախաղանի թոկից ազատելը։ Իր կասկածների մասին նա շտապեց հայտնել Մուշեղին, որպեսզի նա հանկարծակիի չգար և միասին որոշեին իրենց հետագա անելիքը։ Բայց Մուշեղին ամեն բան հայտնի էր. նա Գրիգորին հանգստացրեց, ասելով, որ դրանք իր բարեկամներն են, որ նրանք կարևոր տեղեկություններ են բերել Սյունյաց լեռնաշխարհից, ուր թոնդրակյան ապստամբների և իշխանական ու հոգևոր ուժերի միջև ահավոր և արյունալի բախումներ են տեղի ունենում, որ ինքը փոխելու է իր ճանապարհը և Վասպուրական գնալու փոխարեն բարձրանալու է Սյունյաց լեռները՝ միանալու ապստամբներին և կատարելու աստծուն ու շինականներին տված իր երդումը։

— Հայր սուրբ,— անմիջապես իր անելիքին անցավ Գրիգորը,— ես քեզ չեմ լքի, ես Անիում էլ այդ ասացի, մենք միասին կգնանք այնտեղ, ուր արյունալի են բախումները և արյունոտ վեճի դատավորն աստված ինքն է...

— Խորհուրդ չէի տա, Գրիգոր,— մռայլվեց Մուշեղը,— դու կռվի հետ գործ չունես, քո շնորհները աստվածատուր են և վտանգելը կլինի սրբապղծություն, աստվածընդդեմ բան...

— Ո՛չ, հայր սուրբ, այնտեղ, ուր գլխավոր գործող անձանց մեջ գեղեցկուհի կա, դու իրավունք չունես իմ փրկության մասին հոգալու, չէ՞ որ աստվածատուր է նաև գեղեցկությունը, չէ՞ որ գեղեցկությունն ինքնին

տաղանդ է նաև, հայր սուրբ, իսկ կինը, երբ մասնակից է տղամարդկանց գործերին, երբ նրա ձեռքին մերկացած սուր կա, խոստովանիր, որ իմ չմասնակցելն այդ բախումներին՝ ինձ կզրկեր տղամարդ կոչվելու իրավունքից և իմ գլուխը կպսակեր կնոջ գլխաշորով և խայտառակությամբ, այնպես որ...

— Լավ, լավ,— ձեռքը թափ տվեց Մուշեղը,— բանավիճելու հարկ չկա, դու կգաս ինձ հետ Սյունիք, բայց խոստացիր, որ քիթդ չես խոթի կռվի մեջ, մանավանդ, որ որքան ես եմ քեզ հասկանում, դու տակավին չգիտես քո տեղն այս արյունոտ բախման մեջ...

Գրիգորը լռեց, պատասխան չուներ։ «Նորից Մուշեղը հաղթեց ինձ։ Իսկապես ում հետ եմ ես։ Կռիվ է, սրերը մերկացած են և արյուն են տալիս։ Ես ո՞ւմ եմ պաշտպանելու և ո՞ւմ արյունն եմ ոթելու։ Թոնդրակյանների, ո՞չ, ժողովրդյան արյունը ես ոթելու ուժ չունեմ, իրավունք չունեմ, մանավանդ նրանց խռովության մեջ ճշմարիտ, արդարացուցիչ շատ բան կա։ Եկեղեցականների, դժվա՞ր է, չեմ կարող, եկեղեցականների դեմ ըմբոստանալը գուցե մեծ մեղք չէ, նրանք շատ և անքավելի մեղքեր ունեն, սակայն նրանց արյունը ոթել ես չեմ կարող։ Ուրեմն... Իմ համոզմունքներով ես մոտ եմ թոնդրակյաններին, իսկ մարդկային կապերով և ուսմունքով թշնամի եմ նրանց... Իսկ ո՞ւմ կողմն է աստված։ Իսկ ի՞նչ հնարքով իմանալ, թե ո՞ւմ կողմն է նա, ի՞նչ հնարքով։ Աստված կարծիք հայտնելու սովորություն չունի։ Նա վերահսկում է մեզ, մեր արարքները։ Նա որոշում է մեր տեղը այս և ետմահու կյանքում։ Ուրեմն... Ես պատրաստ չեմ այս կռվին, ես չգիտեմ իմ տեղն այս կռվում։ Եթե կռիվ է, ուրեմն, չեզոքություն չկա։ Եթե թոնդրակյանների հետ չեմ, ասել է, դեմ եմ նրանց։ Եթե եկեղեցականների հետ չեմ՝ ուրեմն դեմ եմ և նրանց։ Եթե իմ տեղը չգտնեմ այս խառն ժամանակներում, ուրեմն երկուսի կողմից թշնամի կճանաչվեմ... Եթե հաստատապես որոշեմ իմ տեղը, կշահեմ մեկ թշնամի և մեկ բարեկամ, որը կկանգնի թիկունքիս, զորավիգ կլինի ինձ։ Բայց ես չեմ կարող վերջնական ընտրություն կատարել հակոտնյա բանակների, իրարամերժ վարդապետությունների միջև։ Չե՛մ կարող։ Չեմ կարող, ի՞նչ անել, տեր երկնային։ Կգնամ Սյունիք, այնտեղ կերևա...»։

— Ուրեմն, անպատճա՞ռ է գալդ,— հարցրեց Մուշեղը։

— Անպատճա՛ռ...

— Նկատի ունեցիր, ինձ հետ թոնդրակյանների մոտ երևալդ կփոխի կյանքիդ ամբողջ ընթացքը։ Բայց շտապել հարկավոր չէ, դու մեզ հարկավոր ես ոչ թե կռվելու և մեռնելու համար, այլ... Լավ, քո հարցերը կհոգանք այնտեղ՝ տեղում...

Մի քանի օր անց նրանք բռնեցին լեռները տանող ոլորապտույտ ճանապարհը։ Ցրտում էր եղանակը, խոր աշունը եղյամ էր դնում դեղնած կանաչին, արևը թուլացած ելնում էր իր ժամանակին, սակայն չէր կարողանում տաքացնել աշխարհը։ Դեռ ցերեկ չդարձած՝ արևը կորչում էր նոսր, սառն ամպերի մեջ։ Աշնանային ցրտերը միացան լեռնային սառնամանիքներին, և ճանապարհը դժվարացավ։ Ստիպված մի քանի շեներում կանգ առան, Գողթան գուսանների իրենց հին արհեստը, թե արվեստը նորից դրին գործի, որպեսզի կարողանային տաք շորեր ձեռք բերել, այլապես անհնար կլիներ շարունակել ճանապարհը և խուսափել հիվանդությունից։ Անցավ ևս մի քանի օր, և լեռներին իջավ առաջին ձյունն ու նստեց։ Նստեց տիրականորեն և դարձավ լեռնաստանի տիրակալը։

— Պետք է շարունակել ճանապարհը,— Գրիգորի հարցական հայացքին պատասխանեց Մուշեղը,— այնտեղ՝ Ավելադաշտ շենում դեպքերը զարգանում են բավական մեծ արագությամբ, մենք այնտեղ հարկավոր ենք, Գրիգոր...

— Ավելադա՞շտ ասացիր, հայր սուրբ, ուրեմն հասնո՞ւմ ենք...

— Այնտեղ չեմ եղել երբեք, Գրիգոր, միայն գիտեմ, որ ըմբոստ են շինականները և տերունական ու եկեղեցական զորքերի դեմ կանգնելու վճռականություն ունեն և արդեն քանի օր ճակատում են թվով իրենց գերազանցող ուժերին... Մենք այլևս ուշանալու իրավունք չունենք, մանավանդ մնացել է երկու-երեք օրվա ճանապարհ...

Շենը երևաց միանգամից։ Ձորագլխին բազմած ամրոցի նման անառիկ նստել է լեռնաբազուկի քարե տափարակի վրա։ Միայն թիկունքում մի բարակ, քարախռիվ ճանապարհով կարելի է մտնել շենը, այն էլ երևի ամրացրել, անառիկ էին դարձրել շինականները, գյուղ տանող այլ ճանապարհ չկար, երեք կողմերն էլ անդունդներ էին, արծիվների բնակատեղի և որսատեղի։

— Ո՞նց են ապրում այս քերծերի վրա։ Նույնիսկ քարայծներին է անմատչելի այս դիվական ժայռաբույնը...— խոսում էր ինքն իրեն Մուշեղը։

— Բայց նայիր շենի եկեղեցուն, թե ի՞նչ հրաշալի կառույց է,— նկատեց Գրիգորը։— Եվ ի՞նչ հնարքով են ժայռագլխին կառուցել նման սքանչելիքը...

— Կառուցել և նվիրաբերել սատանաներին,— ժպտաց Մուշեղը։

Տերունական պատժիչ զորախումբը նկատելի դարձավ, երբ մոտեցան ձորաբերանին։ Շեն տանող ճանապարհի երկու կողմում, ճանապարհից ներքև խփել էին վրանները և այժմ խարույկների շուրջ բոլո-

ված զինվորները տաքանում էին և ընթրում, քանզի նկատելի էր կրակների վրա դրված կաթսաներից բարձրացող գոլորշին, որ ծխի հետ ոլորվում էր վեր և ցնդում առավոտյան պաղպաջուն օդում։

— Լսիր, Գրիգոր, դու ինձ հետ շեն մտնել չես կարող։ Երեքով դժվար է աննկատ անցնել զորաշղթաների միջով։ Կռվելը զորականների հետ, որքան հասկանում եմ, քո գործը չէ, փորձ չունես։ Առաջին իսկ ընդհարմանը կարող է, սիրելիս, կատարվի անուղղելին։ Այս երկու։ Հետո թոնդրակյանների բանակում երևալը քեզ համար կլինի ճակատագրական, դու այլևս չես կարող վերադարձ ունենալ դեպի խաղաղ վանքախցերը, ուր քեզ սպասում են մաքուր, գրելու պատրաստ մագաղաթները։ Այս էլ երեք։ Այնպես որ...

— Երկար ես խոսում, հայր սուրբ, շա՜տ երկար։ Իսկ ի՞նչ ես առաջարկում։ Որտե՞ղ լինեմ ես։ Որտե՞ղ է իմ տեղը այս մեծ թոհուբոհում։ Չլինի՞ թե ինձ ուղարկում ես տերունական զորքերի բանակատեղին, ուղարկում ես թշնամական բանակը, որ ստիպված քո դեմ ճակատեմ...

— Ճիշտ ես կռահում մտքինս, Գրիգոր։ Դու կգնաս տերունական բանակը, բայց ճակատելու փորձ չես կատարի, լսո՞ւմ ես։ Դու հիմա թոնդրակյանների հետ լինելու իրավունք չունես։ Ստացվել է այնպես, որ քո կյանքի պահպանությունը երկնային տերը հանձնել է ինձ և ապրսպրել, որ կյանքովս, գլխովս պատասխան տամ քո կյանքի համար։ Դու պետք է կատարես իմ պահանջները, Գրիգոր, այլապես ես քեզ այս տուրուդմփոցից հետո կթակեմ, իմացած եղիր...— և լայն ժպտաց։

— Հիմա ի՞նչ եմ անելու ես,— կոտրված խոսեց Գրիգորը,— տերունական զորախումբն ինձ անմիջապես կկալանավորի որպես թոնդրակյան լրտեսի, սակայն շինականներն ինձ կընդունեն որպես յուրայինի։ Տեսնում ես, որ իմ միակ ապահով տեղը ապստամբների մոտ է...

— Դու մոռանում ես, Գրիգոր, որ անցաթուղթ ունես գրված և կընքված Նարեկավանքի ճգնակենցաղ միաբանության վանահոր, ուսուցչապետ Անանիա Նարեկացու ձեռքով։ Այդ անցաթուղթը քեզ համար անփոխարինելի դյուրություններ ստեղծեց մայրաքաղաքում, այստեղ առավել ևս քեզ կօգնի թոնդրակյանների դեմ մղվող անմարդկային պատերազմը տեսնելուն, ո՞վ գիտե գուցե նաև գրելուն... Հետո իմացիր, Գրիգո՜ր, հայ եկեղեցին քեզ ճանաչում է, քո տաղերն ու շարականները շրջում են Հայաստանով մեկ, քեզ հիանալի գիտեն գրիչներն ու ծաղկողները։ Դու հայտնի ես հայաշխարհին...

— Բայց ես ցանկանում էի քեզ հետ լինել, հայր սուրբ, միասին լինեինք...

— Դա հիմա անհնար է, Գրիգոր... Մենք պարտավոր ենք լինել հակոտնյա բանակներում... Իսկ հիմա գնա, իջիր բանակատեղի քո Հակոբիկի հետ, իսկ ես պետք է խորհեմ, տեսնեմ, թե ինչ սատանայական հնարքով կարող եմ ընկնել Ավելադաշտ՝ օգնելու իմ կուսակիցներին...

Ձորի ոլորանն անցնելիս Գրիգորը ետ նայեց։ Մուշեղը կանգնած էր ձորի պռնկին և հայացքով ճանապարհում էր իրենց։ Հետո ձեռքը թափահարեց և հեռացավ ձորաբերանից։ Երրորդ ոլորանի հենց սկզբից ասես գետնի տակից բսնեց զորական պարեկը։ Երկուսն էին, ձեռքով կանգնելու կտրուկ նշան արեցին։

— Կանգնի՜ր։ Ովքե՞ր եք...

— Աստծո ծառաները, էլ ո՞վ...— պատասխանեցին։

— Աստծո ծառաներ ենք բոլորս, դուք ի՞նչ եք շրջում էս կողմերում։

— Ուզում ենք տեսնել զորապետին և աստծո ծառաներին...

— Ի՞նչ գործ ունեք նրանց հետ։ Չլինի՞, թե ցանկանում եք նետահարվել ժայռերում թաքնված հերձվածողներից։ Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, ինչո՞վ կհաստատեք ձեր ով և ինչ լինելը։

— Մագաղաթ-անցագիր ունեմ,— ասաց Գրիգորը, ձեռքը սքեմի գրպանը տանելով։

— Մեզ ցույց տալ հարկավոր չէ,— ասաց զինվորներից երևի ավագը,— մենք մագաղաթը ընթերցել չենք կարող, ներքևում սրբազանին տվեք, նա կկարդա։ Ա՛յ, ասացեք, թե ո՞վ էր ձեր երրորդ ընկերը, այն ածդահան, և ո՞ւր չքացավ ձեր կողքից...

«Ուրեմն, նկատել են Մուշեղին։ Ուրեմն, լրտեսել են մեզ։ Պետք է զգույշ և ուշադիր լինել։ Երևի այստեղ ամեն քարի, թփի տակ մարդիկ կան, որ հսկում են շենի շրջակայքը։ Դժվար ժամանակներ են»։ Զինվորը սպասում էր իր հարցի պատասխանին։

— Այն երրորդը մեր ընկերը չէր, նա ուղեկցող էր, որ բերեց, հասցրեց այստեղ և երևի վերադարձավ...

— Ո՞ւր...— կտրեց նրան պարեկը։

— Ի՞նչ իմանամ՝ ուր...— նեղանալ ձևացրեց Գրիգորը։— Շատ երկար եք հարցուփորձում։ Ասացի, որ հարկավոր ամեն բան ունեմ ինքնությունս ցույց տվող։ Եթե կարդալ չգիտեք, թող ձեզանից մեկն ուղեկցի մեզ սրբազանի մոտ, այնտեղ ամեն բան կպարզվի...

— Մեր գործը, տեր կրոնավոր, այնպիսին է, որ պիտի հարցուփորձենք, իսկ դուք պարտավոր եք պատասխանել, հակառակ պարագայում զենքի ուժով ձեզ կքշենք այս սատանաների բնակատեղիից...

— Լավ, հասկացանք,— հաշտ պատասխանեց Գրիգորը։

— Դե, որ հասկացաք, բարի ճանապարհ ձեզ, գնացեք, թող կրոնավորները կարդան ձեր մագաղաթը, թող նրանք էլ կարգադրեն ձեր մասնակցությունը այս արյունոտ գործին...

Զորախմբի տարածքը նույնպես հսկում էին սպառազեն պահակները։ Գրիգորին և Հակոբիկին կանգնեցրին և զինված պահակի ուղեկցությամբ տարան ճամբարի կենտրոնում գտնվող սև և շքեղ վրանը։

— Ո՞ւմ մոտ ենք գնում,— հարցրեց Գրիգորը։

— Սրբազանի,— կարճ պատասխանեց պահակը։

— Թե՞ զորապետի,— նորից հարցրեց Գրիգորը։

— Սրբազանը նաև զորապետն է,— եղավ պատասխանը։

— Ի՞նչ եք ասում,— զարմանքից քար կտրեց տաղերգուն,— իրա՞վ...

— Կռվում են աստծո դեմ, աստծո հեղինակությունը հարկ է, որ պաշտպանեն նրա սպասավորները։ Աստծո դեմ և հանուն աստծո, այս է պատերազմի բնույթը,— փիլիսոփայեց զինվորը։

— Իսկ զորապետներ չկա՞ն...

— Առանց նրանց զորք կլինի՞...

— Ովքե՞ր են,— ասաց Գրիգորը ու փոշմանեց։ «Հիմա այս զինվորն իրավունք ունի ինձ լրտեսի տեղ դնելու։ Հարցերն իմ անպատշաճ են և կրոնավորի հետաքրքրություններից դուրս։ Անհարիր նման պարագաների համար»։ Եվ իրոք զինվորը կանգ առավ և ձեռքով նշան արեց, որ կանգնեն նաև ուղեկիցները։

— Մեզ հրամայված է,— ասաց հատ-հատ բառերը շեշտելով,— լրտեսներին և լրտեսության մեջ կասկածելիներին առանց դատի, առանց հետաքննության՝ սրահարել կամ նետահարել։ Ասացե՛ք, ովքե՞ր եք դուք...

— Մենք լրտեսներ չենք,— շշփոթվեց Գրիգորը,— մենք հակաթոնդրակյաններ ենք և երդվել ենք կռվել նրանց դեմ...

— Ի՞նչ իմանամ,— ասաց զինվորը,— հակաթոնդրակյաններ լինելիներդ ճակատներիդ հո չի գրված, ախր, այնպիսի հարցեր եք տալիս, որ հատուկ են միայն լրտեսներին...

— Իսկ ի՞նչ ես կարծում, զինվոր, լրտեսը հիմա՞ր է, որ տա իրեն մերկացնող հարցեր...

— Ճիշտ ասացի՛ր,— ուրախացավ զինվորը,— հոգնել ենք անմեղ մարդկանց սպանելուց, մի բան ասեմ, խնդրում եմ սրբազանին չասեք, ես էս կռվից բան չեմ հասկանում։ Թոնդրակյաններն էլ են աստծո անունից խոսում, հակաթոնդրակյաններն էլ... Եվ ոթում են իրար արյուն և ինչպե՞ս, ի՞նչ անաստվածությամբ են կոտորում իրար, չեք կարող պատկերացնել։ Դե, գնա՛նք, գնա՛նք, ցուրտ է, երևի նաև քաղցած եք...

Սրբազանի սպասավորը մանրամասնորեն տեղեկացավ Գրիգորի ով և որտեղից լինելը, ընթերցեց ուսուցչապետ Անանիայի հանձնարարականը և սրբազանի մոտ ուղեկցեց Գրիգորին, նախօրոք սրբազանին ասելով նրա մասին։

Սրբազանը նստած էր գահավորակին։ Գրիգորը խոնարհվեց և համբուրեց նրա աջը։ Զարմանալի հագուստ-կապուտակի մեջ էր Սյունյաց հոգևոր առաջնորդը։ Գլուխը զարդարում էր թանկագին քարերով զարդարված թագը։ Կրծքին հանգչում էր ահագին, ոսկյա խաչը, որի չափսերը զարմանք պատճառեցին երիտասարդ քնարերգուին։ Այնքան մեծ էր խաչը, որ բռնել էր կրծքի և պարարտ փորի ամբողջ տարածքը։ Մեջքին կապված էր զինվորական գոտին, որից կախվել էր և տարուբերվում էր արծաթազօծ սուրը՝ նույնպես ահագին մեծության։

— Զզարմանաս, որդյա՛կ իմ, չնախանձես ծերուկիս, ժամանակներն են ստիպել, որ ես մեր սուրբ նախնյաց նման մի ձեռքիս սուր, մյուսին՝ խաչ մտնեմ կռվի ասպարեզ, քանզի այս կռիվը մեր արյան գործն է՝ աստված է ամբաստանվողը և նրա պատվի ու սրբության զինվորները մենք ենք՝ նրա սպասավորները։ Բախտավոր էր Ղևոնդ Ծրեցը, որ Ավարայրի սուրբ ճակատամարտում պաշտպանում էր հայրենի ծուխ ծխանին և մեր սրբազան տիրոջը։ Դժբախտ եմ ես, որդյակ իմ, որ ճակատում եմ ոչ օտարի, այլ յուրայինների, իմ արյունակիցների դեմ և ոթում եմ, թեև հեթանոս, թեև հերձվածող, թեև սատանայակերպ, բայց միևնույն է՝ հայի արյունը... Օ՜, դժբախտ եմ ես...

Եպիսկոպոսը խեղդվում էր շնչարգելությունից, վզի երակները ուռել էին պայթելու աստիճան, բառերը կուլ էին գնում հուզմունքին։ Նա բարձրացավ, կանգնեց, և նոր միայն Գրիգորը տեսավ, թե որքան հաղթահասակ է սրբազանը և միաժամանակ որքան գեր։ Կիսակրոնական և կիսազինվորական հագուստը այնպիսի պատկառելի տեսք էր տվել նրան, որ շփոթված տաղերգուն վերստին առաջացավ և վերստին իր շուրթերին հպեց նրա աջը։ Սրբազանն իջավ գահավորակից. նա զգում էր իր թողած մեծ տպավորությունը երիտասարդ վարդապետի վրա։

— Որդյա՛կ իմ, ինչ սկսվել է այս ահավոր հարձակումը աստծո և աստվածային նստավայրերի վրա, ես համարյա ամեն օր քուն թե արթմնի տեսնում եմ բարձրյալին, նրա վրեժի կոչող հայացքը կիզում է իմ հոգնած մարմինն ու մաշված սիրտը, ես նրան երդվում եմ սրով ու խաչով՝ հավատարիմ լինել և իմ անմահությունը որոնել այնտեղ, ուր ընկնում են

նրա հավատարիմ սպասավորները։ Ուրեմն, որդյակ իմ, նորից երդվենք լինել երկնային ստվերը, եթե հարկ է՝ ընկնենք հանուն նրա, չերկնչենք ոչ թշնամու նախիրներից, ոչ էլ մահից, զի հանուն երկնային մահ ընդունելը անմահություն է...

Հետո սրբազանը մոնչաց և սկսեց ձեռքով թրատել օդը։ Աչքերը վառվում էին, բիբերը պտտվում ակնակապիճների մեջ, խոպոտ կոկորդից մերթընդմերթ դուրս էին թռչում «Օ՜ն, հառա՜չ, դեպի թշնամին...» բառերը։ Խաչը բարձրանում էր, իջնում անտեսանելի թշնամիների վրա, խաչը հայտնի չէր, թե ում էր հայհոյում, ում նզովում, և Գրիգորը սաստիկ վախեցավ, ցանկացավ վրանից դուրս վազել և օգնության կանչել սպասավորներին, սակայն սրբազանը հայացքով սաստեց նրան, և Գրիգորը տատամսած նայում էր այդ զարմանալի տեսարանին։

— Ես այդ Ավելադաշտը... կդարձնեմ ավերադաշտ, այ այսպես, այսպե՜ս, այսպե՜ս...— և ձեռքով թրատում էր աջ ու ձախ։ Տեսարանը ոչինչ չէր հուշում Գրիգորին, չէր հասկանում ի՞նչ է կատարվում սրբազանի հետ։ Մի՞թե նա խելագար է, ո՜չ, ո՜չ, չի՜ կարող Սյունյաց հոգևոր գահին նստել հոգեկան այսքան անհավասարակշիռ մեկը։ Գուցե խաղում է, ախր, ինչո՞ւ պիտի իմ առջև նման անմարսելի խաղեր սարքի այսքան ազդեցիկ հոգևորականը։ Կապրենք, կտեսնենք այս երևույթի իմաստը։ Իսկ սրբազանը շարունակում էր իրենը։ Նա անիծում էր ցուրաբերդցիներին, որոնք ավերեցին սրբասուրբ Տաթևը, ավելադաշտցիներին, որոնք ընկերակցեցին նրանց այդ ահավոր ավերածությանը և սպառնում էր բոլորին, բոլորին անխտիր,— բոլորիդ կջնջեմ, չեմ թողնելու ոչ մի կենդանի շունչ, ոչ մի հաշող շուն աստծո սպասավորների վրա։ Այսպե՜ս, այսպե՜ս... Բոլոր զենք բռնող այր ու կին մարդկանց ցցի կհանեմ, մյուսներին ժայռից անդունդ նետել կտամ, կպատժեմ հանուն աստծո և հավատի, կպատժեմ ի հեճուկս չարագործությունների, որոնք սասանեցին աշխարհս Սյունյաց և պատճառ դարձան այսքան արյան ու արնահեղության... Կոչնչացնեմ, կավերեմ, այսպե՜ս, այ այսպե՜ս...

— Բավական է, սրբազան,— ճչաց ի վերջո երիտասարդ վանականը։— Բավակա՜ն է, ի՞նչ է պատահել քեզ, աստծո մեծանուն ծառայիդ։ Ախր, այս ամենը շատ դաժան է... Հանգստացիր, ի սե՜ր աստծո...

— Ազդում է, հա՞, շա՜տ է ազդում, հրաշալի՜ է։— Խոսեց հանկարծ միանգամից փոխված սրբազանը,— որդյակ իմ, ես անկարող եմ մարտի դուրս գալ ավելադաշտցիների դեմ, ծեր եմ, հիվանդ և աստծո խաղաղ սպասավոր։ Ես չեմ կարող ի մարտ առաջնորդել զինվորներին, քանզի սպանության առաջնորդել մարդկանց՝ ոչ իմ գործին, ոչ իմ խղճին համատեղելի բան չէ։ Բայց քանի որ խռովարարները աստծո և նրա երկրային սպասավորների դեմ են ծառացել, քանի որ կռվի բնույթը խիստ հոգևոր է, ես պարտավոր եմ կռվի տանել իշխանական զորքերը, ես ինձ տրամադրում եմ կռվազանության, անգթության, արնահեղության, այլապես այս անողորմ կռվում պարտությունն անխուսափելի է։ Մի խոսքով, խելագար եմ խաղում իսկականից չխելագարվելու համար...

— Զարմանալի՜ է, խիստ զարմանալի,— չդիմացավ Գրիգորը,— դո՜ւ, հոգևորական, ինչ գործ ունես մարտադաշտում։ Թող զորքը մարտի առաջնորդեն զորականները, սեպուհները, իսկ դու քո սրբազան բարձունքից ղեկավարիր նրանց, չէ՞ որ քո այստեղ լինելն անիմաստ է...

— Սխալվում ես, որդյակ իմ, այս կռվում, իհարկե, զորքն առաջնորդում են զորապետները, սեպուհները, բայց այս կռիվը նրանց կռիվը չէ, թոնդրակյանները հարձակվում են վանքերի ու եկեղեցիների վրա, ոչնչացնում են կրոնավորներին, թալանում, խլում են վանքերի ու եկեղեցիների հարստությունը։ Նրանք իմ թշնամիներն են, թեև բարեկամ չեն նաև աշխարհիկ իշխանություններին։ Այստեղ բանակած զորքին, որոնք շինականների զավակներ են, եթե թույլ տանք, հենց իրենք կթալանեն վանքերն ու եկեղեցիները... Դժվար կռիվ է այս կռիվը, որդյակ իմ, և ամենամեծ ողբերգությունն այն է, որ ճակատում են յուրայինները, կռիվ է ազգի ներսում և կռվում են այնքան անհաշտ, անողոք, որ չեն խնայում նույնիսկ կանանց ու երեխաներին։ Ա՜յ, ես ինձ ընտելացնում եմ կռվի հենց այդ տեսակին...

— Ներիր ինձ, բյուր անգամ ներիր, սրբազա՜ն, եթե ասեմ, թե երանի չկարողանայիք ընտելանալ կռվի այդ տեսակին,— չդիմացավ Գրիգորը,— կարելի չէ հոգևոր իշխանությունների այդ աստիճան շարանալը։ Եվ աստվածահաճո չէ։ Նույնիսկ աշխարհիկ և զինվորական իշխանություններին վայել չէ հոգով վայրագանալը...

— Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման,— ընդհատեց հոգևորականը։

— Իսկ ո՞ւր մնաց աստվածային ներողամտությունն ու գթասրտությունը,— չնահանջեց Գրիգորը,— աստված գութ է, տեր իմ, գթասրտության տիպար, նա չի հանդուրժում ոչ մի տեսակի կռիվ, ո՞ւր մնաց թե կռվի այն տեսակը, ամենաանմարդկային տեսակը, որ ցանկանում ես դու օրինականացնել, սրբազա՜ն...

— Սպասի՜ր, սպասի՜ր, դու ո՞վ ես, ի՞նչ գործ ունես այս գեհենում, այստեղ, և ո՞վ է խնդրել քեզ դասեր տալ Սյունյաց հոգևոր առաջնորդին,— սրբազանն այս բառերն արտաբերեց շուտասելուկի նման, Գրիգորը ոչ նրա դեմքին, ոչ էլ խիստ արտահայտիչ հայացքում չտեսավ ոչ չարության, ոչ էլ բարկության ցոլքեր, ընդհակառակը, նրա փափուկ,

կկոցվող աչքերում ինչ-որ նույնիսկ անսպասելի ջերմության կայծեր ցոլացին ու հանգան։

Սրբազանը երեք անգամ ծափ տվեց, և սպասավորն արձանացավ վրանի մուտքի մոտ.

— Ո՞վ է այս երիտասարդ հոգևորականը, ինչո՞ւ է նա այստեղ, թույլտվությունն ո՞ւմն է..

— Ես արդեն ասել եմ,— ասաց սպասավորը,— ամեն բան կարգին է, սրբազա՛ն, նա Արծրունյաց աշխարհից է, Նարեկավանքի ճգնակենցաղ միաբանությունից, Գրիգորը նաև քնարերգու է, նշանավոր անձ...

— Այո՛, այո՛, հիշեցի,— բացվեց սրբազանի դեմքը,— ուրեմն, Նարեկավանքից ես, նշանավոր վայր է։ Անանիա Նարեկացին աստվածային լուրջ բանավեճ է վարում, անարգանքի սյունին գամելով թոնդրակյանների աստվածընդդեմ շարժումները և նրանց սնամեջ վարդապետությունը։ Խելոք գլուխ է։ Անկաշառ և անխարդախ անձ է, դու, ուրեմն, վանքի դպրանոցից ե՞ս, այո՛։ Ուրեմն, դու նաև տաղերգու ե՞ս, այո՛,... Այո՛, այո՛, տաղերգու ես, խղճից ես բարբառում։ Պատճառը պարզ է, հոգիդ բանաստեղծի է, փխրուն։ Էլ ո՞ւր ես եկել այս դժոխքը։ Քո մուսաները կչքվեն գրողի ծոցը։ Այս ժայռոտ լեռը նման չէ Պառնասի։ Այստեղ մուսաներ չեն բնակվում, սատանայատեղի է Ավելադաշտը։ Դու կարո՞ղ ես ենթադրել, որ այս բարբարոսները ոչ թե սպանել են շենի տերտերին, այլ խայտառակամահ են արել, գլխիվայր կախել են զանգակատնից... Օ՜խ, անաստվածներ... Հեթանոսներ, գաղափարի պոռնիկներ... նման անգթություն... Եվ գիտե՞ս, որդյակ իմ, գիտես, թե ինչպե՞ս են մարտնչում տերունական զորքերի դեմ։ Դևերի նման։ Հոգեառների նման։ Համարյա մեկ ամիս է երեք հարյուր զինվոր գրոհում են այս անիծված շենը, ապարդյո՞ւն։ Զուր ջանքեր, զուր զոհեր։ Մաշվում են, նոսրանում վաշտերը, արյունը կա, արյան գինը չկա։ Ի՞նչ պիտի անենք հետայսու, չգիտենք։ Ահա դու էլ եկել ես այստեղ, միտքդ ի՞նչ է, որդյա՛կ իմ, եկել ես մեր արածով ոգևորվելու, թե՞ ցանկանում ես մեզ ոգևորել։ Ճիշտն ասեմ՝ ոչ ոգևորվելու բան կա այստեղ, ոչ էլ մարտնչողներն են հակված ոգևորվելու։ Զմեռն արդեն նստել է վերևում, ձորերում դեռ մի քիչ տաք է, բայց սառնամանիքները սկսվում են նաև այստեղ։

— Ի՞նչ ես մտադիր անելու, սրբազա՛ն...

— Պահանջել եմ ավելացնել զորաքանակը։ Վերջնական գրոհի ելնելու պատրաստության մեջ ենք... Գրավել այս անիծյալ շենը և բնաջնջել։ Ավելադաշտը դարձնել ավերադաշտ, մեղավորներին, իսկ մեղավոր են բոլորը, ողջ շենը, սրի քաշել, կախաղանի թոկը հագցնել վզերին, որպեսզի գոնե գերեզմաններում հանգստանան սրի քաշված աստծո հարյուրավոր սպասավորների չարչարված մարմինները։ Հազարավոր անմեղ զոհեր վրեժի են կոչում մեզ հանուն աստծո, հանուն Քրիստոսի և հայ հավատի... Օ՜ն, հառա՜ջ դեպի թշնամին...

Եվ վերստին կերպարանափոխվեց սրբազանը։ Աչքերը նորից թռան ճակատը, ձեռքերը մեկնվեցին դեպի սուրն ու խաչը, պատյանի մեջ անհանգստացավ սուրը, և վախեցած Գրիգորը ծունկ չոքեց կատաղության մեջ գալարվող սրբազանի առջև։

— Սրբազան, հա՜յր իմ,— կերկերաց նրա ձայնը,— վերջ տուր այս ամենին կամ թույլ տուր քո ծառային հեռանալ այստեղից։ Ախր, ի՞նչ է կատարվում քեզ հետ, սրբազա՛ն, այս տեսարանը սարսափելի է, անկարագրելի...

— Դու էլ տեսնեիր Տաթևի ավերակվելը, Ավելադաշտի եկեղեցու ավերվելը, տանջամահ արված հարյուրավոր հոգևորականների արյունոտ մարմինները, նո՞ւյնը կանեիր... Նույնը, ավելին կանեիր, բայց ոչ պակաս...

— Խնդրում եմ, սրբազա՛ն...

Սրբազանի աչքը վերստին սկսեց թրատել օդը, և վրանում վառվող տասնյակ մոմերն ասես մեկեն գլխատվեցին ու կրակե լեզվակները երկար հոգեվարքում էին հատակին փռված գորգի վրա։ Հետո բռնկվեց օթոցի փափուկ ծածկոցը, կրակը կահագնանար և կլափեր վրանի դյուրավառ կահույքը, եթե Գրիգորը չսթափվեր և գետնից թոցնելով գորգը, նրանով չդոցեր այրվող օթոցի ծածկոցը։

— Վտանգն անցա՞վ,— հանգիստ հարցրեց սրբազանը։

— Անցավ, սրբազան,— պատասխանեց Գրիգորը, դեպի դուռը քայլելով։

— Սպասի՛ր,— հրամայեց սրբազանը և ծափ զարկեց։ Մտավ սպասավորը։

— Կերակրել Գրիգոր վարդապետին, նրան տեղավորել Մլեհ սեպուհի վրանում, նա այնտեղ մենակ է ապրում, խստագույնս ապսպրել սեպուհին, որ տաղերգուին չթողնի մասնակցելու կռվին, եղա՞վ...

— Այո՛, սրբազան...

— Եթե ես չմասնակցեմ, հապա ո՞րն է լինելու իմ անելիքը..

— Ես քեզ չեմ հրավիրել այստեղ, հետևաբար և չեմ կամենում քո մասնակցությունը մարտերին, դու թաքստոցից, լսո՞ւմ ես, միայն թաքստոցից, ուր քեզ կտեղավորի սեպուհը, կարող ես դիտել կռվի ընթացքը, եղա՞վ...

— Ո՛չ, չեղավ...

— Այդ դեպքում,— սրբազանը շրջվեց դեպի սպասավորը,— առանձնացրեք երկու զինվոր և բռնի կերպով վարդապետին հեռացրեք այս արյունոտ գործողությունների շրջանից...

— Լսում եմ, սրբազան...

— Կատարեցեք հրամանս,— փնչացրեց սրբազանը,— կա՛մ, կա՛մ...

— Թող ձեր ասածը լինի,— ասաց Գրիգորը,— ես կմնամ...

— Դե, բարին ընդ ձեզ, գնացեք և նորից եմ կրկնում, որդյակ իմ։ Զգույշ շրջիր ճամբարում, կուրծքդ նետաձիգներին դեմ չտաս, նրանք թաքնված են ձորալանջի ծերպերում, ոչ էլ վիզդ դիր մերկացած սրի տակ, շինականները թափանցում են նույնիսկ ճամբարի տարածքը...

Գրիգորը սպասավորի հետևից դուրս եկավ և քայլեց դեպի սեպուհի վրանը։ Պահակը ասաց, որ վրանում ոչ ոք չկա։ Մտան։ Զորականի համեստ վրան էր, նույնիսկ քնելու հարմարություններ չկային, գետնին փռված էր կապերտանման մի գորգ, թե գորգանման մի կապերտ, որը երևի ծառայում էր որպես անկողին, մի փափուկ թամբ էր դրված ծայրին։ Առանց տարակուսելու Գրիգորը հասկացավ, որ դա սեպուհի բարձն է։ Շրջվեց սպասավորի կողմը.

— Հրաշալի անկողին է. ինձ համար ևս սրա պես անկողին հարդարեք...

— Սա զորականի անկողին է, դու հոգևորական ես, հայր սուրբ... Սրբազանը կարգադրություն է արել հարդարել ուրիշ անկողին...

— Մի՛ մոռացիր, որ ես ճգնակենցաղ միաբանությունից եմ։ Կոշտ անկողնու, քուրձերի եմ սովոր, այնպես որ այդ մասին պետք է որ իմանա նաև սրբազանը...

— Ես նրան տեղյակ կպահեմ, իսկ մինչ այդ դու պարտավոր ես նախաճաշել...

— Իհարկե, զորականների հետ և նրանց նման...— ասաց Գրիգորը։

Քիչ անց նա վրանների կենտրոնում վառվող կրակի շուրջ բոլորած զինվորների հետ նախաճաշում էր, երբ մոտեցավ Մլեհ սեպուհը, հաղթահասակ, սևահեր ու կորովի մի զորական, բարևեց բոլորին, և նրա սև աչքերի շանթող հայացքը բևեռվեց Գրիգորի վրա։

— Հոգևորականը զորականների մե՞ջ...— խոսեց ժպտալով,— քեզ ի՞նչ համարենք, հայր սուրբ, զորական, թե հոգևորական...

— Զորականների մեջ հոգևորական, հոգևորականների մեջ՝ զորական՝ եղա՞վ,— ժպտաց Գրիգորը։

— Հիանալի՜ է,— խոսեց սեպուհը, նրա ձայնը փափուկ էր, կրծքային։ «Հիանալի տաղասաց կարող է լինել...— գնահատեց Գրիգորը,— և

ձայնն է գեղեցիկ, և տեսքը՝ հոյակապ...»։— Բայց ցանկանում եմ քեզ զգուշացնել, այս ճակատամարտը լիքն է պատահականություններով, մեր թշնամին գերադասում է մեզ չհանդիպել։ Նրան չի կարելի սպասել, որովհետև նա չի հարձակվում, այլ խփում է անսպասելիորեն և չքանում։ Ուժերը սակավ են, և նրանք կարողանում են իրենց սակավ ուժերով կանգնեցնել իշխանական վաշտերը։ Մարտերին չեն մասնակցում միայն ծծկեր, օրորոցի երեխաները, մնացած շենը բոլորը ոտքի վրա են. մանուկ ու ծեր, կին ու տղամարդ։ Եվ խլում են զինվորներին, մեր վաշտերը նոսրացել են, օգնական համալրում եթե չլինի և ցրտերը վրա տան, մեր վիճակը կդառնա աննախանձելի...

Նույն պահին, ասես ի պատասխան, ի հաստատումն սեպուհի ասածների, լսվեց նետերի սուլոց, և նետը ցցվեց ծառաբնի տակ նախաճաշող զինվորի գլխավերևը՝ ծառի բնին։

— Սրիկա՜, ցանկանում էր ինձ մեխել ծառին,— խոսեց զինվորը և ձեռքն առնելով նետ աղեղը, սկսեց ուշադիր զննել իր առջևի բարձունքը։ Հետո, առանց նշան բռնելու, արձակեց նետը։ Գուցե նետահարողի մոտ ընկնի և նա մատնի իր թաքստոցը։ Բայց այդ բանը տեղի չունեցավ, և զինվորները զգուշորեն փոխեցին իրենց տեղը, մտան մոտիկ վրանի հետևը։ Սեպուհը աչքով արեց երկու զինվորների, որոնք թողին ուտելը և անշտապ ու անձայն չքացան հսկայական ժայռերի մեջ։

— Կարո՞ղ են որսալ,— հարցրեց Գրիգորը։

— Կորսան, նետի սուլոցից անգամ փորձված զորականը կճանաչի թշնամուն։ Նետաձիգը, հայր սուրբ, պատանի է, որը նոր է սովորում նետաձգությունը։ Նա շատ մոտ տեղից արձակեց նետը։ Այդ տարածությունից, եթե զորականը կույր չէ, պարտավոր է խփել հակառակորդին։ Ինչ որ է, կտեսնենք...

Դանդաղ, խոշոր փաթիլներով իջնում էր ձյունը։ Զորում տակավին տաք էր, ձյունն իջնում էր դեղնած, խունացած կանաչին և անէանում։ Դիմացի ձորալանջը երևում էր ասես կիսաթափանց քողի միջից։ Սեպուհը նկատելիորեն հուզված էր։

— Այս ձյունը շատ բան կարող է փչացնել։ Առանց այն էլ ձորալանջը մեծ թեքություն ունի։ Դժվարամատչելի է։ Կթրջի, սառնամանիքը կսառեցնի և խնդրե՞մ... Չէ՛, մեր վիճակը բանի նման չէ, այլևս Ավելագաշտը ոչնչով չես վերցնի։ Զորքերը հոգնած են, հարյուրակներում հազիվ հիսունական զինվորներ մնացած լինեն, այդ ուժով հարձակվել նման հակառակորդի վրա նման եղանակին հիմարություն կլինի։ Զոհերը շատ, արդյունքը քիչ։ Սրբազանին ասում եմ՝ ինչպես է, որ աստված ապստամբների հետ է, գլուխն է տմբտմբացնում։ Ճտերը աշնանն են

հաշվում, ասում է։ Իսկ մենք իրոք աշնանից այստեղ ենք, բայց ինչ
օգուտ,— սեպուհը դառը ծիծաղեց։— Ճտեր չկան ու չկան, հետևաբար
հաշվելու ոչինչ չունենք։ Մխիթարվելու բան չունենք, շինականները պինդ
ընկույզ դուրս եկան։ Կրակ տվինք, այրեցինք դաշտում մնացած նրանց
հացահատիկը, իսկ նրանք գիշերով հարձակվեցին մեր զորական գումար-
տակների վրա, փախցրին մեր ունեցած ամբողջ ուտելիքն ու բարձրացրին
գյուղ։ Կտրեցինք նրանց աղբյուրների ջրերը, ավելի ճիշտ փոխեցինք
ջրերի ճանապարհը, իսկ նրանք բացին գյուղատակին գտնվող ջրամբա-
րը, և ջուրը քշեց մի քանի զորական վրան։ Տասնյակից ավելի մարդ
կորցրինք։ Եվ աղբյուրների ջրերը նորից հոսեցին հին առվով։ Կրակ
տվինք խոտի դեզերը, որ զրկենք անասուններին կերից, նույնն արեցին
նրանք մեզ հետ, դեռ ավելին, թալանեցին մեր ձիերին տրվելիք գարու
ամբողջ պաշարը։ Դեռ մենք չենք գտել նրանց դեմ մարտավարելու
գաղտնիքը։ Բայց կգտնենք, կհայտնագործենք, այն ժամանակ վա՜յ
նրանց...

— Նրանց մարտավարությո՞ւնն է բարձր, թե մարտիկի քաջու-
թյունը...

— Է՜հ, հայր սուրբ, նրանք չունեն զորապետ և որտեղից ունենան։
Ուրեմն, մարտավարության մասին խոսք լինել չի կարող, իսկական
մարտեր տակավին տեղի չեն ունեցել և երևի չունենան։ Ճակատամարտ
ենք երազում, որ ջարդենք նրանց ողնաշարը՝ խուսափում են։ Գիտեն, որ
դա իրենց վերջնակետը կդառնա։ Իսկ ինչ վերաբերում է նրանց մար-
տիկների անձնական քաջությանն, ասեմ. նրանք մարտիկներ չունեն,
վարժեցրած զինվորներ չկան, մի խոսքով, ունեն կովողներ, այդպես կո-
չենք նրանց։ Շինականներ են՝ տղամարդ, կին, նույնիսկ երեխաներ։
Համառ են, ճարպիկ, խորամանկ։ Ավելի վտանգավոր, ավելի անգութ,
քան զորականները։ Հայտնվում են անսպասելիորեն, երբ չես սպասում
նրանց, անհայտանում են հենց քթիդ տակից։ Մի խոսքով, կռիվ չկա,
բայց զորքը կամաց հալվում է, մաշվում։ Հարկավոր է գտնել կռվի այդ
տեսակի գաղտնիքը...

— Իսկ գաղտնիքը գտնելու համար ի՞նչ եք անում...

— Առայժմ ոչինչ։ Հարկավոր են լրացուցիչ ուժեր, մեր ուժերն
սպառվելու վրա են։ Մենք այստեղ ունենք, ճիշտ է՝ սակավ քանակու-
թյամբ, այրուձի, սակայն նրանք մեզ բոլորովին հարկավոր չեն, ոչ բա-
ցազատվելու հնարավորություն ունեն, ոչ էլ հարթ տեղանք՝ գործելու
համար։ Հարկավոր է նրանց ուղարկել իշխանական զորանոցները։ Այ-
նուհետև, ձորալանջին գտնվող շենը ինչ-որ չափով նման է բերդ-ամրոցի։
Նրան մոտենալու, հաջող հարձակում զարգացնելու համար պետք է

առնվազն մեկ հարյուրակ, մեկ վաշտ քարագնացներ, որպեսզի հաղթա-
հարեն ժայռ ու քարի, խոշ ու խութի դիմադրությունը և վերջապես պետք
է հզորացվի հետևակի հարձակողական հնարավորությունը։ Հարկ է
նկատել, որ այս ամենը կնպաստեն մեր հաջողությանը։ Էլ ինչ ասել,
կապրենք, կտեսնենք...

Վրանի մոտ աղմուկ լսվեց։ Ինչ-որ մեկին ծեծում էին, հայհոյում,
ինչ-որ մեկը բարակ ձայնով ճչում էր, արտասվում և հայհոյում.

— Ի՞նչ է պատահել,— վրանի մուտքի առջև կանգնեց Մլեհը։

— Որսացել են նետաձիգին, տե՜ր սեպուհ...— զեկուցեց համհարզը։

— Ներս բերել այդ հեթանոսին,— հրամայեց Մլեհը։

Աղմուկն ահագնացավ։ Երևում էր, որ նետաձիգը դիմադրում է բե-
րողներին։ Երկու զինվոր մեծ դժվարությամբ վրան մտցրին մի պատա-
նու, որը հազիվ տասնչորս-տասնհինգ տարեկան լիներ։ Նա պոկվելու
անօգուտ ապարդյուն ճիգեր էր գործադրում, ձեռքերը ոլորել էին, և նա
փորձում էր գլխով հարվածել իր զսպիչներին, կծոտել նրանց ձեռքերը,
որոնք աքցանել էին իր ազատությունը։ Ճչում էր ու հայհոյում։

— Ի՞նչ անել սրան,— դիմեցին սեպուհին։

— Հասկանալի է,— ասաց վերջինս,— նա իրավունք չունի ուտելու
այն հացը, որի վրա թքել է, որը թաթախել է արյունով։ Մենք կերակրվում
ենք վանքի հացով, որին սա և սրա նմանները թույն են խառնել։ Աստծո
հացը ուտելու իրավունք չունեն աստվածասպանները։ Տարե՛ք...

— Բայց նա դեռևս պատանի է,— փորձեց խոսել Գրիգորը։

Սեպուհը շեշտ նայեց նրան։ Հայացքում սրի նման մերկացած էր
դաժանությունը և անողոքությունը։

— Հարցրու նրան քանի զինվոր է նետահարել և կիմանաս քո հարցի
պատասխանը։— Գրիգորը լռեց։ Միջամտելն օգուտ չուներ։ Զորականնե-
րը նրա աչքին այլ աշխարհից էին՝ անծանոթ իրեն և, մանավանդ, հակ-
ված պատժելու և սպանելու։ Գրիգորի կողքով անցնելիս պատանին
բարձրացրեց ատելավառ հայացքն ու թքեց նրա երեսին.

— Սրիկա՛, աստվածասպա՛ն...

Ուղեկցող զինվորը բռունցքով հարվածեց տղայի դեմքին։ Հարվածն
այնքան ուժեղ էր, որ պատանուն նետեց մի քանի քայլ հեռու և քիթբե-
բանից ցայտեց արյունը։ Պատանին դուրս թքեց իր փշրված ատամները և
մի պահ անշարժացավ։ Գրիգորը սարսափեց։

— Մի՞թե մեռավ, —ասաց նա սրբելով դեմքը։ Նրա ձայնը դո-
ղում էր։

— Մի՛ վախենա, հայր սուրբ, նրան այստեղ չեն սպանի և նա ողջ է։
Հարվածող զինվորը կոփամարտիկ է, գիտե վնասազերծել նմաններին.

այս լակոտը շուտով ուշքի կգա և կտարվի այնտեղ, որտեղից այլևս հետ դառնալ, վերադարձ չկա...

— Մե՞ղք է պատանին,— շդիմացավ Գրիգորը։

— Եթե անմեղ լիներ, իհարկե,— ասաց սեպուհը,— բայց նրան որսացին այն բանից հետո, երբ քիչ մնաց մեր զինվորին իր նետով մեխեր ծառին... Ի միջի այլոց, խորհուրդ կտամ, հայր սուրբ, մարդու կյանքի գինը չդնել աստվածության նժարին, չթանկացնել սրիկաների, եղծվածների գինը, այլ դնել զորական նժարին, որտեղ նրանք, այդ անպետքությունները, ավելի շարժեն, քան կատաղած շները...

— Դաժան խոսք ես խոսում, սեպուհ Մլե՛հ...

— Կռիվն ինքնին դաժանություն է, հայր սուրբ, թոնդրակյաններն իրենք են սարքել այս ամենը, իրենք էլ պարտավոր են պատասխան տալ և աստծո առջև, և օրենքի։ Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման...

— Ո՞ւր տարան պատանուն...

— Գլխատելու,— սեպուհի պատասխանի մեջ մետաղի կարծրություն կար, և տաղերգուն հոգու ցավից քիչ մնաց սրտի նվաղում ունենար։

— Եթե այդքան դժվար է նման տեսարաններին մասնակից ու ականատես լինելը, հայր սուրբ, քանի ուշ չէ, հեռացեք արյան ու կոտորածի այս Ավելադաշտից...

— Ո՛չ, ո՛չ, ես այստեղ եմ կամոքն աստծո,— ընկճված, թույլ ձայնով խոսեց Գրիգորը։

***

Զյունն առատացավ և նստեց։ Ճամբարում ավելացավ անհանգստությունը։ Կրոհել սակավաթիվ ուժերով համարյա անառիկ բարձունքում թառած շենը՝ անկարելի էր։

Սեպուհն անգործությունից դժգոհում էր, ջղայնանում.

— Եկել, ընկել ենք լեռների մեջ կորած այս շենի ուղղակի ոտքերը, ոչ առաջ, ոչ ետ, ոչ հաղթանակ, ոչ պարտություն։ Ասես մեր դիմաց հզոր ամրոց է, մինչդեռ շինականներ են, որոնք ոչ մարտավարությունից են բան հասկանում, ոչ էլ զենք գործածել գիտեն։ Բայց չզարմանաք, եթե ասեմ, որ գիտեն կռվել և կռվում են քարով, փայտով, եղանով, գերանդիով, ինչ որ ձեռքերն ընկնի, խփում են մեր գլխին։ Նման գյուղ ես չեմ տեսել, երեք կողմից անդունդներ, միայն մի կողմից լեռնաբազուկի բարակ մի պարանոց, որի երկու կողմում ևս անդունդներ են և մի լիքը շեն խելագարներ։ Գյուղը գրավելը մեզ համար բերդ գրավելուն համազոր դժվարություն է... Համալրումն ուշանում է։ Ես, իհարկե, հասկանում եմ՝ Սյունյաց իշխանական զորքերը նրա համար չեն, որ կերակուր դառնան ինչ-որ Ավելադաշտի թոնդրակյաններին, զորքը երկիրը պահելու և պաշտպանելու համար է...

— Տեր սեպուհ, համալրում է ժամանել,— զեկուցեց համհարզը։

— Հրաշալի՞ է,— զվարթացավ երիտասարդ զորականը և դուրս քայլեց վրանից։ Զորալանջի ոլորաններն ամբողջապես բռնված էին զորքերով։ Առավոտյան պաղպաջուն լույսի միջից, որը նաև լվացված էր նոր եկած ձյան անթերի սպիտակությամբ, շարժվում էին վաշտերը։ Առջևից ընթանում էին հետիոտն մարտիկները, արևի պաղ ճառագայթների ներքո կապտին էին տալիս սաղավարտներն ու մաքուր օդն էին ծակծկում նիզակները։ Հետո իջնում էին քարանձաց զինվորները, իրենց ուսերին կրելով պարանների խրձեր և այլ գործիքներ։

Հարյուրապետը ձիուց թռավ ներքև և, քարանալով սեպուհի առջև, զեկուցեց.

— Տեր սեպուհ, իշխանական զորքերի մեկ հետիոտն և մեկ քարանձաց հարյուրակ ներկայանում են սեպուհիդ հրամանին։ Հրամայված է մարտից հանել սեպուհիդ հանձնված այրուձին և ուղարկել նախկին վայրը...

— Օղա՛վ, հարյուրապե՛տ, հիմա զբաղվեք վրաններ խփելով, որովհետև ցուրտ է, հետո կերակրիր զինվորներին։ Մի քանի օր անց պետք է գրոհել շենի բարձունքը, մենք ամսից ավելի է գորտերի նման նստել ենք այս ցեխաջրերի մեջ, ժամանակն է վերջ տալու Ավելադաշտի պատմությանը։

Քիչ անց ժամանեց նաև քարանձացների հարյուրակը, և ճամբարը հարստացավ ու զորացավ մարդկանցով։ Օջախների կապույտ ծուխը շուտով ձորը լցրեց կապույտ, բուրավետ ծխով։ Կաթսաներում սկսեց խլրտալ շոգեհարված միսը։ Զորական ճաշը վերջացնելուց հետո շարեցին ամբողջ ճամբարի զինվորներին, և նրանց հաղթական գործողություններ բարեմաղթեց այս ազգապահպան և աստվածահաճո գործում Սյունյաց հոգևոր առաջնորդը։ Նրան կիսազինվորական համազգեստի մեջ տեսնելը, փառահեղ ու պատկառանք ներշնչող արտաքինը հսկայական ներգործություն ունեցան զորաց վրա։

— Զավակնե՞րս,— ձեռքերը բարձրացրեց սրբազանը,— մեծ դժբախտություն է ազգիս ներսում ոթել հարազատի, յուրայինների արյունը, սակայն մեծ բախտավորությունը գոցում է մեծ դժբախտությունը նրանով, որ այն արյունը, որ պիտի թափեք, թեև յուրայինի է, բայց կեղտոտված է, վարակված աստվածապղծությամբ, հերձվածող հեթանոսությամբ, ապականված բյուրավոր ախտերով։ Մաքրել ազգս ախտա-

վարակ մարդկանցից աստվածային ու սրբազան գործ է... Ես օրհնում եմ ձեր կռիվը հանուն աստծո և հայ եկեղեցու... Ես օրհնում եմ ձեր սրի անգթությունը, ձեր նետի անվրեպությունը, ձեր նիզակի դիպուկությունը, ձեր վահանի անխոցելիությունը... Օ՜ն, հառա՜ջ, զավակնե՜րս...

Եվ մերկացավ սուրը սրբազանի ձեռքին։ Եվ բարձրացավ ոսկյա խաչը գլխից վեր։ Շքեղ տեսարան էր, զգացվեցին բոլորը, կիսաշրջանաձև կանգնած հարյուրակները առանց հրամանի, մեկ մարդու նման ծնկի իջան։ «Միայն թե սուրը չսկսի թափահարել, միայն թե չսկսի գոռուն-գոչյունը, միայն թե չնսեմացնի այս նախնական հանդիպման շքեղ տեսարանը, միայն թե...»։

Չէ՜, սրբազանը գիտեր իր թողած տպավորության գինը։ Սուրը կիսաշրջանաձև մի երկու պտույտ գործեց օդում և վերստին հանգրվանեց արծաթբանված պատյանի մեջ։ Գրիգորը զարմացած էր։ Հոգևոր առաջնորդի վարքագծի նման փոփոխությունը ցույց էր տալիս, որ սրբազանը տիրապետում է հռետորական արվեստին և կարողանում է այն զուգակցել հանդիսականների տվյալ պահի հոգեբանությանը։ Այդ պահին սրբազանը խաչը պարզել էր Ավելադաշտի կողմը, և զորագունդը մոնչում էր իր հուժկու «Օ՜ն...», իր «Կեցցե՜ն»։ Հետո սրբազանն իջավ հապճեպ սարքված փայտե ամբիոնից և կրոնավորների երգի ուղեկցությամբ քայլեց դեպի իր սևագույն վրանը։

Զինվորները գնացին իրենց բանին ու գործին։ Գրիգորը մտավ սեպուհի վրանը։ Գորգի վրա թեք էր ընկել զորապետը։ Դեմքը մտախոհ էր, նայեց Գրիգորին չտեսնող հայացքով։

— Մտախոհ ես, տե՜ր սեպուհ...

— Ուրախանալու և ոչ մի առիթ, հայր սուրբ, ոչ մի՜... Մենք մարտավարությամբ չենք զբաղվում, մենք փչացնում ենք մեզ և մեզ ենթակա վաշտերը։ Օրերը ցրտում են, եթե ձորալանջերը սառցակալեն, Ավելադաշտն ավելի անառիկ կդառնա։ Իսկ ես՝ մասնագետ զորականս, փոխանակ լիարժեք հակառակորդի հետ գործ ունենալու, իմ հարյուրակներով կռվում եմ ոչ կատարյալ խաժամուժի դեմ, որ զորքի դեմ բերում է կնիկներ և մանկահասակ լակոտներ։ Մնում է կանացի շրջազգեստ հագնեմ ու մտնեմ ասպարեզ... Այդ էլ ոչինչ, կռիվը ոչ մի հաջողություն չի խոստանում մեզ...

— Վե՞րջը...— հարցրեց Գրիգորը։

— Վերջը հասկանալի է, վերջը շենը դառնալու է անմարդ ավերակ։ Գյուղը զենք չունի, զենք բռնող տղամարդիկ նոսրանում են, ուտելու պաշարը սպառվելու վրա է, մի խոսքով, ինչ չի հաջողվել զորքին, կանեն սովը, հազար ու մի պակասությունները, իսկ մենք կամաց, ձեթի

ճրագի նման սպառվում ենք, միակ մխիթարությունն այն է, որ մենք համալրվում ենք, ուրիշ ոչինչ... Պետք է արագ վերջացնել զորականին պատիվ չբերող նման մարտերը, ուր ոչ հաղթողներն են հաղթողի նման, ոչ էլ պարտվողներ կլինեն, որոնց ձեռքից վերցնես հաղթանակի պսակը...

— Ինչպե՞ս թե...— զարմացած նրան նայեց Գրիգորը։

— Շատ պարզ,— պատասխանեց սեպուհը,— մեր հակառակորդը երբեք գերի չի հանձնվի։ Նա մահը գերադասում է դաժան կտտանքներից և նվաստացումներից, այնպես որ մենք Ավելադաշտ շենը չենք գրավի, մենք կգրավենք Ավելադաշտի բաց գերեզմանոցը...

Սեպուհը լռեց։ Դրսից մարդկային ձայներ լսվեցին։ Համհարզը մտավ.

— Տեր սեպուհ, կարելի՞ է...

— Խոսի՜ր...

— Թաքստոցից մեզ հետ բանակցում է կին ասեմ, թե աղջիկ...

— Ինչպե՞ս թե, ինչ է ուզում...

— Դուք, ասում է, երեկ գլխատել եք իմ որդուն, խնդրում եմ, ասում է, տվեք ինձ նրա դիակը, փոխարենը խոստանում եմ՝ ձերոնց չնետահարել թաքստոցից։ Տվեք, ասում է, որդիս թող իր շենում գերեզման ունենա և նրա անբախտ մայրն էլ տղայի վրա լալու մայրական իրավունք ունենա...

— Չկարողացա՞ն նետահարել...

— Նետերի անտառ տեղացին, չկպավ։ Զգտան թաքստոցը, իսկ ինքը հայտնի չէ որտեղից նետն արձակեց և թոցրեց բանակցող հարյուրապետի սաղավարտը.. Ասում է՝ մինչև սպանվելս մի քանիսին կսպանեմ, ինչո՞ւ իզուր շատանան զոհերը... Տվեք տղայիս...

— Ի՞նչ անել, հայր սուրբ,— հարցրեց սեպուհը,— ահա այսպիսին է մեր կռիվը։ Ի՞նչ անել...

— Տվեք որդու դիակը, տեր սեպուհ, դրա մեջ ես ոչինչ անօրինական չեմ տեսնում։ Մայրական վիշտը հաշվի չի կարելի չառնել, մոր հետ կարելի է մարդկային վերաբերմունք ունենալ։

Սեպուհը դարձավ համհարզին.

— Վերադարձրեք որդու դիակը մորը...

— Հրամանդ ի կատար,— պատվի առավ համհարզն ու դուրս եկավ վրանից։

Համհարզի հետևից դուրս եկավ նաև Գրիգորը։ Իսկ ինչպե՞ս են վերադարձնելու և ինչպե՞ս է մայրը տանելու որդու դիակը։ Համհարզը հայտնեց սեպուհի թույլտվությունը։ Հրամանատարն իջավ առվի ափն ու գոռաց ժայռերն ի վեր.

— Է՜յ, այ քա՜ծ, լսո՞ւմ ես...

— Լսում եմ, դահի՛ճ...

— Սեպուհը համաձայնել է կատարել քո խնդրանքը, ինչպե՞ս եք տանելու դիակը...

— Դրեք առվի ափին, մենք կտանենք...

— Ցերեկով եթե տանելու լինեք, մերոնք ձեզ կնետահարեն...

— Ես կտանեմ, թող նետահարեն...

Գրիգորը զգայացունց տեսարանների սիրահար չէր, մանավանդ, շատ դժվարությամբ էր տանում սպանության արյունոտ տեսարանները, ուստի քաշվեց վրանի իր անկյունը։ «Ճի՞շտ արեցի, որ եկա Սյունյաց այս վայրենի լեռնաշխարհը, ուր քայլելն իսկ անվտանգ չէ։ Մի՞թե Վասպուրական աշխարհի թոնդրակյանները քիչ էին մոտիկից ճանաչելու, տեսնելու նրանց դավանանքի ուժը, նրանց համայնքի կյանքը։ Չէ՞ որ ես մարտերը, արյունոտ տեսարանները տանելու ուժ չունեմ, ես միայն արյան տեսքից համարյա ուշաթափվում եմ, ավելին, կորցնում քուն ու հանգիստ։ Իսկ այստեղ մարդու կյանքն այնքան էժան է, որ ապրողները մեռնողներին քիչ է մնում նախանձեն։ Ես, ի վերջո, չգտա իմ տեղն այս դժվարին տուրուդմփոցի մեջ։ Ո՞րն էր ճիշտն ինձ համար. լինել Ավելադաշտո՞ւմ, թե նրանց հետ, ովքեր երազում են վերածել ավերադաշտի։ Տեր աստված, գոնե դու ինձ հուշեիր, մատնացույց անեիր այն ճանապարհը, որով ես ընթանայի անվարան, առանց կասկածների։ Թե չէ իմ վիճակը, ներիր ինձ, ներիր համեմատության համար՝ նման է այն անհավատարիմ կնոջ վիճակին, որը չգիտե ինչպես կողմնորոշվի չսիրած ամուսնու և սիրեկանի միջև։ Այստեղ դաժանությունն օրինականացվում է ոչ թե աշխարհիկ կամ զորական իշխանությունների, այլ հոգևորականության կողմից, որն ավելի է, քան աստծո պատվիրանների խախտումը, դա անաստվածության ցայտուն դրսևորումներից է։ Եվ ես, որ որոշել էի իմ տեղը, ստիպված տեղի տվեցի ինձ վնասող հանգամանքներին և վերստին հայտնվեցի այնտեղ, ուր գործ չունեի, որտեղ իմ տեղը չէր։ Ուրեմն, ամուր չէր իմ որոշումը, ուխտի ուժ չուներ, ուրեմն, ես թուլամորթ եմ, երեսպաշտ, աստվա՜ծ իմ, ինչպե՞ս ես հանդուրժում իմ գոյությունը, երբ քո երկրպագուն լիքը անոթ է անքավելի մեղքերի։ Տուր ինձ զորությո՛ւն, տուր հոգեկան կորով այս խառն ժամանակներում ճիշտ կողմնորոշվելու...»։

Հաջորդ օրը ճամբարում աշխուժորեն քննարկվում էր մահապատժի ենթարկված ավելադաշտցի պատանու դիակը օրը ցերեկով անհայտանալու, թե գյուղ տանելու հանելուկային պատմությունը։ Պարզվում է, որ երեկոյան մթնշաղին արդեն տղայի դիակը պայմանավորված տեղում

չի եղել։ Ուրեմն, դիակը շեն է բարձրացվել ցերեկով։ Ով է տարել, ինչպես են տարել, որ ոչ ոք չի տեսել, նույնիսկ պահակներն անտեղյակ են, թեև պահակակետը ճիշտ այն տեղում է, ուր դրված է եղել պատանու դիակը։ Այս դեպքը խիստ զարմացրեց և զայրացրեց սեպուհ Մլեհին։ Նա ատամները կրճտացնելով էր խոսում հարյուրապետների և պահակապետի հետ.

— Ուրեմն, պահակները օրը ցերեկով չե՞ն տեսել, թե ինչպե՞ս են տարել դիակը...

— Չեն տեսել, տեր սեպուհ...

— Ուրեմն, կույր են եղել պահակները...

— Բնավ ոչ, տեր սեպուհ, կույր չեն եղել...

— Վստա՞հ ես, պահակապետ...

— Այո՛, տեր սեպուհ...

— Ուրեմն, գլխատված տղան համբարձվել է...

Պահակապետը գլուխն է քորում։ Չգիտի ասելիքը։ Սեպուհի հայացքը այրում է նրան։

— Լռում ես, պահակապետ, լսիր ինչ եմ ասում, այ կոտոշավորանասուն։ Կամ մեր պահակներն են այդ պահին կուրացել, կամ այդ պատանին աստծո որդու նման՝ հարյավ ի մեռելոց։ Քրիստո՞ս է եղել այդ պատանին, հը՛... Քեզ եմ հարցնում... Ահա թե ինչպիսի զինվորներ ու հարյուրապետներ եք դուք։ Նրանք թշնամիներ են, հասկացեք, թը՛շ-նա՛-մի՛-նե՛ր, ձեր արյանը ծարավի, իսկ ձեր զինվորները, փոխանակ հսկելու ճամբարի անվտանգությունը, քնել են օրը ցերեկով, աչք փակելով այնամենի վրա, ինչ նրանց տրված է պահպանելու։ Իսկ եթե այդ հեթանոսները մտնեին վրաններն ու մեկիկ-մեկիկ դաշունահարեին կամ մորթեին մեր զինվորներին, լավ կլինե՞ր, տո՛, սատանի թրիքներ։ Լավ է, որ թշնամին գլխի չի ընկել, որ դուք էշեր եք, այլապես ճամբարը հիմա համբարձվել էր ի Վերին Երուսաղեմ...

Խոսեց, սպառնաց, հայհոյեց սեպուհը, նաև տարբեր պատժաչափերով կարգի հրավիրեց իր մարդկանց և գնաց իր բանին։ Քիչ անց սրբազանի մոտ հրավիրվեց Գրիգորը։ Սեպուհը և հարյուրապետները ևս այնտեղ էին.

— Մենք երկար ժամանակ կախվել ենք այս անիծված Ավելադաշտի փեշերից և ի զորու չենք հաղթահարելու ոչ լեռնաշխարհի արգելքները, ոչ էլ մի փոքրիկ շենի դիմադրությունը։ Իսկ չէ որ մենք մեր երկրի պահապան ուժն ենք։ Ուժ ենք համարվում, սակայն անուժ ենք, ամոթ է, տեր սեպուհ և տեր հարյուրապետներ, մեր թշնամին արդեն ծաղրում է

մեզ, մեր քթի տակից թոցնելով իր հանցագործ աստվածասպան մեռելներին։ Ունկս թող խլանար՝ չլսեի նման հիմարավուն եղելության մասին։ Այս անփութությունը կարող է գերեզման տանել մեր աստվածահաճո գործողությունները մեր ախտավարակ և տիրատյաց թշնամու դեմ, որն իր շենում չի թողել ոչ մի ողջ կրոնավոր, և որի պիղծ ձեռքերով ավերակվել է շենի եկեղեցին։ Ավելադաշտի պիղծ շինականները ոչ միայն ավերակի են վերածել իրենց շենի սրբությունները, այլև ժամանակ առաջ մասնակցել են նաև Տաթևի եպիսկոպոսարանի ոչնչացնելուն, մեծ զոհեր խլելով մեր հոգևոր աշխարհից և ազգիցս հայոց... Արդ, տյա՛րք հարգելի, հասել է վճռական հարվածի պահը։ Զորական ուժը զորեղացվել է երկու հարյուրակով, պետք է գրոհել և հասցնել վերջին խորտակիչ հարվածը։

— Տարաժամ, ուշացած գործողություն կլինի մեր այս հարվածը, սրբազա՛ն, և իմ կարծիքով ոչ վերջինը։ Ահավոր ցրտերն ու սառնամանիքները, միացած առատ տեղացող ձյանը, կալնել են շենը տանող կածանները...

— Մի՛ մոռանա, տեր սեպուհ, որ քարագնացների հարյուրակն այստեղ է, նա կբացի ճանապարհը և իր, և հետևակի համար,— ընդմիջեց սրբազանը։

— Քարագնացների ներկայությունն, իհարկե, դյուրություններ է ընձեռում հարձակման համար, սակայն հարձակմանը մասնակցում է նաև հետևակը, հիմնական զարկող ուժը, որն անկարող կլինի մագլցել ձորալանջի շեշտ թեքությունը, որովհետև չունի մագիլավոր կառուցոտնամաններ, այնուհետև, առանց հետևակի քարագնացներն արդյո՞ք ի վիճակի կլինեն շահել այն ճակատամարտը, որ կբռնկի քարագնացների գյուղ թափանցելուն պես։ Սրանք, սրբազան, կարելի չէ հաշվի չառնել, մանավանդ որ եկել է ժամանակը մեզ համար ոչ այնքան պատվաքեր այս ճակատամարտը ավարտելու։

Խոսեցին, վիճեցին, և գործը վերստին հասավ սրբազանի ջղային բռնկմանը։ Նորից օդը թրատվեց, նորից խաչը բարձրացավ, մի խոսքով, կրկնվեց Գրիգորին առաջին անգամ այնքան զարմացնող արարողությունը։ Ներկաների, հատկապես սեպուհի վրա, սրբազանի բռնկումը նկատելի տպավորություն չգործեց, բայց նոր ժամանած վաշտերի հրամանատարները ենթարկվեցին այդ հոգեբանական խաղի ազդեցությանը և ծնկաչոք համբուրում էին սրբազանի աջը և որոնում էին քղանցքը՝ շուրթերին մոտեցնելու համար։ Որոշվեց հինգ օրից հետո երեք հետևակային և մեկ քարագնաց վաշտի ամբողջ զորությամբ գրոհել Ավելադաշտը և ավարտել ձգձգվող հարձակումը։

— Ինչո՞ւ համար է սրբազանը դիմում այդ ծանր տեսարանին,— հանդգնեց հարցնել Գրիգորը սեպուհին...

— Ինքը դա վերագրում է աստվածային ոգևորության,— պատասխանեց սեպուհը,— իսկ ես հակված եմ մտածելու, որ սրբազանին հարկավոր է մեր նկատմամբ ունենալ հոգեբանական առավելություն և նա խաղում է հոգևոր և զորական առաջնորդի իր դերը՝ հմայելով ենթականերին... Բայց խստասրտություն ցուցանող մեր առաջնորդը միաժամանակ մանուկի սիրտ ունի, և սրի, և խաչի օգնությամբ, իր պատկառանք ներշնչող տեսքով նա համոզում է ոչ թե մեզ, այլ իրեն, ռազմի անգութ ու խիստ օրենքներին դիմանալու և տոկալու հնարքն է պեղում, իսկ արյուն տեսնելիս մտնում իր սևագույն վրանը և արտասվում...

— Հետաքրքիր մարդ է...

— Այո՛, հետաքրքիր, եթե երեխայությունը կարող է պատկառելի տարիքի այր մարդուն հետաքրքիր դարձնել...

— Ինչ ես կարծում, սեպուհ Մլեհ, այս հարձակումը կարո՞ղ է դառնալ պատերազմի ավարտը...

— Հազիվ թե... Բայց առաջիկա կես ամսում պետք է որ ավարտվի այս արյունահեղությունը։ Իմացիր, շենի տղամարդկանց մեծ մասը սպանված, անարիները փախած են շենից։ Ուտելիքի պաշարը վաղուց սպառված է, զենք չունեն, պետք է որ ուժեղ հարվածը վերջ տա ամեն դիմադրության... Առաջիկա ճակատամարտի ելքը շենից համարյա չի կախված, առայժմ խռովարարների հովանավորը երկնային տերն է. դաժան ձմեռն ու անանցանելի բարձունքը, որ ձնախեղդ է և սառցապատ։ Քարագնացները, եթե կարողանան հաղթահարել բնական արգելքները, պարտավոր են այնուհետև հոգալ հետևակի մասին, ճանապարհ բացել նրա համար, այլապես հիսուն տղամարդ լիովի բավական են կանգնեցնելու և մեծ կորուստներ պատճառելու մեր զորագնդին։ Այնպես որ հիմնական դեպքերը զարգանալու են առաջիկայում։ Մենք, հայր սուրբ, կապրենք և կտեսնենք այդ ամենը...

***

Գալարափողերն ու թմբուկներն ազդարարեցին հարձակման սկիզբը։ Առաջինն առվի վրայով դեպի ձորալանջի ժայռերը շարժվեցին քարագնացները։ Հետևակը քարացավ։ Նետ-աղեղները պատրաստ պահած երկշարք զինվորները սպասում էին ավելադաշտցիների կողմից որևէ շարժման, կենդանության որևէ նշանի, որ հարյուրավոր նետեր միանգամից սուրային ձորալանջի թաքստոցների ուղղությամբ։ Սուր ծղրտում

էին գալարափողերը, կարկուտ էին տեղում հսկայական թմբուկները։ Զորն արձագանքը խփում էր քարեքար ու սարեսար, ու պտտվում, պտտվում էր արձագանքը խոր ձորերում, կիրճերում, ձայները բազմապատկվում էին, շատանում և ձորի վրա, ձորերում ասես հոհոում էին դևերը։ Դիվական աղմուկը խլացրել էր շրջապատը։ Քարագնացները՝ քարայծերի, հովազների ճարպկությամբ ու արագությամբ մագլցում էին ժայռերը, հակառակորդն առայժմ լուռ էր, երևի ակնդետ քարագնացների շարժմանը, որոնք դիմադրության չհանդիպելով ավելի արագացրին վերելքը։ Սակայն հարյուրապետները դեռևս դժգոհ էին շարժման արագությունից և հրամանները հաջորդում էին իրար...

— Արա՛գ, արա՛գ, չթողնել, որ թշնամին ուշքի գա և անարգել գործի...

— Առա՛ջ, արագացրե՛ք, որ բացազատվի հետևակը...

Լսվում էին ժայռը հաղթահարող զինվորների միմյանց քաջալերող ձայները, հետևակային վաշտերը, որ տակավին անշարժ էին, մռլտում էին և ռազմական կանչերով սիրտ էին տալիս քարագնացներին։

— Ճանապարհ բացել հետևակի համար,— հրամայեց սեպուհը։

Քարագնացներից տասնյակ մարդ անջատվեցին վաշտից ու շարժվեցին դեպի աջ։ Ցնածածկ կածանով նրանք արագ բարձրանում էին և կարճ միջոցում հաղթահարեցին առաջին երկու ոլորանները։ Երրորդ ոլորանի վրա առջևից ընթացող զինվորը թևերը թափահարեց ու ընկավ, թափանց նետ էր, ծակել էր կուրծքը և թիկունքից դուրս ցցվել։ Երկրորդ զինվորը պահվեց քերծի հետևում։ Երրորդ ոլորանում դարանած հակառակորդն արթնացավ։ Մի քանի սրամերկ շինականներ նետվեցին դեպի քարագնացները։ Սեպուհը ակնհայտորեն գոհ էր.

— Փա՜ռք աստծո, թողեցին թաքստոցները, թե չէ թաքստոցներից կարող էին նապաստակների նման մեկիկ-մեկիկ նետահարել մեր տղաներին, իսկ հիմա դեմդիմաց շինականը հազիվ թե կարողանա դառնալ դրության տերը...

Զորականը չէր սխալվում։ Շինականներն այնպիսի թափով նետվեցին զինվորների վրա, որ ասես դիտավորյալ գալիս ու շամփրվում էին նիզակներին ու խոցված ընկնում։ Կածանը ծածկվեց դիակներով և զինվորները չգիտեին ինչ անել։

— Հետևակը գրոհի՛,— հրամայեց սեպուհը,— առաջին վաշտը՝ ճանապարհի ուղղությամբ, մնացած վաշտերը մնան տեղում...

Վաշտը սուրաց ձորալանջն ի վեր։ Շուտով դրության տեր դարձան զինվորները։ Նրանք վիրավորներին ու սպանվածներին ուղղակի ոլորանից նետում էին ձորը։ Աջ թևն արդեն ազատ էր։ Եվ բաց էր ճանապարհը, մաքրված թշնամիներից։ Իսկ ճակատից քարագնացները դեռ շարունակում էին իրենց դժվարին կռիվն անառիկ, անանցանելի ժայռերի հետ, քայլ առ քայլ հաղթահարելով արգելքները։ Սրբազանն իր կրոնավորների փոքրիկ շքախմբով աղոթք էր մղում առ աստված, օրհնելով զորականներին, ցասում ու նզովք տեղալով հակառակորդի վրա։ Ճակատամարտը գնալով թեժանում էր։ Դեռևս մարտի մեջ չէին մտել հիմնական ուժերը։ Սեպուհը սպասում էր հարվածող ուժերի կենտրոնին. եթե նա հաղթահարեր ժայռի վերին ելուստը և մարտը տեղափոխվեր գյուղատակի հարթ տարածության վրա, ուրեմն ճակատամարտը կարելի էր վստահորեն համարել վերջացած, թշնամին պարտված, և անթարթ դիտում էր քարագնացների առաջխաղացումը։ Ահա առաջին խիզախները հասան ժայռի ելուստին և ցանկանում էին ելնել բաց տարածություն, երբ քնած հակառակորդն ասես սթափվեց քնից, արթնացավ, ու բորբոքվեց զարհուրելի ճակատամարտը նոր, անողոք ուժով։ Ինչ-որ անտեսանելի ուժով հանկարծ տեղահանվեցին խոշոր քարաբեկորները, ժայռերն ամեհի դղրդյունով գահավիժեցին ներքև, հոսող ժայռերի քարե հեղեղն իր ճանապարհին ամեն ինչ տակովն անելով, քշելով նետում էր ձորի երախը։ Օդում երևացին մարդկային գահավիժող մարմիններ, որոնք ասես ցանկանում էին հաղթահարել արծվի թռիչքի բարձրություն ունեցող ժայռերը։ Տպավորությունն այնպիսին էր, որ ասես ձորալանջերն իջնում են անդունդները, կիրճերը, ձորերը։ Սեպուհը գունատվել էր, ատամները կրճտացնում էր, բղավում էր ինչ-որ, բայց ոչինչ չէր լսվում և լսող էլ չկար։ Ամեն ինչ խառնվել էր իրար, քար ու ցեխ, մարդկային ջախջախված մարմիններ ու ձյան փոշի և անսովոր, խլացնող, ահարկու մի աղմուկ, որը կարող էր խելագարեցնել ամենասառնասիրտ մարդկանց։

— Ամեն բան սպասում էի այս շանորդիներից, բայց այսպիսի բան՝ երբեք,— խոսում էր սեպուհը, որն արդեն ձեռքից բաց էր թողել զորքերի ղեկավարումը,— երբ և ինչպես են հասցրել քանդել, թուլացնել այս վիթխարի ձորալանջը, անհավատալի է, առասպելական։ Այո՛, այո՛, աստված նրանց կողմն է, այլապես սովորական այր մարդիկ մեր քթի, մեր հսկողության տակ այսքան աշխատանք չէին կարող կատարել։ Ի՞նչ անել, ինչպե՞ս շտկել վիճակը...

Քիչ անց քարագնացների արյունլվիկ, մազապուրծ հրամանատարը, բերանից ցայտող արյունից խեղդվելով, զեկուցեց, որ քարագնաց մարտիկների կեսից ավելին ճզմվել են քարերի տակ, որ հարյուրակն այլևս ի վիճակի չէ մարտական առաջադրանքը կատարելու։

— Գիտե՛մ,— կարճ կտրեց սեպուհը, նույնիսկ չնայելով հրամանատարին, որը զեկուցումը տակավին չավարտած, անշնչացած ընկավ իր ոտների առջև։

— Տարեք սրա դիակը,— ուշացումով անդրադարձավ Մլեհը,— և շեփորեք նահանջ, թող զինվորները վերադառնան ճամբար։

Մարտի աղմուկն այնքան արագ հանգավ, իջավ այնպիսի մի խլացնող լռություն, որ թվում էր ոչ մի ճակատամարտ, ոչ մի արյունահեղ ընդհարում գոյություն չի ունեցել, չի եղել։ Միայն ձորը բերանից-բերան ծածկված էր դեղնավուն մի փոշով, որ հազիվ թե արագ նստեր և թույլ տար ձմեռային ցուրտ արևին լուսավորելու կարճ միջոցում այլանդակված ձորի և ձորալանջի ահեղ պատկերը։ Հրամանատարները սպանված ու վիրավոր զինվորներին հավաքելու իրարանցման մեջ էին։ Կորուստները սպասածին հակառակ շատ չէին, այնպես որ կարճ միջոցում հավաքվեցին պարտված հարյուրակների կեսից ավելին։ Ավելի շատ էին վիրավոր ռազմիկները։ Ձենքից վերք ստացած կամ սպանված մարտիկներն աննշան էին, մեծ մասը քարաջարդ եղած մարտիկներ էին, որոնց վերքերը մահացու էին, անդարմանելի, անբալասանելի։

— Կերակրել զինվորներին,— եղավ հրամանը։

Նորից ծխացին կրակները, կաթսաները նորից խլթխլթացին, մինչդեռ մարտիկները ոչ քաղց էին զգում, ոչ էլ ցանկանում էին բերանները բան դնել։ Նրանք հոգնած էին, մեռնելու չափ հոգնած և նլազում էին լոկ հանգստի ու քնի մասին։

Քիչ անց սեպուհի վրանի դռանը մոտեցրին նաև գերիների մի փոքր խմբի, որոնք գերվել էին Ավելադաշտի ճանապարհին։

— Գերիներին մեկ-մեկ բերեք ինձ մոտ,— հրամայեց սեպուհը։

Գերվածները նման չէին գերիների։ Պահվածքը նրանց ազատ էր, անկախ, մանավանդ ականատես էին եղել իրենց թշնամու ջախջախմանը և առանց թաքցնելու իրենց հրճվանքը շարախնդում էին։

— Հայր սո՛ւրբ, այս գերիներն իրենց այնպես են պահում, որ ասես գերիներ չեն, այլ գերողներ։ Հարկ կլինի սրանց խելքի բերելու համար ենթարկել կտտանքների, այդ իսկ պատճառով էլ, սիրելիդ իմ, գուցե դուռառժամանակ թողնես վրանը, քանզի ինձ թվում է, որ կրոնավորի և տաղերգուի նուրբ սիրտը հազիվ թե դիմանա աշխարհիկ կյանքի կոպտություններին...

— Տեր սեպուհ, խնդրում եմ թույլ տաս մասնակից դառնալ գերիների հարցաքննությանը, գուցե աստված է կամեցել, որ ես այստեղ լինեմ և ականատեսը դառնամ այս անցքերի, այս ծանր անցուդարձի, այս

ծանր ժամանակների, երբ ազգս հայոց ժանգոտվել է ներսից և որի փրկությունը կամ ժանգը սրբել, հեռացնելու մեջ է, կամ կրակի շիկացնելու միջոցով նոր ձուլվածք ստանալու մեջ...

— Օ՜, խնդրեմ, եթե հաճո է լսել խոշտանգվողների վայնասունը...

— Իսկ առանց խոշտանգումների, կտտանքների չի՞ կարելի հարցաքննել....

— Տեսնո՞ւմ ես սրանց պահվածքը, հայր սուրբ, սրանց կոտրելու, ծռելու համար, խոսենք քո լեզվով, հարկավոր է կրակի վրա շիկացնել, որ փափկեն, որ կարելի լինի տալ ցանկացած ձևը։ Խնդրեմ, եթե ցանկանում ես ականատես լինել հարցաքննությանը, մնա՛...

— Մենք ձեզ հարցնելու ենք շենի վիճակից, ձեր ուժից և թուլությունից, ձեր զեկավարներից և այլն։ Դուք ո՞րն եք նախընտրում, ցանկանում եք պատասխանել առանց ցավ ու նախատինք ապրելո՞ւ, թե հակառակը. նախ ջարդենք ձեր կողերը, կարմրած երկաթով նախշենք, այլանդակենք ձեր դեմքերն ու մարմինները, նոր միայն խոսեք։ Իմացե՛ք, մենք կարող ենք բլբուլի նման ձեզ խոսեցնել, եթե հարկավոր լինի, նաև ստիպել տաղեր ասելու, ընտրեցեք ինքներդ...

Նրանցից բարձրահասակն ու թիկնեղը, ամբարտավանորեն ցնցելով ուսերն ու հայացքը մեխելով սեպուհի հայացքի մեջ, քմծիծաղելով քայլ արեց առաջ.

— Այնպես եք խոսում, որ կարծես նապաստակի պես փախչողները քիչ առաջ դուք չէիք...

— Անունդ ասա՛,— թնդաց սեպուհը,— անունդ, տավարի ցավ... Եվ պատասխանիր միայն իմ հարցերին, թե չէ լեզուդ արմատահան կանեմ...

— Ամբատ Զարեհավանցի, մենք բոլորս թոնդրակյաններ ենք...

— Անո՛ւնդ...— շարությունից ոռնաց սեպուհը։

— Արդեն ասացի,— կրկնեց շինականը։

— Մեռելի Զարդո՛...— ձայնեց սեպուհը,— արմատահան արա լեզուն...

— Լսում եմ, տեր իմ,— ձայնեց դահիճը, իր մահվան գործիքները հանելով փայտե արկղից։— Միանգամի՞ց արմատահան անեմ, թե՞ մասմաս...

Գրիգորի մեջքով ցուրտ սարսուռ անցավ։ Զգաց, որ այլևս այս տեսարանին ինքը չի դիմանա։ Ցանկացավ դուրս գալ վրանից և փախչել առանց ետ նայելու, սակայն ամաչեց սեպուհից։ Ինքը ցանկացավ մնալ և ականատես լինել գերիների հարցուփորձին, նույնիսկ այն նախազգուշացումից հետո, որ արվեց սեպուհի կողմից, և հիմա փախչի՞, ախր,

խայտառակություն կլինի, զորականներն իրեն ծաղր ու ծանակի կենթարկեն։ Է՜հ, հետո ինչ, որ չի դիմանա։ Ի՞նչ անել։ Լսվեց սեպուհի մետաղի զնգոցի նմանվող շոր ձայնը.

— Միանգամից, Ջարդո՛, և կոխիր լեզուն իր աչքը, թող տեսնի ինքն իր թշնամուն...

Մնացածը կատարվեց այնքան արագ, որ Գրիգորը չհասցրեց որոշել իր անելիքը։ Լսվեց եղան բառաչյուն հիշեցնող մի սրտակեղեք ձայն և Ջարդոյի ձեռքում գտնվող աքցանին երևաց կարմիր մսակտորը, որից արյուն էր կաթկթում։ Ինքը չկարողացավ նայել և զույգ ձեռքերով ծածկեց դեմքը։ Գերին խեղդվում էր արյան հորձանքից, ղղլացնում էր, բառաչում, հետո տապալվեց ներքև.

— Դե նայիր, շանորդի՛, էլի՞ կխոսես Սմբատ Ջարեհավանցուց... Դուրս տարեք սրա լեշը, գլխատեցե՛ք...

Մյուսներից երկուսը նույնպես հրաժարվեցին հարցերին պատասխանելուց։ Ենթարկվեցին ծանր կտտանքների, բայց առաջինի սարսափն այլևս չկրկնվեց։ Երևում էր սեպուհի սիրտն ու ջղերը նույնպես քարից չէին։ Երևում էր այլևս անկարող էր նման արյունոտ տեսարանների ականատես լինել։ Վերջինը մի պատանի էր, որ ամբողջ հարցուփորձի ընթացքում անձայն արտասվում էր։ Եվ երբ Մեռելի Ջարդոն նրան հրեց սեպուհի կողմը, պատանին անձայն ընկավ սեպուհի առջև։ Ուշաթափ էր։

— Ուշքի բերեք սրան, սա կխոսի։ Սրա մեջ դիմադրության ոգին մեռել է։

Ուշքի բերին։ Դողդողում էր, ատամները զարկում իրար.

— Տարիքդ որքա՞ն է, տղա՛։

— Տասնվեց տարեկան եմ,— տնքաց տղան։

— Դու խոսելո՞ւ ես, թե բառերը աքցանով ենք քաշելու...

— Ի՞նչ եք ուզում ինձանից...

— Շենում որքան կենդանի կռվող կա...

— Ի՞նչ իմանամ,— խոսեց գերին,— թե որքան կենդանի մարդ կա, այնքանը գիտեմ, որ բոլորը կռվող են...

— Ո՞վ է ձեր շենի կռվողների հրամանատարը...

— Առաջ տանուտեր Մաթևոսն էր, հիմա... և լռեց։

— Հիմա ո՞վ է, ասա՛, շո՛ւտ...

— Հիմա իշխանուհի Սաթենիկն է, Սաթենը... Նա է հրամայում...

— Իսկ տանուտերն ի՞նչ եղավ, ո՞ղջ է...

— Տանուտերը ողջ է և Սաթենի օգնականն է...

— Ո՞վ էր քարաբեկորների հոսքը, փլցնելը ղեկավարել...

— Նա մեր աշխարհից չէ...

— Իսկ որտեղի՞ց է...

— Չգիտեմ, ժոդահա մարդ է, Մուշեղ անունով...

— Ասում ես Մուշե՞ղ... Հետաքրքիր է, հետո՞... Իսկ որտեղի՞ց ցույց ընկավ այդ Մուշեղը, չգիտե՞ս, որ ասես, ազատ կարձակեմ, իմացի՛ր...

— Չգիտեմ, երևի գաղտնի ճանապարհ կա...

— Իսկ դու չգիտե՞ս այդ գաղտնի ճանապարհը...

— Չգիտեմ, աստված վկա,— երդվեց պատանին։

— Աստծո անունը չտաս, աստվածակեր շանորդի, թե չէ լեզուդ կկտրեմ...

— Ինչո՞ւ որ, մենք աստծուն հավատում ենք, պաշտում, տեր սեպուհ, մենք չենք ճանաչում լոկ աստծո սպասավորներին...

— Ի՞նչ մարդիկ են այս թոնդրակյանները, սրանց մեջ նստած է դիմադրության. բանավիճելու ոգին, սրանց յուրաքանչյուրի մեջ բնակվում են սատանաների խմբեր, կռվող, բանավիճող, խաբող, աստված միայն գիտե, թե որքան սրիկայություններ կան սրանցից յուրաքանչյուրի հոգում...

***

Երեք օր անց հարձակումը կրկնվեց։ Գիշերային պահակները չանթել էին ճամբարի տարածքում հայտնված երկու շինականի։ Գերիները խոստովանեցին, որ ցանկացել են փախչել պաշարված շենից, որովհետև այլևս ուտելիք չունեն, չկա։ Վերջացել է։ Գյուղում անասուններ չկան, անասնագոմերը ձորում են և պաշարվելու առաջին իսկ օրից ընկել են զինվորների ձեռքը։ Գյուղում շուն ու կատու չի մնացել, շինականները կերել են։ Աղեղները նետեր չունեն՝ սպառվել են, իսկ շենի միակ նժույգը պատկանում է Սաթենիկին։ Գերիները խոստովանեցին նաև, որ խռովարարների ղեկավարներն են շինականներին ցույց տվել փրկության ճանապարհը, այսինքն ասել, որ մեկիկ-մեկիկ, երկուսով կամ երեքով գաղտնի հեռանան շենից, դատարկեն շենը, որովհետև այլևս դիմադրելու կորով և կռվելու ուժ չի մնացել։ Ով կարող է, թող գլուխն ազատի։ Եվ իրենք առաջինն են, որ փորձել են իջնել ձորը, մնացածներից քչերն են հավատում գյուղից փախչելու միջոցով փրկվելու գաղափարին և որոշել են ապրել կամ մեռնել շենում։

— Որքա՞ն տղամարդ կա շենում,— հարցրեց սեպուհը։

— Վաթսուն, ամենաշատը յոթանասուն, մնացածները սպանված են կամ սովահար ընկած, ավելի ժիր ու շարժուն են տակավին կանայք,

որոնք դեռևս դիմացկուն են ու մարտունակ, և երդվել են չհանձնվել հակառակորդին, կռվել մինչև մահ։ Այս է վիճակը...

— Լավ, տարեք սրանց,— հրամայեց սեպուհը,— և բաց թողեք գնան ուր կամենում են։

Քիչ անց զորագունդը լրիվ կազմով շարված էր։ Քարագնացների վաշտն ամենանոսրն էր, ամենաշատ կորուստներն այդ վաշտն էր ունեցել նախորդ մարտում, կեսից ավելին։ Մնացած վաշտերից միայն մեկն էր կորուստներ ունեցել, որ չնչին էին և չէին կարող փոքրացնել վաշտի հարձակման ուժը։

— Այսօր երեկոյան հարձակվում ենք,— առանց ոգևորության խոսեց սեպուհը,— հարձակվում ենք առանց աղմուկ-աղաղակի, առանց թմբուկ-զուռնայի։ Ամենածանր գործը վերստին բաժին է ընկնում քարագնացներին։ Նրանք այժմվանից փոքր խմբերով պետք է մագլցեն ժայռերը, գտնեն այն կածանները, ուր մարդ արարածը կարող է ոտք դնել և մի քանի տեղից ճոպաններով ամրացնեն և հեշտացնեն հետևակի ճանապարհը։ Մութն ընկնելուն պես հետևակայինները այդ պարաններով անաղմուկ կբարձրանան ձորագլուխ և կմտնեն շեն։ Իմացեք նաև, թշնամին հոգեվարքի մեջ է, անկարող է նախկին սաստկությամբ, կատաղությամբ մարտնչել։ Թշնամին մահացու վիրավոր է, իսկ դուք գիտե՞ք՝ վիրավորված գազանն առավել վտանգավոր է, նրա կռիվը մահու և կենաց կռիվ է։ Եթե այսօր մենք խելոք ու կարգին մարտնչենք, կգնանք մեր բան ու գործին։ Կհեռանանք այս անիծված մութ ձորից, ուր այնքան քաջեր ու հերոսներ դրին իրենց երիտասարդ կյանքը հանուն աստծո և առաքելական սուրբ եկեղեցու փրկության։ Ուրեմն, հառաջ, իմ զինակիցներ և իմ զինվորներ...

Եվ քայլեց դեպի իր վրանը։ Գրիգորը սպասում էր նրան։ Նրա ելույթը դուր եկավ Գրիգորին։

— Ինձ թվում է՝ այս գիշեր Ավելադաշտը կհանձնվի, տեր սեպուհ,— խոսեց տաղերգուն։

— Չի՛ հանձնվի, հայր սուրբ, կստիպենք և ճարահատյալ կհանձնվի...

— Տեր սեպուհ, նրանք կամավոր կհանձնվեն, թե ճարահատյալ, դա քո գործն է, քո հրամանատարական գործը։ Ինձ այլ բան է մտահոգում։ Շենում բացի տղամարդկանցից ապրում են կանայք, ծերեր և երեխաներ։ Ի՞նչ է լինելու նրանց վիճակը։ Կռվող զինվորը, երբ արյուն է տեսնում, շատ շուտ է հանձնվում վայրագության կրքին, կարող է ատելությունը հաղթանակ տանի բանականության, անասնական չարությունը՝ մարդկայնության և սատանան՝ աստվածության դեմ, և թափվի անմեղ, ավերիչ երկպառակության հետ ոչ մի առնչություն չունեցող մարդկանց արյունը։

— Ի՞նչ ես առաջարկում, հայր սուրբ, չմտնե՞նք շենը, որ մարդ չկոտորվի։ Ես ում կարող եմ համոզել, որ այսքան արյան ու զոհերի հեղինակներին, այդ հեթանոսներին, ազգիս անառակներին ձեռք չտան, գուցեև առաջարկես համբուրել նրանց արյունոտ ձեռքերը։ Եթե ես կռվողներին արգելեմ վրեժխնդիր լինել թշնամուց, արդյո՞ք չեմ մեղադրվի թոնդրակյան խառնակության մեջ։ Դժվար ժամանակներ են, հայր սուրբ, ես երկու գերի շինականների ազատ արձակեցի, տեղնուտեղը մատնեցին, և եպիսկոպոսը խռովեց ու չեկավ հարձակվող զորագունդը օրհնելու։ Ո՛չ, հայր սուրբ, խիղճը այս պարագային վտանգավոր խորհրդատու է, մարդասիրությունն այստեղ վաճառվող ապրանք չէ։ Վիրավորել են երկնային տիրոջը, սպանել նրա սպասավորներին, ծանակել աստվածային վարդապետությունը։ Պատժաչափը մահն է, մանավանդ, այդ պատիժը թոնդրակյաններն են սահմանել աստծո պաշտամունքի համար, մենք էլ նույնով կպատասխանենք նրանց։ Մանավանդ, ուժեղ ենք նրանցից։

— Ուժեղները միշտ ավելի մեծահոգի են լինում, տեր սեպո՛ւհ...

— Սո՛ւտ է,— բորբոքվեց սեպուհը,— մեծահոգությունը թուլացնում է ուժեղին։ Ուժեղը պետք է լինի նաև դաժան, խորամանկ, անողոք։ Քեզ խփողին ներեցիր, պատրաստվիր ընդունելու նրա հարվածը։ Իսկ նա չի խնայի։

— Դուրս է գալիս, որ կոտորվելու են նաև մանուկներն ու կանայք...

— Նրանք էլ են խառն այս ամեհի գործին։ Նույնիսկ խռովարարների առաջնորդը կին է։ Դու ինչպե՞ս կներես այդ կնոջն, ասա՛...

— Ես նրան պարզապես պատժելու ուժ չեմ ունենա, դա աստվածային սկզբունք է, սեպո՛ւհ...

— Աստվածային սկզբունքն այն է, որ աստվածապիղծներին ներե՞նք, այո՞, իսկ նրանք չեն ներում, նրանք ներելը թուլություն են համարում, գթասրտությունը՝ վախկոտություն, նրանք նման բաների հետևից չեն ընկնում, պարզապես ոչնչացնում են աստծո մարդկանց...

— Քեզ հետ վիճելը դժվար է, տեր սեպո՛ւհ, աշխարհիկ իշխանությունների իմաստասիրությունը համաքայլ չէ հոգևոր վարդապետությանը և գուցե բանավիճելու հարկ էլ չկա, իմ խնդիրքն է՝ եթե կարող ես ներել մանուկներին ու կանանց, մի՛ թողնի սպանելու և կոտանքների ենթարկելու։ Այսքա՛ն։

— Ես կներեմ, սրբազանը չի ների։ Սպանելու հրաման կտա և կնստի ու մանկան նման կարտասվի։ Եթե ես նրան ականջալուր չլինեմ, հազարու մի մեղքերի մեջ կմեղադրի, իսկ ես պաշտպանվելու ուժ չեմ ունենա և

ոչ ոք ինձ չի պաշտպանի։ Այնպես որ ինձանից մի պահանջի այն, ինչ վեր է իմ ուժերից...

— Հասկացա, տեր սեպուհ։ Դու ձեռքերդ լվանում ես, քանզի ուժ չունես կանխելու աղետը...

— Ավելի ճիշտ, իրավունք չունեմ։ Իրավունք...

— Իսկ աստված կների՞ այս անգթությունը։ Նրա անունով կոտորում ենք ժողովրդին և՛ մենք, և՛ նրանք։ Վերջապես ո՞վ է ճշմարիտը... Ո՞վ...

— Ճշմարիտը միշտ եղել և մնում է ուժեղը։ Ուժեղի հետ նաև երկնավորը։ Այո՛, այո՛... Այս Ավելադաշտը, հայր սուրբ, պետք է ջնջվի երկրիս երեսից։ Այդպես է աշխարհիկ և հոգևոր իշխանությունների կամքը։ Ես հավատացած եմ, որ այդպես է նաև երկնավորի կամքը։ Ավելադաշտը, միևնույն է, այսօր կամ վաղը դառնալու է ավերադաշտ և իմ ու քո ձեռքով, հայր սուրբ, ի՛մ և քո՛ ձեռքով...

***

Զորագունդը գիշերով անաղմուկ բարձրանում էր ձորալանջն ի վեր։ Ոչ մի ձայն, ոչ մի շշուկ, հակառակորդի կենդանության ոչ մի նշան։ Իսկ կեսգիշերին հարյուրակներն արդեն բռնել էին գյուղի թիկունքի ոչ բարձր բլուրները։ Այստեղից՝ վերևից շենը երևում էր ասես ափի մեջ։ Մանավանդ, որ գյուղը լուսավորված էր։ Եկեղեցու առջև, շենի միակ հրապարակում վառվում էր հսկայական խարույկը, որի կրակե լեզուները լիզում էին ձմեռային երկնքի ոչ թանձր մթությունը։ Երևում էին խարույկի շուրջը շարժվող մարդիկ, որոնք ամենայն հավանականությամբ վառելիք էին ավելացնում կրակին, բորբոքում, թեժացնում էին խարույկը։ Ամեն ինչից երևում էր, որ շենն արթուն է և նախապատրաստվում է ինչոր արարողության։ Երևում էր նաև, որ զորագնդի կողմից շենի շրջապատումը հայտնի է ապստամբ շինականներին։

— Ինչի՞ համար է այս աստծո փեշերը խանձող հսկայական խարույկը,— զարմացած իրար էին հարցնում զինվորները։

— Չլինի՞ ցանկանում են ողջ շենով ինքնասպան լինել,— կասկածանքով պատասխանում էր մեկը։

— Թե որ ցանկանային ինքնասպան լինել, էլ ուր էին իրենց տանջամահ անում կրակի մեջ այրվելով,— խոսում, ժխտում էր մյուսը,— մի քանի քայլի վրա անհատակ խորխորատն է, կթափվեին ներքև ու վերջ։

Շուտով հարյուրակների դասավորման վայրը հասան նաև սեպուհն

ու նրա ուղեկից զորականները։ Խարույկի կրակն այնքան ուժեղ էր, որ նրա լույսի տակ զինվորները կարողանում էին տեսնել միմյանց դեմքերը։ Բոցը երկարում էր վե՛ր, վե՛ր, և նրա շառափը հայտնագործում էր ձորալանջերը, նրանց թեքությունները, անդունդների պռունկների ներքև սևացող խորխորատների բերանները։ Խարույկի շուրջը շարժվող շինականների ստվերներն ահագնորեն մեծ էին և շարժվում էին ձորալանջերին առասպելական, դիվական մեծությամբ և երկարելով, երկարելով կորչում գիշերային երկնքի մեջ։

— Հեթանոսական գիշեր է,— խոսեց Գրիգորը։

— Բայց ի՞նչ է նրանց մտքին,— մտորում էր սեպուհը, որոնելով իր հարցման պատասխանը։

Հետո հանկարծ գիշերային լռությունը ցնցվեց ու պայթեց կայծակի որոտից։ Լեռները դմբդմբացին, արձագանքները փշրվեցին ու թափվեցին ձորերն ու անդունդները, և դմբդմբոցի արձագանքը գնաց հեռո՛ւ, հեռո՛ւ, գնաց թափառելու և մեռնելու հեռուներում։

— Այս ի՞նչ էր,— հարցրին շփոթված զորականները։

— Թմբուկներն են խփում, խմբով, միանգամից։ Այս ի՞նչ դիվական գիշեր է...

— Հեթանոսական գիշեր է,— կրկնեց իրենը Գրիգորը։

— Ոչինչ չեմ հասկանում,— խոստովանեց սեպուհը,— չեմ հասկանում...

— Չհարձակվե՞նք շենի վրա,— հարցրեց հարյուրապետներից մեկը։

— Առայժմ ոչ մի հարձակում,— պատասխանեց սեպուհը։

Թմբուկների թնդյունը շարունակվում էր։ Արձագանքը խանգարում էր ըմբռնելու թմբուկների բիրտ երաժշտությունը, համաչափությունը։ Հետո ձայները հստակվեցին, մաքրվեցին արձագանքների ժխորից և դմբդմբոցը դարձավ ընկալելի։ Հետո կրակի լույսի տակ երևացին թմբկահարները՝ իրենց հսկայական թմբուկներով։ Հինգն էին։ Հետո զինվորների զարմանքից լայնացած աչքերի առջև ոլորվեց մերկ կանանց ու տղամարդկանց պարի շղթան։ Հրապարակում կրակի հետ մրցության ելավ մերկ կանանց, մանավանդ, պարմանուհիների կրակե պարը։ Շիկացումը մեծացավ։ Խմբական պար էր, շարժումները զարմանալիորեն միասնական էին, համաչափ։ Ոլորվում էր պարը, որ հեթանոսական էր, արտաբերվող հնչյունները ևս անծանոթ էին Գրիգորին։ Ուրեմն, Սյունյաց լեռներում մեռած չէր հեթանոսությունը, Գրիգորը հանկարծ իր համար հայտնագործեց պարի ներքին իմաստը։ Ուրեմն, այս ահագին խարույկը մարմնավորում է ատրուշանի հուրը, պարել են նրա շուրջը և զոհ են մատուցել իրենց հեթանոս աստվածներին։ «Ուրեմն, այս գիշեր զոհաբերություն է

վինելու, զոհ են մատուցելու, իհարկե, ոչ հեթանոս աստվածներին, բայց ո՞ւմ»։ Իսկ պարը գնալով ահագնանում էր, ծեքծեքում էին աղջիկների ու տղաների մարմինները, գալարվում էին գիրգ թևերը, քամու բերանն ընկած եղեգների նման դողում, սրսփում էին մեջքերը։ Քանդվում, հավաքվում ու հյուսվում էր շղթան՝ հուլունքաշարի նման։ Տեսարանը մոռանալ էր տվել զինվորներին, թե որտեղ են նրանք, ինչ են դիտում։ Իսկ պարը գնալով ահագնանում էր։ Պիտի պարեին, այլ ելք չկար, նրանց տկլոր, քրտնած մարմիններն անմիջապես կփայտանային ցրտից։ Հանկարծ սեպուհի գլխում կայծակեց այն միտքը, որ նրանք մահվան պար էին պարում։ Այդ պարից հետո նրանք ապրել չէին կարող։ Իրենց վերջին պարն էին կաքավում։ Բայց ինչո՞ւ մերկ։ Ինչո՞ւ բաց կրծքերով, որ թրթթրում էին բնավեր հավքերի նման։ Ինչո՞ւ... Պարի շղթան թմբուկների թնդյուններին համաչափ նաև երգում է, սկզբում կամաց, մի տեսակ վախվորած, իսկ հետո ավելի բարձրաձայն և բավականին խրոխտ.

Թո՛ղ կորչի կյանքն անարգ,
Հե՛պ, հո՛պ, զա՛րկ, զա՛րկ,
Կեցցե մահն իմացյալ,
Հե՛պ, հո՛պ, զա՛րկ, զա՛րկ...

— Նետահարել հեթանոս աստվածադավներին,— լսվեց հրամանը։

Զինվորներն ասես արթնացան քնից։ Հեթանոսական պարի ներշաչացումը ազդել էր ջղերի վրա։ Շարքերը ելան ոտքի։ Պրկվեցին աղեղները և ահավոր սուլոցով տասնյակ նետեր սուրացին դեպի հնազանդ ու փխրուն մարմինները։ Սկսվեց իսկական սպանդը։ Շղթայի մի մասը նետահարված տափակեց գետնին։ Մեռնողները մահվան ջղաձգության մեջ ճանկռտում էին գետինը, հող էին լցնում իրենց վրա, ձեռքերով ծեծում էին իրենց գլուխները։ Կանանցից մի ջահել, ճկուն աղջիկ նետը թիկունքին, ահավոր ճիչով վազում էր պարի հրապարակով մեկ և մի քանի շրջան կատարելուց հետո սուրաց դեպի ժայռագլուխ և նետվեց անդունդ։

— Նետահարե՛լ...— լսվում էին հրամանները։

Նետերը սուլում էին, սուրում էին, խլում նորանոր զոհեր, բայց մահվան պարը առավել ահագնանում էր, թեև նոսրանում էր պարի շղթան։

— Մեռնում են ազատության մեջ, մեռնում են առանց գերվելու...

— Ի՞նչ տեսարան է, աստված իմ, այդ ինչպես կենդանացան հեթանոս աստվածները...

— Աստվածները չեն մեռնում, նրանք մեռելներից փոխանցվում են տղերին...

Գերությունը մա՛հ է, մա՛հ,
Հե՛պ, հո՛պ, զա՛րկ, զա՛րկ,
Պատվով մահը փա՛ռք է, փա՛ռք,
Հե՛պ, հո՛պ, զա՛րկ, զա՛րկ...

— Աստվա՜ծ իմ, մեռնում են պարելով։ Նրանք մահը գերադասում են նվաստացումից...

Ընկնում էին պարելով, մեռնում էին երգելով։ Հառաչանքների, ճիչերի, ողբի ձայներ չէին լսվում, այդ ձայները կորչում էին թմբուկների թնդյունի, երգեցողության, մոլտոց հիշեցնող ինչ-որ հնչյունների մեջ։ Գրիգորը նման սրտաճմլիկ, նման հեթանոսական, նման հերոսական երևույթ ոչ միայն չէր տեսել, այլ նույնիսկ չէր էլ հավատացել, որ կարող է տեղի ունենալ։

Շենն իրեն դատապարտել էր ինքնասպանության և այժմ ի կատար էր ածում իր որոշումը։ Մեռնում էր գյուղովի, մեռնում էր կատարելով իր վերջին պարտքը՝ իր հավատամքի, իր դավանանքի, իր վարդապետության հանդեպ։ «Այո՛,— խորհում էր Գրիգորը,— նման ճանապարհ ընտրելու համար հարկավոր է անսահման հավատ իր դավանանքի հանդեպ, հարկավոր է այնպիսի նվիրվածություն, որի առջևից նահանջի մահը։ Այս թոնդրակյանները կրկին ու կրկին ապացուցում են, որ կան սրբություններ, որոնց համար կարելի է ի սպաս դնել կյանքն անմնացորդ և պարելով մեռնել, երգելով՝ ողբալ։ Կանեի՞ն նույնը թոնդրակյանների հակառակորդները։ Չէի՞ն անի։ Նրանք կորցնելու շատ բան ունեն մինչև կյանք կորցնելը։ Նրանք չէին կարող նման ծանր վճիռ կայացնել իրենց համար։ Վճռաբեկ այնքան պատճառներ ունեն այս աշխարհի հոգևոր տերերը, որ գործը նման վճիռ կայացնելուն երբեք չէր հասնի։ Տե՛ր աստված, եթե դու չես ցանկանում խառնվել այս ծանր, արյունոտ վեճին, գոնե մեզ՝ քո երկրպագողներին տո՛ւր քո աստվածային շնորհից դույզն ինչ, որ մենք կարողանանք տարբերել թացը չորից, անմեղը՝ մեղավորից, անկատարը՝ կատարյալից, լույսը՝ մութից, ճշմարտությունը՝ ստից, տո՛ւր աշխարհը ճանաչելու քո բանալին, որպեսզի աշխարհը ճանաչելով կարողանանք ճանաչել նաև նրա ճակատագիրը, կարողանանք մասնակցել նրա կատարյալ դառնալուն։ Այս ի՞նչ է կատարվում այս հեթանոսական գիշերում։ Տո՛ւր ինձ այս ամենը ընկալելու հնարը կամ զրկիր ինձ մտածելու ունակությունից։ Տո՛ւր ինձ քաջություն, մասնակից դառնալու նման անօրինակ հերոսության կամ զրկիր ինձ կյանքից։ Տո՛ւր ինձ այն անհնար հնարքը, որ ես այս ամենը հասցնեմ քեզ, քանզի քեզ հասած տեղեկությունները միտումնավոր են և քո սպասավոր-

ները ճշմարտությունը կողոպտում են քո անունով, տո՛ւր ինձ այդ հնարքը...»։

Կաքավողները նոսրանում էին, մահն ավերում էր պարի շղթան։ Արդեն շենի բնակիչների մեծ մասը թափված էին սառած գետնին, մյուսները կաքավելով գնում էին մահվանն ընդառաջ։ Նետերը կենդանի մարմինների տենդագին որոնման մեջ էին։ Նրանք սկսեցին շանթել նաև թմբկահարներին։ Կամաց իջնում էին դմբդմբոցի ձայները, պարը կամաց մոտենում էր իր ավարտին։ Վերջին պարողներն ընկան, միակ մնացած թմբուկը լռեց։

— Կանոնավոր շղթաներով իջնել գյուղ, խռովարարների ղեկավարները չպետք է ազատվեն,— ձայնեց սեպուհը։

Զորագունդը բարձրացավ և շարժվեց առաջ։

Կամաց հատնում էր նաև խարույկի ուժը։ Այն բորբոք պահողներն ու թեժացնողներն այլևս չկային։ Զորերը, սարերը, բլուրները կամաց խառնվում էին միմյանց, ձուլվում մթությանը, պարողները ընկած էին, երգողները, թմբկահարները՝ նույնպես։ Հանկարծ լավեց ձիու դոփյուն և զորաշղթայի առջևում երևաց հեծյալը, սպիտակ ձիու վրա։ Պատկերն ազդեցիկ էր, շղթան ընկրկեց։ Երկար մազերը քամուն բացած սլանում էր հեծյալը։ Կին էր։ Ճանաչեցին անմիջապես։

— Սաթենի՜կը, Սաթե՜նը,— միաձայն թնդաց զորագունդը։ Շփոթությունն այնքան մեծ էր, որ նույնիսկ մոռացան, առաջին պահ չհասցրին օղապարան նետել և որսալ կնոջը։ Հաջորդ պահն արդեն ուշ էր։ Կայծակի արագությամբ ընթացող նժույգը նետվեց դեպի ձորաբերանը։ Անդունդի եզրին կարծես մի պահ արգելակվեց, ապա կախվեց մթին երախն ի վար...

***

Ձմռան ցրտից ճաքճքված երկինքը բացվեց, բայց օրը բացվելու նման չէր։ Շենը ծխում էր, բայց ծուխը սովորական թոնիրների ծուխ չէր։ Աղմկում էր, բայց մանուկների և կյանքի ուրախ աղմուկ չէր։ Գյուղը հրդեհել էին զինվորները և այրվում էր սոսկալի ճրթճրթոցով։ Զինվորները մարդկանց որսալու աղմկոտ եռուզեռի մեջ էին։ Սաթենիկը գահավիժեց անդունդ։ Մուշեղ անունով օտարականին այդպես էլ չգտան։ Տանուտերի դիակը գտնվեց սպանվածների մեջ։ Ավելադաշտը իրապես դարձավ ավերադաշտ։ Գյուղի եկեղեցու մեջ էր գյուղի ամբողջ հարստությունը։ Մանուկները։ Ծծկերից մինչև տասներկու տարեկան։ Թոնդրակյանները ճիշտ հաշիվ էին արել։ Գիտեին, որ զինվորական և հոգևոր մարդիկ չեն ավերի, կրակի չեն մատնի եկեղեցին և մանուկներին տեղավորել էին այնտեղ։ Դուռը բացելուն և մարդկանց տեսնելուն պես սոսկալի լաց ու վայնասուն բարձրացավ։ Լալիս էին բոլորը։ Ավելի մեծերը հաց էին ուզում, փոքրերը՝ իրենց մայրերին, ծծկերները՝ մայրական կուրծք։ Սեպուհը ձեռքերով ականջները գոցեց ու փախավ։ Չգիտեր անելիքը։ Աչքն ընկավ իր համհարզի հետ կանգնած դահճի վրա։

— Հը՛, Ջարդո, ի՞նչ անենք...— այնպես, ի միջի այլոց, հարցրեց սեպուհը։

— Ո՞ւմ...— չհասկացավ Մեռելի Ջարդոն։

— Այս մանկանց,— ասաց։

— Գլխատե՞մ, տեր սեպուհ,— խոսեց դահիճը։

— Ապո՜ւշ...— սոսկաց սեպուհը,— դու գիտես ի՞նչ ես բարբառում... Դու ուրիշ բան չունե՞ր ասելու, ապո՜ւշ...

— Ես ի՞նչ անեմ, տեր սեպուհ,— խեղճացավ Ջարդոն,— ես ուրիշ արհեստ չունեմ, իմ գիտեցածն այդ է...

— Լավ, գնա բանիդ, աշխատիր աչքիս չերևալ...

— Լսում եմ, տեր իմ...— և հեռացավ։

Զինվորները նեղ ճանապարհով, գահավորակի վրա Ավելադաշտ բարձրացրին Սյունյաց հոգևոր պետին։ Զինվորները ջերմ ընդունելություն սարքեցին սրբազանի պատվին։ Երկշարք կանգնած զինվորների միջով սրբազանն անցավ «ներկայացման վայրով», տեսավ ամեն ինչ, ոչ մի հարց չտվեց, միայն ձեռքով նշան արեց, որ դիակները հեռացնեն ասպարեզից և ոչ մի անգամ այլևս չնայեց պարի հրապարակին։ Մոտիկները տեսան, որ նա արտասվում է և անընդհատ խաչակնքում։

— Տե՜ր, ներիր հանցավորիս...— մրմնջալով։

Իսկ երբ մտավ եկեղեցի և տեսավ մի քանի հարյուր սովահար, մերկած, վայնասուն բարձրացնող մանկանց, սրբազանը սրտի նվաղում ունեցավ, որ շատ ծանր տպավորություն գործեց շրջապատի մարդկանց վրա։ Երբ ուշքի բերին, նա կարգադրեց, որ ձորից հավաքեն վրանը, պատրաստեն իր կառքն ու իրեն արագ տեղափոխեն Տաթև։ Մեկնելուց առաջ սեպուհը հարցրեց.

— Սրբազա՜ն, ապստամբներ այլևս չկան, նրանց ոճրաբույնն ավերված է, աստծո նահատակված սպասավորների վրեժը լուծված է։ Սակայն տակավին առկախ է որբացած մանուկների և նրանց խնամողների վիճակը։ Հրամայի՜ր, սրբազան, և մենք կկատարենք քո ասածները...

— Տեր սեպո՜ւհ, մենք աստծո ծառաներն ենք և պետք է վարվենք գթասրտորեն։ Մանկանց պետք է տեղափոխել Տաթև, սայլերով, ճանա-

պարհը հեռու է, պետք է ջանաք, որ զոհեր չլինեն, այլևս զոհեր չլինեն,— և սրբազանը սկսեց բարձրաձայն արտասվել,— տե՛ր իմ, ներիր մեզ, քո անաղարտության և քո երկնային մաքրության համար է հեղվում այս արյունը, ների՛ր... Մանկանց պետք է տեղավորել Տաթևի որբանոցում։ Գուցե աստված մեզ ների...

Հաջորդ առավոտյան Գրիգորը մտավ սրբազանի վրանը։ Ճամբարում արդեն մեծ իրարանցում էր, հավաքում էին վրանները, զորականները, գործն ավարտել էին և մեկնում էին։ Գրիգորը մտավ վրանը և կանգ առավ, սրբազանը չոքած խաչելիության առջև, ջերմեռանդորեն աղոթում էր։ Գրիգորը եկել էր հրաժեշտ տալու տարեց կրոնավորին, որի նկատմամբ տարօրինակ վերաբերմունք ուներ, քանզի տարօրինակ անձ էր ինքը՝ սրբազանը։ Նրա նկատմամբ Գրիգորի հարգանքին և պատկառանքին զարմանալիորեն համերաշխում էր նաև արգահատանքը, որին նույնպես արժանի էր Տաթևի հոգևոր առաջնորդը։ Չգիտեր այդ մարդու մեջ աստված է նստած, թե աստծո թշնամին։ Չգիտեր այդ անձի մեջ բարեգութ կրոնավորն է ուժեղ, թե ջերմեռանդ անգթություն սերմանողը։ Աստված և սատանան միասին մեկի մեջ բնակվել չեն կարող, սակայն սրբազանի մեջ նրանք համերաշխ են, միասնական։ Գրիգորը չէր կարողանում մոռանալ ոչ նրա արյունն ու գազանությունը խրախուսող ճառերը, ոչ էլ սրտահույզ տաք արտասուքները, որոնք գլորվում էին նրա այտերն ի վար՝ որբացած մանկանց տեսնելիս։ Սրբազանն աղոթում էր և Գրիգորն ակամայից ականջում էր նրա հոգեկան տվայտանքները.

— Տեր երկնայի՛ն, դո՛ւ, միայն դո՛ւ կարող ես ներել քո մեղավոր ծառայի մեղքերը։ Ես ծառայում եմ քեզ, տեր իմ, իսկ քեզ հավատարմորեն ծառայելու համար, երբ վտանգվում է քո հեղինակությունը, քիչ է, շատ քիչ է, բարեգթությունն ու խղճին ապավինելը, ապավինելով նրանց, կկորցնենք քեզ, երկնային, քո փրկությունը սրով պաշտպանելու մեջ է։ Իսկ սրին ապավինելով կկորցնենք մեզ, կկորցնենք աստվածությանդ բարեհաճությունը մեր նկատմամբ։ Ասա, ինչպե՞ս վարվենք, որ չդառնանք քո թշնամին և, միաժամանակ, մնանք մեր բարձրության վրա։ Արյունոտ են քո ծառայի ձեռքերը, այս ձեռքերով անհնար է խաչ բռնելը, այս շուրթերով, որոնցով ես մարդկանց մղել եմ արյան նախճիրների, անհնար քեզ երկրպագելը, քեզ տաղերգելը, տե՛ր աստված, դու ներիր ինձ և ճանապարհ ցույց տուր մաքրվելու...

«Որքան խաբուսիկ է առաջին տպավորությունը,— խորհում էր նրան լսելով Գրիգորը,— սրբազանը կռիվ ունի ինքն իր դեմ, մաքրվելու, մեղքերը քավելու ծանր մաքառումների մեջ է և օգնություն է աղերսում աստծուց՝ աստվածային պատվիրանը խախտելու համար, որը կատարել է աստվածասիրության նշանաբանով։ Արդյո՞ք աստվածասիրությունն է եղել պատճառը, թե աստծո սպասավորների հեղինակությունն ու ինչքը փրկելու պատրվակն է եղել նրան արյան և կոտորածի մղելու հիմնական պատճառը։ Ո՞ւմ հետ է սրբազանը, թալանված, անտի շինականների, որոնք ապրելու բնական, սովորական հնար են պեղում իրենց գոփողներից, թե՞ նրանց հետ, ովքեր այս մեծ աղետի պատճառն են և արյան ու կոտորածների հեղինակները։ Չէ՛, աստված այստեղ գործ չունի, աստված դուրս է այս արյունոտ խաղից։ Իսկ աստվածության սպասարկող բանակը իր թալանված հեղինակությունը գոցում է աստծո անունով և իր ինչքը փրկելու համար օգտագործում է աստծո անսահման հեղինակությունը։ Ինչ որ է, սրբազանն իր հոգու մաքրությունը կորցրած է համարում և դիմում է երկնային տիրոջն իրեն զորավիգ լինելու ոչ այնքան իր մեղքերը քավելու, որքան մեղքերը կիսելու խնդրանքով։ Դժվար ժամանակներ են, թացն ու չորը վառվում են միասին և չկա մեկը, որ փորձի դրանք բաժանել, տարբերակել միմյանցից...»։

Սրբազանը ծանր տնքալով և իր հսկայական մարմինը մի կերպ տեղաշարժելով, ոտքի կանգնեց։ Գունատ էր և ձեռքերը դողում էին։ Գրիգորն առաջացավ, բռնեց նրա ծանր աջը և մոտեցրեց շուրթերին։ Մատները խեղդված էին ոսկե և անգին քարերով զարդարված մատանիների մեջ։

— Լսում եմ, որդյա՛կ իմ,— խոսեց սրբազանը։

— Եկել եմ,— ասաց տաղերգուն,— շնորհակալություն հայտնելու և հրաժեշտ տալու, սրբազա՛ն։ Ճակատամարտն ավարտվեց և այստեղ մնալու այլ առիթներ չկան, պահ է մեկնելու աշխարհս Վասպուրական։

— Ճանապարհվիր խաղաղությամբ, որդյակ իմ։ Դու ինքդ կամավոր քեզ հանձնեցիր մրրիկներին և կրակներին։ Ծանր օրեր ապրեցիր և մեզ հետ կիսեցիր տանջանքն ու ցուրտը, ռազմի անհաջողությունները և, ի վերջո, հաղթանակը։ Ցանկալի բան չէ ականատեսը դառնալ մի բախումի, որ ազգիս ներսում է և թափվող արյունը երկուստեք հայի է, բայց այն մեծ դասը, որ դու քաղեցիր այս մի քանի օրում, որդյակ իմ, կօգնի քեզ էլ ավելի հավատարիմ լինել երկնային տիրոջը և հայ առաքելական եկեղեցուն, որի սպասավորներն ենք մենք, զավակս...

— Այո՛, սրբազան, այս ինձ մեծ դաս հանդիսացավ։ Այս խառնակությունը տխուր իրողություն է, որի մեջ դժվար է հստակորեն առանձնացնել արդարն ու մեղավորը։ Մեղավորը միայն ըմբոստացող շինականը չէ, սրբազան, ոչ էլ իր շահերը պաշտպանող աստծո սպասավորը։ Առաջինը ապրելու իրավունք է հայցում ինչքատերերից, իսկ երկրորդը պաշտպանում է իր ինչքը։ Առաջինը եկեղեցու սպասավորներին համա-

ռում է աստվածության թշնամիներ և նրանց միջնորդող դերը ավելորդություն, երկրորդը շինականին և նրա գաղափարախոսությունը ներկայացնում է որպես աստվածապղծություն, հեթանոսություն և անբարոյականություն, որպեսզի առանց դժվարության սանձազերծի իր ձեռքերը, նրան ճնշելու ու ոչնչացնելու ազատությունը նվաճի։ Մի խոսքով, սրբազան, այս խառնակությունը քիչ է առնչվում աստծո հետ, որի անունից և որի համար հեղվում է մարդկանց արյունը...

Սրբազանի դեմքը գնալով մթնում էր, Գրիգորի վերջին բառերը, թվաց, նա չլսեց, որովհետև մատներով խցանել էր ականջները։ Գրիգորն զգաց, որ չափն անցել է և կանգ առավ, այլևս չիմանալով ինչ անել։

— Այս ի՞նչ է լսում ականջս, վարդապե՛տ։ Այս ի՞նչ խառնակ, ամբարիշտ մտքեր հրաբխեցին շուրթերդ։ Մի՞թե քո դասերը այս խռովությունից այն է, որ շինականն ելել է արդար կռվի, որ անոթի չմնա։ Նա քանդում է մեր տաճարներն ու վանքերը, եկեղեցիներն ու սրբատեղիները։ Դու, ճգնակենցաղ կրոնավորդ, գտնում ես, որ դրանք, այդ ոգեկործան ասպատակությունները քիչ են առնչվում աստծո հետ։ Խոստովանիր մեղքերդ, մոլորված հոգի, խոստովանիր տիրոջը, աղերսիր նրա մեծահոգությունը, գուցե նա ների չարագույժ մտքերդ, այլապես քո պատիժը դուրս է մեր իրավասությունից և աստվածային ենթակայություն է աղերսում։ Ասա՛, ի՞նչը դրդեց քեզ նման անաստված մտքերի. գուցե մարտի դաժանությո՞ւնը, սպանվածների նկատմամբ գթասրտությո՞ւնը, թե՞ նրանց վարդապետության հետ առնչվելը, ի՞նչը...

Սրբազանը հևում էր չարությունից, թվում էր, թե անտեսանելի մեկը ճանկել է նրա կոկորդն ու խեղդում է։ Դեմքը կապտել էր և արնախեղդ աչքերը դուրս էին պրծել ակնակապիճներից։ Գրիգորը երկյուղեց. չլինի՞ մի բան պատահի ծերունուն և իր խղճին ծանրանա նրա մահը։ Հասկացավ, որ ինքն ավելի է ասել, քան կարելի է։ «Միևնույն է, նա ինձ չի հասկանալու ինչ էլ լինի։ Նա պաշտպանում է ի՛ր աստծուն, այլ ոչ թե շինականի աստծուն։ Նրանք տարբեր ակնկալիքներ ունեն աստծուց, և մեկի պահանջն առ աստված ժխտումն է մյուսի աստծու։ Հիմա ես ինչպե՞ս հանգստացնեմ այս գազազած ծերունուն»։

— Ների՛ր, սրբազան, ների՛ր, ես ճիշտ չձևակերպեցի իմ մտքերը, այլ կերպ հասկացվելուս համար ներիր։ Չէ՞ որ այս ծանր օրերին ես եղել եմ ձեզ հետ, տերունական զորքի հետ և մտքովս նույնիսկ չի անցել, որ իմ տեղը կարող է լինել հակառակորդի բանակում կամ իմ համոզմունքները կարող եմ փոխանակել նրանց հետ, ում դեմ ոտքի է ելել հոգևոր աշխարհը։

— Ես քեզ այս անգամ գուցե կարողանամ ներել, վարդապետ, բայց մեկ պայմանով, ես անպատճառ բանագնաց կուղարկեմ Նարեկավանքի միաբանություն իմ գրությամբ, որի մեջ կշարադրեմ քո մտքերը՝ ինչ լսել է ունկս և, միաժամանակ, քո մեղայականն այդ մտքերին ի հակակշիռ։ Թող նրանք գնահատեն քո մեղքի և անմեղության չափը։

Վրան մտավ սպասավորը։ Սրբազանն ընդհատեց իր խոսքը և հայացքը դարձավ հարցական. «Հը՞...»։

— Իշխանուհու դիակը չկա, սրբազան։ Նրան գտնելու մեր բոլոր ճիգերն անցան ապարդյուն։ Չկա...

— Գուցե այնտե՞ղ չեք որոնում, ուր հարկավոր է...

— Ո՛չ, սրբազան, այնտեղ ընկած է ձիու դիակը, իսկ տիրուհու դիակն անհայտացել է, ոչ մի հետք, մեր որոնումները կիրճի ամբողջ տարածքում արդյունք չտվին...

— Ապուշնե՛ր, ձեր քթի տակից թոցրել են թոնդրակյան խռովության առաջնորդին, իսկ դուք քնած եք էշի ականջում...

— Բոլոր որոնողներն այն կարծիքին են, որ իշխանուհին համբարձվել է, սրբազա՛ն, այլապես նա կիրճի հատակի քարերին ջախջախվելուց հետո ո՞ւր կարող էր գնալ...

— Իսկ ձեր՝ ավանակներիդ մտքով չանցավ, որ տարել են, գողացել են դիակը...

— Համբարձվել է, սրբազա՛ն...— միամտաբար իրենը կրկնեց սպասավորը։

— Դու էլի քո էշն ես քշում, ապո՛ւշ. ինչո՞ւ պիտի աստվածասպանը համբարձվեր, քեզ եմ հարցնում, ինչո՞ւ... Քրիստո՞ս էր, աստծո որդի՞, սո՞ւրբ էր, որ երկնային տերերը նրան բարձրացնեն աստծո տիրույթները, հը՞... Քեզ եմ հարցնում,— խեղդվում էր սրբազանը։

Գրիգորի ականջը ծակեց սրբազանի խոսքի մեջ էշի հաճախակի հայտնվելը, սակայն մոտիկները քաջ գիտեին, որ դա արդյունք է սրբազանի գեշ տրամադրության, հղի է ահավոր փոթորիկներով և հայհոյանքներով, որ ուր որ է պայթելու է դիմացինի գլխին։ Սպասավորը դա գիտեր և նահանջեց։

— Ի՞նչ եք հրամայում, սրբազան,— ասաց ինքն իրեն հրելով դեպի վրանի ելքը։

— Որոնեցե՛ք, թեկուզ գետնի տակից հանեցեք նրա դիակը, որ ամբողջ Սյունիքը տեսնի հերձվածողների մայր իշխանուհուն և նրա էշության վախճանը...

Սպասավորն անաղմուկ հեռացավ։ Սուսուփուս ցանկացավ հեռանալ նաև Գրիգորը։ Այդ պահին նա ատում էր սրբազանին, կեղտոտ վիրավո-

բանքների, անհարգալից վերաբերմունքի համար առ գեղեցկուհի Սաթենը, որը երիտասարդ կրոնավորի և տաղերգուի հոգում զբաղեցնում էր բարվական տաքուկ մի անկյուն իր խիզախությամբ ու գեղեցկությամբ և այլ շնորհներով։ Սաթենի հերոսական և ողբերգական մահը շիկացած վերքի նման այրում էր նրա սիրտը ցավով ու ափսոսանքով։ Եվ նա ցանկանում էր պահ առաջ հեռանալ ցնդած կրոնավորի մոտից, որպեսզի լսի նոր այպանքներ ու հայհոյանքներ իշխանուհու հասցեին։

— Դու մնա՛,— ասես նրա մտքերը կարդալով հրամայեց սրբազանը, առանց նայելու Գրիգորի կողմը,— իմացիր, գնում է մահու և կենաց գոտեմարտ շինականների և եկեղեցու միջև, այդ ծանր բախումներում գոտեմարտ շինականների և եկեղեցու միջև, այդ ծանր բախումներում գոտեմարտուգվում է մեր արյան և նվիրվածության աստիճանը։ Այս գոտեմարտում, երիտասարդ, միջին ճանապարհ չկա։ Եթե մեզ հետ չես, ուրեմն, մեր թշնամին ես, չեզոքությունն առավել վտանգավոր է, քանզի նա թաքնված, չճանաչվող թշնամություն է, որ կարող է հարմար պահի վերջերկրային տեղապահների կամքն ու հրամանը։ Հակառակ դեպքում ինչո՞վ ես հաստատելու քո սերն առ աստված։ Քո տեղը շինականների կողքին չէ, այլ իմ, Անանիա վանահոր և այլն։ Ականջիդ օղ արա, եթե չես ցանկանում, որ վզիդ հագցնեն այդ խեղդող օղը, հասկացա՞ր...

— Դե, ես գնամ, սրբազա՛ն, օրը հասնում է զենիթին, իսկ ձմռան ցերեկը կարճատև է...

— Դու ինձ բան չունե՞ս ասելու, որդյակ իմ,— մռայլվեց կրոնավորը։

— Խնդրում եմ խոնարհաբար, սրբազա՛ն, եթե գտնվի Սաթեն իշխանուհու դիակը, չանվանարկեք նրան՝ ժողովրդին ի ցույց, այլ հողին հանձնեք քրիստոնեից ծեսերով։ Այս է իմ խնդրանքը...

— Ո՞վ ես դու, հերձվածող, թե՞ քրիստոնեից հավատի սպասավոր, ասա ինձ, չարոգի արարած, այլապես ես քեզ կալանավորել կտամ, կբանադրեմ...

— Դու այդ բոլորը կանես, սակայն ես չեմ նահանջելու, սրբազան, ես ատում եմ բիրտ ուժը, այդ ուժը գործադրողներին, մանավանդ այդ ուժին ապավինող հոգևոր մարդկանց...

— Նզովյալ լինես դո՛ւ, դո՛ւ, որ չես վախենում աստծուց...

— Ես աստծուց վախենալու ոչինչ չունեմ, սրբազան, աստծուց պետք է վախենան նրանք, որոնց ձեռքերն արյունոտ են...

Գրիգորն ուղղվեց դեպի վրանի ելքը։ Սրբազանը կանգնել էր սպանվածի նման և մրմնջում էր ինչ-որ։ Ձեռքով նշան արեց Գրիգորին, բայց նա այլևս չցանկացավ կանգնել ու լսել նրա հայհոյանքներն ու նզովքները։ Գրիգորին թվում էր, թե նրա մարդիկ կկանգնեցնեն իրեն, կկալանավորեն, բայց այդ բանը տեղի չունեցավ։ «Չէ՞, նրան ձեռնտու չէ ինձ կալանավորելը։ Նոր գլխացավանքի մեջ ընկնել նա հազիվ թե ցանկանա։ Նամակ կառաքի և մեր միաբանության ձեռքով կիրագործի իր մտքինը։ Նա և վախենում է իր արյունոտ արարքների համար, և կատարում է նոր չարագործություններ, որպեսզի նորից արցունք թափելով քավի իր մեղքը։ Զարմանալի, անհասկանալի մարդ է... Չարությունը շա՞տ, շա՞տ է նրա մեջ և անհաղթահարելի, իսկ բարության երկչոտ փայլատակումները ծնունդ են վախի...»։

— Գնանք, Հակոբիկ, մեր Վասպուրական աշխարհը, որին կարոտել ենք, այնպես չէ՞,— դիմեց տղային։ Այնքան սակավախոս ու փակբերան էր Հակոբիկը, որ տաղերգուն չէր կարողանում հիշել նրա ձայնը, ձայնի ելևէջները։ Չէր լսել նրա ոչ ուրախության, ոչ տխրության, ոչ կարոտի խոսքը։ Սակայն այս անգամ Հակոբիկը կարծես ցանկացավ ցրել նրա կասկածներն իր չխոսկանության մասին։

— Գնանք, հայր սուրբ, կարոտել եմ մեր տանն ու տեղին։ Վերջերս երազներում միշտ մեր տանն եմ, մորս մոտ։ Գնանք, որքան շուտ, այնքան լավ...

— Դու խոսել գիտես, Հակոբիկ, ուրեմն, դու խոսե՞լ գիտես, հիանալի՞ է,— ծիծաղեց Գրիգորը։

— Գիտեմ, բայց եթե ինձ չեն հարցնում, չեմ խոսում...

Ճանապարհ ընկան։ Հրաժեշտը սեպուհ Մլեհի հետ սրտառուչ էր և ողջագուրվեցին։

— Ինձ մի լավ բան ցանկացիր, հայր սուրբ,— խնդրեց Մլեհը։

— Ցանկությունս այն է, սեպուհ, որ հարհավիտյան անգործ մնաս։ Թշնամու կարոտ՝ թե ներսի, թե դրսի։ Կռվի կարոտ, քո զորական գործունեությանը ցանկանում եմ կաթվածահար վիճակ, որպեսզի հանգստանա և խաղաղվի աշխարհս հայոց։ Թող այս մարտերը Ավելադաշտի համար քո զորական կյանքի վերջին մարտերը լինեն։ Իսկ եթե, աստված չանի, կարիք զգացվի սուր բարձրացնելու թշնամու դեմ, ցանկանում եմ զորավարական մեծ փառք և մեր հայրենի ոսոխների դեմ հաղթանակներ ի փառս մեր ազգի և մեր երկրի։ Գո՞հ ես...

— Գոհ եմ, Գրիգոր, այս մարտերը, որ վարում էինք մենք, մեզ չտվին հաղթանակի հրճվանքը, մեզ չտվին հաղթողի փառք, այլ ծանր

ցավով այրում են մեր հոգիները, քանզի մեր իսկ ձեռքերով ոթեցինք մեր իսկ արյունը։ Բարի ճանապարհ քեզ և տաղանդի նորանոր փայլատակումներ...

***

Ճանապարհը ոլորվում էր մթին կիրճերի բերանների վրա ձգվող նեղ կածաններով, որոնք տեղ-տեղ ձնախեղդ էին։ Դժվարամատչելի, համարյա անանցանելի ճանապարհ էր, միակ մխիթարությունն այն էր, որ Սյունյաց երկիրը խիտ էր բնակեցված, շենները մոտ էին իրար և ճամփորդները կարողանում էին լուծել գիշերելու հոգսը, այլապես սարահարթում կամ բքախեղդ կլինեին, կամ էլ կցրտահարվեին, կամ գայլաբաժին կդառնային։ Գրիգորը դեռևս չէր կորցրել Մուշեղին հանդիպելու հույսը, սակայն չգիտեր ողջ է, թե մեռած։ Ներքին ձայնն ասում էր, որ նա ողջ է, Ավելադաշտում զոհվածների մեջ նրան շատ որոնեցին սրբազանի մարդիկ, սակայն անօգուտ, չգտան։ Ուրեմն, նա ողջ է։ Եթե ողջ է, ոչ մի կերպ չի երևա Սյունյաց աշխարհում կամ ծպտված կշարունակի իր դժվարին ճանապարհը։ Գրիգորն այժմ էր զգում, թե որքան անփոխարինելի ճանապարհի ընկեր էր Մուշեղը։ Տեղանքին գիտակ, գիտնական այր, հրաշալի ռազմիկ, որ կարող է հաղթահարել ամեն խոչ ու խութ, արգելք ու փորձանք, զրուցել ցանկացած կամ նույնիսկ անցանկալի բաներից։ Քանի օր ճանապարհին էին և քայլում էին համրերի նման։ Հակոբիկի բերանից եթե բառեր դուրս չքաշեիր, չէր խոսի։ Գնում էին, և սառնամանիքը դանդաղ նահանջում էր. լեռնային Սյունիքն իր տեղը զիջում էր հովտայինին և ցուրտը թուլանում էր, արևը թեև ջերմ չէր, սակայն կարողանում էր շոյել մարդկանց իր շողերով և ստեղծել ավելի տաք տրամադրություն։

— Չե՞ս հոգնել, Հակոբիկ...

— Ո՛չ, հայր սուրբ...

— Հո մրսա՞ծ չես...

— Չէ՛, հայր սուրբ...

— Քաղցած չե՞ս, Հակոբիկ...

— Մի քիչ, հայր սո՛ւրբ...

Հակոբիկին օրվա որ պահին էլ հարցներ ուտելու մասին, միշտ «մի քիչ» քաղցած էր, և Գրիգորը անվերջ հոգում էր նրա ուտելու և հանգստի համար, մանավանդ վախենում էր նրա մրսելուց և հիվանդանալուց։ Մի օր էլ նրանք կանգնեցին Արաքսի ափին և կարոտով նայեցին հարավում կապույտին տվող երկնակամարին, ատամնավոր հզոր ժայռակուտակումներին, հեռվում սպիտակին տվող լեռնագագաթներին, որոնց փեշերին իրենց ծննդավայրն էր, իրենց տունուտեղը։ Արաքսը մեծ արագությամբ տանում էր իր անհնազանդ, սակայն նվաղած ջրերը։ Կամուրջն անցնելուն պես, Գրիգորը ուրախությունից այնպիսի ճիչ արձակեց, որ բացվեց նույնիսկ չխոսկան Հակոբիկի լեզուն.

— Ի՞նչ պատահեց, հայր սուրբ...

— Մուշե՛ղը, Հակոբիկ, Մուշե՛ղը...— և վազեց ու գրկախառնվեց քարին թիկնած Մուշեղի հետ։

— Ապրես, Գրիգո՛ր, ուրեմն, ճիշտ ես ընտրել քո ուղին։ Մենք այժմ կանգնած ենք Արծրունյաց նախարարության շեմին...

— Ես պարզապես կատարել եմ քո պատվերը։ Ես նոր եմ միայն ծանոթանում այս տեղանքին...

Գրիգորը խոսում և ուշադիր զննում էր Մուշեղին։ Փոխված էր Մուշեղը։ Կոտրված էր, դեմքը գունատ և աչքերը տխուր։ Նման էր շատ թանկ, անսահման թանկ հարազատին կորցրած մարդու, որին, իհարկե, չէր օգնի սփոփանքն ու մտերմին հանդիպելու ուրախությունը։

— Գնանք, կխոսենք ճանապարհին...— ասաց և քայլեց առաջ։

Երկար ժամանակ գնում էին առանց բառ իսկ փոխանակելու։ Մուշեղը քայլում էր այնպես փութկոտ, այնպես արագ, կարծես փախչում էր ինքն իրենից։ Գրիգորը պարզապես վազում էր, որ հասնի նրան։

— Քեզ ի՞նչ է պատահել,— շնչասպառ նրան դիմեց Գրիգորը։

— Չգիտե՛մ, չգիտե՛մ,— ուսերը թոթվեց Մուշեղը,— չգիտեմ, Գրիգոր... Աշխարհն ասես փուլ է եկել գլխիս։ Արածս ու չարածս չեմ հասկանում։ Ի՞նչ օրեր էին, բարոյական հաղթության և համրանք չունեցող մարդկային կորուստների։ Ի՞նչ օրեր, աստվա՞ծ իմ, եթե մեր ժամանակի մատենագիրը գրեր Ավելադաշտի ողբերգության վիպասքը, ի՞նչ նվեր կլիներ սերունդներին։ Որքա՞ն գեղեցիկ և հերոսական մահեր, որքան անօրինակ սխրանքներ պսակեցին այդ պարզ շինականների մեռած ճակատները...— Մուշեղի աչքերից ցայտեցին արցունքները, և Գրիգորն ինքն էլ զգացվեց նրա խոսքով ու հանկարծ կենդանի, շոշափելիորեն կենդանի արթնացան այդ ահավոր և դժնի պատկերները։

— Հայր սո՛ւրբ,— խոսեց նա,— ամենահետաքրքիրն այն է, որ այդ ծանր մարտերին մասնակցեցինք մենք՝ երկուսով և միմյանց ներհակ, թշնամական կողմերում։ Այն ամենն, ինչ տեսա ես հակաթոնդրակյան ճամբարում, եպիսկոպոսի առաջնորդությամբ մարտնչող իշխանական զորական ճամբարում, ամենաանմարդկային, ամենաանբարոյական և ամենաանաստված կողմերով են հատկանշում հոգևոր և աշխարհիկ ուժերի առաջնորդներին։ Նույնիսկ նրանք, ովքեր չէին ցանկանում կտտանքնե-

րի ենթարկել, տանջամահ անելով սպանել ապստամբներին, նրանք էլ երկյուղելով մատնությունից, վախենալով սրբապղծության մեջ ամբաստանվելուց, կատարում էին աստվածընդդեմ այնպիսի արարքներ, որոնց դեմ գունատվում են դժոխքի չարչարանքների տեսարանները։ Պատմելու բան չէ, հայր սուրբ, մարդկանց մեջ միմյանց սպանելու, չարչարելու զարմանալի որոմն է աճում, որը վարակիչ է, շատերն են ցանկանում սպանել և սպանում են, հոգևոր կորուստները սպառնում են աշխարհս դատարկել աստվածաստեղծ մարդկանցից, որոնց մեջ գնալով պակասում է իսկական մարդը...

— Բայց այդ ուժերը ոչնչացրին իսկական մարդկանց, հարյուրներին, բյուրերի...

— Իսկ դու, հայր սուրբ, մի՞թե հավատում էիր իսկական մարդկանց հաղթանակին։ Ես, օրինակ, հավատում էի նրանց կռվի արդարությանը, հավատում էի և տեսա գեղեցիկ գաղափարների համար գեղեցիկ մահով նրանց նահատակվելը, ավելին չէի սպասում։ Շինական ուժն ի զորու չէ ճակատելու և, մանավանդ, հաղթանակ տանելու տերունական, իշխանական ուժերի դեմ...

— Դու ճիշտ ես, Գրիգոր,— տխրեց Մուշեղը,— այս կռիվը հավասարների կռիվ չէ... Իսկ մերկ արդարությունը զորական ուժ չէ, որ հնարավոր լինի նրանով հաղթանակ տանել։ Արդարությունը եթե չի պաշտպանվում ուժով, որքան էլ արդար լինի, ի վերջո, ճոչակվում է անարդար, որովհետև հաղթողը միշտ համարվում է արդար, պարտվողն՝ անարդար։ Այդպիսին է ուժի օրենքը և այդպիսին էլ կլինի հավիտյանս հավիտենից...

Լռեցին։ Զրույցը որքան էլ ճշմարիտ, այնքան էլ անողոք էր, այդպիսին է ճշմարտությունը։ Սակայն Գրիգորը զգում էր, որ Մուշեղը դեռ չի ասել սրտինը, որ նրա հոգին կիզում է մի վերք, որը փոքր-ինչ մեղմանալու համար հարկավոր է բացել ընկերոջ, բարեկամի առջև, որպեսզի ցավը կիսվի, որպեսզի տառապանքն ընկալվի նաև բարեկամի կողմից, վերքը թեթևանալու համար։ Ճանապարհը, որ ընկել էր քարուտները և մոլորվում էր այստեղ-այնտեղ, այժմ միանգամից նետվեց դաշտավայր և ճամփորդները դուրս եկան հարթ ճամփա, ուր և քայլելն էր հեշտ, և եղանակը առավել մեղմ ու տանելի։

Մամռոտ քարի միջից աղբյուր էր բխում։ Կանգ առան։ Նստեցին մի բան ուտելու։ Ամաչկոտ արևով ջերմացած, փորձեցին նաև աղբյուրի ջուրը և ծարավը հագեցնելու նրանց եռանդը միանգամից մարեց։ Ջուրն այնքան սառն էր, որ խմելն անկարելի էր, այն էլ ձմռանը։

— Ատամներ է ջարդում,— գնահատեց Մուշեղը և ջուրն ափից թափեց։

— Ձմռանը ծարավ մարդ որտեղի՞ց,— ասաց Գրիգորն ու հետ քաշվեց։ Նստեցին։ Կերան, փոքր-ինչ հանգստացան և ելան ոտքի։ Պետք էր շտապել և շենի հասնել գիշերելու համար։ Որքան էլ հարթավայրում ցուրտը տանելի լիներ, հնարավոր չէր բաց դաշտում գիշերելը։

— Հայր սո՛ւրբ,— ասաց Գրիգորը,— ինձ թվում է, թե դու թաքցնում ես մի մեծ գաղտնիք ասեմ, թե մի վիշտ, որը տանջում է քեզ, մաշում։ Գուցե ինձ ասես՝ ինչո՞ւմն է բանը, դրանով իսկ թերևս փոքր-ինչ թեթևանա քո վիճակը։ Գուցե քո վերքը բալասանել փորձենք, հը՞...

— Օ՜հ, Գրիգո՛ր, դու նաև հոգիներ թափանցելու կարողություն ունես։ Եթե ես աշխարհից թաքցնելու բան ունեմ, ապա քեզանից ի՞նչ թաքցնեմ։ Այս տուրուդմփոցում կորցրի ամեն ինչ, թոնդրակյանների խռովության հեռանկարը, պարտությունները հետևում են միմյանց։ Ապստամբների ոչ մեծ ուժերի դեմ բռունցքվում են երկրի տերունական ռազմի բոլոր ուժերը։ Անգթության, անողոքության սարսափն այնքան մեծ է, որ ապստամբները գերադասում են մահը, քան գերությունը, քան թշնամական ողորմածությանը հանձնվելը։ Իսկ այս ծանր վիճակն ինձ համար առավել ծանրանում է անձնական վշտով։ Ես այս ճակատամարտում կորցրի իմ սիրեցյալին, որի համար ապրում էի և որի համար պատրաստ էի մեռնելու,— Մուշեղի ձայնը դողաց, հազիվ էր զսպում կոկորդը սեղմող հառաչանքը,— և ինչո՞ւ ես չմեռա, ինչո՞ւ...

— Հայր սո՛ւրբ, ախր, ո՞ւմ մասին է խոսքը,— ընդմիջեց Գրիգորը,— չլինի՞ իշխանուհի Սաթենի...

— Գուշակեցիր, Գրիգոր։ Այո՛, խոսքը նրա մասին է... Ես չգիտեի նրա որոշման մասին, այլապես կհայտնվեի կողքին և կկիսեի նրա անմահությունը։ Նրա որոշումը երևի վայրկենական է եղել կամ փրկության ուղիներ չեն եղել այլևս, կամ ցանկացել է բաժանել ավելադաշտցիների ճակատագիրը։ Այնպես էի շշմել, ասես ես էի կատարել այդ անօրինակ թռիչքը։ Բոլորովին չէի սպասում նման վախճանի։ Ուշքի եկա այն պահին, երբ նկատեցի, որ նրա, ավելի ճիշտ նրա դիակի ետևից խանձողները ձեռքերին զինվորներ են իջնում ձորը։ Գրկեցի նրան և փախցրի։ Մի ապահով վայրում, հեռու մարդկանցից և հետապնդումից, նրան հանձնեցի հողին, որ այդ գազանները չգտնեն և չանարգեն նրան։ Նա գեղեցիկ էր, Գրիգո՛ր, նույնիսկ ջարդուփշուր վիճակում, նման էր փշրված մարմարյա արձանի։ Լուսնի պաղ լույսի ներքո ես առաջին անգամ գրկել էի իմ սիրեցյալին և ոռնում էի ցավից և ինձ հասած մեծ դժբախտությունից, ես նզովում էի արար-աշխարհ, անիծում էի երկնային և երկրային

բոլոր սրբությունները, որ այնքան էին անգութ, որ մահվան հանձնեցին այս հողի ամենաթանկ հարստությունը, ամենաշքեղ կնոջը. «Ինչո՞ւ ստեղծեցիր, ո՞վ անաստված աստված, նման երկրային հրաշք, եթե չպիտի կարողանայիր զորավիգ լինել, պաշտպանել քո իսկ հանճարեղ ստեղծագործությունը...»։

— Գերեզմանի տեղը հիշո՞ւմ ես, հայր սո՛ւրբ...

— Իհարկե՛, Գրիգոր... Ինչպե՞ս կարող եմ մոռանալ նման սրբավայրը։ Բայց գերեզմանն առայժմ պետք է անհայտ մնա, այլապես գաղանացած, բորենիացած հոգևորականները կպղծեն այն։ Կգան, երևի կգան ավելի լավ օրեր, և ես ինքս իմ ձեռքերով մի սիրունիկ մատուռ կարարեմ մեր աշխարհի ամենասուրբ, ամենագեղեցիկ, ամենաքաջ և ազատատենչ իշխանուհի Սաթենի հիշատակին...

— Փոխադա՞րձ էր այդ սերը, հայր սուրբ... Դու ներիր ինձ անպատշաճ հետաքրքրության համար...

— Հարցրո՛ւ, Գրիգոր, բացիր հոգիս, թեթևացրու ինձ, դու առաջինն ես, որին ես վստահում եմ յոթ փականքի տակ պահվող իմ սիրո պատմությունը։ Լսիր սիրույս ճշմարտությունը։ Ես Սաթենին հանդիպել եմ ընդամենը հինգ անգամ և սիրո շուրջ խոսակցություն երբեք չի եղել մեր մեջ։ Առաջին անգամ տեսնելով, ես անմիջապես զգացի, որ նա ամենաթանկ էակն է ինձ համար այս աշխարհում։ Միայն այդքան։ Մեր միջև կանգնած էր աստվածն ինքը։ Ես, կճավա վանական միաբանության անդամս, գիտեի, որ ամուսնության իրավունքից զրկված եմ։ Այնուհետև, մեր միջև կանգնած էր նաև աշխարհիկ ամենախստաշունչ օրենքը՝ իշխանուհին և շինականի ծագումով մեկը զրկված են միմյանց հետ ամուսնանալու իրավունքից։ Իհարկե, եթե բանը հասներ ամուսնությանը, և Սաթենը սիրեր իմ սերը, հապիվ թե նման գրված կամ չգրված օրենքներից նահանջեր։ Ես նրան ոչ մի ակնարկ անգամ չեմ արել սիրույս մասին, ես նրան առաջին և վերջին անգամ համբուրեցի, երբ արդեն մեռած էր։ Դա մի մեծ սեր էր, երազային, մի տեսակ տղայական։ Կարծում եմ, որ ինքը զգում էր իմ վերաբերմունքը, բայց ոչնչով չէր խրախուսում և ոչնչով չէր դիմադրում։ Գուցեև ինձ է այդպես թվացել։ Իսկ ես, որ քանի տարի ապրեցի այդ մեծ սիրով, ես նրա մահից հետո հոգեկան այնպիսի նահանջի մեջ եմ, որ չունենայի կյանքի մեծ փորձը, դիմադրողական ոգին, երևի իմ հանգիստը գտնեի անդունդի այն եզրին, որտեղից նա նետվեց դեպի անմահություն։ Տեսնո՞ւմ ես, Գրիգոր, սիրո ինչ տեսակով եմ ես ապրել և պատմեցի ամբողջը, թեև պատմելու ոչինչ չկար...

Մուշեղը լռեց։ Նա արդեն լիովին հաղթահարել էր ծանր կորուստի լալագին զգացողությունը, ինքնատիրապետումը նրան վերադարձրել էր

նախկին տղամարդկային ամրությունը և միայն աչքերն էին, որ համառորեն շարունակում էին մնալ թախծոտ խոնավ տխրության մեջ, չենթարկվելով նրա վիթխարի կամքին։

— Զգայացունց սիրավեպ է,— վերջապես խոսեց Գրիգորը,— մեծ սիրո վեպ է... Իսկ ի՞նչ ես անելու առաջիկայում, հայր սո՛ւրբ... Թոնդրակյանները կրում են պարտություն պարտության ետևից։ Ի՞նչ է սպասում այդ ապստամբությանը՝ զինաթափում, զինադադար, թե ավելի ուժգին շարունակություն այդ պայքարի...

— Ավելի շուտ, ավելի ճիշտ՝ վերջինը... Մենք՝ շարժման խրախուսողներս, բարոյապես կմեռնենք, եթե խաբենք շինականին, որը հսկայական զոհերի գնով ցանկանում է ապացուցել իր ճշմարտությունը։ Նա այս անընդմեջ կռիվներում ցույց տվեց, որ ինքն այնպիսի ուժ է, որից սասանում են ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ իշխանությունները։ Նա ցույց տվեց նաև, որ ունի ապրելու իրավունք, որ այդ իրավունքը նա չի խնդրելու ոչ մեկից, այլ ձեռք է բերելու, քանզի միայն ուժն է, որի հետ հաշվի են նստում ոչ միայն հոգևոր տերերը, այլև աշխարհիկ տերերը, ովքեր բռնի ուժով են տնօրինում աշխարհի և մարդկության ճակատագրերը։ Թոնդրակյան խռովություններն այլևս միայն հայկական երևույթ չեն, նրանք արդեն այցելուներ են օտար իշխանությունների և մեր հայրենիքից դուրս են բերում մեր ոչ միայն ապրելու իրավունքը շահելու կամքը, այլ մեր ըմբոստ ոգին, որը մարդ արարածին պահում է մարդկային բարձրության վրա, թույլ չի տալիս, որ նրան կոխկրտեն, խլեն և ապրելու իրավունքը, և մարդկային արժանապատվությունը։ Սա, այս թոնդրակյան շարժումները ուսանելու են աշխարհը և ինչով էլ ավարտվի այս ծանր մենամարտը, շահողը լինելու է շինականը, բանի ու գործի մարդը։

— Ուրեմն, այս խմորը դեռևս շատ ջուր կվերցնի...

— Շա՜տ,— ծոր տվեց Մուշեղը,— բայց դժբախտաբար ոչ թե ջուր, այլ շատ արյուն կվերցնի...

— Հայր սուրբ, երկրիս երեսի այս երկպառակությունները եթե շինականի իրավունքի և ինչքի հարցերին են վերաբերում, չե՞ս կարծում, որ մեծապես վնասում են, թուլացնում երկրիս հզորությունն ու ուժը։ Եթե վաղը օտարները մտնեն հողն հայոց, որտե՞ղ ենք որոնելու հայրենյաց փրկարար ուժը, չէ որ շինականն ու նախարարը այլևս չեն միավորվի ընդհանուր թշնամու դեմ։ Ինձ թվում է, որ մեզ նման ոչ մեծ, ոչ զարեղ երկրի համար նման երկպառակությունները կարող են ճակատագրական լինել և հավիտյանս թաղել երկրիս ազատության կարևոր հարցը։ Գո՞ւցե չպետք է խրախուսել և միշտ արթուն ու լարված պահել շինականի ըմբոստության ոգին...

— Դու և՛ ճիշտ ես, և՛ սխալ, Գրիգոր, միշտ իմացիր, երբ մարդ իր կյանքի գնով պաշտպանում է իր մարդկային և իր ապրելու իրավունքները, երբ ցանկանում է դեն նետել այն ծանր լուծը, որպեսզի տարբերվի սովորական լծկանից, այդ կռիվը սրբազան է և առողջացնում է ըմբոստացողի և՛ մարմինը, և՛ հոգին։ Եթե նա մնա արհամարհված ու հեզ, ինչպես լծկան անասունը, նա անկարող կլինի լուծել իր հայրենիքի ազատության հարցը, դիմագրավել դրսի զորեղ հակառակորդին։ Իսկ եթե ծանր կռիվներում նա ապացուցել է իր մարդ լինելը, շահել է մարդ կոչվելու իրավունքը, այլևս չի իջնի իր նվաճած բարձունքից, նրան այլևս չեն կարող զրկել մարդկային իր արժանապատվությունից, և նա այս անգամ կբարձրանա մահու և կենաց կռվի իր հայրենի հողի և իր մարդկային արժանապատվության համար։ Կա նաև այլ ճշմարտություն։ Հայրենիքի դժբախտության և փրկության դեպքում ներհակ, թշնամական ուժերը միավորվում են ընդհանուր թշնամու դեմ։ Մեզ մարդիկ են հարկավոր, որ գիտակցեն և պաշտպանեն հայրենիքը։ Մարդկային արժանապատվություն ունեցող մարդիկ կունենան նաև ազգային արժանապատվություն և, հետևաբար, կպաշտպանեն իրենց հայրենիքը։ Նորից կրկնենք, Գրիգոր, մեզ հարկավոր չեն մարդկային նախիրներ, մեզ հարկավոր են իսկական մարդիկ, որոնք գիտակցում են իրենց արածի կարևորությունը, նրանցով է ազգը դառնում ազգ, եղա՞վ, Գրիգոր...

— Շնորհակալությո՛ւն, հայր Մուշեղ, որ օգնեցիր ինձ ճիշտ ընկալելու այն հարցերը, որոնք չիմացողը ոչ միայն կույր է աչոք, այլև կույր է մտոք։ Այս խառնակության մեջ հեշտ չէ ճիշտ ընկալումն այն բազմաթիվ հարցերի, որոնք ծանրանում են հոգևոր անձանց վրա, որպես անլուծելի հարցականներ, որպես սխալներ և ապակողմնորոշում են աստծո ստեղծած այն արարածներին, ովքեր պարտավոր են ուրիշներին օգնելու ապակողմնորոշող սխալներից։ Իմ լավագույն ուսուցիչների շարքում ամենանվիրականների մեջ ես կհիշեմ քեզ և կտամ քո անունը, հայր սուրբ...

— Շատ ասացիր, Գրիգոր, շնորհակալ եմ, քայլենք առաջ, շուտով կգա ճամփաբաժանը, և դու կգնաս քո Նարեկավանքի ճգնակենցաղ միաբանությունը, ես՝ իմ Կճավա վանքը։ Եվ հիմա ես քեզ, Գրիգոր, զգուշացնում եմ՝ հեռու մնա վանքի մթին խորշերում բուն դրած խավարասերներից, նրանք քեզ կհոշոտեն, եթե ձեռքերն ընկնես, մանավանդ, ինչպես դու ես ասում՝ Սյունյաց հոգևոր առաջնորդն ամբաստանագիր է առաքելու միաբանությանդ, զգո՛ւյշ, կբանադրեն քեզ, Գրիգոր, լույսի և արևի այդ խավարասեր թշնամիները...

— Գնա՛նք, քայլենք, ինչ լինելու է, թո՛ղ լինի...

***

Ճամփաբաժանին կանգ առան, հացի նստեցին։

— Գրիգոր, հարկ է, որ բաժանվենք։ Տա՛ աստված, հանդիպելու հավանականությամբ։ Կցանկանայի ավելի բախտավոր լիներ հաջորդ հանդիպումը։ Ամբողջ քո տաղանդը, որ աստվածատուր է, կուզենայի տեսնել օրինական թռիչքի մեջ։ Գրիգոր, հայոց աշխարհը հանճարի երկունքի մեջ է։ Նա երկնում է Գրիգոր Նարեկացի, թող որ ծնունդը բախտավոր և ճանապարհն անտատակ լինի։— Մուշեղը գավաթով գինին քաշեց գլխին։

— Շնորհակալ եմ, հայր սո՛ւրբ,— ասաց և պարպեց գավաթը։

— Գրիգոր, նորից եմ զգուշացնում, զգույշ եղիր, բոլոր մեծերի ճանապարհին մեծ խոչընդոտներ, մեծ քարեր են ընկած և ճանապարհը խիստ սայթաքուն է, ընկար, բարձրանալ չկա այլևս, հաղթահարեցիր, բարձրացար, ընկնել չկա այլևս, թռիչքի պահին նետահարվողները, ընկնողները, Գրիգոր, մեր վաղվա սրբերն են ու հանճարները, թռիչքից առաջ, որդիս, ընկնել չկա, նախքան թռիչքն ընկնելը՝ մահ է, իմացիր։ Իսկ դուք Նարեկավանքի ճգնակենցաղ, խստակյաց միաբանությունից ես, պատրաստ եղիր ամեն տեսակի խարդավանքների, մեքենայությունների վանքի տերերի կողմից, մանավանդ, որ նրանք շուտով կունենան նաև Սյունյաց հոգևոր առաջնորդի քեզ դատափետող նամակը... Մի խոսքով...

— Նրանք ուրիշ զենք էլ կունենան, հայր սուրբ, Գրիգոր Նարեկացին սուրբ չէ, նա տեսնում է նաև կանանց...

— Սիրահարված ես, գիտեմ, Դրախտիկին, այդպես չէ՞, Գրիգոր...

Գրիգորը ցնցվեց, վեր թռավ, գունատվեց.

— Որտեղի՞ց գիտես, հայր սուրբ...

— Քո տաղերից՝ սիրահարված լինելդ, երազներիդ մեջ խոսելուց՝ սիրածիդ անունը... Մի խոսքով, քեզ տանը սպասում են լուրջ գործեր, տուրուզմփոց, զգուշացիր բանադրվելուց, դու համարյա թոնդրակյան ես, միտքդ վարագուրիր և կողպիր լեզուդ, խաղա նախկին Գրիգորին և միամիտ ձևացիր, իսկ երբ կասես այն խոսքը, որ թշնամիներդ կպատկառեն, նաև կերկնչեն, նաև կերկրպագեն քեզ, նոր երևա այն տեսքով ու հանգերձով, որ սազում է քեզ, այսինքն, ցույց տուր քո իսկական աստվածակերպ էությունը...

Գրիգորն ուշադիր լսում էր իր ավագ ընկերոջը, իր նոր ուսուցչին և խորհում. «Մուշեղը շա՛տ է, շատ է վստահ իմ ուժերին։ Աստված իմ, մի՞թե տաղանդ, հանճար բառերը, որ միշտ նրա շուրթերին են, ճիշտ գնահատական են նվաստիս ուժերի։ Երբ նա դրվատում է ինձ, ես լցվում

եմ կենսական ավիշով և եռանդով։ Լցվում եմ լավատեսությամբ և տաղերը ներքին հորձանքով հասնում են շուրթերիս, հաղթահարում գրչի և մագաղաթի չգոյությունը։ Քանի՜, քանի՜ տաղեր են թափառում իմ սիրատոչոր հոգում և ելք են որոնում ջրվեժի սաստկությամբ հորձանքվելու և ալիքվելու... Աստվա՜ծ իմ, խոնարհ ծառադ ցանկանում է քո տաղերգուն դառնալ, ցանկանում է տաղերգուների մեջ լավը դառնալ, լավերի լավը դառնալ, ների՜ր իմ հանդուգն մեծամտությունը՝ ամենալա՜վը դառնալ...»։

— Հայը սուրբ, երևում է ծանոթանալը, բարեկամանալը առավել հեշտ է, քան բարեկամից բաժանվելը։ Այս կես տարվա ընթացքում ես սովորեցի քեզանից այնքան, որքան մեր վարժարանում՝ տարիների ընթացքում։ Սովորեցի կյանքից, տեսա մեր հայ աշխարհը, ճանաչեցի մեր ժողովրդին, աստծո ծառաներին և նրանց խարդախությունները, ամենակարևորը՝ տեսա աստծո իսկական տեղը և իմ խոսքը խոսեցի նրա հետ, թող որ առայժմ կմկմալով և թլվատ լեզվով, իսկ հետագայում ավելի լիաբերան, ես նրան փորձեմ ասել այն ճշմարտությունը, որ դարեր շարունակ խեղաթյուրվել է նրա սպասավորների լեզվով ու գործունեությամբ, ճշմարտությունն անաղարտ ձևով, որ երկնային տերն իրազեկ լինի երկրի անցուդարձին։ Իհարկե, եթե կարողանամ, և ինձ ականջել ցանկանա, կամենա տերը երկնային...

— Ամե՛ն,— ջերմեռանդությամբ խաչակնքեց Մուշեղը։

ՍԻՐՈ ՎԱԽՃԱՆԸ

Նարեկավանքի ճգնակենցաղ միաբանությունը զսպված սառնությամբ և թաքնված թշնամանքով ընդունեց Գրիգորի վերադարձը։ Պատճառը հասկանալի չէր, թեև անհասկանալի էլ ոչինչ չկար։ Իր ընտանիքի, իր միաբանության գիրկն էր վերադարձել տաղանդավոր որդին, և առաջին իսկ շաբաթներին մագաղաթները լցվում էին նրա վառվռուն կենսասիրությամբ, գեղեցկությամբ լեցուն տաղերով։ Փորձառու ապաշնորհները և մատնության մեջ ընտել միջակությունները որսի էին ելել և նրա տաղերի մեջ որոնում էին տիրամոր երկրային նմանակին և գտնում էին։ Կարողանում էին հոտոտել և ականջել նրա կյանքին, նրա շնչառությանը, նրա զարկերակի համերաշխությանը ժամանակի հետ։ Փորձում էին հրսկողություն սահմանել նույնիսկ նրա երազների վրա, ականջում էին նրան՝ քուն թե արթմնի։ Եվ ամենակարևորը, գտնում էին նմանության եզրեր նրա կյանքի, տաղերի և թոնդրակյանների միջև։ Գտնում էին։ Փնտրողը

կգտնի։ Առայժմ Գրիգորը միայն զգում էր նրանց վատ քողարկված խարդավանքները, հետապնդումները, լրտեսումները։ Առայժմ նրա հակառակորդները, որոնց, ավա՜ղ, նա չէր ճանաչում, քանզի ընդհարումներ և բանավեճեր չէր ունեցել նրանց հետ, դեռ դուրս չէին եկել իրենց բներից, սպասում էին իրենց ժամին։ Գրիգորը չէր տեսնում նրանց, նա չէր կարող տեսնել նրանց, որովհետև տաղանդը, հանճարը միամիտ են մանուկի նման, և նրանց լույսի հուժկու առատությունից խավարասերները քաշվում են բների խորքերը՝ այնտեղ հյուսելու իրենց խարդավանքի ուռկանները։ Բայց ասացինք, որ Գրիգորը զգում էր իր շնչած օդի անմաքրությունը, զգում էր իր շուրջը սեղմվող կասկածանքի, թունավոր ակնարկների, երբեմն նաև չքողարկվող անբարյացակամության և թշնամանքի օղակը։ Նրա հույսն իր ուսուցչապետն էր, ուստի և դիմեց նրան.

— Ուսուցի՜չ, թվում է, որ իմ վերադարձը կուրախացներ միաբանության անդամներին, սակայն իմ երևալը նրանց շրջանում առաջ է բերում նրանց զարմանալի, պատճառներ և, մանավանդ, հիմք չունեցող կասկածանքը։ Ինձ ուրիշ աչքերով են նայում, թշնամու նման, թշնամու հանգի։ Բա՞ն է պատահել, ուսուցիչ...

— Պատահել է, որդյակ իմ։ Իհարկե, պատահել է, Գրիգոր Նարեկացին այսօր հայտնի անուն է դառնում ազգիս մեջ։ Գրիգոր Նարեկացին այսօր թռիչքի մեջ է, նա միտում է երկնային սահմանները, իսկ դու ցանկանում ես, որ երկրային խավարասերները, որոնց սահմանները իրենց բների ահավոր մթությունն է, ուրախանան քո թռիչքով։ Սխալվում ես, որդիս, նրանք պետք է փորձեն արգելել քո բարձրաթռիչք մտածողությունը, ստիպեն, որ գահավիժես քո բարձունքներից մինչև իրենց ճահիճը, որպեսզի հետո անարգել կերպով քեզ տրորեն, անվանարկեն և դեն նետեն...

— Այո՜... Ես այդպիսի մի բան զգում էի,— տխրեց Գրիգորը,— զգում էի, ուսուցչապե՛տ, բայց չէի հանդգնում բանաձևել, ես վախենում էի կասկածանքիս իսկությունից...

— Լսիր շարունակությունը, Գրիգոր, դու շուտով ստիպված կլինես ճակատամարտ տալ այդ ուժերի դեմ։ Եվ մի գունատվիր, քեզ նմաններդ, որոնցով այնքան էլ բեղուն և հարուստ չէ մարդկության արգանդը, նման ճակատամարտերը սովորաբար տանուլ են տալիս, քանզի այն անազնիվ զենքերը, որոնք օգտագործելու են քո հակառակորդները՝ զրպարտությունը, կեղծիքը, ամբաստանելը, ստելը, մատնությունը քո զենքերը չեն, և քո զենքերի՝ ճշմարտության, առաքինության, կատարելության նկատմամբ ունեն առավելություն՝ նրանց զենքերն ավելի մարտա-

կան են, հարձակողական, առավել անողոք և անողորմ... Պատրաստ եղիր, Գրիգո՛ր...

— Դուրս է գալիս, որ ես պետք է կռվեմ պարտվելո՞ւ համար, ուսուցիչ...

— Դու պետք է պայքարես ճշմարտության համար, Գրիգոր, իսկ ճշմարտությունը դառը ճակատագիր ունի, մինչև հաղթանակ տանելը նա պարտվում է, ընկնում, ամբաստանվում, նույնիսկ գերվում...

— Բայց ապրո՞ւմ է...— հարցրեց անհամբեր Գրիգորը։

— Անպայմա՛ն...

— Ուրեմն, ճշմարտությունը չի պարտվում, նա ուշանում է...

— Համաձայն եմ քո բանաձևմանը, Գրիգոր, բայց դրանից հարցի էությունը չի փոխվում...

— Ես կկռվեմ իմ կռիվը, ուսուցիչ, զինիր ինձ...

Ուսուցչապետ Անանիային հանդիպելուց հետո Գրիգորը հանգստացավ։ Անանիան բացեց նրա աչքերը, ասաց ամեն բան, առանց ճշմարտությունը թաքցնելու։ Եվ Գրիգորը պատրաստվեց ճակատամարտի, թեև այդ բանը շարժում էր նրա ծիծաղը... «Ես՝ ո՞ւր, ճակատամարտն ո՞ւր...»։ Սակայն, այնուամենայնիվ, նա սկսեց ուշի-ուշով ստուգել նաև իր զենքերը։ Կբավե՞ն ճակատամարտի համար։ Իսկ որո՞նք են այն թույլ կողմերը, որոնց բացահայտումով կարող են զինաթափել իրեն։ Իսկապես կարո՞ղ են իրեն զինաթափել։ Կան մարդիկ միաբանությունից, ովքեր գիտեն իր և Դրախտիկի սիրո պատմությունը։ Իհարկե, կան։ Ուսուցչապետ Անանիան հաստատ գիտե, բայց նա այս ճակատամարտի դատավորն է լինելու, հետևաբար նա դուրս է խաղից։ Իսկ ամեն ինչ հոտոտող, ամեն ինչ լրտեսող Կունձիկ աբեղա՞ն... Չի՛ կարող չիմանալ. իր հանդիպումները բազմաթիվ են եղել աղջկա հետ, նա որևէ կունձիկյան հնարքով, խարդավանքով կարող էր իմանալ, և անկասկած իմացել է։ Ուրի՞շ... Դժվար է ասել։ Դրախտիկին մտաբերելիս, նաև նրան այս կեղտոտ խաղին մասնակից դարձնելն իսկ իրեն ահավոր մեղք, սրբապղծություն թվաց և այնքան զգացվեց այդ բանով, որ աչքերից արցունքներ գլորվեցին և թաքնվեցին նորաբույս սև մորուքի մեջ։ Բայց այս հարցն ավելի ընդգրկուն է, քան ես եմ խորհում. աղջկա անունը կընկնի աստծո և աստվածության մաքրությանը ոչ նախանձախնդիր հոգևորականների բերանը և կծամծմվի ծամոնի նման։ Աստվա՜ծ իմ, որպիսի անմաքուր հիշոցներ ու հայհոյանքներ կտեղան նրա անվանը, երբ մանավանդ իմանան, որ նա է «Տաղ ծննդյան», «Տաղ հայտնության», «Տաղ Վարդավառի» և ուրիշ տաղերում երգվող, երկրպագվող տիրամոր երկրային նախատիպը։ Գրիգորը սարսռաց։ Հիշեց Աղթամարում կործանված կաքավողի

անագորույն մահը, հիշեց շղթայված, կիսամեռ լինելու ատիճան ծեծված Հուսիկ վարդապետին։ Տխրեց, վախեցավ, նույնիսկ սարսափեց՝ լոկ մտովի պատկերացնելով Դրախտիկին անարգված և անպատվված։ Արդյոք կարողացե՞լ է որևէ մեկը վերծանել իր նվիրական գաղտնիքը, կա՞ որևէ մեկը, որ տիրամոր դերում տեսել է Դրախտիկին։ Սերը Դրախտիկին աստվածուհի դարձրեց, հանկարծ նույն սիրո զոհը չդառնա՞ իր աստվածամայրը։ Աստվա՜ծ, դու լեր օգնական սիրելի աղջկան, նրա միակ մեղքը գեղեցկությունն է, իսկ կնոջ գեղեցկությունը ինքնին աստվածային շնորհ է։ Ասա՛, ով տերդ երկնային, ես ո՞ւմ կերպարանքով ստեղծեի տիրամորը, ո՞ւմ։ Երկնայինները չեն երևում մեզ, մենք նրանց աստվածային հմայքները չենք ճանաչում և մարդացնում ենք, քանզի աստված մեզ ծեփել է իր պատկերով։ Եթե երկնային լիներ Դրախտիկը, նա իր գեղեցկությամբ չէր զիջի տիրամորը։ Եվ տիրամոր անունով ես տաղերգել եմ Դրախտիկին, Հուսիկ վարդապետը ծաղկել է իր գեղեցկուհի կաքավողին։ Պահպանիր Դրախտիկին, չէ՞ որ քո ստեղծածն է նա, չուզե՞ր՝ այդքան գեղեցիկ չէր ծնվի իմ Դրախտիկը։

Սակայն իմ հակառակորդների ձեռքին ամենաուժեղ և մահացու զենքը ինձ վերագրվող թոնդրակյան տրամադրությունն է, այդ մասին նրանք խոսում էին բարձրաձայն դեռ Անի ճանապարհվելուցս առաջ։ Ասում էին, որ ես ցանկանում եմ աստծո հետ մտնել երկխոսության մեջ, ուզում եմ դրանով շահել աստծո տիրտը և, միաժամանակ, հաճոյանալ թոնդրակյաններին, որովհետև արտասուքներ են նկատել իմ աչքերում կաքավողի մահվան պահին, որ ես իբր ոստիկանին թույլ չեմ տվել իր արժանի պատիժը հասցնելու հերձվածող Հուսիկ վարդապետին և այլն։ Իսկ ի՞նչ հայտնի չէ իմ հակառակորդներին, ամենից առաջ իմ մտերմությունը Մուշեղ վարդապետի հետ, այդ քաջասիրտ և քաջաբազուկ երդվյալ թոնդրակյանի հետ, որի անունը քաջ հայտնի է այժմ ողջ հայոց հոգևոր աշխարհին իր թոնդրակասիրական աշխատություններով։ Կա մի մեծագույն հաղթաթուղթ, որ Ավելաղաշտի ճակատամարտում մենք գտնվում էինք հակառակ բանակներում և փաստորեն մարտնչում էինք միմյանց դեմ։ Միայն թե իրենց դիվական հարցասիրություններով հետամուտ չլինեն, վանքի պատանի ծառային և նրանից չկորզեն իրենց հարկավոր փաստերը։ Հարկավոր է խոսել Հակոբիկի հետ, այնպես, որ նա չվախենա հնարավոր հարցաքննությունից և փակ պահի բերանը։ Հեշտ է ասել. փակ պահի բերանը։ Կունձիկ աբեղայի նման շները նրան կփորձեն համոզել, կփորձեն կաշառել, ի վերջո այնպես կվախեցնեն, այնպես կսարսափեցնեն կտտանքներով, որ տղան կասի նույնիսկ ավելին, քան հարկավոր է։

Ի վերջո, սպասվում է Սյունյաց հոգևոր առաջնորդի ամբաստանական նամակը, որը եթե դեռ չի ստացվել, ապա շուտով կստացվի։ Թե ինչեր կարող է գրել այդ ցնդած ծերուկը, միայն աստծուն է հայտնի։ Այսպես, ուրեմն, մտմտում էր Գրիգորը, եթե այդ փաստերը դուրս գան ջրի երես, ուրեմն, պատրաստվիր, Գրիգոր Նարեկացի, դատի ու դատաստանի, բանադրանքի և եղծվածողի խարանին։ Պատրաստվի՛ր, Գրիգոր...

— Ես կկռվեմ իմ կռիվը, կկռվե՛մ...

Լարվել էր։ Ջղերը պրկված էին քնարի լարի նման։ Քայլեց մենաստանից դուրս, դեպի շենի թիկունքում բարձրացող ժայռաբլուրները։ Ճանապարհն անցնում էր շենից ձգվող այգիների միջով։ Այգեպանը եկավ ընդառաջ, դեմքը ծանոթ էր, ախր, ինչո՞ւ միանգամից չհիշեց, որ քայլում էր վանքապատկան այգիների միջով և այգեպանը իր մանկությունը զարդարող մարդկանցից է՝ Վարդևանը, մի սիրելի ծերունի՝ համով ու հոտով հեքիաթներ պատմող, հայրենի քաջերի կյանքը փառաբանող Վարդոն։

— Գրիգոր, որդիս, չես երևում, ո՞ւր ես։ Մեծացել ես, բեղ ու մորուս ունես, հիմա, ասա, էդ քո տղամարդությունն ո՞ւմ համար է, բարով-սիրով օջախի՞, թե վանքի քարերի և անձավների մեջ շարչրկելու։ Տուն-տեղ դիր, որդիս, այգի տնկիր, գինի քամիր և օրդ լուսացրու զավակներիդ հետ, թե չէ...— և ծերունին լռեց, երևի շատ էր առաջ գնացել։ Դիմացը սև այտամորուսներով կանգնած էր երիտասարդ վանականը, պետք չէ աստծո ծառաների աչքից ընկնել, թե չէ մեկ էլ տեսար թռնդրակյան սարքեցին և խարանեցին։ Բայց Գրիգորը ժպտում էր։ Նրան դուր էր գալիս շատախոս ծերուկը։ Քաղցր ու դառն հուշեր կային կապված այս փարթամ այգու և այգեպանի հետ։ Հիշեց։ Բացվում էր մի սքանչելի գարուն, այգում ծաղկել էին ծառերը՝ սպիտակ, մանուշակագույն, դեղնավուն։ Երկնքում փշրվել էին արևի ճառագայթները։ Աշխարհն ասես հարբած լիներ։ Ինքն ուրախ, երջանիկ վազվզում էր այգում, երբ հանկարծ ոտքի՝ գարշապարի տակ ասես ասեղ խրվեց։ Ճչաց ու նստեց։ Եվ սարսափով տեսավ գալարվող սողունին, որ գլուխը բարձր, մի տեսակ հաղթական ու ինքնավստահ, հեռանում էր՝ իր սև գործը կատարած։ Տղայի ճիչն արագ դեպքի վայր բերեց այգեպան Վարդոյին։

— Ի՞նչ պատահեց, որդիս...— հարցրեց տագնապած։

— Օձը՛... Օձը կծեց, քեռի Վարդո,— լալիս էր Գրիգորը։

— Օձը՞...— մռայլվեց այգեպանը, ճակատին առատացան կնճիռները։— Տեսնեմ...

Կարճ նայեց վերքին։ Շտապում էր, ուշանալը կարող էր ճակատագրական լինել։ Գլուխը տմբտմբացրեց։

— Թունավոր է, որդիս, իմացիր, թունավոր, բայց մի՛ վախենա, գարունը նոր է բացվել, օձերն էլ քնից նոր են զարթնել, կատաղած են։ Բայց դու մի վախենա, դեռ չի հասցրել այնքան թույն կուտակել, որ մահացու լինի,— մխիթարում էր այգեպանը Գրիգորին,— մենք հիմա էդ մի կաթիլ թույնն էլ կքամենք քո ոտքից, քանի արյանդ չի խառնվել...

Այգեպանը պինդ կապեց թաթը՝ վերքից վերև։ Իսկ դանակը Գրիգորը նույնիսկ չէր տեսել նրա ձեռքին։ Տեսավ դանակի համարյա աննկատելի փայլն այն ժամանակ, երբ դանակը ճոռթեց վերքն ու ցայտեց սև արյունը։ Տղան ճչաց ու արագ պահեց շունչը։ Ամաչեց։ Իսկ այգեպանը քամում ու քամում էր արյունը։ Հետո վերքին ինչ-որ կանաչներ դրեց, կապեց, մի խոսքով, Վարդոն բալասանեց իրեն, մի երկու օր էլ պահեց քողտիկում և, երբ իր ջերմությունն իջավ, հանձնեց ծնողներին։

— Երանի այն օրերը,— հառաչեց այգեպանը,— Գրիգոր, շատ եմ ծերացել, մանավանդ գարնանը շունչս բռնվում է։ Գարունը, որդիս, դիտավորյալ գեղեցկացնում է աշխարհը, որ գնացողը չուզելով հրաժեշտ տա կյանքին։ Գարնանը վերանորոգվում է կյանքը, իսկ ծերացողը պարտավոր է տեղ ազատել եկողի համար, տեղ տալ եկողին։ Գարունը ծերերի համար ապրելու դժվար ժամանակ է։— Եվ ծերունու դեմքը հանկարծ լուսավորվեց, ճակատի կնճիռները հարթվեցին և խորշոմաբարդ դեմքը ջահելացավ,— իսկ սիրելու համար գարո՞ւնը... Է՛հ, ի՞նչ եմ ասում, գարունը սիրո եղանակ է, ինչպես գետերն են ջրերով լցվում ու ուռչում, էդպես էլ մարդու սիրտը, երբ տեսնում է իր սիրածին... Ա՛յ տղա, ես քեզ հո փչացնում եմ, քո ճգնավորի արյունը իրավունք չունի գինու նման փրփրելու, աստված կնեղանա...

Ծերունին լռեց։ Թվաց, թե ինչ-որ բան է ցանկանում ասել։ Զասաց։ Գրիգորը սրտի թրթիռով էր հիշում այդ օրը։ Հենց միայն հիշելուց բռնվեց շունչը։ Բայց այն ժամանակ գարուն չէր, այլ բերքով ու բարիքով ծանրաբեռ աշուն։ Այգեկութն սկսվել էր. ծառերը մրգերի ծանրությունից ճկռել էին, մանավանդ խնձորենիները, որոնց ծանրացած ճյուղերի տակ նույնիսկ ճկվել էին փայտե հենակները։ Շենի այգիներից բարձրանում էր խորոված ի կապույտ ծուխը, շինականները աշնան բարիքները վայելելու եռուզեռի մեջ էին։ Հենց խորոված ի կապույտ ծխից հալածված, Գրիգորն ու Դրախտիկը մի կերպ իրենց գցեցին վանքի այգին, ուր ծխի հետք իսկ չկար և չէր էլ կարող լինել։ Երիտասարդներն այստեղ մի պահ իրենց ազատ զգալով, հանձնվեցին սիրո իշխանությանը, քողարկվելով թփերի մեջ։ Այդ պահը Գրիգորն ինչպե՞ս մոռանա։ Հնարավոր անվտանգության զգացումն ու մարդկանց աչքից հեռու լինելը պատճառ դարձան անզգուշության։ Համբույրը միացրել էր նրանց շուրթերը, և աշխարհ,

մարդ ու ամեն բան մոռացած ջահելները նույնիսկ չլսեցին մոտեցող այգեպանի ոտքերի տակ տերևների խշշոցը։ Ծերուկը դիտավորյալ ավելի ծանր ու աղմկոտ քայլ էր անում, որ սիրահարները լսեն, սթափվեն, ի վերջո զգաստանան։ Բայց սերը, որ իր բռնկման մեջ նման է հարբեցողության, անհաղորդ ծերունու տագնապներին, թե՝ կբռնվեն և մեծ խայտառակություն, դատ ու դատաստան կլինի, սիրահարները չէին սթափվում սիրո քաղցր թմբիրից ու երանությունից։ Այգեպանը ճարահատյալ հազաց, և սիրահարներն անմիջապես արթնացան։ Մշուշված, չտեսնող աչքերով նայում էին այգեպանին, առաջին պահ չճանաչելով նրան և չիմանալով իրենց անելիքը։ Ծերունին չէր նայում նրանց։

— Համա թե սիրվելու տեղ են գտել,— խոսում էր ինքն իրեն,— ախր, սա աստծո տարածք է, սիրելն այստեղ անառակություն է սեպվում, աստծուն ուղղված վիրավորանք...

— Սա, Վարդո քեռի, աստվածային տարածք չէ,— կարողացավ կմկմալ Գրիգորը։

— Թող աստծո չլինի, սատանայինը լինի,— ժպտաց այգեպանը,— ձեզ եթե այստեղ տեսնեն, կուղարկեն սատանայի ծոցը։ Դե, հիմա լսեք ինձ, վեր կացեք ու սուսուփուս քաշվեք այստեղից, քանի վանքի լրտեսները որսի չեն ելել... Եվ ինձ, հիմար ծերուկիս, ներեցեք, որ չթողեցի իրարից կշտանաք, միևնույն է, սիրուց կշտանալ չի լինի...— և կարոտով հառաչեց։

Երբ գողեգող դուրս էին գալիս այգուց, դռան մոտիկ ծառից մի կարմրաթուշ խնձոր ընկավ ուղիղ Դրախտիկի գլխին։ Երկար ծիծաղում էին։ Ի՞նչ խնձոր էր, բուրավետ, գեղեցիկ. իսկ երբ նայեց Դրախտիկին, նրա աչքերում արցունքներ տեսավ։ Աղջիկն արտասվում էր։

— Ի՞նչ պատահեց քեզ, անգին,— տղան իրեն քաշեց աղջկան։

— Ցավե՞ց...— չթաքցրեց աղջիկը և արցունքների միջից ժպտաց։

— Խնձորը սիրո նշան է,— խոսեց ինքը, համբուրելով աղջկա ցաված ճակատը,— ժողովուրդն է այդպես ասում, Դրախտիկ։ Իսկ սերը, ասա՛, անգինս, առանց ցավի կլինի՞...

Եվ ծիծաղելով, զարտուղի ճանապարհով իջան շեն։

Գրիգորն անթաքույց ջերմությամբ ու ժպիտով նայում էր այգեպանին, հիշողությունը լցրել էր նրա հոգին ափեափ, քիչ էր մնում ընկներ այգեպանի վիզը, համբուրեր նրան, գանգատվեր իր շուրջը հյուսվող անտեսանելի դավերից ու որոգայթից, ապա արտասվեր նրա առջև, այգեպանն անպայման կհասկանար իրեն, կթեթևացներ իր հոգեվիճակը։ Մի պահ, միա՛յն մի պահ, եթե ասեր այն խոսքերը, որ ասել էր վաղուց,

ապա իրեն՝ Գրիգորին, դուրս կբերեր հոգեկան ծանր ճգնաժամից, կվերադարձներ իր սիրույն ու տաղերին, գոնե մի քանի օրով հնարավորություն կտար հանգիստ քնելու, վերկենալու։ Այգեպանի խոսքը չուշացավ.

— Որդի՛ս, տեսնում եմ, որ հոգիդ մամլիչի մեջ է։ Ճզմվում է։ Ախր, դու սատանի աչքեր ունես, էդ աչքերով տղաները պետք է, որ աղջիկների հոգիները ուտեն, դրա համար են ծնված։ Դու տաղասաց ես, քո տաղերով պետք է զարդարես խնջույքի սեղանները և սիրահարների կյանքը, իսկ դու ուխտ ես արել ապրել չոր գլուխ, կանանց երազներում տեսնել, թեև չեմ հավատում, թե քուրձ հագնես և պորտդ քարերին քսելով, չգիտեմ՝ ում մեղքերը քավես. մինչդեռ աշխարհը գնում է իր ճամփով, լավ ու վատ իրար խառնված ներկայանում են աստծուն, իսկ նա ի՞նչ իմանա, ինչպես տեսնի, ինչպես տարբերի լավին վատից և բոլորին չէ , որ ուղարկում է դրախտ, այնտեղ այդքան ազատ տեղեր չկան, և լավ ու վատ գործուղում է դժոխք։— Ծերունին ձայնն իջեցրեց,— եթե ուզում ես իմանալ, ես հետմահու կյանքին չեմ հավատում, եթե այդ կյանքը կա, գոնե մեկն ու մեկը որևէ ձևով իմաց կաներ, կամ՝ ի՞նչ մեղք ունի մարմինը, որ թողնում են որդերին կերակուր դառնա, իսկ ոգին թռցնում են հավքի նման դրախտ, դժոխք... Սիրի՛ր քո աղջկան, խմիր քո գինին և այս կյանքը սիրիր, ա՛յս կյանքը... Բայց ամենակարևորը՝ զգուշացիր վանքի այդ աստծո սպասավոր կոչվածներից։ Իննսուն տարիս անցել է այս այգում, վանքի հարևանությամբ, և չեմ տեսել, որ մի կարգին մարդու վանքը պահի, պահպանի և վարկաբեկ չանի։ Լավերին միշտ հետապնդում են և բանադրում, ազատամիտներին՝ խարանում։ Զգույշ եղիր, տղաս, վանքի կեսը լրտեսներ են... Այն աղջիկն ո՞ւր է, աննման էր, բաց չթողնես։ Զգո՛ւյշ, սերդ սրանց ականջը չընկնի։ Մի խոսքով... Հա՛, հա՛, Գրիգոր, որդիս, քիչ մնաց մոռանայի։ Դու վարդապետ Հուսիկին հիշո՞ւմ ես...

— Ծաղկողի՞ն... Իհարկե՛։

— Ապրի արևդ։ Հերիք չէր, որ հարսնացուին՝ կաքավողին, Աղթամարում տոնախմբության ժամանակ սպանեցին, իրեն էլ...

— Իրեն ի՞նչ...— համարյա գոռաց Գրիգորը,— նրան կալանքի վերցրին կղզում, հետո այստեղ՝ Նարեկավանք բերին...

— Սրանք պահանջեցին։ Ասել էին՝ Հուսիկի համար մեղավորը մենք ենք, տվեք մեզ, և մենք կքավենք մեր մեղքը։ Տվել էին... երեք տարի է, նա բանտարկված էր այստեղ և ապրում էր մի կտոր հացով ու մի կում ջրով։

— Եվ շարունակում էր ծաղկել, արարել...

— Սպասի՛ր, մի շտապիր, Գրիգոր, նրան ո՞վ թույլ կտար ծաղկելու։ Գցել էին զնդան, ո՛չ արև, ո՛չ լույս... Իսկ մեկ ամիս առաջ թաղեցին, իբր թե այդ հերձվածողը, այդ թշնամին աստծո ինքնասպան է եղել...

— Ինչո՞ւ իբր, գուցե իսկապես ինքնասպան է եղել, չի դիմացել կտտանքներին, զնդանին...

— Շշուկներ կան,— ծերունին ձայնն իջեցրեց, թեև ոչ մի կողմնակի շունչ չէր երևում շրջակայքում,— շշուկներ կան, որ Հուսիկ վարդապետին խեղդել են, Գրիգոր։ Ես հավատում եմ, քանզի Հուսիկն ըմբոստ ոգի էր, թոնդրակյան։ Բանե՛ր, բանե՛ր։ Դու լսեցիր ի՞նչ եմ ասում, այս այգին լիքն է գաղտնիքներով։ Գալիս են կրոնավորներ, աշխարհիկներ, իշխաններ, ամեն տեսակի մարդիկ և քանի որ ինձ մարդու տեղ չեն դնում, ինչ ասես դուրս են տալիս իմ ներկայությամբ, մանավանդ, երբ կատարները տաքացած են լինում... Այն էլ ասեմ, տղաս, որ թոնդրակյանների որսի են դուրս եկել մեր բոլոր հոգևորականները։ Թոնդրակյան են սարքում շատ անգամ անմեղ, կարգին մարդկանց և խոշտանգում, անվանարկում, աղվեսադրոշմով խարանում նրանց։ Հաշիվ են մաքրում, հաշի՛վ... Ում ատում են՝ թոնդրակյան են ասում և գլուխը աղում։ Զզարմանաս, որ այս ամենն այգեպանից ես լսում։ Ես էլ սևն սպիտակից չոկում եմ, հասկանում եմ։ Իմացած եղիր, որ միաբանության բոլոր անդամները չէ, որ սրիկաներ են, հետո ինքդ կճանաչես մարդկանց, կիմանաս։ Նրանցից մի երկուսը գալիս են իմ քողտիկը և լցված սրտերը դատարկում, որդիս։ Միայն նորից եմ կրկնում, զգուշացիր զրպարտիչներից, ամբաստանողներից, աստծուն թալանողներից։ Իմացած եղիր, որ քեզանով հետաքրքրվում են վատերը, որոնց հետ գործ ունենալը նույնն է, թե գործ ունենալ դևերի ու սատանաների հետ... Մի քանի օր առաջ ինձ մոտ էր եկեր վանքի ծառան՝ Հակոբիկը,— Գրիգորի շունչը բռնվեց հուզմունքից,— որի հետ դու ճամփորդել ես մայրաքաղաք՝ Անի։ Նրան է մոտեցել Կունձեկ աբեղան և հարցուփորձել, թե ում հետ ես հանդիպել, ուր ես եղել, ինչու եք հայտնվել Սյունիքում, թոնդրակյանների ջարդերին ում կողմն եք եղել։ Այն էլ ասեմ, որ տղան գլխի է ընկել, որ իրենից խոսք են քաշում և լռել է, բայց Հակոբիկը վախեցած է, Գրիգոր, նրան հարկավոր է տեսնել, սրտապնդել, որ այդ իսկական հերձվածողներից զգուշանա և բերանից բան չթռցնի։ Կարևոր էլ չէ, թե մեջը բան կա՞, թե ոչ, լինի, թե չլինի նրանք կսարքեն այնպիսի մի թույն, որն ավելի վտանգավոր է, քան օձի թույնը... Դե, տերն ընդ քեզ, գնա քո ճամփով, գարունն այգի է մտնում, նրա առջև պետք է դռները լայն բանալ, այգին մաքրել, լոգացնել, որ գարունն էլ իր հերթին ծաղիկներով զարդարի, թռչունների երգչախմբերով և առուների խոխոջով շենացնի... Գնաս բարով...

Ծերունին շրջվեց և քայլեց դեպի այգու խորքը։ Տարիքը ճկել էր նրա ուսերը, սակայն ձեռքերը նկատելիորեն ամուր էին բռնել բահի կոթը։ Քայլում էր դանդաղ, գլխակախ, հայացքը կանաչ հողին։ Գրիգորն արագ դուրս քայլեց այգուց և բարձրացավ ոչ բարձր ժայռերի անձավները։

***

Նստել անձավի մի անկյունում և նայում էր հեռվում ծփացող վանա ծովին։ Գարնանային տաքացող օդը տատանվում էր, և հերկվող արտերից և ծաղկող այգիներից բարձրանում էր գոլորշին։ Օդը լցված էր արբեցնող մի բուրմունքով, որն անուն չունի, թռչունների տաղերով, ուր փառաբանվում է աշխարհի զարթոնքը։ Գարնանային հովը բերում էր լճի հզոր շնչառությունը և ալիքների երգը, որոնք խաղաղ խայտանքով ծեփվում էին ափին։ Կղզու սապատը գոմեշի մեջքի նման դուրս էր ցցվել ջրից, և արևի տակ նրբագեղորեն առանձնանում էր Սուրբ Խաչ տաճարի ասես օդում հալվող ուրվագիծը։ «Քո հանճարը, երկնային տեր, այս ի՞նչ նրբություն և գեղեցկություն է տվել աշխարհին։ Այս ի՞նչ հրաշք ես արարել, աստված, որ աչքը չի կշտանում նայելուց, ականջը չի կշտանում կախարդական ձայներից, հոգին ջերմանում է այնքան, որ տաքությունից եռում է մարդ արարածի արյունը, լցվում սիրելու, ստեղծելու, արարելու, աշխարհն էլ ավելի կատարյալ, առավել գեղեցիկ տեսնելու ցանկությամբ և տքնանքի ամենազոր ավիշով։ Եթե այսքան անթերի է աշխարհը, տեր, ապա ինչո՞ւ այդքան արատավոր է, մեղքերով հարուստ մարդը, որ տիրակալն է այս ամենի։ Դու, որ սահմանել ես, երկնավոր, աշխարհը, մարդը մարդուն սիրելու և նվիրվելու բնական պահանջը, որ պահանջ է աստվածային, ապա ինչո՞ւ ես սահմանել սիրո և նվիրվածության ներհակը՝ ատելությունն ու դավաճանությունը։ Եթե դու մարդուն տվել ես քո պատկերն ու քո գեղեցկությունը, ապա ինչո՞ւ ես ստեղծել նաև արտաքինով և հոգով այլանդակներին ու անազնիվներին։ Եթե ճշմարտության մեծ պահապան ես դու, ապա ինչո՞ւ ես ստեղծել նաև սուտն ու կեղծիքը կրողներին։ Եթե արդարությունն ու մաքրությունը աստվածային պահանջ է, ապա ո՞ւմ պահանջն է գողությունը, անառակությունն ու գռփելը։ Ասա, երկնային, դու, որ արդարության և ճշմարտության պահապաններին օժտել ես քաջության և հերոսի սրտով, էլ ինչո՞ւ ես նրանց դեմ հանում վախկոտությունը, որ համազոր է դավաճանության։ Դու, որ

տվել ես ինձ սիրով ապրող մի ջերմ սիրտ, ինչո՞ւ ես սահմանում օրենքներ, որոնցով սահմանափակել ես իմ սիրելու իրավունքները, և եթե ես չանսամ քո դրվածքին, ապա ինձանից կսարքես մեղքերով լեցուն մի անոթ և արժանի գեհենի կրակներին։ Եթե դու կատարյալ ես, ապա ես ինչո՞ւ եմ այսքան հեծեծում, գլուխս քարեքար տալիս անկատար, մեղավոր լինելու գիտակցությունից։ Մի՞թե ավելի լավ չէ լինել մաքուր ու ազնիվ, քան մեղքերով ու ոճիրներով ծանրաբեռ, հայցելու քո թողությունը և մեղքերը քավելու երեսպաշտական աղաչանքներով արժանանալ քո ողորմածությանը։ Ասա, տե՛ր, ի՞նչ է կատարվում քո ստեղծած հեքիաթային աշխարհում կամ կորիր անարժանիս լեզուն, որ հանդգնում է արևի վրա սև բծեր տեսնել...»։

Հովերը մաճկալից թոցրած երգի ծվեններ էին ծեփում նրա լսողությանը։ Սրտառուչ ջերմությամբ շինականը գովերգում էր իր և իր եզների եղբայրությունը, հայցում նրանց օգնությունը։ Ժայռի տակից աչքի նման մաքուր մի աղբյուր էր կարկաչում և կորչում ուռիների մեջ։ Մի աղջիկ կուժն ուսին եկավ, ջրով լցրեց կուժը և կանգ առավ։ Ինչ-որ մեկին էր սպասում։ Գրիգորը թեև դեմքը չէր տեսնում, այնուամենայնիվ, զգում էր աղջկա գեղեցկությունը։ Բարակ մեջք ուներ, մեջքին կախված ծանր ծամեր։ Ո՞ւմ էր սպասում։ Աղջիկը փորձեց կարճել սպասման ժամանակը։ Կուժը դատարկեց և նորից լցրեց։ Այսպես մի քանի անգամ, մինչև երևաց բախտավոր սիրահարը։ Ձեռքին ճիպոտ կար, երևի արտվորներից էր։ Աղջիկն ինչ-որ բան ասաց տղային և շրջվեց նրանից, երևի նեղացել էր։ Տղան հետևից գրկեց նրա ուսերը և ցանկացավ համբուրել։ Աղջիկը դեմքը ծածկեց զույգ ափերով։ Նեղացած էր, մերժեց տղայի համբույրը։ Տղան երևի նեղացավ և, աղբյուրի տակից արագ վերցնելով կուժը, սկսեց ագահորեն խմել։ Նեղսրտությունից ամբողջը խմելու է, մտածեց Գրիգորը։ Հետո կուժը նորից դրեց աղբյուրի տակ և հեռացավ։ Աղջիկը շրջվեց դեպի տղան, սակայն ուշ էր։ Ձայն տվեց տղային։ Նույնիսկ լսվեց տղայի անվան կիսատված պատառիկը։ Բայց տղան նեղացած էր, գնաց։ Աղջիկն արտասվում էր և հյուսերի ծայրով սրբում աչքերը։ Գրիգորի սիրտը թպրտաց. «Հիմարներ, ինչո՞ւ եք չարչարում միմյանց, ինչո՞ւ...»։ Բայց տեսարանը գեղեցիկ էր։ Գիտեր, որ նրանք քիչ հետո կհաշտվեն և այս հեշտին տառապանքը ավելի կամրապնդի նրանց սերը։ Հետո քայլ արավ նաև աղջիկը։ Այգեմիջյան ճանապարհին երկար ծեքծեքում էր նա։ Թվում էր՝ ուր որ է կկոտրվի նրա բարակ մեջքը հաստ հյուսքերի ծանրությունից։

Աղջիկը ձուլվեց այգիներին և չքացավ։ Գրիգորը երկար ժամանակ մտքով նրանց՝ սիրահարների հետ էր։ Պայմանավորվել էին հանդիպել

աղբյուրի մոտ և հանդիպումը ձախողվեց, նեղացած հեռացան իրարից։ Բայց արդյո՞ք ձախողվեց։ Նրանք հանդիպեցին, տղան ուշացել էր, աղջիկը նկատողություն արեց տղային և վիրավորեց նրա այրական ինքնասիրությունը։ Երեխայական խաղ, հառաչեց Գրիգորը, ձեր միջև ընկած է սիրահարների բծախնդրությունը, իսկ ի՞նչ կանեիք, աստված մի արասցե, եթե ձեր միջև կանգներ ինքը՝ աստված և պահանջեր հրաժարվել սիրո ձեր անկապտելի իրավունքից, ի՞նչ կանեիք... Իսկ ի՞նչ կարող էիք անել։ Չէ՛, դու իրավունք չունես դժգոհելու երկնային տիրոջից, Գրիգոր, իրավունք չունես։ Դու և քո ծնողներն եք ընտրել այն ճանապարհը, որը չի ընդունում սեր և ամուսնություն և աստվածահաճո, աստվածանվեր է համարում ճգնավորի կյանքը, մենակյացի ծանր վարքը։ Օ՜, շատ պահանջկոտ է երկնային տերը, ուխտել ես նվիրվել իրեն, ուրեմն հրաժարվիր երկրային, աշխարհիկ կյանքից, որն այնքան հրապույրներ ունի, որ զրկվել դրանցից, նշանակում է չապրել, գոյություն չունենալ։ Չսիրել, ամլանալ, զրկվել ծնողի նվիրական սիրուց, իրավունքից և պարտականությունից... Խելագարվել կարելի է. տե՛ր, ես զգում եմ, որ հանդգնում եմ անչափ, որ քննում եմ ոչ ինձ վերաբերող, ոչ մարդկանց, ոչ հողածիններին ենթակա հարցեր, այլ անխոհեմաբար մտնում եմ աստվածությանդ սահմանները, որ ենթադրում է վիրավորանք քո հասցեին։ Ներիր ինձ, գթա քո մոլորված, երիցս հիմարացած զավակին... Բայց ես անզոր եմ, տե՛ր իմ, դու ինձ արարել ես այնպես, որ անգամ չուզելով, չցանկանալով մտնում եմ քո սրբազան սահմանները և ավելի հաճախ կուլ գնում սատանայի դիվական մտածողությանը։ Ներիր ինձ, ամենազոր, եթե աստվածային ուժ չունենար սերը, կարո՞ղ էր այսքան դիմադրել, անխոհեմաբար թռչել այն արգելքների վրայով, որոնք դրված են քո ձեռքով, որոնք աստվածային են՝ անքննելի, անկասկածելի, անքննադատելի։ Սերը մարդու, սերը մարդկային դու ես արարել, դո՛ւ, և ինքդ էլ տիրո ձեռքը կրակն ընկել։ Սերը չի ենթարկվում հակողության, նրա նկատմամբ իրավունքը ուժ չունի, և ուժը չունի իրավունք։ Տե՛ր իմ, հասկացիր, ես չեմ կարող չսիրել Դրախտիկին, թեկուզ ինձ այրես դժոխային ծծումբների մեջ, միաժամանակ չեմ կարող դավել և աստվածությանդ, ես քո ոտների փոշին, հանդգնում եմ քո դեմ, քանզի ինձ հանդգնության է մղում սերը, Դրախտիկի սերը։ Եվ գիտեմ, որ սիրտս ճզմվելու է երկու սրբությունների միջև, բայց միևնույն է՝ հրաժարվել աստծուց վեր է իմ ուժերից, հրաժարվել Դրախտիկից ավելի ծանր է ինձ համար, քան ստույգ մահը։ Տե՛ր իմ, մի՞թե այն, ինչ բարբառում է քո Քշվառ որդին, վիրավորանք է քո հասցեին։ Տե՛ր իմ, եղիր մեծահոգի, արդարադատ և մեր սխալները մեղք մի համարիր։ Աշխարհը լցվել է

աստվածապաշտներով, բայց աստվածասերների խիստ պակաս ունենք։ Սերն ավելի օրինական զգացմունք է, քան պաշտելը։ Պաշտամունքը ծնում է դրության, իրավունքի անհամապատասխանություն, և պաշտամունքի անունից կարող են կատարվել չարագործություններ՝ անբուժելի վերքեր հասցնելով և մարդկությանը, և քե՛զ, տե՛ր իմ... Ես սիրում եմ քեզ, հավատա, հավատա և մի կասկածիր...։

Գրիգորն իջավ անձավից և քայլեց դեպի վանք։ Միտքն աշխատում էր զարմանալի թռիչքներով, թռչելով մի հարցից մյուսը, մեղվի նման՝ մի ծաղկից մյուսը։ Միտքը չէր հանգստանում, հոգնած չէր։ Թռիչքների կարոտ ուներ միտքը։ Հոգում տաղերգում էին շարականները, սակայն մտքի և սրտի միացյալ հանճարեղ բեռը՝ տաղերն անզոր էին բարձրացնել հարկավոր մակարդակի։ Գրիգորի մեջ եռում ու եփվում էր այն բարձրաթռիչք էությունը, որը հանճար է կոչվում։ Հայաշխարհը հանճարի ծննդյան երկունքի մեջ էր։ Բանաստեղծությունները, շարախոսությունները, կասկածանքը, ամբաստանությունը և այլն, թող որ այժմ դեռևս լռության մեջ որոճում էին այն մեղքերը, որոնք դիպչելով տաղերգուի մեծ սրտի մաքրությանը, գեղեցկությանն ու կատարելությանը, պետք է կայծակի շառաչյունով ազդարարեին վատի ու լավի, աստվածության և սատանաների բախումը և ստեղծեին այն անչափելի, անհասանելի, անտարակուսելի, անկասկածելի մեծությունը՝ Գրիգոր Նարեկացուն։

Իսկ նա քայլում էր վանք՝ հոգին լիքը սիրո և աստվածության բռնկումներով։ Այժմ նրա միտքը զբաղված էր սեփական անձի փրկությամբ։ Նա գիտեր, որ ինքը ամբաստանվում է, գիտեր, որ մոտ է բախման պահը, գիտեր, որ ինքը մեղքեր ունի աստծո առջև, բայց գիտեր նաև իր առայժմ անտեսանելի հակառակորդների աստվածընդդեմ գործունեության անմարդկային արարքները։

«Եթե ես ընդունեմ ճակատագիրը, իսկ չընդունել չեմ կարող, ինչո՞վ կվերջանա այն. անկասկած իմ պարտությամբ։ Ես չեմ կարող հերքել ոչ սիրո մեղադրանքը և ոչ էլ հրաժարվել իմ սիրուց։ Սակայն մեղադրանքը կարող է ընթանալ առավել ծանր այպանքի հետ՝ անբարոյականության։ Բավական է նկատեն Դրախտիկին համբուրելիս, նրան գրկելիս, նույնիսկ նրա հետ զրուցելիս, որպեսզի սրի անվրեպությամբ հարվածեն՝ «շնանում էր»։ Մեղադրանք, որը հերքել ևս իրեն չի հաջողվի։ Այս մեկ։ Իրեն կարող են մեղադրել Դրախտիկի լուսեղեն կերպարը տաղերի մեջ արբացնելու, նրա կերպարից տիրամայրեր արարելու համար. «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ...»։ Կարո՞ղ է ինքը հրաժարվել իր տիրամայր Դրախտիկից. կարո՞ղ է, բայց համոզել չի հաջողվի, չեն հավատա։ Նորից տանուլ կտա։ Այնուհետև, իրեն ոչ թե ծածուկ, այլ բացահայտորեն մեղադրում են, որ հիմնական հարցում թոնդրակյաններին համակիր է, աստծուն դիմում է չմիջնորդված ձևով, զանց է առնում աստծո հետ խոսելու կոչված հոգևորականներին։ Դե՛, արի և ժխտիր, կարողացիր ժխտել այդ այպանքը։ Արի՛, արդարացիր այն բանից հետո, երբ ստացվի Սյունիքի ցնդած հոգևոր առաջնորդի ամբաստանագիրը։ Ծերխտիր Մուշեղի ընկերակցությունը Անի ճանապարհվելիս և տուն վերադառնալիս։ Չես կարող։ Չեն լսի։ Չեն էլ թողնի խոսել։ Իսկ ես ի՞նչ կարող եմ ասել նրանց, ինչո՞ւմ մեղադրել։ Համարյա ոչինչ։ Ասել աստվածադավ են և աստվածակործան, ասել, որ մարդատյացներ են ու գողեր, ասել, որ թալանում են ռամիկ, աշխատավոր մարդուն և մեծացնում վանքերի ու եկեղեցիների կալվածքներն ու հարստությունը, ասել, որ անբարո են և ամբարիշտ, ասել, որ աստվածությունն իսկ վերածել են զենքի և նրանով լուծում են իրենց խրթին, ստոր, անմարդկային հարցերը, ասել, որ աստված իր բարեգութ, մարդասիրական էությամբ հակադարձ համեմատական է իր իսկ սպասավորներին, ասե՛լ, ասե՛լ, բայց ինչպե՞ս գողին գող կոչես, երբ ձեռքին չես բռնել գողացածը, անաստվածին ինչպե՞ս կոչես աստվածապաշտ, երբ հոգին հնարավոր չէ կարդալ։ Մարդասպանին ինչպե՞ս մեղադրես սպանության մեջ, երբ արյունոտ դանակը չես բռնել ձեռքին։ Ինչպե՞ս ավարառու և թալանչի կոչես մարդկանց, երբ լռում են թալանվողները։ Ինչպե՞ս հոգևորականներին մեղադրես աշխարհիկ խստությունների մեջ, երբ նրանք այդ անում են աստծո անունից և աստծո թվացյալ օրհնությամբ։ Ես դատը տանուլ կտամ ու կբանադրվեմ, իսկ դա նշանակում է վերջ ամեն ինչի, բանադրանքին հետևում են հալածանքները, լավագույն դեպքում կվտանեն վանքից ու միաբանությունից, վատագույն դեպքում՝ կկալանեն, կամ դու կխեղդես քեզ, կամ նրանք կխեղդեն քե՛զ, քե՛զ... Դու կարող ես բարոյական հաղթանակ տանել, բայց ինչպե՞ս, որտե՞ղ են այն հաղթաթղթերը, նրանք երբեք չեն ընկնի քո ձեռքը։ Թեև պարտությունն է ելքը, բայց առանց ճակատամարտի չեմ հանձնվի...»։

Վանքին մոտենալիս իր թիկունքում լսեց մեկի շնչառությունը։ Շրջվեց։ Ծաղկած ծառի հետևում մեկն անհաջող փորձ արեց թաքնվելու։ Բայց Գրիգորը տեսավ։ Կունծիկ աբեղան էր, որ Գրիգորին տեսնելիս ծուռ ժպտաց ու կանգ առավ։

— Այդ ի՞նչ է, աբեղա, ինձ բա՞ն ունես ասելու...— մոայլ խոսեց Գրիգորը։

— Ես հիանում եմ քեզնով, դու քո մեջ այնպես ես ամփոփվել, որ երկար ժամանակ է քայլում եմ քո հետևից, չես նկատում, երևի հորինում ես նոր տաղեր...

— Տաղեր չեն հորինում, Կունծիկ աբեղա, տաղերն ամբաստանագիր չեն, որ հորինեն, տաղերն արարում են... Իսկ իմ հետևից ինչո՞ւ ես քայլում, ի՞նչ ես կորցրել, որ ցանկանում ես գտնել...

— Ցանկանում եմ քեզ հետ զրուցել, Գրիգոր, քեզ մի երկու հարցում ուզում եմ օգնել։ Ես քեզ սիրում եմ, Գրիգոր, ուզում ես հավատա, ուզում ես՝ ոչ, դու մեծ ճանապարհի վրա ես, պետք է խանգարող քարերը մաքրել քո ճանապարհից...

— Շնորհակալ եմ, Կունծիկ աբեղա, մանավանդ, որ սիրո խոստովանություն էլ արեցիր։ Բայց խնդրում եմ, որ քո սերը նման չլինի Գաբրիել հրեշտակապետի սիրուն, որը ում սիրում է, տանում է գերեզման, ի Վերին Երուսաղեմ, ի՞նչ կասես...

— Սուր լեզու ունես, Գրիգոր, բայց ես քո լավն եմ ցանկանում...

— Քեզ նմաններն ում որ լավն են ցանկանում, դառնում են նրա ատվերը, լրտեսում են...

— Տես, որ չփոշմանես, Գրիգոր...

— Եթե մեկ էլ տեսնեմ, նկատեմ լրտեսելիս, իմացիր, վատ կլինի, ականջիդ օղ արա...

— Լա՜վ, լա՜վ, մի՛ կատաղիր...

Եվ արագ հեռացավ։ Փախչում էր, ասես բորոտից։ «Եվ դրտեղի՞ց են արանք, ի՞նչ մոլորակից, ի՞նչ մայրեր են ծնում սրանց։ Սնում են ինչո՞վ, մայրական անարատ կաթո՞վ, թե թույն են խառնում իրենց կաթին։ Այն մարդկությունը, հասարակությունը, ուր հող են գտնում աճելու և, մանավանդ, հզորանալու սրա նմանները, չի կարող առողջ լինել, ախտածին է, հոգևոր ծանր հիվանդությամբ լեցուն է նրա ախտավարակ հոգին, ուտում է նաև մարմինը և աճում է մարդկային որոմը, խլելով ազնիվ, մարդկային հոգին և մարմինը բալասանող, ապաքինող բույսերի տարածքը, արևն ու ջուրը, ապականում է աշխարհը, աղտոտում այնպես, որ աղտոտությունը մաքրության հանդեպ տանի խորտակիչ հաղթանակ։ Ո՛չ, ես չեմ կարող նստել մի սեղանի շուրջ, մեղադրյալի աթոռին՝ Կունծիկ աբեղայի հետ, չե՞մ կարող. նա պիտի լինի մեղադրողը, իսկ ես՝ մեղադրյալը, նա հարցաքննողը, ես պատասխանողը, չե՞մ կարող։ Լսո՞ւմ ես, տե՛ր, լսում ես, չե՞մ կարող... Մենք տարբեր մարդիկ ենք, մենք տարբեր հոգևոր զենքեր ունենք, տարբեր լեզու, պատկանում ենք տարբեր աստվածությունների, տարբեր կրոնների, մենք երկուսով նույն օդը շնչել չենք կարող, նույն հացը ուտել չենք կարող և, ի վերջո, նույն հողում թաղվել չենք կարող... Լսո՞ւմ ես, տե՛ր, ազատիր մեզ սրա նմաններից կամ ընդհանրապես խլիր մեր ազատությունը։ Ազա-

տի՛ր մեզ նրա նման մեղադրողներից կամ մեր կյանքն ամբողջ մեղքերի, հանցանքների անքավելի շղթա համարիր։ Ազատի՛ր մեզ ստի և կեղծիքի այս այլանդակությունից, կամ սուտն ու կեղծիքն առաքինություն համարիր։ Ազատի՛ր մեզ հետապնդումներից և լրտեսումներից, կամ լրտեսությունը օրինական և ճիշտ համարիր։ Ազատիր մեզ ամբաստանությունից և զրպարտությունից, կամ ամբաստանելն ու զրպարտելն օրինականացրու։ Ազատիր գողերից ու պոռնիկներից կամ նրանց գործունեությունը սեպիր անարատություն և առաքինություն։ Անտաղանդներից և միջակություններից մեզ հեռու պահիր, կամ նրանց շարությունը մեղմելու համար նրանց տաղանդներ և հանճարներ հռչակիր։ Շրջիր հասկացողությունների իմաստը, և աշխարհի ներկա վիճակը միանգամայն ճիշտ արտացոլում կստանա. վատը՝ լավ, գողը՝ ազնիվ, անբարոյականը՝ առաքինի, զրպարտիչը՝ ճշմարտախոս, բռնավորը՝ բուժիչ, մարդասպանը՝ մարդասեր, դահիճը՝ փրկիչ, անաստվածը՝ աստվածասեր, մեղավորը՝ սուրբ և այլն, և այլն, և մեր օրերի պատկերը կճշտվի, կամբողջանա...»։

Դառնացած էր, չգիտեր ի՞նչ անել, որ իր վիճակը պարզվեր։ Հետո սկսեց ինքն իրեն մխիթարել. «Իսկ ի՞նչ է պատահել, ոչինչ, ոչինչ էլ չի պատահել։ Քեզ չեն բանադրել, իսկ դու կնոջ նման արցունքներդ ես սրբում։ Ջուրը չտեսած բոբիկացել ես։ Քեզ ուսուցչապետ Անանիան զգաստության կոչեց, ասաց՝ ճակատամարտ պիտի տաս։ Դու ինքդ էլ երդվեցիր՝ կռվել քո կռիվը։ Իսկ կռվի հեռանկարից այդքան լարվելը, երկնչելը մի՞թե այր մարդու գործ է։ Գոտեպնդվի՛ր, զենքերը պատրաստ պահիր, որ գործածելիս վրիպումներ չունենաս։ Իմացի՛ր, թշնամու գոյությունը դեռևս քո պարտությունը չէ։ Ի վերջո, քեզ հետ է ինքը՝ ուսուցչապետ Անանիան, իր վիթխարի հեղինակությամբ և մեծ խելքով։ Քեզ հետ են վանքի տաղանդավորները, ափսո՜ս, որ նրանց թիվը երկու-երեք հոգուց չի անցնում։ Տաղերդ երգվում են, ուրեմն, երգիչների սիրտն էլ քեզ հետ է, Գրիգոր։ Դեռևս ոչինչ չի պատահել։ Է՜հ, հետո՞, բայց կարող է պատահել, թո՜ղ պատահի, այսքան հուզվելու, այսքան ինքնակտտանքների փոխարեն, իջիր մտքի ու հոգու քո Ավարայրը և փորձիր հաղթել, հակառակ պարագայում ընկիր կարմիր Վարդանի նման։ Եվ եթե այսօր քեզ նույնիսկ սատանա հռչակեն, միևնույն է, վաղը սրբանալու ես։ Այդպես է ճշմարտության ճանապարհը փշապատ, բայց ճանապարհորդին սպասում է հետմահու կյանքը՝ անմահություն»։

Շենի ծայրին նրան երևութացավ կժով աղջիկը։ Գեղեցիկ եղնիկի նման շփոթված, տագնապն աչքերում, կարծես տասը տարվա ծանոթ-բարեկամը լիներ։ Քիչ մնաց բարևեր, հարցուփորձեր։ Աղջիկը շտապում էր։ Չէր կարող խռոված մնալ իր ջահել, աշխատավոր սիրածից։ Գրիգորն

անդրադարձավ նաև, որ գարնան օրը լցված է սիրո անանուն կարոտներով, անմեկին թրթիռներով, որից ուռչում է սիրտը և լցվում, լցվում ավիշով՝ սիրո և երգի...

— Կյանքը թև առած թռչում է, սիրուց խելագարվել է բնությունը, իսկ դու այս ամենի կողքով անցնում և չես նկատում, երիտասարդ տաղերգու Գրիգոր Նարեկացի...

Եվ նախանձով ու ջերմությամբ նայեց աղջկա հետևից...

***

Գարունն արդեն լիիրավ տերն էր աշխարհի։ Նա մտել էր Վասպուրական աշխարհը ծառերի փթթուն ծաղկմամբ, ջրերի խելագար վարարումներով։ Կանաչ էր հագցրել նույնիսկ քարերին և միայն Վանա ծովակն էր, որ չնայած յուրաքանչյուր օր կլանում էր հսկայական քանակությամբ վարարած գետերի ու գետակների ձնաջրերը, սակայն չէր կորցնում իր նրբագեղությունը, չէր պղտորվում և չէր ենթարկվում գարնան քմահաճույքներին։ Կրկին զմրուխտ կապույտ էր, կրկին ծփում էր նազանքով և ալիքներով համբուրում իր դարավոր ափերը։

Գարունը սիրահարների եղանակ է։ Աշխարհն այդ օրերին նման է արթնացած փեթակի։ Կյանքի զարթոնքն ամենից առաջ սիրո արթնությունն է։ Ի՞նչ էր խորհում, ով իմանա, սիրո իրավունքից զրկված, սակայն սիրահար Գրիգոր Նարեկացին։ Սիրտը թռչում էր ի դուրս վանական խոնավ և կիսակույր խցից։ Հոգին տաք էր, սակայն սառն էր խուցը, քարե պատերից սառնությունը նկատելի շարժումով ցուրտ էր փչում գարնանով արբած տաղերգուի դեմքին։ Սիրտը զորեղ հարվածներով ծեծում էր կրծքավանդակը, խփվում էր դեսուդեն և սպառնում ջարդել վանդակն ու դուրս թռչել։ Նրա պատուհանից երևում էր վանքի զանգակատունը։ Պղնձի զանգը դարձել էր անամոթ ճնճղուկների սիրավայրը, որոնք գզվում էին, սիրվտվում, սիրային անմեղ խաղերով սպառնում աստծո սրբավայրերից մեկի բարոյականությանը։ Գրիգորն ուրախ զարմանքով նայում էր թռչունների սիրախաղերին, և սիրտը թպրտում էր բնության անխարդախ հետևողականությունից և նախանձից։ Սերը պարտադրվում է բոլորին, կարծես բնությունը սիրել է հրամայում և հրամանին հլու ու հնազանդ բնության զավակները, որոնք քո ստեղծածն են, երկնային տեր, սիրում են միմյանց, աշխարհը լցնում սիրո գեղգեղանքներով և նորոգում, նորացնում և շարունակում ու հավերժացնում են կյանքը։ Ուրեմն, սերը պարտադրվում է կենդանի էակներին և մարդկանց։ Սիրելն աստվածային օրենք է և իրավունք։ Բայց ես ինչո՞ւ եմ

կամավոր կերպով ուզում հրաժարվել սիրուց, ինչո՞ւ... Որպեսզի սերս առ աստված բոլորանվե՞ր լինի, բայց, աստված, ինչո՞ւ իմ ցանկությունը քո օրինաց խախտումը չես համարում։ Ինչո՞ւ ես հանդուրժում, որ քո ստեղծած մարդ արարածը անսեր մնա, մնա չոր գլուխ և մարդկային ամենամեծ մեղքը՝ անսեր մնալը, ամլությունը համարի իր նվիրվածությունն առ աստված։ Այս հարցը պատասխան չունի, լսո՞ւմ ես և դու, տե՛ր։ Ի՞նչ անեմ հիմա, երբ սերն ավելի զորեղ է, քան իմ ուխտը։ Ի՞նչ անեմ։ Թող հեծեծամ, բողոքեմ, լամ ու արտասվեմ, չգիտեմ, իմ սխալի համար, թե՝ քո, երկնավո՛ր։ Օ՜, ներիր իմ լեզվի անկապանք զազրախոսությունը, իմ հիմարությունները, ների՛ր։ Իսկ եթե պատժում ես, ուրեմն, պատժիր առանց աստվածային գթասրտության և մեծահոգության։ Աստվա՜ծ իմ, չգիտեմ ինչ եմ դուրս տալիս։ Սերն ինձ զրկել է բանականությունից և այն հանձնել սրտին։ Փրկի՜ր ինձ, եղիր ճանապարհիս լուսատուն...»։

Սիրտն արդեն չէր ենթարկվում բանականությանը։ Փախչել վանքից, փախչել, բայց ո՞ւր։ Միևնույն է, հարկավոր է գոնե ժամանակավորապես փախչել այստեղից, չտեսնել սև վեղարավորներին, լրտեսներին, թեև նրանցից անհնար է ազատվել, ինչպես սեփական ստվերից, փախչել կասկածներով լի, խորհրդավոր հայացքներից, թշնամական ակնարկներից, փախչել։ Դուրս եկավ վանքից։ Քայլեց դեպի Մանակերտ։ Շենը մոտ էր և դատարկ, շինականները հանդում էին, այգիներում, վարուցանքի, այգիների էտման և այլ աշխատանքներով զբաղված։ Ամաչում էր հոգևորականի սքեմով և վեղարով երևալ գյուղում, հոգևորականի երևալը գյուղում հազվադեպ երևույթ էր և անպայման առիթ կտար զանազան ասեկոսեների։ Քայլում էր դեպի Մանակերտ։ Տաք, արևոտ գարնանային օր էր։ Հանեց սքեմն ու վեղարը և գցեց թևին։ Այդպես ավելի թեթև էր և արևն այնքան էլ չէր կծում։ Հեշտ էր, թոթափեց վանքի սևն իր վրայից։ Քայլում էր՝ իրեն տված գարնան զարթոնքին, թռչունների ծլվլոցին, առուների կարկաչին և հովերի շոյանքին։ Շուրթին երգի բառեր կային.

Եկե՛ք, ժողովուրդ,
Կերեք իմ հացից.
Ըմպեք իմ գինին,
Որպեսզի ապրեք
Հավետ անվախճան։

Զզարմացավ, որ սուլում է։ Շուրթերից պոկվող տաղն, իհարկե, կվերնագրի «Տաղ հարության»։ Այդպես ճիշտ կլինի։ Ինքնամոռաց արարման ոգևորության մեջ, տաղերգուն նույնիսկ չէր նկատում իր հետե-

վից գաղտագողի, քարերին, ծառերին ու թփերին իր քողարկումը վստահած լրտեսին, որ քայլում էր նույնքան անաղմուկ, որքան իր որսին հետապնդող հովազը։ Ամբողջ ճանապարհին Գրիգորը երգում էր ու սուլում։ Կատակ բան չէր, պետք է հանդիպեր Դրախտիկին և ամբողջ ճանապարհին նա լսում էր իր սրտի ձայնը։

Նրանք առանձնացան Դրախտիկենց այգու մի անկյունում, որ ասես հարմարեցված էր սիրային հանդիպումների համար։ Շրջապատն ամբողջովին ծաղկած ծառեր էին, տպավորությունն այնպիսին էր, ասես ծառերն ամբողջովին ծածկված էին տաք ձյունով։ Նստած կանաչին՝ նայում, զննում էին միմյանց, ասես նոր էին տեսել և ծանոթացել։ Մանակերտն առավել մոտ է լճին, և նրա ալիքների ծփանքը հասնում էր սիրահարներին այնպես, ասես իրենց կողքին էր։

— Ես այսօր քեզ սպասում էի,— խոսեց Դրախտիկը։

— Իմ գալու մասին դու գիտեի՞ր...

— Սիրտս վկայում էր,— ասաց Դրախտիկը,— մի տեսակ լարված էի, անվերջ նայում էի քո ճամփին...

— Եվ ես եկա,— Գրիգորը փաթաթվեց աղջկան,— եկա իմ դրախտավայրը...

— Իսկ քո ընկերն ո՞ւր է, ո՞ւր թողիր նրան...

— Ի՞նչ ընկեր, ես մենակ եմ քայլել իմ ճամփան,— չհասկացավ Գրիգորը։

— Լավ, մի՛ խաբի, քո հետևից գալիս էր հոգևորականի համազգեստով մեկը։ Մի տեսակ տարօրինակ էր քայլում։ Ախր, մեր տունը, գիտես, չէ՞, բարձրադիր տեղ է, ամեն բան երևում է։ Իսկ նա քայլում էր քո հետևից և ստեպ-ստեպ կանգ առնում, կռանում, երևում էր ոտքը ցավում էր կամ նման մի բան...

Գրիգորը հասկացավ, տխրեց։ Հետամուտ են քայլերիս, լրտեսում են. «Է՛հ, սատանան իրենց հետ, ինչ լինելու է, թող լինի, թող...»։

— Թողնենք նրան, ով ուզում է, թող լինի, Դրախտիկ, բայց իմացիր, նա ինձ հետ ոչ մի կապ չունի...

— Ճի՛շտ է։ Կարևորն այն է, որ հանդգնել ես վանքից դուրս գալ, անգինս,— աղջիկն ամաչկոտ, վախեցած մի համբույր դրոշմեց տղայի ճակատին, խրախուսելով նրա արարքը և նույն արագությամբ էլ հեռ քաշվեց։

— Փախել եմ,— գրկեց աղջկան Գրիգորը,— փախել եմ, դասալքել...

Եվ որոնեց աղջկա շուրթերը, նրա բարակ մեջքը սեղմեց իրեն։ Աղջիկը շնչասպառ էր, անօգուտ և թույլ ջանքեր գործադրեց ազատվելու

տղայի բազուկներից, գալարեց իր մեջքը, սրսփաց և ապա իր ջահել ծաղկուն մարմինը հնազանդ, հլու ենթարկեց սիրո բռնկումին։ Համբույրը խեղդեց, շնչասպառեց երկուսին էլ։ Գրիգորն արձակեց աղջկա կրծքի կոճակներն ու... լույսը ցայտեց, կուրացնելով սիրահարված տաղերգուին։ Տղան խելագարված համբուրում էր աղջկա շուրթերը, վիզը, կուրծքը։ Եվ ծառերից սպիտակ, մանուշակագույն, թույլ կարմրագույն ծաղկաթերթեր էին թափվում։ Արթնացել էր մի չարաճճի, խանդոտ զեփյուռ և անմեղության սպիտակով զուգում էր սիրահարներին։ Գրիգորը նայում էր սիրով արբած Դրախտիկին. աղջկա աչքերը կիսախուփ էին, մշուշված և բաց էր կուրծքը՝ ձիգ, կուսական ստինքները պսակված թուխ, խելագարեցնող ծնիքներով։ Գրիգորն աչքերով և շուրթերով ըմբշխնում էր Դրախտիկի լուսավոր կուսությունը։ Մոռացված էր ամեն ինչ. երկիր, երկինք, մարդ ու աստված, և չկային մեղավոր մտքեր, և չկային պարտքի և իրավունքի, կարելի ու անկարելի հարցեր, ամեն բան ենթարկվում էր տիեզերական ուժին՝ սիրուն։ Եվ նրանք սիրում էին։ Եվ խոսքեր չկային։ Ամեն բան հալվում էր գգվանքի և համբույրի մեջ։ Բայց զորավոր է նաև աստված։ Հանկարծ մեղքի, ուխտի խախտման և պարտքի հրամայող հարցը շանթեց տղային։ Եվ կատարվեց աննախադեպը. երբ սերն իր իրավունքների տերն է, չի ճանաչում ոչ սահման, ոչ էլ կարելիություններ, Գրիգորը վայելում էր սիրո երանությունը և արդեն անհանգստացնում էր աղջկա փեշերը, երբ հանկարծ սառցի նման պաղ ամպեղեն մի ձեռք ասես նրան հետ հրեց աղջկանից և գարնանային պաղպաջուն օդը լցվեց տիեզերական ձայնով. «Գրիգոր, հիշի՛ր, հիշի՛ր...»։ «Ի՞նչ,— գոռաց տղան,— ի՞նչ...»։ Եվ նորից գրկեց Դրախտիկին։ Նորից ամպեղեն թաթը հետ հրեց նրան. «Իրավունք չունեե՛ս... Իրավունք չունեե՛ս...»։ Նա չէր սխալվում, պարզորոշ լսվում էր ձայնը, և արձագանքը նրա թևում էր շրջապատում։ Գրիգորն արթնացավ։ Աղջիկը պառկած էր կիսախուփ աչքերով, անմեղ ու անամոթ դիրքով, կրծքաբաց, փեշերը բարձրացրած։ Ի՞նչ է կատարվում։ Մի՞թե աստված տեսանելի, շոշափելի իր միջնորդությամբ արգելք դրեց իր սիրուն։ Տղան չդիմացավ, ձեռքերը կարկառեց երկինք և գոռաց երկինքն ի վեր.

— Ի՞նչ ես ուզում, ի՞նչ...— բողոքեց, ընդվզեց։ Ո՞ւմ դեմ, հավատի՞ աստծո, թե սիրո աստծո...

Աղջիկը ևս արթնացավ։ Նստեց և արագ հավաքեց իր լուսեղեն, իր մեղավոր լույսն ու ամփոփեց շորի տակ։ Արևը մայր մտավ։

— Ի՞նչ պատահեց,— խոսեց խուլ ոնգային ձայնով,— ինչո՞ւ գոռացիր...

— Ոչի՛նչ,— պատասխանեց,— աստված մեղք է համարում մեր սերը...

— Ո՞վ քեզ ասաց,— ժպտաց Դրախտիկը,— չլինի՞ թե ինքը...

— Իսկ դու ոչի՞նչ չլսեցիր, այդ ձայնը զնգում էր տիեզերքով մեկ...

— Ես լսեցի քո գոռոցը,— աղջիկը հերթով կոճկում էր կրծքի կոճակները, լույսի վերջին պատառիկներն ամփոփելով շրջազգեստի տակ,— ես միայն քո ձայնն եմ լսել...

— Զարմանալի է,— խոսեց շփոթված տղան,— ես տեսա նույնիսկ մեզ իրարից բաժանող ձեռքը։

Աղջիկը վախեցած նայում էր տղային։ Հայացքը գնալով քննախույզ էր դառնում։ Վերջը չդիմացավ.

— Գրիգոր, սիրելիս, աստծո մասին քիչ մտածիր։ Աստված խանդոտ է, քիչ մտածիր, այլապես կխելագարվես...

— Դու շատ համարձակ ես, Դրախտիկ, դու աստծո մասին այնպես ես արտահայտվում, ասես նա մարդ արարած է, հայրդ է կամ քեռիդ, պետք է զգույշ լինել...

— Իսկ ես չեմ ցանկանում զգուշանալ, Գրիգորիկ, չե՛մ ցանկանում։ Իսկ եթե ուզում ես ճիշտն իմանալ. ես շատ կուզեի, որ նա ինձ համար նույնքան թանկ ու հարազատ լիներ, որքան հայրս ու քեռիս։ Ես քեզ հասկանում եմ, Գրիգոր, բայց դու ինձ չես հասկանում։ Եթե նա աստված է, ուրեմն, պարտավոր է օգնել իմ սիրուն, օգնել, որ ես արժանանամ հարսնության, որ նրա ձեռքը մեզ ոչ թե բաժանի, այլ միացնի, եղա՞վ...

Գրիգորը չէր խոսում։ Նա շփոթված էր, ականջներում տիեզերական ձայնի ծվեններ կային։ Նա հավատացած էր, որ ինքը չի սխալվում, իսկ Դրախտիկն այնպես կասկածանքով էր նայում իրեն, կարծես ինքը խելագար է։ Նա ոչ մի ձայն չի լսել, ոչ մի ձայն։ Ուրեմն, տիրոջ ձայնը միայն իրեն էր ուղղված, իրեն էր զսպում նրա աստվածային ձեռքը. «Ես մեղավո՞ր եմ, մեղավո՞ր եմ, մեղավո՞ր եմ...»։ Նա հառաչեց։

— Գրիգորիկ, հոգիս, մենք աստծուց երկնչելու ոչինչ չունենք, մենք սիրում ենք, իսկ սերն աստծո սահմանածն է։ Դու հիմա կարո՞ղ ես ասել, որ ավելի երանելի օր, քան այսօրն է, երբևէ ապրել ես... Ի՞նչ դու ասում ես, ի՞նչ դու լսել ես, քեզ թվացել է, որովհետև մտքերով միշտ աստծո հետ ես, մի՛շտ... Ահա մի պահ ինձ հետ եղար, և այդ խանդոտ ծերուկը նեղացավ։ Կարծես ես իր սիրած աղջիկն եմ...

— Լռի՛ր, Դրախտիկ, լռիր, դու ինձ վախեցնում ես քո անաստվածությամբ, ինչո՞ւ ես այդքան թշնամացել աստծո հետ...

— Որովհետև նա ցանկանում է քեզ խլել ինձանից, Գրիգորիկ։ Թող չփորձի նա այդ անել, թող չանի...

Գրիգորն արդեն լրիվ վերագտել էր իրեն։ Նա այլևս չէր ցանկանում հարցերով գրգռել Դրախտիկին։ Աղջիկն իր սիրո համար ոչ միայն կարող էր անպատշաճորեն արտահայտվել աստծո հասցեին, այլ առանց այլևայլության կծվատեր նրան, եթե երևութանար աչքին։ Դրախտիկն անաստված չէր, չէ՛, բայց աստծուն հավատալով հանդերձ, նրան չէր վստահում իր սիրո պաշտպանությունը, քանզի աստծո անունը խեղճացնում և երկչոտ էր դարձնում Գրիգորին։ Գրիգորի տատանվելու, սիրուց հանկարծակի նահանջելու մեղքը նա որոնում էր աստծո մեջ։ Սիրահարված կինն, ասում են, աստված չունի։ Նրա աստվածն իր սերն է։ Դրախտիկը հաստատ համոզված էր, որ եթե աստված կամենա, ինքը կլինի Գրիգորինը, իսկ եթե չկամենա... չի՛ լինի։ Եվ զգում էր աստծո անբարյացակամությունն իր սիրո նկատմամբ, զգում էր աղջկական անխարդախ բնազդով՝ Գրիգորի վարքագծի մեջ։ Այդ պահերին նա ատում էր աստծուն, առանց հաշիվ տալու իրեն, առանց տատանվելու դժգոհում էր նրանից, անիծում, նույնիսկ մեղադրում անաստվածության մեջ։ Դրախտիկի այս համարձակությունը վախեցնում էր Գրիգորին։ Չէ՞ որ ինքը հոգևոր աշխարհից է, պատասխանատու աստծո դեմ եղած ոտնձգությունների համար։ Գրիգորը դեռևս չէր որոշել իր սիրո ապագայի հարցը։ Երկու սրբությունների միջև՝ աստծո և սիրո, այրվում էր, անկարող վերջնական եզրահանգման։ Երբ Դրախտիկը լինում էր գրկում, բոլոր անկարելիությունները չքանում էին, և նրա աստվածությունը ամփոփվում էր սիրո մեջ։ Իսկ աստծո տաճարում, ուր հեշտին ձևով է նժարի վրա դրվում մեղքն ու մեղավորությունը, հիշեցվում է իր ուխտի, երդման ոչ վճռականությունը, Գրիգորն այդ պահերին սարսափում է ահեղ դատաստանից և մարտնչելով ինքն իր հետ, աշխատում մարել, հաղթահարել սիրո կարոտը։

Այսօր Գրիգորն այնքան էր արբած իր սիրով, աղջկա բոցեղեն հրապույրներով, որ նույնիսկ աստծո թվացյալ միջամտությունն անզոր էր թոթափել տալու, մարելու արյան կրակե խաղը։

— Չես խոսում, Գրիգոր,— վերջապես խոսելու փորձ փորձեց Դրախտիկը։

— Լսում եմ սիրտդ...— ասաց տղան։

— Ի՞նչ է ասում սիրտս, Գրիգոր,— ժպտաց աղջիկը։

— Ասում է՝ աստվածությունները միայն երկնքում չեն, երկրում հայտնագործվել է նոր աստվածուհի՝ Դրախտիկը։

— Շնորհակալ եմ, Գրիգոր,— ժպտաց աղջիկը, հավաքելով քանդ-

ված ծանր ծամը, կարգի բերելով իրեն,— չվախեցար և ինձ աստվածուհի կոչեցիր...

— Քեզ աստվածուհի կոչելուս համար շնորհակալ կլինի նաև ինքը՝ երկնային տերը, Դրախտիկ, իսկ անվախությունը քեզնից եմ ուսանել, անգինս։ Մեզ հիմա հարկավոր է լրջորեն քննել մեր վիճակը։ Մենք արդեն հասուն մարդիկ ենք, պահ է ամուսնության։ Ի՞նչ ենք անելու, ի՞նչ է ասում աստված, ի՞նչ է ասում մեր ճգնակենցաղ միաբանությունը։ Ի՞նչ են ասում քո ծնողները, Դրախտիկ, ի՞նչ է լինելու մեր սիրո վերջը։

— Եթե սեր կա, Գրիգորիկ, ապա վերջի մասին խոսք լինել չի կարող։ Մի՛ թուլանա, իմ ջահել իմաստունս, սերը պահանջում է զոհողություն։ Ինչո՞ւ ես կարծում, թե աստծուն չի կարելի երբևէ բարկացնել, իսկ սիրած կնոջը դավելով, կարելի է ողջ-ողջ թաղել։ Քո վիճակն այնպիսին է, Գրիգորիկ, որ ինչ էլ որ անես, մի կողմին պետք է դավես, դավաճանես։ Աստծուն և միաբանությանը թող, նրանք դեմ են մեր սիրուն...

— Իսկ քո ծնողնե՞րը...

— Նրանք էլ են դեմ մեր սիրուն, քանզի չեն հավատում մեր ամուսնությանը։ Սկզբում նույնիսկ խանդավառ էին և չէին թաքցնում իրենց ուրախությունը մեր միության հեռանկարից, իսկ երբ իմացան, որ մեր սերը հեռանկար չունի, նրանք արգելեցին մեր տեսակցությունները, հանդիպումները։ «Տես, հա՛,— ասաց հայրս,— մազերդ կկտրեմ, եթե տեսնեմ քեզ Գրիգորի հետ։ Անվանդ տեր կանգնիր, նա պատրաստվում է ճգնավորի քուրձ հագնելու և նրան ամուսնական անկողին քարշ տալ անհնար է...»։ Ահա հորս կարծիքը։ Այստեղ այլ կարծիքի եմ միայն ես, Գրիգոր։ Մենք կամուսնանանք, մենք առանց մեկմեկու ապրել չենք կարող։ Ճի՞շտ է։ Մենք կամուսնանանք և կփախչենք այստեղից, մարդկանցից...

— Մարդկանցից կփախչենք, իսկ աստծուց ո՞ւր պիտի փախչենք, Դրախտիկ...

— Ձայնիդ մեջ նահանջի երանգներ կան, Գրիգոր։ Մի՛ երկնչիր, որ հաղթի մեր սերը։ Ես ամեն բանի պատրաստ եմ, ես առանց քեզ ապրել չեմ կարող, որոշի՛ր...

— Ես էլ առանց քեզ ապրել չեմ կարող, Դրախտիկ, չեմ կարող։ Բայց աշխարհին ու աստծուն իմ տալիք պարտքերը շատ-շատ են, փախչելը սիրո փրկություն է գուցե, բայց կյանքի և գործի փրկություն չէ... Պետք է մտածել...

— Մտածելու ժամանակը քիչ է, Գրիգորիկ, հայրս արդեն ինձ համար փեսացու գտնելու հոգսի մեջ է, իսկ դու ասում ես՝ մտածենք... Նույնիսկ գտել է հարմար փեսացու, մորս հետ փսփսում էին, լսեցի, ասում

էր՝ ինչո՞վ է պակաս Գրիգորից, ջահել, կրթյալ, սիրուն... Ափսոս, անունը չլսեցի...

— Քեզ ոչ ոքի չեմ տա,— հանկարծ բռնկվեց տաղերգուն,— ոչ ոքի, նույնիսկ իրեն՝ աստծուն։ Դու իմն ես, ինչպես իմն են իմ մտորումները, իմ տաղերը, իմ երազները, քեզ ոչ ոքի չե՛մ տա...

Եվ աղջկան սեղմեց կրծքին, համբուրեց, գրկեց, խեղդեց, շնչասպառ արեց։ Արդեն չգիտեր իր արածը։ Սերը և խանդը միավորվել էին՝ դարձել անհաղթահարելի, դարձել կատաղի, հարձակողական։

— Ես կխեղդեմ քո նորընծա փեսացուին, Դրախտիկ, քեզ ուրիշի գրկում տեսնել չեմ կարող...

— Թո՛ղ, ախր, ինձ ես խեղդում,— գանգատվեց, բողոքեց աղջիկը,— ախր, ցավեցնում ես, թո՛ղ...

— Չեմ թողնի, ես քեզ թողնել չեմ կարող, ես կմեռնեմ առանց քեզ։

Թփերը շարժվեցին։ Մի զույգ աչքեր չարությամբ դիտում էին այս բուռն գրկախառնությունը։

«Շնանում է...»— և կամաց հեռացավ։ Իսկ Գրիգորը շարունակում էր իրենը։ Աղջիկը գալարվում էր, ջանք էր անում ազատվելու, տեսավ անօգուտ է, ինքն էլ որոնեց, գտավ տղայի շուրթերը, հանդարտվեց հնազանդ։ Իսկ երբ աղջկա թևերը քանդվեցին, և Դրախտիկը ետ մղեց նրան, տղան կիսամտածկոտ արտասանեց.

— Աստվածացա՛... Բայց... աստված պարտվեց...

***

Վանքի ծառայապետը մտավ Գրիգորի խուցը։ Նորություն էր։ Ծառայապետը երբեք չէր երևացել նրա կողմերում։ Գրիգորն այդ պահին ստեղծագործում էր և ծառայապետի մտնելը չլսեց։ Զորշորուկ, ջրոտ աչքերով և զարմանալի շարժուն ադամախնձորով այդ մարդն ուշադիր նայելիս նմանվում էր ուրկանից նոր հանված ձկան։ Միշտ ինչ-որ բանի վրա զարմացած աչքեր ուներ։ Նրան միաբանության կրթարանի աշակերտները սիրում էին հեզ, մաքուր բնավորության և գթասրտության համար։ Սակայն այդ սիրո մեջ որոշակի դեր ուներ նաև հեգնանքը։ Նրան ձեռ էին առնում, ծանակում արտաքինի և հեզության համար, իսկ նա չէր նեղանում, միայն ավելի էին զարմանում նրա աչքերը։

— Ուսուցչապետի և վանահոր մոտ...

Գրիգորը դադարեց աշխատելուց։ Ժպտաց։ Բարձրացավ տեղից.

— Դո՞ւ ես, ծառայապետ Համբարձում։ Այս պահը տարաժամ է նրան այցելելու...

— Ինքը հրամայեց, Գրիգո՛ր...

Անանիա ուսուցչապետը մռայլ էր։ Աչքերը, որ ծերությունից արդեն տկար էին, սպիտակաբարդ ունքերի տակից նայում էին խստությամբ և նույնիսկ չարությամբ։ Նա չգիտես ինչու բավական երկար զննում էր Գրիգորին, որը հազիվ էր դիմանում այդ թափանցող հայացքի սառնությանը։ Գրիգորը նկատեց նրա դողդողացող ձեռքի մեջ ոլործուն մագաղաթը։ Կարծես հասկացավ, թե քամին որ կողմից է փչում, և ձեռքերը կրծքին խոնարհ սպասեց։

— Միաբանությանս ամենատաղանդավորն ես և ամենաանկարգը։ Ամենաաստվածասերը և եկեղեցատյացը։ Ամենալավ քարոզիչը և ամենամեղսական գործիչը։ Ո՞վ ես դու, աստծո հե՞տ ես, թե նրա դեմ։ Այս ինչե՞ր են լսում ունկերս և ինչե՞ր են կարդում աչքերս։ Անձևաց Խոսրով եպիսկոպոսի որդին, իմ բարեկամն աղտոտում է միաբանության բարի անունը։ Ի՞նչ է պատահել քեզ, որդյա՛կ, լեզու գտար սատանաների, դևերի հե՞տ, թե՞ հոգիդ անմաքուր էր և միայն նոր է ի հայտ բերում իր իսկական դեմքն ու բնավորությունը... Նախ, ասա ինձ, մենք, որ ընդառաջեցինք քեզ և ուղարկեցինք շրջելու ի Հայս և Անի, արդյոք հանձնարարեցի՞նք գնալ Սյունյաց աշխարհն ու Ավելաղաշտի ճակատամարտում գթասրտություն ցուցադրել ի պաշտպանություն հեթանոսների և հերձվածողների և ծանր վիրավորանք հասցնել Սյունյաց աշխարհի հոգևոր առաջնորդին, ասա՛, պատասխան տուր, մենք նման հանձնարարություն տվե՞լ էինք քեզ...

— Ոչ, հայր սուրբ...

— Իսկ ի՞նչ գործ ունեիր այնտեղ...

— Հայոց աշխարհը եռում է երկու ծանր, իրարամերժ վարդապետությունների միջև։ Տերությունս թուլանում, անճարակ է դառնում թշնամյաց արշավանքների առջև, ազգային երկպառակության, խայտառակ հայաջարդ կռիվների պատճառով։ Եվ ես՝ գրագետ զավակս երկրի և եկեղեցու, չէի կարող օտարի նման անտարբեր լսել ու ականջել եղ-բայրասպան ջարդերին։ Ինքս որոշեցի գնալ և սեփական աչքերով տեսնել այդ ամենը...

— Եվ վիրավորել Սյունյաց հոգևոր առաջնորդին՝ խստասրտության մեջ, այո՞...

— Այո՛, ուսուցչապետ, երբ աշխարհիկ իշխանություններն են այդ անում, իհարկե, քստմնելի է, բայց զարմանալի չէ, իսկ երբ հոգևոր գործիչներն են հրով ու սրով ընկնում շինական ժողովրդի մեջ և նախճիրներ կատարում, գա արդեն աստվածահաճո չէ, այլ...

— Սպասի՛ր, սպասի՛ր,— թնդաց Անանիան,— եկեղեցին պաշտպանում է իր աստծուն և իր եկեղեցին։ Թոնդրակյաններն ավերում են մեր վանքերն ու եկեղեցիները, կախում և գլխատում աստծո սպասավորներին, խելոք տաղերգու, քո գթասրտությունը ի՞նչ է բարբառում՝ զրկել հոգևոր հովիվներին ինքնապաշտպանության իրավունքի՞ց։ Թոնդրակյանի արյունոտ աջը համբուրել և դնել ճակատին, այո՞...

— Մենք մոռանում ենք, ուսուցչապետ, Քրիստոսի պատվիրանը՝ ապտակել են քո երեսին, իսկ դու շրջիր մյուսը, դա ոչ թե հաշտվողական կոչ է, այլ գթասրտության կոչող պատվիրան...

— Տերն այդ ասել է ոչ նման դեպքի առիթով, Գրիգոր։ Այժմ վիճակը հայ աշխարհիս նախանձելի չէ, թոնդրակյանները վանքերն ու եկեղեցիները քանդում են, զրկում ժողովրդին հավատից, երկիրը չի կարող շինականների ձեռքով և խղճով կառավարվել, այստեղ պատժի միջոցները ևս պետք է լինեն խստագույն, որ հայ աշխարհը խառնակության զոհ չդառնա...

— Դու ճիշտ ես, ուսուցչապետ, երիցս ճշմարիտ, բայց խստագույն պատիժները պետք է կատարվեն ոչ հոգևոր հովիվների ձեռքով...

— Ի՞նչ տարբերություն, թե հարկադրական խստությունն ում ձեռքով է կատարվում, Գրիգոր...

— Ուրեմն, հոգևորականի և զորականի միջև ոչ մի տարբերություն չկա՞...

— Ինչո՞ւ դու այդ հարցը չտվիր քո ուսուցչին, երբ Ավարայրի ճակատամարտում հոգևորական Ղևոնդ երեցը մի ձեռքին խաչ, մյուսին սուր՝ Վարդանանց կոչում էր ի մարտ և ինքն էլ ոթում պարսիկների արյունը... Ինչո՞ւ...

— Դա մեծ պատերազմ էր, ուսուցչապետ, որը պետք է որոշեր հայության լինել-չլինելու շատ կնճռոտ և արյունոտ հարցը։ Թշնամին ցանկանում էր մեր լեզուն, մեր հավատը և սրանցով ապրող մեր կենդանի ոգին... Ուրի՞շ է Վարդանանց պատերազմի նշանակությունը...

— Ճիշտ ես, Գրիգոր, եթե քիչ ավելի փորձված ու կոփված լիներիր, այսօր կասեիր, որ մեր հավատի, ինչքի պաշտպանության հարցում թոնդրակյաններն առավել վտանգավոր են, առավել...

— Ո՛չ, հազար անգամ ոչ, թոնդրակյանի կռիվը մի փոր հացի համար է, որից նրան ցանկանում են զրկել աստծո կուշտ սպասավորները։ Իսկ հավատի, լեզվի, ոգու տեղամասերին թոնդրակյանները չեն դիպչում, ուսուցչապետ... Նրանք հավատի հարցն էլ կապում են որոշ ծեսերի հետ, որ ցանկանում են փոփոխել կամ լուծել...

— Նրանք մերժում են Քրիստոսի աստված լինելը։ Նրանք լուծարքի են ենթարկում բոլոր աստվածային հաստատությունները՝ վանքերն ու

եկեղեցիները, ողջ հոգևորականությանը, ո՞ր մեկը թվեմ, սա աղետ է ազգիս գլխին, Գրիգո՛ր, աղետ...

— Նրանք միայն հավատի ձևն են ցանկանում փոխել, միայն հավատի, պաշտամունքի ծեսերը, այլ ոչ թե հավատը...

— Հավատը թելադրվում է պաշտվողի կողմից, հայ եկեղեցու բոլոր ծեսերը ծնունդ են սուրբ Գրիգոր Լուսավորչի, որը հայ եկեղեցին կանգնեցրեց աշխարհի եկեղեցիների առաջին շարքում և աստված պատեհ առիթ ստեղծեց նրան իր հետ հաղորդակցվելու։ Հիմա ի՞նչն է ստիպում, որ մենք քանդենք հայ եկեղեցու հիմքը, ի՞նչը...

— Ես արդեն ասացի, ուսուցչապետ, մի փոր հացը, շինականի ծանր վիճակը, իշխանական և աշխարհիկ հարկերի հետ հոգևոր հարկերի գումարվելը շինականին հանեցին եկեղեցու դեմ...

— Ես չգիտեմ ամբողջովին, թե մասամբ, բայց թոնդրակյան ես դու։ Բայց ո՞վ է եղել քո ուսուցիչը...

— Դու, ուսուցչապե՛տ, դու ես իմ միակ ուսուցիչը, դու սովորեցրել ես ինձ մտածել, որոնել ճշմարտության ճանապարհը...

— Ուրեմն, ես իմ ձեռքով թոնդրակյան եմ դարձրել իմ սանին, ահա աշխատանքիս, տքնանքիս արդյունքը։— Հառաչեց հայր Անանիան։— Մեջդ անհնազանդի, չենթարկվողի, ըմբոստի արյուն կա, Գրիգոր, դու խելոք ես, քեզ հետ վիճելն արդեն հեշտ չէ, դու մտածիր քո վաղվա մասին, որ քո ճանապարհին արգելքներ չդնեն այն մարդիկ, որոնց դու շինականների կեղեքիչը և մի փոքր հացից զրկողն ես համարում։ Իսկ հինգ ամա ծանոթացիր Սյունիքի հոգևոր առաջնորդի նամակին,— և մագաղաթը դրեց Գրիգորի առջև։

Նամակի բովանդակությունը Գրիգորին վաղուց էր ծանոթ, գիտեր, որ թեթևակի գրվում է և պետք է ուղարկվի Նարեկի միաբանությանը։ Նա թեթևակի աչքի անցկացրեց նամակը և դրեց ուսուցչապետի առջև։ Սա քննախույզ նայում էր իր սանին և շատ զարմացավ, երբ սանի դեմքն անգամ չշարժվեց։ Գրիգորի հայացքն անթափանց էր, անշարժ, ուսուցչապետին թվաց, թե նրա դեմքին կարդում է աննկատելի, հանդուգն մի ժպիտ և որոնում էր այդ հանգստության պատճառը։ Գրիգորը նամակը մեկնեց ուսուցչին.

— Ոչինչ չունե՞ս ասելու, Գրիգոր...

— Ես այդ նամակի մասին գիտեմ դեռևս Ավելադաշտից։ Սրբազանը խոստացավ, որ կգրի նամակ Նարեկի ճգնակենցաղ միաբանությանը և խոստացավ, որ կարդա նամակը։ Հա՛, ի դեպ այդ ցնդած ծերուկը իր տաքուկ վրանում կատարում, նմանակում է Ղևոնդ երեցի դերը, մի ձեռքին խաչ, իսկ մյուսին՝ սուր, և թրատում էր իր վրանի փափուկ օթոցները՝ վայրենի ազազակներով սիրտ տալով իրեն։ Բայց անգութ էր...

— Այդ ցնդած ծերուկն առաջարկում է քեզ հանձնել միաբանության դատին, նույնիսկ պատժաչափ է առաջարկում՝ բանադրել։ Ի՞նչ ես կարծում, Գրիգոր...

— Կատարիր նրա առաջարկությունը, մանավանդ, որ նա ինձ մեղադրում է թոնդրակյանների նկատմամբ գթասրտություն հանդես բերելու մեջ։ Պատժիր, ուսուցչապետ, մանավանդ, որ գթասրտությունն անքավելի հանցանք է։ Պատժիր, այլապես թոնդրակյանին պաշտպանելը լրջորեն կհարվածի քո հեղինակությանը։

— Դու այդ հեգնո՞ւմ ես, թե լրջորեն ես խոսում։ Քեզ բանադրելը նույնն է, թե ինձ բանադրեն։ Ես այդ վշտին ու վիրավորանքին չեմ դիմանա։ Ես պատասխանատու եմ քո բախտի և ճակատագրի համար, Գրիգոր, ոչ միաբանության, այլ աստծո առջև։ Դու աստվածածին ես, ազգիս լուսատուներից մեկն ես դառնալու։ Քո գոյությունն ինքնին արդարացնում և փառքի լուսապսակով է զարդարում իմ տասնամյակների տքնանքը։

— Շնորհակալ եմ, ուսուցչապետ, սակայն պատժիր ինձ, այլապես կպատժեն քեզ՝ թոնդրակյանին և ուրիշ մեղքեր ունեցող քո սանին հովանավորելու և նրա աստվածընդդեմ մեղքերը կոծկելու համար։

— Ուրիշ մեղքեր ասելով ի՞նչ ես ակնարկում, գուցե քո սիրային արկածները Մանակերտում, հը՞...

— Ուրեմն, ա՞յդ էլ է հայտնի վանքին...

— Լսի՛ր, Գրիգոր, ես վաղուց էի ցանկանում քեզ զգուշացնել, իմացիր, ականջիդ օղ արա. միաբանությունը, կրթարանը լցված են լրտեսներով։ Դու ամբաստանվում ես ամեն օր։ Եթե ընթացք տրվի ամբաստանագրերին, քեզ կրանադրեն խստագույնս՝ կխարանեն, կգոցեն քո ճանապարհը և հերձվածողի, անաստվածի պիտակներով դուրս կմղեն քեզ վանքից ու կյանքից։ Իսկ ես կասեմ հետևյալը. վերջ սիրային հանդիպումներին, աշխարհիկ վայելքները քեզ համար չեն, դու աստծո որդին ես և նրա երդվյալ հավատարիմը, իսկ աստված թերացումներ, մեղքեր չի հանդուրժում։ Դու ուխտի անդամ ես և յուրաքանչյուր շեղում համարվելու է ոտնձգություն բարձրյալի դեմ։ Կարծում եմ պարկեշտությունը և աստվածասիրությունն ի վիճակի են հաղթահարելու սատանաների ձեռքին շարշարվող քո հոգու ազատագրումը ախտերից և կանգնելու ճշմարիտ հավատի անխոտոր ճանապարհին։ Դու ի՞նչ կասես այդ մասին...

— Ես ասելիք չունեմ, ուսուցչապետ, հոգիս երկփեղկված է, տանջամահ է լինում երկու սրբությունների միջև։ Պաշտում եմ աստծուն, որպես տիեզերական կատարելություն, սակայն սիրում եմ Դրախտիկին, որքան կռիվ եմ անում հոգուս հետ, որքան ներհակ են միտք ու սիրտ,

սիրտս այնքան սանձազերծ է դառնում և չի ենթարկվում ոչ ոքի։ Նրա ըմբոստացումը, ուսուցիչ, ախր ուխտի դեմ է, օգնիր, օգնիր դուրս գամ հոգեկան ճգնաժամից...

— Իմ օգնությունն այնքան կարևոր չէ, որքան քո կամքը։ Որոշիր հրաժարվել քո սիրուց և կամքիդ ուժով կատարիր որոշումդ, այլապես տերը չի ների քո դավաճանությունը քո իսկ ուխտին...

— Ես այլևս իմ կամքի տերը չեմ, ուսուցչապետ, ես սիրում եմ այդ աղջկան և ինձ թվում է, որ նրան կշարունակեմ սիրել նաև գերեզմանում...

— Չե՞ս վախենում տիրոջ խստությունից, դու աններելի հանցանք ես կատարում...

— Երբ ես Դրախտիկի հետ եմ, ուսուցչապետ, ինձ այնքան հզոր եմ զգում, այդ պահերին ես աստված եմ, տերն այս երկրի ու երկնքի, սերն ամենամեծ զգացմունքն է աշխարհիս, և ես այդ զգացմունքի կրողը...

— Այս ի՞նչ է լսում ունկս, խլանայի, ավելի լավ չէ՞, կուրանայի, չտեսնեի քեզ այդքան տկարացած, այդ ինչե՞ր ես բարբառում, Գրիգոր, դու հասկանո՞ւմ ես ասածներիդ իմաստը. դու վիրավորեցիր նույնիսկ տիրոջը քո անբարո, թափթփված վարքի պահին, դու աստվածանո՞ւմ ես, դու ինչե՞ր ես դուրս տալիս, ախր դա աններելի հանցանք է...

— Եթե սիրելը հանցանք է, ուրեմն ես հանցագործ եմ, ուրիշ էլ ինչ մեղքեր կբարդես վրաս, ուսուցչապետ...

— Սերն ընդհանրապես հանցանք չէ, Գրիգոր, բայց ճգնակենցաղ ուխտյալ միաբանության անդամի համար աններելի հանցանք է...

— Լսիր և հասկացիր ինձ, ուսուցչապետ, հոգեբան եղիր, խնդրում եմ։ Վաղն ինձ կասեն հրաժարվիր քո սիրուց կամ ճգնակենցաղ քո կյանքից։ Ընտրություն կատարիր։ Աստծո բարկությունից երկնչելով հանդերձ, գիտես ես ինչից կհրաժարվեմ՝ իմ ճգնակենցաղ կյանքից. ահա ճշմարտությունը...

— Դու ուրիշ ճանապարհով ես քայլում, Գրիգոր, կործանարար է քո ճանապարհը՝ հոսանքին հակառակ։ Եվ իմացիր, քեզ երբևէ չեն հարցնելու, թե ինքդ ընտրություն կատարիր՝ սերը կամ վանքը։ Ուղղակի կասեն դավաճան ես, խախտել ես աստծուն տված քո ուխտը, պատասխան տուր։ Եվ դու պատասխան չես ունենա և կբանադրվես...

— Հանուն սիրո ես պատրաստ եմ դրան էլ...

— Ուրեմն, դու խելագար ես, Գրիգո՛ր... Ուրիշ ոչինչ...

— Այո՛, սերն այնպիսի խելագարություն է, ինչպես գարնանային զարթոնքը, ինչպես ելման շրերի խելագար և կենարար ընթացքը, ինչպես արևի ջերմ, պտղաբերող խելագարությունը... Համարիր ինձ խելագար, բայց լավ է իմ հիվանդությունը ախտորոշել սիրահար ածականով...

— Ի՞նչ անել քեզ հետ, Գրիգոր, դու քո ճանապարհին ինքդ ես գցում անհաղթահարելի քարեր, ինքդ ես պատնեշում քո իսկ ճանապարհը։ Անում ես քո ձեռքով, ուրեմն, քաշիր քո հոգով։ Ես՝ Նարեկավանքի ճգնակենցաղ միաբանության վանահայրս և կրթարանի ուսուցչապետս, ասում եմ՝ Գրիգոր, այլևս անկարող եմ լսել քո իմաստակությունները ու աստվածասպան դատողությունները և քո վարք ու բարքի հարցը կդնեմ հոգևոր խորհրդի դատին, ուրիշ ելք չկա։ Այստեղ արդեն անզորանում են և ազգակցական կապի, և քո մեծ տաղանդի հարցերը։ Ես աստծո առաջ չեմ կարող խախտել ոչ իմ ուխտը, ոչ էլ իմ կոչումը, աստծուց թաքցնելու ոչինչ չունեմ... Եվ քեզ տալիս եմ խորհելու, ուշքի գալու մեկ-երկու ամիս ժամանակ, նման առավելություն ոչ ոքի չի տրվել, իմացի՛ր...

— Շնորհակալ եմ, ուսուցչապետ, իսկ ես հետայսու ի՞նչ եմ անելու...

— Շարունակիր քո գործը, Գրիգոր, բայց ամենից շատ աղոթիր, մխիթարություն և սփոփանք որոնիր աղոթքների մեջ։ Աղոթիր, հոգիդ հաշտեցրու աստծո հետ, հրաժարվիր քո մեղքերից։ Աստված գթասիրտ է՝ կհասկանա և կների...

***

Երկար թափառեց մենաստանի տարածքում։ Հոգում աղմուկ էր, տակնուվրայություն, չգիտեր անելիքը, ի՞նչ է լինելու այսուհետև, շարունակելո՞ւ է իր աշխատանքը վանքում, պիտի շարունակի՞ արարել տաղերը, հետո մեծ գիրք է գրելու... Հոգում, մտքի մեջ, ինչպես ցորենի հատիկը ծլարձակում էր հոգու ցավերից, ինքնաբզկտումից, ծանր տվայտանքներից սերվող մի մեծ հառաչանք, մի անմեկին բողոք առ աստված, մի անբալասանելի, անբուժելի ողբերգություն, որի ծննդի հեռավոր արձագանքները կրում էր տաղերգուն, զգում էր հզոր հյուսվածքի սաղմի զարգացումը, բայց դեռ չէր կարողանում ըմբռնել, չէր կարողանում պատնեշել, ձև տալ տակավին լինելությունը սկզբնավորող արարմանը։ «Աշխարհը կարիք ունի մաքրության, պետք է մարդկության ծանր մեղքերը լվանալ, մաքրել, ինչպես ավազից ու հողից մաքրում, զատում են ոսկին։ Մարդը պետք է բարձրանա մեղքերի, հանցանքների ճահճից։ Պետք է մոտենա իր արարողի կատարելությանը, դառնա աստծո իսկական նմանակը՝ գեղեցիկ հոգով ու մարմնով։ Այլապես, գնալով մարդ-

կությունը խրվում է մեղքերի, հանցանքների անելանելի ճահիճը, որում այս գեղեցիկ աշխարհը վերածվում է գարշահոտ մի ճահճի, ուր մարդկային ոճրագործություններից, աղտեղություններից գերսնունդ են ստանում զեռունները, սողունները, խավարասերները։ Փրկիր մարդկությունը, փրկիր աշխարհս ի չարեն, քանզի քեզանից բացի այդ ոչ ոք չի կարող անել...»։ Գնում էր դեպի կանաչին տվող սարերը։ Մի աղբյուրի մոտ շոքեց ջուր խմելու։ Սառն էր, դիպավ ատամներին՝ ցավեցրեց։ Հատակը պարզ ավազ էր. ոչ միջատ, ոչ ճիճու, ոչ որդ։ «Աղբյուրն ուժ ու հնարք ունի ինքնամաքրման։ Սառնությունը փախցնում է տաքության սիրահարներին, իսկ կարկաչուն ալիքները չեն թողնում որդերին կեղտոտելու աղբյուրի մաքուր հատակը... Մինչդեռ մեր կյանքում աղբը բարգավաճելու խիստ պարարտ հող ունի»։ Ստվերը, որ ծածկեց աղբյուրն արևից, ստիպեց Գրիգորին գլուխը բարձրացնել։ Բնավ չզարմացավ, երբ տեսավ, որ արևի լույսը գոցել է Կունծիկ աբեղան։ Բարձրացավ, կանգնեց, Կունծիկը հետ-հետ գնաց, Գրիգորի տեսքը երևի սպառնալից էր, որովհետև աբեղայի հայացքում վախ, նույնիսկ սարսափ նկատեց։ Հետո տեսավ, որ իր ձեռքերը բռունցք են դարձել։ Ինքն իրեն հրամայեց՝ հանգիստ։

— Լսի՛ր, Կունծիկ աբեղա, դու լավ գիտես աշխարհի գործերը, կարո՞ղ ես ասել, թե ինչու անմաքուր մարդիկ վախկոտ են լինում...

— Ես ի՞նչ իմանամ, հարցրու կեղտոտ, անմաքուր մարդկանց...

— Ես հենց այդ եմ անում, գուցե դու մաքուր, անբի՞ծ մարդ ես, Կունծիկ աբեղա...

— Ուրեմն, ե՞ս եմ այդ անմաքուրը...

— Դու ես, Կունծիկ, դու ես նաև վախկոտը, իմ հետևից ման ես գալիս ստվերի պես, միշտ ոտքերիս տակ, միշտ կռացած, միշտ թաքնվելով, քանզի ստոր զրպարտիչ ես, լրտես, ճիշտ չե՞մ ասում...

Կունծիկը մանր աչքերը հածում էր չորսդին, մարդ չկար։ Այդ ավելի էր վախեցնում։ Հայհոյել կամ վիճել իրոք վախենում էր, Գրիգորի խոշոր, սև աչքերում ատելություն կար, երևում էր չի կարող իրեն ենթարկել շարժումները։ Ձեռքերը քանդվում ու բռունցքվում էին, բացվում ու բռունցքվում էին, Կունծիկը լավ էր հասկանում, որ այդ ծանր բռունցքի հարվածը ինչ-որ բան կարող է փոփոխել, աղավաղել իր դեմքի վրա։ «Առանց այն էլ վիզս ծուռ է...»։

— Ես քո լավն եմ ցանկանում, Գրիգոր, դու չես հասկանում...

— Դո՞ւ... Եթե լրտեսելը, ամբաստանելը քո լավություններն են, ապա խոնարհաբար խնդրում եմ ինձ վատություն անես, գուցե ազատվեմ քո լրտեսումներից...

— Դու որտեղի՞ց գիտես, որ լրտեսում եմ, որտեղի՞ց...

— Այնքան անամոթ ես դու, որ չես երկնչում լրտեսել նույնիսկ սիրային հանդիպումները...

— Բռնվեցիր,— ուրախացավ Կունծիկ աբեղան,— ես աստծո սպասավորն եմ և նրա հեղինակության պահապանը։ Ժողովուրդն ասում է՝ սելը ճռռալու տեղ, սելվորն է ճռռում։ Դու՝ ճգնակենցաղ միաբանության անդամդ, որ ուխտել ես նվիրվել միայն աստծուն, սիրային հանդիպումների ես գնում մինչև Մանակերտ գյուղը։ Իսկ ես՝ աստծո ծառաս, չեմ ցանկանում, որ մեր միաբանության մեջ լինեն այնպիսիները, որոնք արատավորեն մեր բարի անունը և արժանանան աստծո բարկությանը...

— Ուրեմն, լրտեսությունը չի արատավորում մեր միաբանության բարի անունը, իսկ սիրային հանդիպումները արատավորում են, այդպես է, զրպարտությունը չի արատավորում, իսկ սիրող մարդն արատավորում է։ Կաշառք վերցնելը, անամոթ սրիկա, չի արատավորում մեր միաբանությանը, իսկ սիրելը արատավորում է։ Դու պատասխան պիտի տաս այն կաշառքի համար, որ վերցրել ես Դրախտիկի հորից, որպեսզի նրա աղջկա անունը մատնությամբ չկեղտոտվի և, մանավանդ, չընկնի վանքի ականջը։ Վերցրել ես ոսկե թևնոցը և, այնուամենայնիվ, գնացել սրբազան Անանիային մատնել մեր հանդիպումն իր բոլոր մանրամասներով... Դու մա՞րդ ես, արի՛, ցանկանում եմ նայել աչքերիդ, մի՞թե դրանք մարդկային աչքեր են, մի՞թե հոգիդ մարդկային է, լեզուդ մարդու լեզու է, վայրահաչելուց բացի մի բարի բանի մասին կարող է խոսել, թե՞ ստեղծված է հաչելու համար, սրիկա՛...

— Ես իմ պարտքն եմ կատարում մեր տիրոջ առջև...

— Դու մեր տիրոջը առավել մարդկային ծառայություններ չե՞ս կարող կատարել։ Լրտեսելով, ամբաստանելով, կաշառակերությամբ տիրոջը ծառայելը խաբեություն է, անբարոյականություն։ Տերն այդ ծառայությունների համար վարձահատույց կլինի՝ քեզ գեհենի ամենադժվար պարունակում տեղավորելով։ Գնա, Կունծիկ, չքվի՛ր աչքիցս, մի կեղտոտիր այս գարնան գեղեցկությունը։ Հա՛, չմոռանամ զգուշացնել՝ հանգիստ թող պատանի Հակոբիկին, աշխատիր հեռու մնալ նրանից, թե չէ, վկա է աստված, այնպիսի բաղնիք կսարքեմ քո գլխին, որ մինչև մահ չես մոռանա...

Գրիգորը սփրթնել, դողում էր ամբողջ մարմնով, նա ուղղակի խոյացավ Կունծիկի վրա, կկոփահարեր, եթե վերջինս չփախչեր։ Վազում էր անառնական ոռնոցով դարավանդից ներքև։ Վազում էր նապաստակի նման և նապաստակի արագությամբ։ Նրա հետևից ակնդետ Գրիգորը զառը ծիծաղեց։ «Ահա թե քո կյանքը, քո անունը, քո հեղինակությունը ում ձեռքն են տվել։ Նա լրտեսում է, մատնում, ամբաստանում և ոչ ոք

չի ասում. «Կանգնիր, քեզ ո՞վ է իրավունք տվել անվանարկելու առաքինի մարդկանց։ Քեզ ո՞վ է իրավունք տվել ապրելու այս աստվածային, գեղեցիկ աշխարհում և տգեղացնել, գեշացնել, աղտոտել աշխարհի գեղեցկությունը։ Քեզ ո՞վ է իրավունք տվել դժոխքի վերածել աշխարհը նրա համար, որ քո մեջ նախանձն ու պաշտոնամոլությունը ավելի զորեղ են, քան մարդկային առաքինությունը։ Ձեն ասում։ Դու պետքական մարդ ես, քանզի վտանգավոր ես։ Դու ստախոս ես և ամբաստանող, և մարդիկ աշխատում են հեռու մնալ քեզանից, որ աստծո հետ իրենց հարաբերությունները չվնասվեն։ Քեզնից պետք է փախչել, ինչպես բորոտից, որովհետև մինչ օրս չի հայտնագործված քեզ նման ախտավարակներից փրկվելու բալասանը... Թյո՛ւ...»։

Գրիգորը գնում էր, քայլում, ո՞ւր, ինքն էլ չգիտեր։ Որքան վիճում էր, կռվում վանքի իր ծառայակիցների հետ, որքան վստահ էր իր մաքրությանը, այնուամենայնիվ, նրան չէր լքում այն զգացումը, որ հեռանում է վանքի միջավայրից, որ ինքն իր ձեռքով այրում է փրկության բոլոր կամուրջները։ Միաժամանակ, գիտակցում էր, որ այսօր ինքը վանքին և եկեղեցուն ավելի է հարկավոր, քան նրանք՝ իրեն։ Նա հարկավոր է հայրենի դպրությանն ու հայ տաղերգությանը։

***

Նարեկա մենաստանի թիկունքում, նրանից ոչ հեռու բարձրանում է շիկավուն ժայռը, որի ողորկ պատին բնությունը փորել, բացել է եռահարկ անձավներ, ուր բույն են դնում թևավորները, իսկ նրա վերին՝ երրորդ հարկը արծիվների տարածքն է, որտեղից նրանք տիրական հպարտությամբ դիտում են հեռուները և Վանա ծովի կապույտ հեռաստանը։ Գրիգորի սիրած վայրերից է այս ժայռը՝ իր խորն ու ոչ խոնավ անձավներով, մանավանդ երրորդ հարկը, որտեղից ավելի ծավալուն է դառնում տեսադաշտը, և հեռանում է հորիզոնը՝ երկնքի և ջրի լաջվարդ կապույտը ձուլելով, մերելով իրար։ Լիճը շնչում է տիտանական թոքի նման, ահեղ շնչառությունից բարձրանում և իջնում են նրա մաքուր ջրերը, գուրգուրելով Աղթամար և Առտեր կղզիների ժայռակոփ ափերը։ Ավելի ձախ ժայռի բերանից անդունդ է նետվում ջրվեժը և ուշաթափվում քարե հատակին։ Նա է իր ժիր աղմուկով կենդանացնում շրջապատը և արթուն պահում ժայռի թևավոր բնակիչներին։ Դարեր շարունակ այս անձավներում ճգնել են Նարեկա մենաստանի ճգնավորները։ Ժամանակն այնպես է լիզել անձավների քարե հատակները, ինչպես կովերը՝ աղաքարը։ Հայացքը մեխվել է անձավի խորդուբորդ քարե առաստաղին, ուր իրենց

բներն են ծեփել ծիծեռնակները և գիշատիչ թևավորների վտանգավոր հարևանությամբ, ծլվլոցներով, իրենց տագնապներով ու ուրախությամբ շենացնում են անձավների մռայլ լռությունը։ Ծիծեռնակներն անընդհատ շարժման մեջ են։ Անձավի քարե առաստաղին ծիծեռնակների բույնն է։ Թռչում են էգ և արու ծիծեռնակները և վերադառնում՝ կտուցներին իրենց որսը՝ որդեր, միջատներ։ Նրանց անհամբեր սպասում են ձագուկները, բացուխուփ անելով երբևէ չկշտացող բերանները, ուր վայրկենապես անհետանում է ծնողների տված կերակուրը և վերստին աղմկում՝ պահանջելով նոր ուտելիք։ Մայր և հայր ծիծեռնակները նորից թռչում են որսի, նորից հարուստ ավարով վերադառնում և նորից որսն անհայտանում է ձագուկների ամենակուլ բերանում։ «Շարունակում են իրենք իրենց։ Իրենց թռչնային ցեղն են նորոգում։ Եվ ինչպե՞ս են ջանում, առանց հոգնելու, առանց իրենց խնայելու։ Ծնողի իրավունք և ավելի շատ պարտականություն։ Այս ի՞նչ մեծ սեր է ծնողական սերը, ի՞նչ նվիրվածություն է, որ այս փոքրիկ էակները տիտանական ջանքերի շնորհիվ կարողանում են անմար պահել իրենց ցեղը։ Եվ, տեր աստված, ես պետք է զրկվե՞մ սիրուց, ծնողական սիրուց ու պարտականություններից, այն մեծ երջանկությունից, որ ապրում է ծնողը, իր զավակի մեջ տեսնելով իր ապագան և իր անմահությունը։ Ո՞ր մեղքիս համար։ Այն, որ ճգնակենցաղ միաբանության անդամ եմ, վարդապետ... Որ մինչև վերջ հլու մնամ քեզ, տեր, որ նվիրաբերվեմ քո մեծ գործին։ Ես քեզ առավելապես, անմնացորդ կնվիրվեմ, եթե ավելի մարդանամ, ավելի բնական, մարդկային կյանքով ապրեմ։ Մի՛ վերցնի, տեր, մարդկային իրավունքներն ինձնից, մի տգեղացնի այս գեղեցիկ աշխարհն իմ աչքին, որ իմ սերն ավելի գեղեցիկ լինի, առավել կատարյալ, ավելի աստվածահաճո։ Տո՛ւր այս մրջյունի, այս թռչունի իրավունքն ինձ, և ես տասնապատիկ անգամ կխնկարկեմ սերս առ աստված, հարյուրապատիկ անգամ ավելի կպաշտեմ քեզ և օվսաննաներ կբուրվառեմ մեծությանդ... Տո՛ւր Դրախտիկին ինձ, սիրելու տաղանդն իմ մի՛ հանգցրու։ Տո՛ւր ծնողական բերկրանքն ինձ, որ սերը ծնողի ինձ թոցնի վեր։ Ժառանգներ արարելուց շնորհազուրկ մի՛ անի։ Մի՛ անի... Ի՞նչ մարդկային իրավունք է, քեզնից ավելին չեմ պահանջում։ Ինձ իմ իրավունքից մի զրկիր... Չէ որ ես կավից հունցված մարդ եմ, աստված չեմ, որ դիմանամ քո աստվածային խստությանը։ Ես մա՛րդ եմ...»։

Իջավ անձավից և քայլեց մենաստանի ուղղությամբ։ Աշխարհն արբել, խելագարվել էր սիրուց։ Ծանոթ բարդու կատարին արագիլները բույն էին դրել և կափկափում էին կտուց-կտցի։ Աղավնիները թռչում էին գլուխ-գլխի։ Վարուժանն ինչե՞ր էր անում իր մարիին դուր գալու հա-

մար։ Սուրում էր նետի նման։ Այնուհետև, գլուխկոնծի էր տալիս, պտտվում էր օդում։ Սիրո ինչպիսի՜ զեղում։ Ցանկանում է սիրահարեցնել իրեն, ցանկանում է ապացուցել իր արիությունը, իր այրությունը։ Աշխարհը սիրո բռնկման մեջ է, իսկ իրեն արդեն մոտ չեն թողնում Դրախտիկին։ Աղջկան փակել են տանը, բանտարկել։ Իր ուսուցչապետը խոսել է աղջկա հոր՝ Մանակերտի տանուտեր Սահակի հետ։ Իր սերը համարում են կորած մի բան, առնվազն հանդուգն արարք։ Իրեն մենաստանից դժվարությամբ են դուրս թողնում։ Իսկ եթե թողնում են, ապա մեկն անպատճառ դառնում է իր ստվերը։ Մի ժամանակ թաքուն էին հետևում, հիմա նույնիսկ չեն էլ ջանում խնամքով թաքնվել։ Լրտեսում են առանց քաշվելու։ Տեսնում է, թող տեսնի։ Կարող է ճանաչել, հետո ինչ, թող ճանաչի։ Նա դանդաղ քայլում էր դեպի մենաստան, չէ՜, բանտ, բանտից ավելի վատ։ Այս տաք, ջերմ աշխարհը կփակվի իր դեմ, և կբացվեն մենաստանի դռները։ Մենության, ցրտի, լրտեսության, ամբաստանության գումարից կկազմվի այն սառնամանիքը, որ կոչվում է մենաստան, այն գերեզմանը, որ կոչվում է խուց։ Գրքերից ու ձեռագրերից բացի ուրիշ ոչ մի մխիթարություն։ Նեղ լուսամուտից թանկ, չճարվող հարստության պես կծիկրակի լույսի երկչոտ մի շող և հետո նա էլ կանէանա, երեկոյան մթության մեջ լուծվելով։ Այս հզոր, զորեղ արևի փշրանքների մուրացկաններ են վանքի գրիչները, դպիրները, ճգնակենցաղի զոհերը, որոնց ձեռքով ստեղծվում է հայրենի դպրությունն ու գիտությունը։ Իսկ կյանքը չկա, վտարված է այստեղից։ Միակ մխիթարությունն արարելն է։ Այդ պահերին մոռացվում է ամեն մի շարիք, խանդավառ հույզը պինդ բռնում է մարդու հոգին և հոսում է տաղն աստծո կամքով, դառնում երգ, աղոթք, շարական։ «Ահա թե ինչու եմ ապրում։ Չլինի գրչի սպասող մաքուր մագաղաթը, չլինի մոմի դողդոջուն լույսը, չլինի արարելու աստվածային ոգևորությունը՝ մենաստանը կդառնա գեհեն, կդառնա գեհենից ավելի ցուրտ ու անտանելի։ Ես երևի քեզանից ավելին եմ ուզում, քան իրավունք ունեմ, տեր իմ, երևի մարդն իրավունք չունի լիիրավ երջանիկ լինելու։ Դու տվել ես ինձ արարելու մեծագույն երջանկությունը և անձնական երջանկությունը ցանկանում ես վերցնել ինձանից, զի ոչ մեկի համար գերագույն երջանկություն սահմանված չէ։ Դու երջանկությանը գումարում ես ցավի, տառապանքի, կարոտի հոգի բզկտող տխրությունը և մարդուն դարձնում խնդության և լացի, հեծեծանքների մի իրարամերժ ամբողջություն, որպեսզի նա անվերջ հոլովի քո անունը, աղերսի քո օգնությունը և պաշտի քո վեհությունը։ Լացն ու հեծեծանքը միշտ օգնության աղերս ունեն, լոկ երջանկությունն է, որ չի տրվում, չի հանձնվում բարերարների օգնությանը և նույնիսկ աստծո ողորմածությանը։ Երջանիկն

աստծո օգնության կարիք չունի... Մեղա, մեղա քեզ, տե՛ր, քո ծառան չարացել է, ներիր իմ այդ թուլությունը, քանզի ես քո պաշտողն եմ հավիտյան և հավիտյան մեղապարտը»։

Մենաստանի երկաթյա դարպասը ծանր, ժանգոտ ճռռաց։ «Ուշանում ես, հա՛յր սուրբ...», նկատողություն արեց հերթապահ քահանան, և դուռը նորից աղերսագին ճռռաց և փակվեց նրա հետևից։ «Պահ է ճաշելու», ազդարարեց կոչնակը, և նա մտավ մենաստան։

Խուցը, ինչպես միշտ, սառն էր և մտնելուն պես գաղջ օդը հարվածեց դեմքին։ Իսկ դրսում մի խանդավառ արև աշխարհը լցրել էր ջերմությամբ և իր շողերով գուրգուրում էր բոլոր շնչավոր էակներին, նրանց արյանը տալով մարմնի մեջ շրջագայելու հնարքը և սիրո ավիշով ու կենսաբեր կրքով լցնելով նրանց մարմինները։

Դրսում արև էր և անձրև էր մաղում։ Նեղլիկ լուսամուտագոգին կաթում էր մարգարտյա անձրևը։ Լուսամուտից երևում էր արևի ոսկով պարուրված ամպը, որից կաթում էին մարգարիտները։ Վանքի պատերից դուրս ապրում էր աշխարհը, իսկ պատերի ներսում ապրում էր ապրելու կարոտը.

Ու շուշանն է լցվում շաղով,
Շող շաղով ու շար մարգարտով,
Արեգնափայլ ոսկի ամպից
Շաղն է ցողում ծաղկունքն ամբողջ։

— Տեր մեր աստված, այդ որքան ես հանճարափայլ և ճաճանչափայլ, արարչագործ մեր բարերար, քեզ խնկարկելիս բառերի սակավությունն է խեղճացնում, թվատ դարձնում մեր լեզուն, աղոթելիս՝ պակասում է սրբությունը, խնդրելիս՝ անկեղծությունը, քանզի դու այնքան ես կատարյալ և աշխարհը՝ քո ստեղծագործությունն այնքան է կատարյալ ու գեղեցիկ, որ հողեղենիս լեզվով անհնար է արժանի գովեստի խոսքերով փառաբանել քո հանճարը։ Քո հրամանով են շարժման մեջ դրվում տիեզերական բոլոր մարմիններն ու լուսատուները։ Դու ես վառել աշխարհի մեծագույն ջահը՝ արևը, որ լույս եղիցի։ Դու ես մեկիկ-մեկիկ վառում գիշերային լուսատուները՝ աստղերը, որ գիշերվա մթությունը չքանա, չժայռանա և չխեղդի շնչավորներին։ Դու ես լուսադեմին նորից մեկիկ-մեկիկ հանգցնում լուսատուները, որ լույսի հորձանքից չկուրանան աշխարհի գեղեցկությունը վավերացնող մեր աչքերը։ Այդ դու ես մեզ համար երկրի վրայից հետ քաշում գիշերային քողը, որպեսզի մենք ըմբոշխնենք աշխարհի մերկ ու խանդավառող գեղեցկությունը։ Դու ես նույն

քողը քաշում գեղեցկուհու վրա, որպեսզի գեղեցկությունը սովորական չդառնա և լույսի կարոտը չսպառվի մեր մեջ։ Դո՛ւ, դո՛ւ, տե՛ր... Դու արարել ես աշխարհիկ գեղեցկությունները՝ անտառ, ծով, լեռներ, ծաղկունք և այլն, որ քո գլուխգործոցը՝ մարդը գեղեցիկ ապրի, աշխարհը հարմար լինի նրան։ Իսկ մարդուն տվել ես քո պատկերը, սակայն հոգու մեջ զլացել աստվածայինն ու կատարյալը դնել։ Եվ հակասություն է առաջացել քո և քո ստեղծածի միջև. դու վեհ ու բարի, նա չար ու մեղքերով հարուստ, դու կատարյալ, նա՝ ոչ։ Քաշիր նրան, հանիր մեղքերի ճահճից, մարդացրու մարդուն, նմանեցրու քեզ, թե չէ նա իր մեղքերով սպառնում է աշխարհի գեղեցկությանն ու քեզ... Իսկ եթե, եթե... դու նրան տվել ես ոչ միայն քո պատկերը, այլև... հոգին, մեղա՜ քեզ, բազմիցս մեղա, մեղավոր այս մտքերի համար, թող չորանա լեզուս, որ այդ ասաց, թող չքանան մտքերս, որ խորհեցին այս հերյուրանքը, թող կուրանան աչքերս, որ միշտ կարոտ են քո լույսին... Տեր երկնավոր, մարդն, այնուամենայնիվ, քո ամենամեծ ստեղծագործությունն է։ Նա երկրի տերն է ու հանճարը, դու նրան միտք ես տվել, որ նա կարող լինի կառավարել երկրային գործերը։ Որքան հակասական լինի մարդը, այնուամենայնիվ, նրա մեջ միշտ արթուն է աստված, աստվածայինը, նա է ծանրությեթև անում տիեզերական գաղտնիքները, նա է իմաստավորում կյանքը, մղում առաջ և անընդհատ, համառորեն որոնում քեզ, որոնում իր աստծուն։ Նա խոսք է բացում քեզ հետ, նա հաղորդակցվում է քեզ, պաշտում է քեզ, օգնություն է հայցում, մեղքերի թողությունը քեզնից է ակնկալում։ Ամբողջ տիեզերքը դու ամփոփել ես նրա մեջ, դու նրան նշանակել ես քո տեղապահը երկրում, ուրեմն հոգ տար նրա հոգու մաքրության մասին։ Հեռու պահիր նրան մանր ու մեծ կրքերից, ընչաքաղցությունից, թալանելուց, պաշտոնը չարաշահելուց, գողությունից, անառակությունից, մատնությունից, քենից ու նախանձից, իր նմանին նահատակելուց, տանջելուց, սպանելուց։ Մարդացրու մարդուն, նրա հոգուն սրսկիր աստվածային մաքրություն, բարություն, վեհանձնություն, արդարամտություն, խնդրո՜ւմ եմ... Քո սկզբունքը դարձրու՝ մարդու մեջ աստված, աստծո մեջ մարդ տեսնելը, խնդրո՜ւմ եմ... Եվ ներիր, ներիր քեզ խորհրդատու լինելու համար, խնդրո՜ւմ եմ...

Գրիգորն ավարտեց «Տաղ վարդավառի» ստեղծագործությունը։ Գոհ էր։ Լավ էր ստացվել։ Սակայն մտքերը նրան մղում էին մեծագույն մի արարման, որը հասունանում էր նրա հոգում, ինչպես մանուկը՝ մոր արգանդում։ Երկար նայում էր նեղ պատուհանից ամպերի կուտակմանը, որ գոցել էր արևի դեմքը։ Ամպրոպ էր սպասվում։

***

Նարեկավանքի միաբանությունը զարմանալի անտարբերություն, ոչ, անբարյացակամություն էր դրսևորում Գրիգորի նկատմամբ։ Անտարբերությունը վերաբերմունքի ամենածանր տեսակն է։ Թշնամանքը, բացահայտ զրպարտությունը, ամբաստանությունը ավելի հեշտ է տանելը, քան անտարբերությունը։ Լինում էին պահեր, երբ Գրիգորը ոչ թե միաբանության այս կամ այն անդամի բարեկամությունն էր տենչում, որին չէր հավատում, այլ նույնիսկ թշնամությունը։ Թող որ կռվեին իր հետ, ամբաստանեին, միայն սառն ու անկենդան դեմքով չանցնեին իր կողքով։ Նա անտարբերությունը պատկերացնում էր բորենու կերպարանքով։ Վախկոտ, չարոգի, որ թաքուն հետևում, սպասում է առավել ուժեղ գազանի հարձակմանը, ինքը երբեք չմատնելով իր թաքստոցը։ Հարձակվում է վագրը, ասենք, եղջերուի վրա, գետնում է իր զոհին, հոշոտում նրան և կշտանալուց հետո թողնում, հեռանում։ Եվ ահա թաքստոցից դուրս է նետվում բորենին ու հարձակվում վագրի թերմացքի վրա, մաքրազարդում։ Այդպես են անտարբերները. ժանիքները արտաքնապես ցույց չեն տալիս, ճիրանները ներս են քաշված, քայլում են անձայն և սպասում իրենց ժամին։ Մի անգամ այլևս չհամբերեց, ուղղակի չանթեց Ղազար վարդապետի օձիքը.

— Լսի՜ր, հայր սուրբ, եթե խոովել ես ուզում ինձնից, կռվիր ինձ հետ, այսպանիր ինձ, մեղքեր բարդիր ինձ վրա, որ ես հասկանամ քեզ և հավատամ քո խոովելուն... Թե չէ անցնում ես կույրի նման, խուլի նման, համրի նման, ի՞նչ է պատահել...

— Թող օձիքս,— ֆշշաց վարդապետը,— հերձվածողի հետ ով կամենա հաղորդակցվել, ուրեմն ինքն էլ հերձվածող է...

— Այդ ես եմ հերձվածողը, հա՞...— և ավելի պինդ սեղմեց օձիքը։

— Հապա ո՞վ,— չնահանջեց Ղազարը։— Դու, ասում են, քո հոր որդին ես, ասում են՝ պտուղը ծառից հեռու չի ընկնում, ո՞վ է տեսել, որ ճգնակենցաղ միաբանության անդամը սիրուհի պահի, նրան տաղեր ձոնի կույս Մարիամի անունով, խայտառակի միաբանության բարի անունը...

— Քեզ ո՞վ ասաց, թե կույս Մարիամի անունով տաղերի հերոսուհին իմ սիրուհին է, քեզ ո՞վ ասաց, որ ես սիրուհի եմ պահում, ո՞վ ասաց, սրիկա՜, ասա՜, թե չէ կխեղդեմ քեզ...

— Դու հերձվածող ես,— խռխռոցով իրենը պնդեց Ղազարը։— Եվ սրիկան ինքդ ես...

Գրիգորը շուտ հանդարտվեց։ Բռնկվել էր՝ անցավ։ Կրակվել էր՝

հանգավ։ Բաց թողեց վարդապետի օձիքը։ Անտարբերությունը տեղի էր տվել շարությանը.

— Գնա՛, գնա՛, շնորհակալ եմ անկեղծությանդ համար։ Գնա՛...

Զարմացած Ղազարը շորերը կարգի բերելով՝ չքվեց, հեռացավ՝ ատամների արանքից նետելով.

— Խելագա՛ր...

Թող այն կարծիքը չստեղծվի, թե միաբանության մեջ Գրիգորը բարեկամներ չուներ։ Նրա տաղերի երկրպագուները քիչ չէին, նրա ապագան հուզում էր իսկական հայրենասերներին, գիտուններին, ծաղկողներին։ Սակայն դրությունը խիստ փոխվել էր։ Ուսուցչապետ և վանահայր Անանիա Նարեկացին արդեն ծեր էր ու տկար։ Նրա աթոռին աչք ունեցողները ցանկանում էին վերջնականապես վարկաբեկ անել Գրիգորին, հեղինակազրկել նրա հովանավորին՝ Անանիային։ Վերջինս լավ էր հասկանում միաբանության մեջ տեղի ունեցող խժդժությունները, միաբանության երկփեղկվելը և իր մոտ հրավիրեց Գրիգորին։ Փայտե գահավորակի մեջ ընկողմանած ուսուցչապետը սմքած, փոքրացած թվաց Գրիգորին։ Դեմքն այնքան էր գունատ, որ ասես դիմակ էր հագել։ Գրիգորը խոնարհվեց։

— Երբվանի՞ց ես սկսել մարդ ծեծել,— խոսեց մարած ձայնով։

— Ես երբեք մարդ չեմ ծեծել, ուսուցչապետ, ծեծելը, մարդկանց ցավ պատճառելը իմ արհեստը չէ...

— Գիտեմ, գիտեմ, սակայն նույնիսկ նրանց քսվելը վտանգավոր է, մրոտ առարկային ձեռք տվողը անպայման մրոտվում է, այնպես չէ՞...

— Այդպես է, ուսուցչապետ...

— Ուրեմն, զգուշացիր, միաբանությանս հոգևոր խորհուրդը երկփեղկված է, մի մասը պահանջում է դատի կանչել քեզ և բանադրել, առայժմ ինձ հաջողվել է համոզել նրանց, որ վաղ է քեզ դատաստանելը, սակայն փոքր-ինչ շեղումը կարող է քեզ կանգնեցնել դատաստանի առաջ, իսկ այնտեղից մաքուր դուրս գալը, սիրելի Գրիգոր, բացառվում է...

— Ի՞նչ պետք է անեմ հետայսու սխալներ թույլ չտալու համար, ուսուցիչ։

— Այդ մասին քեզ հետ ես խոսել եմ, Գրիգոր։ Վերջ տուր սիրային արկածներիդ։ Միաբանության մեջ սիրահարություն և անբարոյականություն հասկացությունները նույնիմաստ են։ Դրան ավելացրած նաև սրբազան արգելքը, որ միաբանության անդամներին արգելում է սեր և ամուսնություն։ Ասում են, որ քո տաղերի աստվածամայրը և քո սիրեցյալը երկվորյակի պես նման են միմյանց...

— Հորինում են, ինչպե՞ս կապացուցեն...

— Այնպես կապացուցեն, որ անհնար կլինի պաշտպանվելը։ Սակայն հարկավոր չէ, Գրիգոր, հին դարմանը քամուն տալ։ Կան ճշմարտություններ, որոնց դեմ ծառանալը հիմարություն է... Որ սիրահարված ես, անհերքելի է, որ քո Դրախտիկին կանգնեցրել ես աստվածամոր պատվանդանին, փաստ է։ Առայժմ հոգևոր խորհրդին հայտնի չէ Սյունյաց աշխարհի հոգևոր հովվի նամակը, որը կարող է ճակատագրական լինել քեզ համար, Գրիգոր։ Զգուշացի՛ր, զավակս...

— Ուսուցչապետ, այլևս անհնար է այսպես ապրելը։ Ես գիտակցում և ընդունում եմ իմ մեղքերը, որ գործել եմ աստծո դեմ, միաբանության սահմանած օրենքներին հակառակ։ Բայց միաբանության առանձին անդամների ամբաստանությունը այնքան հեռու է տանում, որ նրանք եզի տակ հորթ են փնտրում։ Ինչպե՞ս կապացուցեն, որ իմ տաղերում սուրբ տիրամոր նախատիպը Դրախտիկն է։ Ի վերջո, ո՞վ է տեսել երկնային Մարիամին և ով՝ երկրային Դրախտիկին։ Նմանեցնում են, թող նմանեցնեն։ Չէ՞ որ տիրամայրը գթասիրտ և գեղեցիկ կին է, գեղեցիկ է նաև Դրախտիկը, այդքանով նրանք նման են։ Իմ ըմբռնումով, գեղեցկության իսկական տիպար է Դրախտիկը։ Հնարավոր է, որ նրա հոգեկան և մարմնական գեղեցկության որոշ գծեր փոխանցեի սուրբ տիրամորը, ինչպես այդ արել էր մեծ ծաղկող և նկարիչ Հուսիկը, աստվածացնելով իր կաքավողին... Բայց նշանակո՞ւմ է, թե երկնայինի տիտղոսներ ենք տվել երկրայիններին կամ երկնայիններին վիրավորել և մտցրել ենք երկրայինների անմաքուր ճահիճը, ինչպես արտահայտվում են ոմանք...

— Գրիգոր, Գրիգոր, որդյա՛կ իմ,— տնքաց հայր Անանիան,— ինչ բարբառում է լեզուդ՝ քո ճշմարտությունն է, աշխարհի, մանավանդ, աստծո ճշմարտությունն այլ է։ Դու ասում ես, որ Հուսիկը մեծ ծաղկող է և նկարիչ, իսկ ես առանց խղճիս հետ մարտնչելու ասում եմ՝ նա հերձվածող է, աստծո և եկեղեցու թշնամի...

— Սիրելի ուսուցիչ, դու զուր ես խառնում մարդու տաղանդը նրա աշխարհընկալման հետ։ Հուսիկ վարդապետը, որպես վանական, վանքի թշնամին է, սակայն նրա ստեղծած որմնանկարներն ու մանրանկարները մեր ազգի, այդ թվում նաև եկեղեցու հարստությունն են։ Հուսիկը մեծ էր և նա երկար ճանապարհ ունի անցնելու, և ուղեկիցը անմահությունն է, ուսուցչապետ...

— Գուցեև դու ճիշտ ես, Գրիգոր, բայց նորից եմ կրկնում՝ քո ճշմարտությունը մեր ժամանակներում կարող է կորստաբեր լինել քեզ համար։ Մեր ճշմարտության համաձայն՝ Հուսիկը թշնամի է երկրին և եկեղեցուն, և նրա հիշատակը պետք է հանձնել մոռացության։ Նրա անու-

նը տալն իսկ կարող է դիտվել դավաճանություն սուրբ գործին։ Հասկանալի՞ է...

— Ե՛վ հասկանալի է, և՛ անհասկանալի... Որքան հասկանում եմ, այն իսկական ճշմարտություն է, որ, դժբախտաբար, ժամանակի ճշմարտությունը չէ... Ճի՞շտ եմ հասկանում, ուսուցչապետ...

— Միանգամայն, Գրիգոր...

— Եվ դու՝ մեծ գիտնականդ և իմաստասերդ, տաղերգուդ և ուսուցիչդ մեր, դու ինձ խորհուրդ ես տալիս դիմակ հագնելու, ճշմարտությունը թաքցնելու կեղծիքի և քծնանքի սպանիչ մեղքի ծանրության տակ, դո՜ւ, դո՜ւ...

— Հարկադրաբար, Գրիգոր, հարկադրաբար։ Ես խնդրում եմ քեզ, ոչ, ավելի շուտ պահանջում՝ անել նույնը։ Այո՜, դիմակ հագիր, դավադիրներին ժպիտ ցույց տուր, ոչ թե՝ բռունցք, որովհետև բռունցքով մախաթին հարվածել չես կարող։ Հավաքիր արիությունդ և սպասիր ավելի լավ ժամանակների...

— Ես այդպես անել չեմ կարող, ուսուցիչ։ Ես լրտես Կունծիկ աբեղային ժպտալ չեմ կարող, երբե՛ք, ես Ղազարին, որը նույնիսկ իմ ներկայությամբ չզլացավ բամբասել, ամբաստանել հանգուցյալ հորս, ժպտալ չեմ կարող։ Ես նրանց հետ իմ կռիվն ունեմ...

— Եվ կպարտվես...

— Կպարտվեմ, գիտեմ, որ կպարտվեմ, բայց պատվով, մարդավարի...

— Պարտվողին պատիվներ չեն տրվում, նրանց անվանարկում են...— տնքաց հայր Անանիան։

— Մարտնչելով պարտվելն ավելի լավ է, քան ժպտալով գերի հանձնվելը,— տաքացավ Գրիգորը,— ես չեմ կարող համաձայնել զինաթափվելու հեշտին գաղափարին, ինձ համար թեկուզ անհավասար մարտում պարտվելը, ընկնելն ավելի ընդունելի է, քան առանց կռվի հանձնվելը, կյանք աղերսելը թշնամուց, նրանից մեծահոգություն մուրալը, ուսուցիչ...

— Ջահել ես, Գրիգոր, երիտասարդի մեջ արյան խաղերը, սրտի զարկերը ավելի որոշիչ են, քան սառը դատողությունը, որ մարդուն զրահում է չարիքից և անախորժությունից։

— Ես քեզ սիրում եմ, ուսուցիչ, և ավելի շատ հարգում։ Բայց չեմ կարող ներել քո հարմարվողականությունը, վախկոտությունը, զենքերն առանց գործածելու վար դնելը։ Ես քեզ համարել և համարում եմ իմ հոգևոր հենարանը, եթե ճիշտն ես ցանկանում իմանալ, դու ինձ համար եղել ես աստծո տեղապահը երկրում, եղել ես մի կիսաստված, որի առջև

ես պատրաստ եմ խունկ ծխելու ու մոմ վառելու։ Բայց քո նահանջելն առանց կռվի ներել չեմ կարող, չեմ կարող...

Գրիգորը հանկարծակի լռեց, միանգամից մարեց ուսուցչին քննադատելու նրա եռանդը։ Լռեց, Անանիան արտասվում էր, արցունքներն առատորեն բխում էին մարող աչքերից և գլորվելով այտերն ի վար, անհետանում փառավոր մորուքի ծալքերում։ «Չափն անցա։ Ի՞նչ եմ ուզում այս հիվանդ ու ալևոր մարդուց։ Նրա մարմնական և հոգևոր ուժերը վաղուց սպառված են, իսկ ես նրան մղում եմ կռվի ասպարեզ։ Նա վաղուց դադարել է մարտիկ լինելուց, նա այժմ սրբի նման անզոր է և սրբի պես մենակ»։

Նա ծունկ չոքեց ուսուցչի առջև և ձեռքը մոտեցրեց շուրթերին։ Ներսունու ձեռքը սառն էր, բայց ծանր։ Գրիգորը զարմանքով նայեց նրա ձեռքերին, մատներին, որ նման էին դարավոր ծառի արմատների և վերստին մոտեցրեց շուրթերին։

— Ներիր ինձ, ների՜ր, ուսուցիչ, ես չափն անցա, ես իրավունք չունեի, չունեի...

— Թող աստված քեզ ների, զավակս։— Անանիայի շուրթերը դողդողում էին, նա արագորեն հաղթահարեց ներքին հուզմունքը, գտավ ինքնիրեն,— ես նորից եմ գտնում, որ դու պարտավոր ես քեզ պահել, պահպանել, քո կյանքը քոնը չէ, այլ ազգինս է, դու նրա մեծերից մեկը լինելու բնածին ակնկալիքով ես ծնվել։ Քեզ մի նետիր շների բերանը։ Նրանք կքրքրեն քեզ։ Նրանք այդ կարող են անել, իմացիր։ Առյուծները միշտ միայնակ են, իսկ աղվեսներն ու բորենիները ոհմակով են շրջում...

— Ներիր ինձ, ներիր, ուսուցի՜չ...— կմկմում էր Գրիգորը։

Ուսուցչապետը ձեռքով նրան լռելու նշան արեց.

— Լսի՜ր, որդյակ իմ, ուզում եմ խոստովանել իմ գաղտնիքը, որ չեմ խոստովանել նույնիսկ երկնային տիրոջը։ Նույնիսկ քաջություն չեմ ունեցել խոստովանել ինքս ինձ. կար ժամանակ, որ հիմա ինչպես քեզ, ինձ էլ հալածում և լրտեսում էին և, որ կարևորն է՝ մեղադրում էին թոնդրակյաններին հարելու և համերաշխելու մեջ, ամբաստանագրերը թռչում էին եպիսկոպոսներին, նույնիսկ կաթողիկոսին։ Շիկացած վիճակ ստեղծվեց. կամ ես հերետիկոսի և հերձվածողի նվաստացուցիչ մեղադրանքներին պետք է արժանանայի, կամ էլ մեղքերս պետք է քավեի մեր եկեղեցին սրբագործող որևէ գործով։ Եվ ես, որդյակ իմ, ընտրեցի վերջինը. գրեցի քեզ հայտնի դավանաբանական «Թուղթը» Կճավա վանքի միաբանությանը և պարզապես վրայիցս նետեցի բանադրանքի սև թիկնոցը։ Հասկանալի՞ է...

— Հասկանալի է, ուսուցչապետ, հասկանալի է։ Բայց ասա ինձ, համոզիր, որ ճիշտ ես արել, համոզիր քո ճշմարտությունը...

— Մենք շատ հեռու գնացինք, Գրիգոր։ Նման խոստովանությունները մեզ կարող են տանել ոչ ցանկալի բանաձևումների։ Թույլ տուր չպատասխանել քո հարցին։ Առանց այն էլ ասվեցին շատվելիք, ոչ աստվածահաճո բաներ...

— Դու հոգնել ես, ուսուցչապետ, պահ է, ես գնամ...— և ոտքը կախ գցեց։

— Լեզվիդ տակ, Գրիգոր, տեսնում եմ, բան ունես պահած, ասա, կասկածներդ հայտնիր, ի՞նչն է քեզ շարշարում, որդիս...

— Ասա, ուսուցիչ, իմ հոր մասին։ Նրան մինչև հիմա մեղադրում են հազար ու մի մեղքերի մեջ։ Իսկապե՞ս իմ հայրը՝ եպիսկոպոս Խոսրով Անձևացին աններելի մեղքեր ուներ...

— Դու այդ պատմությունը հիանալի գիտես, Գրիգոր։ Քո հայրն աստծո առջև ոչ մի մեղք չուներ, նա ծանր բանավեճի մեջ էր Անանիա Մոկացի կաթողիկոսի հետ։ Բանավեճը դավանաբանական բնույթ չուներ, այլ՝ ծիսական։ Հիմնականն այն է, որ հայրդ ցանկանում էր կաթողիկոսի իրավունքները հավասարեցնել եպիսկոպոսների իրավունքներին։ Եվ էլի մանր-մունր բաներ։ Անանիա Մոկացի կաթողիկոսը հորդ մեղադրեց եկեղեցու դարավոր օրենքները խախտելու փորձ կատարելու համար, փառասիրության, կովազանության, երախտամոռության համար։ Եվ հայրդ բանադրվեց, որը մինչև նրա մահը չվերացվեց կաթողիկոսի կողմից...

— Բայց ես իմ թշնամիների այպանքներին՝ ի պաշտպանություն հորս, փաստեր չունեմ...

— Ճշմարտությունը մեծագույն փաստն է, զավակս, քո հայրը նեղացրել էր կաթողիկոսին, ոչ թե երկնային տիրոջը։ Այդպես էլ փաստարկիր։ Ջեն գոհանա, է՞, թող վայրահաչեն...

— Շնորհակալ եմ, ուսուցիչ։ Քեզանից ես միշտ հեռացել եմ հանգստացած սրտով և մաքրված, մաքրված...

***

Գրիգորը մորը չէր հիշում։ Երկու-երեք տարեկան էր, ոչ ավելին, երբ մայրը մահացավ։ Նրա պատկերը լրիվ սրբվել էր հիշողությունից, սակայն, երբ ճիգ էր անում մորը հիշելու, հոգում խլրտում էր մի մեծ քընքշություն, ջերմություն, այտերին զգում էր համբույրի տաքությունը, այդ զգացումները չէին վերածվում պատկերի, ծծկեր մանկան հիշողությունը ուժ չէր ունեցել մոր պատկերը պահելու։ Կարոտը կար, պատկերը չկար։ Մայրը և՛ ծանոթ, և՛ անծանոթ մի սրբություն էր նրա համար։ Նա հաճախ երկար աղոթում էր մոր հոգու համար, աստծուց մորը գոնե երազում տեսնելու թույլտվություն էր հայցում։ Մի երկու անգամ մայրը երազում այցելել էր որդուն։ Այդ երազներում ինքը միշտ ծծկեր Հիսուսի նման կպած էր լինում մոր կրծքին, իսկ մայրը երևում էր աստվածամոր տեսքով և արտասվելիս։ Արթնությունը դժվար էր վրա հասնում. Գրիգորը չէր կարողանում հեռանալ մորից։ Եվ արթնանում էր բարձի թացությունից, թրջված իր արցունքներով։ Մայրն այդպես էլ թանկ երազ դարձավ որդու համար, շատ ուշ-ուշ էր այցելում որդուն, իսկ որդին մոր առջև սիրտը բացելու, հոգին թեթևացնելու այնքան կարիք ուներ, հոգատարության կարիք, նույնիսկ երազում։

Հորը լավ էր հիշում։ Խոստակրոն այդ մարդը նույնիսկ իր որդիների մեջ իրարամերժ զգացումներ բորբոքելու մեծ վարպետ էր։ Կնոջ մահից հետո տղաներին (նրանք երեքն էին) պահելու հոգսն ընկավ նրանց տատի վրա։ Տատը, փոքրամարմին, փխրուն կազմվածքով և բնավորությամբ մի կին, կարողացավ փոխարինել իր աղջկան, հոգատար և գթասիրտ վարմունքով թոռների մեջ մեղմել մոր ծանր կորուստը։ Եղբայրներից կրտսերը՝ Գրիգորը, ամենից քիչ վայելեց մայրական գուրգուրանքն ու առավել շատ տատինը։ Մեծ եղբայրը՝ Սահակը, առաջինը ոտք դրեց Նարեկավանքի կրթարանը, այնուհետև ուսանելու ուղարկվեցին Հովհաննեսն ու Գրիգորը։ Այդ միջոցում Խոսրով Անձևացին արագ բարձրացավ հոգևոր պաշտոնների աստիճաններով և հասավ եպիսկոպոսության։ Նա Անձևաց աշխարհի հոգևոր առաջնորդն էր, իսկ իր տղաները Նարեկավանքի դրպրոցի աշակերտներ։

... Գետակը խաղաղ ոլորվում է մարգագետնի կանաչների միջով։ Ջուրն այնքան պարզ է, որ հատակը երևում է ամենայն մանրամասնությամբ։ Իսկ հատակը շեկ ավազ է, ուր խայտում են մարդկանցից չվախեցող կապույտ մեջքերով և ալ խալավոր կողերով կարմրախայտները։ Գրիգորի ամենասիրելի զբաղմունքն է գետակի ծանծաղուտում ձկների հետ խաղալը։ Նրան ոչ մի կերպ չի հաջողվում բռնել այդ ճկուն և գեղեցիկ էակներին։ Շատ է պատահել, որ ափի մեջ թպրտացել է ձուկը, այդ պահերին սիրտը ճխացել է, ճչացել ուրախությունից, սակայն պահ չանցած ձուկը սահել է ափի միջից, այնտեղ թողնելով իր թաց և ճկուն մարմնի խուտուտը և մի մեծ ափսոսանք՝ տղայի սրտում։ Գետակը մարգագետին է իջնում ցածրանիստ բլուրների լանջերի կարկաչող աղբյուրներից սնվելով, որոնք միանալով միմյանց, դառնում են գետակ և հանդարտ հոսում մարգագետնի միջով։

Այդ զբաղմունքը Գրիգորի մոտ հասավ մոլության։ Օրերով, նույնիսկ խայթող շոգին և տեղատարափ անձրևներին, նրան չէին կարող կտրել սիրելի զբաղմունքից, նա ոչ թե ձուկ որսալու, այլ գոնե կենտ մի անգամ բռնելու տենդագին ճիգերի ու շարշարանքների մեջ էր։ Պառավն անզորությունից ձեռքերը խփում էր ծնկներին.

— Խեղճ որբուկս կասես ուխտ է արել ձուկն բռնելու և ոչ մի կերպ իր բախտի ձուկը չի բռնվում...

Գրիգորը քիչ մնաց իր մոլության զոհը դառնար։ Այդ օրն ամեն օրվա նման Գրիգորը գետակի ափին էր։ Երեխաների հետ լողացան, շորացան արևի տակ և ձուկ բռնելու հոգսով էին զբաղված, երբ հանկարծ երկինքը մթնեց, ամպերը ցածրացան և նեղսրտած դիպան իրար։ Կայծակները պայթում էին մոտիկում, այնքան մոտ, որ երեխաները համարյա խլացել էին։ Եվ սկսվեց տեղատարափը։ Անձրևն այնքան առատ էր, որ թվում էր գլխներին դույլերով ջուր էին դատարկում։ Առատ անձրևը սովորաբար շուտ է կտրվում։ Բայց այս մեկը և առատ էր, և կտրվելու միտք չուներ։ Տղաների մի մասը տուն փախավ։ Շինականների ձայներ լսվեցին, եկել էին մարգագետնում արածող հորթերին և գառներին տանելու։ Հետո պարզվեց, որ փորձառու շինականները գլխի էին ընկել, որ գետակը կհեղեղվի։ Անձրևը կտրվելու վրա էր, երբ վերևից լսվեց խուլ, սահմռկեցուցիչ որոտի ձայնը, որ արագորեն մոտենում էր։ Գրիգորը պահ անց տեսավ մի ահռելի սուրացող մարմին, սև, մեջքը ուռեցրած մի վիշապ, որն ահավոր թնդյունով գալիս էր ուղիղ իր վրա։ Տղան սարսափից աչքերը փակեց։ Նա չզգաց նույնիսկ, թե ինչպես հեղեղը խփեց իրեն և շպրտեց ափից հեռու, իսկ հաջորդ ալիքը իրեն առավ իր մեջքին։ Չզգաց, թե ինչպես է թռչում ալիքների վրա, չզգաց և չտեսավ իր փրկարար շինականին, որը կարողացավ չանթել իր ոտքից և դուրս քաշել հեղեղի երախից։ Տանը, երբ աչքերը բացեց, իր վերև տեսավ տատի արտասվաթոր դեմքը և դեպի երկինք կարկառած նրա ձեռքերը, որ աստծո օգնությունն էին աղերսում՝ թոռանը փրկելու համար։

— Աստվա՛ծ, մեռնիմ քո զորությանը, աստվա՛ծ...

Եվ աստված ասես լսեց պառավին։ Գրիգորը բացեց աչքերն ու թույլ ժպտաց։

— Մամիկ, մամիկ,— շշնջացին շրթունքները,— վիշապն ո՞ւր ի...

— Գրողի ծոցն ի,— արագ վրա բերեց տատը ուրախացած,— գրողի ծոցը, դու ողջ ես, հիմիկ կարևորը դա է, քե մեռնիմ, ձագուկս...

Հաջորդ օրերին տատը մոմ էր վառում եկեղեցում, որ փրկվել էր իր թոռը, խունկ էր ծխում, մոմ վառում աստծուն, որ փրկել էր թոռանը,

խնդրում էր նրա օգնությունը, որ ետ պահի Գրիգորին ձուկ բռնելու մոլությունից, իսկ Գրիգորը կրկին գետակի ափին էր, կրկին իր անորսալի սիրեցյալների հետ։

Տատն ի՞նչ իմանար, որ իր թոռը ձուկը բռնելուն պես, ձուկն իր ափերի մեջ գերված տեսնելուն պես և նրա ազատվելու անօգուտ ճիգերն ու թպրտալը, նրա շնչասպառ, բաց ու խուփ անող բերանը տեսնելուն պես, խղճահարությունից պետք է վերստին արագ ջուրը գցեր ավարը և այլևս վերջ տար ձկներին անհանգստացնելու իր չար խաղերին։ Այդպես էլ եղավ, իսկ տատը դա վերագրեց աստծո միջամտությանն ու երկար օրհնում էր աստծու գթասրտությունն ու զորությունը։

Մանկության կարճատև տարիները, որ անցկացրեց Գրիգորը հայրական շենում, ընդմիշտ մնացին նրա հիշողության մեջ որպես իր կյանքի ամենաանմոռաց և գեղեցիկ օրերը։ Եվ շենի առջև փռվող սիզավետ մարգագետինը, ուր արածում էին իր մանկության անմեղ ընկերները՝ գառները, և մարգագետնում գալարվող արծաթ գետակը, ուր լողում էին իր բախտի ոսկեմեջք ձկները, և անտառազարդ լանջերով բլուրները, որոնք ձգվելով դեպի հարավ, հետզհետե բարձրանում էին, վեհանում և լեռնանում, կապտին էին տալիս հեռու հորիզոնին, ուր երկինքը մերվում է երկրին։ Հիշում էր տատի խորշոմազարդ և խոնարհ դեմքը, նրա նկուն ուսերն ու ձեռքերը, որոնք ճաքճքած ու կոշտացած, բայց բմբուլի փափկություն ունեին, երբ շոյում էին թոռներին։ Այդ ձեռքերով թխված լավաշի, եփված հարիսայի, խաշված տառեխի ու կարմրախայտի համը մինչև այսօր մնում էր նրա համար անգերազանցելի և անմոռաց։ Նա այդ համը տակավին զգում էր, այդ համը՝ կպչուն ու ախորժելի։ Սակայն տատն իր սիրուն միշտ խառնում էր խղճահարությունն ու գթասրտությունը որբ թոռների նկատմամբ։

— Կուրանար ձեր մամիկը, որ չտիսնար ձեր վզերն էդպես ծուռ, չտիսնար ձեզ անմայր...

— Մամիկ, իմ մերը դո՞ր ի, մամիկ...

— Հրեն հա՛, աստծո մոտ, ձագուկ, գացեր ի հանգստանալու...

— Է՛, չհանգստացավ, հիմիկ թող տուն գա, հոն ի՞նչ ունի...

Տատը գոգնոցի փեշով աչքերն էր սրբում։ Տատն ասելիք չուներ։ Լացի լեզվով էր նրա պատասխանը։

— Որ աստված կանչեք, ձեր մերը կլսի ու կգա...

Եվ մանուկներն իրենց մանկական արդար բերանով դիմում էին աստծուն, որ նա իրենց մորը վերստին ուղարկեր տուն, որ իրենք էլ մյուս երեխաների նման մայրիկ ունենային։ Շատ չանցած նրանց հայրը՝ Խոս-

ղով Անձևացին, տղաներին տարավ Նարեկավանքի դպրանոցը՝ ծանր վիշտ պատճառելով և՛ իր որդիներին, որոնք տատի տաք գրկից և հոգատարությունից զրկվեցին ճգնակենցաղ միաբանության վանականների շոր և խստակյաց շրջապատում, և՛ տատը, որ չդիմանալով թոռներից բաժանվելուն, անկողին ընկավ ու այլևս չկարողացավ վեր կենալ։ Հաջորդ գարնանը Մագթաղինե տատիկն այլևս չկար։ Եղբայրները գնացին նրա թաղմանը։ Տատի մահը ամենածանր հարվածն եղավ Գրիգորի համար։ Տղան խեղճացավ։ Սկսեց խուսափել մոտիկներից, նույնիսկ եղբայրներից։ Զգտում էր մենակության։ Թաքուն տաղեր էր հյուսում, միայնության մեջ երգում էր իր տատիկի մեծ կարոտն ու կորուստը։ Տատիկի նկատմամբ ունեցած կարոտի մեջ այրվում էր ոչ միայն թոռան մեծ սերը իր տատի նկատմամբ, այլև անծանոթ, աստվածային մի ջերմություն մեռած մոր նկատմամբ, որ ամբողջ կյանքում որդին կրում էր իր հոգում։

***

Անուրախ մանկությանը հաջորդեց ավելի անուրախ պատանեկությունը։ Ավագ եղբայրը՝ Սահակը, հիվանդացավ բկացավով և մեռավ մենաստանի մենության մեջ։ Հիվանդ եղբորն այցելելու եղբայրների թախանձանքները մերժվեցին։ Հիվանդությունը վարակիչ է, հիվանդին այցելելն՝ արգելված։ Իհարկե, վանքի հոգևոր տերերը ճիշտ էին, վարակը կարող էր ընկնել միաբանության և, մանավանդ, դպրանոցի սաների մեջ և տառացիորեն հնձել մարդկանց։ Մենաստանը հրաժարվեց ընդառաջել եղբայրներին և նույնիսկ արդեն եպիսկոպոսի տիտղոս ունեցող հորը՝ Խոսրով Անձևացուն, և չտվեց դիակը հայրենի շենում հողին հանձնելու։ Վիշտն այնպես էր կուացրել, կոտրել այդ խստասիրտ մարդուն, որ նա իր մեջ ուժ չգտավ միաբանության տերերին նորից խնդրելու, վիճելու, մեռած որդուն գոնե վերջին անգամ տեսնելու համար։ Նրանք՝ հայրն ու երկու որդին տեսան միայն Նարեկի գերեզմանոցի մի անկյունում շիրմաբլուրը, ծաղիկներով զուգեցին, լաց լացին, աղոթեցին հանգուցյալի հոգու համար և վերադարձան. որդիները՝ Նարեկավանք, իսկ հայրը՝ Անձևաց աշխարհի հոգևոր գործին։

Շուտով պարզ դարձավ, որ բարվոք վիճակի մեջ չեն նաև հոր գործերը։ Մոկաց Անանիա կաթողիկոսի հետ ծանր վեճը հասկանալի պատճառներով չէր կարող լուծվել հօգուտ եպիսկոպոսի։ Վեճը գնալով խորացավ, հասավ ծանր ընդհարումների, ի վերջո հարաբերությունների խզման և ավարտվեց Խոսրով Անձևացու պարտությամբ՝ նա բանադրվեց։ Կովազան և համառ կաթողիկոսը այլևս նրան չազատեց բանադրանքից և ժամանակ անց Հովհաննես և Գրիգոր եղբայրները հողին հանձնեցին իրենց անիրավված և փաստորեն դատապարտված հորը։ Հարվածները հաջորդում էին մեկը մյուսին և տառապանքների, երազանքների, հոգեկան տվայտանքների, երկվության, աստվածահաճո և աստվածընդդեմ վեճերի մեջ հասունանում էր, ավիշով լցվում տաղերգուի տաղանդը և սպասում գալիք մեծ բռնկմանը։

Եղբոր՝ Հովհաննեսի հետ հարաբերությունները բավականին զուսպ էին։ Սիրում էր եղբորը, որ բնավորությամբ մեղմ էր, խաղաղ, հայրը միշտ ասում էր, որ միջնեկ որդին ճիշտ նման է իր մորը, նույնիսկ արտաքինով։ Բայց Հովհաննեսի մեղմության մեջ նկատելի էր անտարբերության երանգը, որը դուր չէր գալիս Գրիգորին։ Կրտսեր եղբայրը անախորժություններ ուներ միաբանության հետ, հալածվում էր, ամբաստանվում։ Քանի՞ անգամ Գրիգորը ցանկացել է եղբոր առջև սիրտը բանալ, լսել նրա խորհուրդները կամ թեթևացնել, դատարկել հոգին, բայց չի ստացվել, եղբայրը չի արձագանքել նրա տառապանքներին, նրա հոգեվիճակին։

— Հովհաննես, ինձ մեղադրում են անբարո վարքի մեջ, ի՞նչ անեմ...

— Դե, որ սիրահարվես, իհարկե, կմեղադրեն։ Ձեռք քաշիր աղջկանից, և նրանք ձեռք կքաշեն քեզանից...

Կամ՝

— Հովհաննես, Կունծիկ աբեղան ամբաստանում է ինձ թոնդրակյանության մեջ...

— Ի՞նչ կարող եմ ասել, բերանդ փակ պահիր, ավել-պակաս դուրս մի՛ տա...

— Բայց ինձ լրտեսում են, այպանում, ցանկանում են բանադրել...

— Խելոք գառը երկու մոր կաթ է ծծում։ Խելոք պահիր քեզ։ Տե՛ս, ինձ ոչ լրտեսում են, ոչ պատրաստվում բանադրելու...

Եվ ուսերը տարակուսանքով վեր քաշելով հեռանում էր։ Նման երկխոսությունները հանգեցրին նրան, որ Գրիգորն այլևս փակվեց եղբոր առջև։ Այլևս նրան մասնակից չէր դարձնում իր տվայտանքներին, տառապանքներին, չէր որոնում եղբոր՝ իր համար խիստ կարևոր մտերմությունը։ Եղբայրները կորցնում էին մտերմությունը։ Այնուհետև, եղբոր այն հարցերին, թե իր վիճակն ինչպիսին է, Գրիգորը միշտ ուներ միօրինակ պատրաստի պատասխանը.

— Հիանալի՞ է...

— Լավ է, լավ,— պատասխանում էր Հովհաննեսն ու հեռանում։

«Հետաքրքիր է,— խորհում էր Գրիգորը,— երբ միաբանությունում և կրթարանում այսքան շարշրկվում է իմ անունը, թուք ու մուր է թափվում անվանս վրա, մի՞թե եղբայրս ոչինչ չգիտի, մի՞թե նրան չեն հասնում ոչ այնքան ցածրաձայն շշուկները՝ բամբասանքները, սպառնալիքները, իսկ եթե տեսնում, լսում է, ինչո՞ւ է կույր ու խուլ ձևանում...»։

***

Տենչում էր Դրախտիկին։ Հանդիպում էր տենչում, բայց անօգուտ։ Աղջկան ասես թաքցրել էին յոթ պատի ետևում, յոթ արգելքի տակ։ Դրախտիկը չկար։ Գրիգորն զգում էր, որ սերը գնալով հեռանում է իրենից։ Գրիգորն զգում էր, որ սերը հեռանալով, արգելվելով, բանտարկվելով ավելի է մոտենում իրեն, իր տենչացող սրտին։ Դրախտիկը դառնում էր երազ ու երազանք, մտորում ու տենչանք և սրտի ցավ ու կարոտի ճիչ։ Աղջկա պատկերը կոպերի տակ էր և սնում էր հոգին երգերով ու գեղեցկացնում երազները։ Արգելված պտուղն ավելի է քաղցրանում։ Քանի՞ անգամ գնացել էր նրանց շենը, թափառել նրանց տան շուրջը։ Բայց չէր համարձակվել հարցնել նրանից, նույնիսկ հարցուփորձել մանուկներին, վախենալով ծանրացնել նրա վիճակը և խստացնել հսկողությունը։ Բայց մի անգամ այլևս չդիմացավ և հարևան ծերունուց, որ ննջում էր թիկնած ցանկապատին, հարցրեց.

— Հայրիկ, գուցե դու կօգնե՞ս ինձ...

— Ի՞նչ...— ծոր տվեց ծերունին և հայացքը շրջեց դեպի Գրիգորը։ Նկատեց, որ նրա մի աչքը արթուն է, իսկ մյուսը շարունակում է քնել,— փ՞նչ ես ասում, — անեռանդ խոսեց ծերունին։

— Օգնիր ինձ, հայրիկ...— և ձայնը կերկերաց։

— Օգնեմ, բայց ինչո՞վ օգնեմ,— խոսեց ծերունին և արթնացավ նաև նրա քնած աչքը։

— Ո՞ւր է, հայրիկ, ձեր հարևան Սահակի աղջիկը... Գիտե՞ս...

—Դրախտի՞կը...— և ծերունին լրիվ արթնացավ և խստացավ հայացքը, ունքերը բարդ-բարդ կախվեցին աչքերին,— Դրախտի՞կն ասացիր... է՞, քո ի՞նչ գործն է... Դու էլ ես վանքի՞ց։ Վերջերս տանուտեր Սահակի տունը շուտ-շուտ եք գալիս։ Չա՞ր է, թե՞ բարի ձեր գալստյան նպատակը հայտնի չէ, քանզի մի երկու անգամ ձերոնք եկան, ինչ խոսեցին տանուտերի հետ չգիտեմ, դրանից հետո Դրախտիկն աչքովս չի ընկել։ Բայց ինձ մի լավ հասկացրու՝ դու ո՞վ ես, հայր սո՞ւրբ, թե՞ տեր հայր (վարդապետ ես, թե քահանա) և ի՞նչ գործ ունես աղջկա հետ։ Ձեր գալ-գնալուց հետո նրանց տանից աղմուկի ու լացի ձայներ էին լսվում։

Դրախտիկը լավ աղջիկ է, բայց վերջերս չի երևում։ Երևի հիվանդ է, թե՞... Ի՞նչ իմանամ... Դե՛, գնա՛, գնա՛ քո վանքը, քո աստծո մոտ...— և Գրիգորը նորից տեսավ, որ նրա մի աչքը քնել է, իսկ մյուսը պատրաստվում է քնելու։ Հասկացավ։ Ուրեմն, վանքի մատը խառն է Դրախտիկի անհայտանալու մեջ։ Ի՞նչ անել։ «Ուրեմն, վանքը գործնական միջամտությամբ տնօրինել է իմ և Դրախտիկի ճակատագիրը։ Ի՞նչ իրավունքով, ո՞ւմ իրավունքով։— Եվ անմիջապես պատասխանեց իր իսկ հարցին,— աստծո անունով և նրա իրավունքով։ Մի՞թե պարզ չէ։ Մանավանդ, որ վանքը տիրում է աստծո իրավունքներին և գործում աստծո անունից։ Տեր աստված, ինչո՞ւ ես թույլ տալիս, որ քո անունից խոսեն և գործեն անարժանները։ Ինչո՞ւ ես թողնում քո հավատի պաշտպանությունը անհավատներին։ Ինչո՞ւ ես թողնում, որ չհավատալով՝ պաշտեն քեզ։ Նրանք քո անունով հալածում են քո իսկ գաղափարները։ Ճշմարիտ է, տեր, ես խախտել եմ քեզ տված իմ երդումը, սերը իրավունք եմ սեպել։ Բայց միշտ հավատացել եմ, որ դու կներես իմ մեղքերը, հնարավորություն կտաս մեղքերս քավելու, քանզի դու բարձր ես նույնիսկ ճշմարտությունից, բարձր ես նույնիսկ խղճից, դու աստվա՞ծ ես... Ինչ որ կատարվում է քո անունից՝ անաստվածություն է, տեր։ Ինչ որ արվում է վանքերում և եկեղեցիներում՝ գետնաքարշ է անում մեր հավատը առ աստված։ Ես ցանկացա քեզ ծառայել, ծառայել ոգուն, կարծելով, թե ոգին հավատի միակ ակունքն է և կմոռացնի սիրո գոյությունը։ Ապավինեցի հոգուն, քեզ անմնացորդ նվիրվելու համար, սակայն հայտնվեց սերը, նույնքան խստապահանջ ու խանդոտ, ներիր ինձ, տեր, ես իմ հոգում աստծո հետ, հավատի հետ բնակության իրավունք տվի նաև նրան, քանզի հակառակը անել անկարող էի։ Ես անում եմ այն ամենը, ինչ հրամայում ես դու։ Եթե չէիր ցանկանում, որ սիրեի, ուրեմն կրծքիս տակ սիրտ չպիտի դնեիր։ Եթե դրել ես, ուրեմն սերն ու հավատը չեն խանգարում միմյանց, նրանք նույն սրտի հավերժական բնակիչներն են, նրանց բարեկամությունից է մարդ արարածը մարդանում և նրանց միասնությունից են մեր սրտի բաբախյունն ու ջերմությունը։ Ինչո՞ւ ես, տեր, սիրով հավատը փորձում և հավատով՝ սերը։ Ինչո՞ւ Վախենում եմ բարկությանդ շանթերին արժանանամ, եթե ասեմ ճշմարիտը. հավատն ու սերը հավասար սրբություններ են, մեկը մյուսով չես փոխարինի։ Մարդ արարածը հավատով աստվածանում է, սիրով՝ մարդանում։ Մի զրկիր մարդուն ոչ աստվածանալու և ոչ էլ մարդանալու իրավունքից։ Աստվածանալով մարդը մոտենում է քեզ՝ կատարյալիդ, մարդանալով՝ գտնում է ինքն իրեն, գտնում է մարդուն։ Թույլ տուր հավատի և սիրո միասնությունը մարդ արարածի մեջ։ Հավատն ու սերն առանձին-առանձին պահանջկոտ են ու

խանդոտ միմյանց նկատմամբ, միասին՝ լրացնում են և ամբողջացնում իրար և ներհակությունը վտարում մարդու միջից։ Ինչո՞ւ ես թույլ տալիս, որ Դրախտիկին խլեն ինձանից։ Դու խանդոտ չես, տեր իմ, եթե Դրախտիկին կորցնեմ, կկորցնեմ նաև սիրելու բնատուր տաղանդը։ Էլ ինչպե՞ս սիրեմ քեզ։ Պաշտամունքս սիրո չի փոխվի այլևս։ Եվ հավատս կկորցնի իր ժայռեղեն ամրությունն ու հանուն հավատի զոհաբերվելու կամքը։ Մի թողնի, որ սերը ուժով սպանեն իմ մեջ, որը նշանակում է նաև հավատի որբացում։ Առանց սիրո հավատն արյունաքամ կլինի, առանց հավատի կմեռնի նաև սերը...»։

— Քեզ ի՞նչ պատահեց, այ թխամորուս վանական,— լսեց ծերունու ձայնը,— ինքդ քեզ խոսում ես, խեղճ ծերուկիս էլ դիմում ես, ինչպես աստծուն։ Մե՜ղք է, որդի, մե՜ղք է, մեղավոր հոգեղենիս աստված կոչել...

Այո՛, ինքը դիմում էր աստծուն։ Բողոքում էր։ Մոռացել էր ուր լինելը։ Մոռացել էր ծերունուն, թեև տեսնում էր նրան։ Ուրեմն, խոսել է նելը։ Մոռացել էր ծերունուն, թեև տեսնում էր նրան։ Ուրեմն, խոսել բարձրաձայն, ուրեմն, սերը նրան կտրել էր արար աշխարհից և տիրել էր հոգուն։ Բայց կլսի՞ աստված սիրո ձայնը, կփրկի՞ իր սերը։

— Ոչինչ, ոչինչ, հայրիկ կոչեցի, որ օգնես՝ չօգնեցիր, հիմա աստված եմ կոչում քեզ՝ ասա, ի՞նչ է պատահել տանուտեր Սահակի աղջկան, ախր ես սիրում եմ նրան, ասա, հայրիկ...

— Բան չի պատահել, որդի, տանուտեր Սահակի աղջկան չեն ցանկանում, որ ճգնակյաց վանականը տիրի, չեն ցանկանում արժանանալ աստծո բարկությանը, չեն ցանկանում, որ աղջիկը տանը մնա կամ կուսանաց վանքի ճորտը դառնա և պատրաստվում են մարդու տալ։ Նա նախկին սիրածին այլևս չպետք է տեսնի, մի՞թե պարզ չէ...

— Պարզ է, հայրիկ, պա՜րզ է...

— Գնա, վանական, գնա քո վանքը։ Դու սիրելու իրավունք չունես, դու ամուսնանալու իրավունք չունես, ժառանգներ ունենալու իրավունք չունես, դու աստծունն ես, նրա աչքից ընկնելու իրավունք չունես, այլապես այլևս ոչ սիրելու, ոչ պաշտելու, ոչ էլ հոգիդ աստծո հետ հաշտեցնելու ոչինչ չես ունենա... Աստված ոչ իրեն դավողներին է սիրում, ոչ էլ իրեն պաշտողներին, իմացա՞ր...

— Իսկ ո՞ւմ է սիրում, ո՞ւմ...

— Մի՞թե չգիտես... Նրանց, որոնց հնարավորություն է տալիս հանգիստ, հարուստ և ուզածին պես ապրելու...

— Ուրեմն, աստված միտումնավո՞ր է...

— Այդ մեկն էլ դու իմացիր, ես իմն ասացի...

***

Զարմանալի երազ տեսավ։ Արքայական պարտեզ լիներ ասես։ Խեղդված ծաղկի ու կանաչության մեջ այգին լցված էր աստվածային մեղեդիներով, երաժշտությամբ։ Բարկ բուրում էին վարդերն ու նարգիզները, կակաչներն ու զանգակածաղիկները, շուշաններն ու հասմիկները։ Գույների հրավառություն էր և հնչյունների անձրև։ Սավառնում էին մերկ ու անհմայք, սառն ու դեղեցիկ կանայք։ «Սիրի՜ր, սիրի՜ր...»— ղողանջում էր եթերը։ Բոլորն աստվածային ու անարյուն, բոլորը։ «Ո՞ւմ սիրեմ... Անկյանք սեր կլինի՞...»։ Երաժշտությունը սիրո և ավետյաց հին երգեր ու հիմներ էր արարում։ Ինքը քայլում էր դրախտում, որ լցված էր փերիների խմբերով և որոնում էր իր Եվային։ Եվան չկար։ Աշխարհն ինչ-որ տեղ էր, դրախտից դուրս։ Ինքը դրախտից ազատվելու ելք էր որոնում։ Գեղեցկությունները հաջորդում էին իրար։ Գեղեցկություններն անհոգի էին. ամեն ինչ հիանալի էր, բայց ոչ հմայիչ։ Կանայք հայացք էին գերում, բայց ոչ հոգի։ Մերկ մարմինները շոյում էին հոգին, բայց կիրքը չէր արթնանում։ Ասեն ինչ շքեղ էր ու պաղ, և Գրիգորի հոգին մրրսում էր։ Հետո ընկրկեց շքեղ այգին, սկսեց քաշվել հետ, և նրա առջև փրռվեց հարազատ շենի այգիների կանաչավուն թավուտը։ Քայլում էր ծանոթ արահետով և թփերի մեջ տեսավ Դրախտիկին։ Աղջիկը պառկած էր։ Աչքերը կիսախուփ էին և մշուշված հայացքը կանչող։ Զոքեց նրա անամոթ ու սրբազան մերկության առջև, ինչպես սրբաքարի առջև, և շուրթերով որոնեց նրա շուրթերը։ Աղջկա շուրթերը պատրաստակամ ու հլու հալվեցին իր շուրթերին։ «Ի՞նչ ես ուզում...»— լսեց աղջկա խուլ, կրծքային ձայնը։ «Քեզ եմ ուզում...»— պատասխանեց։ «Ո՜չ, դու ինձ չես ուզում,— դողաց աղջկա ձայնը,— դու ինձ չէ, իմ սերն ես ուզում։ Իմ եսը քեզ հետաքրքիր չէ, դու ինձ բաժանել ես ինձնից և ցանկանում ես միայն սերը, այլապես ինչո՞ւ առ այսօր ես քո կինը չեմ, նույնիսկ հարսնացուն չեմ, այլ միայն սիրած աղջիկը։ Այն անիրավունք սերը, որ դու ծանր շղթայի նման փաթաթել ես իմ վզին, այլևս հանել չի կարելի և այն ինձ կարող է խեղդել։ Դու ոչ միայն չես կարող ամուսնանալ, այլև չես կարող կարգին սիրել այն աղջկան, որի համար պատրաստ ես կյանքդ տալ, քանզի վախենում ես տիրոջ բարկությունից։ Եվ չես էլ ենթադրում, որ առանց սիրո կյանքը ունայնություն է, անպիտան մի էություն, որին կյանք չես կարող անվանել։ Սիրողը, սիրահարը վախկոտ լինել չի կարող, քաջության ակունքը սերն է։ Սերն է, որ շարժում է աշխարհի լուսավոր հզորությունը մթին ուժերի դեմ և անպայման հաղթանակ տանում։ Այդ որքան նկուն է դարձել ոգիդ, որ երկնչում ես նույնիսկ սիրո

վայելքից։ Ես քեզ ընծայաբերում եմ սիրտս, նույնիսկ մարմինս, քանզի սերը դրսևորման ինչ կերպ էլ ունենա, արդար է, մաքուր, իսկ դու, սիրելիս, վերստին հիշում ես քո աստծուն և շուրթերդ սառչում են շուրթերիս չդիպած, սիրալիր խոսքերդ, որոնք ուղղված էին ինձ, դառնում են տիրամորը նվիրված ձոներ, արյունդ, որ եռում էր ինձ հպվելիս, հանկարծ ջուր է դառնում երակներիդ մեջ։ Վախից, սիրելիս, վախից։ Իսկ չե՞ս վախենում և ինչո՞ւ չես վախենում ինձ կորցնելուց։ Իսկ ինձ թվում է, թե սերը կորցնելը՝ կյանքը կորցնելուց ավելի ծանր է։ Նայիր ինձ, Գրիգոր, քանի դեռ չես կորցրել...»։

Գլուխը պտտվում էր հուզմունքից։ Կիրքը սիրուն հունցված սպառնում էր խորտակել թուլատրելիության սահմանները, սպառնում էր Դրախտիկի անմեղությանը։ Սերը հրամայում էր՝ վայելիր, իսկ խստաշունչ և զսպված մի ձայն հիշեցնում էր՝ մի մոռանա ուխտդ... Նորից ընկրկեց. «Տե՛ս, Գրիգոր, պահը կորցնում ես։ Մարմինս պատրաստ է ընդունելու քեզ, սերն է հրամայում, և մեղքը բացառված է։ Մենք ծնվել ենք միմյանց համար։ Դու կորցնում ես պահը։ Ինչո՞ւ։ Դու էլ որտեղի՞ց կճարես նման նվիրված մի սիրտ, նման տաք ու մաքուր մի սեր, նման տենչալի և պատրաստակամ մի մարմին, որոնցով դու պիտի մարդանայիր, նույնիսկ աստվածանայիր, մինչդեռ երկնչում ես աստծուց։ Ես նեղանում եմ քեզանից, մեղադրում եմ իմ մերժվող սիրո համար, իմ չկայացած հարմարության համար, իմ արթնացած մարմնի համար, որին այլևս տհաճ է լինելու սերն ու սիրտ վայելքը։ Իսկ դու, սիրելիս, վազիր քո աստծո մոտ, իջիր մենաստանի խոնավ ու մգլահոտ խցերը, սրտի խորքից բոլոր խոսքերդ հղիր նրան, հացի փոխարեն մոմով սնվիր ու տենչա անհնարը։ Լավ նայիր ինձ, տաղերգու Գրիգոր, թե կարոտես ինձ, ումի՞ց ես առնելու կարոտդ, թե ողբաս կորցրած սերդ, ո՞ւմ գրկում պիտի հեծեծաս ու լաս, թե կարոտես իմ մարմնին, որտեղի՞ց այն աստվածային հնարքը, որ հետ բերես սերդ արդեն ուրիշի գրկից...»։

Արթնացավ քրտինքի մեջ կորած։ Սիրտը ցավում էր, մտքերը ցավում էին։ Երազը ցնցել էր նրան։ Հավատաց երազին։ Չհավատալու պատճառ չկար։ Սերը տեսանելի արագությամբ հեռանում էր իրենից։ Ի՞նչ անել։ Իսկ ի՞նչ կարող էր անել։ Կարող էր խախտել իր ուխտը՝ փախցնել Դրախտիկին։ Չկարողացավ։ Աստված ավելի զորավոր էր, վախը հաղթեց։ Սերը, որ պետք է ուղեկցեր ողջ կյանքում իրեն, պարտվում է։ Միտք ունի՞ այլևս հետամուտ լինել Դրախտիկին, անհեռանկար սիրով քար գցել նրա բախտին։ Իհարկե ոչ։ Բայց ի վիճակի՞ է ինքն ապրել առանց Դրախտիկի սիրո։ Իհարկե, ոչ։ Կխելագարվի, կորստին չի դիմանա։ Էհ, հետո ի՞նչ, Դրախտիկին ի՞նչ... Ի՞նչ կարող է ինքը տալ նրան,

ինչո՞վ կարող է երջանկացնել աղջկան։ Միայն ու միայն սիրո անորոշությամբ, ապագա չունեցող խոստումներով։ Աստված չի թողնի, իր ուխտը չի թողնի, միաբանությունը չի թողնի, իսկ այսօր չեն թողնի նաև աղջկա ծնողները։ Կբանադրեն, կարգալույծ կանեն, կխայտառակեն աշխարհով մեկ։ Սխալը ո՞րն էր։ Սխալ չկար։ Առաջին հայացքից սիրել էին։ Մինչդեռ աշխարհի գոյություն ունեցող օրենքով՝ սիրելու իրավունք չունեին։ Իրավունք չունեին։ Իսկ սիրո իրավունքը չէ՞ որ անսահման է։ Ոչնչով չսահմանափակվող։ Միայն աստված կարող է խախտել սիրողների դաշինքը և մեկ էլ բռնությունը։ Բայց ինչի՞ համար են այս ոչ ինքնատիպ մտքերը։ Իր սիրով նա կարո՞ղ է Դրախտիկին երջանկացնել։ Ոչ, հազար անգամ ոչ։ Ուրեմն ինքը պետք է հեռանա աղջկա ճանապարհից։ Միևնույն է, եթե հիմա Դրախտիկը կարողանար կոտրել ծնողների դիմադրությունը և ցանկանար հարսնանալ իրեն, ինքն անկարող է նրան փեսայանալ. կոտրված է իր կամքը, ինքը չի կարող ամուսնության որոշում կայացնել։ Ուրեմն, մնում է միայն բարի ճանապարհ մաղթել աղջկան։ Այնուամենայնիվ, կամքի հսկայական ուժով նա կարողացավ հանգել այս եզրակացությանը։ Հիմա հարկավոր է հաշտվել այս մտքին, աղջկանից ընդմիշտ հեռանալու մտքին։ Սա միակ ընդունելի ճանապարհն է։ Վերջապես, ինքը գիտեր, որ ճգնակենցաղ միաբանությունում բացառվում է ոչ միայն ամուսնությունը, այլևս կանանց տեսակցելը, նույնիսկ խոսելը։ Պետք է ապրել վանքի օրենքներով, այլապես վանքը կարող է վրեժխնդիր լինել երդմնազանցներից։

Վանքի խցի նեղլիկ լուսամուտից երևում էր երկնքի մի կապույտ և սարալանջի մի կանաչ պատառ, ուրիշ ոչինչ. «Երևի այս մեծ աշխարհից ինձ հասանելիքները սրանք են,— խորհեց դառնությամբ,— մնացածը թող երազանքին ու երազին մնա։ Որքան աղքատիկ է իրական կյանքը, երևի նույնքան և ավելի շքեղ է լինում երազանքը։ Դու իմը չեղար, Դրախտիկ, բայց դու կլինես իմը՝ իմ տաղերում, իմ երազներում։ Քեզ ես կհագցնեմ աստվածամոր զգեստ, քո գեղեցկությունը կընծայեմ նրան, և իմը կդառնաս և՛ դու, Դրախտիկ, և՛ տիրամայրը...

Եվ բարձրաձայն արտասվեց։

ՆԵՐՎԱՆԱԿԱՆ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐ

Խուլ աղմուկ էր, որ գնալով ահագնանում էր, մոտենալով վանքին։ Վանքը, որ չէր ականջում ձայներին, հետո սրեց լսողությունը, լարվեց։ Ձայները պարզվում էին։ Շինականները, ողջ Նարեկի շենը հոսում էին ոչ

բարձրադիր տափարակը, ուր պպզել էր Նարեկավանքը իր կից կառույցներով։ Աղմուկը եկավ, եկավ և դիպչելով գոց դարպասին՝ կանգ առավ։ Ճգնում էր եթե ոչ խորտակել, գոնե բացել։

— Բացե՛ք դարպասը...

— Ի՞նչ է պատահել,— հարցրին ներսից։

— Բացեք, ամեն ինչ կասենք...

— Չենք կարող։ Միաբանության դպրանոցում պարապմունքի պահ է...

— Չե՞ք կամենում բացել, դարպասը կխորտակենք,— սպառնացին միաբերան,— դիպվածը ձեզ է վերաբերում, հոգևոր հայրեր, սուրբ հայրեր,— հեգնեցին։

— Ի՞նչ է պատահել, վերջապես ասելո՞ւ եք, թե ոչ,— հսկիչները ձգտում էին վիճակի պարզեցման, զգալով, որ շինականները խիստ հուզված են և տագնապալի է վիճակը։

— Շինականնե՛ր,— գոռաց տարեց գյուղացիներից մեկը,— շինականներ, մոտեցրեք գերանները։ Վանականները դարպասը բանալու միտք չունեն, հարկավոր է խորտակել, ինչպես իրենք խորտակում են մեր պատիվը...

Դարպասն ամուր չէր։ Առանց դժվարության կրնկահան տապալվեց, և ամբոխը խուլ մռլտոցով հոսեց վանքի բակը։ Աղմուկը այլևս արգելք չունենալով, անարգել հառաչեց դեպի վանահոր խուցը։ Եվ հանկարծ ասես հրամանով մեխվեց տեղում։ Ընդհատվեց։ Դռան առջև, պլեհեր մազերն ուսերն ի վար, արծաթ խաչը գլխից վեր պարզած արձանացել էր վանահայրը, աչքերում զարմանք և ապա զայրույթ։ Ամբոխը սակայն զինաթափ չէր։ Նա խոսք ուներ ասելու վանահորը։ Զայրույթ ուներ, որ դատարկելու ելք էր որոնում։

— Հայր սուրբ, այս ինչե՞ր են կատարում աստծո սպասավոր կոչեցյալները։ Ելուզակնե՞ր, թե սարակինոսներ, հագարացինե՞ր, թե...— խեղդվում է տարեց շինականը։

— Իսկ ի՞նչ է պատահել...— հանգիստ ու արժանապատվորեն հարցրեց վանահայրը՝ Անանիա Նարեկացին։

— Ասելու բան չէ, հայր սուրբ, բերանս չի զորում խոսելու այն անպատիվ արարքից, որ կատարել է միաբանությանդ վարդապետ Ղազարոսը։ Խաչիձորում...— կմկմաց ծերունին ու լռեց։ Միրուքը դողդողում էր, շփոթվել և չէր կարողանում ավարտել իր խոսքը։

— Ի՞նչ է արել,— առանց շինականի տագնապին ենթարկվելու հանգիստ խոսեց վանահայրը։ Ամբոխը մեկեն արթնացավ, շարժվեց, աղմկեց բազմաձայն։ Սկսեցին խոսել բոլորը։ Խոսքի թելը կորավ ամբոխի ջղաձիգ գոռոցների և ճիչերի մեջ։ Կանայք ծնկներն էին ծեծում և բարձրաձայն անիծում վարդապետին. վավաշ, պագշոտ, շնացող բառերը մեկ-մեկ որսում էր վանահոր լսողությունը, բայց աղմուկի մեջ դեռևս չէր պարզվում ամբոխի ցասման դրդապատճառը։ Մի պառավ մամիկ նետվեց առաջ։ Երեսը խաչակնքելով, անատամ բերանով նա նզովքներ ու անեծքներ էր լմլմացնում վարդապետի հասցեին.

— Տեր աստվա՛ծ, երեսս ոտքիդ տակ, լսվածը լսեցինք, չտեսնվածը տեսանք։ Աստծո սպասավորները դարձան աստծո թշնամիները։ Աշխարհիս վերջն է, հայր սուրբ։ Վերջն է աշխարհիս հայոց, վա՛յ մեզ, վա՛յ մեզ, վա՛յ մեզ...

Անանիան խաչակիր ձեռքը շեշտ բարձրացրեց.

— Վերջապես ի՞նչ է պատահել, պարզ բարբառեցեք հատկանանք...

Առաջացավ գեղջավագը։ Վանահայրը նորից բարձրացրեց ձեռքը։ Լսելու նշան արեց։

— Խոսի՛ր, Գուրգեն...

— Հայր սուրբ, այսօր լույս աղոթարանին,— ցույց տվեց ծերունուն,— Մարուքի հարսը գառներն իջեցրել է խաչիձոր և... աղբյուրի մոտ միաբանությանդ նզովյալ վարդապետ Ղազարոսը հանդիպելով նրան, կամեցել է գրկել։ Ճիշտն ասած՝ գրկել է։ Հարսը ճչացել է, փորձել է ազատվել, բայց անօգուտ։ Վարդապետը փորձել է բռնի ուժով համբուրել, տիրանալ նրան։ Հարսն ապտակել է պագշոտ հերձվածողին, բայց վարդապետը չի ընկրկել, նորից փորձել է...

— Բավակա՞ն է...— Անանիայի ձայնը հնչեց հրամանի նման։ Նա գունատ էր, աչքերն այրվում էին՝ ամոթի՞ց, չարությունի՞ց, թե զայրույթի բռնկումից՝ հայտնի չէ։ Խաչը սեղմած ափը դողում էր։ Մեռելի գունատություն ունեցող դեմքը դիմակի տպավորություն էր թողնում։ Մեռնող, մեռած մարդու դիմակ։ Շրթունքները շարժվեցին, և նա լսելի ձայնով հարցրեց,— տեսնողներ եղե՞լ են...

— Գառնարածները հարսի ճիչը լսելով հասել են օգնության։ Նրանք էլ փրկել են հարսին՝ շան բերանից... Քարահալած արել, հայր Անանիա։ Փախել է անառակը, սակայն պատռված դեմքով և արյունլվա։ Կարող եք ստուգել...

Գրիգորը միաբանության մի քանի անդամների հետ կանգնած էր Անանիա Նարեկացու թիկունքում և ամոթախառն վհատությամբ լսում էր խայտառակ պատմությունը։ Վարդապետի անբարո արարքի յուրաքանչյուր մանրամասն ցնցում էր ամբոխին, քամում նրա զայրույթը, լցնում առանց այն էլ շինականի համբերության արդեն թափվող գավաթը։ Նա ահով էր նայում մի մարմին ու մի հոգի դարձած ամբոխի յու-

բաքանչյուր շարժմանը։ Նկատելի էր, որ շինականները գինված են։ Նրանց ջղուտ ափերի մեջ սեղմված քարերից ասես պիտի ծորար զայրույթի և ատելության ծարավի արյունը։ Վատ թաքցրած դաշույններ ու կացիններ էին ծիկրակում ամբոխի մեջ։ Դրությունը գնալով տագնապալի և սպառնալից էր դառնում։

Գեղջավագը նորից առաջացավ.

— Հայր Անանիա՛,— առավել ամուր ձայնով շարունակեց իր կիսատ խոսքը,— Նարեկ գյուղը միշտ հավատարիմ է եղել աշխարհիկ և հոգևոր տերերին։ Ոչ մի անաստված գործով աչքի չի ընկել շենը Նարեկ, ոչ մի։ Թոնդրակյան իրարանցումներին մեր գյուղը ոչ միայն չարձագանքեց, այլև մնաց անսասան, հավատարիմ իր աստծուն և աստվածային ծեսերին։ Հայր Անանիա, Նարեկի շենը հանձնարարել է ինձ բանակցել վանքի հոգևոր հայրերիդ հետ, շնացող և վավաշ Ղազարոսին իր ձեռքը հանձնելու։ Շենը կամենում է ինքն անել կապը կտրածի դատը։ Ինքը սահմանել նրա պատժաչափը և ինքը պատժել աստվածամերժին և անառակին։ Խնդրում եմ, հայր Անանիա, շանը հանձնեցեք մեր ձեռքը, և մենք արդար, իր մեղքին արժանի դատավճիռ կանենք...

— Այսինքն կհանձնեք մահին, այդպես չէ՞...— հարցրեց վանահայրը։

— Շանը՝ շան մահ,— մռլտաց ամբոխը։

— Այդպես էլ գիտեի։ Հարգելով ձեզ և ձեր պահանջը համարելով օրինավոր, պետք է, այնուամենայնիվ, մերժեմ ձեզ։ Դատի ու դատաստանի իրավունքը վերապահված է միայն հոգևոր ու աշխարհիկ իշխանություններին։ Մանավանդ, որ հանցագործը կրոնական բարձրաստիճան անձ է։ Ես ձեզ խոստանում եմ արդարացի դատ մեղավորի նկատմամբ, հանգամանքների ճիշտ քննարկումով։ Եթե հոգևոր ատյանի դատավճիռը մեղմ թվա ձեզ՝ նրա հանցանքի համեմատ, մենք նրան կմատնենք ավելի բարձր ատյանի դատին, թող նա ուղղի կատարված սխալը...

— Հայր Անանիա, վարդապետ Ղազարոսին հանձնեք մեր դատին, դա որոշում է, ոչ միայն խնդիրք, այլև պահանջ...

— Քո խոսքի մեջ, գեղջավագ, շեշտված սպառնալիք կա, դա լավ նշան չէ...

— Քեզ շատ եմ հարգում, հայր Անանիա, բայց պարտ եմ իմացածս ասելու, որ այս խմորը դեռ շատ ջուր է վերցնելու։ Նարեկաշենն իր պատիվն անարգված է համարում, այն էլ աստծո սպասավորի կողմից։ Նարեկաշենն իր աստծուն անարգված և Նարեկավանքի սրբությունը աղտոտված է համարում, այն էլ աստծո բարձրաստիճան սպասավորի կողմից։ Հարսի ամուսինը, ընտանիքն ամբողջ՝ իրենց ընտանեկան սուրբ մաքրություն անարգված են համարում, այն էլ աստծո սպասավորի կողմից և պահանջում են իրենց հանձնել անարգողին, շնացողին և աստծո թշնամուն...

— Ո՛վ շինականներ, գնացեք խաղաղությամբ, մենք իրար կհանդիպենք հոգևոր դատից հետո։ Մենք դեռ պարտ ենք խորհրդակցելու աշխարհիս հոգևոր առաջնորդների հետ։ Եթե գոյություն ունի նման կարգ, եթե նրանք թույլ տան՝ հանցագործին կհանձնենք ձեզ։ Այն էլ ասեմ, որ դեմ չլինելով ձեր պահանջին՝ նրան ձեզ հանձնելու իրավունք չունեմ։ Գնացեք ձեր բան ու գործին, հավատացնում եմ, որ մեղավորը կստանա արժանի պատիժ և դուք չեք դժգոհի...

— Մենք այստեղից չենք գնա մինչև մեր ձեռքը չհանձնեք վարդապետ Ղազարոսին։ Նման մեղավոր հոգիները, այն էլ աստվածանիստ հաստատությունում՝ աստվածընդդեմ բան է։ Նա իրավունք չունի իր ներկայությամբ պղծելու այս տաճարը, ուր աստծո գովքն են բուրվառում, ուր աստծո պատկերով, պատգամներով ու խոսքով մաքրագործում, ազնըվացնում են մարդկանց...

— Գեղջավագ Գուրգեն, դու լավ գիտես մեր պարտականությունների էությունը, սակայն չգիտես մեր իրավունքների սահմանները։ Մեր պարտականություններն ավելի են, քան մեր իրավունքները։ Այնուհետև, վրեժը թող չփակի ձեր աչքերը, չմեռցնի մարդկային գութը ձեր մեջ։ Դու, Գուրգեն, և դուք, շինականներ, մոռանում եք, որ աստված խիղճ է և գթասրտություն, որ մեղանչողին կարող է փրկել զղջումը՝ աղոթքն առ աստված, որ մեղքերի թողությունը աստծո գթասրտության արդյունք է և մեղավորի մեծագույն դատավորն աստված է...

— Հայր Անանիա, դու կարո՞ղ ես միջնորդել աստծո առջև, որ նա Ղազարոսի մեղքերին թողություն տա։ Աստված կարո՞ղ է ներել իր սպասավորի շնանալը, տարփասիրությունը։ Կրքերին հագուրդ տալու համար բռնություն բանեցնելը... Կարո՞ղ է...

— Բայց մենք չենք պատրաստվում ներելու վարդապետ Ղազարոսին։ Մեր պատիժը խիստ կլինի նրա նկատմամբ։ Շինականներ, մենք այդ ախտավարակ հոգուն կարգալույծ կանենք, կվտարենք միաբանությունից և կհանձնենք հոգևոր բարձրագույն ատյանի դատին։ Կարծում եմ, որ ատյանը խստագույն պատիժ կսահմանի մեղավորին, և առաջին հերթին հոգեպես...

— Մենք հենց դրանից էլ վախենում ենք, հայր սուրբ, որ նա ջրից չոր դուրս գա, որ դուք պատիժ սահմանեք նրա մեղավոր հոգու համար, իսկ նա շարունակի իր մարմնական, իր անբարոյական կյանքը։ Այդ պատճառով էլ պահանջում ենք նրան հանձնել մեր դատին...

— Բայց դուք դատելու իրավունք չունեք, իսկ դատաստան տեսնելը թեկուզ ամենավտանգավոր հանցագործի նկատմամբ՝ աստվածընդդեմ է... Դուք ձեր անիրավունք իրավունքով եթե մահվան մատնեք նրան, ապա կվաստակեք մարդասպանի անուն և մեղադրյալի աթոռին, որին ցանկանում եք տեսնել Ղազարոսին, կարժանանաք ինքներդ...

— Մենք պատրաստ ենք ամեն ինչի, միայն թե պատժվի աստծո և մարդկանց ոխերիմը...

— Գեղջավագ, տեսնում եմ պակաս չես բանավիճելու շնորհքից, և տրամաբանելու ձիրք ունես, և խոսքդ առաջ մղելու համառություն...

— Ի՞նչ անենք, ուսուցչապետ, ի՞նչ խորհուրդ ունես մեզ համար...

— Գնացեք խաղաղությամբ, գեղջավագ, ձերբազատվեք պատժելու մնատակար կրքից։ Մեղավորը կստանա արժանի պատիժը, դա անկասկած է...

Շինականները, որ լսում էին այս երկխոսությունը, արթնացան վերստին։ Դժգոհության աղմուկը թույլ չէր տալիս բերան բացելու, քանզի գոռում և աղմկում էին բոլորը։ Ընդհանուր իրարանցման մեջ լսելի էին սպառնալից բացականչություններ, առավել տաքգլուխները կոչ էին անում հարձակվել վանքի վրա, գողանալ և քառատել նրան՝ «մա՛հ շնացողին», «կատաղած շներին թունավորել»։

— Լռե՛լ...— և Անանիան բարձրացրեց խաչը,— գեղջավագ, դու պարտ ես կարգ հաստատել... Եվ իմացեք, վանքը ասպատակության ասպարեզ չէ, այլ աստվածության, հավատի, սրբության հաստատություն...

— Իսկ ձեր սրբերի հետ ի՞նչ գործ ունեն սատանաները...

— Լավ, հարմար վայր է աստվածության համար։ Աստծուն վարկաբեկողների պատսպարան...

— Ինչո՞ւ եք աստծուն հալածում, վանահայր... Դուք, աստծո սպասավորներդ, երբևէ լսե՞լ եք, տեսե՞լ եք նման խայտառակություն, որ վարդապետը շնանալ ու բռնանալ փորձի...

Աղմուկը դադարեցնելու ջանքերը զուր էին։ Գյուղացիները հայտնագործել էին ապստամբելու, ընդվզելու հարմարագույն առիթ։ Դա շատ լավ էր հասկանում հայր Անանիան։ Հայոց աշխարհը վարակված էր թոնդրակյան ըմբոստության գաղափարներով։ Հարյուր տարուց ավելի է Թոնդրակ լեռը ծխում էր ժողովրդի ատելությունն ու դարավոր մաղձը, որ դիպչում էր եկեղեցուն և վանքերին ու առավել՝ աստվածասպասարկու հոգևորականությանը։ Թոնդրակյան գյուղ չէր Նարեկը, բայց Թոնդրակը հոգիներին և տրամադրություններին ազդելու, ըմբոստություն հրահրելու օրինակ էր։ Հնարավոր բռնկումից՝ ու բախումից խուսափելու համար հարկավոր էր ելք գտնել։

— Լռեք, զավակնե՛րս,— կրկին խոսեց Անանիան,— ձեր պահանջը կատարելու համար խոստանում եմ, այսօր իսկ, մեղավորին ուղարկել գահանիստ Աղթամար՝ զնդանելու։ Գնացեք հոգևոր ատյանի դուռը։ Գնացեք ձեր ճշմարտության հետևից, ձեր արդար վճիռը, ճշմարտությունը պարտադրեք դատող մարմիններին։ Հուսով եմ, որ դուք կշահեք դատը...

— Դուք պիտի դատեք նրան, դա ձեր իրավունքն է ու պարտականությունը..

— Ոչ, զավակներս, նման ծանր հանցագործությունը դատելու իրավունքը մերը չէ։ Մենք իրավասու չենք լուծելու կյանքի և մահվան հարցեր։ Որքան հասկանում եմ, դուք կատարած հանցանքի դիմաց ցանկանում եք վարդապետ Ղազարոսի կյանքը, միայն նրա կյանքը, այդպես չէ՞...

— Այո՛, ոչ ավել, ոչ պակաս...

— Ուրեմն, դիմեցեք բարձրագույն ատյանին։

Անանիան քայլեց դեպի վանքի հետնամուտքը։ Գրիգորը քայլ արավ նրա հետ։ Շինականները չշարժվեցին։ Սակայն աղմուկը դադարել էր։ Խորհում էին, խորհրդակցում, որոշում անելիքները։ Համառորեն հետամուտ իրենց պահանջին, շինականները բաժանվեցին խմբերի և շրջապատեցին վանքը, հսկողության տակ վերցնելով ելքերն ու մուտքերը։ Ելումուտ անողների մեջ Ղազարոսի ծպտված փախուստը, վանքից ճողոպրելը բացառվում էր։

— Կալանել և նետել զնդան։ Մութն ընկնելուն պես հարկավոր է ուղարկել իշխանությունների տնօրինությանը,— կարգադրեց Անանիան։

«Մեղա քեզ, տե՛ր, բազմիցս մեղա։ Քո օրինակին հետևելով մենք պարտ էինք մաքրվել, սակայն, ավա՜ղ, ավելի կեղտոտվեցինք։ Օ՜, հոգևոր մաքրություն, քո օրինակը մեզ պետք է որ հոգեպես առողջացներ, սակայն ինչո՞ւ ախտավարակ դարձանք։ Դու՝ կատարյալդ, մեզ հուշում ես կատարելություն, բայց ավելի քան անկատար ու մեղսալից դարձանք։ Մխում ենք քեզ, բայց սատանան է աղտոտում մեր մտքերը։ Ինչո՞ւ է մարդը գահավիժում մարդկայնությունից։ Ինչո՞ւ է աստվածընդդեմ նույնիսկ աստվածապաշտը։ Ներիր մեզ, տե՛ր, ուրեմն, մեր սիրտ մեջ թերացել ենք, նենդել ենք, կեղծել ենք մեր սերն անգամ։ Ինչո՞ւ էր քո անունից բարբառող քո սպասավորը դատապարտում իմ մաքուր սերը, որը լոկ իրավունքի խախտում էր իմ կողմից, իսկ ինքը կատարում այնպիսի արարք, որ դու, տեր երկնային, դու անգամ անկարող ես ներել նրան, քանզի նա աղտոտեց աստվածային մաքրությունն ու մարդկային առաքինությունը միաժամանակ, և սատանային հարեց ու երկրպագեց։ Ներիր մեզ, տե՛ր, ներիր քո ստեղծածներին, ովքեր երկրպագելով քեզ,

զլանում են քո պատգամների կատարումը և քո աստվածությանդ լույսի վրա բիծ առ բիծ ավելացնում իրենց մեղքերը, որոնք դու ոչ թողություն տալու, ոչ էլ ներելու հնարն ունես...»։

***

Վանքն ընկղմված էր խավարի ու լռության մեջ։ Լուռ էր նաև շրջակայքը։ Խաբուսիկ լռություն։ Վանահայրը քանիցս փորձեց զրուցել զընդանված Ղազարոսի հետ, բայց չէր կարողանում։

Ատելությունն ու զզվանքը հետ էին պահում։ Գահավորակին նստած վանահայրը փորձում էր մտովին պատկերացնել այդ հանդիպումը, զրույցը ու դրա հետևանքները։ Եվ գնալով համոզվում էր, որ չի կարող Ղազարոսին հանդիպել։ Ասես պիտի շփվեր թունավոր օձի կամ լպրծուն մի խավարասերի հետ, որոնք միայն տհաճություն, միայն տրամադրության անկում են խոստանում։ Ղազարոսը այն վարդապետներից էր, միաբանության այն անդամներից, որ չուներ որևէ թերացում, ոչ մի դիտողություն չէր ստացել միաբանության կողմից։ Շեղումներ չուներ։ Մինչև այս խայտառակ դիպվածը անբասիր վարքի և աշխատասիրության օրինակ էր հանդիսացել։ Սակայն նա այն միաբաններից էր, որ թեև աշխատասեր, սակայն շնորհազուրկ էր։ Գիտության և այլ ասպարեզներում որևէ առաջադիմություն չուներ։ Բայց անթերի պահվածքը, միաբանությանը որևէ բանով օգտակար լինելու պատրաստակամությունը կաշառող էին և ստիպում էին Անանիային աչք փակել նրա շնորհների բացակայության հանդեպ։ Վանահորը դուր չէր գալիս նրա բնավորությունը, բամբասասեր էր, բամբասում էր՝ ցավելով։ Մատնում էր՝ համարյա արտասվելով, խարդավում էր՝ ասես ինքն էր իր խարդավանքի զոհը։ Սակայն իր զրպարտություններում համառ էր ու հետևողական։ Վանահորը հանդիպելու յուրաքանչյուր առիթ օգտագործում էր ուխտի անդամների վարքագիծը վերլուծելու համար։ Բնութագրում էր նրանց, իսկ նրա բնութագրերը իսկական մատնություն էին, որոնց իսկությունը հաճախ կառուցված էր լինում ենթադրությունների և զրպարտությունների վրա։ Նրան չէին սիրում, բայց չէին փորձում առարկել, վիճել նրա հետ, քանզի ամբաստանվելու ահը, ծանր փորձությանը դիմանալն այնքան էլ հեշտ չէր։ Անանիան ծանր ու թեթև էր անում այն ահավոր վիճակը, որին բարոյապես համարյա անկարելի էր դիմագրավել։ «Խայտառակվեցինք։ Միաբանությանս բարի անունը ցեխի ու կեղտի մեջ պիտի տրորվի աշխարհում հայոց։ Ի՞նչ պատասխան ենք տալու երկնային, նրա երկրային տեղապահներին և բարեպաշտ ժողովրդին»։ Մի

կողմից էլ հոգեկան թեթևություն էր զգում, որ վերջապես ազատվելու է նրանից, գլխացավանքից, որ նրա նմանները պատճառում են միաբանությանը։ «Միայն թե, նորից ճմլվում էր սիրտը, այն այպանքը, որ ընկնելու է միաբանության վրա, նրա մեծ հռչակը պիտի խառնի ճշմարտության այն կեղտաջրերին, որ հեղինակել էր շնացող և նմանը չունեցող աստվածասպանը։ Իհարկե, ճիշտ են, հազար անգամ ճիշտ են շինականներն իրենց կատաղի զայրույթի և անկիրթ կատաղության մեջ։ Նրանք հարգում են սրբությունը, բարոյականությունը կյանքից թանկ են սեպում և հավատի համար մեռնելը համարում են բախտավորություն։ Ինչպե՞ս վարվել շնացողի հետ, որ սանձակոծ չլինի շինականների ցասումը, ինչպե՞ս... Եվ վերջապես, նույն Ղազարոսը, Կունծիկ ու Խաչիկ միաբանները, առ այսօր միասնական ու հետևողական իրենց զրպարտչական գործունեության մեջ, քանիցս դառնացրել են իրեն, մեղադրելով հազար ու մի մահացու մեղքերի մեջ, քանիցս պահանջել են բանադրել Գրիգորին իբրև թոնդրակյանի, հերձվածողի և վավաշի և առաջարկել են օտարել միաբանությունից։ Մեկ շաբաթ, այո՛, այո՛, մեկ շաբաթ առաջ նրանք նորից ներխուժեցին վանահոր մոտ և պահանջեցին Նարեկի վանքն ազատել աստծո թշնամիներից։ Ինքը տկար էր, հազիվ արտաբերեց.

— Բայց նա տաղանդավոր է։ Աստվածատուր են նրա շնորհները...

— Հետո ի՞նչ... Ո՞վ կարող է ասել, որ տաղանդավոր չի եղել աստվածամերժ Սմբատ Զարեհավանցին, բայց ո՞վ կարող է պաշտպանել Զարեհավանցուն...

— Գրիգոր Նարեկացին Սմբատ Զարեհավանցի չէ... Զգուշացիր ճանաչիր։

— Օ՜, ո՜չ, հայր Անանիա, նա Զարեհավանցի չէ, բայց նրա բանակից է, թոնդրակյա՜ն...

— Ապացո՜ւյց, ապացո՜ւյց...

— Ահավասի՜կ, ահավասի՜կ,— և Ղազարը ծոցից հանեց կիսատված մագաղաթը,— խնդրեմ, «աչքը ծով ի ծով ծիծաղախիտ... Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթեր... ծոցն լուսավոր, կարմիր վարդով լցեալ...»։ Հայր Անանիա, կարո՞ղ է որևէ մեկը բացառել, որ այս վավաշ տաղը ձոնված չէ աստվածամորը...

— Ե՜ս, ե՜ս,— առաջ նետվեց Կունծիկ աբեղան,— այդ տաղի աստվածամայրը, մեղա՜ քեզ, տե՜ր, մեղա՜... Մանակերտ գյուղի տանուտերի աղջիկն է՝ Դրախտիկը... Նա Գրիգորի տաղերում միշտ աստվածամոր դեր է կատարում։

— Ապացո՜ւյց,— սրտի ցավից գոռաց Անանիան։

— Ես նրանց բռնել եմ շնանալիս, այն էլ քանի՜ անգամ։ Գրիգորը աստվածամերժ անձ է, հայր Անանիա։ Ես տեսել եմ, թե ինչպես է նա ձեռքերով, շրթներով ուղղակի հոշոտում այդ կիսամերկ, սիրունիկ անառակին...

— Ուրիշ ապացույց, էլ ո՞վ կարող է վկայել, որ Գրիգորը շնանում է Դրախտիկի հետ։ Ո՞վ կարող է աստվածամոր նկարագրի մեջ ճանաչել Դրախտիկին։ Խոսեցե՛ք, ապացուցե՛ք... Հետո, Կունծիկ աբեղա, խընդրում եմ պատճառաբանել, արդարացնել քո վարքագծի օրինականությունը։ Ո՞վ է քեզ հանձնարարել՝ լրտեսելու վարդապետ Գրիգորին։ Մի՞թե դու միաբանությունում ուրիշ անելիքներ չունես։ Ինչո՞վ ես զբաղված՝ ոչնչով, ավելի ճիշտ, լրտեսությամբ ու բանսարկությամբ։ Միաբանությանս դպրանոցում ուսուցանում են ամեն ինչ։ Գիտություն, տաղերգություն, երաժշտություն, իմաստասիրություն, ամեն ինչ, բացի լրտեսությունից, բանսարկությունից, մարդկանց հետքերը հոտոտելուց։ Իսկ դուք, այդ երեքդ, չե՞ք մտածում, որ ճգնակենցաղ միաբանության սուղ միջոցները տրվում են ձեզ մատենագիտությամբ, բանասիրությամբ, ճարտասանությամբ զբաղվելու, այլ ոչ թե միաբանությանս անդամներին վարկաբեկ անելու և այպանելու համար։ Լավ չէ, պատվաբեր չէ...

— Հայր Անանիա՛,— չհամբերեց Ղազարոսը,— մենք կամենում ենք օգնել միաբանությանը մաքրվելու, ազատվելու մեղքերից։ Կամենում ենք Նարեկյան ուխտը տեսնել առանց թոնդրակյանների, իսկ դու մեզ անվանարկում ես։ Արդյո՞ք քո մեջ չի խոսում ազգականի, արյան ձայնը։ Արդյո՞ք այս պարագայում արյան ձայնն ավելի լսելի և հաճո չէ քո սրտին, քան աստծո, աշխարհիս մեղքերից զայրացած աստծո հրամայական ձայնը՝ հանուն մաքրության և աստվածասիրության։ Եվ, վերջապես եթե դու չես կամենում կտրուկ միջոցներ ձեռնարկել, մենք կդիմենք աշխարհիս հոգևոր առաջնորդին, եթե հարկ է, նույնիսկ կաթողիկոսին հայոց...

— Հեռացե՛ք, դիմեցեք ում կամենաք, ամբաստանեցեք, որքան հաճո է ձեզ,— հոգնած ընկավ գահավորակին,— իսկ վարդապետ Գրիգորին ես վերցնում եմ իմ պաշտպանության տակ... Նա անմահ է, իսկ անմահները դուրս են դատ ու դատաստանից։ Նրանց տեղը սրբերի շարքում է։

— Թե՞ սատանաների,— ծիծաղեց Ղազարոսը։

Եվ այսօր ամեն բան շրջվեց նրանց դեմ։ «Աղվեսը թակարդն ընկավ զույգ ոտքերով»— խորհեց Անանիան։— Միաբանությունը վերածել են լրտեսության, զրպարտության ասպարեզի, և որովհետև անմաքուր են, սրիկա են՝ ուրիշի համար փորած գերեզմանում ստիպված են բնակվելու իրենք։ Ա՜խ, Գրիգո՛ր, Գրիգոր, եթե պահվածքդ անթերի լիներ, իմ լեզուն այսքան կարճ չէր լինի։ Բայց քո կատարած զանցանքները միամիտ բաներ են այն հանցանքների դիմաց, որ կատարել և կատարում են քո հակառակորդները։ Ի՞նչ անել։ Շինականները վանքի ամբողջ տարածքը, ելքն ու մուտքը փակած սպասում են այդ ճիվաղի հայտնվելուն։ Իրավունք չունեմ նրան հանձնել շինականների դատաստանին, միաժամանակ, ինքս էլ իրավունք չունեմ նրան դատաստանելու, մինչդեռ շինականները խոսում են քառատելուց։ Ի՞նչ անել... Խայտառակությունը՝ խայտառակություն, բայց սրիկաների արարքները միավորում են ազնիվ մարդկանց, հանում պայքարի։ Գոնե որոշ ժամանակ նրանք, այդ ատվածուրացները բաց կթողնեն Գրիգորի օձիքը։ Գոնե որոշ ժամանակ նա անմնացորդ կնվիրվի իր տաղերին, իր բանին ու գործին։ Նա ինչ-որ մեծ ստեղծագործության շուրջն, իր ասելով, մտմտում է օրն ի բուն։ Վանքում գոյություն ունեցող ներհակությունները չեն կարող չվնասել, շարգելակել այդ բերթվածի ծնունդը։ Տե՛ր, դու զորավիգ լեր նրա հանճարին։ Դու, որ նրան քանքարավոր ես ստեղծել, թույլ մի՛ տուր, որ մժղուկներն ու որդերը գիրանան նրա հոգու արյունն ու ավիշը ծծելով։ Նա ծնվել է, որպեսզի իրենով ոչ միայն պանծանա, այլև մեծանա ազգս հայոց և հայանունը ծավալվի աշխարհով մեկ։ Ուրեմն, քո զորավոր աջը թող հովանի լինի հանճարի հայտնությանը...

Անանիան երկու անգամ ծափ զարկեց։ Սպասավորը երևաց դռների մեջ։

— Պատրաստեցեք երկու հոգի պահակներից՝ Ոստան ճանապարհվելու։ Թող զենք վերցնեն պատահականությունից խուսափելու համար։ Հարկավոր է հոգևոր ատյանի դատին հանձնել ուրացողին։ Թուղթ-գրությունն արդեն պատրաստ է։ Մենաստանից պետք է հեռանալ անկատ, գաղտնուղիով, քանզի մենք շրջապատված ենք շինականների ամուր օղակով։ Այս մասին կասես պահակներին...

Սպասավորը խոնարհվեց և անաղմուկ հեռացավ։

***

Դեպքերն առաջացան գլխապտույտ արագությամբ։ Վարդապետ Ղազարոսը Աղթամար չհասավ։ Շինականներն ընկել էին նրա հետքին։ Ուղեկցողները կապկպված ընկած էին լճափին։ Նրանց նույնիսկ ձեռք չէին տվել։ Ղազարոսի անհայտանալու պատմության մանրամասները իմացվեցին միայն պահակների բերանները խցկած լաթերը հանելուց հետո։ Նրանք անմիջապես ցույց տվին լիճը։

— Խեղդամա՞հ արին...

— Այո՛, քարը կապեցին վզից, նավակով տարան ափից բավական հեռու և նետեցին ջուրը...

— Ովքե՞ր էին...

— Շինականներն, էլ ո՞վ...

— Կարո՞ղ եք նրանց ճանաչել...

— Ո՛չ, դեմքերը գոցել էին դիմակներով, գործում էին անխոս, առանց շտապելու։

— Գիշե՞րը վրա հասան...

— Ո՛չ, լուսադեմին, երբ քնած էինք։ Մինչև գլխի ընկանք, արդեն կապկպված էինք... Ոչ մեկիս ձեռք չտվին։ Ծեծելու կամ բռնության փորձ չեղավ։ Նույնիսկ վարդապետին։ Փակեցին բերանն ու գցեցին նավակի մեջ...

Ավելացնելու այլևս ոչինչ չունեին ուղեկցող պահակները։ Վանահայրը շփոթված էր, չգիտեր անելիքը։ Այս ամենը նման էր անամպ երկնքից կարկուտ տեղալուն։ Այսինքն, ցասման ամպերը կային, բայց որ կայծակն այդքան արագ պայթեր, հայր Անանիան չէր սպասում։ «Այս օրերին, երբ թոնդրակյան պայքարը գնալով սրվում է, երբ շինականները առիթի են սպասում աստծո անարժան սպասավորներին պատժելու և ապստամբելու, այս հիմար ու վավաշ ավազակը պարզապես գետնաքարշ արեց միաբանության պատիվն ու անբիծ անունը։ Եթե գահանիստից զորք պահանջենք մեղավորներին ջրի երես հանելու և պատժելու համար, անկասկած է, որ կբռնկվի շինականների ապստամբությունը, որի ընթացքն ու ելքը անհնար է կանխագուշակել։ Լռել նույնպես չի կարելի։ Ինքնադատաստանի փաստը թաքցնելը հանցագործություն կհամարվի։ Սպանված է, թեև երիցս մեղավոր, թեև երիցս մահվան արժանի, կրոնավորը։ Հարկավոր է պատասխան տալ մարդկանց և աստծո առջև։ Ի՞նչ անել, ի՞նչ...»։

Դռների միջև արձանացավ Գրիգորը։ Գունատ էր, աչքերը վառվում էին ներքին տագնապից։ Մինչ Անանիայի զարմացած հայացքը շոշափում էր նրան, նա փլվեց վանահոր առջև.

— Հայր Անանիա՛, հանուն աստծո, հանուն մարդասիրության պատժեցեք ինձ, քանզի ես արժանի չեմ միաբանությանդ, մեղավոր եմ և անպայման արժանի աստծո բարկությանը։ Ես խախտեցի ուխտին տված իմ երդումը, չկարողացա հաղթահարել իմ մարդկային թուլությունները և այժմ, երբ ինձ համար կորած է երկրային սերը, իսկ երկնային սերը դավաճանված, ինձ մնում է զղջումը, որն անօգուտ է։ Մեղանչելը, որ ընդունելի չի երկնային տիրոջը։ Բանադրվելը, որ սիրով կկատարեն ինձ «թոնդրակյան», «վավաշ», «շնացող» և այլ ածականներով հորջորջող

կրոնավորները։ Հայր Անանիա, իմ մեծ բարեկամ, աղաչում եմ քեզ, բանադրեք անարժանիս, որ հոգիս հաշտեցնեմ աշխարհի, աստծո և ինձ հետ, քանզի իմ մեջ կռիվ կա՝ ինձ հետ, իմ դեմ և հոգիս ասպարեզ է ինքնաբզկտման, ինքնամարտության...

Հայր Անանիան զարմացած լսում էր Գրիգորի ասես կրակով շաղախված խոսքերը։ Վանահոր հայացքը խոսուն էր. «Քեզ ի՞նչ է պատահել, Գրիգոր, ի՞նչ է պատահել...»։ Եվ ապա չոր և բարձրաձայն.

— Բարբառիր պարզ և առանց ջղեր սղոցելու...

— Հայր Անանիա, Դրախտիկն ամուսնացել է, Դրախտի՛կը...

— Հիանալի՛ է, զավակս, հիանալի է, դու չկարողացար հաղթահարել սատանայի թովչանքը, հոգու փորձությունը և քեզ օգնեց աստված, օգնեցին աստվածասեր մարդիկ,— ասաց և կծեց լեզուն, քանզի Գրիգորի հայացքում այնքան աղերսանք ու վհատություն կար, որ Անանիան չդիմացավ. «Հարկ չկա վիրավորել նրա զգացմունքները։ Նման հայացք կարող է ունենալ միայն սիրողը, ոչ թե շնացողը»։ Եվ ապա բարձրաձայն,— զավա՛կս, որքան էլ ծանր լինի քեզ համար, միևնույն է, պետք է գար այս օրը։ Այստեղ հսկող աչքը աստծունն է, իսկ նրա աչքից ոչինչ չի վրիպում։ Մոռացիր նրան։ Մոռացության մեջ է փրկությունը, իսկ մխիթարությունը՝ աղոթելու և տիրոջը ծառայելու մեջ։ Իսկ հիմա վեր կաց, որդյակս, բարձրացիր... Մի՛ վհատվիր, ամեն ցավ ունի իր բալասանը։ Չէ՞ որ ինքդ էլ չէիր հավատում քո երկրային սիրո ապագային։ Չէ՞ որ քո և Դրախտիկի միջև կանգնած էր ինքը՝ տերը երկնային...

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, ախր ինչո՞ւ...— հեծեծեց։

— Դու էիր այդպես կամեցել, զավակս, չէ՞ որ երդվել էիր անմնացորդ նվիրվել տիրոջը...

— Օ՜, շատ է պահանջկոտ տերը և խիստ հետևողական, չէ՞ որ ի տրիտուր Դրախտիկի սիրուն ավելի հեշտությամբ սիրտս կտայի, սի՛րտս...

— Զուր ես այդպես բարբառում, զավակս։ Դու սիրտդ ոչ ոքի այլևս տալ, նվիրաբերել չէիր կարող, քանզի այն վաղուց նվիրաբերել էիր աստծուն։ Աղոթիր, զավակս, հոգիդ թեթևացրու կասկածներից, հոգիդ քաջիր մեղքերի ծվեններից։ Տերը մեծահոգի է և գթասիրտ, նա կների քեզ, զի զղջումը մեղքերի ճանաչումն է, հետևաբար քավումը...

— Օգնիր ինձ, հայր Անանիա։ Ես այլևս կամքիս տերը չեմ, ես այլևս ինձ ենթարկվելու ուժ չունեմ, էլ ինչպե՞ս ենթարկվեմ աստծուն։ Այլևս զորություն չունեմ փառաբանելու նրան, քանզի գրիչ բռնելու ուժ չունեմ այլևս։ Չեմ տարբերակում՝ իմ արցունքները կորած սիրո՞ւց են բխում, թե՞ զղջումից, չգիտե՛մ, չգիտե՛մ...

— Գրիգոր, ուժ գտիր վերադառնալու բանական վիճակիդ, այդքան ընկճվել, նվաստանալ հարկավոր չէ։ Դու կորցրած սիրո դիմաց այնպիսի հզոր կովան ունես, ինչպիսին է սերն առ աստված, որով ապրում, մխիթարվում են ամենամեծ վիշտ ապրողները, և սերը կորցնող պարմանիները, և զավակ կորցնող մայրերը, և նույնիսկ հայրենիք կորցնող հերոսները, քանի որ սերն առ աստված զորավիգ է բոլոր նկուն հոգիներին և բոլոր նրանց, ովքեր որոնում են աստծո օգնությունն ու գթասրտությունը... Առանց այն էլ, այսօր քիչ է մնում կորցնեմ իմ հոգու կորովը...

— Գիտեմ, վարդապետ Ղազարի պատմությունը, գիտեմ...

— Դու բոլորը չգիտես, Գրիգոր, չգիտես, որ նրան խեղդել են շինականները։ Նրան սուզել են լճում...

— Այդ ե՞րբ...

— Այսօր մութլուսին։ Հարձակվել են, վնասազերծել պահակախումբը, իսկ վարդապետին խեղդել։ Ես ցանկանում էի քեզ հրավիրել, որ միասին խորհենք, թե ի՞նչ է հարկավոր անել, որ չխայտառակվի մեր Նարեկի ուխտը և ինչպե՞ս անել, որ և՛ անպատիժ չմնան ինքնադատաստան տեսնողները, և՛ չպայթի շինականի զայրույթն, ու ապստամբություն չբռնկվի։ Քեզ պետք է հայտնի լինի, որ թոնդրակյան տրամադրությունները վերածվել են համաճարակի և ճարակում են մեր աշխարհը, որ մենք նստած ենք հրաբուխի վրա...

— Այո՛, հեշտ խնդիր չէ,— աչքերը սրբելով խոսեց Գրիգորը,— դա մի խնդիր է, հայր Անանիա, որ ունի երեք անհայտ։ Ես, նվաստս, այսօր հազիվ թե կարողանամ փոքրիշատե օգտակար լինել այդ անհայտները գտնելու հարցում։ Մի բան սակայն հաստատ գիտեմ։ Հարկավոր չէ զինված միջամտություն։ Ուխտի անդամի կողմից բռնության փորձի համար սահմանվող պատիժների մեջ մահվան դատավճիռը ամենաթեթևն է, իսկ գազազած շինականին վերստին գրգռելը հղի է ծանր հետևանքներով։ Իսկ հիմա, հայր Անանիա, թույլ տուր գնալու իմ խուցը։ Գնամ իմ կորուստը ողբալու։ Գնամ՝ քավելու իմ ունեցած և չունեցած մեղքերը...

— Սպասիր, Գրիգո՛ր, ասուլիսի բաներ կան, որդյակ իմ։ Չէ՞ որ Ղազարոսը իր արարքով քո վրայից հանեց այն մեղքերը, որ պատրաստվում էր շպրտելու քո երեսին։ Ստացվեց ոչ այն է տխուր, ոչ այն է զավեշտական մի խաղ, այսինքն դուրս եկավ, որ սատանայության դեմ մարտնչում են սատանաները։ Այնպես որ նրա կողմնակիցները հետայսու հազիվ թե համարձակվեն խոսել քեզ բանադրելուց...

— Այն, ինչ կատարվում է իմ հոգում, հայր իմ Անանիա, այն կորուստը, որ ես ունեցա,՝ դրանից հետո ինչ էլ լինի, կբանադրե՞ն ինձ, թե չեն բանադրի, աղվեսադրոշմո՞վ կխարանեն, փշե պսակո՞վ, թե՞ դափնեպսակով կզարդարեն իմ ճակատը, միևնույն է, հոռետեսությունը խեղդում է էությունս, կյանքն այնպես է տգեղացել, որ կորցրել է իր կենսական իմաստները...

— Բավակա՛ն է, Գրիգոր, ուշքի եկ։ Եթե չես քաշվում ինձանից, քաշվիր աստծուց։ Քո սերը, վանական աստվածաբանական ուխտի կանոնների համաձայն, ապօրինի էր սեպվում։ Հիմա դու, փա՛ռք աստծո, ի վիճակի ես մաքրվելու մեղքերից և դեն նետելու այն մեղադրանքները, որ շպրտում էին քո դեմքին։ Աստծո սպասավորն ու ծառան այդքան նկուն լինել չի կարող։ Նորից, բազմիցս անգամ եմ կրկնում. ապավինիր աստծուն, աղոթիր, նա կհասկանա քեզ և ոչ միայն կների մեղքերդ, այլև զորավիգ կլինի քո հոգևոր առողջությանը։

— Մեղքե՞րդ, մեղքե՞րդ... Ահա թե ինչի հետ չի հաշտվում հոգիս։ Աստված ինձ մարդ է ստեղծել, հետևաբար տվել է նաև սիրելու իրավունքը։ Եթե, հավատարիմ սրտիս ձայնին, սիրել եմ և սիրելու վսեմագույն խորհուրդը՝ սերը, աստծու մեծագույն պարգևն ու շնորհն եմ սեպել։ Ամեն անգամ սիրույս առնչվելիս փառք ու օվսաննաներ եմ խնկարկել աստծուն՝ սերն արարելու, սիրով կյանքն ու աշխարհը իմաստավորելու և գեղեցկացնելու համար։ Մի՞թե այս ամենը մեղք է...

Անանիան առանց առարկելու կամ համաձայնելու լսում էր Գրիգորին։ Նա չուներ այլևս մարտի նետելու ոչ մի կովան։ Գրիգորը սիրել է, սիրում է և կապրի որպես հավերժական սիրահար։ Սիրածը խլեցին նրանից, բայց սերը, սիրելու իրավունքը ոչ ոք չի կարող խլել։ Սերն ու սիրո իրավունքը անկապտելիորեն իրենն է։ «Ինչո՞ւ ենք շարչարում երիտասարդ մարդուն, եթե նա չի կարողանում հաղթահարել սիրո ամենազոր զգացմունքը։ Պետք է ենթադրել, նաև հավատալ, որ այն վեր է մարդկային ուժից։ Ուրեմն միայն երկնավորը կարող է լուծել անլուծելին, որի հեղինակը ինքն է։ Իսկապես, ո՞րն է Գրիգորի մեղքը։ Սերը չի կարելի մեղք համարել։ Մեղքն այստեղ ուրիշ տեղ է... Ով նվիրվել է աստծուն, երկրային սերը դիտում է ապօրինություն՝ դավանանքի, հավատի առումներով։ Աստծուն մենք ի՞նչ իրավունքով ենք վերագրում խանդոտություն այլ սերերի հանդեպ։ Ինչո՞ւ ենք նրա մեծահոգությունը մարդկային թուլություններին ու մեղքերի նկատմամբ զանց առնում և նրան դարձնում մանրախնդիր, փոքրոգի, վրիժառու, ինչո՞ւ... Չէ՞ որ աստված սեր է, սեր է միայն»։

— Կա՛ր, զավակս, քեզ այպանելու կամ մխիթարելու իրավունք ինձ չեմ վերապահում։ Սիրիր քո սերը, տառապիր այդ մեծ զգացմունքով, երևի այդ գործում խառն է աստծո մատը։ Միայն իմ խորհուրդը՝ սերդ

աշխարհի ականջը մի գցիր, մի համարիր համարժեք աստվածասիրության։ Այն էլ ասեմ, զավակս, որ ժամանակը ամենալավ բժիշկն է։ Ժամանակը նաև բարեկամ է մոռացության։ Նա մոռացության մշուշով կպատի այն, ինչ կարող է, իսկ ինչ չի կարող մոռացնել՝ ուրեմն, հավերժական է։

— Սերը հավերժական է, ուսուցչապետ, հավերժական է...

— Թող քո ասածը լինի, Գրիգոր, բայց ժամանակը զորավոր է, հավատա...

— Ես գնամ, ուսուցիչ, շնորհակալ եմ քեզանից, հոգիս թեթևացավ...

— Այսօր, որդյակ իմ, մեր ջուրը մի առվով չի գնում։ Քեզ կանչել էի, որ խորհուրդդ լսեմ, մինչդեռ լսեցի տվայտանքներդ, ցավերը հոգուդ։ Ցանկանո՞ւմ ես գնալ՝ գնա։ Աշխատիր հոգիդ կատարվածի հետ հաշտեցնել։ Հետո կմտածենք, կխորհենք...

— Սիրելի ուսուցիչ, ես հազիվ թե կարողանամ խորհրդատու լինել այնպիսի փորձված ու իմաստուն մեկին, որպիսին դու ես։ Բայց չեմ կարող չասել, որ Ղազարոսին սպանելու իրողությունը քո դեմ, մեր դեմ շրջվելու միտում ունի։ Ինչպե՞ս ես արդարանալու, եթե զրպարտիչները տարածեն, թե սպանությունը կազմակերպվել է վանահոր կողմից, նախ իր թշնամուց ազատվելու և երկրորդը՝ թոնդրակյան գաղափարներով վարակված իր արյունակցին՝ Գրիգոր Նարեկացուն բանադրանքից փրկելու համար։ Եվ ընդհանրապես, ասել, որ այդ ամբողջ քստմնելի պատմությունը սարքովի է, նույնիսկ շնանալու և բռնությամբ ինչ-որ գեղջկուհու տիրելու գարշահոտ հորինվածքը։ Թշնամիները հեշտությամբ չեն զինաթափվի, ուսուցիչ, նրանք կշանան, նույնիսկ, նման դեպքում իրենց գաղափարակից ընկերոջ խայտառակությունից և խայտառակ մահից օգուտ քաղել։ Չնեղանաս, եթե ասեմ, որ քո կարծիքը, թե նրանք կնահանջեն, քանզի խայտառակվել են բարոյապես և ընկել անգամ երկնային տիրոջ աչքից, քո ազնիվ երևակայության արդյունք է...

— Օ՜, զավակս, իսկ դու ասում էիր, որ խելացի խորհրդատու չես։

— Սիրելիդ իմ ուսուցիչ, նրանք, մտքի ու աստծո այդ թշնամիները, այժմ իրար գլխի հավաքված, խուցերի կիսամութի մեջ, թունավոր մրտքեր են որոճում քեզ, ինձ, երրորդին, չորրորդին, այսինքն, իրենց հակառակորդներին հեղինակազրկելու, գահընկեց անելու, մտքերի, սրտերի վրա ազդելու նրանց տաղանդը ի չիք դարձնելու ուղղությամբ։ Նրանց համար կանոնավոր, շնորհազարդ մարդկանց այպանելը, թոնդրակյան հռչակելը սովորական առօրյա աշխատանք է, քանզի խիղճը, որ պետք է արթնանար և ըմբոստանար նրանց դեմ, պարզվում է, որ վաղուց վաճառել են զրպարտությանը, ամբաստանությանը, բամբասանքին։ Մի քանի օր առաջ իմ խուցի դռանը բռնեցի Կոնձիկ աբեղային՝ ականջելիս։ Արտասանում էի նոր գրած «Տաղ վարդավառինը»։ Ասում եմ՝ ինձ որ կոչում ես թոնդրակյան, շնացող և հազարոսմի հայհոյանք ես տեղում իմ հասցեին, զրպարտագրերով ողողելով հայ աշխարհիս բոլոր հոգևոր առաջնորդներին, դու հավատո՞ւմ ես քո գրածներին։ Գիտես, ուսուցիչ, այդ ավազակը ազնվություն ունեցավ խոստովանելու, որ չի հավատում։ Իսկ ինչի՞ համար ես հորինում այդ զրպարտագրերը։ Ասում է՝ պայքարի մեջ նպատակին հասնելու բոլոր միջոցները ընդունելի են։ Թքեցի գարշելիի երեսին։ Նման աներես մարդու համար են ասել, թե՝ երեսին թքում են, ասում է՝ անձրև է գալիս։

— Զավակս, դու, ինչպես միշտ, ճիշտ ես բարբառում։ Նրանք երբեք չեն խորշելու սրիկայությունից, ծրագրում են հրեշավոր կեղծիքներ, հորինում են կոտոշավոր ստեր, իսկ մենք, զավակս, նրանց դեմ ճակատում ենք մի զենքով, որ մեր օրերում ոչ թե զենք է, այլ թուլություն, այսինքն, ազնվությամբ, բարությամբ, մաքրությամբ։ Սրանք զենքեր չեն։ Մինչդեռ հարկավոր է, որ մենք էլ զինվենք։ Մինչև հիմա մենք միայն պաշտպանվում ենք, այն էլ մի կերպ, հերքելով զրպարտություններ։ Մենք նույն զենքով նրանց դեմ կռվել չենք կարող։ Եթե աստված մարդուն օժտել է տաղանդով, նշանակում է նրան զրկել է բոլոր տեսակի ախտերից։ Ես որ միշտ ամբաստանվել եմ թոնդրակյանության մեջ, գրեցի իմ «Թուղթ հակաճառությանը» և առժամանակ բարոյական փականքով պինդ կողպեցի զրպարտիչների բերանները։ Պահ է, զավակս, որ նման մի բան ձեռնարկես նաև դու։ Նրանք քո դեմ ատամ են սրում։

— Իմ պատճառով ատամ են սրում նաև քո դեմ, ուսուցիչ...

— Ես այդ գիտեմ, զավակս, գիտեմ...

— Ես չեմ կարող, ուսուցիչ։ Նման թուղթ գրել և ուղղել Կճավա ուխտին։ Ես այնտեղ բարեկամներ ունեմ, որոնց դառնացնելն ու արհամարհանքը վաստակելն ինձ համար ավելի դժվար է, քան այս «ուղղափառների» սրիկայություններին դիմանալը։

— Գիտեմ, ես այդ էլ գիտեմ։ Իսկ ես չվախեցա իմ բարեկամների նեղանալուց։ Եվ նրանք հասկացան ինձ և չնեղացան։ Իմ հարաբերությունները, իհարկե, ոչ բացահայտ, շարունակում են նրանց հետ մնալ բարեկամական։ Գրիր, զավակս, գրիր, առանց վախենալու, քո թուղթը մի հասցեագրի ոչ ոքի, եթե չես ցանկանում, բայց գրիր...

— Դժվար է ինձ համար նման բան գրելը։ Թոնդրակյանների հետ սուր խաչաձևելը իմ բանը չէ։ Չեմ կամենում աշխարհին վախկոտ ու անսկզբունք երևալ։

— Քեզ պահպանիր առավել մեծ գործերի համար։ Դույզն ինչ նահանջիր առավել թափով հարձակվելու համար, առավել...

— Դժվար է, հայր Անանիա, տաղերգուն եթե մարտիկ չէ, ո՞ւմ է հարկավոր նրա թեկուզև մեծ գործը։

— Արդեն ասացի, Գրիգոր, մի՛ վախենա, մեզ կհասկանան, մեզ կհասկանան անգամ մեր հետնորդները։ Բոնությունը, զավակս, սրած դանակ է, նրան բռունցքով չես վնասազերծի, բայց կարող ես կորցնել ձեռքերդ... Մենք աստծո առջև չոքած աղաչանք-պաղատանք ենք արել, որ նա պահպանի քեզ, նրա աչը միշտ հովանի լինի քեզ, որ դու ծաղկես, փարթամանա քո տաղանդը հանուն աշխարհիս հայոց, հանուն մեր չարչըրկված ժողովրդի։ Եթե պետք լինի, Գրիգոր, քո ծերացած ուսուցիչը կչոքի քո առջև, կխնդրի, որ դեն նետես գոնե այսօր ըմբոստությունդ, որը այս պահին չի կարող խելացի խորհրդատու լինել քեզ համար...

Անանիան դժվարությամբ վեր կացավ գահավորակից, քայլ արեց դեպի Գրիգորը և չոքեց սալահատակին, տաղերգուի առջև։ Գրիգորի աչքերից կաթեցին արցունքներ։ Նա արագ գրկեց ու բարձրացրեց ուսուցչին.

— Ուսուցիչ, իմ բարի, իմ իմաստուն բարեկամ, կանեմ ինչ կամենաս, ինչ կամենաս, միայն մնա՛, մնա՛ քո բարձունքին...

***

Գիշերն անցավ երազների մեջ։ Ցերեկվա ծանր մղձավանջը ծանր երազի փոխված ողջ գիշերը մինչև լուսաբաց հալածեց նրա քունն ու հանգիստը։ Այլանդակ, հրեշակերպ էակները հալածում էին, և ինքը փախչում էր շնչասպառ, իսկ նրանք հեշտությամբ հասնում էին և նրանց բըրդոտ, մագիլավոր թաթերը իր գլխին հասնելուն պես, սարսափով արթնանում էր բաբախուն կրծքով և քրտինքի մեջ կորած. նույն երազը կրկնվեց մի քանի անգամ։ Հետո փոխվեցին հալածողները, վերջում նրանք կոտոշավոր սատանաներ էին, որոնց մեջ ճանաչեց Կունծիկ և Խաչիկ աբեղաներին և վարդապետ Ղազարոսին։ Նրանք թափահարում էին ճիպոտները, որ սուլում, շաչում էին, և հոհոում փախչող Գրիգորի վրա։

— Շնացո՜ղ... շ՜շ՜շ՜...— շաչում, գալարվում էին օձերը։

— Վավաշ՜շ՜շ՜...— շաչում, գալարվում էին օձերը։

Փախչում էր, թիկունքին զգալով օձեղեն մտրակների մահացու շաչյունը, խայթելու պատրաստ թունավոր խայթի սուր, ցավեցնող խտիտը։ Փախչում էր։ Հետո գլխի ընկավ, որ այլևս հետապնդող չկա։ Շունչը հետ եկավ, սակայն շարունակում էր վազել։ Ոսկե մշուշի մեջ ասես լողանում էր Մանակերտ գյուղը։ Այնտեղ Դրախտիկն էր, Դրախտիկը։ Գարուն էր, զարթոնքի, ծաղկումի, փթթումի հիանալի ժամանակ։ Ծաղկած ծառերը սպիտակազգեստ էին, հարսնևոր։ Ծափեր ու ծիծաղ։ Երգեցիկ գետակը, թռչունների երգչախումբը լցնում էին գարնանային ձայներով ողջ աշխարհը՝ հորիզոնից հորիզոն։

Հետո երևութացավ Դրախտիկը։ Գեղեցիկ, շքեղ ու... սևազգեստ։ Տխուր էր։

— Վերջապես եկա՞ր...— ասաց։

— Ինչո՞ւ ես սևազգեստ,— հարցրեց ինքը,— ախր, այսօր քո հարսանիքի օրն է։

— Սևազգեստ եմ, հարսանեկան չէ, սգի հանդերձների մեջ եմ։ Այսօր իմ հարսանիքն է, սակայն չկա փեսացուս... մեռե՛լ է...

— Բայց ես եկել եմ,— ճչաց ինքը,— եկե՛լ եմ...

— Դու չեկար, վախեցար։ Ասացին, որ քեզ սատանաները կերել են... Ես հարսնացա ուրիշին, նա էլ մեռավ։ Ես սևազգեստ նորահարս եմ...

— Բայց ես եկե՛լ եմ,— գոռաց նորից,— եկե՛լ եմ։ Սատանաներն ինձ հետ գործ չունեն...

— Ուրեմն քեզ կերել են աստծո ծառաները... Դու չկա՛ս, չկա՛ս...

— Լսիր, Դրախտիկ, դու ինչե՞ր ես խոսում։ Ես եկել եմ, քեզ մոտ եմ...

— Եվ չե՞ս վախենում ինձանից, Գրիգոր, ես թունավոր եմ, ես մահացու եմ...— և հոհոաց։

Երազը տևական էր։ Զգում էր, որ երազի մեջ է, սակայն չէր կարողանում արթնանալ։ Քանի անգամ պարզեց ձեռքերը Դրախտիկին որսալու և գրկելու համար, բայց ապարդյուն։ Աղջիկն այդ պահերին տեսլանում էր, անէանում, շրջապատում թողնելով ծիծաղի խենթացնող արձագանքը։ Իսկ երբ բռնեց նրան, ուշ էր արդեն։ Երազն ընդհատվեց։ Արթնացավ։

... Խուցի նեղլիկ լուսամուտը գարնան շքեղությունից գողացել էր մի գեղեցիկ կտոր, արևի փնջով թաթախել ու շոյում էր տաղերգուի հայացքը, որի կոպերի տակ մարմրում էին երազի վերջին ծվենները։ Ծառի ճյուղերի միջից երևում էր հորիզոնին ձուլված լճի կապույտ ծփանքը։ «Հրաշք է աշխարհը, անձեռակերտ, նույնիսկ աստծո ձեռքի հետքերը չեն երևում։ Բայց հոգիս անհաղորդ է այս գեղեցկությանը։ Տեսնում եմ, չեմ հմայվում։ Դատարկ է հոգիս, դատարկվել է։ Անապատվել։ Սերն է ի զորու ափեափ լցնելու մարդու սիրտը, էությունը, սակայն երբ թռչում է սիրո հավքը, սիրտն ամբողջովին դատարկվում ու ամայանում է։ Ի՞նչ անել։ Սերը հետ բերելն անհնար է։ Նոր սեր որոնելը պարապ զբաղմունք, հիմարություն է։ Ինչո՞ւ որբացրիր սերս, աստված, ինչո՞ւ կոտրեցիր սա-

վառնելու պատրաստ թևերս։ Հիմա ինչպե՞ս ապրեմ, ինչո՞վ ոգեշնչվեմ։ Գոնե քո սերը լցրու սրտիս, էությանս մեջ։ Լցրու այնպես, որ պարապ տարածք չմնա։ Այնպես արա, որ սերն ատածո կարողանա դուրս մղել սերը մարդկային։ Աստվածությամբ լցրու էությունս։ Եվ մի՞թե այդ անհնար է քեզ համար, տեր իմ։ Եթե դա վեր է քո ուժից, ինչո՞ւ դատարկեցիր, ինչո՞ւ ստիպեցիր դատարկելու սիրտս Դրախտիկի սիրուց։ Ինչո՞վ լցնեմ այդ պարապը, այդ ահավոր վիհը։ Դրախտիկը, այդ կենդանի շընչող, շենշող աստվածուհին գնաց երջանկացնելու ուրիշին։ Ես կորցրի, մեղա՜ քեզ, տեր, բազմիցս մեղա, իմ երկրային աստվածուհուն, որն այդպես էլ չունի իր երկնային համարժեքը...»։

***

Վասպուրական աշխարհի հոգևոր հովիվը՝ Ստեփանոսը, երևաց անմիջապես։ Նրան ուղեկցում էր հոգևորականների պատկառելի շքախումբը։ Վանահայրը նրանց դիմավորեց վանական մեծ դռան առջև և հրավիրեց միաբանության դահլիճը։

— Վասպուրական աշխարհն այս էլ երկրորդ անգամ ծննդաբերեց ապօրինի զավակ,— առանց նախաբանի, առանց հարցեր տալու և բացատրություններ լսելու տխսեց նա,— հայր Անանիա, ես չեմ կարծում, որ Ղազար վարդապետի արարքն ավելի փոքր մեղք է, քան թոնդրակյան խառնակությանը մասնակից լինելը։ Ո՞վ էր լսել, ո՞վ էր լսել, որ ճգնակենցաղ վանականը փորձի բռնությամբ տիրելու կնոջը։ Խայտառակության ի՞նչ աստիճան, անբարոյականության որպիսի՞ ցնցող դրսևորում և շնանալու որպիսի՞ ճղճիմ օրինակ, վա՜յ մեզ, վա՜յ մեզ, վա՜յ մեզ, ի՞նչ պատասխան ենք տալու երկնային տիրոջը։ Օ՜, տեր իմ, տեր իմ, թող խլանային ունկերս, թող կուրանային աչքերս, չլսեի, չտեսնեի հովվության մեր տարածքում նման անաստված արարք։ Եվ կյանքով հատուցեց իր մեղքը։ Պատիժը խիստ է, ապօրինի, սակայն այդ մահը չփրկեց Ղազարոսին բարոյական մահից, անարգանքի սյունին գամվելուց։ Մահը նման հանցանքի համար չափազանց մեղմ պատիժ է, մեղավորին ազատում է պատասխանատվությունից և լոկ հոգին է, որ պետք է հրաճարակվի դժոխքի բոցերում։ Ի դեպ, հայր Անանիա, դու նրա հետ չե՞ս խոսել իր արարքի շուրջ։

— Մխոք ունե՞ր ադդյոք շանը հարցնել, թե ինչո՞ւ է շնություն արել։ Փաստն այնքան եղկելի է, սրբազա՜ն, որ հոգիս ի բուռ, էլի անկարող եղա նույնիսկ երեսը տեսնել։ Թվում էր, թե պետք է օձի, բորենու հանդիպեի, չկարողացա, սրբազան, չկարողացա...

— Դու ճիշտ ես, հազարապատիկ ճիշտ։ Նման մարդակերպ, բայց անմարդկային էակներին հանդիպելը ոչ այլ ինչ է, քան ատածո պատիժ։ Հա՜, ի դեպ, սպանողներին գտնելու մասին ի՞նչ կասես։ Աշխարհիկ իշխանություններն զբաղվո՞ւմ են այդ հոգսով։

— Մեղքս ինչ թաքցնեմ, սրբազա՜ն, նրանց մասնակից չեմ դարձրել գործին։

— Լավ չես արել, հայր Անանիա, հարկավոր է պատժել, անպայման պատժել սպանողներին։ Շինականը երես է առել, լկտիացել է։ Ինքնադատաստանել նշանակում է խռովություն բարձրացնել։ Տես, ո՞ւր է միտում շինականը։ Դեպի թոնդրակյան խժդժությունների, ինքնագլուխ դատաստանի...

— Դրանից էլ զգուշացա, սրբազան, եթե ճիշտն ասեմ, երկնչեցի։ Հուզված է Նարեկ գյուղը։ Գրգռված՝ անմարդկային, անաստված արարքից։ Շինականները բնավ չեն կասկածում իրենց իրավացիությանը։ Ինքնադատաստանելուն ինքս խիստ դեմ եմ և երկար համոզում ու խնդրում էի չանել այդ բանը։ Չհամոզվեցին, ուրեմն, ինքնադատաստանը համարեցին ահավոր մեղքի հատուցումը, արժանի, արդար դատավճիռ։ Իսկ հիմա, եթե մենք զորաց ուժին դիմենք մեղավորներ որսալու նպատակով, բոլորիս լավ հայտնի է, սրբազան, որտեղ զորաց ուժ և միջամտություն, այնտեղ էլ բռնություն։ Եթե մի քանի անմեղ կամ մեղավոր շինականի կոտանքների ենթարկեն կամ կալանեն, այսինքն չոր փայտին մոտեցնեն խանձողը՝ հրդեհ կբռնկվի։ Ոտքի կելնի ողջ Նարեկը, իսկ քիչ անդին Մանակերտ մեծ շենն է, կրակը կհասնի նաև նրան, իսկ այդ շեները ցայսօր եղել են աստվածասեր և տիրասեր, երբեք տուրք չեն տվել թոնդրակյան խառնակություններին։ Ինչո՞ւ մեր կամքով ու մեր ձեռքով նրանց հանձնենք թոնդրակյան շարժմանը, ինչո՞ւ բորբոքենք խռովության անթեղը...

— Անանիա, հարգելիս, քո զգուշավորության մեջ վախը շատ է, քան խելամտությունը, թեև դու, դու հայ աշխարհի մեծագույն մտածողներից ես և ազգիս ուսուցչապետներից։ Ասենք, մեղավորներին ձեռք չտվինք, արձակեցինք ի բաց, չպատժեցինք։ Բայց ո՞վ կարող է երաշխավորել, թե նրանք չեն կատարի հերթական սպանությունը։ Ի՞նչ անենք այն ժամանակ, նորի՞ց լռենք, վախենալով ապստամբության հեռանկարից։ Ո՛չ, հարկավոր է, պետք է, որ Նարեկը ինքնադատաստանի համար պատասխան տա։ Թող մեր ձեռքը հանձնեն մեղավորներին կամ գյուղովի կանգնեն զորական մերկ սրերի դեմ։ Արյո՞ւն կթափվի։ Թո՞ղ թափվի։ Ներկա գեպքում արյուն ոթելը նշանակում է՝ առողջացնել շինականներին և

թույլ չտալ, կանխել նրանց շրջվելը մեր դեմ, ինչպես Թոնդրակյաններն արեցին Ապահունիքում, ինչպես ցուրաբերդցիները՝ Սյունիքում և այլն։ Շինականի արյունը կարծում ես ավելի կարմիր է, քան մե՞րը, քան աստծո սպասավորների՞նը...

— Խնդրում եմ, սրբազան, խնդրում եմ աստծո անունով չանել այդ բանը, ափից չհանել շինականին։ Թոնդրակյան ապստամբությունը մի՞թե խրատ չեղավ մեզ։ Մի՞թե չտեսանք շինականի սանձակոծ չարությունը, որ այնքան աղետներ բերեց աստծո սպասավորներին։ Տես, թե ինչ է ասում շինականն իր մասին՝ գյուղ կանգնի, գերան կկոտրի։ Իսկ եթե Նարեկին միանան շրջակա գյուղերը, որ միանգամայն հնարավոր է, մեծ արյունահեղություն կլինի, սրբազան, նորից եմ խնդրում...

— Հարգելի ուսուցչապետ, ես արդեն ասացի, որ եթե չպատժվեն հանցագործները, եթե ապօրինի արարքը, որ կատարել են այդ անաստվածները, անպատիժ մնա, չարագործությունները օրինական ուժ կստանան և կշարունակվեն։ Իմացիր, նրանք մեր ձեռքը պիտի հանձնեն մարդասպաններին, կամ մենք ստիպված, ճարահատյալ պետք է պատժենք նրանց գյուղը։

— Լավ խորհեցեք, սրբազա՛ն, այլապես սխալն ուղղելն ուշ կլինի...

— Ես սկսում եմ կասկածել, որ դու, հայր սուրբ, որ դու հոգով ու սրտով այդ բռի շինականների հետ ես։

— Այո՛, սրբազան, ես հոգով ու սրտով նրանց հետ եմ, ծառայում եմ նրանց և միշտ փորձում եմ հաշտ պահել ժողովրդիս աստծո հետ։ Իմ կոչումն է ազգին ծառայելը, ոչ թե նրա արյունը ողթելը։

— Քո կոչումը աստծուն ծառայելն է, մենք բոլորս նրա ծառաներն ենք...

— Եթե աստծո ծառաներն ենք, ապա ժողովրդի հոգևոր հովիվներն ենք, նրա ուսուցիչները, ովքեր իրենց սաներին նախատելու իրավունք ունեն, սակայն չունեն արյունը ողթելու իրավունքը։

— Իսկ եթե նրանք հեղում են հոգևոր հովիվների արյո՞ւնը, սրան ի՞նչ կասես...

— Ներկա դեպքում հարցը վերաբերում է ոչ թե հոգևոր հովվին, այլ բռնաբարողին, շնացողին, վավաշին, որին հասնում է պատժի առավելը...

— Բայց այն չպետք է ի կատար ածվի շինականների ձեռքերով։

— Միանգամայն ճիշտ է, սրբազան, կամայականությունը, ինքնադատաստանը պետք է պատժվի, բայց այն չպետք է պատճառ դառնա տասնյակ ու հարյուրավոր մարդկային կյանքերի կործանման, պետք է պատժվի լոկ մեղավորը։

— Հարկավոր է հեռանկարով մտածել, հայր Անանիա։ Հարկավոր է սովորեցնել շինականին, որ նա իր ոտքը երկարի իր վերմակի չափով, այսինքն ճանաչի իր չափը։

— Իսկ որքա՞ն է շինականի իրավունքի չափը, գուցե անիրավունք վինելը, որ գլխին պոպոք ջարդեն, նա լռի՞։ Օրը ցերեկով փորձեն կնոջը բռնաբարել, նա լռի՞։ Ո՛չ, սրբազան, շինականը մարդ է, մարդ, աստծո պատկերով և ավելի նվիրված իր հավատին, քան աստծո շատ սպասավորներ։

— Ես լսել էի քո Թոնդրակյան տրամադրությունների մասին, հայր Անանիա, սակայն չէի հավատում, որ այդ գաղափարները դու քարոզում ես բացահայտորեն, առանց մտքերդ թաքցնելու։ Հարկ է, որ այս մասին դու լավ խորհես։ Այդ գաղափարների համար քո ճակատը չեն համբուրի։ Քեզ ոչ աստված կների, ոչ աստծո սպասավորները։

— Ես Թոնդրակյան չեմ, առ այսօր լոկ ես եմ կանգնել նրանց դեմ, իմ «Հակաճառություն ընդդեմ Թոնդրակեցիների» աշխատությամբ։ Նրանց գաղափարական նետերի դեմ ես եմ կանգնած և ոչ թե նրանց հայհոյողները։ Իսկ հիմա ինձ շարունակում է իմ սանը՝ Գրիգորը։ Այնպես որ մեզ հաճո է իմանալ, թե դու ինչպե՞ս ես պայքարում Թոնդրակյան վարդապետության դեմ և ի՞նչ ծառայություններ ունես մատուցած հայ առաքելական եկեղեցուն։

— Մի չափազանցի ծառայություններդ, հայր Անանիա, քո գաղափարակից բարեկամների մեծ մասը Թոնդրակյաններ են։ Այդ փաստը մեզ քաջ հայտնի է։ Մեկ նրանց ես աչքով անում, մեկ՝ մեզ։ Դա անընդունելի է։ Իսկ ես գնդեր եմ շարժել եկեղեցու թշնամիների դեմ։ Իմացի՛ր...

— Դու ինձ երկերեսանիության մեջ չես կարող մեղադրել։ Իմ խոսքը ես գրչով եմ ասել։ Իսկ ինչ գրված է գրչով, չի ջնջվի բրչով։ Ինձ պաշտպանվել հարկավոր չէ։ Ինձ հաջողվեց փաստերով մերկացնել Թոնդրակյանների աղանդի սնանկությունը։ Դուք, աստծո «ուղղափառ» սպասավորներդ, գաղափարական այլ զենք չունեք Թոնդրակյանների դեմ, բացի իմ աշխատությունից։ Այնուհետև, դու մի հպարտանա, մանավանդ ամաչիր պարծենալուց նրանով, որ գնդեր ես շարժել Թոնդրակյանների դեմ։ Ներիր ինձ, սրբազան, մեղմ ասած, այդ գործը սազական է ոչ թե աստծո անունից բարբառող բարձրաստիճան հոգևորականին, այլ աշխարհիկ, ասենք, զորականի մասնագիտությանը։ Իհարկե, ճիշտ կլիներ, եթե փոխեիր քո մասնագիտությունը՝ այն մոտեցնելով քո գործունեության բնույթին...

— Ուրեմն, դու հանդգնում ես ինձ զորակա՞ն կոչել...

— Այո՛, ինչպես դու ինձ՝ Թոնդրակյան։ Սա դեռ լիարժեք պատասխան չէ քո վիրավորանքի։ Կարծում եմ, կգա իսկական պատասխանի օրը...

— Սպառնալիքից բացի, էլ ի՞նչ ունես ասելու...

— Կասեմ, որ քո ձեռքերն արյունոտ են։

— Այդ արյունով ես լվացել եմ այն մեղքերը, որ հանդգնում էին տիրոջ դեմ հերձվածողները...

— Արյուն ոթելով մեղքեր չեն լվանում, այլ դառնում են մարդասպան։

— Օ՜, տեր իմ աստված, լսո՞ւմ ես քո ծառային, քեզ սրիկաներից պաշտպանողին ինչ լուտանքներ են բաժին ընկնում։ Այվես չկան մեծավոր ու փոքրավոր, իշխան ու շինական, տեր ու ծառա, թացն ու չորը խառնվել են իրար։ Քեզ պաշտպանող աստվածասերը հորջորջվում է մարդասպան, իսկ մարդասպան խռովահույզ շինականների վրայից ճրգնում են հանել մեղքը, օ՜ աստված... Լսիր, հայր Անանիա, այժմ ինձ ծանոթացրու սանիդ՝ Գրիգոր Նարեկացու հետ։ Ասում են՝ աստվածամոր սրբազան կերպարի մեջ նա դրել է, մեղա՜ քեզ, տեր, իր բոզի պատկերը։ Ասում են՝ նա կապ ունի, տեսնողներ են եղել, Կճավա ուխտի անդամ, Թոնդրակյան Մուշեղ վարդապետի հետ։ Ասում են՝ ոչ միայն ասում, այլ այդ մասին ինձ տեղյակ է պահել Սյունյաց հովվապետ Վահանը, որի հետ վիճել, կռվել է Գրիգորը՝ Թոնդրակյանների նկատմամբ խստություններ կիրառելու համար։ Տեսնում ես, հայր Անանիա, քո սանը հանդես է գալիս քո թեզերով ու քո օգնությամբ։

Գրիգորը մտավ դահլիճ և խոնարհվեց ներկաներին։ Նա զննում էր հոգևոր առաջնորդների դեմքերը, որ ամպած էին, աչքերը, որոնց մեջ ատելության բռնկումները շարունակում էին առկայծել։ «Վիճել, կռվել են երևի իմ պատճառով»։

— Առաջ արի, երիտասարդ վարդապետ, հը՛մ, հայր սուրբ։ Ասում են՝ մեծ արագությամբ սլանում ես հոգևոր և բանաստեղծական սանդուղքներով։ Ասում են՝ շնորհաշատ տաղերգու ես։ Եվ որ գլխավորն է, երբեմն երկնային և երկրային կանանց խառնում ես իրար, ճի՞շտ է...

— Չեմ հասկանում, սրբազա՛ն։ Երկնային ու երկրային կանանց նմանությունը հասկանալի է, իսկ տարբերությունը չեմ հասկանում։ Տարբերությունը երևի պետք է որոնել նրանց բնակատեղիի մեջ՝ մեկը երկնքում է, մյուսը՝ երկրում։ Եվ ապա առաջինի աստվածային ծագումի և երկրորդի հողեղեն լինելու մեջ։ Իսկ աստծո և մարդ արարածի արտաքինները խիստ նման են, քանզի աստված տղամարդուն տվել է իր պատկերը, իսկ կնոջը՝ աստվածամոր։ Հետևապես, առկա է պարտադիր նմանությունը...

— Բայց ասում են՝ քո երգած աստվածամայրը շատ է հիշեցնում քո... սիրած աղջկան...

— Ինչպե՞ս թե հիշեցնում է։ Ես չեմ նկարում, սրբազան, այլ նկարագրում եմ։ Ո՞վ կարող է հաստատել, որ նա հիշեցնում է որևէ մեկին։ Հետո, աստվածամայրն անտեսանելի է, նա ոչ ոքի չի հայտնվում, որ պատկերը կայունանա և դառնա ճանաչելի մարդկանց։ Այնպես որ, սրբազան, այդ լուրերը ստահոդ բանսարկություններ են...

— Բայց դու, զավակս, չհերքեցիր քո ապօրինի սիրային կապի գոյությունը, այդ մասին ի՞նչ կասես...

— Այո՛, օրինավոր մեծ սեր է եղել և ցավոք սրտի անցել...

— Ինչո՞ւ ցավոք...

— Քանզի սերն աստվածաստեղծ ամենագեղեցիկ զգացմունքն է...

— Բայց ոչ քեզ համար։ Ճգնակենցաղ ուխտի անդամի համար մեղք է սեպվում։

— Հենց այդ պատճառով էլ իմ սիրած էակը իմ կինը չէ...

— Դու ճանաչո՞ւմ ես Կճավա ուխտի միաբան Մուշեղ անունով վարդապետին։

— Այո՛, Ավելադաշտի ողբերգությունից հետո հանդիպել եմ...

— Ինչպե՞ս ծանոթացաք...

— Նույն ճանապարհը նրան բերում էր Մոկաց, իսկ ինձ՝ Ռշտունյաց աշխարհը։ Ճանապարհին ծանոթացանք։

— Ի՞նչ էիր անում Ավելադաշտի ճակատամարտում...

— Տերունական զորքերի հետ մասնակցում էի գրոհներին...

— Մուշեղ վարդապետը կարո՞ղ էր լինել ավելադաշտցիների հետ։

— Ո՛չ, Ավելադաշտից մազապուրծներ չեն եղել։ Սպանվել, ոչնչացել են բոլորը։

— Բացառություններ չե՞ն եղել։

— Միայն երեխաները։ Կանայք և ծերերն անգամ չեն փրկվել սպանդից։

— Իսկ ո՞ւմ հետ է եղել Մուշեղ վարդապետը...

— Արդեն ասել եմ։ Նա ճակատամարտին չի մասնակցել...

— Ի՞նչ դավանանքի զինվոր է Մուշեղ վարդապետը...

— Լսի՛ր, սրբազան,— ցասումից եռաց Գրիգորը,— ինչի՞ համար է այս ստորացուցիչ հարցաքննությունը։ Ես հոգեքննիչ չեմ և չեմ զբաղվել լրտեսությամբ ու մատնությամբ։ Որքան գիտեմ՝ Մուշեղ վարդապետը

Կճավա ուխտից է և գտնվում է քո հովվության տիրույթում։ Քեզ հետաքրքրող հարցերի պատասխանը որոնիր և ստացիր ինքդ, բավակա՛ն է...

— Որդյակ իմ, ապստամբ հոգի, այս տեղեկությունները նախ և առաջ հարկավոր են քեզ, եթե ճիշտն ես ուզում իմանալ, քո փրկության համար։

— Ես ջրահեղձ չեմ։ Շղթայված չեմ։ Գերված չեմ, մահացու ախտով բռնված չեմ։ Եվ փրկության կարիք չունեմ։ Քո հարցաքննությունից պարզվում է, որ և՛ խեղդվող եմ, և՛ կալանված, և՛ գերված, և՛ ախտապարզվում է, որ և՛ խեղդվող եմ, և՛ կալանված, և՛ գերված, և՛ ախտավարակ։ Իսկ մատնությունը պարտավոր եմ իմ պարտքը համարել, սեփական կաշին փրկելու համար։ Իմացի՛ր, ես այդ գնով փրկվել չեմ ցանկանում և գերադասում եմ կործանումը...

— Մի՛ այպանիր քո ավագ բարեկամին, Գրիգոր։ Ես վիրավորանքը կուլ տվողներից չեմ, հավատացնում եմ։ Ուզում եմ բաժանվենք բարեկամների նման։ Միայն մի հարց և վերջ։ Ի՞նչ էր անում Մուշեղ վարդապետը Ավելադաշտի կողմերում...

— Մենք միմյանց երբեք չենք հասկանա, սրբազան։ Դու համառում ես։ Ես այլևս ասելիք չունեմ։

— Այնուամենայնիվ, ես ցանկանում եմ շարունակել հարցաքննությունը։ Ինձ չպատասխանելու իրավունք դու չունես, լսո՞ւմ ես, չունես։ Պատասխանիր, ինչո՞ւ վիրավորեցիր Ավելադաշտի հերոսին՝ Վահան սրբազանին...

— Վահան սրբազանը հերո՞ս... Աստվա՛ծ իմ, հանկարծ սրբերի կարգը չանցնի՞, աստվա՛ծ իմ... Ինչո՞ւ եմ հերոսին վիրավորել. անսրտության և անդթության, մարդկային արյունը արհամարհելու համար...

— Կռվի մեջ փլավ չեն բաժանում...

— Զորականի համար հարցի լուծման ճանապարհը առնչվում է արյանն ու զոհերին, հոգևորականի համար՝ խղճին։

— Դու գիտես, որ քեզ ներկայացվող վերոհիշյալ մեղքերից յուրաքանչյուրի համար կարող ես բանադրվել...

— Դու ոչ մի մեղք չես ներկայացրել ինձ, ես ոչ մի մեղք չեմ տեսնում։ Իսկ բանադրվելը մեր օրերում սովորական բան է... Ով կասկածի տեղիք է տալիս, ում միտքը խավարը ցրելու միտում ունի, ենթակա է բանադրման...

— Օրինակ, ապացույց...— ոռնաց Ստեփանոսը։

— Հուսիկ վարդապետը մեղադրվեց նույն բանում, ինչ ես։ Նկարել էր մի սքանչելի տիրամայր, նման մի կաքավողի։ Նրան զնդան նետեցին։ Այնտեղից նա արևերես չելավ։ Մեռավ, թե մեռցրին, ո՞վ գիտե...

— Օ՜, Գրիգոր վարդապետ, դու բոլոր հարցերի պատասխանները ունես, իհարկե, քո մեկնաբանմամբ...

— Անպատասխան հարցեր չկան, սրբազան, կարևորը մեկնաբանելն է...

— Ինչո՞վ ես զբաղված...

— «Թուղթ» եմ գրում՝ բանավեճ թոնդրակյանների հետ։ Կարծում եմ, չեմ պարտվի...

— Այդպես, այդպե՞ս... Ուրեմն, ապահովում ես քեզ բանադրանքից։ Լավ, լավ... Սակայն եթե անհրաժեշտություն զգացվեց քեզ դատելու, դժվար թե ինձ հաջողվի քեզ փրկել բանադրանքից։

— Մնացեք խաղաղությամբ...

Գրիգորը թողեց դահլիճը։ Եպիսկոպոս Ստեփանոսը ծուռ նայեց Անանիային։ Հայացքները հանդիպեցին։ Վանահոր հայացքում չթաքնված արհամարհանք կարդաց եպիսկոպոսը։

— Պարզվում է, քեզ այնքան չի հետաքրքրում Ղազարոսի պատմությունը, որքան միաբանության տնօրինության և այս երիտասարդ տաղերգուի վարքը, սրբազան։ Արդյոք հարկավո՞ր էր այս տհաճ հարցաքննությունը։

— Ցավում եմ, հայր Անանիա, շա՜տ եմ ցավում, որ այս երիտասարդ տաղանդի ուղիղ ճանապարհը դարձրել ես դժվարանց, դարձրել ես թոնդրակյան։ Ցավում եմ...

— Կարծեմ վերջանում է քո այցելությունը, սրբազան, և մենք էլ անգործ չենք։ Գուցե պահ է միմյանց հրաժեշտ տալու...

Եվ ցույց տվեց դուռը։

Նարեկի միաբանությանը հասավ այս աղմուկը, հոգևոր հովվապետի ընդգծված միտումնավորությունը։ Միաբանությունը վրդովվեց, շարժվեց տեղից և հոսեց դահլիճ, ուր վրդովված հետ ու առաջ էր քայլում սրբազանը։

— Ուրեմն, դու ինձ վռնդո՞ւմ ես, դու աշխարհիս հոգևոր հովվին վռնդո՞ւմ ես Նարեկա վանքից։ Ես այս վիրավորանքը կուլ չեմ տա։ Տե՛ս, թե ո՞ւր է հասնում աստվածուրացությունն ու հոգևոր հովվապետի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը։ Ո՞ւր հասանք, աստվա՛ծ իմ...

— Այո՛, սրբազան, նայիր, լավ նայիր ինքդ քեզ, կարո՞ղ ես ականջել քո իսկ խոսքը։ Դու առանց վիրավորելու ի վիճակի չես խոսք խոսելու։ Մի՞թե դա սազական է հոգևոր առաջնորդին...

Ուսուցչապետի այս խոսքերի վրա աղմուկով բացվեց դահլիճի ծանր դուռը և մի խումբ միաբաններ մտան ներս։ Նարեկի միաբանության նշանավոր գործիչներ, իմաստասերներ, մատենագիրներ, երաժիշտներ, գրիչ-

ներ, միաբանության հարստությունն ու հպարտությունը։ Ասելիք ունեին Ստեփանոս եպիսկոպոսին.

— Ներիր մեզ, սրբազան, անխնդիրք ներխուժման համար։ Չգալ չէինք կարող։

— Միաբանությունն այժմ նման է այն փեթակին, որի մեջ օձ է հայտնվել, և մեղուները մահու և կենաց կռիվ են մղում ու սպանելով՝ մոմով զմռսում ու վնասազերծում են սողունին՝ իրենց ամբարած մեղրը թունավորումից փրկելու համար,— խոսողը վարդապետ Հովհաննեսն էր, իմաստասիրության վավերական հեղինակություններից։

— Ասասեցեք, տղա՛յք,— շրջվեց սրբազանը,— դուք այս ի՞նչ կերպով եք ներկայացնում ձեր հոգևոր առաջնորդին։ Ինչո՞ւ ներխուժել, ինչո՞ւ օձի և փեթակի այլաբանությամբ դիմավորել ինձ, չէ՞նի թե օձը անձս է, որ մտել է ազնիվ, աշխատավոր մեղուների ձեր փեթակը, հը՞... Ի՞նչ է նշանակում...

— Թույլ տուր վերջացնելու մեր խոսքը, սրբազան։ Մենք եկել ենք բողոքելու և ոչ թե հանդիսավոր հանդիպման։ Եվ իզուր մեղք մի վերցնի ոչ քո վրա և ոչ էլ մեղադրիր մեզ... Օձը դու չես, աստված չանի։ Օձեր մեզ մոտ կան։ Մեկը՝ Ղազարոսը, շինականի արդար ձեռքով պատժվեց։ Նա հայոց լուսավորչական եկեղեցու պատիվն այնպես արատավորեց, որ ամենազոր ժամանակն անգամ անկարող կլինի մոռացության մատնելու այդ խայտառակությունը, այդ ախտը մեր հավատի սպասավորների վրայից։ Բայց Ղազարոսով չեն սպառվում փեթակ մտած օձերը։ Մենք լսեցինք, որ դու, սրբազան, ստորացուցիչ հարցաքննության ես ենթարկել նորընծա վարդապետ Գրիգորին, մեր շնորհաշատ տաղերգուին։ Հիմա ցանկանում ենք, ներիր մեզ հանդգնելու համար, հարցնել քեզ՝ պատշա՞ճ է արդյոք նման խայտառակ դիպվածի համար ներկայանալ միաբանություն և ոչինչ չասելով, գնահատական չտալով դիպվածին, մի քանի վայ մեզ-ով սպառելով քննադատական ամբողջ աղքատիկ զինանոցը, այնուհետև, ահաբեկ անել շինականներին և վանքի տնօրինությանն ու հարցաքննել Գրիգոր Նարեկացուն, այն էլ ինչպիսի՜ համառությամբ ու կառչուն հետևողականությամբ, պատշա՞ճ է, հարցնում ենք քեզ, սրբազան։ Մինչդեռ վանքը բզզում է փեթակի նման։ Քո կողմից հովանավորվող Կունծիկ և Խաչիկ աբեղաները դարձել են միաբանության պատուհասները, չարիքը։ Թողնել նրանց, շրջանցել նրանց չարամիտ զրպարտչական գործունեությունն ու շրջվել Գրիգոր Նարեկացու վրա, դա տեսանելի, սակայն, անհասկանալի միտումնավորություն է քո կողմից, որ միաբանությունն ընդունում է ազնիվ զայրույթով։ Խնդրում ենք՝ թափիր քո գոգից միտումնավորության քարերը կամ նետիր ըստ պատկանելույն...

— Ուրեմն, խռովությո՞ւն, ուրեմն ապստամբությո՞ւն...

— Ո՛չ խռովություն, ո՛չ ապստամբություն, այլ դիմադրություն միտումնավորությանդ, սրբազան, այլ հիշեցում պարտականության ճշտիվ կատարման, Ազատիր մեզ, սրբազան, զրպարտիչներից, և մենք գոհ կլինենք։ Ազատիր, ի բաց արձակիր Գրիգոր Նարեկացու օձիքը, և մենք շնորհակալ կլինենք...

— Խռովությո՛ւն, ապստամբությո՛ւն, Թոնդրակը տեղափոխվել է Նարեկ, Նարե՛կ... Ի՞նչ զրպարտիչների մասին է ձեր խոսքը։ Այդ դուք եք զրպարտում աստծո ազնիվ ծառաներին։ Հարկավոր է ձեզ քշել, վռնդել միաբանությունից։ Հարկավոր է մաքրել, զտել միաբանությունը։ Հարկավոր է զտում անցկացնել միաբանությունում, օտարել, բանադրել Թոնդրակյաններին...

— Հանգստացիր, սրբազա՛ն...

— Դո՛ւք, դո՛ւք բոլորդ Թոնդրակյաններ եք, թշնամի մեր աստծուն, թշնամի մեր հավատին, թշնամի մեր ժողովրդին։ Բոլորիդ, անխտիր բոլորիդ պետք է բանադրել։ Դուք մոռացել եք ձեր աստծուն և ձեր հոգևոր հովվի կոչումը։ Եվ արժանի եք աստծո պատժին։ Նայիր, հայր Անանիա, հրճվիր քո մարդկանցով։ Բավական չէր, որ քո դրդմամբ ինքնադատաստանի ենթարկեցին Ղազարոս վարդապետին, այժմ էլ նույնը ցանկանում են կատարել Կունծիկ և Խաչիկ աբեղաների հետ։ Արդեն գալիս է նաև իմ հերթը, ի՜մ... Խռովությո՛ւն, ապստամբությո՛ւն... Ես կճնշեմ, այո՛, այո՛, կճնշեմ, կճզմեմ ձեր ոգին...

— Բավական է, սրբազան։ Դու քո վերջին խոսքն արդեն ասացիր, «ես կճզմեմ, կճնշեմ ձեր ոգին»։ Սա իսկական քո խոսքն է, քո աշխատանքի և քո բնավորության հարազատ արտահայտությունը։ Չեմ կասկածում, որ դու քո խոսքը գործի վերածելու եռանդ, ուժ և հմտություն կունենաս։ Ջարդելու մեջ դու վարպետ ես, ցավալի է, որ նույնքան հմուտ չես քո հոգևոր գործերում։ Բավակա՛ն է։ Այստեղ այլևս չեն ցանկանում լսել քո սպառնալիքները։ Չեն ցանկանում տեսնել չարությունից աղավաղված քո դեմքը, հեռացի՛ր...

***

Այնուամենայնիվ, եպիսկոպոսը զորական ուժ ուղարկեց Նարեկ։ Ծանր օրեր սկսվեցին գյուղի համար։ Գարնան վարուցանքի թեժ օրերին շինականներին կտրում էին գործից և ենթարկում երկար, տառապալից հարցաքննության, որն ուղեկցվում էր անհարկի կտտանքներով, ծեծով, հայհոյանքով։ Ոչինչ դուրս չեկավ։ Գյուղը լռում էր, շինականներն ասես

կորցրել էին խոսելու ունակությունը։ Ոչինչ չգիտեին, ոչինչ չէին տեսել և չէին լսել։

— Շանորդինե՛ր,— գազազել էր հարցուփորձող զորականը,— լուռ են տառեխի նման։ Այնպես են անգիտանում ու զարմանում, ասես վարդապետը ինքն է կապել քարը իր վզից ու ծովը նետվել...

— Շատ հնարավոր է,— առանց հեգնանքի համաձայնեց գեղջավագը։

— Ուղեկցող պահակներն, ախր, տեսել են մեղավորներին,— նեղսրտում էր զորականը։ Նա մտքում հազար անգամ հայհոյել էր նրանց, ովքեր իրեն ուղարկել են ոչ թե կռվելու, այլ հարցաքննելու, որից ինքը գլուխ չի հանում։ Մի հարյուր անգամ էլ հայհոյել էր ու շարունակում էր թունդ հայհոյանքներ տեղալ շինականների վրա, որ լռում են «սատկածների նման»։ Անանիան ստիպված էր ինքը խոսել ավագ զորականի հետ։

— Դու հարցաքննությամբ ոչինչ չես պարզի, զավակս։ Հարկավոր չէ չարացնել, ափից հանել շինականին ու կտրել նրան գարնանային աշխատանքներից։ Հեռացեք խաղաղությամբ, զեկուցեք, որ անհնար է գտնել մեղավորներին, այլապես, եթե շարունակեք նեղել շինականներին, նրանք կապստամբեն։ Ավելորդ զոհեր կլինեն նրանցից, ձերոնցից։ Ժամանակ կանցնի, կհանգստանան կրքերը, կբացվեն փակ բերանները, չցանկանալով, միամտաբար իրենք կմատնեն իրենց։ Գնացե՛ք...

— Հրամայված է՝ ինչ գնով էլ լինի, որսալ հանցագործներին և տեղ հասցնել...

— Որպեսզի նոր մարդասպաններ ի հայտ չգան, գնացեք խաղաղությամբ։ Մենք էլ ականջալուր կլինենք և տեղյակ կդարձնենք ձերոնց...

Զորականները հեռացան գյուղից, սակայն գյուղացիները սրտաղող էին, սպասում էին նոր եկվորների։ Լարվածությունն, այնուամենայնիվ, չթուլացավ։ Մնաց։

Գրիգորը հոգու ծանր տվայտանքները հաղթահարելու բալասանը գտավ աշխատանքի մեջ։ Առավոտից մինչև ուշ գիշեր նստած էր սեղանի առջև։ Լուսաբացը լուսավոր տաղեր էր ներշնչում, մթնշաղը՝ հակաթոնդրակյան բանավիճային «Թղթի» ստեղծումը։ Չէր մոռանում կորուստը։ Յուրաքանչյուր տողի արանքից նրան էր նայում Դրախտիկը՝ իր մեծագույն կորուստը։ Արևածագին նրա ժպիտն էր վառում արդար արեգակի ջահը։ Միջօրեին նա էր խանձում Գրիգորի կարոտները։ Ուշ գիշերին նա էր փակում տաղերգուի աչքերն ու երազներով օրորում նրա քունն ու ընկերանում անքնությանը։ Վերջերս երազներում Դրախտիկը հայտնվում էր միշտ զինավառ, իշխանուհի Սաթենի հանդերձանքով։ Գրիգորի քունքերում աղմկում էր նրա ձիու խրխինջը, տրոփում՝ սմբակների դոփյունը։ Արթնությունը դառնում էր երազի շարունակությունը։ Ունկերում շարունակում էր աղմկել հեռացող նժույգի համաչափ դոփյունը։ Կոպերի տակ դանդաղ հալվում էին Դրախտիկի հեգնոտ ժպիտի ծվեները։ Եվ այսպես յուրաքանչյուր օր Դրախտիկը նրա կարոտների, երազների հյուրն էր և շարունակում էր հուզել ու խռովել նրա հոգին, վառել երբեք չհանգչող կարոտները և հետևել նրա աշխատանքին։ Լինում էր նաև, որ համառում էր երազը, թևածում կոպերի տակից և մեկ, երկու օր մոտ չէր գալիս։ Աներազ գիշերները մղձավանջային մթությամբ ճնշում էին կուրծքը, գոցում շնչառությունը և խեղդում նրան։ Տաղերգուն այդ պահերին սարսափով էր մտածում, որ եթե կորցնի երազի բարեհաճությունը, և Դրախտիկը դադարի այցելելուց, ուրեմն նրան կկորցնի վերստին և կկորցնի անդարձ, հավիտյան։ «Ինչո՞ւ ես հանկարծ խռովում, Դրախտիկ, ինչո՞ւ ես լքում իմ երազները։ Երազը կես կյանք է, պատրանք, իրականության սուտ անդրադարձ, որ ազդում է սրտի, կարոտների և տրամադրության վրա։ Կամակորությունդ, նազուտուզդ դիր մեկդի, Դրախտիկ, և ապրեցրու ինձ երազով, երազում։ Գոնե իմը դարձիր երազներիս մեջ»։ Վերջերս խստացել էր Դրախտիկը։ Աչքերում տխրությանը հյուսված խստության անթաքույց կայծկլտումներ կային։ «Փոխվել ես, Դրախտիկ»— ասաց։ «Իսկ դու մի դավաճանիր քո սկզբունքներին, Գրիգոր»։ «Ի՞նչ ես ակնարկում, սիրելիս»։ «Ո՞ւմ է ուղղված քո «Թուղթը»։ «Կճավա ուխտի անդամ Մուշեղ վարդապետին»։ «Այսինքն, քո բարեկամ Մուշեղի դեմ...»։ «Ցավոք սրտի, դու ճիշտ ես, Դրախտիկ, սակայն կճավա միաբանությունն ինձ կհասկանա, ինչպես հասկացավ ուսուցչապետ Անանիային։ Ինձ հարկավոր է խուսանավել, ավելի ճիշտ խուսափել բանադրվելուց։ Ինձ հարկավոր է համեմատական ազատություն։ Կռվելու համար հարկավոր է, Դրախտիկ, ուժ և իրավունք։ Ես չունեմ ոչ մեկը, ոչ մյուսը։ Բայց կա նաև ուժի և իրավունքի համազոր արժեքը, հավասարվելու հնարքը։ Այդ գործում ինձ օգնելու է իմ «Թուղթը»։ Նա կարող է, ի զորու է պաշտպանելու ինձ անխուսափելի թվացող բանադրանքից։ Հետևաբար, հնարավոր կլինի նվիրվել այն մեծ գործին, որ ուխտել եմ կատարել...»։ «Դիվանագետ ես դառնում, Գրիգորիկ։ Սակայն իմացիր, սիրելիդ իմ, դիվանագետը պետք է երկու երես ունենա՝ իսկական և ցուցադրվելիք։ Այս մեկ։ Հետո, դիվանագետը երբեք մարտիկ չի դառնա։ Իսկ դու պարտավոր ես մարտիկ դառնալ, ոչ թե մարտնչել յուրայիններիդ, գաղափարակիցներիդ դեմ...»։ «Դրախտիկ, հավատա ինձ, ես չգիտեմ իմ տեղը այս պայքարում՝ թոնդրակյա՞ն եմ, թե՝ հակաթոնդրակյան»։ «Տեսնո՞ւմ ես իմ զինավառ վիճակը, Գրիգոր։ Եթե քո ուսուցիչը Անանիան է, իմը՝ իշխանուհի

Սաթենն է, որ ինձ է հանձնել իր սուրն ու իր հրեղեն ձին։ Իմ ուսուցիչը Սաթենն է, Սաթենն է, Սաթե՜նն է...»։ Քառատրոփ հեռանում էր ձիավոր Դրախտիկը, և հեռվում մարում էին ձիու ոտնաձայները։

«Ճիշտ չէ Դրախտիկը,— խորհում էր Գրիգորը,— եթե ես թոնդրակյան լինեի, ապա Դրախտիկն ինձ կայցելեր ոչ թե երազիս, այլ կլիներ իմ կողքին, իսկ եթե հակաթոնդրակյան լինեի, ապա սիրային այս հեքիաթը չէր լինի, և Դրախտիկը երբեք չէր ներխուժի իմ կյանքի մեջ։ Իսկապես, ո՞րն է իմ տեղը հակամարտ բանակներում։ Դժվար է ասել։ Խանդոտ են երկու կողմն էլ. երկուսի սկզբունքն էլ նվիրվածության հարցում մեկն է, մեզ հետ չես, ուրեմն, մեր դեմ ես... Ո՛չ, հազար անգամ ոչ։ Եթե քեզ հետ չեմ, մի՞թե նշանակում է քո դեմ եմ։ Քեզ հետ չեմ, բայց քո դեմ էլ չեմ, նշանակում է որոնումների մեջ եմ, նշանակում է փնտրում եմ, ուզում եմ ճշտիվ գտնել իմ տեղը։ Փոխվել է մարդկանց մտածողությունը։ «Աստվածաշունչը» հնանում է և չի կարողանում հագեցնել հավատացյալի այրող ծարավը։ Հարկավոր է նոր խոսք, աստծուն հաղորդակցվելու նոր միջոցներ պեղել։ Իսկ իմ մեջ խմորվում է աստծո հետ առերես, անմիջնորդ խոսելու, հաղորդակցվելու ցանկությունը։ Նրա առջև հոգիս բանալու կարիքը, մեղքերը թոթափելու և զղջման, ինչպես նաև աշխարհի ու մարդկային մեղքերի ակունքը մաքրելու ահագնացող ցանկությունը։ Հոգիս հոգուս հետ անհաշտ է։ Ինքնաբզկտումը մաշում է մարմինս և մտքերս, որոնք առողջանալու կարիք ունեն։ Հարկավոր է հասնել երկնայինին, ձուլվել նրան, դառնալ մի հոգի, որպեսզի կարողանանք շահել նաև նրա հետ բանավիճելու շնորհը և աստծուն մարդկանց կատարյալ դառնալու գործին մասնակից դարձնելով, տեսնենք նրան մարդացած, իսկ մարդկանց՝ աստվածացած։

...Օ՜, Դրախտիկ, Դրախտիկ, ինչո՞ւ ես ցանկանում ինձ վերակերտել, դարձնել մարտիկ։ Առանց այն էլ իմ ցանկությունները խիստ աշխարհիկ են, որոնց համար ես պարտ եմ զղջալու տիրոջ առջև, զի մտքերն իմ ոչ միշտ են հակամետ աստվածային մտածողությանը, ոչ միշտ են ընդունելի մանավանդ աստծո ծառաների կողմից։ Դրախտիկ, ի՞նչը ստիպեց քեզ հագնելու նահատակ Սաթենի, զինավառ հերոսուհու հանդերձանքը։ Ինչո՞ւ զինավառվեցիր։ Երևի սիրույդ կորուստը նույնքան մահացու եղավ հոգուդ համար, որքան իշխանուհի Սաթենի մահը՝ նրա հոգու։ Երևի ցանկանում ես ապացուցել, հաստատել, որ սիրո կորուստը համազոր է մահվան, կյանքի կորստի, սիրելի Դրախտիկ...»։

***

Գնալով սեղմվում էր զրպարտության, ամբաստանության օղակը Անանիա ուսուցչապետի շուրջ։ Ստեփանոս եպիսկոպոսի այցելությունից հետո Նարեկավանքի օդն ավելի ծանրացավ, շնչելը դարձավ անհնար։ Իսկ երբ պատժիչ զորախումբը վանահոր խորհրդով և ավելի շուտ պահանջով դադարեց Ղազարոս վարդապետի սպանության հետաքննությունը, երբ վանահայրը հայտարարեց, որ պաշտպանության տակ է առնում Գրիգորին, ներվանական կյանքը փոխարկվեց դժոխքի, հակամարտության ասպարեզի, ուր Կունծիկի և Խաչիկի սակավաթիվ կողմնակիցները բացահայտ կռվի ելան միաբանության տնօրինության և նրանց դեմ, ովքեր ազնվաբար ծառայում էին գիտությանն ու արվեստներին, հայրենի փառքը առաջ մղելուն։ Առանց քաշվելու, անամոթաբար զրպարտիչները թոնդրակյան, հերձվածող, աստվածուրաց ածականներով «զարդարում» էին քանքարավոր գիտունների, տաղերգուների ճակատները, նրանց սպառնում էին հաշվեհարդարով, հայտարարում, որ ժամանակն է միաբանությունը մաքրելու, այն վերստին դարձնելու սրբոց հավաքատեղի, աստծո իսկական նստավայր։

— Ուսուցի՛չ, Ղազարոսի հանցագործությունն ավելի կատաղեցրեց անուղեղ և ամուլ մարդկանց։ Նրանք մշակեցին իրենց հետայու գործունեության ծրագիրը, որի կարևորագույն կետի իմաստը հետևյալն է՝ ամենալավ պաշտպանությունը հարձակվելն է։ Այս սկզբունքով էլ նրանք անցան գործի, անցան հարձակման, որպեսզի անսասան մնա իրենց ամրությունը միաբանությունում։

— Դա ինձ հայտնի է, զավակս, միայն չգիտեմ մեր անելիքը։ Ընդունե՞նք նրանց մարտահրավերը, թե արհամարհենք այն իմաստուն առածի հիմամբ, թե՝ քամին քարից ի՞նչ է տանելու, կամ՝ շունը հաչում է, քարավանն անցնում։ Զարմանալի վիճակ է ստեղծվել միաբանությանս կյանքում։ Ես, որ հիմնադիրն եմ այս ուխտի, գիտության, արվեստի այս կաճառի, պարզվում է, որ ես եմ աղտոտում ներվանական օդը։ Տեսնո՞ւմ ես, որդյակ, սայլը ճռռալու փոխարեն սայլվորն է ճռռում։ Թեև զրպարտիչը, ամբաստանողն ավելի գործունյա են, ավելի մարտունակ, ավելի անհանգիստ, քան կարգին, քանքարավոր մարդիկ, սակայն նրանք անկարող են խուսափել վերահաս պարտությունից, քանզի ամուլ են ու անպտուղ, նաև անաստված, բայց ես արդեն ծեր եմ, հոգնած ու ուժասպառ և գալիք պայքարում ու բանավեճերում հազիվ թե կարողանամ պահպանել մարտունակությունս խորտակիչ հարված հասցնելու համար։

— Դու նահանջելու իրավունք չունես, ուսուցիչ...

— Ես մեռնելու իրավունք էլ չունեմ, որդիս, ուր մնաց նահանջելու...

— Դու ներիր ինձ, ուսուցիչ, եթե ասեմ, որ նույնիսկ մեռնելը քեզ չի ընձեռում նահանջելու իրավունք...

— Հիմա քո ժամանակն է, Գրիգոր, իմն՝ անցավ։ Դու երիտասարդ ես, եռանդուն և կարևորն է՝ մարտունակ։ Քո տարիքին ես հիմնադրեցի միաբանությունս, երբ կենաց ուժերի ոչ միայն պակաս չէի զգում, այլ նույնիսկ ուժերի գերածախսը ինձ չէր հաղթում, չէր հոգնեցնում։ Հիմա ուրիշ է։ Հիմա իմ աթոռը քո կարիքն ունի, զավակս... Ասա ինձ, ինչպե՞ս է Կճավա ուխտին ուղղվող քո հակաթոնդրակյան «Թղթի» ընթացքը, գրվո՞ւմ է...

— Հիմնականում գրված է։ Քիչ է մնում ավարտին...

— Լավ է, անկասկած է գործիդ հաջողությունը։ Մի խորհուրդ. շատ հայհոյիր թոնդրակյաններին։ Հայհոյանքը, վիրավորանքը հիմարների, «ուղղափառների» աչքին կբարձրացնեն գործիդ արժեքը, թեև ինքդ հիանալի գիտես, որ հայհոյանքը, վիրավորական ածականների առատությունը բանավեճն սպանող, թուլացնող գործոններ են, իսկ անկիրթ մարդկանց աչքին՝ բանավեճի հաղթաթուղթը։ Նմանների համար հակաքրիստոնեական, հակամարդկային, հակատերունական, հակա... հակա... բառերն ամենատպավորիչ, արդիական արտահայտություններն են, իմացիր... Քո հեղինակությունը միաբանությունում անսահման է, ավելին, անսասան, որ չսասանեց նույնիսկ տասնյակ զրպարտագրերից, վայրահաչություններից, վիրավորանքներից...

— Քո ջանքերի շնորհիվ, ուսուցիչ։

— Ո՜չ զավակս, ամենից առաջ քո վավերական, անկասկածելի շնորհների, տաղանդի... Քեզ ոչ ոք չի կարող հաղթել, եթե հենվես միաբանության կարող ուժի վրա։ Անողոք եղիր վատերի նկատմամբ, նրանք մեր ժողովրդի հոգևոր զարթոնքի թշնամիներն են, հայոց ազգի ցեցերը և աստծո իսկական, երդվյալ թշնամիները, քանզի նմանները աստված չունեն, հավատ չունեն, իսկ թոնդրակյան ածականը նրանց զինանոցի ամենահարմար բառն է, որ մահակի նման խփում են լուսավոր մարդկանց գլխին, ոչնչացնելու, հանգցնելու այն լույսերի բռնկումները, որ այնքան անհրաժեշտ են մեր ժողովրդին՝ աշխարհին ծառայելու և իր տաղանդը մարդկությանը ի սպաս դնելու նրա ցանկությանը։ Իմացիր, որդիս...

— Սիրելի ուսուցչապետ, քո խոսքերը նման են պատգամների։ Խոսակցության այս տեսակն ինձ վախեցնում է։ Ինչո՞ւ ես պատրաստվում քո աթոռն ուրիշին հանձնելու...

— Դու ուրիշ չես, Գրիգոր, դու ամենաարժանավորն ես։ Ես չեմ ցանկանում թեկուզ մեկ օր, միայն մեկ օր թափուր կամ անարժանին տեսնել այդ աթոռին։ Պատգամի պատճառ չկա, ես չեմ պատրաստվում մեռնելու, այլ պարզապես հոգնել եմ...

— Դու չափազանցում ես, ուսուցիչ։ Ի՞նչ է պատահել. զրպարտում և ամբաստանում են ոչ միայն քեզ, ոչ միայն ինձ, այլ բոլոր նրանց, ովքեր չեն գործածում այլ զզվելի զենքերը։ Կարճ ասած, բոլոր նրանց, ովքեր կարգին մարդիկ են։ Քեզ մի՞թե քիչ են զրպարտել, ուսուցիչ։ Որքան կյանք է մաշվել այդ հարձակումները չեզոքացնելու, ամբաստանողներին անարգանքի սյունին գամելու և զրպարտությունը հերքելու համար։ Դու ասացիր, չէ՞, թե քամին քարից ինչ է տանելու...

— Այո՛, զավակս, բայց պարզվում է, որ քո ուսուցիչը քար չէ, այլ աստծո ստեղծած մարդ արարած, կազմված փխրուն նյութերից՝ մսից ու ոսկորից, այդ ամենին գումարած զգայուն, գերզգայուն սիրտը, որն արդեն հոգնել է։ Իսկ թե ի՞նչ է պատահել՝ ասեմ։ Զորքը Նարեկից հեռացնելու իմ պահանջը Վասպուրական աշխարհիս հոգևոր առաջնորդները գնահատելու են որպես բացահայտ պաշտպանություն թոնդրակյաններին, իսկ սրիկայի սպանությունը՝ դիտելու որպես թոնդրակյան ապօրինի արարք։ Նույնիսկ քեզ պաշտպանելը համարվել է թոնդրակյանի պաշտպանություն, քանզի չգիտեմ ի՞նչ ճանապարհով նոր մատնագիր է ստացվել քո կապերը հաստատող՝ Կճավա ուխտի անդամ Մուշեղ վարդապետի հետ։ Դու պիտի իմանաս, որ այն օրը ես ստիպված էի դուրս հրավիրել Ստեփանոս եպիսկոպոսին, իսկ նման «հանդգնություններն» անհետևանք մնալ չեն կարող։ Հոսում է զրպարտության թքախառն թույնը թոնդրակյան Անանիա Նարեկացու դեմ, խարխլելով իմ հեղինակությունը հոգևոր աշխարհում և վանահոր իմ աթոռը, որը մոտ երեքուկես տասնամյակ զբաղեցնելու պատիվն ունեմ։ Իմացիր, նրանք կհասնեն իրենց նպատակին, մանր ու խոշոր սրիկայություններով թունավորելով իմ կյանքը, իմ հանգիստը, քրքրելով առանց այն էլ քրքրված իմ սիրտը։ Այնպես որ, որդյակ իմ, պատրաստվիր, ժամ է, որ քո խաչը Գողգոթա հանես ինքդ...

— Մի՞թե նույնը չեն անելու ինձ հետ, ուսուցիչ...

— Միաբանությունը բացի մի քանի հոգուց խանդավառությամբ կընդունի քեզ։ Քո մեծ տաղանդը քո դրոշակակիրն է, քո առաջն ընկած պանծացնում է անունդ և մեր միաբանությանը պարգևում փառք ու հեղինակություն...

— Հասկացա, ուսուցիչ...

— Այո՛, որդիս, պահ է, որ քո խաչը հանես Գողգոթա։ Այո՛, ինձ հետ կատարվածը քեզ հետ էլ է կատարվելու։ Բայց քո առավելությունն

այն է, որ երիտասարդ ես, ուժերդ դեռևս անսպառ։ Իմացիր, դու իրավունք չունես հրաժարվելու Նարեկի միաբանության վանահոր աթոռից։ Ես, քո ուսուցիչը, դա կհամարեմ դավաճանություն, այո՛, այո՛, դավաճանություն, այդ արարքն այլ անուն ունենալ չի կարող։ Չէ՞ որ այստեղ է թխվում ազգիս հոգևոր հացը։ Այստեղ են կրթվում, այստեղ են զուրեղանում տաղանդները գիտության և մշակույթի, և մենք իրավունք չունենք ազգօգուտ գործը թողնելու բախտի կամքին, թողնելու սրիկաներին։ Հասկանալի՞ է...

— Հասկացա, ուսուցիչ...

— Իսկ հիմա, տերն ընդ քեզ, ես ցանկանում եմ հանգստանալ։

Գրիգորը չգնաց ոչ գրչատուն, ոչ էլ գրադարան։ Վանքից դուրս եկավ և մարգագետնի միջով քայլեց ժայռի կողմը, ուր մի քանի հարկ անձավներ կային։ Աստծո՞ աշխատանք էր, թե մարդու, ո՞վ իմանար։ Այնտեղից հիանալի տեսարան էր բացվում Վանա լճի վրա։ Օդը հագեցած էր ծաղկանց բույրերով, նաև արևի բերանն ընկած ժայռի այրող ջերմությամբ։ Գեղեցկությունն այնպիսին էր, որ երիտասարդ վանականն ստիպված էր մի քանի անգամ սրբել աչքերից կաթող արցունքները։ Զախում ժայռի բերանից կախվել էր ջրվեժը և իր կռիվն էր կռվում շրջակա անդորրի և խաղաղության հետ։ «Երանի գեղեցկությունը կարողանան ճիշտ ընկալել մարդիկ։ Գեղեցկությունն ընկալող մարդը մաքրվում է, գեղեցկանում, իսկ գեղեցիկը պաշտող մարդը մերժում է տգեղը, խարդավանքին նայում է որպես հիվանդության, որպես սպանիչ պալարի, որպես աշխարհի սրտին բացված խոցի, որը վերացնելու համար հարկ է բանեցնել նշտարը, վիրաբուժական միջամտության համար։ Եթե մարդ արարածը պաշտում է աստծուն, պետք է որ կարողանա օգտվել նրա աստվածային շնորհներից, որոնցից է գեղեցկության ճանաչումը։ Պաշտեցեք բնությունը, զի նա գեղեցիկ է և արժանի պաշտամունքի...»։

***

Արդեն քանի օր է վանահայրը փակվել էր իր խցում և ոչ ոքի չէր ընդունում։ Գրիգորը խիստ անհանգիստ էր։ Սկզբում մտածեց, որ ուսուցչապետը հիվանդ է, սակայն մի քանի անգամ դռան արանքից ծիկրակելը բերեց այլ համոզման։ Անանիան աշխատում էր, վերադասավորում ձեռագրերը, ահագին կույտից ջոկում էր երևի կարևորները։ Ինչի՞ համար էր այդ աշխատանքը, առայժմ պատասխան չուներ։ Սպասողական վիճակի մեջ էր նաև միաբանությունը։ Ներքին խժդժությունները փոքր-ինչ դադարել էին, բոլորն սպասում էին Անանիայի հրաժարականին։ Բարեկամները գիտեին նրա հոգեվիճակը, նաև շարակամներն էին հասկանում, որ ծերացած գիտնականի հոգևոր և մարմնական ուժերը սպառվում են, իսկ ներքին խժդժությունները միաբանությունում ստեղծել են մարդկային փոխհարաբերություններում այնպիսի միջանցիկ քամի, որ ապրելն ու գործելը դարձել են գրեթե անհնար։ Ո՞վ էր փոխարինելու մեծավաստակ գիտնականին, որի հարյուրավոր նշանավոր սաները գիտության և դպրության ասպարեզում ոչ միայն բարի համբավ ունեին, այլ գործի ղեկավարներ էին, գործիչներ։ Ո՞վ էր փոխարինելու Անանիա Նարեկացուն։ Գրիգոր Նարեկացուց բացի այլ թեկնածու չկար։ Սակայն շարակամները վստահ էին, որ հոգևոր վերադաս անձանց շրջանում նա բավականաչափ վարկաբեկված է, որ հազիվ թե նրա տնօրինությանը հանձնվի Նարեկի պատկառազդու միաբանությունը։ Սակայն այլ կարծիքի էին բարեկամները։ Գրիգոր Նարեկացին նշանավոր գիտնական էր և տաղանդավոր տաղերգու։ Նրան արդեն ճանաչում էր Հայաստանը։ Նրա տաղերը, շարականները, ճառերը անցնում էին շրթից շուրթ, լցնում վանքերն ու դպրանոցների շարանները, երգվում էին եկեղեցիներում ժամերգություններին և ծիսակատարություններին։ Բարեկամները գիտեին, որ հայ աշխարհի մտավորականները մեկ աչք դարձած սպասում են Գրիգոր Նարեկացու նոր արարումներին, քանզի հայ տաղերգությունը նրա շնորհիվ աննախադեպ վերընթաց էր ապրում և սպասվում էր առավելը։ Միաբանությունում այլ թեկնածուի մասին նույնիսկ խոսք չկար։ Հակառակորդները փնթփնթում էին, շարախոսում, բամբասում Անանիային, Գրիգորին, բայց քանի որ փոքրամասնություն էին կազմում միաբանությունում, զգալով իրենց վիճակի անհուսալիությունը և պարտության հեռանկարը, իրենցից որևէ մեկին վանահոր պաշտոնին առաջադրելու փորձ չէին անում։ Սպասում էին «դրսի» օգնությանը, հավատացած լինելով, որ վանահայր կտանան վերևից՝ ստիպմամբ, մոռանալով կամ անգետ ձևանալով Գրիգորի օր-օրի բարձրացող հեղինակության և մեծ կշիռի նկատմամբ։

Գրիգորը թեև չէր ցանկանում Անանիայի հրաժարականը, սակայն գիտակցելով վանահոր աթոռի հույժ կարևորությունը, ներքուստ արդեն հաշտվել էր այն ստանձնելու մտքին։ Վերջապես, վանահայրը հրավիրեց Գրիգորին։ Ուսուցչապետի առանձնասենյակը մտնելով Գրիգորը նկատեց, որ Անանիան վերստին առանձնացված ձեռագրերը տեղադրել է գրադարակներում։

— Ցանկանում էի իմ աշխատությունները կարգի բերել և տանել տուն,— ժպտաց նա,— սակայն մոռանալով, որ տուն չունեմ, որ իմ տունատեղը, իմ ունեցվածքը, իմ հարստությունն այստեղ է։ Եվ նորից դրե-

ցի իրենց նախկին տեղը։ Համենայն դեպս, Գրիգոր, խնդրում եմ լավ պահպանել իմ աշխատությունները, նրանք օգտակար կլինեն միաբանության դպրանոցին...

— Ուսուցիչ, ես դեռ վանահայր չեմ, վանահայրը դու ես, նման զրույցը դեռևս վաղաժամ է,— խոսեց Գրիգորը,— հայտնի չէ, թե միաբանությունը համաձայն կլինի՞ քեզ փոխարինել ինձնով։ Իսկ ինչ վերաբերում է քո աշխատություններին, նրանք պիտանի են և այսօր, և վաղը, և գալիքում։ Ով էլ վարի ուսուցչապետի պաշտոնը, առանց քո աշխատությունների չի կարողանա աշխատել։

— Շնորհակալ եմ, զավակս,— զգացվեց Անանիան,— այս գահավորակին նստելու միակ արժանին դու ես, չկասկածես։ Քիչ է ասել թե լավ փոխարինող կլինես։ Դու ի վիճակի ես և պարտավոր ես մի քանի գլխով բարձրացնելու Նարեկի միաբանության հեղինակությունը։

— Հայր Անանիա, այնուամենայնիվ, կցանկանայի քեզ տեսնել ուսուցչապետի քո գործին՝ ձեռքդ իմ գլխից անպակաս...

***

Իրադարձությունները զարմանալի ընթացք ստացան։ Գրիգոր Նարեկացին փոխարինեց Անանիա Նարեկացուն։ Միաբանությունն այնպիսի խանդավառությամբ ընդունեց Գրիգորի բարձրացումը, որ նրա հակառակորդները նույնիսկ ծպտուն հանել չկարողացան։ Սակայն միակ զարմանալին դա չէր։ Ստեփանոս եպիսկոպոսը չնայած իր բացասական վերաբերմունքին Գրիգորի թեկնածության, չնայած խիստ մարտական և եռանդագին դիմադրությանը, ընկրկեց ինչ-որ զորեղ աշխարհիկ ուժերի հանդեպ և դադարեցրեց դիմադրությունը։ Սակայն ամենազարմանալին դա չէր։ Գրիգորի վանահոր պարտականություններին անցնելուց մի քանի օր անց Անանիան դուրս եկավ մենաստանից և այլևս տուն չվերադարձավ։ Նրան տեսել էին վանքից հեռանալիս։ Քայլում էր հանդամիջյան ճանապարհով։ Ձեռքին գավազանից բացի ոչինչ չուներ։ Նման էր սովորական զբոսանքի և ոչ ոք առանձին ուշադրություն չդարձրեց։ Բայց երբ Անանիան չերևաց նաև հաջորդ և մյուս օրերը, միաբանությունում շշուկ անցավ, որ նա ամենայն հավանականությամբ վերջ է տվել կյանքին։ Կան մարդիկ, որ երբ տեսնում են իրենց մայրամուտը, իրենց ավելորդությունը, պարզապես իրենք են ձեռք բարձրացնում իրենց վրա, որպեսզի շրջապատին հոգս չպատճառեն և չտեսնեն ու չապրեն իրենց բարոյական մահը։ Իհարկե, նման մահը ընդունելի չէ ոչ աստծո, ոչ էլ եկեղեցու

կողմից։ Իզուր, իզուր հայր Անանիան նման քայլ կատարեց, դատապարտման արժանի քայլ։ Հասարակ բան չէ՝ անօրինական մահ։

— Վերջ տվեք բամբասանքներին,— շդիմացավ Գրիգորը,— կամավոր մահվան են գնում աստծո աչքից ընկածները և նրանք, ովքեր չեն կարողանում արժանանալ մեղքերը քավելուն, չեն շահում տիրոջ բարեհաճությունը։ Իսկ ուսուցչապետ Անանիան մեղքեր չուներ աստծո առջև, անաղարտ էր մանկան նման և տիրոջ անդավաճան սպասավորն ու փառքը քնարողը։ Ամենայն հավանականությամբ հայր Անանիան կարիք ուներ մենության և առանձնանալու, այդ էր թելադրում նաև միաբանության ճգնակենցաղ էությունը։ Ճգնելու, աստծուն հաղորդակցվելու ցանկությունը նրան տարել է միաբանությունից դուրս, և, ես կարծում եմ, մենք շուտով կիմանանք նրա ճգնավայրը...

Գրիգորին հաջողվեց կանխել բամբասանքները, սակայն հոգու խորքում կասկածում էր իր ենթադրյալ ճշմարտությանը։ Իր արյունակիցն ու ուսուցիչը վանքից նման ձևով բաժանվելու, հեռանալու իրավունք չուներ։ Հոր մահից և Դրախտիկին կորցնելուց հետո այս հարվածն այնքան ուժեղ էր ու անողոք, որ Գրիգորը առժամանակ շշմած ու շփոթահար մարդու տեսք ուներ, խուճապահար էր. «Իսկապես ո՞ւր կորավ հայր Անանիան։ Ես չեմ հավատում և ոչ մի հիմք չեմ տեսնում ինքնասպանության, թեև վերջերս նա ընկճված էր, ներվանական և արտավանական բանսարկությունները հոգնեցրել, զզվեցրել էին նրան։ Նա փախավ, շասենք փախավ, այլ հեռացավ այդ ամենից։ Ազատվեց վանահոր ծանր և վանական կյանքին գամող պարտականություններից և հեռացավ այնտեղ, ուր երևի չկան ոչ բանսարկություններ, ոչ էլ հոգին ուտող, ստորացնող ամենօրյա գզվռտոցները։ Բայց, աստված իմ, մեր աշխարհում կա՞ն, գոյություն ունե՞ն այնպիսի խաղաղ անկյուններ, ուր հնարավոր լինի բեռնաթափվել աղտեղություններից, մաքրվել բամբասանքներից, կոտոշավոր ստերից, մեղադրանքներից ու մատնագրերից։ Կա՞ն նման բացառիկ վայրեր։ Հազիվ թե, ուրեմն, ո՞ւր է գնացել, ո՞ւր է հեռացել Անանիան։ Երևի համեմատաբար խաղաղ մի տեղ, ուր այսքան անտանելի չեն մարդկային հարաբերությունները, ուր մարդ կրակ չի շնչում օդի փոխարեն։ Ուր ազատամտությունը պատիվ ու հարգանք ունի։ Բայց կա՞ նման վայր։ Հազիվ թե։ Իսկ եթե... Գրիգորի մտքում կայծակեց արտառոց մի միտք. եթե նա գնացել է նրանց մոտ, աստվա՜ծ իմ... Կարո՞ղ է պատահել։ Տասնամյակներ շարունակ նրան մեղադրել, թոնդրակյան են կոչել, զանազան անվայել պիտակներով խարանել են նրա հպարտ ճակատն ու հեզինակությունը։ Իսկ հիմա, երբ նա ազատ է հոգսերից ու պարտականություններից, երևի ապաստանել է նրանց մոտ։ Չէ՛, չէ՛,

Անանիա Նարեկացին չի կարող այդպես հեշտությամբ, այդքան բացահայտ անցնել հակառակ բանակը։ Անանիան բարոյական, առաքինի մարդ է, սկզբունքի համար մարտնչող անձնավորություն, նա այդքան հեշտությամբ չէր խախտի կարելիության և անկարելիության անանցանելի սահմանները։ Չէր կարող։ Սակայն ո՞ւր է նա։ Հո չէ՞ր կարող շոգիանալ, հո չէ՞ր կարող ոգիանալ։ Հո չէ՞ր կարող նշանավոր մարդն անհետ կորչել...

Ի՞նչ է կատարվում ինձ հետ։ Ինչո՞ւ այսպես ստացվեց։ Ես թալանված եմ սիրելի մարդկանցից։ Աղքատ եմ, ինչպես երբեք։ Տառապում եմ, տանջվում, ցանկանալով անթեղել Դրախտիկի կորուստը, սակայն ապարդյուն, չի անթեղվում, այլ գնալով ավելի բոցավառվում և ճարակում է հոգիս։ Ասում են՝ փրկություն է մոռացությունը։ Սակայն նման մեծ կորուստը մոռանալու համար կյանքը կարճ ժամանակահատված է։ Դրախտիկը ինձնից կհեռանա իմ մեղավոր հոգու հետ միասին։ Հիմա էլ հայր Անանիան գումարվեց իմ կորուստներին։ Ես գիտեմ, քաջ գիտեմ, որ թույնը՝ թույնին, վիշտը՝ վշտին, նույնիսկ ուրախությունը՝ ուրախությանը չեզոքացնում են։ Սակայն իմ սիրելիները ինչո՞ւ չեն կարողանում չեզոքացնել, փոքր-ինչ մեղմել մեկը մյուսի կարոտը, մոռացնել մեկը մյուսի կորստյան վիշտը, ինչո՞ւ... Հիմա նրանք իմ աչքերի առջև ինձնից պատասխան են պահանջում, մեկը իր կորած սիրո, մյուսը իր կորած անձի համար։ Իսկ ես պատասխան չունեմ, և երբեք կունենա՞մ։ Դրախտիկի ձեռքում միշտ սուր եմ տեսնում, նա երևութանում է միշտ զինավառ, միշտ պահանջկոտ ու նեղացած։ Երևում է, որ չի կարողանում ներել ինձ իր կորած սիրո և խորտակված երիտասարդության համար։ Նա՛, իմ ըմբոստ չհարսնացած հարսնացուն։ Անանիան պահանջներ չունի, չունի՞... Հայացքը միշտ հանգստացնող է, միշտ կարեկցող։ Երկուսն էլ իմ կորուստներն են, որ հաջորդեցին միմյանց, իմ հոգում բացելով մի ահեղ խոռոչ, ոչնչով չլցվող մի դատարկություն, որի մեջ պատեպատ է դիպչում իմ որբացած սիրտը։ Ո՞ւր ես դու, ուսուցչապետ, գոնե քո գաղտնիքն ինձ կասեիր, հեռանալդ կհիմնավորեիր, կպատգամեիր իմ անելիքները։ Այնքան մեծ է քո կարիքը։ Այնքան անհրաժեշտ է քո խոսքն ու խորհուրդն ինձ համար։ Այս մեծաքանակ միաբանությունն իր դպրանոցով, իր ամենօրյա հոգսերով և բարդություններով ու կնճիռներով, եթե չի էլ վախեցնում, ապա այնպիսի մտահոգություններ է պատճառում, որ կնճիռներն հարթելու, հարցերի պատասխանները գտնելու, անլուծելին լուծելու համար ոչ օրն է բավականացնում, ոչ անհամբեր ժամանակը և ոչ էլ իմ քմահաճ մուսաներն են հասկանում ինձ, լքելով ինձ և պատժելով իմ դավաճանությունը։ Մի խոսքով, աստված ձեզ հետ, իմ սիրելիներ, քանզի ես այլևս անկարող եմ ձեզ հետ լինելու...»։

Անցան օրեր։ Եվ հանելուկը լուծվեց միանգամից։ Գրիգորին զեկուցեցին, որ մի շինական շատ է ցանկանում իրեն տեսնել։ Գյուղացուն ներս հրավիրեցին։ Փրշոտ, գիսախիվ շինականը ծանր հայացք ուներ, որ հածում էր ուսուցչապետի առանձնասենյակի պատերն ի վեր, պատերն ի վար, հետո կանգ առավ տիրամոր որմնանկարին, ապա աղմուկով հազաց բռան մեջ և խոսեց Գրիգորին.

— Հայր սուրբ, ինչո՞ւ եք միաբաններդ այսպես խեղճ կյանքով ապրում։

— Խե՞ղճ, իսկ ինչո՞ւ խեղճ,— ժպտաց Գրիգորը։

— Այս որմնանկարը որ չլիներ, պետք է կարծեի, թե գեղջուկի տուն եմ մտել...

— Դու մոռանում ես, որ մտել ես ճգնակենցաղ միաբանների մենաստանը։

— Դուք, միաբաններդ, թողեք այդ ճգնելը, ապրեցեք լիքը կյանքով։ Երեսիդ գույն չկա, հայր սուրբ, կիսաքաղց ապրելը բա՞ն է։ Մյուս վանքերի միաբանները ճարպակալումից պայթում են, դուք ընդհակառակը...

«Թոնդրակյան է,— անմիջապես լուծեց խնդիրը Գրիգորը,— բայց ինչո՞ւ է եկել...»։

— Մենք գիտությամբ ենք զբաղվում,— ցանկացավ բացատրել, բայց շինականը ձեռքը թափ տվեց.

— Նախ, կանոնավոր սնվեցեք, որ ուժ ունենաք և աստծուն ծառայելու, և գիտությամբ զբաղվելու...

— Լավ,— խստացավ Գրիգորը,— ինչո՞ւ ես եկել...

— Մեզ ականջող չկա՞,— հարցին հարցով պատասխանեց շինականը,— պատերն ականջներ չունե՞ն։

— Ո՛չ, ո՛չ, խոսիր առանց վախենալու...

Շինականը ծոցից հանեց քրտինքի հոտ արձակող մագաղաթը և մեկնեց նրան։ Գրիգորը նայեց ձեռագրին և վեր թռավ տեղից։

— Դու գիտե՞ս, թե ինչ թանկ բան ես բերել, սիրելիս...

— Կարդա՛,— ասաց շինականը։

«Սիրելիդ իմ, Գրիգոր։ Գիտեմ, որ մեծ մտատանջություն եմ պատճառել բոլորիդ, քեզ առավել ևս։ Ես որոշեցի հեռանալ ինձ այնքան սիրելի, միաժամանակ, այնքան հոգիս ուտող Նարեկի միաբանությունից։ Կարծում եմ, կհասկանաս և խոսքս մանրամասնելու կարիք չի զգացվի։ Ես չէի կարող իմ որոշումը հայտնել հրապարակավ, քանզի որոշել. էի ապաստանել Կճավա միաբանությունում։ Այստեղ ավելի է հարգվում

աստծո լույսը։ Ընդունեցին հարգանքով, նույնիսկ խանդավառությամբ։ Երբ ակնարկեցի «Թուղթ հակաճառությանը», թափ տվին ձեռքերը։ «Մարդու մտքին բռնանալը մեծագույն մեղքն է աշխարհում»,— ասացին։ Ողջույններ Մուշեղից։ Աստված քեզ հովանի, որդյակս։ Անանիա...»։

— Գիտե՞ս, թե որպիսի ուրախություն պարգևեցիր ինձ, շինական...

— Իմ անունը Արտավազդ է,— խոսքը կտրեց գյուղացին։

— Շնորհակալ եմ քեզանից, Արտավազդ, դու չգիտես թե որքա՜ն եմ շնորհակալ...

— Հասկանում եմ, հասկանում, հայր Անանիան էլ նույնը ասաց, ուրախությունից կկորցնի իրեն, ասաց։ Ի՞նչ ասեմ նրան, ապսպրել է՝ հարցնեմ վիճակդ...

— Լավ եմ, նրան ասա, որ ամեն ինչ կարգին է։ Բարեկամները հաստատ են իրենց խոսքին, չարակամները քնած են, այժմ արթնության նշաններ չկան։ Այդպես էլ ասա...

— Շատ լավ, հայր սուրբ, բայց քեզ լավ նայիր, հարկավոր մարդ...

***

Անցան ամիսներ, տարիներ անցան...

Հիշողությունը մնաց անասան, չենթարկվեց ժամանակին։ Սերը չէր սպիանում։ Վերքը ծխում ու չէր անթեղվում։ Կարոտն արթուն էր, չէր թողնում հանգստանալու։ Սերը թևավորում էր ու տաղի վերածվում։ Դրախտիկի պատկերը վեհանում էր, խառնվում աստվածամոր պատկերին։ «Դրախտիկը աստվածամոր երկվորյակն է, ուրիշ էլ ո՞վ կարող է լինել աստվածամոր նախատիպը։ Դրախտիկը նույն կույս Մարիամն է, նույնը, միայն տեսանելի, շոշափելի, հասկանալի։ Դրախտիկով ճանաչեցի քեզ, աստվածամայր, իսկ աստվածամորով պաշտեցի քեզ, Դրախտիկ։ Հեռացար, աներևութացար և սիրույդ գումարվեց նաև պաշտամունքը։ Հիմա ես ունեմ երկու աստվածամայր։ Ունեմ երկու Դրախտիկ։ Երկնային ու երկրային աստվածությունները խառնվել են։ Երկուսն էլ և աստվածային են, և հողեղեն։ Տեր աստված, ներիր իմ հիմարությունները, խառնել եմ աստվածությունդ՝ հողեղեններին։ Մարդուն ինչո՞ւ ես քեզ նման ծեփել։ Ինչո՞ւ ես Դրախտիկին ստեղծել այսքան շքեղ ու աստվածային, որ նմանվեր աստվածամորը։ Երկուսն էլ կին, իսկական, չքնաղ կին։ Գոնե աստվածուհուն խնայեի՞ր... Թե չէ այս ի՞նչ ես արել։ Հողեղենին բարձրացրել, հասցրել ես աստծուն։ Աստծուն իջեցրել, հասցրել ես հողեղենին։ Թե՞ ցանկանում ես ջնջել նրանց սահմանները։ Ինչո՞ւ ես այդ անում։ Մեր ո՞ւժն ես ստուգում, թե թուլությունը։ Մենք գեղեցկության

հանդեպ փխրուն ենք, խոնարհ ենք, ինչպես հողը։ Մեր վերընթա՞ցն է ավելի, թե անկումը։ Իմ մեղքերի միակ մեղավորը ես չեմ, այլ մեղսակից ես նաև դո՛ւ, դո՛ւ... Տեր երկնային, ընդունիր իմ զղջումը, ավել-պակաս իմ պոռոտախոսությունը՝ աստվածությանդ մեղադրելու համար... Ի՞նչ անեմ, տեր, չեմ կարող քեզ՝ քեզանից չբողոքել։ Եթե ապօրինի էր իմ սերը և դեմ էր աստվածությանդ, վարկաբեկ էր անում իմ հավատն ու դավանանքը, ինչո՞ւ ոչ դու, ոչ էլ հավատի քուրմերը՝ չկարողացան սերը ջնջել իմ սրտից։ Մի՞թե սերը ուժեղ է քեզանից, տե՜ր, որ մնում է անսասան, մնում է անխորտակ, նույնիսկ սիրուց խորտակված հոգիներում, պարգևելով անաստված տանջանքներ և աստվածային երջանկություն։ Ուրեմն, ո՞վ է ստում, դո՞ւ, թե քո անունից բարբառող քո երկրային սպասավորները։ Շատ են իմ հարցերը, տեր, և հարցերն իմ չունեն պատասխաններ։ Համոզիր մեզ քո ճշմարտության մեջ։ Ցրիր մեր կասկածները, մեծահոգի եղիր։ Ամեն փոքր առիթով մի նեղանա քո ստեղծածներից և մի ստիպիր, որ մեր մեղավոր կյանքը դառնա մեղանչումների և զղջումների անվերջանալի շղթա։ Գթասիրտ եղիր, հույսը մեր դու ես, վառ պահիր մեր հույսը, որ հավատանք մեր մեղքերը քավելու անհրաժեշտությանը»։

— Հայր սուրբ, Կունծիկ աբեղան տարօրինակ բաներ է անում, չլինի՞ նա սատանաների փորձությանն է ենթարկվել...

Սթափվեց մտքերից։ Ինչպե՞ս թե։ Ի՞նչ է ասում իր տեղապահը։

— Պարզ խոսիր, տեր Հովհաննես, ի՞նչ է պատահել...

— Այս էլ երրորդ անգամն է Կունծիկ աբեղան գիշերները աղմուկով, գոռոն, գոչյունով դուրս է նետվում իր խուցից, հավատացնելով, որ Հուսիկ վարդապետը իրենից հաշիվ է պահանջում, ցանկանում է իրեն քաշել տարտարոս... Հասկանալի է, որ Կունծիկը տեսիլքների մեջ է։ Իսկ այսօր նա փախավ մենաստանից...

— Ո՞ւր։

— Մարգագետնում և դաշտերում երկար թափառեց։ Հետո վերադարձավ ու չցանկացավ մտնել իր խուցը։

— Առաջարկեցեք աղոթել։ Աստված բարեգութ է, կլսի ձայնը, կների։ Տա աստված, մտքի և ուղեղի խավարում չլինի։ Հետո, եթե վախենում է մտնել իր խուցը, փոխեք տեղը...

Տեղապահը գնաց։ Գրիգորին ցնցել էր լսածը։ Ի՞նչ է պատահել աբեղային։ Նրան հալածում է Հուսիկ վարդապետի ուրվականը։ Ուրեմն ամբաստանության, զրպարտության, հալածանքների նկատմամբ երկնայինը անտարբեր չէ, սահմանվում է երկնային պատիժ։ Իսկ եթե երեվույթը խախտված ուղեղի արդյո՞ւնք է։ Միևնույն է, այս դեպքում ես

խառն է երկնային մատը։ Դժվար վիճակ է Կունծիկ աբեղայի համար։ Անքավելի մեղքերն ու հանցանքները պատասխան, բարոյական բավարարություն են պահանջում։ Չի կարելի անպատիժ կերպով սևացնել, վարկաբեկ անել, հալածել մարդկանց, այն էլ ազգիս ընտրանուն։ Կունծիկի կովանը թոնդրակյաններն են, որոնց անունները նա անընդհատ հոլովել և խառնել է սատանաներին ու դևերին։ Նույն ձևով է վարվել ոչ թոնդրակյան, սակայն լուսավոր մարդկանց հետ, ովքեր պաշտել են լույսը և ատել խավարը։ Այո, դժվար վիճակ է։ Գուցե կաթվածահար խի՞ղճն է արթնացել և հաշիվ է պահանջում կամ չարությունից վնասվել է գիտակցությո՞ւնը։ Ինչ էլ որ լինի, մեր պարտքն է օգնել Կունծիկ աբեղային։ Հարկավոր է երկնայինին հասցնել աբեղայի զղջումը։ Իսկ եթե նա չի՞ զղջում։ Միևնույն է՝ նա պարտավոր է տիրոջը աղաչել, պաղատել ցրելու իր կասկածները, ընդունելու իր մեղանչումը, ներելու իր մեղքերը։ Մի խոսքով...

Գրիգորը դուրս էր նայում գրատան նեղլիկ պատուհանից, որ ժայռահայաց էր։ Արևը ծեփվել էր կարմրավուն ժայռերին, և թվում էր, թե շոգը ժայռերի ծնունդ է, որոնք շոգ են արտաշնչում, և շոգը պղնձագույն է։ Մի մանչուկ ժայռերի ստվերի տակ գառներ էր արածացնում, ստեպստեպ վազելով ժայռի փեշից կարկաչող աղբյուրը, ջուր խմում և, գլուխն ու դեմքը թրջելով, նորից վազում դեպի գառները։ Հետո քարե գուռի մեջ ջրեց գառներին։ Երկար-երկար սիրում ու գգվում էր չալպտուրիկ գառանը, մինչև վերջինս փախավ և ազատվեց մանչուկի կոշտ սիրալիրություններից։ Հետո աղմկոտ ուրախությամբ և հաշելով չգիտես որտեղից հայտնվեց շնիկը ու սկսեց հետապնդել գառներին։ Ամենայն հավանականությամբ մանչուկին գուր չեկավ շան եռանդագին ու անօգտակար օգնությունը և ճիպոտով սպառնաց նրան։ Իսկ երբ ճիպոտն իջավ շան մեջքին, սա այնպիսի կաղկանձյուն ու վայնասուն գցեց, որ գառներն ասես գայլից հալածված, ցանուցիր եղան ու փախան մոտակա ծանծաղ ձորակը, ստիպելով մանչուկին, որ աստծո կրակ շոգին երկար վազվզի իրենց հետևից և նորից մեկտեղի՝ աղբյուրի առջև։ Թվում էր, թե ամեն բան կարգի է եկել, երբ վերստին աղմուկով հայտնվեց շնիկը և նույնությամբ կրկնվեց պատկերը։ Անկարգ շնիկին կարգի հրավիրելու մանչուկի ջանքերն ապարդյուն անցան, և տղան ստիպված դիմեց ավելի խիստ միջոցի, քարերով հալածեց շանը, սակայն վերստին չհասավ իր նպատակին, և նույն պատկերն արդեն վերածվեց զվարճալի մի խաղի, որ երևում է վերջ չէր ունենալու։ Գրիգորն սթափվեց իր բարձրաձայն ծիծաղից։ Շնիկի և մանչուկի վեճը շարունակվում էր, և արտասվելու աստիճան ծիծաղելի էր շարաճճի շնիկին կարգի հրավիրելու տղայի անօգուտ ջանքերը։ Ի վերջո

մանչուկը հոգնեց և նստեց մենավոր ծառի տակ, այլևս ուշադրություն չդարձնելով շնիկի ավազակաբարո պահվածքին։ Եվ խնդիրը լուծվեց միանգամից։ Տեսնելով տիրոջ զինաթափ, խեղճացած վիճակը, շնիկը թողեց գառներին հալածելու իր զվարճությունները և եկավ ու պառկեց տիրոջ կողքին, դնչիկը դնելով նրա ոտքերին։

Հեռացավ պատուհանից և աշխարհը հեռացավ իրենից։ Նորից Կունծիկ աբեղայի տարօրինակ հոգեվիճակը սկսեց շարչարել միտքը։ Աբեղային Գրիգորը ոչ միայն չէր սիրում, այլև ատում էր հոգու ամբողջ զորությամբ։ Ատելով հանդերձ, երբեք չփորձեց վնասել, հեղինակազրկել նրան։ Իսկ նա շարունակում էր հետապնդել Գրիգորին, նույնիսկ վանահայր դառնալուց հետո։ Եկեղեցու առաջնորդներին հասցեագրած նրա մատնագրերը ջուր չպղտորեցին։ Կճավա միաբանության վարդապետ Մուշեղին ուղղված գիտական մեծ խորությամբ բանավեճային Նարեկացու «Թուղթը» մերկացնում էր թոնդրակյան շարժման ամբողջ վտանգավորությունն ու դավանաբանական ծեսերի նկատմամբ նրանց սխալ դիրքորոշումը։ Այդ «Թուղթն» ապացուցում էր նաև իրեն՝ Գրիգորին, վարկաբեկ անել փորձող մատնագրերի անհիմն ու զրպարտչական լինելը։ Վերջերս Կունծիկն ու նրա մերձավորները այնքան եռանդագին կերպով չէին մրոտում թանկարժեք մագաղաթները, քանի որ նրանց խրախուսող հոգևոր պետերի զգալի մասն այլևս չկար, և Գրիգորին մեղադրողների բանակը նոսրացել էր։ Գրիգորը մի քանի նամակ էր հղել Ստեփանոս սրբազանին, նաև Նարեկի միաբանությանը, խնդրելով վերանայել Անանիա Նարեկացու ամբողջ գործունեությունը, նոր ձևով գնահատել նրա վիթխարի գիտական աստվածաբանական և կրթական աշխատանքը։ «Ոչ ոքի համար գաղտնիք չէ այն մեծ ծառայությունները, որ ունի Անանիա Նարեկացին, միաբանությանս հիմնադիրն ու նրա ողջ հայրենանվեր գործունեության ղեկավարը։ Անգնահատելի են նրա աշխատությունները հայ առաքելական եկեղեցու մաքրությունը և սրբությունը պաշտպանելու առումով։ Նա անողոք պայքար է մղել թոնդրակյան գաղափարախոսության դեմ, մեծ խորությամբ գրված իր աշխատություններում նա համոզիչ կերպով փաստարկել է թոնդրակյան գաղափարախոսության սնանկությունը։ Սակայն ինչպե՞ս և ինչո՞վ վարձահատույց եղանք նրան... Մեղադրեցինք ոչ ավել, ոչ պակաս թոնդրակյան շարժմանը հարելու մեջ։ Նրան հասցրեցինք մի վիճակի, որ այլևս չկարողացավ շարունակել իր օգտաշատ գործունեությունը Նարեկի միաբանությունում, հրաժարական տվեց և ապաստանեց Կճավա միաբանությունում, չնայած նրա հետ ունեցած տարաձայնություններին»։ Վերջում Գրիգորը խնդրել էր վերանայել Անանիա Նարեկացու հարցը, որպեսզի ինքն իրավունք ունենա նրան

վերադարձնելու իր հարազատ ընտանիքին, իր միաբանությանը, իր գիտական գործունեությանը։ Եվ Գրիգորը հասավ նպատակին։ Նրա միջնորդությունը հարգվեց։ Գրիգորը այժմ ցանկանում էր ուսուցչապետ Անանիային վերադարձնել Նարեկ։ Նույնիսկ Կունծիկն ու նրա կողմնակիցները չհանդգնեցին հակառակվել կամ առարկել վանահոր այս որոշմանը։

Եվ հիմա Կունծիկը հոգեկան անհավասարակշիռ վիճակում փախչում է ինքն իրենից, իր բարեկամներից, իր զոհերից, բոլորից։ Նա փախչում է մարդկանցից, աշխարհից...

***

— Կունծիկ աբեղան կախվե՞լ է...

— Կունծիկ աբեղան ինքնասպան է եղել...

— Կունծիկ աբեղան ոչ ևս է...

Միաբաններից մի քանիսը աղմուկով ներխուժեցին գրատուն։ Տեսնողը եղել էր սարկավագ Հակոբը, որ լուսաբացին խցերի լուսամուտների առջևով անցնելիս, բաց լուսամուտներից մեկի առջև սարսափով կանգ առավ, ոտքերը մեխվեցին տեղում, լեզուն չորացավ բերանի մեջ, քանզի սարսափելի էր տեսածը։ Ոչ այլևս քայլել կարողացավ, ոչ էլ բերանը բացել, օգնության կանչել։ Լուսամուտից իրեն էր նայում կապտած դեմքով, դուրս պրծած աչքերով և բերանից կախված լեզվով Կունծիկ աբեղան։ Նայելու բան չէր։ Հակոբը հոգին ի բուռ, հավաքեց իր ուժերը, ճնշեց վախն ու վազեց ներս.

— Կունծիկ աբեղան...

Խցի դուռը փակ էր ներսից։ Փորձեցին բացել, չարչարվեցին, չբացվեց։ Կախվել էր լուսամուտի երկաթյա վանդակից։ Կունծիկի այս անհեթեթ մահը ծանր ազդեց Գրիգորի վրա։ Ինչո՞ւ ցանկացավ բռնի մահով հեռանալ աշխարհից։ Ինչո՞ւ։ Մեղքերը քավելու բոլոր ուղինե՞րն էին գոց, թե մեղքերն այնքան էին շատ, որ քավելու համար չէր հերիքելու իր կյանքը։ Գուցե իր մահով ցանկացավ վրեժխնդի՞ր լինել հակառակորդներից իր բարոյական ծանր պարտությունների համար։ Գուցե խրոնճի խա՞ղն էր նրա վիզն հագցրել մահվան օղակը։ Ինչ էլ լիներ ինքնասպանության պատճառը, փաստը անհեթեթ էր ու անպատվաբեր միաբանության համար։ Հազար ու մի վարկած, հազար ու մի ենթադրություն՝ բազմաթիվ հարցականներով կախվել էին Գրիգորի հոգուց. «Նա այն մարդը չէր, որ նահանջեր խղճի առջև։ Նա երբեք խղճի հետ գործ չէր ունեցել, բարեկամ չէր եղել, որովհետև չէր ունեցել խիղճ կոչված մարդ-

կայինը։ Ոչ էլ մեղքի, մեղավորության զգացողություն ուներ, որ մահով քավեր։ Բարոյական ածականը ծիծաղելի էր նրա համար, քանզի իր կյանքում նա բարոյականությունը համարել էր թույլ մարդկանց կովանը, նրանց հնարածը։ Ուրեմն, նա պարանը վիզն էր գցել խելագարության բռնկման, նոպայի պահին կամ հոգեկան ցնցման այնպիսի մի պահի, երբ ձեռքը չէր դողացել կատարելու այդ ոճիրը, մանավանդ որ Կունծիկը գիտեր, նման մահը դատապարտվում է եկեղեցու կողմից և կարող է առիթ դառնալ նաև միաբանության տնօրինությանը մեղադրանքներ հարուցելու միաբանին ինքնասպանության հասցնելու համար։ Գոնե գրավոր մի բան թողներ, որ կասկածողների բերանը չբացվեր չեղած մեղքեր հորինելու։ Մոտիկները միաբերան վկայում էին, որ վերջերս Կունծիկը ծանր հոգեվիճակ էր ապրում։ Հուտիկ վարդապետի և էլի մի քանիսի ուրվականները հալածում, հետապնդում էին նրան, հաշիվ պահանջում նրանից կատարած չարագործությունների, կործանված կյանքերի համար։ Այդ փաստը փոքր-ինչ լուսավորում էր եղելությունը և փոքր-ինչ մեղմացնում մեռնողի մեղքերը։ Դե ինչ, եղածը եղել էր, և միաբանությունը առանց ավելորդ բարություն կամ խստություն ցուցադրելու, մի անանուն վայրում հողին հանձնեց նրա դիակը։

... Գրիգորին հայտնի չէր, թե ո՞ւմ հետ է ամուսնացել Դրախտիկը, չգիտեր ո՞ւր է նա։ Մանակերտո՞ւմ է, թե այլ մի տեղ։ Մայրացե՞լ է արդյոք, գրկանոցին տղա՞ է, թե՞ աղջիկ։ Վերջերս փոխվել էր պատկերը։ Դրախտիկի մասին խորհելիս նրա առջև հառնում էր աստվածամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին։ «Տեսնես ի՞նչ է անում, ո՞ւր է իմ աստվածամայրը...»— մտորում էր իր մեջ։ Անպատշաճ էր համարում մարդ ուղարկել կամ մարդկանց միջոցով տեղեկանալ նրանից։ Հավատացած էր, որ լուրը կհասնի որևէ ձևով և սպասում էր։ Բայց լուր չկար։ Սակայն այն զգացումը, որ մոտիկում, ինչ-որ տեղ ապրում է Դրախտիկը և հիշում է իրեն, Գրիգորի սիրտը լցնում էր անմեկին ջերմությամբ, կարոտով, որ պահում էր հոգու առույգությունը, թեժացնում սրտի անթեղված կրակը։ «Դու երևի գիտես, լսում ես իմ մասին և երևի փոքր-ինչ հանգիստ է հոգիդ, և անոթի չէ կարոտդ, իսկ ես չգիտեմ՝ ուր ես դու, ի՞նչ ես անում, իմ ըմբոստ գեղեցկուհի։ Չգիտես իմ հոգեվիճակը, չգիտես։ Ողջ օրը, գիշեր ու տիվ ինձ հետ ես, սակայն մեր կարոտները չեն հագենում, չեն կշտանում իրարից։ Ամբողջ օրը միասին ենք, իսկ հետո օրերով չոքած՝ մերթ աստծուն եմ պաղատում՝ մեղքերիս թողություն, քավություն խնդրելով, մերթ քեզանից ներողություն հայցում՝ սիրուց երկնչելուս համար, քանզի իրավազուրկ է մեր սերը և սիրելն արգելված։ Տեր աստված, ներիր իմ մեղքերը։ Եվ դու ներիր, Դրախտիկ, որ սերը մեղք եմ սեպում,

քանզի ծառան եմ աստծո, և քանի որ սիրո ծառան եմ նաև, մեղք, նույնիսկ հանցանք եմ համարում չսիրելը։ Այո՛, Դրախտիկ, ես մեղավոր եմ և աստծո, և քո առջև։ Զգիտեմ, երկու սրբությունների ճնշմանը ինչպե՞ս է դիմանալու իմ սիրտը։ Ինչպե՞ս եմ հոգիս հաշտեցնելու երկնային հետ։ Ինչպե՞ս հավատացնեմ նրան, որ երբ քեզ հետ չեմ, երբ չեմ գուրգուրում քո կարոտը, իմ մոռացկոտությունը պատժվում է։ Երբ ինձ հետ չես, ինձ հետ չէ նաև այն աստվածային ոգևորությունը, որ մղում է ինձ աստվածերգության և տիրամոր գեղեցկության փառաբանմանը։Երբ դու ինձ հետ ես, տերը հաշտ է ինձ հետ։ Երբ ինձ հետ չես, խռով է ինձանից։ Եթե հանկարծ կորցնեմ քեզ, անկասկած կկորցնեմ նաև տիրոջ բարեհաճությունն իմ նկատմամբ, իսկ այդ պարագային սարսափելի է գիտակցել, որ իմ պատկառանքն առ աստված կարող է փոխվել անհնազանդության, դժգոհությունը՝ ըմբոստության և ըմբոստությունը՝ սանձազերծվել երկինքն ի վեր։ Զար մտքեր են խմորվում իմ մեջ, տե՞ր իմ... Գոնե քո փրկարար մեծահոգությամբ, գթասրտությամբ նաև հասկացիր ինձ և ներիր անհեթեթ ու վտանգավոր մտքերիս համար, քանզի կորցրած սիրո ցավից կարող են խավարել մարդու մտքի և հոգու լույսերը, թուլանալ լեզվի կապերը և չասվելիքը՝ ասելիք դառնա։ Դու ներիր, թեև չարաշահել եմ քո բարեհաճությունը և արժանի չեմ քո աստվածային ներողամտությանը։ Այսքանից հետո, ամենազոր, ես ցանկանում էի այլևս չչարաշահել քո համբերությունը։ Իմ անձնական ողբը չդարձնել աշխարհիս ողբերգություն։ Ցանկանում էի կապանք դնել լեզվիս, բանտարկել խոսքս։ Սանձել զգացմունքներիս հեղեղն առ Դրախտիկը։ Սակայն լեզուս չի ենթարկվում կամքիս, զգացմունքներս՝ բանականությանս, սերս՝ ժամանակին ու հեռավորությանը։ Զարմանում եմ, թե ինչպե՞ս եմ ապրել առանց Դրախտիկի։ Անգամ քամուն էի խանդում, որ խառնում էր նրա խոպոպները, ջրին, որ թրջում էր շրթունքները, ծաղիկներին, որ բուրում էին նրա գրկին՝ և ես հաշտվում եմ նրա մարմնական կորստին և մխիթարվում լոկ կարոտով նրա, հուշով և հիշատակով։ Հիմա նրա գրկանոցին խլվում է մանչուկը կամ աղջնակը, հիմա նրա սերը կիսողները շատացել են, գուցե իմ բաժին սերը նվազել և խլացել է նրա ամուսնու տաք շոյանքների և զավակի լայ ու ծիծաղի մեջ։ Մի նեղանա, տեր, եթե խոստովանեմ, որ Դրախտիկի սերն ի զորու է փոխարինելու երկրային բոլոր սերերին և համաքայլել երկնայինների հետ։ Մեղա քեզ, տեր, բազմիցս մե՞ղա... Ներիր մեղավորիս, եթե կարող ես...»։

***

Մայիսը մտել էր աշխարհ։ Արևի ու լույսի, ծառի ու ծաղկի, կանաչ ու կարմրի այնպիսի հրավառություն էր, որ վանական խուցի քարե պատերն արդեն անզոր էին խենթացող սրտին կլանել իրենց մեջ։ Այնպիսի ավյուն էր զգում հոգում, արյունն այնպես էր խշշում ու հորձանքվում երակներում և այնպիսի թափով աշխատեցնում սիրտը, որ սա քիչ էր մնում ջարդեր կրծքավանդակը ու նետվեր արևին, լույսին, զարթոնքին ընդառաջ։ Շրջում էր, շնչում հարբեցնող օդը։ Ոսկեգույն ամպից մարգարիտ էր տեղում, գարնան տաք անձրև։ Ծաղիկները, բողբոջները անտեսանելիորեն բացվել էին անձրևին։ Նրբորեն թրթռում էին թերթիկներն ու տերևիկները։ Աշխարհը ծլարձակման և ծաղկման մեջ էր։ Հոգին երգում էր.

Նոճիներն ու արոսենին նորաբողբոջ
Շրշում էին՝ հևքով հուշիկ
Գգվելով վարդ ու շուշանին.
Շողշողում էր շուշանն հովտում.
Շողում էր դեմն արեգակի։

...Ու շուշանն էր լցվում շաղով,
Շող շաղով ու շար մարգարտով.
Արեգնափայլ ոսկի ամպից
Շաղն էր ցողում ծաղկունքն ամբողջ։

Քայլում էր գինովի նման՝ ականջը աշխարհի և բնության ձայներին։ Մի մատ երեխա էր, երբ անձրևում էր, իրենց շենի աղջիկները գլխաբաց վազում էին անձրևի տակ կամ հավաքում էին անձրևաջուրը և իրենց մազերը լվանում, որ ավելի երկարեն, ավելի փարթամանային մազերը։ Ի՜նչ ուրախություն էր. մինչև հիմա ականջներում զնգում է նրանց ծիծաղը։ Անձրևը հանկարծակի դադարեց, ինչպես սկսվել էր, և դեմ դիմաց կամարվեց շքեղ ծիածանը։ «Որքա՜ն գեղեցիկ է աշխարհը։ Սակայն աշխարհի զարդը մարդն է, որ տեսնում, հասկանում և գնահատում է այս գեղեցկությունը, այլապես չէր լինի գեղեցկության զգացողությունը, և բնությունը զրկվելով գնահատողից, կզրկվեր նաև գեղեցկությունից։ Ո՜վ մարդ արարած, դու որ այս գեղեցկության հայտնագործողն ես, վայելողը, նաև տերը, ինչո՞ւ չես փորձում նրա նման մաքուր ու գեղեցիկ լինել։ Ինքնամաքրումը բնության մեծագույն փրկիչն է, որ չի թողնում բնությանը աղտոտվելու, ժանգոտվելու, կորցնելու հմայքը։ Նայիր բնությանը, սովորիր բնությունից, ընդօրինակիր նրա մաքրասիրու-

թյունը և, քանի որ դու ճանաչում ես գեղեցկությունը, ուրեմն, նախ, գեղեցկացիր ինքդ, որ կատարյալին հասնելու ամենակարճ ճանապարհն է...»։

Հիմար սովորություն էր ձեռք բերել։ Խոսում էր ինքն իր հետ, ինքն իր մեջ։ Հարցեր էր առաջադրում և պատասխանում։ Հետո ցավով մտածեց, որ դա ճգնակենցաղ կյանքից է, մարդկանց հաղորդակցվելու պակասից։ Ախր, մարդուն հաղորդակցվելը նույնքան անհրաժեշտ, նույնքան պարտադիր գործոն է, որքան ուտելը, աշխատելը, ստեղծագործելը, հետևաբար, այդ պակասը լրացնելու համար, այլ ելք չունենալով, մարդը մենախոսում է, նույնիսկ երկխոսում, ասուլիս անում ինքն իր հետ։ Եվ հիմա գարնանով արբած՝ ինքը խոսում է գարնան հետ, ունկնդրում է գարնան ձայներին, պատասխանում է գարնան հարցերին։

Գետակը վարարել և այնպիսի աղմուկ է սարքել, որ շառաչը դիպչելով ժայռերին, կրկնակի արձագանքելով՝ կրկնակի չափով բարձրացնում է աղմուկը։ Խելառ գետակ է, նույնիսկ վարարած ժամանակ մի բան չէ, բայց քանի որ յուրաքանչյուր քայլին ջրվեժներ է սարքում, բախվում է քարերին, թռչում է քարերից, ապա իր փոքր տեղով մեծ գետի պատրանք է ստեղծում։ Գրիգորը ժպտաց, մարդն էլ է այսպես, քանի հանգիստ է, խաղաղ, ապա զուլալ է, մաքուր, այնքան մաքուր, որ երևվում է հոգու հատակը, իսկ եթե, աստված մի արասցե, հուզվեց, զայրացավ, ապա կպղտորվի, պատեպատ կխփվի, ճանապարհից կքշի պիտանի ու անպիտան ամեն բան, գոռոցով ու հառաչով կխեղդի շրջապատը, ճիշտ այս գետակի նման...»։

Գետակը կտրեց ճանապարհը, կտրեց մտքերից և մարեց ճանապարհը շարունակելու ցանկությունը։ Դյուրին չէր առաջ գնալը։ Կատաղի ընթացքը, սայթաքուն քարերն անանցանելի էին դարձրել մի քանի քայլ լայնություն ունեցող գետակը։ Ի՞նչ անել։ Ուզում էր հետ դառնալ, ներքևից ձայներ հասան ականջին, բավական բարձր ու տիրական ձայներ։ Հոսանքի ուղղությամբ քայլեց ներքև և տեսավ գետակի մեջ խրված երկաթի կառքը։ Ոչ առաջ, ոչ հետ։ Կառապանի հորդորները, աղաչանք-պաղատանքները, սպառնալիքները, որ ուղեկցվում էին մտրակների հարվածներով, չէին փոխում վիճակը։ Ձիերը ճկռում էին ծանրությունից, սակայն ձյութի պես կառքի անիվներից կառչած ցեխից ու տիղմից չէին կարողանում կառքը դուրս քաշել, ազատել գերությունից։ Կառքի նստոցին բազմել էին երիտասարդ իշխանը (ամենայն հավանականությամբ) և իշխանուհին։ «Ովքե՞ր են...»,— հարցրեց մտքում Գրիգորը և քայլեց առաջ։ Մոտեցավ։ Կառապանը տեսնելով կրոնավորին, անթաքույց դժգոհեց, և խոսքը հասավ Գրիգորի լսելիքին։

— Սրա այստեղ երևալը լավ նշան չէ,— ասաց,— որտեղի՞ց լույս ընկավ այս ագռավը։

— Հա՜, հա՜, հա՜,— ծիծաղից թուլանում էր իշխանազնը,— լավ ասաց, հա՜, հա՜, հա՜...

— Բայց ճիշտ չասաց,— ժպտաց Գրիգորը,— ես տերտեր չեմ...

— Իսկ ի՞նչ ես, որ տերտեր չես,— իշխանազնի ձայնի մեջ ամբարտավանության, մեծամտության երանգներ կային, որ դուր չեկավ Գրիգորին։

— Իսկ քեզ համար միևնույն չէ՞, երիտասարդ,— խոսեց Գրիգորը։

— Միևնույնը լիներ՝ չէի հարցնի,— նեղացած փքվեց իշխանազնը։

— Հիմա ձեզ հարկավոր է կառքը դուրս հանել գետակից,— համառեց Գրիգորը,— ձեր հոգսը այժմ դա է...

— Եթե ես այս անիծյալ կառքից կարողանայի թռչել գետափ, քեզ՝ սևազգեստիդ ցույց կտայի, թե ինչպես պետք է խոսել Մոկաց իշխանազնի հետ...

— Եվ ի՞նչ կանեիր,— ծուռ նայեց Գրիգորը։

— Մտրակածեծ կանեի,— խոսեց Մոկացին։

— Իսկ ես, իհարկե, քեզ չէի ծեծի,— միանգամայն լուրջ պատասխանեց Գրիգորը,— կխնայեի իշխանական ծագմանդ։ Ես, հարգելիս, ամբարտավանությանդ համար քեզ պարզապես կխեղդեի այս պղտոր գետում, հասկացա՞ր...

— Ասում էի, չէ՞...— խոսեց կառապանը,— ախր, սրանց հանդիպելը վտանգավոր է, ուր սրանք, այնտեղ էլ դժբախտություն...

— Ես ցույց կտամ այս սևավորին,— բորբոքվեց իշխանազնը,— բանադրել կտամ, կարգալույծ անել կտամ...

— Եթե դու այդքան քաջ ես,— խոսեց Գրիգորը,— փորձիր կառքից թռչել և օգնել կառապանին, թե չէ ստիպված կլինեք գիշերել այստեղ... Թռիր, ես քեզ կօգնեմ, թե չէ ամոթ է նստել երիտասարդ իշխանուհու առջև և գանգատվել...

Իշխանազնի գոռոզությունը տեղի տվեց։ Նա կանգնեց կառքի ոտնակին։ Նրա դեմքին աղերսանքի նման մի բան հայտնվեց։ Գրիգորը գլխի ընկավ։ Օգնություն է հարկավոր։

— Թռիր առանց վախենալու...

Եվ իշխանազնը թռավ։ Լավ թռավ։ Եթե Գրիգորը չչանթեր թևից, կարող էր ընկնել ջուրը և թրջվել մինչև ոսկորները։ Բայց ամեն ինչ անցավ բարեհաջող։ Եվ երբ իշխանազնը ոտքերի տակ զգաց ամուր գետինը, նայեց Գրիգորին և սկսեց բարձրաձայն ծիծաղել։

— Հավատում եմ, որ դու տերտեր չես...

— Ինչի՞ց իմացար...

— Ամուր ձեռք ունես, շա՜տ ամուր...

— Հարկավոր է, շատ է հարկավոր ամուր ձեռք ունենալը, այլապես իշխանները մեզ մտրակածեծ կանեն...

Հետո երեքով երկար շարշարվեցին և վերջապես կառքը հանեցին տիղմ ու ցեխից։ Հոգնել էին։ Նստեցին ընթրելու։ Գրիգորը վաղուց նման ախորժակով չէր կերել։ Նախ օրհնեց սեղանը։ Վերջում շնորհակալություն հայտնեց։

— Մենք ենք քեզ պարտական,— խոսեց իշխանազնը,— փրկեցիր...

— Բայց կառապանը քո կարծիքին չէ,— ժպտաց Գրիգորը։

— Ներիր, տեր հայր,—ծոծրակը քորեց կառապանը,—քեզ չպատահեինք, ամբողջ օրը մնալու էինք ցեխաջրի մեջ... ես արդեն սկսել էի գորտի նման կռկռալ...

— Ոչ թե՝ տեր հայր, այլ հայր տուրբ, ես վարդապետ եմ, Նարեկի միաբանության վանահայրը։

— Գրիգոր Նարեկացի՞ն...— ոտքի թռավ իշխանազնը։

— Այո՛, Գրիգոր Նարեկացին։

Երիտասարդը խոնարհվեց, համբուրեց Գրիգորի աջը։ Նրա աչքերում արցունքներ ծլեցին։ Հուզմունքից, թե ամոթից։ Ավելի շուտ ամոթից, որ վիրավորել էր անտեղի։ Վանահոր աջը կրկին ու կրկին մոտեցրեց շուրթերին։ Ամուսնուն հետևեց նաև կինը։ Նաև կառապանը։ Հուզվելու հերթը արդեն Գրիգորինն էր։ Կարողացավ կուլ տալ հուզմունքը։ «Ուրեմն, ճանաչում են, ուրեմն, սիրում են»։ Բարձրացավ։

— Դե՛, բարեկամներ, պահ է բաժանվելու։ Մեր օրերը միօրինակ են՝ չորս պատերի մեջ, և ես ուրախ եմ, որ դիպվածը հանդիպեցրեց։ Նման հանդիպումները ոգեշնչում, օգնում են մեզ և մղում ապրելու, աստծուն և ազգիս նվիրվելու երջանկությանը։ Գնացեք բարով ձեր Մոկաց սքանչելի աշխարհը, թող բարի լինի ձեր ճանապարհը...

Եվ առանց ետ նայելու բարձրացավ ձորալանջի թեքությունը։ Ուսերն ուղղվել էին, կուրծքն ուռչում էր հուզմունքից ու հպարտությունից։ Քայլերը դարձել էին հաստատ ու հանդիսավոր։ Անծանոթ մարդիկ ճանաչել էին իրեն, ոչ միայն ճանաչել, այլև՝ պատկառել, խոնարհվել տաղերգուի իր վաստակի առջև։ Կյանքում երևի առաջին անգամ Գրիգորն սկսեց ծաղիկներ փնջել։ Գարունը ծաղկողի վրձինն ու հանճարն առել, ընկել էր հանդերն ու սարերը։ Ի՜նչ գույներ, ի՜նչ բույրեր էր շաղ տալիս, աստված իմ... փնջում էր անշտապ, հաճույքով, ընտրողությամբ։ «Սակայն ո՞ւմ համար եմ փնջում, ո՞ւմ... Դրախտիկին արժանի ծաղկեփունջ չէ՞։ Իրավունք, պարտականություն և նման սահմանափակումներ չինեին, այս

փունջը հենց այս պահին կհասցնեի Մանակերտ՝ Դրախտիկին։ Գարունը կզուգեի գարունով։ Բայց այդ իրավունքը խլված է ինձանից, նրան սիրելու օրինական իրավունքն արդեն տրված է ուրիշին։ Սակայն միևնույն է։ Ծաղիկները փնջում եմ նրա անունով և հավատում եմ, որ նրա համար է...»։ Ծաղկեփունջը հուրհրատում էր ձեռքի մեջ։ Սիրահար զույգին ուշ նկատեց։ Քայլում էին արար աշխարհ մոռացած, տղան աղջկա մեջքը գրկելու ամաչկոտ փորձեր էր անում, աղջիկը խուսափում էր, եղեգնի նման ճկում էր մեջքն ու դուրս լողում տղայի ձեռքերի օղակից։ Խոսում էին։ Նախանձեց, բայց օրհնեց նրանց սերը։ Խանդեց, սակայն երջանկությունն ցանկացավ։ Արտասվեց, սակայն ինքն էլ չիմացավ. նրանց երջանկությո՞ւնը արցունք քամեց իր աչքերից, թե իր կորցրած սերը, չիմացավ... Իսկ նրանք քայլում էին անխոս, երջանիկ։ Նայում ու չէին տեսնում Գրիգորին։ Համառորեն չէին տեսնում։ «Երջանկության աչքերը կույր են։ Չեն տեսնում, ուրեմն, սիրում են, երջանիկ են...»։ Հավասարվեց նրանց, բարևեց։ Տղայի ձեռքն անմիջապես ծլկեց, փախավ աղջկա մեջքից։

— Լսիր, որդիս,— տղային մեկնեց ծաղկեփունջը,— վերցրու և նվիրիր քո աղջկան։

Տղան վերցրեց ծաղկեփունջը և սեղմեց աղջկա կրծքին։

— Շնորհակալ եմ, հայր սուրբ, շա՜տ եմ շնորհակալ...

— Լսիր, որդիս, ուշադիր եղիր սիրույդ նկատմամբ, սերդ հեռու պահիր չար աչքից, որ չվնասվի ձեր միությունը։

Տղան զարմացած նայեց վանահորը։ Նարեկ գյուղից էր, ճանաչում էր նրան։ Առաջին անգամ էր տեսնում, որ կրոնավորը խոսեր աշխարհականի նման և պաշտպաներ դեռևս չօրինականացված սերը, որ իրենք վայելում էին ծնողներից ու արար աշխարհի աչքից հեռու։

— Շնորհակալություն...

— Բախտավոր եղեք,— օրհնեց,— աստծո աջը ձեզ հովանի։

Եվ արագացրեց քայլերը։ Չցանկացավ, որ տեսնեին արցունքները։

***

Օրը դեպքառատ էր, հարուստ տպավորություններով։ Դեռ Նարեկավանք չհասած, տեսավ մի խումբ զայրացած շինականների, որոնց բարձրաձայն, հայհոյախառն խոսակցությունը ծակեց Գրիգորի լսելիքն իր անհեթեթ և տհաճ բովանդակությամբ։ Պարզվում է, որ առավոտյան Նարեկեն ժամանել զորականները և շինականներից երեք հոգու կալանավորելով, տարել Ոստան, թե՞ Աղթամար դատելու, որպես մարդասպանների,

որ կամայականորեն պատժել են, ջրասույզ արել վարդապետ Ղազարոսին։ Գրիգորը զարմացել էր, ինչո՞ւ իրեն չեն այցելել զորականները։ Ինչո՞ւ տեղյակ չեն պահել իրենց գալստյան մասին։ Պարզվեց նաև, որ նրանց այցելությունից անտեղյակ է եղել նաև գեղջավագը և այցելության լուրը լսել է միայն այն պահին, երբ, շինականներին ձերբակալած, տանելիս են եղել կալանատուն։ Գրիգորը երկար մնաց շինականների հետ։

— Հայր սուրբ, նրանք ինչո՞ւ չայցելեցին միաբանությունդ։

— Պատճառն ինձ էլ հայտնի չէ...

— Եթե շինականներին մահվան դատապարտեն, հայր սուրբ, անարդար բան կլինի։ Բանն այն է, որ այդ երեքը բանից անտեղյակ են, ատոծո նզոված շանը ջրասույզ անողները չեն։

Գրիգորն զգաստացավ, վատ զգաց իրեն։

— Մի՞թե, եթե անմեղ են, ինչո՞ւ են կալանել...

— Պետը հրամայեց ձերբակալ անել առաջին պատահած շինականներից երեք հոգու, որպես պատանդների։ Եթե շենը մեր ձեռքը հանձնի մեղավորներին, ասաց, պատանդները կազատվեն, հակառակ դեպքում կդատվեն որպես մարդասպաններ...

— Այդպես էլ ասա՞ց...

— Այո, հայր սուրբ, երբ մենք ասացինք, թե՝ ինչո՞ւ տեղյակ չեն պահում վանահորը և գեղջավագին, պետը սպառնաց, որ չխառնվենք տեղական գործերին, այլապես մեզ մտրակածեծի կենթարկեն։ Իսկ վանահորն ու գեղջավագին, եթե հարկ լինի, տեղյակ կպահեն դատական պաշտոնյաները։ Իմ գործը նրանց հրամանը կատարելն է, ասաց...

— Իսկ որքա՞ն ժամանակ տվեց։ Մեղավորներին ե՞րբ եք հանձնելու...

— Մեկ շաբաթվա ընթացքում։ Չհանձնելու, նույնիսկ ուշացնելու դեպքում պատանդները կդատվեն։ Հայր սուրբ, ամբողջ դժվարությունն այն է, որ Ղազարոսին ջրասույզ են արել գեղջավագի հրամանով և հրամանն ի կատար ածողներին էլ ինքն է ընտրել։ Վախենում ենք շենում խառնակություն տեսնվի։ Ձերբակալվածների արյունակիցները կարող են մատնացույց անել սպանողներին կամ ավագին, որպես այդ սպանության գլխավոր հանցավորի... Չգիտենք ի՞նչ անել...

— Այո, դժվար կացության մեջ է շենը։ Եթե շինականները զգաստորեն չխորհեն իրենց անելիքը, շենում այնպիսի խառնակ վիճակ կստեղծվի, որ այլևս ուշ կլինի կանխել վերահաս ողբերգությունը։

— Իսկ շենը մտածե՞լ է փրկագնի մասին...

— Իսկ փրկագնով մի բան դուրս կգա՞...

— Փորձը փորձանք չէ։ Հարկավոր է դիմել նաև այս քայլին։ Գյուղի հանգստության և խաղաղ կյանքի հոգսը կարևոր է, շատ կարևոր միաբանությանս համար։ Բարի լույսի հետ մեկտեղ գեղջավագի հետ եկեք վանք՝ ինձ մոտ, ես կգրեմ հոգևոր դատարանին, եթե չհարգեց, ուրեմն, կգնամ հոգևոր առաջնորդի մոտը...

— Եթե փրկագինը շատ թանկ լինի, ի՞նչ ենք անելու...

— Կմտածենք այլ ճարուճամփա գտնելու շուրջ։ Ասացի, որ ես կգնամ հոգևոր առաջնորդի մոտ։ Հանգիստ ու խաղաղ պահեցեք շենը, աստված ողորմած է...

— Աստված ողորմա՞ծ է,— կրկնեցին շինականները խաչակնքելով։

***

Նամակը գրվեց։ Սակայն ոչ վանահայրը, ոչ գեղջավագը չէին հավատում գործի հաջողությանը՝ «փորձը փորձանք չէ»։ Նույն օրը գեղջավագը մի քանի տարեց շինականների հետ մեկնեց Վասպուրական աշխարհի մայրաքաղաքը՝ Աղթամար, վանահոր գրավոր խնդրանքը հոգևոր դատարանին հանձնելու համար։ Հաջորդ օրը պատվիրակները վերադարձան և առանց պահ իսկ կորցնելու ներկայացան Գրիգորին։

— Բան դուրս չեկավ,— գուժեցին միաձայն։— Քիչ մնաց բոլորիս նետեին կալանատուն...

— Ինչո՞ւ...

— Ներկայացանք դատավորին։ Մեզ լսելուց հետո նա գնաց սրբազանի մոտ, որից հետո մեզ հրավիրեցին առաջնորդարան, Ստեփանոս եպիսկոպոսի նստավայրը։ Մտնելուն պես սկսվե՞ց... էլ ինչ թուք ու մուր ասես, որ չթափվեց մեր գլխին, էլ մարդասպաններ, էլ հերձվածողներ, էլ ամբարիշտներ ու անբարոյականներ։ Գեղջավագը չհամբերեց. «Սրբազան, ասաց, դուրս է գալիս, որ մենք՝ նարեկցիներս, ձեռը հնը բարձրացրել աստծո գառի վրա և մարդասեր ու առաքինի աստծո սպասավորին սպանել ենք։ Մեր սխալը, սրբազան, այն է եղել, որ մենք կանխել ենք դատարանին, առաջ ենք ընկել։ Դատարանը տակավին Ղազարոսի մահվան դատավճիռը չարձակած, մենք այն ի կատար ածեցինք»։ Հարկավոր էր տեսնել, թե ինչպես կատաղեց սրբազանը, ինչպես զայրացավ սրբազանը։ Հուր ու կրակ թափեց մեր գլխին։ «Թոնդրակը բոլորիդ հանեց աստծո դեմ, և դուք, բոլորդ, առանց խտրության հեթանոսներ եք և արժանի աստծո պատժին։ Դուք ցանկացաք ազատվել վարդապետից և նյութեցիք այդ դավադրությունը՝ ահավոր մեղք հորինելով և անվանարկելով նրան։ Դեռևս հարցը պարզված չէ, վարդապե՞տն է մեղավոր, թե՞

դուք, որ դարձրիք նրան ձեր ամբաստանության զոհը։ Այնպես որ նրա սպանությունը՝ կրկնահանցագործություն է։ Սպանում եք աստծո ծառային և սպանելուց առաջ նյութում ահավոր զրպարտությունը»։ Գեղջավագն այլևս իրեն զսպել չկարողացավ. «Սրբազան, ասաց, իմացիր, որ մենք և աստված ունենք, և հավատ, և բարոյականության ու պատվի համար կարող ենք կյանքով հատուցել, կյանքով պատասխան տալ։ Ասեմ նաև, որ եթե ողջ լիներ հիմա Ղազարոս կոչեցյալ գարշելին, առանց խրոնճի խայթի, առանց մեղանչելուց վախենալու, հենց քո աչքի առջև, ես նորից կսպանեի նրան, քանզի շուն էր նա և սատկեց շան մահով, միանգամայն արդար պատժով։ Հիմա մենք խնդրում ենք քեզնից, անմեղ մարդկանց բաց արձակել, զի նրանք մեծ գերդաստանների տերեր են, կին ու մանուկներ ունեն, որոնց սովի մատնելը աստվածահաճո գործ չէ։ Եվ ամենագլխավորը՝ նրանք Ղազարոս վարդապետի մահվանը չեն առնչվում, անմեղ են»։ «Մեղավորներին մեզ տվեք, անմեղներին կազատենք»,— ոռնաց սրբազանը։ «Այս սպանության գործում մեղավորներ չկան, մեղավորը սպանվողն էր»։ «Բոլորիդ, բոլորիդ կհրամայեմ զնդանել, բոլորիդ մահուն կհանձնեմ...»,— գոռում էր սրբազանը։ Այս խոսքերի վրա մենք էլ խառնվեցինք. «Ինչպե՞ս թե բոլորիս մահուն կհանձնեք, մենք քո աչքին շնացող Ղազարոսնե՞ր ենք, ի՞նչ է։ Մենք եկել ենք այստեղ, արդարության հետևից։ Սակայն պարզվում է, որ ամբողջ շենով զրպարտիչներ ենք, և միակ ազնիվ ու անմեղը շնացող վարդապետն է։ Բաց արձակեցեք մեր երեք անմեղ նարեկցիներին, թողեք խաղաղ ապրենք մեր դժվար կյանքը»։ «Տվեք մեր ձեռքը սպանողներին և չբվեք այստեղից, նորից իրենն է կրկնում սրբազանը, ձեզ փչացրել են, շինականներ, ձեր արյանը թոնդրակյան թույն են խառնել։ Իմացեք, ձեր Նարեկի միաբանության անհայտացած վանահայր Անանիան երդվյալ թոնդրակյան էր, իսկ նորը՝ հայտնի չէ, թե ով է»։ Նորից գեղջավագը չհամբերեց. «Ներեցեք, սրբազան, ի սեր աստծո, չեմ հասկանում, թե ճշմարտությունը քո աչքին ինչո՞ւ է գլխիվայր երևում։ Շնացողը՝ ազնիվ, թոնդրակյանների դեմ մարանչողը՝ թոնդրակյան, աստվածատուր բանաստեղծը՝ կասկածելի։ Քո ճշմարտությունը, սրբազան, աստծո ճշմարտությունը չէ։ Եթե հարգալից է տրամաբանությունը քեզ համար, ապա հարկ եմ համարում նկատել, որ վավերական հակաթոնդրակյանի են թոնդրակյան կոչելը, դա հենց թոնդրակյանության դրսևորում է քո կողմից, որը միտում ունի ջլատելու հակաթոնդրակյան ուժերը։ Ուրիշ անուն չունի քո վարմունքը։ Իսկ հիմա, սրբազան, հրամայիր, որ ինձ զնդան նետեն, զի ես եմ սպանել Ղազարոս վարդապետին։ Եվ իմացիր, թույլ չեմ տա Նարեկը դարձնել խառնակությունների ասպարեզ,

թույլ չեմ տա, որ շինականներն իրար հոշոտեն։ Ես եմ կարգադրել, ես եմ սպանել շնացողին։ Ազատիր երեք անմեղ մարդկանց...»։

Գրիգորը զարմանքով լսում էր շինականներին։ Մինչև նրանք այս պատմությունն արին, օրվա կեսն անցավ։ Պատմում էին՝ խոսքն իրարից խլելով, իրար հերթ չտալով, կցկտուր։ Գրիգորը մտքում ամբողջացրեց այս աղմկոտ ասուլիսը, իսկ հոգում ծանր բախումներ կային։ Մի կողմից հպարտություն՝ գեղջավագի համարձակության և իմաստուն վարքագծի համար, և ամոթ ու ցավ՝ եպիսկոպոսի միտումնավոր ու անմարդկային պահվածքի համար։

— Հետո՞, հետո՞...

— Սրբազանի հրամանով գեղջավագին կալանավորեցին, իսկ երեք պատանդներին չնայած մեր թախանձանքներին՝ չարձակեցին...

— Շինականներ, գնացեք ձեր բանին ու գործին։ Ամենայն հավանականությամբ, կուզենայի, որ չկասկածեիք, այս տխուր պատմությունը պետք է որ հաջող ելք ունենա...

«Սպասվում է բախում եպիսկոպոսի հետ։ Հայր Անանիայի հաշիվները պարտ եմ մարելու ինքս։ Ինձ հետ իր ժանգոտ, նաև աղտոտ սուրն է ցանկանում խաչաձևել Ստեփանոս եպիսկոպոսը, որը հայտնի է որպես խարդախ գործելակերպի վարպետ, որպես զրպարտիչ, և այս ամենով էլ վտանգավոր հակառակորդ։ Սակայն նահանջելը սրիկայի առջև հավասարազոր է խայտառակամահ լինելուն։ Ինքն է ցանկանում նախահարձակ լինել։ Ավելի լավ։ Ասում են՝ խորամանկ է։ Եթե խորամանկ է, ուրեմն խելոք չէ։ Ասում են՝ թեև սիրում է հարձակվել, սակայն վախկոտ է։ Թեև կրոնավորներին բուռն է հավաքել, սակայն սիրված չէ նրանցից։ Թերությունները ու թուլությունները ավելի երևացող են, առավելությունները՝ ոչ, որովհետև չունի։ Այո, կռվելը թեև իմ սիրած արհեստը չէ, բայց պայքարից խուսափելը՝ պարտություն և վախկոտություն է նշանակում։ Ստիպված, ճարահատյալ մտնելու եմ ասպարեզ։ Ի՞նչ է կատարվում քեզ հետ, իմ հայոց հին և չհնացող ազգ, ի՞նչ... Ինչո՞ւ են քո զավակներից ոչ քչերը հակված դեպի անմաքրությունը։ Ապրող, ապրել կամեցող ժողովուրդը իրավունք չունի ապավինելու անբարոյականությանը, զրպարտությանը, գողությանը, կաշառքին և այլ անմարդկային արարքներին։ Գետն իր ընթացքում ի զորու է իրեն մաքրելու ախտից ու անմաքրությունից։ Ինքնամաքրումով, ինքնահստակվելով նա մերժում է թույնն ու վարակը։ Սակայն բավական է կորցնի ինքնամաքրման հնարքը և կփոխարկվի թույնի ու թարախի և կմեռնի ծով չհասած։ Ազգի ընթացքը նման է գետի ընթացքին։ Ազգը կարող է հարատևել միայն չընդհատվող պարբերականությամբ, համառությամբ մաքրվելով, բարձր բարոյականու-

թյան, հոգու գեղեցկության բարձունքները նվաճելով։ Բավական է կորցնի հոգու գեղեցկությունը՝ կկորցնի նաև ապրելու հնարքը, պահելով միակ աղքատիկ հարստությունը՝ մարմնավոր գոյությունը, որ ունեն նաև գեղեցկությունն ընկալելու անընդունակ կենդանիները։ Ապրել նշանակում է ճանաչել գեղեցկությունը։ Ապրել նշանակում է պաշտել մաքրությունն ու ազնվությունը։ Կատարյալին ձգվող ճանապարհին ունենալ նաև մարտնչելու կորով։ Տեր, մի՞թե պիտի անպատվես նյութը քո պանծալի հարստության... չպահես պսակիդ պայծառության զարդը վայելուչ, որ մարդն է միայն, տե՛ր։ Փրկի՛ր մարդուն... Ի՞նչ է կատարվում մարդկանց հավատի հետ։ Աստված կա, հավատը՝ ոչ։ Ինչո՞ւ է հավատը մարդկանց հոգիներում հավատափոխ լինում։ Ինչո՞ւ է աստված մանրատվում փոքր, բայց զորեղ աստվածությունների՝ ոսկու աստծո, պատերազմի աստծո, ստամոքսի աստծո, ինչքի աստծո և այլն։ Գուցե սատանանե՞րն են հալածում մենության մեջ տառապող աստծուն, միակ կատարյալին։ Բազմաստվածության ժամանակներն անվերադարձ անցել են։ Հեթանոս աստվածները մեկիկ-մեկիկ սրահարվել են, նետահարվել։ Փոխվել են ժամանակները, սակայն, տեր աստված, դու պահիր, պահպանիր քեզ մեզ համար և թույլ մի տուր, որ քո բնավորությունը փոխեն։ Մի հարմարվիր ախտավորներին, աստված իմ, թե սիքում ես աստծուն։ Մարդուն դուրս քաշիր մեղքերի ճահճից ու ախտավարակ ցեխերի միջից։ Տես, մարդիկ ո՞ւր են միտում, տեր իմ, ուզում են քեզ իջեցնել իրենց ճահիճը, իրենց անմաքրության մակարդակը։ Բայց դու ամենազոր ես, տեր իմ, ենթարկիր նրանց քո կամքին ու քո զորությանը։ Մարդիկ, մարդիկ, ո՞ւմ է ծառայում ձեր հոգին և մարմինը։ Դուք, որ չգիտեք ո՞րն է սահմանը Հիսուսի սրբության և Հուդայի ախտավարակ էության։ Մատնում ու դավաճանում եք Հիսուսին և ծնկաչոք ողբում նրա խաչելության առջև։ Տեսեք, ո՞ւր են միտում աստծո անունից բարբառող սպասավորները։ Ստեփանոս եպիսկոպոսը ցանկանում է ոթել նարեկցիների արյունը, առանց խորշելու որբացած մանուկների, այրիացած կանանց հեռանկարից և այս բոլորը գործի վերածել իր՝ կրոնավորի, աստծո սպասավորի ձեռքով ու հրամանով։ Ես չպետք է թույլ տամ նրան՝ ի կատար ածելու աստվածասպան իր ցանկությունը և հուսով եմ, որ դու կօգնես ինձ, աստված, կօգնես...»։

Գիշերը մինչև լույս գրում էր։ Նեղլիկ պատուհանից առկայծում էր կանթեղի բարակ, դողդոջ լույսը։ Իսկ առավոտյան մագաղաթները զարդարված էին գոհարացած մեսրոպատառերի ամուր ու կանոնավոր շարքերով։ Իսկ ինքը գլուխը սեղանին քնել էր պինդ ու աներազ քնով։ Լուսամուտի քիվին ղոնղոնում էին աղավնիները։ Արևն արդեն ճիգ էր անում գլուխը հանելու լեռների թիկունքից, երբ զողանջեցին եկեղեցու զանգերը, որ ճգնակենցաղ միաբաններին կոչում էին արթնության, կոչում էին աղոթքի։ Վեր կացավ, ճմլկոտեց մարմինը, ստիպեց ոսկորներին և մկաններին ցավելու, արթնանալու։ Լվացվելուց առաջ խաչակնքեց և նայեց մագաղաթի լիքը թերթերին։ Ժպտաց։

— Տեսնեմ ինչ եմ ծաղկել, հետաքրքի՞ր է...

Եվ քայլեց դեպի մայր եկեղեցին։

ԶԱԽՈՂՎԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհը շքեղ էր, և աշխարհը՝ արևոտ։ Զախից բացվում էր Վանա լճի զմրուխտագույն հեռանկարը, որ կապտագույնի և կանաչագույնի բոլոր երանգներն ուներ և գեղեցկուհու նման մեջքին ընկած ցուցադրում էր իր բոլոր հրապույրները և ժպտում, ծփում էր, խայտում ու ալիքվում։ Ափերին լիճն օղակում էր սպիտակ փրփուրը, որին հետևում էր բաց երկնագույնը, հետո գնալով թնդանում էր կապույտը, իսկ խորքերում նարդեն զմրուխտագույն էր։ Այս հարաշարժ գեղեցկությունն իրենց գիրկն էին առել լիճն օղակող Արտոս, Վարագ, Սարակն, Նեխ, Մասիք և այլ լեռներ, որոնք սպիտակ գագաթները խոնարհած գեղեցկուհու մահճին, դիտում էին նրա քմահաճություններն ու շարությունները։ Աջ կողմում Ռշտունյաց ու Մոկաց լեռներն էին, որ ունեին անտառների այծենակաճներ և հորիզոնում մուգ կապույտ էին։ Ամբողջը նման էր հեքիաթի։ Եվ հորիզոնին մերված լճի խորհրդավոր ու խուլ շառաչը, և լեռներին շոքած ոսկեգույն ամպերի մալանշները, և լճեզրյա ճանապարհը, որ ոլոր-մոլոր գոտևորում էր լիճը, և թռչունների երգեցողությունը, որ խառնվում էր ալիքների բարակ ծփանքին։

— Բնական է, որ մեր նախնյաց բնօրրաններից է այս լիճն իր շրջակա հարստություններով ու գեղեցկություններով, Հակոբ... Մեր պապերը որովայնին հագուրդ տալուց առաջ մտածել են հագուրդ տալ իրենց ճաշակին։ Ապաստանել են այնտեղ, ուր գեղեցիկ է, կենսականը և գեղեցիկը աստեղծող։ Մարդ արարածը նման վայրերում իրեն զգում է աստծո տիրույթներում, աստվածանում է, բարիանում, այնպես չէ՞...

— Այո, ուսուցիչ, ես մտածում եմ՝ թե ինչո՞ւ է աշխարհն այսքան կատարյալ և մարդն այսքան անկատար։ Մի՞թե այս գեղեցկությունն անզոր է մարդու սրտում արթնացնելու նույնքան գեղեցիկ զգացմունքներ...

— Իմացիր, որդյակս, աստծո ամենակատարյալ ու վսեմագույն ստեղծագործությունը մարդ արարածն է, նրա հայտնությունը ավելի է,

քան ողջ աշխարհի արարումը։ Մարդուն աստված ստեղծեց իր պատկերով, սակայն նրա մտքերին, ինչպես երևում է, տվեց ինքնուրույնության իրավունք։ Այլապես ինչո՞վ կարելի է բացատրել, որ մարդն իր պատկերով աստված է, իսկ արարքներով միտում է ոչ միայն աստծուն, այլև սատանային։ Խիստ եմ ասում, իհարկե, բայց ճշմարտությունը որքան էլ դաժան, չի դադարում ճշմարտություն լինելուց։ Մտքերի ինքնուրույնությունը չէ՞ պատճառը, որ մարդը հաճախ դուրս է գալիս աստծո հսկողությունից։ Ավելին, իր արարքներով նա դուրս է գալիս աստծո դեմ հաճախ ըստ ընթացքի և ոչ թե ըստ էության։ Ըստ բնազդի և ոչ թե ըստ մտածողության։ Այս է ճշմարտությունը, Հակոբ։ Աստված մարդուն տվել է ամեն բան գեղեցիկ կյանքով ապրելու համար, իսկ մենք անում ենք ամեն ինչ այն տգեղացնելու համար։ Եվ աստված ներում է մեր մեղքերը, քանզի նա ողորմածության տիպար է։ Տես, այս գեղեցկությունը, մի՞թե սա աստծո պարգևը չէ մարդկանց, մի՞թե սա չի ներշնչում բարություն, ազնվություն, գեղեցկության անհրաժեշտություն, մաքրվելու ցանկություն, ապրելու կարոտ, արարելու մղում։ Ներշնչում է, իհարկե։ Բայց միաժամանակ այս աստվածային գեղեցկությունը անզոր է մարդասպանին արգելելու դանակ խրելու իր զոհի կուրծքը կամ փրկելու խեղդամահ արվող կաքավողին, կամ չթողնելու թալանել արդար մարդու քրտինքի արդյունքը։ Մարդը մեղավոր է, Հակոբ, եթե փախել է աստծուց։ Ասել է՝ դավել է ինքն իրեն, գնում է իր կործանմանն ընդառաջ։ Լսիր, Հակոբ, ավելի, շատ ավելի լավ է ընկնել ձեռքն աստծու, քան սատանայի հրապույրներին ենթարկվել, քանզի որպիսին աստված ինքն է զորությամբ, այդպիսին է և ողորմությունն իր։ Գնում ենք, Հակոբ, նարեկացիների անիրավված շինականներին իրենց տունն ու ընտանիքը վերադարձնելու։ Մեր աշխարհում շարունակական են դարձել խժդժությունները և միմյանց ծվատելն ու ոչնչացնելը։ Կռիվը, որ ընթանում է եկեղեցու և թոնդրակյանների միջև, իր բնույթով հակաեկեղեցական է, այլ ոչ թե հակաաստվածային, որովհետև մղվում է եկեղեցու իրավունքների և հարստության սահմանափակման համար, որոնց ոչ մի կերպ չի համաձայնում կրոնավորների հոծ բանակը։ Եվ ապստամբության զոհերն ասես քիչ են, զոհեր է տանում նաև ամբաստանությունը։ Փոխվում է նույնիսկ զոհերի որակը։ Թոնդրակյան պիտակը կպչում է ընտրյալներին։ Թափվում է մարդկանց արյունը, անվանարկվում է ընտրյալը։ Գրիչը խլվում է նրա ձեռքից, և չորանում է մեր մտքի բերքը։ Չորանում է ամանի մեջ մելանը։ Գրչատներից վռնդվում են գրիչները, ծաղկողները, տաղերգուները։ Ցամաքում է ժողովրդի արյունը, բռնագրավվում է նրա հանճարը և նետվում զնդան։ Եվ սա այն ժամանակ, երբ օտարը չի ջարդում մեր աշխարհի դռները, երբ նա դարանում է սպասման մեջ՝ որսալու մահացու ցատկ կատարելու պահը։ Իսկ մենք երբեք փակ դռնով ու գոց լուսամուտով չենք ապրել։ Թշնամին միշտ մեր տանն է եղել, ոչ որպես հյուր, այլ տանտեր։ Մի կողմից նա է սրատել և թալանել մեզ, մյուս կողմից ազգադավ ու տիրադավ իշխաններն ու նախարարներն են կրծել մեր կենաց ծառի արմատները։ Այս է մեր աշխարհի իրական պատկերը։ Գեղեցկությունը պետք է, որ տեսնողներ ունենա, հիացողներ ու գնահատողներ ունենա։ Բոլորը չեն, որ գեղեցկությունը տեսնելու և ընկալելու աչք ունեն։ Մեր բազմաթիվ տերերն աշխատում են ուժի միջոցով փակել այն աչքերը, որոնք գեղեցկությունը տեսնելու տաղանդն ունեն։ Երանի՜ այն ժողովրդին, որի տերը իր աստվածն է միայն...

Ճանապարհը խրվել էր մարգագետնի կանաչության մեջ և ոլորվում էր՝ հարմարվելով տեղանքին։ Ձիերը գնում էին դանդաղ, մեկ-մեկ բերանելով ճամփեզրի հյութեղ կանաչը։ Գնում էին ականջելով թռչունների համերգին ու բնության այն մեծ լռությանը, որը ընդմիջում է ծլվլոցին և շոյում մարդու լսողությունն ու գուրգուրում սիրտը։ Արտերը կանաչել են, միջնակներին սպիտակ մաքրությամբ աչք են բացել մասրենիները։ Առջևում ժայռեր երևացին։ Հետո մարգագետնի ու արտերի կանաչը դարձավ շերտավոր՝ մուգ և բաց գույնի կանաչ տարածքները սկսեցին ընդմիջել իրար։ Գրիգորը սովորաբար խոսում է հոգու մեջ, հոգու հետ, իր հետ։ Մտքերը պտտվում են, պտտվում ու չեն հասնում լեզվին, քանզի վանքի մամռոտ լռությունն է եղել ոգեկոչիչը, իսկ պաղ պատերը չեն սիրում լռությանը խանգարող ձայների գոյությունը։ Սակայն այստեղ, բնության անսահմանության մեջ, նա չի կամենում կապանք դնել հորձանքվող զգացմունքներին, որ անարգել հասնում են լեզվին, դառնալով ժայթքող հուզումնալից խոսք.

— Աստվա՜ծ եմ, անհնար է բառերով արտահայտել քո ստեղծագործ հանճարի զորությունը։ Տուր այն հնարքը, որ գոնե աչքերս կարողանան անմնացորդ ընկալել այս գեղեցկությունը, քանզի գեղեցկությունն ինքը քո հանճարի այն փայլատակումներից է, որ որքան պարզ է իր բարդության մեջ, նույնքան անմեկնելի է ու առեղծվածային մեր գոյության հրաշքի նման... Այս ի՜նչ գունախաղ է, գույների ծփածանախաղ, իմ աչքերի առաջ ցուցադրում ես լճի կապտագույնի յոթ-ութ երանգ, դաշտերի կանաչագույնի յոթ-ութ երանգ, երկնագույնի նույնքան երանգ և ծաղկանց աչքահմա բազում հրդեհներ։ Որպիսի՜ ճաշակելիք աչքերի համար։ Եվ ինչպես, ինչպես հագենան աչքերս, լիանա հոգիս այս գեղեցկությունից։ Եվ ինչպես ճաշակել այս ամենը, երբ աչքը կշտանալու սովորություն չունի։ Ունի լոկ ախորժակ և չունի տեսածով հագենալու հնա-

բավորություն։ Աշխարհներ է կլանում և մնում քաղցած ու ծարավ։ Հնար լիներ այս ամենը կհավաքեի կոպերիս տակ, որ ցանկացած պահի կարողանայի վերատեսնել և վերապրել այս հրաշքները...

Հակոբն ականջալուր ուսուցչին՝ կլանում է նրա մտորումները։ Կանաչի մգությունը առատանում է, ուրեմն մոտակայքում աղբյուրներ կան։ Կուզիկ ժայռերի տակից հոծանքում են բազմաթիվ առատաջուր և սառնորակ աղբյուրներ, խայտալով ու կարկաչելով վազում իրար գիրկ ու, միանալով, լրջանում ու դառնում են գետակ, մտնում ծանծաղ ձորակն ու հոսում դեպի լիճ։ Աղբյուրի ակին, ժայռի ստվերում սեղան բացին ու նստեցին ընթրելու։ Հեռվում երևում էր Մանակերտ գյուղը, որի լոկ տեսքը բավական էր, որ ցավեր Գրիգորի զգայուն և բուժման ու բալասանի չենթարկվող վերքը։ Սիրտը ասում էր՝ գնա, գնա Մանակերտ, այնտեղ է Դրախտիկը։ Նրան մոտենալու իրավունքը եթե խլված է քեզնից, բայց տեսնելու, գոնե հեռու հեռվից կարոտդ առնելու իրավունքը ոչ ոք չի կարող խլել քեզանից։ Միտքը մերժում էր Մանակերտ մտնելը։

— Ճիշտ կլինի, եթե Մանակերտ չմտնենք, Հակոբ...

Հակոբը գիտեր իր ուսուցչի սիրո պատմությունը։ Գիտեր, որ նա չի կարողանում հաղթահարել մեծ սիրո կորստի ցավը։ Գիտեր և չէր ցանկանում, որ ավելորդ անզգուշությունը նոր ցավերի պատճառ դառնար։ Հարկավոր չէր քչփորել հին ու բաց վերքը։ Գրիգորը ցավին չէր դիմանա։

— Այո, ուսուցիր, Մանակերտ մտնել հարկավոր չէ...

— Այո՛, այո՛, թեև ես հավիտյանս-հավիտենից պարտական եմ նրա... ես նրա հետ վատ եմ վարվել, Հակոբ, նա նեղացած է ինձանից...

— Իզուր ես դատափետում քեզ, ուսուցիչ, դու ոչ մի վատություն չես արել նրան։ Դու վատություն անել չես կարող...

— Օ՜, ոչ, Հակոբ, մեր սիրո հարատևման համար նա պատրաստ էր ամեն ինչի, նույնիսկ աստվածուրացության։ Նա քաջ աղջիկ էր և վճռական ավելի, քան տղամարդը, մանավանդ, երբ տեսնում էր իր սիրո վտանգվելը։ Ազատամիտ ու ըմբոստ էր թոնդրակյանից, ավելի ու ավելի տիրասեր, քան աստծո անունով ամեն օր երդվող հոգևորականները։ Բայց ես կորցրի նրան, Հակոբ, որովհետև չէի ցանկանում կորցնել իմ աստծուն։ Ինձ համար նա թանկ էր աստծո չափ, սակայն ավելին էր ահը աստծո։ Եվ ինձ թվում է, Հակոբ, որ կորցնելով Դրախտիկին, ես կորցրի նաև սիրելու իմ ընդունակությունն ընդհանրապես, որ կորցրի նաև, մեղա քեզ, տե՛ր, բյուր անգամ մեղա՜, կորցրի իմ աստծուն։ Հոգուս մեջ ես նեղացած եմ երկնային տիրոջից, որի սիրուն զոհեցի Դրախտիկի սերը, իսկ նա ընդունելի համարեց իմ զոհողությունը, որովհետև ոչնչով չփոխհատուցեց, ոչնչով չցրեց այն պարապը, որ անդունդի նման բաց-

վել է իմ սրտում։ Է՜հ,— տնքաց Գրիգորը,— աստված չթողեց, որ սիրով մարդանամ։ Սերը չի թողնում իմ հավատը անխոտոր մնա։ Հիմա ես պարտապանն եմ նաև աստծո, քանզի պաշտելով հանդերձ, նրան խաբել եմ ստորաբար...

— Ուսուցիչ, սիրելիս, զուր ես քեզ զրպարտում։ Աստված ինքն է շնորհակալ քեզանից, որ աշխարհում մի այնպիսի տեղապահ ունի, ինչպիսին է Գրիգոր Նարեկացին։ Կորցրած սերը, ուսուցիչ, ներիր, որ նման հարցերի շուրջ հանդգնում եմ խոսել քեզ հետ, քո սրտում խոր վերքեր է բացել, որ շատ դանդաղ են սպիանում։ Բուժվելուն պես կչքանա նաև քո կասկածամտությունը, քո կարծեցյալ աստվածուրացությունը։

— Չէ՜, չէ՜, Հակոբ, ես աստվածուրաց չեմ, ոչ կարծեցյալ, ոչ էլ անկասկած։ Ես իմ նվիրումը երկնայինին պարզապես լիարժեք չեմ համարում։ Այն չի զոհացնում ինձ և հազիվ թե զոհացնի երկնայինին։ Է՜հ, որդյակ իմ, դառը դատեցի՝ դատարկ նստեցի։ Վախենում եմ, որ ոչ աստված ների իմ մեղքը, ոչ ես բաց ճակատով կարողանամ կանգնել Դրախտիկի առջև, ոչ էլ ներկայանալ մի այնպիսի խստաշունչ դատավորի դատին, որպիսին եմ ես՝ իմ նկատմամբ։ Մարդը լեցուն է բյուր մեղքերով։ Եվ մարդը տանջվում է, տառապում ձերբազատվելու մեղքերից, հասնելու կատարելության, սակայն խորն է մեղքերի ճահիճը, շատ խորն է և դարանակալ։ Նա վերև ձգտող մարդուն քաշում է ներքև, ավելի խոր թաղելով մեղքերի ճահճում։ Ինչպե՞ս հասնենք տիրոջ մաքրությանը։ Անհնա՞ր է, եթե ինքը թողություն չտա մեր մեղքերին, օգնության չհասնի մեր կործանվող հոգուն, եթե ինքը, միա՞յն ինքը չուզենա, որ մարդ արարածը տեր կանգնի երկրային կյանքին...

Հիշում եմ, թե ինչպես, ինչ անհողդողդ վճռականությամբ էր ինձ անձնազոհության մղում Դրախտիկը։ Համոզում էր փախչել հեռու մի վայր, ուր չի հասնում աստծո ձեռքը, չիմանալով, որ տերն ամենատես է և ամենահաս։ Առաջարկում էր ամուսնություն, իսկ հետո երկար ու ջերմագին մեղքերի քավում՝ «մեղա գանք աստծո առջև»։ Առաջարկում էր չկորցնել սերը, թեկուզ դժոխք ընկնելու պայմանով. «Սերն ամեն ինչ է...»։ Իսկ ես խելագարի նման սիրելով հանդերձ, նրան համարում էի ըմբոստ մի էակ, որ հանդգնում է բարձրյալի հեղինակության դեմ։ Բայց նա ճի՛շտ էր, ճի՛շտ էր, ճի՛շտ էր, Հակոբ, և իմ ողջ կյանքում նրա սերը եղավ ամենալուսավորը։ Ամենաերջանիկ պահերն ապրել եմ նրա հետ, երբ զգացմունքները չէին ենթարկվում բանականությանը։ Նույնիսկ հավատի ահեղ ամրությունը չէր դիմանում սիրո սանձակոծ արշավին։ Սերն աստծո ամենամեծ պարգևն է մարդուն։ Աշխարհի և մարդկության ամենասուրբ նորոգիչը։ Սերը մեղք համարելը վիրավորանք է ոչ միայն սիրո,

այլև աստծո հեղինակությանը։ Եվ կարևորը. սերը հավերժական է։ Մի անգամ շողաց իմ կյանքում, և իմ կյանքն առ այսօր լուսավորվում ու իմաստավորվում է սիրով։

Վաղահաս պտուղն աչքաթող արի,
Իսկ վերջահասից արդեն ուշացա.
...Ոչ ունեմ հիմա մաքրության ծաղիկ,
Եվ ոչ էլ, ավա՜ղ, ողորմության յուղ։

Գրիգորի ձայնը կերկերաց ու լռեց։ Խթանեց ձիուն և վարգեց առաջ, որպեսզի Հակոբը չտեսնի իր թուլությունը՝ արցունքները։ «Այո՛, ինչպես երևում է, մտորում էր Հակոբը, սերը հավերժական է և անփոխարինելի։ Ես չեմ ճանաչում սերը, սակայն, ուսուցչապետիս տառապանքներին նայելով, զգում եմ նրա զորությունը։ Տեր աստված, հեռու պահիր իմ անմեղ հոգին սիրո մեղքերից, այլապես կմեղանչեմ և երդմնազանց կդառնամ»։

Երկար ժամանակ լուռ էին, յուրաքանչյուրն իր մեջ, Գրիգորը ջանում էր մոռանալ Դրախտիկին և կենտրոնանալ իր առաքելությանը, իր ներկա հոգսերին, չէր ստացվում։ Մեղավորը նաև Մանակերտ գյուղն էր, որ շրջանցեցին, սակայն իր իշխող դիրքով նա երկար ժամանակ ուղեկցում էր նրանց, անընդհատ վառում հիշողությունը։ Իսկ այնտեղ գյուղամերձ այգիներում ապրում էր իր ջահելությունը։ Երևի տակավին սիրո շշուկներ են պահում թփերն ու ծառերը։ Իր համբույրի ջերմությունն է պահված այնտեղ, որի լոկ հիշողությունը ձմռան ցրտերին ջերմացնում ու ամռան տապերին հովացնում էր իր սիրտը։ Հիմա ինքը չի հավատում սիրո եղելությանը։ Չի՛ եղել, չէ։ Ամբողջը ոսկի հեքիաթ է, անուշ պատրանք, լուսավոր երազ, քաղցր փորձություն, աստվածային քննություն, ուր ինքը խաղացել է ծույլ աշակերտի դերը, անկարող՝ պատվով ու արիությամբ տանել սիրող այր մարդու դերը՝ նահանջելով դիմադիր հողմերից, և վարկաբեկ է եղել և սիրած աղջկա, և աստծո առջև, արժանանալով թե մեկի, թե մյուսի այպանքին՝ անհավատարմության և անվճռականության պատճառով։ «Երեսպաշտություն է կյանքը ընդհանրապես և մենք դիմակավորներ, որ ըստ կյանքի հրամայականի փոխում ենք մեր դիմակները։ Սիրահարված ենք, հարմարը սիրո թշնամի ձևանալն է, այլապես կհորջորջվենք անբարոյական կամ աստծո դեմ ոտնձգություններ կատարող։ Տեսնում ենք եկեղեցականների անվայելուչ, անաստված արարքները, պարտավոր ենք օվասաններ սարքել նրանց պատվին, այլապես մեզ կխարանի թոնդրակյանի պիտակը։ Գողին հարկավոր չէ հանցագործ անվանել կամ բռնել ձեռքը, այլապես դանակը կխրվի քո սիրտը, հարկավոր է անվանել հերոս։ Այդպես ավելի ապահով է, անվտանգ։ Իսկ իր երկնային բարձունքից նայում և մեր արարքները հսկում է աստված, նա ամենատես է, նրանից անհնար է թաքնվել։ Եվ այստեղ գործի է դրվում խաբեությունը։ Խաբում ենք աստծուն, հագնելով գառան դիմակ, գայլի դիմակի փոխարեն։ Իսկ ներո՞ւմ է տերը մեր սրիկայությունը։ Իհարկե ոչ։ Տիրոջ բարեհաճությանն արժանանալու համար գործի է դրվում կաշառքը։ Կաշառվում են աստծո սպասավորները, իսկ մեղավորները, որ պեղել են անպատժելիության հնարը, ապրում են. գողը՝ արդարի, բոզը՝ բարոյականի, մարդասպանը՝ մարդասերի, զրպարտիչը՝ ոսկեբերանի, խաբեբան՝ ուղղամիտի դիմակներով։ Այսպես է կյանքը։ Անաստվածության, անմարդկայնության համար Ղազարոս վարդապետն իր պատիժն ստացավ, սակայն հանիրավի պատժվում են նաև պատժողները։ Դժբախտանում են մարդիկ, ընտանիքներ։ Զորն անզորին է տիրել։ Եվ ամեն անգամ, տեր ամենակարող, դիմում ենք քեզ, հայցում քո օգնությունը՝ փրկել կործանվող մարդուն, փրկել աշխարհն ամբարիշտներից ու անառակներից, ազնվացնել մարդուն, նրան արատներից և ոգեկործան մեղքերից զերծ տեսնելու ցանկությամբ։ Մենք քո գործողություններին չենք քննում, քանզի քո էությունն ու գործը մեզ համար անքննելի են։ Եվ ի՞նչ։ Սրիկան նորից մնում է սրիկա, ավազակը՝ ավազակ և անաստվածը՝ անաստված։ Այսպես չի կարելի, տեր իմ, չի՛ կարելի...

— Ուսուցիչ, սիրելիս,— հասավ Հակոբի փոքր-ինչ տագնապած ձայնը,— անհանգի՞ստ ես, բա՞ն է պատահել...

— Իսկ ի՞նչ է եղել, Հակոբ...

— Չիուն անտեղի մտրակում ես, բարձրաձայն վիճում, ում հետ, հայտնի չէ, ի՞նչն է շարչարում մտքերդ, հարգելի ուսուցիչ...

Գրիգորը լրիվ արթնացավ։ Չարչարող մտքերը չքվեցին։ Ներողամիտ ժպտաց Հակոբին։

— Որդյակ իմ, տես, մեր առաքելությունը մարդասիրական է։ Այն հարվածը, որ պատրաստվում են հասցնելու նարեկցիներին Ստեփանոս սրբազանը և նրա գաղափարակիրները, պետք է կասեցվի։ Ավելի ճիշտ, մենք հարվածը կասեցնել անկարող ենք, գոնե պետք է ջանանք, որ առանց զոհերի և անարյուն դուրս գա հարվածի տակից Նարեկաշենը։ Իսկ դու գիտե՞ս, թե որն է պատճառը անբարյացակամության, որ հոգեվոր առաջնորդները բծախնդիր հետևողականությամբ աստվածուրացություն և թոնդրակյանություն պիտակները ցանկանում են փակցնել մեր միաբանությանը։ Հին հաշիվները մեր ուխտի հետ։ Ղազարոս վարդապետի սրիկայությունների համար ցանկանում են պատժել միաբանության

տնօրինությանը՝ միաբանների վարքագծով չզբաղվելու մեղադրանքով։ Այնուհետև, շինականների ընդվզումը հոգևորականի անառակ և անբարո վարքի դեմ և նրան դատաստանելը ցանկանում են բարդել միաբանության տնօրինության վրա, իմ մեջ, Հակոբ, տենդորեն որոնում են քավության նոխազը, նախօրոք իմանալով նրա տեղը։ Գեղջավագին և շինականներին կալանավորելը նրանց հիմնական նպատակը չէ, այլ մեզ են ցանկանում շարքից հանել։ Ինձ վնասազերծելու, բանադրելու համար առաջնորդարանում մեկից ավելի տարբերակներ են մշակվել, որոնք վերևի կարծիքով, բավարար արդյունավետ չեն եղել և չեն կարողացել հիմք ծառայել ինձ վնասազերծելու և, այնուհետև, փշե պսակով խարանելու ճակատս։ Նման մի-տումնավոր սրիկայությունները, գիտե՞ս, արդյոք, թե որքան անբուժելի վերքեր են հասցրել մեզ, մեր հայրենի գրքին ու գրչին, մտքին ու գիտությանը։ Շարքից հանել են լավագույններին, որ ընծայաբերել է ժողովրդի արգանդը հայրենի գիտությանն ու մշակույթին։ Ես գիտեմ, ավելի շատ զգում եմ, որ մեր առաքելությունը պիտի տապալվի։ Սրբազանը երբեք չի համաձայնի իմ խնդիրքին։ Սակայն ես անկարող եմ մերժել, անկարող եմ չկատարել մեր համագյուղացիների թախանձանքը, քանի որ մեր կենաց ծառն աճում է շինական աշխարհի արգավանդ հողում։ Ստեփանոս եպիսկոպոսի թշնամանքը հին պատմություն ունի, որ սկսվել է դեռևս Անանիա ուսուցչապետի ժամանակներից և, կրկնակի մեծանալով, ինչպես տոկոսով տրված դրամ, բարդվում է ինձ վրա։ Այնպես որ պարտապանն եմ սրբազանի, և նա շատ գոհ կլինի, եթե բավարար հիմքեր ունենա ինձ բանադրելու։ Հատկանալի՞ է, որդյակ իմ...

— Այո, այն էլ ինչպե՞ս...— ծոր տվեց Հակոբը։

Գյուղեր չէին երևում, սակայն բանուկ ու բազմամարդ էր ճանապարհը։ Անցնում էին սայլեր, բեռնված բերք ու բարիքով մարդիկ՝ հետիոտն ու ձիավոր, որ ձուկ էին տանում լեռնային գյուղերը, ճանապարհորդներ։ Իսկ լճի ափամերձ մասում ծույլ-ծույլ օրորվում էին ձկնորսական մակույկները։ Օրը դանդաղ թեքվում էր դեպի արևմուտ։ Հորիզոնում ամպի բալասակ ու բարդ-բարդ կուտակումները դառնում էին շառագույն, ու շառագունում էր նաև լիճը։ Հեռու հորիզոնում երկինք ու լիճ խառնվել, միաձուլվել էին։ Ուր որ է իջնելու էր մթնշաղը։ Պետք էր մտածել գիշերելու մասին։ Եվ նրանք հյուրընկալվեցին ձկնորսներին։ Պարզ մարդիկ էին՝ քամահար ու պղնձագույն դեմքերով։ Նրանք ամաչկոտ հյուրասիրությամբ հասկացրին, որ ընթրելու համար հաց չունեն, որ իրենց ունեցածը խաշած տառեխն է։ Գրիգորը պարկից հանեց հաց ու պանիր և ձկնորսների հետ բոլորեցին բացօթյա սեղանը։ Ընթրիքն այնքան համեղ էր, որ Գրիգորը հազիվ զսպեց գայթակղությունը՝ սփոփելի վրայի ողջ ձկնեղենը չուտելու համար։ Հետո ծայր առավ խոսք ու զրույց։

— Հաց ինչո՞ւ չունեք,— հարցրեց։

— Հաց որտեղի՞ց, հայր սուրբ,— խոսեց հասակավորը,— ախր, մենք ճորտ ենք և պատկանում ենք Ոստանի հարուստներից՝ Եսայի կրտսերին։ Լճի այս ափը նրա սեփականությունն է։ Ձուկ ենք որսում, իսկ վերակացուները տանում են երկրիս շուկաները վաճառելու։ Ամոանք ձկներն աղում և չորացնում ենք, և ապխտած ձկները տարվում են վաճառքի ուրիշ աշխարհներ, մինչև Հալեպ ու մինչև Դամասկոս։ Հաց է տրվում մեզ, ոչ թե ալյուր, այն էլ ամիսը մեկ անգամ, տասնհինգ օրում ուտում, սպառում ենք և մնում ձկան հույսին։ Մեկ-մեկ էլ, թող ասված մեղք չհամարի, ձուկը թաքուն փոխանակում ենք հացի հետ։ Մոտակայքում գյուղեր շատ կան, այս ճամփով անցուդարձ անողները շատ են։ Թե բռնվեցինք, շան ծեծ կուտենք, չբռնվեցինք՝ մարսում ենք առանց ամաչելու, չէ՞ որ մեր վաստակն է...

— Իսկ որտե՞ղ են ձեր ընտանիքները...

— Այնտեղ, ուր կամենում է մեր տերը... Կանանցից մի քանիսը այստեղ են, ա՛յ այն հյուղակներում... մի քանիսը տիրոջ տանը աղախիններ են, մի քանիսն էլ եփող-թափող։ Մի խոսքով...

— Իսկ ձմռա՞նը...

— Մենք էլի այստեղ ենք... Այստեղ, հարավում ծովը չի սառչում, շարունակում ենք մեր գործը։ Մնացածը նորից իրենց տեղերում...

— Իսկ դուք ձեր ընտանիքներին, զավակներին չե՞ք հանդիպում...

— Եթե տերը կամենա՝ կհանդիպենք, չկամենա, չենք հանդիպի, բայց շատ էլ հեռու չենք միմյանցից, մեկ-մեկ փախչում ենք, նրանք մեզ մոտ, մենք՝ նրանց։ Բռնվեցինք՝ ծեծ կուտենք, չբռնվեցինք՝ կսիրենք մեր կանանց ու երեխաներին։ Այդ սերը մեզ ապրեցնում է մինչև հաջորդ հանդիպումը և այսպես շարունակ։ Է՜հ, հայր սուրբ, միայն տերը գիտի մեր քաշածը։ Մենք մարդանման ենք, բայց մարդ չենք։ Մարդ լինեինք, ազատ կկոչվեինք, մեր տունն ու օջախը կունենայինք։

Հոգևորականների շուրջ գնալով խտանում էին ձկնորսները։ Մութն արդեն դառնում էր տիրական։ Կրակ էին արել, որ լիզում էր մթության փեշերը և ձգվում էր վեր՝ հմայվածի նման։ Փիչ անդին ալիքները հարվածում էին ոչ բարձրադիր ափին, նահանջում, որպեսզի քիչ անց նորից արշավեն և նորից փշրվեն ափին։ Շրջապատում ձկնահոտ էր կանգնած, թելին քաշված ձկները բռնել էին ափամերձ տարածքը և չորանում էին քամուց։ Կրակը բոլորած ձկնորսները թեև հոգնած, բայց չէին

ցանկանում լքել հոգևորական հյուրերին և հորանջելով՝ հարցեր էին տալիս նրան.

— Հայր սուրբ, դու Անին տեսե՞լ ես...

— Տեսել եմ...

— Ասում են՝ տասը բյուր բնակիչ ունի, որոնց կեսը անձավաբնակ, իսկ եկեղեցիները առավել են հարյուրից...

— Այո՛, Անին մեծ քաղաք է, մայրաքաղաք, երևի քո ասած չափով բնակիչ ունենա, եկեղեցիները ևս քիչ չեն, իսկ անձավներում ապրում են քաղաքի աղքատները, չունևորները։ Նրանց թվի մասին ես տեղեկություններ չունեմ...

— Իսկ որ շատացնում են վանքերն ու եկեղեցիները, չե՞ն վախենում թոնդրակյաններից, ախր նրանք թշնամի են աստծո տաճարներին և հոգևորականներին...— հարց տվողը, որ նաև ուներ իր իսկ հարցի պատասխանը, հանկարծ լռեց, կծեց լեզուն, շատ էր առաջ գնացել. իր դիմաց նստածները հոգևորականներ էին։ Հարցական նայեց հոգևորականներին։

— Հը, ի՞նչ պատահեց, ինչո՞ւ լռեցիր...

— Ի՞նչ ասեմ,— վիզը քորեց ձկնորսը,— ներող եղիր, հայր սուրբ, խոսեցի և իմ խոսքից վախեցա։ Ախր դուք էլ աստծո ծառաներ եք...

— Հետո ի՞նչ,— խոսեց Գրիգորը,— հետո ի՞նչ, դու մեզ չանպատվեցիր, չհայհոյեցիր, ինչո՞ւ վախեցար...

— Ի՞նչ իմանամ, հայր սուրբ, դժվար ժամանակներ են։ Եզը վերցնում, տակը հորթ են որոնում։ Մեկ-մեկ էլ անմեղ մարդկանց մեղավոր են դարձնում և իրենց ուժը փորձում նրանց վրա։ Ես էլ մտածեցի, որ դուք էլ մի ծանր մեղադրանք կտաք մեր շալակն ու մտրակը կթրջեք ծովի աղի ջրով, որ իմ մեջքին հիմնավոր կերպով օձեր դաջի...

— Ի՞նչ ես խոսում,—փշաքաղվեց Գրիգորը,— ես հոգևորական եմ, ի՞նչ գործ ունեմ ծեծի ու մտրակի հետ։

— Քո ասելով, հայր սուրբ, դուրս է գալիս, որ հոգևորականները գործ չունեն պատժելու հետ... է՜հ, հայր սուրբ, որքան ինձ է հայտնի ու մեկ էլ իմ նախշված մեջքին, մեր կողմի հոգևոր հայրերը ոչ թե գործ ունեն ծեծի ու ջարդի հետ, այլ նրանց ձեռքն ավելի ծանր է, քան աշխարհիկ տերերի ձեռքը և ավելի վարպետ ջարդող են, քան զինվորները...

Եվ բացեց մեջքը՝ կրակի լույսի տակ Գրիգորը նայեց նրա մեջքին ու սոսկաց։ Լայնքով ու երկարությամբ մեջքի վրա ասես սուր էին բանեցրել։ Մեջքն ամբողջապես կորած էր արյունոտ վերքերի մեջ, որ թարախակալել էին կեղտակուր կտավե շապիկի տակ։

— Եվ ո՞վ է այդ անխիղճ անասունը...— չկարողացավ զսպել իրեն։

— Ի՞նչ իմանամ, մեր տիրոջ հետ եկավ ձուկ գնելու։ Մի քիչ հետո կատաղած ետ դարձավ, թե ձկներից մեկը այնքան էր հին, որ հոտ էր գալիս։ Հա՛, ասաց ինչ-որ միաբանությունից է...

— Չլինի՞ թե Նարեկի...

— Ո՛չ, ինչու, Նարեկից ինչո՞ւ պետք է հասնեն այստեղ, երբ Նարեկը գտնվում է լճափին։

— Հետո՞...

— Առաջինը ինձ տեսավ։ Ինչո՞ւ եք հոտած ձուկ տվել ինձ։ Ասացի՝ ի՞նչ իմանամ։ Այն գիտեմ, որ ձուկը նոր էինք հանել ծովից, հոտած լինել չէր կարող։ Բավական էր այսքանը, որ նա մինչև կխսամեռ դառնալու նախշեր... երկու-երեք կոտի* մեջ իբր թե մի հոտած ձուկ է գտել և ծեծելու պատրվակը պատրաստ է։ Հայր սուրբ, ինչո՞ւ այս ամենը տեսնում է աստված, մեռնեմ իրեն, ու չի պատժում մեղավորին։ Ինչո՞ւ... Զարմանում եմ, ինչո՞ւ մենք՝ ճորտերս, անազատներս, որ երբեք չենք մեղանչել, աստծո առաջ ոչ մի մեղք չունենք, միշտ մեղավոր ենք դուրս գալիս, իսկ մեր հոգևոր ու աշխարհիկ տերերը, որ լողանում են մեղքերի մեջ՝ անմեղ։ Ախր, աստված բարեգութ է, մեր հույսը նրա գթասրտության վրա է, մինչդեռ նա մեր ցավերին չի մոտենում, չի ամոքում, ի՞նչ անենք...

Գրիգորը նրան մխիթարելու, վերքերի և հոգու ցավերը ամոքելու ոչ պատասխան ուներ, ոչ էլ հնարավորություն։ Լեզուն բռնվել էր։ Ա՜յ թե ուր է իջել իրեն աստծո հեղինակությամբ զրահած հոգևորականը, ո՜ւր... Մինչև ոստիկանական անսրտության և խստության։ «Ինչո՞ւ է գնալով անսիրտ ու անգութ դառնում մարդ արարածը։ Եվ ինչո՞ւ է հոգևոր աշխարհը դեպի աստված գնալու փոխարեն, իջնում ցածր ոլորտները, ուր աստծո սպասավորների համար թափուր տեղեր չկան։ Մեր եկեղեցին կարծես թե հնացել է, ապրել իր դարը, սպառել իրեն։ Հարկավոր է բարենորոգում, անպիտանի, հնոտու մերժում։ Հարկավոր է հայ մարդու հոգին ու մարմինը փրկել հարստահարումից և կտտանքներից, փրկել հայ եկեղեցու պատիվը, թույլ չտալ դարավոր սրբությունների այլասերում։ Ի վերջո, հարկավոր է մտածել աստծո լուսավոր անվան և նրա հեղինակության անաղարտության մասին։ Որքան անաստված բան կլինի, եթե հանկարծ մի օր սատանայասիրտ մարդիկ կասկածի տակ առնեն աստծուն և նրան մեղադրեն, աստված չանի, միտումնավորության մեջ...»։

«Հետո՞, ի՞նչ անենք...»,— զնգում էր ականջներում։ «Այս հարցի, այս բողոքի մեջ ընդվզման հնչյուններ էլ կան։ Մեր հոգևոր մարդկանց ագահությունը, բազմաթիվ մեղքերն ու ապիրատությունները ծնեցին ու

* Կոտ, չափի միավոր։ Մեկ կոտը հավասար է 20 կիլոգրամի։

սնեցին թոնդրակյան երկրացունց ապստամբությունը, որը բացեց շինականների ու ռամիկների աչքերը։ Դրա ամենացայտուն օրինակը մի՞թե այս թշվառ ու ծեծված հորտը չէ, իր պարտադրող հարցով. «Ի՞նչ անենք»։ Այս հարցն ունի իր հրամայականը, այո՛, պատասխան ստանալու, ելք գտնելու հրամայականը։ Իսկ ի՞նչ պատասխանել նրան։

— Ի՞նչ է քո անունը, ով մարդ,— վերջապես խոսեց Գրիգորը։

— Ճորտը կարող է ապրել և ապրում է նաև առանց անվան։ Բայց քանի որ հարցնում ես, ասեմ. անունս Սուրեն է։ Իմ տերն ինձ կոչում է՝ շանորդի, Լշու Թրիք և այլն։ Այնպես որ, հայր սուրբ, ես իմ անվան կարոտն ունեմ։ Մեկ-մեկ որ ինձ Սուրեն են ասում, քիչ է մնում անունս տվողի ձեռքը համբուրեմ և, ափսոս, որ հնարավոր չէ, համբուրեմ նաև իմ անունը։

— Սուրեն, երևում է, դու լավ մարդ ես։ Ես չգիտեմ, թե ի՞նչ պատասխան տամ, որ թեթևանան քո հոգու և մարմնի ցավերը։ Ես լուսաբացին բուժիչ թուրմ կպատրաստեմ, որ կհանգստացնի քո վերքերի ցավը, բայց քո հոգին բուժելը աստծո գործ է, իսկ աստված ողորմած է, Սուրեն, հավատանք նրա գթասրտությանը...

Իսկ Սուրենն արտասուքն աչքերին բռնել և շրթունքներով հպվել էր նրա աջին։ Նա վաղուց երևի մորից հետո չէր լսել ոչ մի մխիթարական խոսք, ոչ մի ջերմ բառ և այժմ երեխայի նման արտասվում էր։

... Գիշերեցին դրսում։ Ձոր խոտի վրա։ Ավելի բուրումնավետ անկողին անհնար էր պատկերացնել։ Խոտը բուրում էր ծաղիկների մի բուրմունքով, որ հարբեցնում է մարդուն՝ կամ արագացնում, կամ փախցնում քունը։ Հակոբն արագ քնեց։ Իսկ Գրիգորին կանչում էին հազար հոգս ու ցավ։ Սուրենն իր հոլիկում հազիվ թե քնած լինի։ Մեջքի վերքերը չեն թողնի։ Իսկ գիշերը ցավի թշնամին է։ Արթնացնում է ցավն ու շան նման արձակում ցավատիրոջ վրա։ Չէ, Սուրենը քնել չի կարող։ Գիշերը լցված է տիեզերական անմեկին զողանջներով։ Զնգում է անլսելի, անմեկնելի զանգը, և աշխարհը լցված է արծաթե զողանջներով, որն ավելի շատ զգացողություն է, քան լսելիք։ «Օ՜, որքան խորն է երկինքը, որքա՜ն... Եվ որքան շատ, անհամար շատ են աստղերը։ Եվ ի՞նչ են զողանջում այս լռության մեջ... Ասում են՝ յուրաքանչյուր աստղ մի աշխարհ է։ Եթե ճիշտ է, ապա որքան են հեռու աստղերը, որ նրանց լույսը երևում է մոմից ավելի նվազ։ Ուրեմն, պետք է ենթադրել, որ տիեզերքը լցված է աշխարհներով և աշխարհների կյանքով։ Զարմանալի է, ո՞ւմ տերն է աստված, միայն մե՞ր երկրի, թե ամբողջ տիեզերքի, տիեզերական աշխարհների։ Եթե տիեզերական կյանքի արարողը ևս աստված է, էլ ինչպե՞ս, ինչպե՞ս զորավիգ լինի, ինչպես կարողանա հսկել և մանավանդ վարել

տիեզերական անսահմանությունները, անհամար կենդանի էակների կենաց հարցերը, նրանց սահմաններ չունեցող մեղքերն ու սահմաններ չճանաչող շնորհները։ Չէ՞, չէ՛, աստված իմ, դժվարացել է մտածելն ինձ համար։ Դու մեզ ստեղծել ես ուրիշ խորհրդով, օժտել բանականությամբ, և ոչ մենք ենք մնում քո հսկողությանը հավատարիմ, ոչ էլ դու ես կարողանում իրականացնել քո աստվածային հսկողությունը մեր նկատմամբ։ Եվ ահա միտքն իմ անհնազանդ տիեզերքի լուսատուներին դարձրեց աշխարհներ և բնակեցրեց, ծաղկեցրեց կյանքով։ Նորից մեղա, տե՛ր, նորից մեղա՜... Երևի կյանքն իմ դառնա մեղքերի, մեղանչումների, քավության անվերջանալի մի շղթա, և իրավունքների շփոթ կատարվի, և ես կորցնեմ աստծո և մարդու մտքերի սահմանները։ Մի թույլ տուր մարդու մտքին խառնելու աստծո սահմանները և դուրս նայելու քո աստվածությունից, կամ աստծուն ընկերակցելը անաստվածություն մի համարիր։ Թույլ մի տա անքննելին՝ քննելու, անմեկնելին՝ մեկնելու կամ մեր քննախույզ միտքը համարիր քո պարգևը և մի դատապարտիր մեզ՝ ներթափանց մտքի՞ համար։ Այնպես արա, տեր, որ մենք չվախենանք քեզանից, այլ պատկառենք։ Որ քեզ պաշտելուց առաջ՝ սիրենք, որ վստահելով՝ հավատանք։ Որ գթասրտությանդ ապավինենք, ոչ միայն զորությանդ։ Որ ներողամտությանդ ավելի հավատանք, քան անողոքությանդ։ Մոտեցրու, տեր, մեզ մոտեցրու աստվածությանդ, գուցե մաքրվենք քեզ մոտենալով, այլապես ոչ մենք կփրկվենք քո զայրույթից, ոչ էլ դու մեր տրտունջներից և անմաքուր արարքներից...»։

Գիշերային լռության մեջ հառաչում էր լիճը։ Արթուն էր նրա խորքը, ընդերքը, որտեղից լսվում էին զարմանալի ձայներ և տարածվում ջրային հեռուներում։ Ասես բառաչում ու մռնչում էր ցուլերի կատաղած նախիրը։ Ասես ճակատում էին ջրային ոգիները և նրանց լացն ու հեծեծանքը, հառաչը՝ շառաչի փոխված հարվածում էր ափերին և փշրվում, փոշիանում՝ չգտնելով ափերի հաղթահարման ելքն ու հնարը։ Քամի էր անցնում լճի վրայով, արթնացնելով նրա ալիքները, որոնք բլուր-բլուր նետվում էին իրար վրա, բաշերի փրփուրը ցոլացնելով լուսնի արծաթ լույսի տակ և սանձակոծ ընթացքով արշավում, նետվում քարեղեն և անտարբեր ափերի վրա, որոնք կոշտ նվիրվածությամբ հսկում էին նրա շարությունները ու արգելակում նրա կործանարար ուժը քարե սեղմ օղակով։ Քունը չէր տանում։ Ելքը՝ լճին, ականջը նրա ձայնին՝ շուռումուռ էր գալիս իր ծաղկաբույր ներքնակի վրա։ Կեսգիշերին լիճը խաղաղվեց, հանգստացավ, կնճիռները հարթվեցին, ձայները հանգան, և լիճը սկսեց մեղմօրոր իր ծփանքը։ Հանգստանալով, ոգեցավ լիճը։ Հրեշտակներ և

աստվածուհիներ խմբերով լցվում էին նրա ծփացող ծիծաղող ջրերը, փաթաթվում գիշերային նոսր մթությամբ և խայտում ալիքներին՝ անամոթ մաքրությամբ, որ հատուկ է լոկ աստվածներին։ Գիշերային Բզնունյաց ծովը լցվել էր մերկ մարմինների մեղկությամբ, որոնք ծիծաղում, ծափծափում, խաղում էին ջրերի հետ։ Հովը արթնացավ և զովացնող հպումներով սկսեց գոցել նրա բորբոքված աչքերը. «Ուրեմն լուսանում է...»,— մտածեց։ Եվ աչքերը փակվեցին, ձայնը տալով երազներին։ Մինչև արևածագ երազների մեջ էր։ Աստված նեղացած էր իրենցից, և նրա տեսքը մռայլ էր։ «Տեր կանգնիր Սուրենին։ Ինչո՞ւ ես հապաղում։ Մի՞թե չգիտես, որ նա էլ է իմ հարազատ որդին և քո արյունակից եղբայրը։ Ինչո՞ւ ես թողնում, որ մարմինն ու վերքերը որդնոտեն։ Փրկիր նրան, որ նրանով էլ կարողանաս փրկել քո մեղավոր հոգին։ Նրան ճորտացրել են աշխարհիկ տերերը, իսկ վերքերով պատուհասել են հոգևոր հայրերը։ Նման հոգևորականները մեր հավատի ու ժողովրդի թշնամիներն են»։ «Ես այդ բոլորը գիտեմ, տեր իմ, միայն չգիտեմ անելիքս։ Ես կբուժեմ Սուրենի վերքերը, սակայն հոգին բուժելու կերպը դու սովորեցրու»։ «Լսիր, հայր սուրբ, ապաքինիր Սուրենի վերքերը բալասանով։ Իսկ հոգին՝ մարդկային լեզվով, ես էլ ուրիշ հնար չունեմ»։ «Բայց դու աստված ես»,—բողոքի ձևով ասաց ինքը։ «Ճիշտ է, հայր սուրբ, ինձ հավատում են, սակայն չեն պաշտում։ Մարդիկ աստվածությանս հսկողությունից դուրս են եկել։ Դրանից է և նրանց մեղքերի առատությունը, և մեղքերի մեծությունը։ Նրանք զղջալու են իրենց մեղքերի համար, սակայն ուշ կլինի արդեն։ Իսկ դու, Գրիգոր վարդապետ, սատարիր և քո նարեկցիներին, և Սուրենին ու նրա նմաններին։ Նրանք աստված ունեն և հավատ...»։

Արևածագին Գրիգորը մարգագետնում և արտերի միջնակներին բուժիչ ծաղիկներ և դեղաբույսեր էր որոնում։ Հետո երկար ժամանակ չոքած կրակի առջև՝ թուրմ էր պատրաստում, իսկ ընթրիքից հետո մաքրեց Սուրենի վերքերն ու լվաց, թուրմով սրսկեց։ Սուրենն սկզբում գալարվում, լալիս էր ցավից, աղերսում, նույնիսկ ընդվզեց, պահանջեց դադարեցնել խոշտանգումը, քանի որ վերքի ցավերին միանում է նաև հոգու ցավը։ Քրտինքը առու-առու հոսում էր դեմքից, սակայն գնալով նահանջում էր ցավը, պարզվում էր դեմքը, մաքրվում լարվածությունից և, ի վերջո, ժպտաց հոգնած, նույնիսկ երեխայավարի։ Վերքերին սպեղանի դնելով, կապեց և ասպարեց, որ թուրմի մնացածով մի քանի անգամ շփեն վերքերը։ Ճամփա ընկնելուց առաջ Սուրենը խոստովանեց Գրիգորին, որ վերքերն առաջվա նման այլևս չեն տանջում իրեն։ Նույնիսկ փորձում էր կատակել։

— Շնորհակալ եմ, հայր սուրբ,— ասաց,— չմեռա, այո, չմեռա, որ աչքովս բարեգութ հոգևորականի տեսնեմ...

— Լավ, լավ, Սուրեն, քիչ բամբասիր։ Մեր մեջ էլ լավերի կողքին վատեր կան։ Աշխարհն է այդպես, որդի, իսկ մենք այս աշխարհից ենք։ Կան հոգևորականներ, որ ցանկանում են նմանվել աստծուն, դառնալ կատարյալ, կան, որ երես են թեքում աստծուց, և նրանց հետ անմիջապես բարեկամանում են դևերն ու սատանաները...

— Երդվում եմ, հայր սուրբ,— բացվել էր Սուրենի լեզուն, նա այժմ նման էր երես առած երեխայի,— որ նայելով մեր շենի տերտերի տոզած փորին և անբարո վարքին, ես մտքով միշտ համաձայն եմ եղել թոնդրակյաններին, որոնք ցանկանում են շինականին վնասազերծել նրա բկին չոքած հոգևոր հոգեառներից...

«Շատ առաջ գնաց,— ցավով գնահատեց Սուրենի խոսքը,— քիչ առաջ լեզուն լալկված էր վախից, իսկ մարգավարի վերաբերմունքը լրիվ փոխեց նրան։ Ասես նախկին Սուրենին փոխեցին մեկ ուրիշ Սուրենով։ Բավական էր մի քիչ շոյել նրա վնասված ինքնասիրությունը, որպեսզի գործի դրվեր քո ինքնատիրությունը ճանկոտող վիրավորանքը նրա կողմից...»։

— Թաց ու չոր խառնում ես, Սուրեն։ Երևում է լեզվիդ վրա հսկողություն չունես, խառնում ես հարգանքն ու վիրավորանքը։ Բայց երևի մեղքը քոնը չէ։ Քեզ չարացրել են։ Բայց, Սուրեն, մի ենթարկվիր չարությանը։ Աշխարհին նայիր ոչ թե քո վերքերի ահեղ ցավի միջից, այլ հոգին թեթևացնող բալասանվող ցավի մեղմությամբ։ Այնուհետև, դու թոնդրակյանների հետ գործ չունես, դու իմ և Հակոբի ներկայությամբ նրանց անունը չես տվել, իմացա՞ր... Այլապես, իմանան, կկտրեն լեզուդ... Զուր տեղը մի նեռվիր պատժիչների բերանը...

Ինքն էլ զարմացավ իր խորհրդից, իր խոսքերից։ «Ճիշտ խորհուրդ տվի, ապա թե ոչ չարությունը հեռու կտաներ նրան։ Հետո և նա, և մյուս ձկնորսները կարծելու էին, թե ես անվերապահորեն պաշտպանում եմ մեր եկեղեցու և սրբությունները, և անսրբությունները։ Ճիշտ խորհուրդ եմ տվել...»։

Հետո հրաժեշտ տվին հյուրընկալներին, որոնց մի մասն արդեն լճում էին և ձգում էին հսկայական ուռկանների պարանները։ Լիճը կամաց ծփում էր ու խաղացկուն սարսուռներով կլանում արևի ճաճանչներն ու ջերմությունը։ Ձկնորսները երգում էին, երգն օգնում էր ծանր աշխատանքին.

Զկնորս տղերք, իրար օգնեք,
Որ հեշտանա ջանքը,
Որ չհոգնեք, շատ չհոգնեք,
Ցսևանա կյանքը...
Ուժ տվեք, ուժ, ցանցը քաշենք...
Տառեխներն են ժիր խլվլում
Ու լցվում մեր ցանցը,
Ցարշարանքը մեզ է տրվում,
Իսկ տիրոջը՝ գանձը...
Ուժ տվեք, ուժ, ցանցը քաշե՜ե՜նք...

Առափնյա ճանապարհը գոտևորում լիճն ու թավալվում էր առաջ։ Ձայները կամաց-կամաց հեռացան և մարեցին։ Լճին ձուլվեցին ու կորան նաև ձկնորսական նավակները։ Հակոբը շրջվեց ուսուցչի կողմը։

— Հայր սուրբ, ումի՞ց ես սովորել վերքեր ապաքինելն ու բալասանող թուրմեր պատրաստելու վարպետությունը։ Դրանով դու փրկեցիր այդ դժբախտ Սուրենին։ Նա չգիտեր ինչպես հայտնել իր երախտագիտությունը և հիմարություններ էր դուրս տալիս։ Նա քեզ երկնային առաքյալ համարեց, որին առնչվելն իսկ աստծուն հաղորդակցվել է նշանակում։ Նա ինձ այդպես էլ ասաց...

— Հակոբ, որդյակ իմ, արի աստծուն հանգիստ թողնենք։ Ոչ էլ հարկավոր է նվաստիս փառաբանել կամ գովել։ Մի սովորական բուժիչ թուրմ պատրաստելու և մի դժբախտ մարդու ցավերը փոքր-ինչ մեղմացնելու համար։ Իսկ իմ ուսուցիչն այս ասպարեզում ևս եղել է մեծն Անանիան։ Նա է իմ ձեռքից բռնած տարել հանդերն ու սարերը, սովորեցրել է ճանաչել դեղաբույսերը, նրանցից բուժիչ թուրմեր պատրաստելու եղանակը։ Նա է ուսուցանել այս աստվածաստեղծ աշխարհը բաց գրքի նման ընթերցելու գաղտնիքը։ Իմացիր, Հակոբ, ինչ լավ բան կա իմ մեջ, բոլորի հեղինակը նա է, բոլորը ես ժառանգել եմ նրանից, այո, նրանից... Հայրս՝ Խոսրովը, շատ բազմազբաղ մարդ էր և խիստ ու խստության մեջ իր սկզբունքների գերին։ Նա ժամանակ չունեցավ կանոնավոր կերպով զբաղվելու իր երեք որդիների ուսման ու կրթության հարցերով և մեզ պարզապես նվիրեց Նարեկի ճգնակենցաղ միաբանության դպրանոցին՝ Անանիային, իսկ ինքը զբաղված էր զանազան վեճերով, բանավեճերով, նույնիսկ կռիվներով։ Եպիսկոպոս էր և բանավիճում էր կաթողիկոսի հետ։ Բանը հասավ մինչև բանադրանքի։ Իմ հայրը մեռավ բանադրված, չարժանանալով ներման։ Եվ Անանիան, որ նաև մեր արյունակիցն է, լրիվ փոխարինեց նրան և կրթեց՝ սովորեցրեց ամենայն ինչ, որ հարկավոր է մեր ժամանակի կրթված և ուսյալ մարդկանց...

***

Ոստանը դիմավորեց նախ զարմանալի լռությամբ, հետո զարմանալի աղմուկով։ Արծրունյաց թագավորական տունը Աղթամար տեղափոխվելուց հետո Ոստանը խամրած տեսք ուներ, թեև դեռևս այնտեղ էր եպիսկոպոսարանը։ Ստեփանոս սրբազանը նստավայր-գահանիստներ ունենալու կիրք ուներ։ Գահաթոռներ ուներ և Վանում, և Աղթամարում, և Ոստանում։ Գահանիստների առատությունը հազիվ թե ի վիճակի լիներ բարձրացնելու Արծրունյաց աշխարհի հոգևոր առաջնորդի հեղինակությունը։ Սակայն պարզ էր մի բան. հոգևոր առաջնորդի գահանիստներին կից, նրանց հարևանությամբ, բացվում էին բանտերը, ուր կտտանքների և հոգեբուժանքի էին ենթարկվում թոնդրակյանները և թոնդրակյանությամբ «վարակվածները»։ Համառորեն խոսվում էր նաև, որ զնդաններ խոնավ և խավար խցերում տառապում են սրբազանի անձնական թշնամիները և թոնդրակյան հորջորջվող շինականները, ովքեր ի վիճակի չեն վճարելու տերունական և վանական հարկերը։ Ինչևիցե, Ստեփանոս սրբազանը գտնվում էր Ոստանում։ Այնտեղ էին կալանված նաև Նարեկաշենի պատանդները՝ գեղջավագի գլխավորությամբ։ Շտապեցին դեպի սրբազանի նստավայրը։ Ընդունեց։ Մերժումը կտրուկ էր, վճռական։

— Ոստանում չխտում են թոնդրակյանները, կատարում ամեն տեսակի խժդժություններ։ Ես զբաղված եմ աստծո ունեցվածքների, սրբությունների պահպանության և թոնդրակյաններին որսալու ծանր, սակայն աստվածանվեր գործերով։ Ասացեք Նարեկի միաբանության վանահորը, որ գնա քաղաքիս գերեզմանատունը և տեսնի, թե թոնդրակյանները ինչպես են ոչնչացնում ոչ միայն սրբությունները, այլև անպատվում նրանց ներկայացուցիչներին։

Իսկ գերեզմանատանն, իրոք, անիմանալի, անհասկանալի անկարգություն էր տիրում։ Հայտնի է, որ թոնդրակյանները մերժում են խաչի սրբությունը։ Բայց այն, ինչ կատարել էին նրանք ննջեցյալների վրա կանգնեցված խաչքարերի հետ, զարմացրեց ու զայրացրեց նրանց։

— Ինչպիսի՜ ստահակներ պետք է լինեն նրանք, որ ջարդեն ու փշրեն խաչքարերը, խռովեն ննջեցյալների անդորրը, անպատվեն նրանց... Այո, մեղավորները պետք է հայտնաբերվեն ու պատժվեն... Ինչպիսի՜ անաստվածություն, ինչպիսի՜ անմարդկայնություն...

Սակայն Գրիգորը չէր հավատում, թե նման չարագործությունը թոնդրակյանների ձեռքի գործն է։ Չէր հավատում, բայց հակառակը պնդել ևս անկարող էր։ Փաստն առկա էր, իր աչքերի առջև։ Ծ՜, անառարկելի է

փաստի հեղինակությունը։ Ի՞նչ կարող ես անել, պարտավոր ես հավատալ։ Նույնիսկ մեղավոր մի միտք սկսեց չարչարել նրան։ Իսկ եթե այդ քստմնելի ոճրագործությունը կատարել են արաբնե՞րը՝ Մանազկերտի ամիրայության մարդիկ... Ո՛չ, ո՛չ, թափ տվեց ձեռքը։ Արաբները սարսափելի չարագործություններ են կատարել Հայաստանում, սակայն առ այսօր չի դիտված որևէ դեպք, որ նրանք անպատվեն և քանդեն հանգուցյալների հանգստարանները։ Եվ տրամաբանական էլ չէ։ Ի՞նչ են շահելու հայոց գերեզմանները քանդելով, թշնամանքից բացի։ Ամիրայություններն այնքան զորեղ չեն, որ կռիվ հրահրեն հայոց դեմ։ «Չեմ հասկանում չարագործին, նրա մտադրությունը։ Հանգուցյալը սրբություն է։ Սրբություն է նաև խաչը։ Չեմ հավատում, որ թոնդրակյաններն այնքան ստորանան, որ չարդեն շիրիմների խաչքարերը։ Չեմ հավատում, ավելի ճիշտ՝ չեմ հասկանում»։

Գերեզմանատնից դուրս գալուն պես ընկան մայր եկեղեցի վազող ամբոխի մեջ։

— Ի՞նչ է պատահել,— հարցնում էին վազողներին։ Չգիտեին։ Միայն մեկը կմկմալով պատմում էր.

— Թոնդրակյաններ են երևացել։ Ասում են՝ մայր եկեղեցուց ոսկե անոթներ են գողացել։ Եկեղեցին շրջապատված է զինվորներով։ Գնանք, տեսնենք ի՞նչ են անում։ Սրիկաներին հարկավոր է պատժել...

— Ոստանում թոնդրակյանն՞ր, ինչ-որ չեմ լսել...— խոսեց Գրիգորը։

— Թոնդրակցիներն ամեն տեղ կան, հոգևոր հայր, ոջիլի նման կպել են աշխարհիս հայոց և չեն պոկվում։ Ասում են՝ մի քանի հոգի են, եկել են Թոնդրակի համայնքից և խժդժություններ են սարքում, արյուն են պղտորում։ Հարկավոր է նրանց, ինչպես ոջիլի, ճզմել, ոչնչացնել,— և թևատակը քորելով անցավ առաջ։ Գրիգորը չգիտեր, հավատա՞լ, թե չհավատալ լսածին։ «Այս մեկը որոշ բան գիտեր,— մտածեց,— սա էլ երևի ոջլոտ է, երևի հանգիստ չունի ոջիլներից և խոսքը ստիպված համեմում է ոջիլով։ Սիծաղելի է։ Դուրս է գալիս, որ Ապահունյաց աշխարհի Թոնդրակ համայնքից թոնդրակյաններ են եկել Ոստան, որպեսզի ջարդեն խաչքարերը, վիրավորեն հանգուցյալներին և գողանան մայր եկեղեցու ոսկեղենը։ Ինչո՞ւ անպայման թոնդրակեցիները, ինչո՞ւ... Չե՞ն կարող սովորական գողերն ու ավազակները թալանել ու ջարդել։ Գուցե թոնդրակյանները փոխե՞լ են իրենց պայքարի մարտավարության ձևերը և բռնել շիրմաքարեր ջարդելու և գողությամբ ապրելու սրիկայական ճանապարհը։ Ինչ-որ անհավատալի, անհասկանալի բաներ են կատարվում

Ոստանում։ Գնանք, խոցենք հետաքրքրասերների բանակը, գուցե այս ամենի պատասխանը գտնենք...»։

— Քայլիր, Հակոբ, գողերը հանդիսականների են սպասում, գնանք...

***

Մայր եկեղեցու փոքրիկ հրապարակում ասեղ գցելու տեղ չկար։ Բազմությունը բռնել էր նույնիսկ հրապարակ տանող փողոցները։ Ամբոխը մոլտում էր, խուլ բվվում։ Բարձրաձայն արտահայտում էին իրենց դժգոհությունը, զայրույթը։ Շատերը կասկածում էին լուրերի ճշմարտությանը։

— Այ ժողովուրդ,— գոռալով խոսում էր մեկը,— մեր աշխարհում առաջին անգամ չէ, որ կողոպուտ ու գողություն է կատարվում։ Այդ ի՞նչ նոր տեսակի գողեր են լույս ընկել, որ գողություն կատարելուց առաջ մատնում են իրենց մտադրությունը, թե՝ եկեք, բարեհաճեք մեզ բռնել, քանզի գողություն ենք կատարելու...

— Ճիշտ է ասում մարդը, որտեղի՞ց ծլեցին այդ ազնիվ, մարդասեր գողերը...

— Ճի՞շտ է, ճի՞շտ է...

— Հիմա որտե՞ղ են գողերը...

— Ի՞նչ եք հիմար-հիմար դուրս տալիս, գողերն ինչո՞ւ պիտի մատնեն իրենց մտադրությունը,— բարկացած խոսում էր մի հոգևորական,— եկեղեցու լուսարար Սարգիսն է տեսել, թե ինչպես երկու հոգի մտել են եկեղեցի, այնուհետև լսել է գանձատան դռան ջարդվելն ու աղմուկ բարձրացրել...

— Լուսարար Սարգիսն ինչպե՞ս կարողացավ կատարվող գողության մասին հայտնել և՛ սրբազանին, և՛ զինվորներին, և՛ այսքան ժողովուրդ հավաքել...— գլուխ էր կոտրում մեկ ուրիշը։

— Ասացեք, ով իմացողներ, վերջապես որտե՞ղ են այդ խելոք գողերը։ Եթե ներսում են, ինչո՞ւ չեն փախչում։ Էշեր հո չեն, սպասում են իրենց գլխատվելո՞ւն...

— Գուցե փախե՞լ են...

— Չեն կարող փախչել, եկեղեցին զինվորական օղակի մեջ է...

— Իսկ զինվորներն ո՞ւմ են սպասում, եթե գիտեն, որ գողերը ներսում են, թող բռնեն ականջներից ու տանեն բանտ...

— Սրանք ուրիշ գողեր են... Վատթարագույնս գողերից, թոնդրակյաններ... Գիշերը ջարդել են գերեզմանոցի խաչքարերը, առավոտյան

մտել եկեղեցի՝ կողոպուտի։ Սրանք աստծո և եկեղեցու երդվյալ թշնամիներ են։— Խոսողը եկեղեցու ծառաներից էր։ Հագուստն էր մատնում։

Մինչ այդ զորականները նիզակներն ու սրերը մարտականորեն վեր պարզած մտան եկեղեցի։ Ամբոխը լռեց։ Բայց ասես գալարվում էր ներքին ցավից։ Եկեղեցու բաց դռնից հանկարծ դուրս նետվեց մեկն ու ցանկանում էր պատռել մարդկանց խիտ շղթան, սակայն նրան չանթեցին անմիջապես, ձեռքերը ոլորեցին ու շղթայեցին։

— Եղբայրներ, ես գող չեմ, աստված վկա, գող չեմ,— պաղատում էր բռնվածը։

— Ինչպե՞ս թե գող չես, հերձվածող թշվառական,— գոռաց մի հոգևորական,— եթե գող չես, ի՞նչ էիր անում եկեղեցու գանձատանը...

— Ես գող չեմ, հավատացե՛ք...— ողբում էր շղթայվածը։ Նրա ծոցից զորական պաշտոնյան ի տես ամենքի եկեղեցական արծաթյա անոթներ, սպասք և այլ առարկաներ դուրս քաշեց և մի ծանր ապտակով նախշեց հանցագործին։

— Ասում ես՝ գող չեմ, սրիկա, դե կեր...

— Սպասեցեք, այ քրիստոնյաներ, սա ձեր ասած գողը չէ, սա շուկայի գինեմոլ մուրացիկներից է։ Սա գող չէ...— խոսողը ևս մուրացկան էր։

Ամբոխը քարացել էր։ Ինչպե՞ս թե, բա գողացած ապրա՞նքը... Եվ մի՞թե թոնդրակյան չէ։ Ի՞նչ հանելուկ է։ Ի վերջո, մուրացկանը ինչո՞ւ չի կարող գող լինել, գողություն անել... Նրանից ավելի հարմար գող ո՞վ կարող է լինել...

— Թողեք հիմար-հիմար խոսելը։ Գողացածը ձեռքին բռնել են՝ գող չէ... Բա ի՞նչ է, սո՞ւրբ է, կողոպտում է եկեղեցին՝ գող չէ... Դրան կախել է պետք, կախել...

Գողին տարան։ Մինչև վերջ գոռում էր, ինքը գող չէ։ Չհավատացին։ Աղերսում էր, որ իրեն լսեն։ Չլսեցին։ Ամբոխն սպասում էր մյուսին։ Գիտեին, որ երկուսով են մտել եկեղեցի։ Երկրորդը չուշացավ։ Հայտնվեց զանգակատան գմբեթի տակ։ Երևում էր, որ փախչում է հետապնդողներից։ Փոքրիկ տարածքում գողը դես ու դեն էր ընկնում։ Մի քանի անգամ քիչ մնաց գահավիժեր զանգակատնից, բայց հրաշքով հետ էր նետվում, ասես աներևույթ մի ձեռք նրան հետ էր քաշում մահվան երախից։

Հետապնդողների ավագը առաջ ընկավ։

— Հարկավոր է նետահարել...

— Իսկ բռնել չի՞ կարելի...

— Վտանգավոր է, մերոնց կհրի ներքև կամ կքաշի իր հետ, ի՞նչ անել,— ավագը մոտեցավ ամենայն հավանականությամբ եկեղեցու ավագ քահանային։ Ինչ-որ խոսեցին, և հրամանը թնդաց.

— Նետաձիգնե՛ր, առա՛ջ,— հրամանին հլու, առաջ եկան։

Մինչ այդ գողը բարձրացրել էր ձեռքը և իրեն լսելու ակնարկներ էր անում.

— Լսեցե՛ք, թող խոսի գոնե մահվանից առաջ...

Ամբոխն աղմկում էր.

— Ա՜յ ժողովուրդ, լսեցե՛ք, ինչ եմ ասում,—գոռում էր գողը,— լսեցե՛ք... Ի՞նչ գողություն, ինչ բան, մենք գողեր չենք...

— Տղան զանգակատուն է բարձրացել տիրած կնոջը հանդիպելու, գող չէ...

Ծիծաղեցին։ Սակայն գողը ասելիք ուներ։ Շտապում էր։

— Մենք գողեր չենք, մեզ համոզել են և մենք...

— Աղեղնավորնե՛ր, պատրա՛ստ,— թավ ձայնով, սրտնեղած գոռաց տղան,— նետահարե՛լ...

— Լսեցե՛ք,— վերստին պաղատեց գողը։ Բայց ուշ էր արդեն։ Զարագույժ սուլեցին նետերը և շանթեցին ու մի քանիսը թափանցեցին հանցագործի փափուկ ու հնազանդ մարմինը։ Հանցագործն առաջին պահին հետ-հետ գնաց։ Նա ոչինչ չէր տեսնում։ Նետերն այնպես էին խրվել մարմնի մեջ, որ ասես աճել էին մարմնին ոզնու փշերի նման։ Նետերը կուրացրել էին նրան։ Զախ աչքը մտած նետը կախվել էր ծոծրակից։ Նա հետ-հետ գնաց, ապա ձեռքերը տարածած առաջ եկավ ու գոռոցով գահավիժեց։ Ներքևում մարդիկ փախան դեսուդեն, և գողը ծանր թրմփոցով զարկվեց եկեղեցու առջևի սալաքարերին։

— Վա՜խ...— հառաչեց ամբոխը։

Լռությունը անշարժացավ-մնաց։ Խոսել ոչ ոք չէր փորձում։ Խոսել ոչ ոք չէր ցանկանում։ Խոսել ոչ ոք չէր համարձակվում։ Կամաց քանդվում էր բազմությունը և մաս-մաս հեռանում։ Հեռանում էին ոմանք տարակուսանքով, ոմանք կասկածանքով, ոմանք վստահ, որ այդ տարօրինակ գողերը ոչ թե գողեր էին, այլ գողություն խաղացողներ, իսկ մեծավ մասամբ այն կարծիքին էին, որ խաչքարերի ջարդողներն ու գողերը թոնդրակեցիներ են, որոնք քայքայում ու կործանում են ոչ միայն եկեղեցական ու վանական տիրույթները, այլև ձեռք են բարձրացնում ննջեցյալների հանգստության և սրբազան անձեռնմխելիության վրա։ Սակայն այլ կարծիքի էր Գրիգորը։ Նա ցնցված էր տեսածից ու լսածից։ Եվ վստահ էր, որ այդ ողբերգական խաղին բոլորովին անմասնակից են թոնդրակյանները, որ տեսածը սարքովի ներկայացում էր, սակայն իրական զոհերով։ Բայց ովքե՞ր են ողբերգության հեղինակներն ու զոհերը։ Չգի-

տեր։ Կասկածներ ուներ, սակայն այնքան հրեշավոր հետևություններով, որ քիչ էր մնում ծվատեր ինքն իրեն՝ նման անհեթեթ մտքերի համար։ Բազմությունը դանդաղ ցրվում էր։ Եթե դատաստանից առաջ մարդիկ խոսում էին, մտքեր հայտնում, վարկածներ առաջ քաշում, մի խոսքով, քննում էին եղելությունը, ապա գողի, թե գողի դերը կատարողի ողբերգական մահից հետո բռնվել, կալանվել էին մարդկանց լեզուները, և նրանք լռելյայն ցրվում էին՝ յուրաքանչյուրն իր գործին։ Մահվան բնավորությունն է այդպիսին։ Նա աքցանում է մարդու աշխուժությունը, կալանք դնում մտքերը բարձրաձայն արտահայտելու՝ լեզվի վրա և ստիպում, որ մարդիկ իրենց մտքերը իրենց մեջ հոլովեն և իրենց մեջ որոնեն հարցերի պատասխանները։

— Դու ի՞նչ կարծիքի ես լսածիդ ու տեսածիդ մասին,— հարցրեց Հակոբին։

— Բոլորը, ինչ տեսանք, ուսուցիչ, սարքովի էր։ Նույնիսկ այդ դրժբախտի մահը։ Զանգակատուն էին բարձրացրել խաբելով, բայց սպանեցին իսկականից, որպես գողի։ Խաչքարերը ևս ջարդել են ոչ թե թոնդրակյանները, այլ շահագրգռված մարդիկ, ում հարկավոր է մեղադրանքներ հորինել թոնդրակյանների հետ հաշվեհարդար տեսնելու համար։

Գրիգորը հիացմունքախառն զարմանքով նայում էր իր աշակերտին։

— Ճիշտ չե՞մ մտածում, ուսուցիչ։

— Դու ասացիր այն, ինչ ես մտածում էի, ապրես, Հակոբ։ Սակայն ինչո՞ւ թոնդրակյանների մեղքերին նոր մեղքեր ավելացնել, զի՞նչ ցուցանէ առակս...

Հակոբը պատասխան չուներ։

— Չե՞ս գտնում, որ նոր մեղադրանքները՝ թոնդրակյանների դեմ նոր գործողություններ սկսելու համար պատրվակներ են։ Շահագրգռված մարդկանց համար այս ամենը ձեռքերն ազատելու փորձված միջոց է։ Պետք է սպասել նոր փորձությունների։ Ես վախենում եմ նոր արյունահեղությունից...

— Ուսուցի՛չ, մենք կարծես թե չենք կարողանում պարզել, թե վերջապես ովքեր են այն շահագրգռված անձինք, որ դիվական ոճիրներ են նյութում մարդկայնության, մարդկանց դեմ, հետևաբար, և աստծո դեմ...

— Պարզից էլ պարզ է, որդյակ իմ, թոնդրակեցիները թշնամի են եկեղեցուն, իսկ եկեղեցին՝ նրանց։ Եթե թոնդրակեցիների դեմ նյութվում են դավեր, ուրեմն, հեղինակները պետք է լինեն եկեղեցականները, ուրիշ էլ ո՞վ... Այս բոլորի թիկունքում կանգնած է մեր աշխարհի հոգևոր առաջնորդարանը...

— Սրբազա՞նը...

— Առանց նրա չէր կարող խաղացվել այս ողբերգությունը... Պատկերացնում ես, թե մեր աստծուն, մեր հավատին որպիսի մեծ հարված է նման դիվական արարքը։ Ուրեմն, թոնդրակյանները նոր հարված կստանան իրենց չկատարած հանցանքների համար։ Իսկ իսկական հանցագործները կսրբանան հայ առաքելական եկեղեցու պատիվն ու հեղինակությունը փրկելու, անձնուրացաբար պաշտպանելու համար։ Օ՜, տեր իմ աստված, գուցե ես շարախոսում եմ քո սպասավորներին, գուցե իմ անցանկալի, նույնիսկ դիվական մտքերը վերագրում եմ անմեղ մարդկանց, գուցե... եթե սխալ եմ և հորինող, պատժիր ինձ, պատժիր, վարվիր ամենադաժան ձևով ինձ հետ, իսկ եթե իմ մտքերը արդյունք են ճիշտ մտածողության, ուրեմն նույն սկզբունքով վարվիր նրանց հետ՝ անսուրբ սրբազանների և անաստված աստվածապաշտների, և թույլ մի տա, որ հոսի հայի սակավ, թանկ արյունը...

***

Սրբազանը ընդգծված սառնությամբ ընդունեց Գրիգորին։ Վերջինս առաջին պահ շփոթվեց նման սառն ու չոր ընդունելությունից, թեև դրան սպասում էր։ Ոչ միայն մերժեց Նարեկ գյուղի պատանդներին ազատելու նրա խնդրանքը, այլև նախահարձակ եղավ, որով և Գրիգորին հանեց համբերությունից։

— Դու հասկանո՞ւմ ես, թե ի՞նչ ես պահանջում ինձնից...

— Ես չեմ պահանջում, սրբազան, ես խնդրում եմ...

— Մի՞թե միևնույնը չէ, Գրիգոր, մի՞թե միևնույնը չէ։ Այս օրերին, երբ գնալով թեժանում է պայքարը թոնդրակյանների դեմ, երբ մարդկային այդ թափթփուկները նոր արշավանք են ձեռնարկում մեր սրբազան հավատի և նրա էության դեմ, երբ հանգիստ չեն տալիս նույնիսկ հանգուցյալներին,— այստեղ սրբազանը ջերմեռանդությամբ խաչակնքեց, նրա աչքերում նույնիսկ արցունքներ երևացին,— երբ հայ եկեղեցին նույնիսկ իր ունեցվածքի տերը չէ, դու՝ Նարեկավանքի վանահայրդ, առաջարկում ես ի բաց արձակել խռովարարներին, նրանց, ովքեր մարդասպանությունը համառորեն համարում են ընդունելի, իսկ ինքնագլուխ դատաստանը՝ օրինական։ Նրանք, Գրիգոր վարդապետ, վարակված են թոնդրակյաններից, նրանց հարկավոր է խստագույնս պատժել։ Եթե չեն ցանկանում պատժվել, ուրեմն, թող բարի լինեն և մեր ձեռքը հանձնեն մարդասպաններին...

— Ասում են՝ վախի աչքերը մեծ են, սրբազան, այնքան են հոլովել ու քարկոծել թոնդրակեցիներին և սերմանել վախ և արգահատանք նրանց նկատմամբ, որ առ այսօր, ում ցանկանում են որևէ ձևով կշտամբել, վախեցնել, զրկել դիրքից ու պաշտոնից, բավական է թոնդրակյան հորջորջել, որ նա կործանվի, հեռացվի հոգևոր, գիտական, մշակութային, ասպարեզներից։ Խնդրում եմ զգույշ վերաբերվել մարդկանց, թոնդրակյան բառը չօգտագործել որպես խարան, որպես պիտակ, մարդկանց հետ հաշվեհարդար տեսնելու փորձված մահակ, այլապես աստծուն, մեր երկնային տիրոջը՝ երկրի վրա կթողնենք մեն-մենակ, առանց նվիրյալների։

Սրբազանը լսում էր Գրիգորին և եփվում ու եռում էր գահավորակին։ Սփրթնել էր, աչքերը թռել էին ճակատը։ Տեսքը չարագուշակ էր։ Նման դեմք ունեցողները աստծո թեմից լինել չեն կարող, աստծո հավատարիմներից լինել չեն կարող, մարդու բարեկամ լինել չեն կարող։ Լավ դեմք չէր։ Գրիգորն զգում էր, որ իզուր են իր հորդորները, իր նախատինքները, ի վերջո, իր քողարկվել չցանկացող զայրույթը։ Զգում էր, որ որքան երկարի այս հանդիպումը, այնքան կխորանա խորթությունն իրենց միջև, կհասնի անթաքույց թշնամանքի։ Նա, այնուամենայնիվ, չէր ցանկանում վաստակել այս վտանգավոր մարդու անբարյացակամությունն իր նկատմամբ, որ կնշանակեր նաև անբարյացակամ վերաբերմունք Նարեկի միաբանության հանդեպ։ Ամեն վատություն կարելի է ակնկալել Ստեփանոս սրբազանից, ամեն տեսակ խարդավանք ու զրպարտություն։ Գործելու այն միջոցներից, որ օգտագործում էր սրբազանը, լրիվ զուրկ էր Գրիգորը։ Առանց նման զինվածության անհնար էր դուրս գալ նրա դեմ։ «Ի՞նչ անել, ինչպե՞ս լեզու գտնել այս ճղճիմ ու զորեղ մարդու հետ։ Նրա հետ անհնար է մարդավարի խոսել։ Կամ պետք է ոտքերն ընկնել, դառնալ նրա կամակատարը, ստորանալ, կամ ստորացնել և՝ գցել ոտքի տակ, այսինքն, վախեցնել և շահել ճակատամարտը։ Ես անընդունակ եմ և ստորանալու, և ստորացնելու։ Նման պայքարում ես գերադասում եմ մարտիկ լինել, քան դիվանագետ...»։

Խոսքի հերթը սրբազանինն էր.

— Դու, հայր սուրբ, մեր օրերի մարդ չես, մեր օրերի մարդ չես, դու այս աշխարհից չես... Կուրացե՞լ ես, չես տեսնում ի՞նչ է կատարվում քո շուրջը։ Հակառակորդն այնքան է լկտիացել, որ պղծում է նույնիսկ ննջեցյալների շիրիմները։ Ի դեպ, դու տեսա՞ր այդ սարսափելին, այդ անպատմելին։ Ես հրամայել էի, որ դու գնաս և սեփական աչքերով տեսնես, թե ինչի է ընդունակ մեր եկեղեցու, մեր ժողովրդի, մեր աստծո թշնամին...

— Տեսա, սրբազան, սեփական աչքերով տեսա...

— Եվ ի՞նչ...

— Իրոք սարսափելի, աստվածասպան սրիկայություն էր կատարվել։ Սակայն ի՞նչ առնչություն ունեն այս գործին թոնդրակյանները, մեր ոստիները... Իմ կարծիքով դա խելագարի գործ է, լուրջ մարդը երբեք նման արարք թույլ չէր տա...

— Իսկ եկեղեցում կատարված կողոպո՞ւտը...

— Եկեղեցու գողություն անողներին ճանաչողներ եղան։ Ասացին, որ շուկայի մուրացկաններից են... Ես ամբոխի մեջ էի, սրբազան...

— Ինչպես երևում է ամբոխի տրամադրությունը փոխանցվել է քեզ, սիրելի՛դ իմ վանահայր։ Դու մեծ խելքի տեր անձնավորություն ես, Գրիգոր։ Ինչպե՞ս գլխի չես ընկել, որ սրիկային ճանաչողները եղել են իրենց հանցակիցները։ Նրանք երկուսով չեն գործել, այլ խմբով։ Ուրեմն, մի քանիսն էլ եղել են ապակողմնորոշողներ, թյուրիմացություն սարքողներ...

— Երանի այդպես լիներ, սրբազան, երանի այս ամենը չար ուժերի զրպարտչական աշխատանքի արդյունք լիներ...

Սրբազանը լարվեց։ Ճակատին քրտինք երևաց։

— Ի՞նչ չար ուժերի մասին ես խոսում։

— Ես էլ չգիտեմ, սրբազան, այդ ամենի մեջ ինչ-որ սարքովի, անհավատալի բան կար, ներկայացո՞ւմ, թե ինչ...

Ստեփանոսը ունքերի մացառուտից ուշադիր նայում էր Գրիգորին. «Գիտե՞ս, գիտե՞ս, թե ինչ ես ասում և ում ես ասում, գիտե՞ս։ Գալիս, հասնում ես իմ անվանը և կանգ ես առնում։ Խնայո՞ւմ ես ինձ, թե քաջությունդ չի բավականացնում։ Վտանգավոր մարդ ես, Գրիգոր վարդապետ, սակայն կասկածներդ հաստատող փաստերը բավարար չեն, այլապես առանց հապաղելու ինձ կուղարկեիր գրողի ծոցը...»։

— Կասկածամիտ ես, հայր սուրբ, կասկածամիտ։ Ենթադրություններով, կասկածներով ապրելը հիվանդություն է։ Իմացիր, որ մենք այստեղ ամեն ինչ ստուգել ենք, պարզել, որ մեր հին, դարավոր թշնամին վերստին գլուխ է բարձրացրել, վերստին ավերում է եկեղեցիներս հայոց ու տաճարները կաճառաբնույթ, վերստին ծարավի է արյան, ծարավի, բորենու նման...

— Օ՜, աստված մի արասցե, աստված չանի...— առանց եռանդի արձագանքեց Գրիգորը, և երկուստեք խնդրո առարկա վեճը համարեցին ավարտված։

— Իսկ մեր խնդրանքը մերժվա՞ծ համարենք,— նորից անդրադարձավ Գրիգորը։

— Քո խնդրանքը ոչ կարող եմ կատարել, ոչ էլ մերժել,— մեղմացավ սրբազանը։ Նա բացահայտորեն չէր ցանկանում վեճ բորբոքել Գրիգորի հետ, միաժամանակ, չէր էլ ցանկանում նահանջել նրա առջև։— Գործերս մի քիչ կարգավորվեն, ինքս կժամանեմ Նարեկ, այնտեղ էլ կխորհենք...

***

Երկար ժամանակ տրամադրություն չունեին խոսելու, թեև ասուլիսի նյութ շատ ունեին։ Ոչ մի մխիթարական բան չկար, որ փոքրիշատե բարձրացներ նրանց հոգեվիճակը։ Գրիգորը հոգու խորքում զգում էր, որ խմորվում է քստմնելի մի ոճիր, նոր պատրվակ՝ գլխատելու Թոնդրակյան համայնքը, թափելու հարյուրավոր անմեղ մարդկանց արյունը։ Ճանապարհը դժվար էր բացվում ու կծկվում, նորից գիշերեցին ձկնորսների մոտ։ Նորից բաղասանեց Սուրենի վերքերը։ Նույնիսկ երջանիկ զգաց, որ ապաքինվում է ձկնորսը, նորից նրա հայացքը գուրգուրեցին հայրենի գեղեցկությունները, սակայն սիրտը չմխիթարվեց։ Սրտում տագնապ կար և անկարող էր հաղորդակցվել շրջապատին, տեսնել և վայելել գեղեցկության հրապույրները։

— Ի՞նչ երեսով ենք երևալու շինականներին,— խոսեց Գրիգորը, երբ վերջալույսի շողերի տակ երևացին Նարեկի վանքի գմբեթն ու զանգակատունը,— որպիսի անհամբերությամբ են սպասում պատանդների հարազատներն ու շինականները նրանց վերադարձին։ Ի՞նչ երեսով, Հակոբ, ի՞նչ երեսով...

— Դու ամեն բան արեցիր, ուսուցիչ, որ նրանք վերադառնային իրենց ընտանյաց գիրկը, սակայն բանտի դռները ջարդելը վեր էր քո ուժից... Մխիթարվենք, որ կիսաբերան մի հույսի խոստում գոնե բերել ենք մեզ հետ։ Հուսանք, որ պատանդները շուտով տուն կդառնան...

— Դժվար է ասել, ավելին՝ հավատալ, որ նրանց շուտով տուն կարձակեն։ Սրբազանը նրանցից է, ում խոսքն ու գործը համաքայլ չեն։ Խոստացավ այցելել Նարեկ, գուցե այստեղ կարողանանք համոզել...

— Իսկ ինչո՞ւ չպետք է համոզվի, համաձայնի,— միամտաբար խոսեց Հակոբը։

— Դու այդ ի՞նչ ես ասում, որդիս, մի՞թե քեզ հայտնի չէ, որ հակաթոնդրակյան դրոշակակիրը մեր աշխարհում՝ Ստեփանոս եպիսկոպոսն է, Սյունիքում՝ Վահան եպիսկոպոսը և այլն։ Եվ մի՞թե քեզ հայտնի չէ, ուսուցչապետ Անանիային և ինձ՝ Թոնդրակյանության մեջ մեղադրողների առաջին շարքում միշտ էլ եղել է Ստեփանոս եպիսկոպոսը։ Նա է եղել նաև մեր միաբանության, մեր ուխտի զրպարտիչ միաբանների հովանավորն ու խրախուսողը։ Պարզից էլ պարզ է, որ շինականների, Նարեկի գեղջավագի կալանավորման մեջ երևում է նրա միտումնավոր դիրքը՝ ինչ գնով էլ լինի պաշտպանելու Ղազարոսի անբարոյական արարքը։ Դու տես, թե նա ինչպիսի վարպետությամբ օգտագործեց նարեկցիների ինքնագլուխ, սակայն օրինական արարքը՝ նրանց պատժելով շնացողին արդարացնելու համար։ Եվ ես համոզված եմ, որ նա սուրը չի դնի պատյան, մինչև չհասնի իր ցանկությանը...

Հակոբը լսում էր ուսուցչին և ամբողջ էությամբ զգում էր, որ նրա համար խստագույնս դժվար է ճակատել սրբազանի դեմ, միաժամանակ հավատացած էր, որ որքան էլ դժվար, այնուամենայնիվ, այս ճակատամարտն անխուսափելի է, քանզի ճանաչում էր իր ուսուցչին։ Գիտեր, որ նրա փխրուն, բարի, առաջին հայացքից նույնիսկ խոնարհ էության մեջ ապրում է ամուր մի հոգի, չթեքվող մի կամք, չերևացող սկզբունքայնություն, որը չի հանդուրժում չարության հաղթարշավը և ի զորու է վճռական պայքար մղելու արդարության, մաքրության և բարության հաղթանակի համար։ Այո, իր ուսուցիչը, Գրիգոր Նարեկացին, մեծ մարդ է...

ՊԱՏԵՐԻ ՄԵՋ ԵՎ ԴՐՍՈՒՄ

Իջել էր մթամած գիշերը։ Տեղատարափից հետո թվում էր, թե կբացվի, կժպտա հազարաչքանի երկինքը, սակայն ամպերն իրենց բեռի հետ միասին ներքև իջնելով ոչ թե դատարկեցին երկինքը, այլ ասպարեզ բացին ավելի մութ, առավել ցրտաշունչ ամպերին, որ բարդ-բարդ կախվեցին երկրի վրա և թաց շոյանքով ավելի խոնավացրին ջրից հագեցած հողը։ Փչում էր քամին։ Խուցերում սառն էր ու խոնավ։ Քամու ոռնոցին խառնվել էր հողմահար լճի շառաչը։ Գարունը վաղուց զիջել էր իր իրավունքները ամռանը, սակայն վերջինս մի տեսակ երկչոտությամբ էր հաստատում իրեն և ուշանում էր, ուշանում թագադրումից։ Խոնավությունը, քամահար եղանակը, որն իր հետ բերում էր գարնանից մնացած ցրտի ծվեններ, թեև դիպչում էր մարդկանց, սակայն չէր թափանցում մարմինները, անկարող էր այլևս մրսեցնել և լոկ զովացնում էր ցերեկվա շոգից դեռևս տաք մարմինները։ Կանթեղից լույս էր կաթում մագաղաթին։ Մատներից լույս էր կաթում մագաղաթին։ Մագաղաթը կենդանանում էր, ոգի առնում և պատրաստվում աշխարհի ու մարդկանց հանդիպմանը։ Փոքրիկ խուցը կանթեղի լույսից թույլ լուսավորված էր, սակայն հոգին ողողված էր աստվածային մի լույսով, որ տեսանելի էր լոկ իրեն՝ արա-

ղին։ Գրիգորը երկնում էր, երբ քարի նման ամուր մթությունն հանկարծ արթնացավ մենաստանի դարպասի տագնապալի թակոցներից։

— Ո՞վ է, ի՞նչ եք կամենում այս տարաժամին,— լսեց վանքի հրամանատարի քնատ ձայնը։

— Բացե՛ք, բարեկամ եմ։

— Ասա՛ ով և ինչ լինելդ, անանուն բարեկամներ չկան,— հերթապահի ձայնը խիստ էր ու չհանդուրժող։

— Զորական եմ, անունս՝ Մուշեղ, հայր սուրբին քաջածանոթ...

Հետո քայլերի ձայներ լսվեցին։ Հերթապահը բացեց Գրիգորի խուցի դուռը։

— Ներս թո՛ղ,— կարգադրեց Գրիգորը և սկսեց հավաքել թղթերը։ Սիրտը բաբախում էր արագ, անհամաչափ։ Կարոտել էր Մուշեղին։ Միաժամանակ, ամաչում էր նրանից իր «թղթի» համար, որ անզիջում մի բանավեճ էր կճավա ուխտի անդամ Մուշեղի հետ, բանավեճ թոնդրակյան վարդապետության անընդունելի սկզբունքների դեմ։ «Ի՞նչ եմ ասելու նրան։ Ասել, որ վախի՞ց եմ արել, ասել, որ սրածս դիվանագիտությո՞ւն է։ Սակայն պատմության դատի առջև «Թուղթը» թոնդրակյաններին մերկացնող մի կծու փաստաթուղթ է, որ ինձ համար արդարացում չէ։ Սակայն պետք է, որ Մուշեղին այդ խնդրի շուրջ տեղյակ պահած լինի հայր Անանիան»։ Պահատնակից լսվում էին վիճաբանության ձայներ։

— Զենքերը՝ սուրը, նիզակը և վահանը թող այստեղ։ Աստծո տունը զինավառ մտնելն արգելվում է...

— Զինաթափվե՞մ, ուրեմն...

— Վանահոր հետ մենամարտելո՞ւ ես, ինչ է..

— Իսկ եթե չեմ ցանկանում զինաթափվել...

— Չես ցանկանում, չեմ բանա դարպասը...

Հետո կարծես միմյանց հասկացան։ Իսկ քիչ անց Գրիգորն արդեն Մուշեղի հուժկու բազուկների մեջ էր, նրա գրկում։ Ուրախությունի՞ց, թե կարոտից նրանց աչքերում հայտնվել էին արցունքները։ Մուշեղը նայում էր Գրիգորին, ցանկանալով մի բան ասել, սակայն սպասված խոսքը երևի չէր հայտնվում շուրթերին և փոխարենը մեղմ ժպտում էր։ Հետո նստեցին։

— Ինչո՞ւ ես զորականի համազգեստով, հայր սուրբ։

— Երկար պատմություն է, Գրիգոր, երկար, ողբերգական պատմություն։

Մինչև պատմությանդ անցնելը, ասա, ինչպե՞ս է ուսուցչապետ Անանիան։

— Հոգով առույգ, մտքով պայծառ, մարմնապես տկար...

— Հիվա՞նդ է, ուրեմն...

— Ծեր է, Գրիգոր, հետևաբար տկար, ոչ այնքան հիվանդ, որքան ծեր։ Բայց շարունակում է աշխատել, ստեղծագործել։ Միտքը զարմանալիորեն անվթար է, տակավին երիտասարդ... Բայց ես այստեղ եմ, քանզի փախած եմ հետապնդումից, Գրիգոր։ Թոնդրակը վերստին ապստամբեց, ավելի ճիշտ ստիպեցին, որ ապստամբեր։ Հորինեցին խաչքարեր ջարդելու, Ոստանի եկեղեցիները կողոպտելու ճիվաղային պատմություններ և ոտքի հանեցին Թոնդրակի համայնքը... Եթե կարճ ասեմ, պատմությունը հետևյալն էր, Թոնդրակը ոտքի ելավ, սակայն պարտվեց...

— Ինչպե՞ս, ե՞րբ... ես ծանոթ եմ Ոստանի խժդժություններին, երբ հորինվում էին այդ զրպարտանքները թոնդրակյանների դեմ...

— Ապստամբությունից անցել է երևի մեկ ամիս, պարտությունից ուղիղ մեկ շաբաթ...

— Իսկ ես չեմ էլ լսել։ Սպասիր, սպասիր, ուրեմն, պարտությունից անցել է մեկ շաբա՞թ, ասացիր...

— Այո՛, իսկ ի՞նչ կա որ...

— Ոչինչ, հետո կասեմ, իսկ դու պատմիր, թե ինչպես ընթացավ ապստամբությունը և ինչո՞ւ պարտվեց։ Բանն ի՞նչ է...

— Ապստամբությունը բռնկվեց հակաթոնդրակյան ուժերի հրահրումով։ Տեսնելով թոնդրակյան համայնքի խաղաղ ու համերաշխ կյանքը, տեսնելով, որ շրջակա Դալարիք, Հայկաշեն և այլ գյուղերի աչքին թոնդրակի համայնքը դառնում է օրինակելի, վախենալով թոնդրակի հարևանությունից, տեղական հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները հորինեցին անհավատալի, անաստված սրիկայություններ թոնդրակի դեմ և հասան այն բանին, որ թոնդրակեցիները զենք վերցրին իրենց խաղաղ կյանքը թունավորողների դեմ, վառեցին ապստամբության ջահը։ Սկզբում հաջողությունն ուղեկցում էր ապստամբներին, լավ դաս տվեցին Ապահունյաց նախարարական զորքերին։ Հետո պարզվեց, որ դա զորական խորամանկություն է եղել։ Իշխանական զորքերը նահանջելով Մանազկերտի ուղղությամբ, հրապուրել են իրենց հետևից ապստամբներին, քաշել նրանց ամիրայի զորքերի բերանն ու իրենք շրջվել դեպի արևելք, իսկ ամիրայի զորական ուժերը հայտնվել են ապստամբների թիկունքում։ Երկու սրի, երկու թշնամու արանքում թոնդրակյան բավականաչափ զոհեր տված ու մաշված ուժերը ջախջախիչ պարտության մատնվեցին, Գրիգոր, իմ աչքերի առջև։ Օ՜, որպիսի անգթությամբ էին կոտորում նրանց, անհնար է պատմել։ Չէին խնայում վիրավորներին, թրատում էին։ Չէին խնայում գերի հանձնվողներին, թրատում էին։ Բախտորոշ մասնակցություն, արյունոտ մասնակցություն ունի Մանազկերտի ամի-

բայությունը Թոնդրակյան ապստամբությունը ճնշելու և գլխատելու գործում։ Հարյուր տարի առաջ Աբու-Լ-Վարդ ամիրան գերեց և խայտառակամահ արեց Թոնդրակյան առաջնորդ Սմբատ Զարեհավանցուն։ Եվ ահա հարյուր տարի անց նրա հետնորդ ամիրան, իհարկե, հայերի օգնությամբ, վերստին ձեռքերը լվաց Թոնդրակյանների արյունով։ Ծանր է վիճակը, Գրիգոր։ Ջարդելով Թոնդրակյաններին, հակառակորդները գոցեցին Թոնդրակ տանող ճանապարհը և այժմ ապստամբներին հրում են, քշում դեպի հյուսիս, դեպի Ապահունյաց անջրդի անապատները։ Թոնդրակյան զորական ուժերի մնացորդները կռվում են ոչ թե իրենց կյանքի, այլ Թոնդրակում գտնվող իրենց անպաշտպան ընտանիքներին հասնելու և փրկելու համար։ Ահա այս է ողբերգությունը։ Հարկավոր է օգնել նրանց։

— Ասա ինձ, հայր սուրբ, առանց թաքցնելու, ի՞նչն է բերել քեզ այստեղ...

— Ինձ որոնում են, Գրիգոր։ Ցանկանում են ինչ գնով էլ լինի ձեռք գցել։ Ինձ որսալու համար նույնիսկ գլխագին են սահմանել։ Իմ հոգևորական, կճավա ուխտից լինելն, իհարկե, չգիտեն։ Գիտեն Նոր-Սմբատ անունով մի Թոնդրակյանի, որ անբուժելի կորուստներ է պատճառել մանավանդ ամիրայի զորքերին։ Բայց ինձ համար գլխավորն այն է, որ ես Ռշտունյաց և Մոկաց աշխարհներից կարողանամ գտնե մի քանի տասնյակ կռվողներ տանել Ապահունիք։ Մի քանի տասնյակ, ոչ ավելի, հավատա՝ ուժերի հարաբերությունը կփոխվի, քանզի առյուծի նման մարտընչող Թոնդրակյանները ևս ծանր կորուստներ են պատճառել և ամիրայի ոստիկանական, և հայ նախարարական ուժերին։

— Այ թե ի՞նչ լուրերով ես ժամանել դու, հայր սուրբ... Ուրեմն, որտեղ Թոնդրակյաններ, այնտեղ էլ դո՞ւ...

— Այդպես է ստացվում։ Լավ հակաթոնդրակյան ես դու, Գրիգոր, բոլոր գաղտնիքները քո գրպանում։ Հիմար բան ստացվեց։ Հիմա հարցապնդում որ անեն, ի՞նչ պատասխան ես տալու...

— Հերթապահը հավատարիմ մարդ է, վախենալու հարկ չունեմ, ոչ էլ դու ունեցիր... Իմ հոգին ուրիշ ցավ է կրծում։ Ուրի՜շ... Իմ երկդիմի վիճակը, եթե ճիշտ կուզես իմանալ, իմ երկերեսանիությունը։ Խաղում եմ հակաթոնդրակյան, բայց հոգով չգիտեմ թե ում հետ եմ։ Հայհոյում եմ Թոնդրակյաններին, բայց ասում են, որ իմ տաղերով ջուր եմ լցնում նրանց ջրաղացին։ Ջարմանալի հետևողական եմ Թոնդրակյաններին գաղափարական մեղադրանքներ հարուցելու մեջ։ Սակայն ոչ ոք չի հավատում իմ հակաթոնդրակյան լինելուն։ Սա մի այնպիսի տառապանք է, հայր սուրբ, որ իմ հոգին դարձրել է մեղքերի մի անքավելի շտեմարան։ Ամաչում եմ բարեկամներից, ամաչում եմ չարակամներից, ամաչում եմ

ինքս ինձանից և նզովում, և բզկտում ինքս ինձ, ամաչում եմ և երկնչում աստծուց։ Կհասկանա՞ ինձ, կների՞, չգիտեմ, եթե նույնիսկ գթասիրտ ու ներողամիտ լինի իմ նկատմամբ, միևնույն է՝ ինքս ինձ չեմ ների...

Մեկ շաբաթ առաջ, պատարագի պահին, Ստեփանոս եպիսկոպոսը ահավոր լուտանքներ է տեղացել Թոնդրակյանների վրա, չմոռանալով Թոնդրակյանության մեղադրանքով քարկոծել նաև Նարեկի միաբանությանը։ Նոր եմ հասկանում նրա հանկարծակի «հերոսանալը»։ Պարզվում է, որ հակաթոնդրակյանների հաջողությունները արձակել են նրա լեզվի կապերը, գոռոզացրել և լկտիացրել են նրան։

Մինչև լուսաբաց բարեկամները խոնեցին իրենց անձնական և, ավելի շատ, անանձնական հոգսերից, իսկ մութլուսին Մուշեղը անաղմուկ հեռացավ մենաստանից։ Գրիգորը նվիրեց իր բոլոր դրամական կարողություններն ու խնայողությունները՝ Թոնդրակյաններին և նրանց ընտանիքներին օգնելու համար։

***

Ստեփանոս սրբազանը գնալով անգութ ու անտանելի էր դառնում։ Զգոհացավ զնդանելով երեք տարիքավոր շինականներին և գեղջավագին։ Նարեկ էին հասնում նրա սպառնալիքները, անեծքները, հայհոյանքները։ Վերջապես կատարեց իր խոստումը, երևաց նաև ինքը, զորական ջոկատի ուղեկցությամբ։ Երևալուն պես նրան կալմեջ արին Նարեկի շինականները։

— Ո՞ւր են պատանդները, սրբազան, ինչո՞ւ եք առանց դատ ու դատաստանի կարանավորել...

— Իսկ դուք ինչո՞ւ եք առանց դատ ու դատաստանի սպանել Ղազարոս վարդապետին...

— Տուն ուղարկեք անմեղ մարդկանց...

— Մեր ձեռքը հանձնեք մեղավորներին, անմեղներին տուն բերեք...

— Լավ՞ծ բան է առանց մեղքի զնդանել գյուղի ավագին...

— Լավ՞ծ բան է առանց դատի դատաստան տեսնել վարդապետի հետ և սպանել...

Երկխոսությունը սրբազանի և շինականների միջև արդեն հասնում էր գոռգոռոցի, փոխադարձ վիրավորանքների և ոչինչ լավ բան չէր խոստանում։ Կառքի մեջ բազմած կրոնավորը նշան արեց ցրելու գյուղացիներին։ Սրբազանի ունկերին անցանկալի էր լսել, որ մարդիկ, այն էլ շինականները, անհամաձայն են իր ձեռնարկումներին և հանդգնում են այդ մասին խոսել բարձրաձայն։ Եվ սրբազանի վատ տրամադրությունը

փոխանցվեց զորական ջոկատին, որն սկսեց անդիմորեն մտրակել շինականներին, ջանալով նրանց հեռացնել սրբազանի կառքից։ Զորականների չարությունն էլ իր հերթին փոխանցվեց շինականներին, որոնց խնդիրքն ու հարցումները վարձատրվեցին մտրակածեծով։ Շուտով քարերի տարափ տեղաց զինվորների վրա այնպիսի սաստկությամբ, այնպիսի ուժգնությամբ, որ նրանք փախուստի դիմեցին՝ ծեծված ու արյունվիկ։ Սակայն շինականները չառաջացան չարության մեջ։ Սրբազանը, որ վախից կուչ էր եկել կառքի մի անկյունում և ձեռքերով ծածկել գլուխը, չճաշակեց այն դառնությունն ու քարեկարկուտը, որ բաժին էր ընկել զորականներին։ Սրբազանը սարսափած էր։

— Արագ դեպի մենաստան, արա՛գ, արա՛գ...

Սրբազանն ու զորական ջոկատը հաղթահարեցին վտանգը, իսկ իրեն կորցրած սրբազանը հայհոյում էր և սպառնում հուր ու մոխրի վերածել Նարեկը։ Գրիգորն անխոս լսում էր նրան՝ կրծոտելով շրթունքները։ «Այս որքա՞ն է իջել աստծո ծառան իր եպիսկոպոսական բարձունքից։ Ի՞նչ է բարբառում այս արյունկզակ կրոնավորը։ Ո՞ւմ է սպանում, ո՞ւմ է սրահարում չարությունից կուրացած այս հոգևոր առաջնորդը»։

— Հանգստացիր, սրբազան։ Եթե նույնիսկ շինականները անհարգալից են եղել քո և զորաց նկատմամբ, կարելի է բանակցելով, համոզելով փորձել լեզու գտնել նրանց հետ... Հանգստացի՛ր...

— Ի՞նչ ես բարբառում, ի՞նչ է, դու խելագարվել ես, ես բանակցեմ ռամիկների հե՞տ, ես փորձեմ համոզել նրա՞նց... Գուցե դու կառաջարկես, որ նրանց ոտքե՞րն ընկնեմ, մեղքերիս թողությո՞ւն խնդրեմ, գուցե տուգա՞նք վճարեմ զորականներին քարածեծ անելու համար...

— Բայց, սրբազան, ախր, ի՞նչ գործ ունեն այստեղ զորականները...

— Ինչպե՞ս թե ինչ գործ ունեն...

— Այո՛, ի՞նչ գործ ունեն։ Շինականներին այցելող հոգևոր առաջնորդները երբեք չեն ժամանել զորաց ուղեկցությամբ։ Սրբազան, դու զորաց պաշտպանության կարիք չունեիր... Իսկ որտեղ զորական, որտեղ զինվոր, այնտեղ էլ արյուն...

— Դո՛ւ, դո՛ւ, Գրիգոր վարդապետ, դու ինքդ ես այս խռովարարների ոգեշնչը։ Ապահունյաց աշխարհում վերստին հոսում է աստծո նվիրյալների թանկ արյունը։ Թոնդրակյանները նորից հեղում են անմեղ մարդկանց արյունը։ Իսկ այստեղ համերաշխության խռովություն են սարքում, քարերով դիմավորում աշխարհիս հոգևոր առաջնորդին և օրինապահ զորականներին...

— Ապահունյաց աշխարհում վերստին հոսում է աստծո նվիրյալների թանկ արյունը, ասում ես, թա՞նկ, գուցե դա Մանազկերտի ամիրայի մահմեդական զորքի արյո՞ւնն է, որ հոսում է քրիստոնեից արյան փոխարկված, հը՞, գուցե ասե՞ս... Գուցե ասես նաև, թե ինչպես առանց խոսքի գործարքի մեջ մտաք արաբ ամիրայի հետ, Թոնդրակը յուղալի ոսկորի նման նետեցիք նրա բերանը և արաբի ձեռքով այս էլ քանիերորդ անգամ թափում եք հայերի արյունը, լսո՞ւմ ես, սրբազան, պատասխան տալ է հարկավոր, չէ՞ որ դատաստանի օրը կախվելու է նաև քո գլխին...

— Դու որտեղի՞ց գիտես այդ բոլորի մասին, թե հորինո՞ւմ ես, ինչպես քո տաղերը...

— Որտեղից գիտե՞մ, ողջ Հայաստանը գիտի, ի՞նչ է, քեզ հայտնի չէ՞ առածը՝ ասեղը պարկում չես թաքցնի։ Դու որ զորաց ջոկատով մքտնում ես գյուղ, աղմկում, հայհոյում, անիծում, մտրակածեծ անում շինականներին, իմացիր, որ բռնությունը ծնում է բռնություն, ծեծը՝ ծեծ, սպանությունը՝ սպանություն։ Հոգևոր առաջնորդը եթե ապավինում է զենքին ու բռնությանը, նրա տեղը, մեղմ ասած, հոգևոր աշխարհը չէ...

— Իսկ որտե՞ղ է նրա տեղը, բարբառիր...

— Դու նրա տեղը լավ գիտես, սրբազան։ Քո անհեռատես վարմունքով այնպիսի մի անմարսելի վիճակ ես ստեղծել, որ սատանան անգամ գլուխ չի հանի։ Ինչո՞ւ այս խաղաղ շենը դարձրիր քո երդվյալ թշնամին։ Ինչո՞ւ ես բանտարկել անմեղ մարդկանց որպես պատանդների, ինչո՞ւ ես զնդանել գեղջավագին, ինչո՞ւ... Ինչո՞ւ ես դժվարացնում մեր վիճակը, ինչո՞ւ ես թշնամացնում շինականներին միաբանության հետ։ Դրա համա՞ր ես ժամանել Նարեկ։ Է՜հ, սրբազա՛ն, սրբազա՛ն... Թոնդրակի դեմ հաղթանակդ ապահովելուց հետո, առանց պահ իսկ կորցնելու, վերստին շրջվեցիր Նարեկի դեմ։ Քեզ երևի հարկավոր էր կրկնակի հաղթանակ՝ Թոնդրակի և հակաթոնդրակյանների դեմ՝ միաժամանակ... Ի՞նչն է առաքելությանդ նպատակը. նորի՞ց բորբոքել չհանդարտվող կրքերը։ Հիմա կասես՝ չէ։ Այդ դեպքում ինչո՞ւ ես եկել զինավառ, զորաց ջոկատով։ Եկել ես, որ միմյանց սե՞ր խոստովանեք՝ սրերի ու նիզակների օգնությամբ։ Ի սեր աստծո՞, սրբազան, մի՛ խառնիր մարդկային հարաբերությունները։ Մի՛ բորբոքիր այն գործը, ուր խաղաթղթի վրա դրված է ոչ թե աստվածային ու տիրունական հեղինակությունը, այլ քո հվանդոտ ինքնասիրությունը։ Դա մարդկանց հետ հաշվեհարդար տեսնելու ամենանողկալի ձևն է։ Քեզ համար, սրբազան, դժվար կլինի այստեղից անփորձանք հեռանալը, եթե շինականներին չխոստանաս տուն վերադարձնել համագյուղացիներին։ Դժվար կլինի նաև միաբանությանս համար հետայսու շինականներին հաղորդակցվելը։ Խնդիրքս նորից եմ կրկնում.

գյուղը հուզված է, նրան վերստին անհանգստացնելը հղի է ապստամբության բռնկման վտանգով։ Ես հավատացած եմ, սրբազան, որ դու ողջախոհություն և իմաստություն կունենաս և զորաց ուժը չես համարի հարցեր լուծելու և քո ապահովության համար վստահելի վահան ու կխուսափես Նարեկը ապստամբության օջախի վերածելուց...

— Ուրեմն, Գրիգոր վարդապետ, դու առաջարկում ես, որ այդ անաստված շինականներից ես ներո՞ւմն խնդրեմ, ազատեմ պատանդներին, որ նրանք անպատիժ կերպով շարունակեն իրենց սև գործը, որ նստեն հոգևոր առաջնորդների գլխի՞ն... Ա՞յդ ես ցանկանում...

— Իմ առաջարկությունը, սրբազա՛ն, ես տրամաբանում եմ քիչ այլ կերպ. շենը հուզված է, հարկավոր է, որ բանականությունը լինի մեր առաջնորդը նման հանգամանքներում, հարկավոր է հանգստությամբ, խելամտությամբ մարել կրքերը, թույլ չտալ շինականին ապստամբելու։ Չէ՞ որ շղթայված ու կալանված պատանդները, նախ, անմեղ մարդիկ են և նրանց հետ վարվել են անիրավացի, անօրեն կերպով։ Հետո, գեղջավագն առանց որևէ մեղքի և առանց աշխարհիկ տերերի գիտության նետված է բանտ։ Այս ամենը կարծես քիչ էր, այսօր էլ զորական ջոկատը քո հրամանով մտրակածեծ արեց շինականներին։ Ասա, սրբազան, համբերության տեղ այլևս մնա՞ց... եթե քո կարծիքով դանակը չի հասել ոսկորին, ապա իմ կարծիքով վաղուց է հասել։ Համբերության գավաթը լցվել է ափեափ և թափվում է։ Զգուշանալ է հարկավոր։ Կրակի հետ խաղալը հղի է այրվելու վտանգով։ Իհարկե, եթե շճանաչեի քեզ և քո սահմաններ չճանաչող ինքնասիրությունը, պետք է խորհուրդ տայի քեզ՝ դադարեցնել հոգևոր առաջնորդի իրավունքների շարաշահումն ու նահանջել, այո՛, այո՛, խելամտորեն նահանջել, ճանաչել շինականի գոնե փոքրիկ իրավունքները...

— Երբեք, ոչ մի դեպքում։ Քեզ նմանները պատճառ դարձան ազգիս դժբախտության՝ Թոնդրակյանների ապօրինի ծննդին։ Եթե շարությունը խեղդվեր իր իսկ բնում, աշխարհս այսօր նման դժվար դրության մեջ չէր լինի։ Նահանջել, երբ հարձակվողը շինականն է, ռամիկը՝ խայտառակություն է, ավելի մեծ խայտառակություն, քան մահվան ապավինելը։ Երբեք, Գրիգոր վարդապետ...

— Չվիճենք, միմյանց չանպատվենք, սրբազան։ Եթե դու գտնում ես, որ ինձ նմաններն են մեղավոր Թոնդրակեցիների ծննդի համար (թեև նրանք ծնվել են ինձանից հարյուր տարի առաջ), ապա պատասխանիր, իսկ ո՞վ է մեղավոր այն հարյուրավոր մարդկանց թափվող արյան համար, որ քո մեղքով և քո օրհնությամբ ոթում են ամիրայի զորքերը։ Եթե իմանա հայ աշխարհը, թե ինչպես զրպարտվեց Թոնդրակը և ինչպես տրվեց

արաբներին հոշոտելու, ես չգիտեմ, թե ինչ պատասխան ես տալու քո ժողովրդին և քո աստծուն։ Մտածիր, սրբազան, քանի ժամանակ ունես։

— Ո՞վ կարող է ապացուցել, որ ես եմ կազմակերպել այդ ամենը...

— Այդ ամենը ապացուցման կարիք չունի, սրբազան։ Բոլորը գիտեն այստեղ, շուտով կիմանա նաև ողջ հայ աշխարհը։ Հիմա, այս պահին Թոնդրակեցիները նահանջում են Ապահունյաց անապատները և նրանց հետամուտ են ամիրայի զորքերը։ Իսկ այն լուռ գործարքը, սրբազան, որի հեղինակն ես և իրագործողը, հայտնի է այնպիսի մարդկանց, որոնց դու ոչ կարող ես ձերբակալել և ոչ էլ սուսուփուս վերացնել... Նրանք կհաստատեն, երբ գա պահը։

Սրբազանի դեմքին, այնուամենայնիվ, շփոթախառն վախ երևաց։ Մարտնչող շարությունը սկսեց ենթարկվել վախի իշխանությանը։ Նա զգում էր Գրիգորի իրավացիությունը։ Գիտեր նաև, որ Նարեկի միաբանությունում ատում են իրեն, որ այստեղ գնալով պակասում և շարքից դուրս են գալիս իր լրտեսները։ Սրբազանը չգիտեր, թե որտե՞ղ է մեծ գիտնական Անանիան, սակայն գիտեր, որ շրջապատի մարդիկ գիտեն, որ նրա անհայտանալու մեղքն իրենն է։ Եվ ամենից առաջ Նարեկի հզոր միաբանությունը հենց իրեն է համարում բոլոր չար արարքների հեղինակը։ Մի խոսքով, Նարեկի միաբանությունում նա իրեն զգում էր ճնշված ու միայնակ, փշերի վրա, թևաթափ և հեղինակազրկված։ Չէ, իր վիճակը բանի նման չէ։ Նարեկ գյուղը հուզված է, հակված անկարգության։ Մեղավորն ինքն է, իրեն են համարում։ Նարեկի միաբանությունը՝ թշնամի։ Մեղավորն իրեն են համարում։ Զորական ուժ ցույց տվեց և ստացավ կրկնակի պատասխան։ Մեղավորն իրեն են համարում։ Ի՞նչ անել։ Զարությունը միշտ չէ, որ սրտոտ է լինում։ Այս պահին սրբազանը հակված էր նահանջելու։ Եվ եթե չամաչեր, եթե ինքնասիրությունը հիվանդ չլիներ, կնահանջեր։ Բայց վախեցած էր, ստիպված էր նահանջելու։ Բայց ինչպե՞ս... Վեր կենալ և հայտարարե՞լ, որ պատանդներին կազատի, որ տուն կվերադարձնի նաև գեղջավագին։ Ինչպե՞ս նվաստանա շինականների առջև։ Սակայն... սակայն հարկավոր է նաև բարեհաջող հասնել պատրիարքարան, ողջ դուրս պրծնել այս անիծյալ Նարեկից։ «Համա թե վախեցել եմ։ Եվ ումի՞ց, ռամիկներից։ Բայց այսօր նրանցից վախենում է ամբողջ հայ եկեղեցին և հոգևորականությունը։ Խռովության բոցերը տարածվել են նաև Հայքից դուրս։ Չէ՛, չէ՛, արժե վախենալ շինականից և պետք է վախենալ նրանից։ Վախի աչքերը մեծ են։ Բանավիճելն իսկ վտանգավոր է։ Այս մեծանուն տաղերգուն ամեն բան գիտե, կռահում է։ Եթե վաղը հայտարարի, ժողովրդին և հոգևոր աշխարհին հասցնի իր իմացածը, խաչ կհանեն ինձ, խայտառակամահ կանեն, կարժանանամ նույնիսկ սե-

ունդների նզովքին։ Հարկավոր է, պետք է նահանջել և հետո վերստին որոնել հարմար առիթը հարձակվելու համար։ Լավ նահանջը վատ հարձակումից ավելի օգտակար է։ Այժմ նահանջելը ճանապարհն է կենաց։ Այլ ելք չկա»։

— Իսկ ի՞նչ ես առաջարկում, որ անեմ,— դիմեց կոտրված ձայնով։

— Խոստացիր շինականներին, որ կազատես պատանդներին՝ նաև գեղջավագին և կատարիր անպայման, կատարիր խոստումդ, ուրիշ ոչինչ...

***

Սրբազանը խոստացավ նարեկցի շինականներին՝ ազատել պատանդներին և առանց ընդհարման ու առանց լեզու թաթախելու շինականների հետ, սուսուփուս հեռացավ Նարեկից։ Երբ նրա կառքը հեռացավ միաբանությունից ու անհայտացավ տեսողությունից, Գրիգորն ազատ շունչ քաշեց։ Նրա հոգսն ու մտածողությունը այդ օրերին այնքան նարեկցիների ու եպիսկոպոսի հարաբերությունների բարելավման և կարգավորման հարցը չէր, որքան Թոնդրակյանների տագնապալի, համարյա անհուսալի վիճակը, որտեղից լուրերի էր սպասում։ Լուրեր չկային, լրաբերները չէին երևում։ Թեթևակի լսել էր, որ Թոնդրակեցիներից ինչ-որ մեկը կարողացել է մի քանի տասնյակ մարդկանցից ջոկատ կազմել և աճապարում է օգնության՝ նահանջող Թոնդրակեցիներին։ Դժվար չէ կռահել, որ խոսքը Մուշեղի մասին է։ Կկարողանա՞ն փրկել նահանջողներին, կկարողանա՞ն պահպանել մարդկանց կյանքը, որ նրանք տեր ու սատար դառնան իրենց ընտանիքներին։ Գրիգորը երկյուղում էր հակաԹոնդրակյանների նենգությունից։ Չհարձակվե՞ն հանկարծ անպաշտպան համայնքի վրա, չսրահարեն կանանց ու երեխաներին։ Գրիգորը մարտադաշտի կողմերն էր ուղարկել սարկավագ օծված Հակոբին և սպասում էր նրա լուրերին։ Սակայն առայժմ հեռուները լռում էին։

Բավական ուշացումով արթնացան ճամփաները։ Հակոբը վերադարձավ։ Ճանապարհին անհայտացել էր լրաբեր-ուղեկիցը։ Որոնել էր Հակոբը նրան և ի վերջո գտել դիակը։ Պարզվել էր, որ դանակել էին կողոպտելու նպատակով։ Ինչևիցե։ Լուրերն այնքան հուզմունք ու վիշտ պատճառեցին Գրիգորին, որ նա երկու-երեք օր փակվեց իր խցում՝ անկարող գնահատել իրերի վիճակը, իր հոգեվիճակը։ Մերթ հառաչում էր կորստյան ցավից, քանզի սպանվել էր Մուշեղը, որի նկատմամբ տածում էր հարգանք և պատկառում էր նրանից, այլև սիրում էր նրան՝ մարդկային լուսավոր նկարագրի համար։ Եվ նրա հանդեպ ուներ մեղավորության զգացում։ ՀակաԹոնդրակյան իր «Թուղթ» բանավեճը այժմ շրջվել էր Գրիգորի դեմ և կրծում ու ցավեցնում էր նրա հոգին։ Մերթ վշտի թանձր ամպերը ասես ցրվում էին և ցոլում էր արևը։ Նահանջող Թոնդրակեցիներին օգնության շտապող Մուշեղը իր հավաքագրած մարդկանցով կարողացել էր միանալ Թոնդրակեցիներին և, բռունցքվելով նրանց հետ, այնպիսի խորտակիչ հարված հասցրել ամիրայի զորքերին, որ սրանք ցույց էին տվել իրենց թիկունքն ու ճողոպրել Մանազկերտ, առանց փորձելու հակահարձակմամբ վերադարձնելու կորցրած հաջողությունը։ Թոնդրակյանները հետապնդել էին թշնամուն մինչև Թոնդրակի սահմանները և, հասնելով իրենց համայնքի մատույցներին, քաշվել իրենց բույնը, իրենց տուն ու տեղին, իրենց ամենօրյա աշխատանքին, կորուստները սգալուն և վերքերը բուժելուն։ Հակոբը մանրամասն տեղեկացրեց այդ մարտում Մուշեղի կատարած քաջագործության, նրա մարտավարական տաղանդի մասին։ Ինչպես ասում են՝ Գրիգորի մի աչքում արցունք էր, մյուսում՝ ծիծաղ։ Հակոբն իր պատմությունը լրացրեց այնպիսի մանրամասներով, որ Գրիգորը նորից ու կրկին տեսավ հակաԹոնդրակյան ճակատի հոգևոր առաջնորդների նենգ, ստոր և անաստված գործելակերպը։ Նրանք կարողացել են կաշառել մի ստահակ Թոնդրակեցու և նրա ձեռքով մահվան մատնել Մուշեղին։ Ոչինչ չկասկածող Մուշեղին դավաճանը նետահարել է թիկունքից, մի քանի քայլ հեռավորությունից։ Նրան որսացել են անմիջապես, և նա խոստովանել է, որ հսկայական գումար են խոստացել իրեն «այդ ածդահա անաստվածին» սպանելու համար։ Գրիգորը քանի օր շարունակ ասես շարժվում էր երազի մեջ։ Չգիտեր արածը, չգիտեր նաև անելիքը։ «Աստծո ձեռքով բացվող յուրաքանչյուր օր բերում է մարդկային հոգու, մարդկային արարքի նորանոր անմարդկային փաստեր։ Ինչո՞ւ, ինչո՞ւ է այսքան իջնում, փչանում մարդ արարածը։ Ի՞նչն է նրա բարոյական անկման, բարոյական կործանման պատճառը։ Ո՞ւր է մխտում մարդը՝ աստվածային բարձունքնե՞րը, թե՞ սատանեական ոգեկործան խորխորատները։ Դեպի կատարելությո՞ւն, որ մարդկային ճիշտ ճանապարհն է, թե՞ դեպի անկում, որ արժանանա աստծո պատժին։ Դեպի Քրիստոսի անկաշառ մաքրությո՞ւնը, թե դեպի քրիստոսավաճառ Հուդայի մատնությունը։ Ինչո՞ւ է մարդ արարածին այդքան հրապուրում մեղքը, մեղք գործելու ցանկությունը։ Ի՞նչ է կատարվում մարդու խաթարված հոգում մեղք գործելիս։ Մեղսագործությունը մարդկային հոգուն չառնչվող սխա՞լ է, թե մարդու հոգուց, էությունից բխող արարք։ Ո՞վ կգտնի այս հարցերի պատասխանները։ Որտե՞ղ է արդարությունը, ո՞ւր է չքվել։ Հայր մեր, ինչո՞ւ ես փակել աչքերդ, աշխարհի մեղքերը չտեսնելո՞ւ, ինչո՞ւ ես գոցել ականջներդ, մարդկային հառաչանքները չլսելո՞ւ հա-

մար։ Ինչո՞ւ ես խուսափում աշխարհի գործերին և հոգսերին խառնվելուց։ Մարդը գլորվում է դեպի արյունարբու գազանների ոլորտը։ Ինչո՞ւ ես թողնում շնանալու, ինչո՞ւ ես թողնում գայլանալու, ինչո՞ւ ես թողնում աղվեսանալու, մի՛ թողնի, խնդրո՛ւմ եմ... Զորավիգ դարձիր մարդուն և օգնիր նրա մարդանալուն...

— Որտե՞ղ է ամփոփված վարդապետ Մուշեղի աճյունը...

Հակոբը նայում էր Գրիգորի շարժուն դիմագծերին։ Դեմքն անընդհատ փոփոխվում էր, և դիմախաղը մերկացնում, բացում էր Գրիգորի հոգին։ «Ուսուցչապետս չի կարողանում թաքցնել հոգու վայրիվերումները։ Ինչո՞վ և ինչպե՞ս կարելի է փոքր-ինչ մեղմացնել նրա վիշտը»։

— Որտե՞ղ է ամփոփված վարդապետ Մուշեղի աճյունը, Հակո՛բ...

— Հայր սուրբ, մխիթարվիր այն սխրանքով, որ կատարեց հայր Մուշեղը, փրկելով Թոնդրակի համայնքը...

«Այս տղան ևս իր հոգու ներսն է նայում։ Ունկը ներաշխարհի ձայներին է ուղղված։ Մուշեղի մահը նրան կտրել է աշխարհից և խարսխել վշտին։ Չի պատասխանում հարցիս, ուրեմն, հարցը չի հասել լսելիքին»։

— Հակոբ, լսիր ինձ, ասա, որտե՞ղ է ամփոփված Մուշեղի աճյունը...

Հակոբն ասես արթնացավ քնից։

— Ես նրա դիակը գողացա և շինականների սայլով բերի մեր աշխարհը։ Ամփոփել եմ այստեղից ոչ հեռու՝ մի գեղեցիկ վայրում, լճափին...

— Սայլապանը գիտե՞ր նրա ով լինելը...

— Ոչ, հայր սուրբ, բայց նրա Թոնդրակյան լինելը պետք է որ իմանար։

— Նարեկից չէ՞ր, մերոնցից...

— Ոչ, հայր սուրբ, սայլապանը Բզնունյաց աշխարհի Թուխ գյուղից էր... Մի քիչ էլ կարծես Թոնդրակյան էր... Գուցեև իսկական Թոնդրակյան էր։ Գուցեև ինձնից էր երկնչում։ Ցավում էր Թոնդրակեցիների համար, ցավը թաքցնել չէր կարողանում։ Հակաթոնդրակյաններին էլ երբեք չհայհոյեց։ Մի խոսքով...

— Քո ով լինելը իմացա՞վ, թե ոչ...

— Ոչ, ես գեղջուկի շորերով էի։ Ասացի, որ Մանակերտից եմ...

Ասես դանակ զարկին սրտին։ Եվ սիրտը ցավեց։ Ցավից լացեց, տընքաց սիրտը։ Ամուր սեղմեց շրթունքները։ Ցանկանում էր պատնեշել, խեղդել շուրթերին հասնող հառաչը։ Թվում էր, եթե բացվեին շրթունքները, ցավը գազանի ոռնոցով դուրս էր նետվելու սրտից։ Է՜հ, Հակո՛բ, Հակո՛բ, ինչո՞ւ տվիր Մանակերտի անունը։ Հասկացա՞ր արդյոք, որ դանակեցիր քո ուսուցչին։ Ախր, դու գիտեի՞ր, գիտեի՞ր, որ այնտեղ Դրախտիկն է, որ

Մանակերտը քո ուսուցչի կորած դրախտն է, որից նա վռնդված է, որի անունն անգամ արթնացնում է հոգին, ցավեցնում մտքերը։ Մանակե՞րտը... Այո՛, կար և հիմա էլ կա այդ գյուղը, բայց իր համար արգելված վայր է։ Ամենասիրելի վայրը դարձել է ամենաանմատույց, ամենաարգելված վայրը, ասես սատանաների բնակատեղի... Նարեկի ամենամոտ շենը դարձել է ամենահեռավորը։ Եվ իր կյանքը կբավականացնի՞ այնտեղ հասնելու համար։ Ոստան գնալիս էլ չհամարձակվեց մտնել Մանակերտ...

Հակոբին թվաց, թե Գրիգորը չի լսել իրեն։

— Ես սայլապանին ասացի, որ Մանակերտից եմ։ Ճի՞շտ եմ ասել, ուսուցիչ...

— Ճիշտ ես ասել, Հակոբ, շատ ճիշտ... Արի հիմա նստենք ու մտածենք, թե ի՞նչ հնարքով կարելի է Մուշեղի աճյունն անաղմուկ, սուսուփուս տեղափոխել Կճավա միաբանություն և այնտեղ հանձնել հողին։ Դու գիտես, լավ գիտես, որ նա Կճավա ուխտից էր։ Եվ հարկ է, որ նրա աճյունն այնտեղ ամփոփվի։ Դու կարո՞ղ ես հանձն առնել նման դժվարին մի գործ և կատարել այնպես, որ մեր շարակամները, նույնիսկ բարեկամները ոչինչ չիմանան։ Կարծում եմ, դու ինձ հասկանում ես, Հակոբ։

— Իհարկե, ուսուցիչ, ես կարող եմ դա անել։ Նույնիսկ պայմանավորվել եմ այն սայլապանի հետ, ներիր ինձ, հայր սուրբ, առանց քո թույլտվությունը նախապես վերցնելու, ասել եմ, որ մոտ օրերից մեկում հարկ կլինի Մուշեղ վարդապետի աճյունը տեղափոխել Կճավա մենաստան...

— Ապրես, Հակոբ, հիմա ասա, ի՞նչ է հարկավոր աստվածահաճո այդ գործի համար...

— Դրամ, ուսուցիչ, դրամ է հարկավոր...

— Շատ չեմ խոստանում, Հակոբ, մի քանի դրամ ունեմ, կտամ...

Նույն օրը երեկոյան Հակոբը դուրս եկավ Նարեկի մենաստանից և բռնեց Բզնունյաց աշխարհի ճանապարհը։

Ցավում էր Գրիգորը Մուշեղի և լալիս Դրախտիկի համար։ Ճխում էր փրկված Թոնդրակի համար, անիծում հակաթոնդրակյաններին և նզովում նրանց արյունոտ բախումները։ Եվ սիրտը գութ ու ներողամտություն ուներ բոլորի համար։ Աշխարհի ցավերը տեղավորելու տարածք ուներ սիրտը, միտքը, խիղճը մարդկային արատները պարսավելու, աստծուն սթափության կոչելու և նրա ուշադրությունը կործանվող կատարելության փրկությանը բևեռելու համար։

— Աստված, օգնիր, փրկիր կործանվող մարդուն, և փրկելով մարդուն՝ փրկիր գեղեցկությունն աշխարհիս...

***

Թոնդրակ համայնքի դեմ կազմակերպված արշավանք-դավադրությունը սպասված արդյունքը չտվեց։ Ավելին՝ ձախողվեց։ Արծրունյաց աշխարհի լայնքով ու երկայնքով մեկ տարածվեց Մանազկերտի ամիրայության հետևողական հակաթոնդրակյան գործողությունների մասին լուրը, որն ալեկոծում էր մարդկանց և զարմացնում հայ աշխարհը։

— Լինելո՞ւ բան է, որ Քրիստոսի և Մուհամմեդի վարդապետությունները համերաշխեն։ Եթե դա հնարավոր է թոնդրակեցիների դեմ, ուրեմն, պայքարը կրոնական բնույթ չունի, այլ է նրա իսկական միտումը, իսկական խորհուրդը։ Նրանք՝ և՛ հայ եկեղեցին, և՛ ամիրան, ապստամբներից պաշտպանում են իրենց հարստությունն ու ունեցվածքը։ Չէ՞ որ թոնդրակեցիները եկեղեցու և վանական անբավ ունեցվածքի հակառակորդներն են նաև։ Չէ՞ որ, ուր հաղթում են ապստամբները, խլում են վանական և եկեղեցական ինչքը և բաժանում թոնդրակեցիների և շինականների միջև...

— Չէ, չէ, թոնդրակեցիների պայքարը եկեղեցու դեմ է, ոչ թե նրա ունեցվածքի...

— Հապա ինչո՞ւ է հայ եկեղեցուն օգնության ձեռք մեկնում արաբ ամիրան, թեև կրոնները ներհակ են, սակայն նույնն են... Թուրք չտալ ապստամբ շինականներին դատարկելու իրենց լիքը ամբարները...

— Է՛, եղա՞վ...

— Ինչո՞ւ չեղավ... Կարծում ես արաբ ամիրան իր Մուհամմեդին կամ նրա վարդապետությո՞ւնն է պաշտպանում թոնդրակեցիներից, որոնք ոչ մի առնչություն, ոչ մի գործ չունեն մահմեդականության հետ...

— Իսկ ամիրայի ամբարների նկատմամբ, ի՞նչ՝ է՝ պահանջներ ունե՞ն...

— Այսօր չունեն, վաղը կունենան։ Այդ է պատճառը, որ ամիրան հալածում է թոնդրակեցիներին։ Իսկ վիճողները միաբաններն են, ովքեր ցանկանում են ճիշտ հասկանալ, ճիշտ ըմբռնել ներհակ կրոնների այս ժամանակավոր անպաշտոն, անկնիք դաշինքը։ Ովքեր լսելով այս մասին, խորհում են, փորձում պարզել երևույթի ներքին խորհուրդը։ Հարյուր տարի է Հայաստան աշխարհում ծխում է Թոնդրակ լեռը։ Հարյուր տարուց ավելի է թոնդրակյան վարդապետությունը եկեղեցուն պարտադրում է իր կրոնա-դավանաբանական հավատամքը, ուսմունքը, որը ոչ այլ ինչ է, քան եկեղեցու ամբողջ նվիրապետության, նրա խորհուրդների, արարողությունների և զանազան ծեսերի մերժում։ Իսկ աստծո սպասավորները տակավին չեն հասկանում այդ ուսմունքի էությունը կամ չհասկացող են

ձևանում։ Մի խոսքով, Թոնդրակ համայնքի դեմ սանձազերծված դավադրությունը հաջողություն չունեցավ և ավելի վարկաբեկ արեց հայ հոգևորականության հետադիմական գործունեությունը։

Հեղինակազրկող նշանակություն ունեցավ Նարեկ գյուղը մարդասպանության մեջ մեղադրելու փաստը, որի հեղինակը նույն Ստեփանոս եպիսկոպոսն էր։ Նա, ի վերջո, ճարահատյալ, հոգին ի բուռ, արձակեց գեղջավագին և երեք պատանդներին, շահելով գյուղի արհամարհանքն ու չթաքնված թշնամությունը։ Գեղջավագը կալանքից ազատվեց ոչ թե եպիսկոպոսի կամքով ու կամեցողությամբ, այլ Նարեկ գյուղի շինականները, տեսնելով, որ գեղջավագը անմեղ զոհ է դառնում Ղազարոս վարդապետի սպանության համար, իրենք հորդորեցին սպանողներին ներկայանալ դատական իշխանություններին։ Եվ նրանք ներկայացան։ «Մեղավորները» մինչև դատը ենթարկվեցին այնպիսի դաժան ծեծի, որ նրանցից առավել տարեցը՝ հարսի սկեսրայրը չդիմացավ ու հենց զնդանում կնքեց իր մահկանացուն։ Վախենալով կատարվածից, հոգևոր դատարանը մյուսներին ազատ արձակեց և փակեց շնացող Ղազարոս վարդապետի սպանության գործը։

... Գրիգորի հոգին լիքն էր արարման անհանգստացնող, թևավորող մոտիկությունից։ Իր տաղերը երկնելիս նա ապրել էր ոգեշունչ, վեհացնող պահեր, սակայն այս անգամ արարման երկունքին նախորդող պահերը հիշեցնում էին փոթորկին նախորդող պահերը։ Անհանգիստ էր։ Սպասվող հոգևոր փոթորկի, հրաբուխի առջև մերկացած ու բաց էր հոգին։ Ոչ մի երկյուղ և երկնչում։ Նրա մեծ էությունը թռչում էր սպասվող հողմերին, փոթորկին ու ամպրոպներին ընդառաջ, տենչալով տիեզերական բախումների, կայծակների բարձր լարման և կուրացնող բռնկումների, հոգին կործանող և փրկող ալեբախումների։ Հոգին՝ ասպարեզ իրարամերժ, իրար հոշոտող տրամադրությունների, մեծ և փոքր մեղքերի զղջման, ողբերգությունների և դառնակսկիծ հառաչանքների մի բաց մատյան էր, որ ինքնամերկացման, ինքնաբզկտման, ինքնամարտության միջոցով ձգտում էր ինքնամաքրման, կատարելության։ Ցանկանում էր մոնչալ տիեզերքն ի վեր, ի վեր աստծուն, որոտալ աշխարհի, մարդու ահավոր մեղքերի, անփարատելի ցավերի, անբալասանելի ախտերի, անբուժելի հիվանդությունների, նաև գոյության և չգոյության, անարատության և անառակության, ախտի ու մաքրության, լույսի ու ստվերի, անմեղի և մեղավորի և զանազան վայրիվերումների, մարտնչող ներհակությունների մասին, որ բնակվում են հոգիներում մարդկանց և գործողությունների մեջ։ Ցանկանում էր հիշեցնել, ապա խնդրել, ապա աղերսել աստծո բարեհաճությունը մարդկանց հոգիները մեղքերից մաքրելու հա-

մար, իսկ եթե ընդիմանար աղերսին, ապա պահանջել, բանավիճել, շվախենալով հանդգնությունից, չերկնչելով մեղք գործելուց, զի աստված մեկն է, բայց հազարստեղծ, եզակի, սակայն ամենուր, անմահ, երբ մահկանացու է մարդը, հավերժական, երբ անցողիկ է կյանքը, ամենազոր, երբ թույլ ու անզոր է մարդը, մաքուր, երբ մարդը խարխափում և տառապում է մեղքերի մեջ։ Հոգին ընդվզում էր աշխարհի կատարելության և մարդու անկատարության, աշխարհի անթերիության և մարդու թերությունների, աշխարհի ներդաշնակության և մարդու այլանդակությունների, աշխարհի գեղեցկության և մարդու խաթարվածության մասին։ Եվ տառապում էր, քանզի վստահ էր, որ աստծո գլուխգործոցը մարդն է, աշխարհի մեծագույն գեղեցկությունը մարդն է, տերը երկրի և աստծո տեղապահը երկրում։ Եվ հուզմունքից սիրտը ջարդում էր կրծքավանդակը. «Ես կգրեմ գիրքն իմ, մատյանն իմ ողբերգության, իմ հոգու սուրբ գիրքը։ Ես հյուր կկանչեմ երկնային տիրոջն ու տիրոջ իրավունքով կհյուրասիրեմ ոգեղեն և հոգեղեն այնպիսի սնունդով, որ տերը գոհ կմնա իր ծառայից։ Զարմանալի հոգեվիճակ է։ Ասես իմ սրտում կուտակվել, ծովացել են գարնանային ելման ջրերը և ուր որ է քանդելու և փչացնելու են իրենց ճամփան խոչընդոտող հոգեկան բոլոր պատնեշներն ու պատվարները, և արարման խելագար հեղեղը նետվելու է մագաղաթի անբասիր սպիտակության վրա և վերածելու է հրաշագործ մատյան ողբերգության.

... եթե ծովերը փոխվեն թանաքի,
Բազմասպարեզ ընդարձակությամբ դաշտերը՝ թղթի,
Անտառները՝ գրիչների, չեն կարող գրանցել բանաստեղծի
ողջ ասելիքը...

Աստվա՜ծ իմ, էությունն իմ լեցուն է քեզանով, ես քեզ ասելիք ունեմ և ասուլիսն իմ քեզ հետ պետք է լինի դեմ-դիմաց, չմիջնորդված անսուրբ մարդկանց կողմից, որ իմ հոգու պատկերը քեզ ներկայանա մաքուր վիճակով ու դու ճանաչես քո մեղավոր ծառայի հոգու և սրտի բոլոր ալեկոծումները, ականջալուր լինես հառաչանքներիս, որ բխում են սրտիս խորքերից...»

Գրիգորը խաչակնքեց։ Ձեռքը երկարեց դեպի մագաղաթների կապուկը և վերցրեց առաջին թուղթը։ Փետուրը թաթախեց մելանի մեջ և բարակ ճռռոցով խոսեց գրիչը՝ անվանաթերթի վրա. «Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության և էջն առաջին. Բան Ա, Ի խորոց սրտի խոսք աստծո հետ։ Եվ շառաչեց արգելք ու պատնեշ չճանաչող հանճարացոլ խայտանքներով սրտի հեղեղը։ Թեև հեղեղի սաստկություն ուներ, բայց հեղեղ չէր սովորական։ Մաքրամաքուր էր և ավազի ու տիղմի տեղակ թանկագին

քարեր ու մարգարիտներ էր շարում մագաղաթին։ Արարումն սկսված էր։ Աշխարհն աղմկում էր հոգու մեջ։ Եվ այլևս աչքերը գոց էին աշխարհի պատկերներին և ունկերը փակ աշխարհի ձայներին։ Աչքերը նայում էին ներս՝ հոգուն։ Ունկերն ունկնդիր էին հոգու ձայներին։ Մենակ էր՝ աստծո հետ։ Աստվածացման պահ էր, որ տևելու էր տարիներ։ Եթե այդ պահին հարցնեին նրան՝ ո՞ւմ հետ ես, Գրիգոր Նարեկացի։ Կասեր՝ աստծո։ Եվ չէր ստի, չէր խաբի։ Աստծո հետ էր, ավելի ճիշտ, աստվածացել էր ինքը։ Էլ ավելի ճիշտ՝ իր մեջ տեսել էր աստծուն, իսկ աստծո մեջ՝ իրեն։ Եվ այնքան զորեղ էր արարման բռնկումը, որ խառնել էր իր հոգեղեն էությունն աստծուն։ Այդ պահին, միայն այդ պահին էր հանդգնել լինել աստծո հետ և խոսք խոսել նրա հետ։

... Քամու թեթև շրշյունից երերում էր մոմի կրակն լեզուն։ Մոմն սպառում էր իրեն։ Խուցի նեղ լուսամուտից կապտավուն շողերը ճգնում էին լույսով լցնել խուցի կիսախավարը և դիպչում էին մոմի ուժասպառ դիմադրությանը։ Մոմը երերալով սպառվում էր, և լույսն արեգական նվաճում էր խուցի մութ անկյունները, իսկ մութի ծվենները չքվում էին, լուծվում և անէանում։ Գրիգորը քնել էր, գլուխը սեղանին և աչը՝ մագաղաթի կիսատ էջին։ Հոգնությունը ամուր փակել էր նրա կոպերը, և հոգնությունը փոխարինվում էր հանգստությամբ։ Ասում են՝ ամենաթարմացնող քունը աներազ քունն է։ Սակայն տաղերգուն քնի մեջ ժպտում էր, ուրեմն, քնին ընկերակցում էին սրտամոտ երազները։ Վերջապես, դրժկամորեն, դանդաղելով մութը ծլկեց խուցից, և արևն իր առաջին շողերը նետեց լուսամուտից ներս ու քնքշությամբ փարեց Գրիգորին։ Արևի գրգվանքը տաք էր և արթնացրեց տաղերգուին։ Բացեց աչքերը և ձեռքն անմիջապես մեկնեց թղթերին։ Աչքի էր անցկացնում գիշերային տքնանքը։ Նրա դեմքի ժպիտը փոխվեց զարմանքի։

— Մի՞թե ես եմ գրել,— ցածրաձայն խոսեց նա,— մի՞թե...

Հետո վերցնելով մագաղաթը, պահեց արեգակի լույսին.

— Շնորհակալ եմ, տե՛ր, դու այսօր հանճարիդ լույսով գուրգուրեցիր ինձ։ Մատյանն իմ դեռ չկերտված, դեռ լինելության մեջ հուշում է, որ աստված ինձ հետ է, և նրա օգնությամբ ես հաղթահարել եմ դեպի աստված ձգվող ճանապարհի առաջին աստիճանները...

***

Դռների առջև արձանացել էր Հակոբը...

— Դո՞ւ ես, Հակոբ, մտիր, զավակս...

— Ինչ պատվիրել էիր, ուսուցիչ, կատարեցի։ Ճանապարհին մտա

նաև մեր հարևան Մանակերտ գյուղը։—«Ախ, այդ Մանակերտը...», նորից ճմլվեց Գրիգորի սիրտը։—Հյուրընկալվեցի տանուտեր Սահակին։—«Այս արդեն կայծակի շանթ էր սրտիս, ինչե՞ր է պատմում այս տղան։»—Լավ մարդիկ էին։ Տանուտեր Սահակը շատ է ծերացել, հազիվ է քայլում։— Հակոբը սկսեց կմկմալ,— հետո իմացա, որ ծանր վիշտ է տարել... Բայց այդ մասին գուցե պետք չէր խոսել...— Հակոբը ցանկացավ ավարտել մտքինը։

— Ի՞նչ վիշտ, ինչո՞ւ այդ մասին չպետք է խոսել,— ճչաց Գրիգորը։— Մանրամասնիր բերածդ գո՞ւյժը ասեմ, թե լուրը...

— Գուցե հարկավոր չէ, հայր սուրբ,— Հակոբն արդեն զղջացել էր և չգիտեր ասելիքը։

— Ասա ինձ, Հակոբ, ի՞նչ է պատահել Դրախտիկին։ Լսո՞ւմ ես, էլ մի ծամծմիր, մի փորձիր կոծկել պատահածը...

«Անմիջապես գլխի ընկավ, հիմա էլ թաքցնելն ի՞նչ իմաստ ունի...»,— ծանր ու թեթև արեց մտքում Հակոբը և պատրաստվեց պատասխանի, ասես քննություն էր հանձնելու, սրտադող էր։

— Դեհ, Հակոբ, խոսիր, հետո՞...

— Հայր սուրբ, վատ լուր եմ բերել։ Արիացիր, ուսուցիչ իմ, իմացիր, որ Դրախտիկը ծննդաբերելիս մեռել է և...

— Մեռե՞լ է...— այլևս անկարող զսպել վիշտը, փղձկաց։ Արտասվում էր բարձրաձայն, առանց քաշվելու և կարծես առանց ամաչելու երիտասարդ հոգևորականից։ Չէր կարողանում զսպել ոչ լացը և ոչ էլ խոսել։ Հոգու ցավից քար էր կտրել Հակոբը և չգիտեր, թե ինչպես և ինչով կարող է օգնել իր ուսուցչին։ Ի՞նչ անել, շարունակե՞լ խոսքը, թե հեռանալ։ Եվ համրացած, կանգնել, մնացել էր։

— Շարունակի՛ր...— արցունքների միջից խոսեց Գրիգորը։

— Դու վատ ես զգում, հայր սուրբ, գուցե հարկավոր չէ...

— Շարունակի՛ր,— հրամայեց,— շարունակի՛ր...

— Դրախտիկը մեռել է, սակայն ապրել է զավակը, որին Դրախտիկի թախանձանքով անվանակոչել են Գրիգոր։ Ուշ, շատ ուշ է ծոցվորել Դրախտիկը։ Հիմա Գրիգորիկը տաս-տասներկու տարեկան տղա է և ապրում է Դրախտիկի ծնողների մոտ։ Հայրն ամուսնացել է, և հարազատները չեն ցանկացել, որ իրենց թոռը մեծանա խորթ մոր մոտ։ Ուշիմ և աչքաբաց տղա է։ Սիրում և արտասանում է քո տաղերը, ուսուցի՛չ։ Պապը խնդրեց, որ քեզ հայտնեմ իրենց որոշումը։ Նրանք ցանկանում են, որ Գրիգորիկը ուսանի մեր միաբանության դպրանոցում։ Խնդրում են, որ դու ընդառաջես իրենց ցանկությանը...

— Ո՛չ, Հակոբ, ո՛չ, Գրիգորիկը չպետք է ուսանի Նարեկի ճգնակենցաղ դպրանոցում։ Հավատա, եթե ողջ լիներ նրա մայրը, կտրուկ կերպով կմերժեր իր ծնողների ցանկությունը։ Ո՛չ, հազար անգամ ո՛չ... Թող մանուկը մեծանա առողջ, ինքնուրույն, անկախ։ Լինի երջանիկ իր սիրով, իր ընտանիքով, իր կյանքով։ Թող սիրո քաղցրությունը ճաշակելու երջանկությունն ունենա, հայրանալու բախտն ունենա, յոթ որդով սեղան նստելու պատիվն ու ազատ, ինքնիշխան ապրելու հաճույքն ունենա...

— Իսկ աստծո մտերմությո՞ւնը, ուսուցիչ...

— Սիրող ու սիրվող մարդը ինքնին աստված է, Հակոբ, սերն էլ է աստծո ստեղծածը։ Սիրահար մարդը միշտ աստծո հետ է...

Հակոբը չպատասխանեց ուսուցչին։ Իսկ ուսուցիչը գունատ էր, հիվանդոտ տեսք ուներ։ Կիսախուփ աչքերն ուղղված էին լուսամուտին։ Ձեռքով նշան արեց Հակոբին հեռանալու, սակայն նա, ինչպես ասում են, ոտքը կախ գցեց։ Ախր, ուսուցչի վիճակը բանի նման չէ, հանկարծ բան չպատահի։

— Գնա, Հակոբ, գնա՛։ Ես ուզում եմ մենակ մնալ...— ձայնը խրոպոտ էր ու խուլ։ Շրջվեց, որ հեռանա, երբ լսեց խուլ թրմփոցը։ Գրիգորն ընկած էր հատակին։ Աչքերը փակ, դեմքը ողողված քրտինքով և չէր շընչում։ Հակոբը վախից ու սրտի ցավից ճչաց, բացեց խուցի դուռն ու օգնություն աղերսեց.

— Օգնեցե՛ք, ուսուցչապե՛տը...

Դժվարությամբ ուշքի բերին։ Դրին անկողին։ Ամբողջ օրը ոչ կերավ, ոչ խոսեց։ Բաց աչքերով անցկացրեց ցերեկն ու գիշերը։ Հաջորդ օրն սկսեց զառանցել։ Խոսում էր անկապ. բառերը խեղդվում էին կոկորդում։ Միայն տարորոշվում էին «Ների՛ր... մեղա՛...» բառերը, ուրիշ ոչինչ։ Ցերեկը վերստին պառկած էր բաց աչքերով և անշարժ ու դատարկ հայացքը՝ քարե ցածրիկ առաստաղին։ Երեկոյան, հուրախություն շրջապատող մարդկանց, ուտելիք պահանջեց, սակայն համարյա չկերավ։ Գիշերը քնեց ամուր քնով և առավոտյան խնդրեց հագուստները։ Թույլ էր ու գունատ՝ մեղրամոմի գույնի, դեմքը սրված էր։ Աչքերը ներս էին ընկել։ Սակայն նստեց սեղանի առջև։ «Մատյանն» սպասում էր։ Եվ վերստին հնչեց բառերի շքեղ հեղեղը, հուլունքաշարը։ Նորից մարգարիտներ էր շաղում գրիչը։ «Մատյանը» սաղմնավորվում էր։

«— Ես քեզ հետ եմ եղել միշտ, մի՛շտ, Դրախտիկ, նաև այն ժամանակ, երբ դու կնքած ես եղել քո մահկանացուն։ Ուրեմն, դու, դու տարար անօրինական սեպվող մեր սիրո ցավը։ Դու պատասխան տվիր, դառը պատասխան մեր սիրո և մեր կարճատև երջանկության համար։ Թանկ վճարեցինք, շա՛տ... Մի՞թե երջանկությունը հատուցվում է մահվամբ։

Մի՞թե երջանկության գինը մահն է։ Օ՜, որպիսի առասպելական գին ունի երջանկությունը։ Որքա՞ն է եղել մեր մեղքի չափը և արդյոք այդ մեղքը եղե՞լ է։ Անաստվա՜ծ աստված, ինչո՞ւ տարար Դրախտիկին։ Ի՞նչ մեղք էր գործել այդ աստվածանման աղջիկը։ Նա միայն սիրել ու սիրվել էր ուզում։ Իսկ մի՞թե կա մեկն այս աշխարհում, որ սիրել ու սիրվել չի ցանկանում։ Դու, տե՜ր երկնային, մի՞թե դու անտարբեր ես սիրելու և սիրվելու նկատմամբ։ Իհարկե, ոչ։ Դեռ ավելին, խանդոտ ես, խանդոտ բոլոր նրանց նկատմամբ, ով փոքր-ինչ թերացել է սիրո մեջ քո հանդեպ, կամ փորձել է սիրել ուրիշին.. Ասում են՝ աստված սեր է։ Եթե ճիշտ է, ինչո՞ւ խլեցիր Դրախտիկին կյանքից։ Ինչո՞ւ անսեր ու տգեղ դարձրիր քո իսկ ստեղծած աշխարհը, որի զարդերից էր Դրախտիկը։ Ինչո՞ւ թալանեցիր, ինչո՞ւ կողոպտեցիր իմ սերը։ Սերը կողոպտելը մի՞թե աստվածային զբաղմունք է։ Նա իմը չէր արդեն, ուրիշինն էր, սակայն ես վերստին հարուստ էի նրանով, նրա գոյությամբ։ Նա լուսավորում էր իմ հոգու մութը, լցնում սրտիս պարապը։ Ես ունեի մի գեղեցկություն, որին նմանվել, ընդօրինակել էր ցանկանում նույնիսկ աստվածուհին։ Խանդեցիր, երկնային, խանդեցի՞ր, որ հողեղեն էակը երկնայինի բնորդուհին է, լոկ բնորդուհին և ոչ ավելին։ Ի՞նչ արիր, տե՜ր իմ, ինչո՞ւ արիր, ինչո՞ւ... Դրախտիկի մահով կարծում ես հաղթեցի՞ր Դրախտիկին և վախեցրի՞ր ինձ... Ո՜չ, Դրախտիկը սիրելով մեռավ։ Ուխտեց իր սիրո և իր պտղի անունները նույնացնել, անմահացնելու համար սերը։ Նա մեռավ, սակայն սերը նրա ես կրում եմ իմ տառապած, շարշրկված հոգում։ Եվ հավատա, տեր, եթե վերածնվեր Դրախտիկը, ես սիրով նորից կգրկեի նրան, թեկուզ այս անգամ իմ կյանքը դրվեր զոհասեղանին, ի հատուցում սիրո թեկուզև կարճատև երջանկության...

Բայց... բայց ես այս ինչե՞ր եմ բարբառում քո դեմ, ո՞վ ամենաանսխալականդ, ամենամեծահոգիդ, ամենակարողդ, ամենաբարեգութդ, ամենաարդարդ, ամենա... Դու երկնային արև, ես՝ հողեղեն ոչնչություն, դու մեծահոգի և ներող, ես՝ փոքրոգի և հիշաչար, դու լույս աշխարհի, ես խավար ու հիմարամիտ, դու՝ վեր երկրային բոլոր կրքերից, ես՝ անարգ մի կավ՝ կրքերին գերի, դու հավերժական ու հարամնա, ես՝ անցավոր, ստրուկ ժամանակի, դու աննենգ ու խոստումնապահ, ես՝ նենգ ու խոստումնազանց, մեղավոր եմ քո առջև, տեր աստված, մեղավոր միշտ և հավիտյան։ Պատժիր ինձ՝ մեղավորիս, բուժիր ինձ՝ ախտավորիս, ատիր ինձ՝ վայրահաչիս, հայրացիր ինձ՝ թե ծնունդ եմ օրինական, թեև գիտեմ, որ անիրավացի եմ, ամենախիստ պատժիդ արժանի, զի խախտել եմ իմ խոստումը և նզովքի պատառներ նետել մեծությանդ վրա։ Ներիր սակայն, զի ներելը շնորհ է աստվածային»։

Եվ նորից գրիչը սկսեց գեղեցկացնել մագաղաթի անաղարտ ճերմակությունը։

— Մեղա՜ ես մեծիդ բարերարության, անարգս մեղա՜,
Մեղա՜ ծագումին ճառագայթներիդ, խավարս մեղա՜,
Մեղա՜ շնորհիդ երախտիքներին, արդարև մեղա՜,
Մեղա՜ երկնային գթառատ սիրուդ, հայտնապես մեղա՜,
Մեղա՜ արարչիդ անէությունից, հավաստյալ մեղա՜,
Մեղա՜ գերագույն գոգիդ գրկալիր, անսահման մեղա՜,
Մեղա՜ աննվազ լույսիդ վայելման, նենգողս մեղա՜,
Մեղա՜ քո անճառ կյանքի ճաշակման, բաղմիցս մեղա՜,
Մեղա՜ քո անհաս շնորհատրման, հանապազ մեղա՜,
Մեղա՜ խնկելի մարմնիդ աստծո, մահու չափ մեղա՜...
Մեղա՜ պաշտելի արյանն արարչիդ, իսկապես մեղա՜...
... Մեղա՜, որ այսպես մոռացա բոլոր
Երախտիքներդ, վերստին մեղա՜,
Մեղա՜ մարմնապես՝ հոգիս եղծելով,
Հիմարս, մեղա՜,
Մեղա՜, որ կյանքիդ դրուժան եղա,
Իսկ և իսկ մեղա՜,
Մեղա՜ խոսքերդ արհամարհելով,
Ջարաչար մեղա՜,
Մեղա՜ օրհասիս աճապարելով, վատթարս մեղա՜...*

— Դու հավատա իմ զղջմանը և ներիր, աստվա՜ծ իմ, նեղացրել եմ քեզ, անարժանս, բայց չեմ դավաճանել։ Ջարախոսել եմ, բայց չեմ ատել։ Խոստումնազանց եղել, բայց չեմ խաբել։ Թեև մոլեգնել, բայց չեմ հայհոյել։ Ջարմացել, բայց չեմ կասկածել։ Կասկածել, բայց չեմ հիասթափվել։ Մե՜ծ են մեղքերս և շա՜տ են։ Թե որ Դրախտիկն իմ դարձավ նոխազ քավության, թողություն տուր մեղքերիս և տուր հնարավորություն, աղաչում եմ՝ մաքրված ու բացճակատ ներկայանալու դատաստանիդ։ Երկնային իմ տեր, մեծագույն մեղքն իմ համարիր իմ հիշողության համառող անբերեսությունը, որ չի ենթարկվում ամենազոր ժամանակին, չի ենթարկվում փրկարար մոռացությանը։ Անկարող է ժամանակը Դրախտիկին կորզելու իմ սրտից, իմ հիշողությունից, այսինքն, ինձանից։ Ներիր մեղքերս, ո՜վ բարեգութ, թողություն տուր մեղքերիս կամ՝ աստվածային պատժով վավերացրու իմ անճարակությունը տիրո հանդեպ։ Ազատիր ինձ՝ ինձանից։ Փրկիր ինձ՝ ինձանից։ Դադարեցրու իմ կռիվն իմ դեմ։ Ինքնամարտությունից հոգիս երկփեղկվել է։ Ամբողջացրու իմ հոգին։ Իմ բաժանված եսերը միացրու, որ ես՝ ի զորու լինեմ ծառայելու միայն քեզ, տե՜ր, միայն աստվածությանդ, որ այլևս չճանաչեմ անդի-

* Աշխարհաբար թարգմանությունը Վարդան Գեորգյանի։

մադրելի հրապուրիչ և անպարտելի զգացմունքը, որն է սերը։ Ների՞ր, ների՞ր...

... Այսքան ծանրաբեռ մեղքերով ես չեմ կարող ապրել մաքրամաքուր ու բացճակատ, իրավունք չունեմ։ Ճգնավորի քուրձ կհագնեմ, գլուխս կդնեմ քարե բարձին, կծածկվեմ ամպի վերմակով, կկերակրվեմ արմտիքներով և լույսայգից մինչև մայրամուտ, գիշերից մինչև տիվ՝ դառնահեծ հառաչանքներով, շարշրկելով մարմինն իմ և ծվատելով հոգիս, կհալածեմ մեղքերն իմ, որ իրավունք ունենամ աղաղակելու. ների՞ր մեղավորիս, հոգիս մաքրված, պատրաստ է ընդունելու աստվածային գթասրտությունդ...

Մոմը կաթեց ձեռագրին։ Արթնության կոչեց։ Մտքերը հախուռն էին։ Լցնում էին մագաղաթի էջերն ու, շտեղավորվելով էջերում, հորձանքվում էին էջերից դուրս։ Մարմինը թույլ էր, տկար, մտքերը սակայն ժրաջանորեն կայտառ էին։ Զարմանալի հոգեկան շարժումներ էին կատարվում նրա մեջ, որոնց առջև նահանջում էին նրա կամքն ու բանականությունը, որոնց վերահսկելու ուժ և հնարք չուներ։ Դրախտիկի մահվան բոթը վերջնականապես պարտության էր մատնել սիրո նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքը, և մեղավորության զգացումը խեղդում էր նրան։ Սակայն դատափետելով իրեն, չկարողանալով չափ ու կշռի մեջ դնել իր մեղավորության բեռը, նրա մեջ հանկարծ անհաղթահարելի ուժով ճառագայթեց հակոտնյա միտքը. ի՞նչ գնով էլ լինի այցելել Դրախտիկի շիրմին, գրկել ու համբուրել նրա հողաթումբը, զարդարել ծաղիկներով, խունկումամ ծխել և թրջել արցունքներով։ Ի՞նչ գնով էլ լինի։ Իսկ ի՞նչ գնով կարող է իրագործել նպատակը։ Նորից մարտահրավեր նետելով երկնայինին, նորից կամովին հանձնվելով նրա բարկությանն ու արդեն գթասրտության չենթարկվող կործանարար պատժի՞ն։ Այս կառչուն միտքը՝ չլքեց նրան արթնության ժամին, չլքեց նաև երազում։ Գիշերն ամբողջ կիսարթուն վիճակում Մանակերտի գերեզմանոցում էր։ Գրկել էր Դրախտիկի շիրմին ու չէր հասկանում, թե ինչո՞ւ է ծիծաղում, այն էլ բարձրաձայն, արթնանում էր ծիծաղի ձայնից և պարզվում էր, որ դեմքն ամբողջովին ողողված է արցունքներով։ Նույն երազը կրկնվեց մի քանի անգամ, մինչև լուսամուտից ներս նայեց լուսաստղը։ Ցանկացածը իրագործելը նաև նշանակում էր կյանքով հատուցել. «Թեկուզ կյանքով, կմեռնեմ ու կմիանամ նրան»։ Չիրագործել մտքինը ևս անհնար էր։ «Ես կմեռնեմ վշտից, և այս անգամ արդեն Դրախտիկի հոգին հավիտյան կխռովի ինձնից»։ Խորհրդածությունները շարշարում էին։ Ոչ մի երկնային, ոչ մի երկրային ուժ չէր կարող հետ պահել նրան նպատակից։ «Աստված գթասիրտ է, գուցե ների, իսկ եթե չների, միևնույն է, հակառակ պարագայում չեմ նե-

ռի ինքս ինձ, չի ների նաև Դրախտիկը»։ Կանչեց Հակոբին՝ ամենահավատարմին.

— Լսի՛ր, որդյակ, պետք է այցելել Դրախտիկի շիրմին։ Բայց այդ մասին ոչ վանքը պիտի իմանա, ոչ Մանակերտը...

— Ուրեմն, պետք է այցելել գիշերով կամ ուշ երեկոյան։

— Իսկ գիտե՞ս այցելության նպատակը...

— Իհարկե, հայր սուրբ, չհարցրի, քանզի հարցն իմ անպատշաճ կլիներ...

— Լավ, տղաս, գնա ու պատրաստվիր...

Հոգին թեթևացել էր։ Որոշումը վերջնական էր։ Եվ գրիչը դրեց մեկդի։

... Դրախտիկի շիրմին կանգնեցված էր խաչքար։ Մութը խանգարում էր տեսնելու քարի զարդանախշերը։ Բայց Գրիգորը չէր կասկածում, որ նա ամենագեղեցիկ խաչքարն է, քանզի գեղեցկուհու շիրիմն է զարդարում։ Մոմի աղոտ լույսը տատանում էր գերեզմանային ամուր մթությունը և տրոփում էր սրտի պես, ապրելով հովի մեղմ շնչից։ Իսկ գերեզմանային լռությունը խանգարվում էր Գրիգորի խեղդված հառաչանքներից և ընդմիջվող հեկեկոցներից։

«— Գիտեմ, որ խռոված ես ինձանից, որ ուժ չունեցա պահել, պահպանել մեր սերը։ Դու ինձ մղում էիր քաջության, իսկ երկնայինը՝ պարտականության կատարման։ Ոչ մեր սիրույն կարողացա զորավիգ լինել, ոչ աստծուն տված երդումս անթերի կատարել։ Ոչ քո մոտ երես ունեմ, ոչ աստծու։ Նեղացած եք երկուսդ էլ։ Մի՛ խռովիր, Դրախտիկ, մի՛ խռովիր, ես կորցրի քեզ, սակայն սերս չկորցրի։ Քեզ կորցնելու անբուժելի ցավը, տառապանքները համարիր իմ մեղքերի քավումը, իմ ապաշխարանքը քո հանդեպ։ Դու ուրիշի գնացիր, ո՛չ, ո՛չ, քեզ ուրիշի տվին, բայց ոչ մի օր չբացակայեցիր ինձանից։ Չլքեցիր ինձ։ Գիշերները սնարիս թեքված կամ օրորեցիր իմ քունը, կամ գուրգուրեցիր երազներս, ցերեկները՝ արևի շողերի հետ արթնության լույսով վառեցիր իմ հոգին։ Հավատացած եմ, իմ խռովկան, որ նույնիսկ ուրիշի գրկում իմն ես եղել, որ նրա անկողնում անգամ չես դավաճանել քո Գրիգորին։ Վկա՝ զավակդ, որին Գրիգոր ես կոչել։ Ինձ մեղադրել են, որ դու տաղերիս աստվածամայրն ես, ուրեմն, ճանաչել են քեզ և վախեցրել են ինձ հերետիկոսության և Թոնդրակյանի խրտվիլակով։ Իսկ ես ուրախացել եմ, որ ճանաչել են քո աստվածությունը։ Ի՞նչ անեմ, ի՞նչ, Դրախտիկ, որ հաշտվես Գրիգոր Նարեկացու հետ, մանավանդ, որ վերջերս դադարել ես երազներում ինձ այցելելուց... Խնդրում եմ, խնդրում եմ, Դրախտիկ, մի՛ մոռանա...»։

Արթնացավ Հակոբի ձեռքի հպումից։ Մի՞թե քնել էր։ Մոմը վառվում էր թույլ ճրթճրթոցով, հանգչելու վրա էր։ Հետո լույսն աչքին մեծա-

ցավ, ծավալվեց, և մի պահ խաչքարի առջև հարսանեկան զգեստներով երևույթացավ Դրախտիկը։ Ծպտում է Դրախտիկն ու իրեն երկարում թեվերը։ Առաջացավ սրտատրոփ, տարածեց բազուկներն ու գրկեց պաղ խաչքարը։ Վերջին ճրթճրթոցով հանգավ մոմն, ու Դրախտիկը տեսլացավ, անէացավ մթության մեջ։

... Վերադարձին չէին խոսում, Գրիգորը շարունակում էր կիսատ զրույցը Դրախտիկի հետ։ Հակոբն անձայն արտասվում էր իր ուսուցչի մեռած սիրո համար։ Միայն մենաստանին մոտենալիս Գրիգորը խոսեց.

— Մեր Մանակերտ գնալու մեջ, Հակոբ, խառն է տիրոջ մատը։

— Ինչպե՞ս թե, ուսուցիչ...

— Ես, որդյակ իմ, խաչքարի առջև տեսա Դրախտիկին հարսանեկան շորերով, տեսա...

— Երևի շատ էիր ուզում տեսնել, և տերն ընդառաջեց, ուսուցիչ...

— Այո՛, Հակոբ, տերն ընդառաջեց։ Իսկ դու ոչինչ չտեսա՞ր...

— Ոչինչ, ես քեզնով էի զբաղված, ուսուցիչ...

Գիշերը նստել էր աշխարհին։ Հեռու հորիզոնում, սպիտակ ժապավենի նման լիճը բոլորել էին փրփրուն ալիքները, և լռությունը տատանում էր նրանց ծանր հևոցը, որ թանձր շառաչով փշրվում էր ափերին։

— Որքան լավ է, ուսուցիչ, որ կենդանի ալեբախում է, այլապես լռությունը կլիներ մեռելային...

— Ո՛չ, Հայաստան աշխարհում լռությունը մեռելային լինել չի կարող, ընդհանրապես լռություն լինել չի կարող։ Զարմանալի է մեր Հայաստանը, Հակոբ։ Ուր լիճ չկա, այնտեղ արթուն է ջրվեժի շառաչը։ Որտեղ չկա ջրվեժ, կարկաչում են գետակը, առուն, աղբյուրը։ Չկան նրանք, արթուն են գահավեժ լեռները, ու մեկ էլ տեսար դմբդմբաց՝ լեռը պոկված ժայռի թավալումից։ Հայաստանը ձայների երկիր է, կենդանության երկիր։ Իսկ ձայները չեն մեռնում, հարատև են։ Ձայները կյանքի, շարժման արձագանքներ են, Հակոբ, ճի՞շտ է։

— Այո՛, ուսուցիչ, այդպես է...

— Բայց այստեղ, Հակոբ, առավել լսելի են հոգու ձայները։ Տա՛ աստված, անլուռ մնա հայի հոգին, նման այս ալեբախությանը, նման ծովի ջրերին զարկվող այս ջրվեժին։ Մեր հոգին երգեցիկ է, Հակոբ, տա աստված, երգը լացի չփոխվի։ Նայիր ի՞նչ գիշեր է, աշխարհն այս պահին լիքն է բարի ոգիներով։ Երանի բարիանան նաև մարդիկ...

ԵՐԿԵՈՍՈՒԹՅՈՒՆ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՎ ՍՄԲԱՏ ԶԱՐԵՀԱՎԱՆՑՈՒ

Մոմի լույսը մի փոքրիկ տարածք էր խլել մագաղաթից։ Լույսն այնքան թույլ էր ու դողդոջուն, որ մարդու շնչից անգամ քիչ էր մնում փչեր հոգին ու հանգչեր։ Տարուբերվում էր կրակե լեզուն՝ տարուբերելով պատից պատ և հատակից առաստաղ նետելով քնարերգուի ստվերը։ Նստել էր ողջ օրը՝ մի կում ջրով ու մի պատառ հացով, և այժմ գիշերն անցնում էր, սակայն քունը չէր մոտենում անքնությունից բորբոքված աչքերին։ Գրում էր։ Աստծո հետ էր։ Ականջին աստվածային ձայներ կային, որ խոսքի փոխարկված փոխանցվում էին գրչին ու ապա մարգարտաշար դառնում մագաղաթին, դառնում միտք ու հոգի, հոգու սլացք և արարում։ Իր հետ և իր մեջ էր աշխարհը՝ հոգսերով ու ցավերով, հեգնանքով ու դառնությամբ, աղոթքներով ու անեծքներով, վեհությամբ ու ստորությամբ, երազանքներով ու ակնկալիքներով, երգերով ու վերքերով։ Իր հետ էին աստված, աստվածորդին, աստվածամայրը, իր դեմ առճակատում էին սատանաները, որպես դրոշ պարզած Հուդային՝ մարդկային աղտեղությունները, ստորությունները բուրվառում և ցնծացնում էին, որպես մարդկության եզակի ճանապարհ և երանելի կեցություն։ Եվ հոգում փոթորիկ էր։ Ներհակ ուժերի բախում։ Եվ հոգին երկփեղկված էր՝ տառապելով մարդկային ստորություններից և վեհանալով մարդկային հոգևոր բարձրագնա թռիչքներից։ Չէր ցանկանում նահանջել վատի և ստորության առջև։ Չէր ենթարկվում չարիքին ու անմարդկայնությանը։ Միաժամանակ, չէր կարողանում հասնել լավին ու կատարյալին։ Չէր կարողանում հաղթել զրպարտությունն ու մատնությունը, անբարոյականությունն ու անգթությունը։ Եվ հոգու խռովքը, ինքնամարտությունն ու ինքնաբզկտումը հանձնում էր թղթին։ Բացում էր ցաված սիրտն աստծուն ի տես, սպեղանի խնդրում և բալասան տենչում փրկելու և ապաքինելու մարդկությանը՝ ահավոր ու անբուժելի ախտերից։ «Յուրաքանչյուր ոք իմ մատյանում պետք է առանց որոնելու գտնի իրեն, տեսնի իրեն, իմանա, ախտորոշի իր հիվանդությունը, պեղի իր փրկության միջոցները։ Ամեն ոք պետք է կարողանա տեսնել այն ճանապարհը, որ տանում է դեպի կատարելություն, մարդացնում է մարդուն, բարձրացնում է դեպի երկնային բարձունքները, դեպի մերձեցումն ու ձուլվելը տիրոջ հետ։ Քեզ եմ դիմում, ով երկնավոր, մարդկային բյուր մեղքերը, նրա անդնդացող մոլորություններն ու աններելի հանցանքները, նրա անաստված և անհավատ հակումները, նրա անհավատալի խարդավանքները գոյություն կունենա՞յին, եթե դու, երկնավոր, փորձեիր նրանց հանել մեղքերի ճահճից, դուրս

քաշել հոգին հոշոտող վիհերից, չթողնեիր, որ նրա հոգին վարակվեր անբուժելի բորոտությամբ։ Ներիր, ներիր քո ցնորված պաշտողին, ներիր, եթե դու անկեղծ սիրեիր մարդուն, ապա նա կմիտեր աստվածությանդ բարձունքները՝ թոթափած մեղրերը, կատարյալ, իսկապես նման քեզ ու քո պատկերին։ Թույլ տուր, որ մարդը ճանաչի քո մաքրությունն ու մարդանա։ Թույլ տուր, որ ճանաչի քո կատարելությունն ու մարդանա։ Թույլ տուր, նպաստիր նրա աստվածանալուն, որ մարդանա։ Քեզանով ձուլի իր հավատն ու պաշտի քեզ։ Թույլ տուր, որ քո ստեղծածները ավելի շատ հանդգնեն և ավելի քիչ երկնչեն։ Թույլ տուր, որ աստվածանվեր լեզվով. որ քո մեծագույն պարգևն է մարդկանց, խոսելու իրավունք ունենան, քանզի լռում են միայն անասունները։ Թույլ տուր, որ աստվածաշնորհ մտքերով, որ քո մեծագույն պարգևն է մարդկանց, նրանք ազատ մտածելու իրավունք ունենան, քանզի առավել վտանգավոր են շղթայված մտքերը։ Օ՜, երկնավոր, քո մեղավոր որդին գտնում է, համոզված է, որ աստվածանալու ճիշտ ճանապարհը առավել մարդանալն է։ Մարդացիր հուրախություն մարդկանց և կդառնաս և՛ աստված, և՛ հավատ, իսկ ես կտաղերգեմ քո մեծությունը, կքնարեմ քո գթասրտությունը, կխնկարկեմ քո կատարելությանը, կարարեմ իմ «Մատյանը», որի մեջ բյուր անգամ վաստվածանաս դու»։

Միտքը պայծառ էր, լուսայգի մաքրություն ուներ։ Տողերը լցնում էին էջերը։ Արդեն մի տրցակ մագաղաթ էր գրվել և միտքն աշխատում էր, միտքը ծնում էր, բռնված էր միայն արարողին հայտնի արարման քաղցր ցավով։ «Հավատը մարդկային մեծ էություն է։ Առանց հավատի մարդը նման է անղեկավար նավի։ Հավատն է մարդուն ներշնչում նպատակի ուղղություն։ Հավատով է մարդը հաղթահարում արգելքի դժվարությունները և իր թուլությունները։ Հավատով է կարողանում կռել հոգևոր, բարոյական, հայրենասիրական հաղթանակներ։ Նա է պարտվողին ներարկում հաղթանակի, մեռնողին՝ ապրելու, անհույսին՝ հույսի, մթությանը՝ լույսի հեռանկարը։ Հանուն հավատի և ապրելն է իմաստավորվում, և նույնիսկ իմացյալ մահը։ Հավատն է, որ ներարկում է վստահություն իր ուժերի նկատմամբ։ Հավատը թույլ չի տալիս մարդկանց ու ժողովուրդների խառնակություն, չի թողնում, որ վերստին վերածնվի բաբելոնյան խառնակությունը, երբ մարդիկ ու ժողովուրդներն իրար խառնվելով, հեռացան իրարից։

Հավատն առ աստված նույնիսկ նույն աստվածության ներսում ուղեկցվում է ցավագին հակասություններով և հակամարտություններով։ Այսօր եկեղեցա-դավանաբանական խնդիրներն ու ըմբռնումները տարբերակվում են այնպիսի իրարամերժ սկզբունքներով, որ կողմերը հաշ-

տության եզրեր չգտնելով, սկզբունքները պաշտպանում են զենքով։ Իսկ դու, երկնավոր, քո անհասանելի բարձունքից աստվածային հանգստությամբ դիտում ես այդ արյունոտ հաշվեհարդարը, որ կատարում են միմյանց նկատմամբ առաքելական եկեղեցու սպասավորները և թոնդրակյանները։ Իմ կարծիքով նրանք մոլորված են երկուստեք։ Ներհակ հավատներն իրենց ճշմարտությունը հաճախ ուժով են պարտադրում միմյանց։ Իսկ այստեղ արյունը ոթում են ներքին հակառակություններից գինովցած հոգիները։ Ես գրել եմ Կճավա ուխտին իմ «Թուղթը» և մերկացրել եմ թոնդրակյան շարժման էությունը։ Ես նզովել և անիծել եմ թոնդրակյաններին, քանզի չանել կամ հակառակն անել չէի կարող։ Իմ գլխին կախված էր ծանր սպառնալիքը, որի արտաքինը մահվան կերպարանք ուներ, իսկ ներքինը՝ անաստվածության և աստվածուրացության մեղադրանքը։ Հոգիս երկփեղկված է երկու հակասական սկզբունքների միջև։ Եկեղեցին իր ոճրագործությունները կատարում է աստծո անունից, թոնդրակյանները՝ աստծո և շինականի։ Երկուսն էլ արյուն են ոթում հավատի անունից։ Երկուսի հավատի հաստատման հիմքում ընկած է արյունը՝ հակամարդկային և հակաքրիստոնեական սկզբունքը։ Հարյուր տարուց ավելի է ճարակում է ժողովուրդը կրակի բերանն ընկած անտառի նման և չի հանգչում, չի սպառվում ցասումը եկեղեցականների, աստծո սպասավորների նկատմամբ, և վերջիններիս ատելությունը՝ ապստամբ շինականների, թոնդրակյանների հանդեպ։ Լսիր, տե՛ր, քո անարժան որդուն, հանգստացրու նրանց կրքերը, մերկացրած սրերը պատյանավորիր, արյան կորուստը ազգիս ներսում հասնում է կործանարար չափերի։ Իսկ սակավարյունությունը մեզ նման փոքր ժողովրդի համար ծանր հիվանդություն է։ Տե՛ր իմ, աղաչում եմ, օգնի՛ր...»։

— Տերը քեզ չի կարող օգնել, հայր սուրբ...

Գրիգորը ցնցվեց, դողաց։ Մոմը քամու բերանն ընկածի նման երերաց, ճրթճրթաց, բայց չհանգավ, այլ Գրիգորի զարմացած աչքերի առջև երկարեց լեզվակը, տարածվեց ու բոցավառվեց, լույսը բռնեց ամբողջ խուցը։ Եվ լույսը հզորացավ։ Եվ ձայնը, որ խրոխտ էր ու տիրական, տակավին դեգերում էր պատեպատ դիպչելով և նորից բախվում քնարերգուի լսողությանը։

— Ո՞վ մտքերիս արձագանքեց...— ձայնեց սրտադող։

— Ես, հայր սո՛ւրբ,— ոչ միայն խուցը, այլ քնած աշխարհը լցվեց նույն թավ ամպրոպաձայնով,— ես, որին դու շարունակ կանչել ես, ձայնել, անիծել ու նզովել, որին հանդիպելը դուրս է քո նույնիսկ ամենահանդուգն երազանքից... Բայց ես կամեցա կատարել քո ցանկությունը...

Նեղլիկ լուսամուտից մի փունջ լուսնի շուշանաբույր լույս էր վետվետում և լցվում ներս։ Հետո լույսն արագորեն մեծացավ, ծավալվեց և, ամբողջանալով, վերև հրեց վանքի առաստաղը, որն անհունորեն խորացավ դեպի երկինք, և երևութացավ ջինավառ ուրվականը, որին ճանաչեց, ճանաչեց քնարերգուն...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ի՞նչ ես ուզում, օ՜, անհաշտ ու անհանգիստ հոգի։ Ինչո՞ւ ես բարեհաճել քո հարյուրամյա հեռվից։ Ի՞նչ ես ցանկանում... և ստում ես, ես քեզ չեմ կանչել, չեմ ցանկացել քո ներկայությունը... Չքվի՜, դո՜ւ, դո՜ւ, ախր մեռած ես... Սմբատ...

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Օ՜, ո՜չ, հայր սուրբ, ես չեմ մեռել, թեև ինձ խայտառակամահ արեց Մանազկերտի Աբու-Լ-Վարդ ամիրան։ Մի շտապիր ինձ վռնդել։ Հարյուր տարուց ավելի է, ինչ հետմահու կյանքով շարունակում եմ ապրել։ Շրջում եմ Հայաստան աշխարհում և ուր ոսք եմ դնում, արթնանում է շինականը, և հողն հայոց դողում է նրա ծանր քայլերից։ Նրա արյունով օծվում ու ծփում են դրոշները։ Նրա սրից խորտակվում են սրբություններ, խաչվում են սուտ քրիստոսներ... Ես նա՛ եմ... որին դարերի կյանք է վիճակված, և սակայն անմահությունը իմ երազանքը չէ, ոչ էլ կեցությունը։ Ես ոգի եմ, որով փոթորկվում են խաբված ու բռնադատված հոգիները։ Ես նա եմ...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Բավակա՞ն է, բավակա՞ն է... Դու նա ես, ում բերանից, սրից, գործունեությունից արյուն է կաթում։ Քո գործով դու գցում ես աստծո վարկը հավատացյալների աչքում։ Դու նա՛ ես, որ պաշտում ու խնկարկում է արյունահեղությունն ու խառնակությունը և ձեռքերը լվանում մարդկային թանկ արյունով, իսկ արյան պակասությունից ամայանում է երկիրս հայոց...

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Քեզ մեղադրում են թոնդրակյանության մեջ։ Մինչդեռ դու անիծում և նզովում ես թոնդրակյաններին...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ես անիծում եմ, նզովում արյուն ոթելը, որպես կենաց հարցերն ու կնճիռները հարթելու, լուծելու միջոց։ Ես անիծում եմ մարդկային կյանքը բռնության ենթարկելու արյունոտ վարդապետությունը։ Ես անիծում եմ սեփական ճշմարտությունը, որպես կյանքի ճշմարտության պարտադրանքը, ես անիծում եմ սրբությունների նկատմամբ չարամիտ վերաբերմունքը, աստվածներին գահընկեց անելու բոլոր փորձերը։ Ես անիծում եմ նաև հավատը օրենք հռչակողներին։ Ես անիծում եմ հավատը օրենքին ստորադասողներին...

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Շնորհակալություն, հայր սուրբ, դու իրոք որ թոնդրակյան ես և իմ կարծիքով՝ երդվյալ։ Հիմա քեզ եմ հարցնում. իմ մեծագույն հանցանքը եթե համարում ես արյուն թափելը, մի՞թե մեր հակառակորդները իրենք չպարտադրեցին արյունը, որպես...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Պաշտպանության միջոցի, Սմբատ, մի՛ պաշտպանվիր։ Ապստամբող կողմը՝ նախահարձակվողն է, դու լավ գիտես, նա է առաջինը սուր բարձրացնում։ Պաշտպանվող կողմը զենքի է դիմում ստիպված, ճարահատյալ, ինքնապաշտպանության մղումով։ Այլ ճշմարտություն չկա այս խնդրի մեջ, քան ակն ընդ ականի, ատամն ընդ ատամանի բանաձևում։ Հետո արդեն կարող է հարձակվել պաշտպանվողը. քամի ես ցանել, պատրաստվիր հողմ հնձելու։ Նա կարող է յոթնապատիկ անգթությամբ վերադարձնել քո պարտքը... Սմբատ, քո թոնդրակյանները և՛ Ապահունյաց աշխարհում, և՛ Սյունյաց աշխարհում, և՛ Արարատում, և՛ ամենուր, ուր կարողացավ հասնել ապստամբության մրրիկը, կատարեցին այնպիսի վայրագություններ, որ չես արդարացնի ոչ մի մեծադղորդ բարեգործությամբ կամ պատճառաբանությամբ։ Ինչո՞ւ, ասա՛, բարբառի՛ր, թե ինչո՞ւ այդքան հեշտ, այդքան դաժանորեն դատաստան տեսան թոնդրակյանները եկեղեցու գործիչների և սպասավորների հետ։ Միևնույն է, աստծո դատաստանը, ահեղ դատաստանը մեզ սպասում է...

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Լսի՛ր, ով Գրիգոր Նարեկացի, գոնե խնայիր ինձ՝ հարյուրամյա հանգուցյալիս և այդքան համոզված, անվերապահ մի խոսիր ահեղ դատաստանի գոյության մասին։ Հարյուր տարուց ավելի է, ինչ իմ հոգին ու

մարմինը հանգչում են հողի տակ և վաղուց որդերը սպառել են իմ մարմինը, սակայն ոչ մի դատ ու դատաստան, ոչ մի հետմահու կյանք, ոչ էլ հոգու անմահություն չեն անհանգստացրել իմ հավիտենական քունը։ Եվ մենք՝ թոնդրակյաններս, միանգամայն ճշտորեն ու անառարկելիորեն ժխտել և ժխտում ենք հոգու անմահության գեղեցիկ ու սնամեջ հեքիաթը, որի խորհուրդը զարմանալիորեն խոր է և գործնական։ Ո՞վ մեծ քնարերգու, ոգու, անմահության, հանդերձյալ կյանքի Գորինվածքը սուտ է և հետապնդում է ոչ թե երկնային, այլ խիստ աշխարհիկ նպատակներ։ Դրանք հնարված են խաբելու ժողովրդյան խեղճ ու միամիտ հոգիներին հանդերձյալ կյանքի, ոգու անմահության պատրանքներով, որպեսզի ժողովուրդը լավ կյանքի ակնկալիքը չունենա այս աշխարհում, ուր կողոպտվում է, այլ հույսը դնի, լավ կյանքի հեռանկարը տեսնի հանդերձյալ կյանքում։ Սակայն այս մասին հետո։ Ինչ վերաբերում է արյան մեծ կորստին ու թոնդրակյանների անգթությանը, ապա քեզ նման գիտունին պարզ պիտի լինի, որ ապստամբությունները խաղաղությամբ և փոխադարձ սիրալիրություններով չեն ուղեկցվում, այլ արյունով, արյունահեղությամբ... Արյունը ոչ միայն նվաճում է հաղթանակներ, այլ միացած դաժանությանը՝ հակառակորդ բանակում ստեղծում հոգեբանական մի վիճակ, որից ծնվում են վախը, սարսափը, խուճապը։ Եվ ապահովում են մեր հաղթանակը։ Նույն այդ զենքով և ավելի դաժան, առավել անգթորեն թոնդրակյաններին պատասխանեցին եկեղեցին և իշխանական զորքերը։ Հիշենք, հիշիր, Գրիգոր, թե ինչպես երկրի երեսից ջնջվեցին Յուրաբերդն ու Ավելադաշտը։ Հիշի՛ր թոնդրակի վերջին ողբերգությունը, որի փրկությանը դու ևս մասնակից դարձար։ Հիշի՛ր մյուս ապստամբ շեների կորուստները։ Դու միանգամայն ճիշտ բանաձևեցիր այս վիճակը՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման՝ արտահայտությամբ։ Մեծ հարցեր վճռող կռիվները, բնականաբար, պահանջում են մեծ զոհեր։ Այս անթիվ, անհաշիվ զոհերի, արյան այս մեծ կորստի համար մեղավոր են, Գրիգոր, եկեղեցու և վանքերի տերերը։ Նրանք, որ միջնորդ պետք է լինեն աստծո և ժողովրդի միջև, հավատա, իրավունք չունեն, քանզի անսուրբ են և անմաքուր, կաշառակեր և կաշառատու, միտումնավոր ու կեղծավոր։ Աստված չի լսի նրանց։ Ոչ էլ նրանք կհամարձակվեն իրենց անսուրբ բերաններով խոսք խոսել աստծո հետ։ Ուրեմն, Գրիգոր, նրանք ավելորդ են, հարկավոր չեն ոչ աստծուն, ոչ շինականին։ Այս ճշմարտությունը բազմիցս հաստատել և հաստատում ես նաև դու անմիջնորդ խոսք բացելով աստծո հետ։ Աստված քեզ կլսի, Գրիգոր, քանզի քո երակներում հոսում է նրա՝ աստծո արյունը։ Դու աստվածածին ես, աստվածատուր, հետևվարար, աստծո սիրեցյալը և հայ ժողովրդի հպարտությունը։ Եկեղեցու

սպասավորները չարաշահում են անունն աստծո, վարկաբեկ են անում նրա հեղինակությունը, մեր տիրոջը վերագրելով բաներ, որ չեն մտնում նույնիսկ աստվածության պարտականությունների շառավիղի մեջ։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Այսի՞նքն...

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Նրանք երկնային տիրոջը վերագրում են մարդկային բարքերի, բարոյականության, մաքրության, անաղարտության, ոչ թե սահմանողի, այլ պաշտպանի, պահպանողի դերը, որն ինքնըստինքյան աստծո պարտականություններից դուրս է։ Չի կարելի աստծուն հատկացնել ահ ու սարսափ տարածողի, պատժիչի, աշխարհիկ օրենքների անխախտ պաշտպանի՝ ոստիկանի ոչ երկնային, ոչ աստվածահաճո դերը։ Իմացիր, Գրիգոր, աստծո սպասավորների ոչ բանիմաց, ոչ խելացի միջամտության պատճառով չենք գիտակցում տիրոջ աստվածային էությունը։ Աստված օրենսդիր է, ոչ թե օրենք իրականացնող։ Աստված արարիչ է, ոչ թե կատարող։ Աստված հոգևոր ոլորտում է, ոչ մարմնական։ Աստված խիղճ է, գութ, ոչ թե լոկ խղճի ջատագով։ Աստված սեր է, ոչ թե միայն սիրո քարոզիչ։ Աստված մեր մեջ է, ոչ թե մեզանից դուրս։ Տե՛ս, Գրիգոր, ինչպիսի անաստված խաղ խաղացին քեզ հետ եկեղեցական ու վանական գործիչները։ Դու աստվածության ոչ մի սրբություն չես խախտել։ Աստված ասել է՝ սիրեցեք զմիմյանց։ Այնուհետև ավելացրել՝ մի՛ շնանար։ Դու սիրել ես, Գրիգոր, սիրել պատանու անկեղծությամբ ու մաքրությամբ, բարոյականության ոչ մի խախտում։ Ինչո՞ւ տասնյակ տարիներ աստծո անունից բարբաջողները անմարդկային հոգեկան կտտանքներով թունավորեցին քեզ, ինչո՞ւ քո սերը համարեցին անբարո արարք, շնացում։ Ինչո՞ւ։ Դու սրբագույնն ես և մաքրամաքուրը։ Դու, որ սերը մեծագույն պարգև էիր համարում։ Դու, որ պաշտամունքի հասցրիր սերը մարդկային։ Դու, որ աստվածամորը կերտեցիր գեղեցկուհի կնոջ պատկերով՝ մարդուն աստվածացնելով և մարդացնելով աստվածամորը (որի աստվածությունը մենք՝ թոնդրակեցիներս, ժխտում ենք), քեզ՝ աստծո իսկական պաշտպանիդ այդ ո՞ր իրավունքով մեղադրեցին աստվածընդդեմ վարքի համար։ Ասա՛։ Հերյուրեցին քեզ, քիչ մնաց բանադրեին։ Ցավեցրին սիրտդ, և միայն քո հանճարը քեզ պաշտպանեց, ներշնչեց հարգանք ու պատկառանք քո հանդեպ։ Այն էլ ոչ բոլորի կողմից։ Այնպես որ, այսօր էլ քո բարեկամները մնում են անկաշառ ու նվիրված, թշնամիներդ՝

անհաշտ ու երդվյալ։ Վերջիններս երբեք քեզ չեն ների նրա համար, որ դու սերը համարում ես աստծո արարումն ու հանճարը։ Որ դու աստծուն հաղորդակցվում ես առանց եկեղեցու միջնորդության, որ դու մեծ տաղերգու ես և չես վախենում աստվածներին կերպավորել մարդկանց նմանությամբ և նոր միայն տաղերգել նրանց, չեն ների։ Եվ գտել են այպանելու, մեղադրելու առավել հեշտին ու դիպուկ հնարը՝ թոնդրակյան ես։ Մի մահակ, որի հարվածը միշտ անվրեպ է և բարոյապես մահացու...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Լսիր, ո՜վ մեծ խռովյալ։ Դու եկել ես ասուլիսի՞, բանավիճելո՞ւ, թե՞ մխիթարելու, մեղմելու հոգուս խռովքը։ Եվ մի՞թե ինձ հարկավոր է մխիթարել, գովել, մանավանդ օվսաննաներ կարդալ իմ ենթադրյալ մեծության մասին։ Ո՜վ հզոր մարդ, ես չեմ կարող քեզ պատշաճորեն վերադարձնել քո գովեստները և խոսել քո, իմ կարծիքով, բացակա առավելություններից, քանզի այն ներազգային խառնակությունը, որ հեղինակել ես դու, որը հարյուր տարուց ավելի է, ինչ ալեկոծում է մեր աշխարհը և մեր կյանքը, որը դեռևս երևի կկլանի մեկից ավելի հարյուրամյակներ, ասա՛, ի՞նչ տվեց աշխարհիս հայոց և արդյո՞ք չթուլացրեց մեր պետականությունը, որի հաստատման սիրուն մենք մաքառեցինք դարեր, հարյուրամյակներ ծախսեցինք արյամբ ու կորուստներով շաղախված... Ի՞նչ տվեց աշխարհիս թոնդրակյան ապստամբությունը, կարիք կա՞ր նման մեծ խառնակության։

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Եվ մի՞թե դու ես այս կասկածների, այս հարցերի հեղինակը, Գրիգոր Նարեկացի։ Չգիտեմ ինչու դու թոնդրակյան ապստամբությունը խառնակություն ես համարում, մինչդեռ նա դարիս մեծագույն իրադարձությունն է։ Նա մեր ժողովրդի արիության, հոգեկան կորովի, ոգու առողջության, կամքի անկախության ժայթքումը եղավ, ոչ կործանարար ընդվզումը այն երևույթների նկատմամբ, որոնք մաշում են մեր անձը, մեր ազգային կյանքը, որոնք ծածկված են լինում նույնիսկ կրոնական, նույնիսկ աստվածային շղարշով։ Դու գիտես, թե ի՞նչ է մեր մերժածը։ Կարճ ասած, մենք մերժում ենք եկեղեցու անհրաժեշտությունը, նրա ողջ նվիրապետությունը, նրա խորհուրդներն ու արարողությունները, նրա բազմածավալ ծեսերը, խաչի պաշտամունքը, Քրիստոսի աստվածային ծագումը և այլն, և այլն։ Ո՞րն է քո քարոզի էությունը, Գրիգոր։ Դու ասում ես, որ հոգու և մարմնի հակամարտ ուժերի ձգտումները ողջակիզում են մարդ

արարածին, և միայն կամքի գերբնական լարումով, մարմնականից հրաժարվելով և հոգևոր լույսերը երկնային վրա սևեռելով, մարդը կարող է հուսալ, որ իր գործած ու չգործած մեղքերից կարող է ազատվել, որ գերագույն աստվածային ճշմարտությանը կարող է մերձենալ երկնային տիրոջը միաձուլվելով միայն։ Սա է քո քարոզի միջուկը, Գրիգոր։ Իսկ մենք՝ թոնդրակյաններս, կոչ ենք անում կենսասեր և իրապաշտ գաղափարներ, այսինքն, ինչ ցանկանում է սիրահար Գրիգոր Նարեկացին և ինչ ժխտում է քարոզիչ Գրիգոր Նարեկացին։ Մենք կոչ ենք անում հավասար իրավունքներ տալ հոգուն ու մարմնին, չարհամարհել կյանքը, ապրել, գեղեցիկ ապրել կյանքը, հոգալ նրա կարիքները, պահանջները։ Մենք կոչ ենք անում՝ հավատալ միայն երկրային կյանքին և հանդերձյալ կյանքի հորինվածքը դեն շպրտել, որպես խաբեություն։ Ճիշտն ասած, քո ճգնավորական քարոզները, հայր սուրբ, թոնդրակյաններիս սրտով է։ Եթե եկեղեցին ու հոգևորականությունը չեն կարող փրկել մարդուն, և նա պետք է տոչորվի իրեն վիճակված, էր բաժին ահեղ ու գերագույն վրեժից, ապա, ուրեմն, եկեղեցական ողջ նվիրապետությունը հսկայական բարդ ծեսերով լիովին կորցնում է իր արժեքը հավատացյալի համար, որովհետև նա հրաժարվելով այդ ամբողջ ներկայացումից, ինքը պետք է անմիջականորեն խոսի աստծո հետ։ Ահա թե ինչ է ասում աշխարհին, եկեղեցուն, հավատացյալին քո քարոզը, Գրիգոր... Քո մեծ տաղանդով, քո մեծ խելքով դու դեռևս մերը չես, սակայն մեծ ու ջերմ սրտով դու մերն ես, Գրիգոր։ Եվ քանի որ տաղերգու ես աստվածաշնորհ, և քո սիրտը հյուսված է զգացմունքներից, ուրեմն, քո համակրանքներն առավել, քան հակակրանքները թոնդրակեցիների կողմն են։ Մեր չարակամների բամբասանքները՝ թոնդրակեցիների անբարո վարքի, շնության, հերձվածության շուրջ, ճիշտ նույնանման հերյուրանքներ են, ինչպես նրանց բանսարկությունները քո մասին։ Ասում են՝ մեր համայնքներում շնանում ենք, պատվի և բարոյականության հարցերը խառնում ենք շնացող անբարոյականության հետ։ Եվ դա կրկնում ես նաև դու, Գրիգոր, քո հռչակավոր «Թղթի» մեջ՝ ուղղված Կճավա ուխտին։ Նորից ասեմ, որ այդ ամենը սուտ է, սո՜ւտ... Մեր համայնքները շնավաններ չեն, մեր ազատ սիրո քարոզը՝ մարդկային սիրո առաքինության պանծացումն է։ Սիրով պսակված ամուսնությունը՝ ամենամեծ բարոյականությունն է, զգացմունքի մաքրության և անաղարտության հաղթանակը, իսկ անսեր ամուսնությունը՝ բռնություն և անբարոյականություն։ Մենք տղամարդկանց և կանանց իրավահավասարություն ենք քարոզում։ Այս ամենը, հասկանալի է, դուր չի գալիս հոգևոր տերերին, որոնք երդվել են թոնդրակյան շարժումը հավիտյանս թաղել։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ով մեծ խռովյալ, ով չավերվող ոգի, ի՞նչ ակնկալիքներ ուներ Թոնդրակյան ընդվզումը, ի՞նչ հարցեր էր լուծելու, բացի եկեղեցա-դավանաբանական, ծիսական և այլ մանր խնդիրներից, որ դուք՝ Թոնդրակեցիներդ ոտքի հանեցիք հայ շինականին և ուղղեցիք վանական և եկեղեցական հոգևորականության դեմ։ Շինականը հազիվ թե ցանկանար բարեփոխել եկեղեցու դարավոր ծիսական կարգն ու մահու ու կենաց կռվի դուրս գար տերունական և իշխանական զորքերի հզորության դեմ։ Ի՞նչ էր շահելու շինականն իր մահով, որ զորու չէր շահելու իր կյանքով։ Ինչո՞ւ, ինչո՞ւ ժողովրդյան արդար արյունը բաց Թողիք այնպիսի սաստկությամբ, որ արդեն մի հարյուրամյակ անհնար է կանգնեցնել։ Ինչո՞ւ նյութեցիք այս սպանդը, որի օգտակարությունն առավել քիչ է տեսանելի, քան պատճառած վնասը, ինչո՞ւ...

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Լսի՛ր, հայր սուրբ, դու իզուր ես ձևացնում, թե չգիտես քո իսկ առաջադրած հարցի պատասխանը։ Յուրաքանչյուր հոգևորականի համար պարզից էլ պարզ է մեր ընդվզման բուն նպատակը։ Բացի եկեղեցական ծիսական խաբեությունից, որ հետապնդում է շինականի կեղեքումը, երբ պատարագը, խոստովանությունը, հաղորդությունը դարձել են միամիտ շինականին խաբելու և նրան հեշտորեն ու կատարելապես կողոպտելու միջոցներ, մենք ջատագովում ենք երկրային կյանքը, մենք հանդերձյալ կյանքն իր դրախտով ու դժոխքով համարում ենք փուչ ու սնամեջ բարբաջանք։ Մարդկային ցեղի բարեկեցությունն ու երջանկությունը պետք է ստեղծել, կոփել, կառուցել միայն ու միայն երկրի վրա։ Սա անխախտ, անկասելի ճշմարտություն է, Գրիգոր։ Մենք ժխտում ենք հոգու հարության գաղափարը, հետևաբար և Քրիստոսի հարությունը։ Գտնում ենք, որ նա ինձ ու քեզ նման հողածին է և ոչ աստծո որդի։ Մենք ժխտում ենք երկնային հատուցումն ու պատիժը, մատաղն ու հոգու փրկությունը...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Բավակա՛ն է, բավակա՛ն է, բավակա՛ն է, ով անաստված, ով աստվածապիղծ, ինչե՛ր ես վայրահաչում, ինչե՛ր... Դրանից է, որ հանգիստ չես գտնում նաև գերեզմանում և ուրվականացած այցելում և մթագնում ես մեր միտքն ու հոգին։ Ատված չի ների, չի ներելու, իրավունք չունի ներելու քո աստվածասպանության քարոզը...

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Հանգստացիր, Գրիգոր, մի այպանիր ինձ այդքան խիստ ու մի վախենա, գոնե ինձ համար ապահով եղիր, զի ես իմ պատիժն ստացել եմ իմ մեռնելու օրից, երբ ինձ սպանեց ոչ թե աստված, այլ ալլահի երկրպագու Աբու-Լ-Վարդը։ Նույնիսկ այս պարագայում իր իրավունքների մեջ անզորացավ մեր աստվածը։ Ինձ հասանելիք պատժից քեզ հարկավոր չէ երկնչել։ Ականջալուր եղիր, իմ ասածը դեռևս բոլորը չէ։ Դու մեծ մտածող ես, Գրիգոր։ Այո, դավանաբանական հարցերին խառնվելը, իրոք, շինականի հոգսը չէ, բայց քաղցած ու ձեռնունայն նստելն ու նայելը հաստափոր տերտերներին, վանականներին, նրանց անաշխատ ու խժռող բանակին, խոստովանիր, որ հեշտ չէ։ Նորից գործում է հին և վիրավորական այն ասացվածքը, թե՝ էշն աշխատի, ձին ուտի։ Մենք մեր իսկապես աստվածահաճո քարոզներով, ի շահ շինականի, բացեցինք նրա աչքերը, հոգուն հույս և ամրություն, ձեռքին՝ սուր և նիզակ տվեցինք, Թոնդրակյան լուսավոր գաղափարներով զրահեցինք նրան և ուղղեցինք աստծո սպասավորների դեմ։ Շահեցինք ճակատամարտեր, տանուլ տվինք ճակատամարտեր, արյուն առանք Թշնամուց, արյուն տվինք Թշնամուն, բայց գնալով հզորացանք։ Եվ հզորանալու ենք առավել։ Եթե մեր Թշնամին գնալով ավելի կատաղի է դառնում, մենք՝ գնալով ավելի հավատով ենք նայում մեր գործի արդարությանը։ Դու մեծ տաղերգու, դու գիտե՞ս արդյոք, թե աշխարհում հայոց որքան են վանական տնտեսությունները և որքան են խեղճացած ու կիսաքաղց շինականները։ Իհարկե, կիմանաս։ Գիտե՞ս արդյոք, որ միայն Վասպուրական աշխարհում, ոչ լրիվ տվյալներով, հարյուր տասնհինգ վանք կա, որ Աղթամարի Սուրբ Խաչ վանքը տասից ավելի գյուղեր ու ագարակներ ունի, որ Դերենիկ Արծրունու զավակներն այս վանքին նվիրաբերել են միանգամից չորս ագարակ։ Գիտե՞ս, արդյոք, որ հայոց հայրապետի կալվածքների թիվն անցնում է հինգ հարյուրից, որ կաթողիկոսարանում կան տասներկու եպիսկոպոս, չորս վարդապետ, վաթսուն երեց և հինգ հարյուր աշխարհական, որ կաթողիկոսին ենթակա յոթ հարյուր թեմ կա, որոնց գլուխ կանգնած են հինգ հարյուր եպիսկոպոս և բազմաթիվ եկեղեցական ձրիակերներ։ Այնուայնց աշխարհում ավելի քան դաժան են բախումները։ Եվ պատճառը մեկն է։ Վանական կալվածքների ուռճանալը և շինականների թշվառության հասնող աղքատանալը։ Մինչև եպիսկոպոսական աթոռանիստ Տաթևի վանքն ունի քսան գյուղ, իսկ վանքի միաբանների թիվն անցնում է հինգ հարյուրից։ Կրոնական տոներն ու հանդեսները այնպիսի շքեղությամբ են կատարում, որ մասնակցում են նույնիսկ Բագրատունի թագավորները,

Հայոց հայրապետը, իշխաններ, նախարարներ, այն դեպքում, երբ՝ այս ճոխության մատակարարները կարոտ են մի կտոր հացի, բոկոտն են ու մերկ, վանքերը մրցում են պալատների, իսկ վանականները՝ պալատականների հետ։ Այդպիսին է վիճակը աշխարհիս բազմաթիվ վանական տնտեսություններում։ Նույն Տաթևի վանքը բացի իր հայրենի կամ ժառանգական հողային տիրույթներից, ունի շահույթի այլ աղբյուրներ ևս։ Նրա ենթակայության հանձնված վեց հարյուր յոթանասուն գյուղերը տասանորդ հարկ են վճարում նրան։ Հարստության և ցոփության մեջ են լողում նաև Սյունյաց Բղենո Նորավանքը, Վաղատինի վանքը, Վայոց ձորի ամենախոշոր, ամենահարուստ Գնդեվանքը և այլն։ Թվարկելն անգամ դժվար է։ Գուգարաց աշխարհում նոր են հիմնադրել Սանահնի և Հաղբատի վանքերը, առաջինն արդեն ունի հինգ հարյուրից ավելի վանականների բանակ, համարյա նրան հասնում է Հաղբատի վանականների թիվը, Հայոց աշխարհի աստծո և ժողովրդի սպասավորները բարոյապես այնքան ընկան, որ դարձան շինականների ինչքի ավարառուներ ու կողոպտիչներ և աստծուն ճգնում են հավատացնել, թե իբր նրա նվիրյալներն են և արդար սպասավորները։ Քեզ եմ հարցնում, Գրիգոր Նարեկացի, դու հավատո՞ւմ ես նման հղփացած էությունների աստվածասիրությանն ու նվիրվածությանը աստծուն։ Հարուստ մարդը աստված չունի, մանավանդ չունի հավատ, չունի՛, չունի՛... Հարուստ կրոնավորի աստվածը ոսկին է, որ այսօր միտում է դեպի աստվածություն։ Ոսկին դառնում է աստված, ոսկին դառնում է հավատ։ Աստծո և հավատի կարիքն ունեն լոկ ընչազուրկները, չունևորները, Գրիգոր, որոնց անտված հարկավոր է որպես հոգևոր հենարան, որպես մխիթարություն, որպես հույս... Մեզ հարկավոր չէ սուտ աստվածասերների, աստվածապաշտների այս աչքածակ բազմությունը։ Մեզ պետք են ազնիվ ու շիտակ սրբության հասնող մաքրության տեր հոգևորականներ։ Մենք պետք չունենք վախենալու, այսպես կոչված, եղծվածներից, հերձվածողներից, սատանաների ուրվականներից, երբ այս «սրբերի» օգնությամբ ու նրանց մեղքով արդեն հայտնվել ենք իսկական դժոխքում։ Մենք դժոխքից երկընչելու ոչինչ չունենք, քանզի այս իրական դժոխքը Տարտարոսից ավելի դժոխային է։ Մենք ոտքի հանեցինք շինականին, հանուն ազգիս ապաքինման, հանուն ազգիս գոյատևման, քանզի եկեղեցին թույլ չէր տալիս շինականին մի կտոր հաց ունենալու, որ նա ի զորու լիներ մեծացնելու իր զավակին։ Ահա թե ինչու այդքան զորեղ և հարատև եղավ բախումը, որի վերջը չի երևում։ Հացն հանապազօրյա վաստակում է շինականը, սակայն նրա չնչին մասն անգամ խնայում են նրան։ Քամում են կենաց հյութերը, իսկ նա ցանկանում է ապրել և ապրեցնել աշխարհը։ Ինչի՞ վե-

րածեց մեր աշխարհը եկեղեցական և հոգևորական հորջորջվող կողոպտիչների այդ բազմությունը։ Երկնային տիրոջը մատնեցին անգործության և իրենց մեղավոր ու թլվատ լեզվով չկարողացան միջնորդ լինել աստծո և ժողովրդի միջև։ Սրբերից սատանաներ վերածեցին, սատանաներից՝ հրեշտակներ և հրեշտակներին հալածեցին անառականոցները։ Զուր ես գունատվում, Գրիգոր։ Ճշմարտությունից ոչ վախենալ, ոչ էլ փախչել է հարկավոր։ Նայիր ճշմարտության աչքերին, նայիր։ Տասնամյակներ շարունակ չէ՞, որ քեզ նույն կրոնավորներն են հալածողները, նրանք, որ խառնվում են ոչ միայն եկեղեցու, այլև գիտության, իմաստասիրության, տաղերգության գործերին, նրանք, որ ճգնում են իմաստասիրությունը փոխարինել իմաստակությամբ, ճառախոսությունը՝ շարախոսությամբ, ջանասիրությունը՝ ճառասիրությամբ, բանասիրությունը՝ փառասիրությամբ, բանաստեղծությունը՝ բանսարկությամբ, տաղանդավորը՝ աղանդավորով և այլն, և այլն։ Միանգամայն արդարացիորեն մենք՝ թոնդրակյաններս, սուր ենք բարձրացնում նրանց վրա, ի սեր արդարության, որ ապրի ազգս մաքուր ու արդար, դառնա հոգեպես առողջ ու կորովի, որը երաշխիք է գոյատևման և հարատևման։ Միայն մարդու բարձր որակը կփրկի մեզ և թույլ չի տա ազգս վերածվի անդեմ նախիրի... Այս է ճշմարտությունը, Գրիգոր...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Խելոք ես դու, Սմբատ Զարեհավանցի։ Քեզ առարկելը դժվար է, բանավիճելն՝ անհնար։ Ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ դու, դո՛ւ ես սովորեցրել ինձ հարգել ու գնահատել շինականի դառն ու հոգսաշատ տքնանքը, նրա սրբազան և դարավոր դաշինքը հողի հետ։ Ես չեմ կարող ուրանալ այս ճշմարտությունը։ Ես ընդունելի եմ համարում ապրելու համար նրա արդար ընդվզումը։ Համաձայն եմ, ի բաց առյալ արյան առատությունը, որին հակված են թե թոնդրակյանները, թե հակաթոնդրակյանները։ Համաձայն եմ նաև աստծուն անմիջնորդ հաղորդակցվելուն։ Այո, չպետք է թույլ տալ, որ աստծո անունից բարբառեն, իրականում, աստվածընդդեմ անձինք, ովքեր տիրոջ անունից կողոպտում են շինականին։ Ովքեր անսուրբ բերանով պղծում են մեր սրբությունները։ Սակայն, դուք, թոնդրակեցիներդ, ամբողջապես ջարդուփշուր եք անում եկեղեցական ողջ նվիրապետությունը, դարավոր ու սրբագործված ծեսերը, բոլո՛ր, բոլո՛ր... Դուք ժխտում եք նույնիսկ Քրիստոսին՝ աստծո որդուն, նրան համարելով մարդ և ոչ աստված։ Ի միջի այլոց, Սմբատ Զարեհավանցի՛, Քրիստոսը կանխավ վկայեց, թե հանդես կգան

աուտ քրիստոսներ և մարգարեներ։ Զարմանալի՜ կանխատեսություն, այնպես չէ՞։ Դու ինքդ, Սմբատ, աստծուն գահընկեց անելով կատարում ես քո հաջորդ անաստվածությունը։ Քեզ հռչակում ես աստված ու Քրիստոս և պահանջում, որ քեզ երկրպագեն։ Սա միայն աստվածուրացություն չէ, Սմբատ Զարեհավանցի, սա պատերազմ է հավատի դեմ, պատերազմ աստվածային ոչ թափուր գահերի համար, որ թափուրացնում ես դու, որպեսզի հետո նվաճես, փոխարինես այն էլ... Աստծուն։ Ահա ինչն է ոտքի հանում թոնդրակեցիներիդ դեմ հոգևոր ու աշխարհիկ մեծաց զայրույթը և շինականի մի մասին։ Գուցե պատասխանես իմ այս ծանր հարցումներին, եթե կարող ես ցրել նաև կասկածները, որ չարչարում են ինձ տիվ ու գիշեր... Դու աղանդավո՞ր ես, թե հավատուրաց...

ՍՄԲԱՏ ԶԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Դու շատ ես վախեցած ոչ թե թոնդրակեցիներից, այլ հակաթոնդրակյաններից։ Այսօրվա վիճակով, Գրիգոր, իմ թշնամիները նաև քո թշնամիներն են, ուրեմն, մեր թշնամին ընդհանուր է։ Սակայն քո վիճակը առավել ծանր է, քանզի քո թշնամիները քո յուրայիններն են։ Եվ քո պաշտպանած եկեղեցին քո դեմ է, նույնիսկ հավատը, որին նվիրված ես՝ քո դեմ է։ Եվ դու վախեցել ես, Գրիգոր Նարեկացի, գրել ես քո «Թուղթը» Կճավա ուխտին, շանթ ու բոց ես արձակում իմ դեմ, նզովում, անիծում, նույնիսկ հայհոյում ես ինձ, որպեսզի վերականգնես քո խաթարված հեղինակությունը յուրայիններիդ աչքում, ապացուցես քո նվիրվածությունը հավատի տաճին և ականջալուր իմ թշնամիների հերյուրանքին՝ հերյուրում ես ինձ։ Ես չեմ ցանկանում երեսպաշտություն անել և շասել, որ այո՛, մենք, թոնդրակեցիներս, ժխտում ենք եկեղեցական նվիրապետությունը, ծեսերը, սովորությունները, ժխտում ենք, որպես հարմարեցրած միջոցի, որով կողոպտվում է շինականը, միայն ու միայն շինականը։ Ինչ վերաբերում է ինձ Քրիստոս կամ աստված կոչելուն, ապա լավ լսիր. մենք գտնում ենք, որ Քրիստոսը մարդ է։ Եթե նրան աստվածացրել են, պաշտել ու երկրպագել, ինչո՞ւ նույնը չեն կարող անել, ասենք, Սմբատ Զարեհավանցուն։ Այս բանի հեղինակը ես չեմ և ես ժխտում եմ նման քայլը։ Ստացվում է, որ մենք Քրիստոսի աստվածությունը ժխտում ենք, որ Սմբատ Զարեհավանցուն դնենք նրա թափուր աթոռին։ Դու մի վախենա քո թշնամիներից, դու մեծ ես, Գրիգոր, այնքան, որ նրանց ձեռքը քեզ չի կարող հասնել...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Աստված էր Քրիստոսը, մեծից մեծ, բայց քո ձեռքը հասավ նրան։ Ինձ մի սրտապնդիր, ոչ էլ մխիթարիր։ Ես յուրայիններիս թշնամությունն արդեն հաղթահարել եմ։ Եվ զարմանալի բան... Ես մարտնչել եմ թոնդրակյանների դեմ նույնիսկ գրչով, նրանք իմ դեմ թշնամություն չեն տածում։

ՍՄԲԱՏ ԶԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Խոստովանիր, որ դու էլ թոնդրակեցիների նկատմամբ թշնամանք չես տածում։ Դո՛ւ, որ ականատեսն ես եղել Նախճավանի և Ավելադաշտի նախճիրներին, դո՛ւ, որ սեփական աչքով ես տեսել, թե ինչպես են իշխանական զորքերը հոգևոր տերերի օգնությամբ ջարդել կանանց ու մանկանց, ծերերի ու ջահելների, դո՛ւ, որ ըմբոստացել ես Սյունյաց հոգևոր առաջնորդ Վահանի դեմ, դո՛ւ, որ վայելել ես Կճավա միաբանության անդամ Մուշեղի բարեկամությունը, դո՛ւ, որ թոնդրակի համայնքը փրկելու համար նվիրաբերել ես քո ողջ ունեցվածքը, կարծում ես անկա՞տ է մնացել այս ամենը թոնդրակյաններից։ Կարծում ես նրանք չափ ու կշեռքի վրա չե՞ն դրել քո մեղքերն ու առավելությունները, կարծում ես նրանք չգիտե՞ն քո ծանր տվայտանքները, այն մեղադրանքները, այն ծանր հարվածները, որ կրել ես յուրայիններից։ Ամեն ինչ հայտնի է թոնդրակյաններին, մասամբ էլ հակաթոնդրակյաններին, եկեղեցական ու վանական գործիչներին։ Այնպես որ, Գրիգոր, պահ է, որ դու վար դնես այն զենքերը, որ քոնը չեն, այլ հարկադրաբար ես վերցրել, քանզի չեն ներել քեզ ոչ բարեկամներդ, ոչ թշնամիներդ... Այս ամենը լա՞վ իմացիր...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Հավատին առնչվող սխալ և ճիշտ հասկացությունները, որ թոնդրակյան շարժումից հետո ոչ թե առաջարկվում, այլ պարտադրվում են երկուստեք, պարտադրվում են հրամաններով, նույնիսկ զենքի ուժով, հավատացյալների բազմությունը նոսրացնում է։ Մարդիկ սկսում են վախենալ պատժվելուց, իրական և նույնիսկ կարծեցյալ, ենթադրյալ սխալները դառնում են ճակատագրական՝ կործանում կամ բարձրացնում են մարդուն, հաճախ հակառակ նրա էությանն ու ցանկությանը։ Ավելանում են այսպիսով սուտ հավատացյալները, վախից հավատացողները, այսինքն, հարմարվողները։ Մոլախոտի նման աճում են հավատի անունից,

աստծո անունից մարտնչող, հավատի մաքրություն պարտադրող հոգևորականները, պարտադրանքը համարելով հավատի արհեստական բուժման լավագույն միջոցը։ Ի վերջո, նրանք վերածվում են պատժիչ զորականների, իսկ հավատացյալները՝ հանցագործների, որոնք պատժված են կրելու հրամցվածը, հակառակ դեպքում ստիպված կլինեն պատասխան տալ կյանքով և հեղինակությամբ։ Այս պարտադրանքը հարվածում է հավատի ամբողջությանը։ Պակասում են իսկական ջերմեռանդ հավատացյալները, և ավելանում են հավատի անունից խոսող անհավատներն ու կեղծ հավատացյալները։ Բռնությունը ծնում է ոչ միայն բռնություն, այլև կեղծավորություն, հավատի կորուստը ծնում է ոչ միայն անհավատություն, այլև անորոշություն և անկումայնություն, զենքի գործադրումը ծնում է ոչ միայն մարդասպանություն, այլև մարդու անձի նկատմամբ անտարբերություն։ Դու շինականին կոչեցիր ապստամբության, միանգամայն իրական, կենսական խնդիրները լուծելու համար, իսկ դրա դիմաց հայ հոգևոր աշխարհը կորցրեց հավատի սրբությունը մասամբ, և աստված եթե ոչ ամբողջապես, սակայն ինչ-որ չափով հեղինակազուրկ եղավ։ Սրբությունները մերժելով, չի ամրանում հավատը, ընդհակառակը, սրբությունը կարող է փոխարինվել անսրբությամբ և չիք դարձնել աստծո շքախումբը, որի վրա հիմնված է աստծո ուժն ու զորությունը, նրա երկնային էությունը։ Պետք չէր հավատի հարցը զենքով լուծելու փորձ փորձել։ Հարկավոր չէ հավատի մեջ կասկածելի բարենորոգումներ անել։ Ժողովուրդը հայոց դարերից եկել և անվարան գնում է դեպի գալիքն իր, և ժողովրդի գոյության հարատևության մեջ հսկայական է հավատի դերն ու մասնակցությունը։ Հավատը նաև մաքուր է պահում ազգս հայոց, պաշտպանում տարափոխիկ ազդեցությունից, մարդկային մեղքերից ու արատներից։ Նայիր մեր աշխարհին, մեր մարդկանց, տես, թե որքան է իջել մարդը աստծո բարձունքներից, բարձրանալու փոխարեն դարձել է մեղքերի անքավելի անոթ, փոխանակ մեղքերը հաղթահարելու և բացճակատ կանգնելու աշխարհի և աստծո հոգևոր ու բարոյական դատաստանին...

ՍՄԲԱՏ ՉԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Հավատի խնդիրը դու ճիշտ չես պարզաբանում։ Ճիշտ չես ըմբռնում։ Հավատը անշարժ բան չէ։ Հավատը ևս շարժուն է, ինչպես կյանքը։ Դու ցանկանում ես երբեք չդիպչել հավատի անսասանությանը, բայց ո՛չ, ազգը իր հավատով անգամ քարանալու իրավունք չունի։ Եթե հարկավոր է, այո՛, պետք է վռնդել սուտ և սարքովի սրբերին ազգային սրբարանից։ Եթե ապացուցվում է, որ Քրիստոսը աստծո որդին չէ, այլ մարդ հողածին, ինչո՞ւ աստվածացնել նրան։ Մեզ հարկավոր չեն սուտ աստվածներ և սրբեր։ Թոնդրակյան ապստամբությունը, բացի կարևորող հարցերից, լուծեց նաև մեր ժողովրդի ըմբոստ ոգու, ընդվզող խառնվածքի արթնացման խնդիրը։ Հավատը քարացնելով մենք արդյո՞ք ստրկության չենք մատնում, ճորտության չենք դատապարտում մեր հավատացյալին։ Հավատը պետք է լինի ոչ թե մարտական, այլ մարտունակ, ոչ թե հրահրող և ոգեմատենչ, այլ արթնացնող և փրկարար։ Եթե մեր սրբերն ի զորու չեն ծառայելու մեր ազգի պետքերին և կարիքներին, ուրեմն, ազգիս ի՞նչ օգուտ նրանցից, ովքեր սնվում են մոմով ու աղոթքով և պահանջում են երկրպագել իրենց։ Ժողովրդին պիտո չեն անքան և գիրացած սրբերը, ավելի ճիշտ է երկրպագել դևերին ու սատանաներին, քանզի նրանք կարող են շարժել ազգիս հոգևոր աշխարհը, թեև ոչ հարկավոր ուղղությամբ։ Ազգիս մարտունակության և ըմբոստության բարձրացումը գրավական է նրա հարատևության, Գրիգոր։ Դու շա՜տ ես քրիստոնյա, շա՜տ ես գերի կրոնա-դավանաբանական քարացածությանը։ Մի զրկիր քեզ քո հոգու հարստությունից՝ որն է ըմբոստությունը։ Միևնույն է, այն «Մատյանը», որն արարում ես դու, երկրային աստծո ապստամբությունն է երկնային աստծո դեմ, դա հանճարի ճիչն է ի պաշտպանություն մարդու և նրա հոգու փրկության։ Դա մեծագույն խիզախումն է աստծո դեմ, աստվածային, քրիստոնեական վարդապետության հաստատումից ի վեր։ Իմացիր, Գրիգոր։ Այս պարագային եթե աստված ների քեզ, իմացիր, որ դու ուժեղ ես նրանից և աստծո պարտությունը՝ մարդու հաղթանակն է։ Իմացիր, նաև, աստծո համար հաղթանակն ու պարտությունը գտնվում են միևնույն հարթության վրա, քանզի նա արարիչն է մարդու, և մարդու հաղթանակը նաև իր հաղթանակն է։ Ուրեմն, խիզախիր, Գրիգոր Նարեկացի։ Խիզախիր մինչև վերջ։ Իսկ եթե ցանկանում ես իմ և ինձ նմանների հոգիները փրկել Տարտարոսից, մի ջանա, խնայիր ջանքերդ... Միևնույն է, ինձ եթե չեն ներում երկրային աստվածները, ապա ես ոչ մի ակնկալություն չունեմ երկնային տիրոջից։ Ես փորձել եմ բացել իմ ժողովրդի աչքերը, և իմ ժողովուրդն արթնացել է։ Դու խրախուսիր նրա արթնությունը։ Լրիվ արթնությունը հարկավոր է նաև քեզ, ամենից առաջ քեզ։ Սթափ հայացքին քո եթե գումարվի քո աստվածային հանճարը, ապա հրաշք կկատարվի, Գրիգոր, դու կդառնաս աշխարհիս հայոց և մեծ աշխարհի մեծագույն տաղերգուն...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Օ՜, անաստված Թոնդրակեցի, քեզ ունկնդրելն արդեն մեղսագործություն է։ Քեզ հաղորդակցվելը՝ անաստվածություն։ Քեզ հետ վիճելը՝ հեթանոսության մեռած ձայների վերականգնումն է... Ի՞նչ է ցանկանում անհաշտ ու անհանգիստ ոգիդ... Ի՞նչ...

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Դու չես առարկում ինձ, Գրիգոր, այլ այպանում ես, քեզ համար դըժվար է ինձ առարկելը, ինձ հետ բանավիճելը։ Քո կովանները ասուլիսի, բանավեճի համար քիչ են, աղքատ են, քանզի քո մեջ հիմնավոր նըստվածք ունի Թոնդրակյան վարդապետությունը։ Վերստին կրկնեմ. դու, որ տեսել ես Թոնդրակյաններին, տեսել ես Նախճավանի նախճիրները, Անիի Թոնդրակյանների ուխտը, Ավելադաշտի՝ ավերադաշտի վերածվելը, դու, որ ունեցել ես այնպիսի գաղափարակից ու զորավոր բարեկամ, ինչպիսին էր Մուշեղ վարդապետը, դու, որ տեսել ես Սյունյաց հերոսուհի Սաթենի սխրանքն ու նահատակությունը և վերջապես քո կյանքն ու գործը, ո՜վ մեծդ Նարեկացի, մի լուռ նվիրումն է Թոնդրակյան ուխտին։ Ես քեզանից չեմ ակնկալում բոլորանվեր նվիրումն Թոնդրակեցիներին, բացահայտ կռվի նետվելդ հանուն նրանց պաշտպանության, զի այդ անել դու անկարող ես, դու այդ ուժը չունես։ Դու առանց այն էլ վաստակել ես Թոնդրակյանի պիտակը, որը փշե մի պսակ է քեզ և դափնեպսակ՝ մեզ, Թոնդրակեցիներիս համար։ Միայն խնդրում եմ, հոգեկան ծանր ճգնաժամերին, երբ քեզ կկրծի աստծո դատաստանին ոչ վայելուչ, ոչ մաքուր ներկայանալու երկյուղը, մի՜ վախենա, մի՜ նզովիր քո բախտը (դու բախտավոր աստղի տակ ես ծնվել), ոչ էլ վախեցիր քո մեղքերից (դու աստծո դատաստանին ներկայացող մաքրամաքուր մարդկանցից ես), ոչ էլ հուսահատության պահերին բարձրաձայն այպանիր Թոնդրակյաններին (դու մեծ մարդ ես, Գրիգոր Նարեկացի, քո վերաբերմունքը նշանակություն ունի մեզ համար)։ Դու այլևս ասելիք չունե՞ս ինձ, ո՜վ հանճարեղ ապըստամբ...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ո՜չ, Սմբատ։ Քեզ առնչվելն ինձ համար և՛ մեծ փորձություն է, և՛ մեծ փորձանք։ Ե՛վ մեծ պատիվ է, և՛ պատվազրկվելու առիթ։ Ե՛վ ամրապնդող ոգի, և՛ թևաթափ անող հոգեշարժում։ Դու իմ մեջ ես խաղացկուն և կենդանի արյան նման, դու նաև մահացու ուժ ես արյունն այդ ոթող թրի նման։ Դու պատճառն ես, միակ պատճառը իմ խառնակ էության, դու իմ ոգին ընդվզման հանող ազդակն ես միակ, դո՛ւ, որ քո կամքն ես թելադրում և կարգավորում իմ հարաբերությունները երկնայինների հետ։ Դու ի վիճակի ես բարեկամացնելու կամ խոտորելու իմ բարեկամությունը, դու քո ճշմարտությունը հաստատելու ճանապարհը տեսնում ես ուժի գործադրման, իսկ ես, ավա՜ղ, աղոթքի ու տաղերի մեջ։ Ինչևիցե, անհանգիստ ու անմեռ խռովյալ, բաց արձակիր ինձ, թույլ տուր ինքս ինձ մոտենալու, առավել ճանաչելու իմ մեղքերը ու լսելու իմ հոգու ձայնը, զի պահ է արդեն մեկուսանալու և շարունակելու «Մատյանն» իմ, որն իմ հոգու և աշխարհի ողբերգությունն է։ Դու հեռացիր, Սմբատ, իմ հոգին ազատիր քո պարտադրող ներկայությունից, ես ցանկանում եմ մենակ, առանց վկաների լինել երկնայինի հետ, որովհետև մեղքերի խոստովանությունը, հոգու գաղտնարանները բացելն արգելվում է ուրիշի ներկայությամբ։ Այնուհետև, աստծուն իմ մեղքերի խոստովանությունից բացի, իր սեփական մեղքերն ու վրիպումները մատնանշելու հակվածությունն ունեմ։ Մարդուն հարկավոր է փրկել մեղքերից և մեղքեր գործելու հնարավորությունից։ Աշխարհը մաքրվելու, կատարելագործվելու, մարդը կատարյալին հասնելու ցանկություններում թավալվում և չեն հասնում իրենց երազանքին։ Աշխարհը մեր տունն է, հարկավոր է, որ մեր տանն իշխեն խաղաղությունը, մաքրությունը, ճշմարտությունը։ Պետք է փրկել աշխարհը կործանումից և մեր հոգին գեհենի բաժին դառնալուց։ Հարկավոր է գեղեցկացնել մարդու կյանքն ու հոգին։ Ես քո ապստամբության թշնամին չեմ, ոչ էլ բարեկամ եմ արյունահեղության։ Դու օգնել ես ինձ ճանաչելու աշխարհը, ճանաչելու այն բանակի որակը, որ ծառայում և սպասարկում է աստծուն և կոփում մեր հավատը։ Եվ չեմ թաքցնում, կրոնավորների այդ հարստացող և բազմացող բանակը բարոյապես ի վիճակի չէ ծառայելու աստծուն, նաև մարդուն, ոչ էլ հնարքն ունի կոփելու մեր հավատը, քանզի ինքն ունի մեծագույն կարիքը հավատի ամրապնդման...

ՍՄԲԱՏ ՁԱՐԵՀԱՎԱՆՑԻ

Ես թողնում եմ քո կացարանը, քանզի պահ է արդեն հեռանալու, մոտ է լուսայգը։ Դու մերն ես, ժողովրդինը, ազգինը... ես օրհնում եմ քո ծնունդը, մեծ տաղերգու։ Աներկբա է քո գաղափարական արյունակցությունը այն մեծ գործին, որի առաջնորդն ու նահատակն եմ ես, որը անմահ է և պետք է հարատևի։ Մնաս բարյավ, ո՜վ Գրիգոր Նարեկացի...

Հաջողություն քեզ, թեպետ գերեզմանային սառն ու խավար մենությունը չի առնչվում հաջողությանը, հաջողություն քո գործին...

... Գիշերային մութը կամաց կապտում էր և արթնացող թռչունները սկզբում անվստահ մաքրում էին կոկորդները՝ արևին երգով դիմավորելու համար։ Հետո սկսեց պարզել նաև կապույտը։ Լուսայգն շտապում էր։ Արև կաթեց լուսամուտից, և նրա լույսի մեջ անմիջապես անէացավ ու տեսլացավ Սմբատ Զարեհավանցու տեսիլքը։ Մոմը վերջին ճիգով ճրթճրթաց, ծխաց ու հանգավ։ Գլուխը սեղանին քնել էր Գրիգոր Նարեկացին...

Լուսացավ...

***

— Լուսարար Գլակը խիստ անհանգստացած է քո առողջությամբ, ուսուցիչ։ Եթե ճիշտն ասեմ՝ քո հոգեվիճակով։ Ասում է՝ ողջ գիշերը մինչև ծագումն արեգական ոչ քնած ես եղել, ոչ արթուն, վիճել ես ինքդ քո դեմ, քեզ հետ, գոնե այդպես է թվացել նրան։ Ես անհանգիստ եմ, ուսուցիչ, արդյո՞ք հարկավոր չէ վանական բժշկի այցելությունը, մանավանդ, որ անքնությունից կարմրած են աչքերդ և դեմքդ՝ մագաղաթի գույնի։ Ի՞նչ անենք, կարգադրիր...

Զգիտեր, ի՞նչ ասեր Հակոբին։ Իսկապես, անքնությո՞ւն է, թե՞ երազախառն մի վիճակ, երբ քունն ու արթնությունը զզզում են միմյանց, երբ երազի ու արթնության սահմանները խառնվում են, երբ իրապաշտությունը մոտենում է խորհրդապաշտությանը։ Նա խորհում էր, մտորում։ Ճշմարտություն ասելով չի՞ հարուցի Հակոբի կասկածը իր հոգեվիճակի մասին։

— Նստիր, տեր հա՛յր,— առաջին անգամ կրոնական կոչումով դիմեց արդեն քահանա դարձած իր աշակերտին,— այս գիշերը ծանր լուսացրի ես։ Գոհություն աստծո, գիշերը մենակ չէի, հյուրընկալում էի մեծ խռովյալին, դարավոր ապստամբին, ավելի ճիշտ, նրա ուրվականին։ Գիշերն անցավ ասուլիսի մեջ։ Հետաքրքիրն այն է, որ նա մեղադրյալից վերածվեց մեղադրողի և ինձ, Հակոբ, սեղմեց պատին...

— Սպասիր, ուսուցի՛չ, դու այդ ո՞ւմ նկատի ունես...

— Ասում են՝ մեր վանքում պատերն անգամ աչքեր ու ականջներ ունեն։ Գիշերային իմ հյուրը Սմբատ Զարեհավանցին էր, նրա ուրվականը։ Ես վիճում էի նրա հետ, սակայն թույլ էր իմ դիմադրությունը, նա

հզոր բանավիճող է, մեծ խելքի տեր, և որ կարևոր է, նրա կողմն է ճշմարտությունը...

— Մի՞թե հարյուրամյա հանգուցյալները կարող են հարություն առնել, ուսուցիչ...

— Հարություն կարող են առնել նույնիսկ հազարամյա հանգուցյալները, եթե նրանք բնակվում են մարդկանց հոգիներում, նրանց էության մեջ և գործերում։ Իսկ Սմբատ Զարեհավանցին այդ շնորհը վայելում է մեր մեջ. անմահ է նրա գործը, կենդանի՝ ոգին, հետմահու կյանքը նույնքան շոշափելի, որքան կյանքն իրական։ Այդ է գաղտնիքը՝ ոգու կենդանությունը, որ հակամետ է երևութանալու, այլապես, ինչպե՞ս էր երևալու և նույնքան էլ անակնկալ տեսլանալու... Ողջ գիշերն իմ էությունը լցված էր նրանով, նրա մահացու ատելությամբ դեպի վանքի և եկեղեցու սպասավորները, նրա ճառագայթող սիրով դեպի շինականն ու ռամիկը։ Նա դատարկեց իր դառնություններն ու իր հոգին իմ առջև, Հակոբ, և բանաձևեց, որ կալվածատեր վանքերի և եկեղեցիների լուծարքը, եթե ոչ ամբողջապես, գոնե զգալիորեն կթեթևացնի շինականի ապրելու հոգսը։ Իր պայքարն ու ապստամբությունը, նույնիսկ արյունահեղությունը, նա համարում է շատ բնական և թոնդրակյան շարժումը՝ պատմության օրինական ընթացքը, և այլն, և այլն։ Ի վերջո, նա ոչ միայն վերագրեց, այլև համոզեց թոնդրակյան վարդապետությանն իր հակամետ լինելը և հավատացրեց, որ տաղերով և իմ վարքագծով իսկական թոնդրակյան եմ... Ահա գիշերային ասուլիսի բովանդակությունը։

— Փա՜ռք աստծո,— ջերմեռանդությամբ խաչակնքեց Հակոբը,— Սմբատ Զարեհավանցին մեծ անհատ է, այսօր նա մեր աշխարհի մարդկանց շատերի հոգիների տիրակալն է և այդ իրավունքով է երևում նրանց՝ քնի մեջ, թե արթմնի... Ի միջի այլոց, ուսուցիչ, քեզ ցանկանում է տեսնել խաչիկ աբեղան, որի գոյությունն, իր իսկ ասելով, դու վաղուց մոռացել ես։ Նա վերջերս խիստ կոտրված է երևում...

— Կոտրվա՞ծ... Խաչիկ աբեղան կոտրվա՞ծ... Նրա գոյությունը ես չեմ մոռացել, Հակոբ, ես պարզապես չեմ ցանկանում հիշել նրան, սա է ճշմարտությունը։ Դառն է նրան հիշելը, միայն հիշելը բավական է, որպեսզի մարդ զրկվի իր բարձր, խանդավառ տրամադրությունից, որպեսզի ձեռքից ընկնի գրիչը, որպեսզի ստեղծագործելու աստվածային ոգևորությունը լքի նրան։ Չեմ հավատում նրա կոտրված լինելուն։ Դու հովազին գիտե՞ս... Ամենավտանգավոր գազանն է։ Երբ սպասում է իր որսին, այդպահին փակ են մահացու ժանիքները, թաթերի մեջ հետ քաշված և թաքնված են նրա ահռելի ճիրանները, կիսախուփ են նրա կանաչավուն, արյունարբու աչքերը, իսկ զոհը երևալուն պես բացվում են ժանիքները,

դուրս են նետվում ճիրանները, կանաչ մահացու լույս են արձակում աչքերը և նա մահացու ցատկ է կատարում իր զոհի վրա։ Այսպիսին է հովազը։ Այսպիսին է նաև զրպարտիչը։ Նա համբերությամբ սպասում է, որ զոհն իր ձեռքն ընկնի, որ ինքն անմիջապես փոխարկվի հոշոտողի և ամբաստանության մահակով հարվածի իր զոհին և հրճվի նրա բարոյական, ինչո՞ւ չէ, նաև մարմնական մահով։ Այդպես է, որդյակ իմ...

— Ուրեմն, դու չե՞ս հավատում նրա մարդանալուն...

— Չեմ հավատում, թեև կուզենայի հավատալ...

— Նա խնդրում է, աղաչում, ցանկանում հանդիպել քեզ...

— Ցանկանում է, թող հանդիպի, էլ ինչո՞ւ է միջնորդ որոնում...

— Չե՞ս կարծում, ուսուցիչ, որ ամաչում է...

Գրիգորը ծիծաղեց բարձրաձայն, լիաթոք։

— Հակոբ, սիրելիս, եթե իմանամ, որ այդ մարդը ամոթի զգացողությունը չի կորցրել, հավատա, կներեմ նրա բոլոր խարդավանքները, զրպարտությունները...

— Ես չգիտեմ ինչու, բայց հավատացած եմ, որ այդ մարդը փոխված է...

— Լավ, լավ, Հակոբ, կապրենք, կտեսնենք։ Իմացած եղիր, որ կործանվող մարդու մարդանալը աստծո մեծագույն հաղթանակն է։ Ավելի մեծ հաղթանակ, քան մարդու վերադարձը մարդկությանը, կյանքին, աշխարհին՝ չկա։ Դա համազոր է մեռածի կենդանանալուն...

***

Հոգսաշատ կյանքը երբեմն մոռանալ է տալիս կարևոր դեպքեր, դեմքեր, նույնիսկ իրադարձություններ, որ երեկ գլխավոր տեղ էին գրավում մարդու կյանքում։ Երեկվա կարևորագույն դեպքերի և դեմքերի նկատմամբ այսօրվա անտարբերությունն ու անուշադրությունը հղի է վտանգներով և անախորժություններով, քանի որ մարդ արարածը հոգեբանորեն անպատրաստ է լինում հարցի կամ առեղծվածի լուծմանը։

Բավական ժամանակ է, որ զրպարտագրերի, ամբաստանագրերի հոսքը վերև ու ներքև դադարել է և կարծես մոռացության են մատնվել դրանց հեղինակները։ Վերացա՞ն, թե խլուրդի նման քաշվել են իրենց բները։ Եպիսկոպոս Ստեփանոսի այցելությունները եկան հաստատելու, որ զրպարտիչները ոչ միայն կան, գոյություն ունեն, այլև գործում են առանց երկնչելու, առանց պատկառելու նույնիսկ Գրիգորի հեղինակությունից, որի անունն ու տաղանդը հայտնի է հայոց ողջ աշխարհում։ Ո՞ւր ասես չեն գնում զրպարտագրերը, ո՞ւմ դռներն ասես չեն բախում մատնագրերը

և որպես կարգ սևացնում են պատվավոր, տաղանդավոր մարդկանց։ Ժանգ են քսում ոսկուն, կեղտոտում մաքուրը, վարկաբեկ անում ազնիվը, լույսը փոխարինում մութով։ Նորից պահանջում են բանադրել, խարանել, կարգալույծ անել Գրիգորին։ Հարկավոր է պաշտպանվել։ Հարկավոր է ցեխը քերել վրայից, «մեղքերը» լվանալ, մաքրել։ Նորից ասպարեզ հանվեցին Գրիգորի հոր՝ Խոսրով Անձևացու մեռած մեղքերը, նորից կյանքի կոչվեց Դրախտիկի սերը, վերստին աստվածամոր նկարագրի մեջ «հայտնագործեցին» հողեղեն գեղեցկուհուն, կրկին Թոնդրակյան գաղափարակիր հորջորջվեց Գրիգոր Նարեկացին։ Նորից սպառնալիքներ, լուտանքներ, ահաբեկում...

Խաչիկ աբեղան իր շուրջը հավաքելով զրպարտության հակված մի քանիսին, Ղազարոսի խայտառակ վարքագիծն այժմ արդեն գնահատեց «սարքովի», հանցանքը «թխված», Կունծիկի ինքնասպանությունը «կասկածելի հանգամանքների արդյունք» և միաբանության վրա հրավիրեց հոգևոր բարձր մարմինների ուշադրությունը, ջանալով նաև միաբանության երկպառակտմանը։ Սակայն միաբանությունը ոչ միայն չգնաց զրպարտչի հետևից, այլ այնպիսի բարոյական հարված հասցրեց նրան և իր համախոհներին, որ վերջիններս անմիջապես լքեցին իրենց «առաջնորդին», ոչ միայն հեռացան նրանից, այլև պահանջեցին վանահորից՝ բանադրել զրպարտչին և վոնդել միաբանությունից։ Խաչիկ աբեղայի խոփը քարին առավ։ Երկար, տևական մի ժամանակ միաբանությունը, թողած գիտական, կրթական և մնացած աշխատանքները, զբաղված էր ապացուցելով, որ մածունը սպիտակ է, ոչ թե սև, որ եզան տակ հորթ փնտրելը հիմարություն է, որ կարմիր կովը երբեք իր կաշին չի փոխի։ Ի վերջո, երկար ջանքերի գնով, բանականությունը հաղթանակ տարավ։ Միաբանությունը վանահորից պահանջեց անողոք լինել զրպարտչի նկատմամբ և վերջապես արմատահան անել զրպարտության որոմը, որ տարիներ անկաշկանդ աճում է միաբանության ներողամիտ և արգավանդ հողում, Գրիգորը կանչեց Խաչիկ աբեղային, ցանկացավ կարգի հրավիրել նրան։

— Տեր հայր, միաբանությունը պահանջում է...— սկսեց նա։

— Գիտեմ ինչ է պահանջում, բանադրել, վոնդել,—կտրեց Գրիգորի խոսքը։

— Ես պարտավոր եմ ականջալուր լինել միաբանությանը, նրա ձայնին...

— Դա միաբանության ձայնը չէ, այլ քո, կազմակերպիչը դու ես։ Ամեն ինչ արված է այնպես, որ վոնդվի վերջին ճշմարտախոսն անգամ, որպեսզի միաբանությունում հաղթանակ տանեն Թոնդրակյանները։ Դու,

հայր սուրբ, ցանկանում ես Նարեկի ճգնակենցաղ միաբանությունը վերածել Կճավա միաբանության, ուր տնօրինում են թոնդրակյանները։ Պատահական չէ, որ նրանց մոտ ապաստան գտավ քո արյունակից ու ուսուցիչ Անանիան...

— Այսօր, աբեղա Խաչիկ, դու ես միաբանության դատին։ Հայր Անանիան այլևս մեր միաբանության անդամը չէ, հետևաբար, նրա վարքի քննությունն էլ մեր ենթակայությունից դուրս է։ Թեև անմիջապես ավելացնեմ, ես ցավում եմ, որ նա, այդ մեծ մարդը, այլևս մեր միաբանության անդամը չէ, և ես հպարտ եմ, որ նա իմ բարեկամն է, արյունակիցն ու ուսուցիչը։ Կարծում եմ, հասկանում ես, որ քո զրպարտության նետերը չունեն ոչ թռիչքի արագություն և ոչ էլ նշանին դիպչելու կարողություն և վրիպանք են։ Այնպես որ այսօր մեր զրույցը վերաբերում է քո զրպարտչական, պառակտողական գործունեությանը, որի համար էլ միաբանությունը միաբերան պահանջում է բանադրել։

— Իսկ դու ի՞նչ ես խորհում, վանահայրը դու ես, իրավունքը քոնն է...

— Եթե դու խոստանաս հրաժարվել քո զրպարտություններից, դադարես միաբանությունը քո կեղծիքների ասպարեզ դարձնելուց, գուցե ես համարձակվեմ ընդդիմանալ միաբանության ձայնին...

— Զինադադա՞ր ես առաջարկում...

— Ոչ միայն զինադադար, այլ անվերապահ զինաթափում, այլապես...

— Այլապես ի՞նչ...

— Այլապես կընդառաջեմ միաբանությանը։ Լսիր, Խաչիկ աբեղա, քեզ արտակարգ պայմանների մեջ մի դիր և խոստումներ մի պահանջիր։ Կարո՞ղ ես միաբանությունում խաղաղ մնալ, մնա, չե՞ս կարող, հեռացիր...

— Քո առաջարկությունն անընդունելի է, հայր սուրբ...

— Գերադասում ես հեռանա՞լ միաբանությունից, լավ մտածիր...

— Ես չեմ հեռանում միաբանությունից...

— Եվ չես խոստանում հրաժարվել զրպարտչական խժդժություններից, այդպես չէ՞...

— Թեկուզ այդպես, թեև ճիշտ չեմ գտնում իմ հավատարմությունը հայոց առաքելական եկեղեցուն և նրա սրբություններին՝ զրպարտչական համարելը...

— Ուրեմն, պատրաստվիր դատի։ Միաբանությունը պահանջում է քո բանադրումը։

— Ես պետք է բողոքեմ... Եվ եպիսկոպոսին, և հայրապետին հայոց...

— Միաբանությունս ազատ է իր անարժան անդամների բախտը տնօրինելու։ Եթե ցանկանում ես խուսափել վատթարագույնից, ուրեմն, սուսուփուս հեռացիր...

— Կտեսնե՞նք...— մոլտաց Խաչիկը և քայլեց դեպի ելքը։

Այս կարճատև երկխոսությունից այնպես հոգնեց, ասես ծեծել էին իրեն։ Կորել էր քրտինքի մեջ, շնչասպառ էր. «Այս ինչ դժվար մարդ է, աստվա՞ծ իմ... Ինչպե՞ս է աշխարհը կարողանում տանել նմանների գոյությունը։ Կանչեցի, որ համոզեմ մնալու միաբանությունում, բայց դերերը փոխվեցին, ինքը եղավ նախահարձակ։ Չպետք է թույլ տայի, որ վերստին բերան պատռեր հայր Անանիայի և վայրահաչեր ինձ վրա։ Մարդասիրությունը, միևնույն է, սրա նմանները չեն հասկանա, կվերագրեն վախկոտության։ Խստասրտությունը, դաժանությունն ընդհանրապես, միակ հասկանալի լեզուն է նմաններին հաղորդակցվելիս։ Միայն այն բանի համար, որ նա փորձում է վախեցնելով լուծել իր խնդիրը, ես նրան կվտարեմ միաբանությունից, որպեսզի պարզվի երկինքը և շնչելը հեշտանա»։ Հաջորդ օրերն անցան առանց որևէ բան ավելացնելու եղածին։ Գրիգորը գիտեր, որ անխուսափելի են նոր բախումները Խաչիկ աբեղայի հետ և սպասում էր նրա պատասխանին։ Սակայն պատասխան չկար և երևի չէր էլ լինելու։ Նորից հրավիրեց նրան։ Չներկայացավ։ «Հիվանդ եմ»,— ասել էր։ Օրեր անցան, և հիվանդը չէր առողջանում։ Վանական բժշկին կոպտորեն վռնդել էր. «Իմ հիվանդությունն անբուժելի է, քո խելքի բանը չէ ինձ բուժելը»։ Այլևս չցանկացավ նրանով հետաքրքրվել։ «Սրիկայություն է անում։ Թող առողջանա, երբ կկամենա»։

Միաբանությունն ապրում էր իր առօրյա հոգսաշատ կյանքով։ Գնալով բարգավաճում էր, մեծանում էր համբավը։ Վանք էին մտնում գեղջուկ ազատների զավակներ, հոգևորականների շառավիղներ և միաբանության դպրանոցից դուրս էին գալիս ուսյալ, կրթված մարդիկ. գիտնականներ, իմաստասերներ, երաժիշտներ, տաղերգուներ, հոգևորականներ, որոնց անմիջապես կլանում էր ուսման և լույսի ծարավ հայ աշխարհը։ Ժամանակ անց կարծես մոռացան աբեղա Խաչիկին։ Գրիգորը, որ չէր սիրում հոգին ու ջղերն ուտող և քայքայող վեճերն ու կռիվները, թափ տվեց ձեռքը. «Եթե ցանկանում է մնալ վանքում, թող մնա։ Մի ձրիակեր ավելի կամ պակաս, ի՞նչ է փոխվելու»։ Սակայն այլ կարծիքի էր ձրիակերը, նա աշխատում էր։ Ամբաստանագրեր էր առաքում այս ու այն կողմ, կռվելով Գրիգորի անհաղթահարելի հեղինակության հետ։

Մուշի Գլակա վարժարանի ուսուցիչ տեր Մարուքեն, որի զավակը ուսանում էր Նարեկի վանքում, իր որդուն այցելելիս, ցանկացավ տեսնվել վանահոր հետ, մտավ նրա մոտ և նրան պարզեց Գլակա վարժարանին հասցեագրված մի նամակ, որի մեջ Գրիգորը կարդաց հետևյալը. «...Մեծապատիվ տեր, բարի կամեցողությամբ դրդված և ձեր լավը ցանկալով, ես՝ խաչիկ աբեղաս, ասում եմ. ձեր վարժարանի վարժապետների ոմանց զավակները, որ ուսանում են Նարեկի վանական դպրանոցում, արդյոք գիտե՞ն նրանց հայրերը, թե ի՞նչ են ուսուցանում ճգնակենցաղ միաբանությունում։ Աշխարհիկ կործանարար բարքեր, թոնդրակյան հերետիկոսական գաղափարներ, սիրահարություն, անբարո արարքներ։ Բանն այնտեղ հասավ, որ միաբանության անդամ Ղազարոսը փորձել էր բրոնաբարել նարեկաշենցի մի հարսի, բռնվել ու գեղչուկների ձեռքով ստացել իր արժանի պատիժը։ Փաստն այս հայտնի է բոլորին։ Նման աստվածամերժ բարքերը առայժմ անհաղթահարելի են և միտում ունեն շարունակվելու, քանի ինքը՝ վանահայրը թուլություն ունի սիրահարվելու և մեկ անգամ չէ, որ խայտառակվել է, բռնվելով հանցագործության պահին։ Հանուն աստծո, փրկեցեք ձեր զավակներին։ Խաչիկ աբեղա...»։

— Հիմա նրան կհրավիրեմ այստեղ, տեսնենք կարո՞ղ է հաստատել այս հրեշավոր զրպարտությունը։

Նրան բերին վանահոր մոտ համարյա ուժով։ Նստեց և ատելավառ հայացքը հառեց Գրիգորին։

— Տեր հայր, բարբառիր տեր Մարուքեի ներկայությամբ,— դիմեց Գրիգորը,— քո կարծիքով ինչպիսի՞ վարքագիծ ուներ միաբանության անդամ՝ հանգուցյալ Ղազարոսը...

Խաչիկ աբեղան կասկածանքով նայում էր մերթ վանահորը, մերթ տեր Մարուքեին։ Չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ են այդ հարցը տալիս։

— Ինչո՞ւ ես այդ հարցը ինձ տալիս, հայր սուրբ։ Ես հարկադրվա՞ծ եմ պատասխանել, թե՞...

— Ինչպես ուզում ես հասկացիր, քո կարծիքը հետաքրքիր է, տեր Խաչիկ... Ասա, առանց քաշվելու...

— Ուրեմն պարտադրանք կա հարցումիդ մեջ... Բայց չնեղանաս, հայր սուրբ, քանզի տեր Ղազարը զոհ գնաց դավադրության, որի մեջ մեղավոր է տնօրինությունդ...

— Շատ լավ, տեր Խաչիկ, դա քո այն կարծիքն է, որ օգտագործում ես միաբանության և իմ դեմ, այստեղ, մեր տանը, բայց դու ուրիշ կարծիք էլ ունես, որ օգտագործում ես նորից մեր դեմ, դրսի մարդկանց համար։ Մի տեղ Ղազարոսը մեր դավադրության զոհն է, մեկ ուրիշ տեղ նա

շնացող է և շինականների արդար ձեռքով պատժված։ Եթե քո կարծիքների ճշմարտությանը կասկածում ես, վերցրու, կարդա։ Կարդացի՞ր... Սա էլ գրել ես Գլակա վարժարանի՞ համար... Ուրեմն էլ ի՞նչ տարբերակներ ունես։ Դու, աստծո ծառադ, ամոթի զգացում, մարդկային հոգի ունե՞ս... Դու ինչպե՞ս ես ապրում և գործում մի հաստատությունում, որի տնօրինությունը, մասնավորապես «վանահայրը թուլություն ունի սիրահարվելու և մեկ անգամ չէ, որ խայտառակվել է, բռնվելով հանցագործության պահին»։ Խոսիր, աբեղա Խաչիկ, դատապարտիր, վերջապես, ասա, ո՞վ ես դու և ի՞նչ ես ուզում...

Լռում էր, իհարկե, ոչ վախից, ոչ ամոթից։ Ամոթի զգացումը նրա համար չվաճառվող ապրանքի նման մի բան էր, որից վաղուց հրաժարվել էր։ Չէր խոսում, որովհետև պատասխան ասելիք չուներ։ Թակարդն էր ընկել և, աչքերը չորսդին հածելով, ելք էր որոնում հիմար վիճակից դուրս պրծնելու։ Հետո անհանգստացավ, շարժվեց.

— Ինձ ուրիշ ոչինչ չէր մնում, բացի այդ քայլին դիմելուց...

— Այսինքն, խարդախելո՞ւց...

— Ես քեզ ատում եմ, վանահայր, քո և իմ աստվածները տարբեր են... Տարբե՜ր...

— Ո՜չ, տեր Խաչիկ, գոնե մեկ անգամ ճշմարիտ եղիր, դու աստված չունես և ատում ես աստված ու հավատ ունեցողներին, որոնց ամբաստանում ես, թունավորում նրանց կյանքը, ապրում նրանց աշխատանքով և այպանում, սևացնում նրանց։ Գնա և պատրաստվիր չքվելու միաբանությունից, բավական է...

— Կհեռանամ այստեղից, բայց ոչ մենաստանից...

...Իսկ երեկոյան վանահորը հայտնեցին, որ տեր Խաչիկը խելագարության ցույցե՞ր է անում, թե իրոք նշանները խելագարի են, ինչ որ է, գլուխ չեն հանում։ Խոսում է աշխարհի կործանումից, դժոխքի վերածվելուց և նման բաներ։ Գրիգորն անհանգստացավ...

— Վանական բժիշկն ի՞նչ է ասում...

— Բժշկին մոտ չի թողնում, հարձակվում է...

— Առեղծված է։ Կամ խելագար են խաղում, կամ զրպարտիչների մեջ խելագարությունը վերածվում է համաճարակի։ Հարկավոր է ախտորոշել, պարզել...

Ներկաները թեթևակի ժպտացին։ Վանահայրը սրախոսում էր։ Զգում էին, որ Խաչիկ աբեղայի խելագարությունը հերթական խարդախություն է, բայց առանց մատնելու իրենց կասկածները, փորձում էին «օգնել հիվանդին», բալասանել ու հանգստացնել։

— Ի՞նչ է բարբաջում խելագարը... Անմիտ, անհեթեթ բանե՞ր, թե նրա խելագարության մեջ արթուն է վրիժառու, վտանգավոր բանսարկուն։

— Ասում է, որ թոնդրակյանները շուտով հաղթանակ կտանեն աստծո դեմ, գահընկեց կանեն երկնային տիրոջը և նրա տեղ կաստվածացնեն Սմբատ Զարեհավանցուն։ Ասում է՝ փախեք, Նարեկի մէաբանության, Նարեկի ուխտի անդամներ, զի Քրիստոսի խաչողները պատրաստվում են խաչելու նաև ձեզ։ Ասում է՝ Նարեկի սրբազան վանական տարածքը պատրաստվում են վերածելու անառականոցի, ասում է...

— Բավակա՛ն է, ահավոր է, զզվելի է,— գոռաց Գրիգորը,— դրանք խելագարի խոսքեր չեն, նա վերջին ճիգերով վերստին փորձում է վարկաբեկ անել մեզ։ Կտրել իրեն պահող ու կերակրող ձեռքը։ Հայտնեցեք նրան, որ եթե վերջ չտա խելագար խաղալուն, ստիպված կլինենք ձեռնարկելու միջոցներ. կապկպելու, մեկուսացնելու, վնասազերծելու և ապա ուղարկելու Ոստանի խելագարանոց, որ շրջապատին վնաս չհասցնի...

— Խաչս կործանեցի՞ն... սրբերին վռնդեցին սրբատեղերից... Աստծո տաճարներից հալածեցին աստծուն... Աշխարհը կործանվում է, գեհենը բացել է երախը կլլելու աստծո զավակներին...— վանական անձուկ միջանցքներում ոռնում էր խելագարը։

***

Ամեն բան շրջվեց մեկեն, միանգամից։ Իրար հետևից հարցումներ էին անում հոգևոր տարբեր ատյաններից։ Հետաքրքրվում էին Գրիգորին առնչվող բոլոր հարցերով։ Հազար անգամ մեռած ու կենդանացած հարցերը վերստին դառնում էին առօրյա մեղադրանք կամ մեղքի ու մեղադրանքի ոչ միայն կասկած էին հարուցում, այլ դառնում էին հիմք մեղադրանքը նորոգելու։ Նորից, այս էլ քանիերորդ անգամ, կենդանացրին հորը՝ Խոսրով Անձևացուն և անիմաստ ու անխոհեմ կերպով նետահարում էին նրա մեռած մարմինն ու չմեռնող հեղինակությունը։ Գրիգորին վերստին մեղադրում էին հերձվածողության մեջ։ Առաջ էին քաշվում ժամանակավրեպ ու անհիմն հերյուրանքներ, քրքրելով տաղերգուի հոգին, զրկելով նրան աշխատելու և ստեղծագործելու հնարավորությունից։ Գրիգորն զգում էր, որ Խաչիկ աբեղան մենակ չէ, որ միաբանությունում կան մութ ուժեր, ովքեր բանադրանքի համար նյութեր են թխում ու մատակարարում համապատասխան ատյաններին։ Զգում էր, որ մոտենում է դատի ու դատաստանի օրը։ «Ի՞նչ են ուզում այդ մարդիկ ինձանից։ Ինչո՞ւ են դավադրում։ Չհնացա՞ն հազար անգամ ծեծված ու մաշված իմ հանցանքները։ Ի վերջո, ո՞րն է իմ հանցանքը, որը ոչ ես եմ տեսնում, ոչ էլ ինձ մեղադրողները։ Եվ ի՞նչ պատասխան են ուզում ինձանից աննյութեղեն, հորինված հանցանքներիս համար բանադրելու պատրաստվող քուրմերը։ Ի՞նչ նպատակ է հետապնդում նրանց պաշտոնական բծախնդրությունն ու անպայման պատժելու հակվածությունը։ Դավանաբանական անաղարտությա՞ն պահանջ է, թե՞ դավանանքի ամրության մանրախնդիր ստուգում։ Իմ անձի աստվածամերժ էության որոնո՞ւմ է, թե աղանդավոր լինելու կարծեցյալ մեղադրանքը։ Ի՞նչ է դարձել կյանքն իմ. առավոտ լուսուն արթնանում եմ տագնապով, որ ամբաստանված եմ, նույն կասկածին ու ահին ենթարկված լուսացնում եմ իմ անքուն գիշերները։

Թե զինվոր տեսնեմ, մահ եմ սպասում,
Թե պատգամաբեր՝ արհավիրքի բոթ,
Եթե գրագիր՝ կորստյան մուրհակ,
Թե օրինապահ՝ անեծք ու նզովք,
Եթե քարոզիչ՝ ոտքերի փոշու թոթափում միայն,
Եթե բարեպաշտ՝ հանդիմանություն,
Եթե անզգամ՝ կսկիծ ու մորմոք։
... Եթե տեսնում եմ ինձ հասնող բարիք,
Փախուստ եմ տալիս, չար կասկածներով,
Եթե բարձրացրած ձեռք՝ կորանում նկուն,
Թե մի խրտվիլակ՝ սարսում ահաբեկ...

Դժվար է։ Պակասել է օդը արդար մարդկանց համար։ Օ՜, տեր իմ աստված, թե ծիծաղում եմ կյանքի անհեթեթությունների, մարդկային հոգու թուլությունների վրա, արցունք է քամվում իմ աչքերից։ Թե լալիս եմ կյանքի անարդարությունների, բանական գոյի սխալ ընթացքի, ուտիճ ցեցերի, ոգեկործան կայսրերի, տիրադավ իշխանների, նյութապաշտության և բազում այլ ախտերի համար, նորից արցունք է քամվում իմ աչքերից։ Եվ արցունքները նույն բաղադրությունն ունեն։ Ծիծաղը՝ ցավից ծնված և լացը՝ ծիծաղի նման նույն բաղադրությունն ունեն՝ դառն են ու աղի։ Երկնային տեր, իմ հոգին մեղքերով այնքան է ծանրաբեռ, որ մարմինս ու հոգիս կքում են ներքև։ Եթե դու լինես իմ դատավորը, ես մեղավոր կլինեմ անմեղության դեմ։ Եթե դու պատիժ սահմանես ինձ, ես հանցագործ կլինեմ արդարության դեմ։ Եթե անաղարտության քննություն քեզ հանձնեմ, քո մաքրության կողքին կերևամ անբարո և ախտավոր։ Դո՜ւ, միա՜յն դու իրավունք ունես քննելու, դատելու, պատժելու, քանզի դու կատարյալ ես, ավելի քան կատարյալ։ Դու մաքրամաքուր ես, ես՝ ցեխակոլոլ։ Դու բարձր ես նույնիսկ ինքդ քեզանից։ Օգնիր ինձ, աստված, օգնիր ինձ՝ պատժելով, որ սատանայի օվսաննաներից փրկվեմ։

Դատիր ինձ ինքդ՝ որ հանցագործի ձեռքով չդատվեմ։ Քննիր ինձ ինքդ՝ որ տգետներն ինձ չքննեն։ Մաքրության դասեր ինքդ ուսանիր, որ պոռնիկներն ինձ չուսանեն։ Տեր դարձիր ինձ, աստված, քանզի անտեր եմ տերերով լեցուն այս աշխարհում...»։

Մագաղաթի էջը մնացել էր չգրված, սպիտակ, անաղարտ սպիտակ։ Գրիչ բռնելու, ստեղծագործելու տրամադրությունը անհաստատ էր, փոփոխական։ Բառերը, պատկերները, համեմատությունները, որ պահանջում էին դառնալ «Մատյանի» էջերը, հանկարծ նահանջում էին, չքանում, լքում իրեն, երբ հայտնվում էին քննող ատյանի պահանջկոտ հարցերը։ Այդ պահերին կոկորդը չորանում էր, անկանոն և հիվանդագին զարկերով աղմկում էր սիրտը, զգուշացնելով անհանգիստ վիճակի մասին։ Եվ սպասում էր Գրիգորը, սպասում իր երկրային «ահեղ դատաստանին»։ Ե՞րբ է գալու իրեն դատաստանելու ժամը։ Օրերը չէին գնում, չէին անցնում, այլ ծուլորեն, այնպիսի դանդաղկոտությամբ, երբ օրը տարի է թվում, քաշում էին ժամերի շղթան։ Կասկածը, մարդկային ու բանաստեղծական ճակատագրի անորոշությունը կրծում, հոշոտում էր հոգին։ Ձեռքը չէր զորում գրիչ բռնել։ Արարելու ամլությունը սպառնում էր տևական դառնալ։ Միայն մի քանի շաբաթ «Մատյանը» գրելու հնարավորություն ունեցավ և, ո՜վ աստված, ստեղծագործական ինչպիսի՜ խանդավառություն, ոգևորության ի՜նչ պահեր ապրեց ինքը։ Ասես աստվածացել էր, աստծուն կրում էր իր մեջ։ Կարճ տևեց արարման շրջանը։ Գոնե շտապեին իր հոգեառները, ինչ լինելու էր՝ լիներ։ Ավարտվեր սպասողական հոգեմաշ ժամանակը։ Թեև ուշացումով, բայց «հոգեառները» շարժվեցին, եկան, այն էլ խմբով։ Նվիրակները, որ Գրիգորին պետք է տանեին եպիսկոպոսների, իշխանների բարձրագույն ատյանի դատին, «հիացան ու ապուշ մնացին, և յարուցյալ յոտս նորա...— ասում է տարեգիրը...— և թողութիւն անձանց հայցեին...»։ Գրիգորը նրանց վրա թողեց շշմեցուցիչ տպավորություն։ «Եվ գնալով պատմեցին հրաշքի մասին, որ տեսել էին. և նրանք՝ ատյանի անդամները, ետ կանգնեցին իրենց շար խորհուրդից»։ Եվ այսպես հրաշքով, այս էլ քանիերորդ անգամ Գրիգորը փրկվեց ատյանի պատժից։ Դա մեծ հաղթանակ էր։

... Գահավորակը սովորական փայտից էր։ Հայր Անանիան այն զարդարել էր վագրի մորթով, որ հուրհրատում էր, նույնիսկ անարև ժամանակ։ Նաև շքեղություն էր։ Նաև փափկություն ու մեղկության տրամադրող։ Գրիգորը մորթին հանեց ու փռել տվեց ընդունարանում։ Գահաբորակն էլ փոխարինեց սովորական անտաշ փայտից շինված աթոռով և, ինչպես ուխտել էր, չոր քուրձեր հագավ ու նստեց սեղանի առջև։ Վանական բժիշկն ըմբոստացավ.

— Դու մոռանում ես,— պատասխանեց Գրիգորը,— որ մեր միաբանությունը կոչվում է ճգնակենցաղ, նշանակում է ավելորդ փափկությունը մեր հոգու համար կործանարար է...

— Իսկ քո արածը կործանարար է մարմնիդ համար,— առարկեց բժիշկը, — ես թույլ չեմ տա։

— Բայց, հարգելի բժիշկ, միայն մարմինը չարչարելով, նրան զրկելով աշխարհիկ հաճույքներից ու մեղկությունից, մեր հոգիները կմաքրվեն տիրոջ առջև և մեր ուխտը օրինական կսեպվի...

— Աշխարհիկ հաճույքները և մեղկությունը, հասկանալի է, չպետք է ձեր կենցաղում գոյություն ունենան, ես դա հասկանում եմ, հայր սուրբ, չարչարիր քո մարմինը, որքան հաճելի է տիրոջը և որքան կարող է դիմանալ քո մարմինը, սակայն ցուրտը, որի առջև դու հեշտությամբ բացում ես ճանապարհը, կարող է խորտակել քո առողջությունն ու սպանել քո մարմինը...

— Եվ կգոհանա հոգին, բժիշկ...

— Քեզ հետ վիճելը դյուրին բան չէ, հայր սուրբ, բայց ես հակված չեմ նահանջելու։ Եթե դու ուխտել ես չարչարել քո մարմինը, որ հոգիդ առողջանա, մաքրվի, ապա հարկ է մտածել, որ պարտավոր ես ունենալ առողջ մարմին, որ դիմանա չարչարանքներին՝ քուրձի կոշտությանը, անկողնու չորությանը, թերասնմանը և այլն։ Եթե չարչրկված, հյուծված մարմնիդ վրա արշավի ցուրտը, կհասնի մահը տարաժամ, և այլևս ոչ մարմնիդ վրա արշավի ցուրտը, ոչ հոգիդ կարող ես մարմինը հնարավոր կլինի ուզածիդ չափ չարչարել, ոչ հոգիդ կարող ես հարկավոր չափով բեռնաթափել մեղքերից և ոչ էլ աստծուն հաճելի որևէ բան արած կլինես... Այդպես չէ՞, հայր սուրբ, այնպես արա, որ ոչ դու տուժես, ոչ էլ տիրոջ առջև սևերես դուրս գաս...

— Համոզեցիր, բժիշկ, համոզեցիր... իսկ ի՞նչ եմ անելու ես...

— Գոնե տաք հագիր, հայր սուրբ, ուրիշ ոչինչ...

— Դու չգիտես գլխավորը, բժիշկ։ Ես ոչ միայն կենցաղս եմ փոխում, այլև բնակավայրս։ Շուտով, շատ շուտով ես կգնամ Սուրբ լեռան անձավները՝ այնտեղ ճգնելու, այնտեղ շարունակելու իմ «Մատյանը», այնտեղ ավարտելու իմ կյանքը։ Իմ նոր «բնակարանում» ցրտի ու շոգի շուրջ մտածելն անգամ ծիծաղելի կլինի...

— Պատճա՞ռը...

— Ճգնելու և բանաստեղծական ներանձնացումն ապրելու։ Հոգիս լեցուն է աշխարհիկ մեղքերով։ Ցանկանում եմ բաց ճակատով ներկայանալ տիրոջը։ Մեղքերիս թողություն խնդրելու իրավունքին արժանանալ և ճգնել ու ճգնել... Պատճառն այս է, բժիշկ...

— Քո առողջությունը, հայր սուրբ, անձավների պայմաններին չի դիմանա։ Քո մարմինը դժվարությամբ է տանում նույնիսկ վանական մգլած, բայց տաքուկ օդը, մտածիր նաև այս մասին...

***

Աբեղա Խաչիկի առեղծվածը չբացահայտվեց։ Նա ցանկանում էր տեսնվել վանահոր հետ, սակայն չներկայացավ։ Չերևաց։ Բոլորն էլ միաբերան ասում էին, որ կոտրված է, սմքած, զինաթափ և բանսարկություններից, և խելագար ձևանալուց, մի խոսքով, հոգեկան աշխարհը կամ անկման, կամ կանոնավորման ընթացքի մեջ էր։ Գրիգորը հրաժարվել էր նրանով զբաղվելուց. «Թող մնա միաբանությունում, եթե այդքան ցանկանում է, մանավանդ որ շարությունն սպառվել է...»։ Սակայն մի օր տեր Խաչիկն անհայտացավ։ Առավոտյան դուրս եկավ վանքից և չերևաց այլևս։ Չերևաց նաև հաջորդ օրերին։ Ասացին, որ իրեն հանձնել է աստծո ողորմածությանն ու հագել է ճգնավորի քուրձը և շարշարանքներում մաշում է իր մեղքերը։ Սակայն ոչ ոք չգիտեր ճշմարտությունը, որտե՞ղ է նա, ո՞ղջ է, թե՞ մեռած...

***

— Հայր սուրբ, նամակ Կճավա ուխտից...

Նամակը վերցնելիս ձեռքերը դողում էին։ «Ի՞նչ է պատահել...»— խոսում էր տագնապած հայացքը։ Բացեց փաթեթը։ Հայացքը հևասպառ վազեց թղթի վրայով։ Հետո մթնեց ու լցվեց արցունքով։ Ջարդված ընկավ աթոռին։

— Ուսուցչապետ Անանիան վախճանվել է...

— Ուսուցչապետ Անանիան մեր միաբանությունից էր,— խոսեցին ներկաները,— մեր ուխտի երկարամյա վանահայրը։ Հարկավոր է նրա աճյունը տեղափոխել Նարեկ...

— Միանգամայն ճիշտ է,— խոսեց Գրիգորը,— նա պետք է գերեզմանվի իր իսկ հիմնադրած միաբանության գերեզմանատանը։ Բայց կա արգելակող հանգամանք։ Հազիվ թե առանց սրբազանի թույլտվության հնարավոր լինի աճյունը տեղափոխել և թաղել այստեղ։ Նոր ենք, ինչպես ասում են, թոթափել մեզ վրա բարձած մեղքերը։ Զմոռանանք, որ զանազան կարծեցյալ մեղքերի մեջ ամբաստանվում էր նաև հայր Անանիան։

— Հայր սուրբ, մենք չենք կասկածում, որ այժմ հոգևոր առաջնորդները քեզ կընդառաջեն ամեն բանում։ Ատյանի նվիրակներն այնպես շըշմած ու խանդավառ հեռացան Նարեկից, անձամբ քեզ վերագրվող ստահոդ մեղադրանքներն այնպես քամուն տրվեցին, որ այլևս քո առաջ փակ դռներ հազիվ թե լինեն...

— Ոչ թե լոկ ինձ վերագրվող ստահոդ մեղադրանքները, այլ ինձանից առաջ ուսուցչապետ Անանիային։ Հայր Անանիան լքեց այս միաբանությունը, փախավ անմարդկային անաստված հալածանքներից, մինչդեռ նա ամենաջերմեռանդ և ամենաօրինապահ աստծո սպասավորներից էր, նաև հիմնադիրն ու երկարամյա վանահայրը Նարեկի հռչակավոր միաբանության։ Պատրաստեցեք երկու լրատարների, թող մեկը իմ նամակով ներկայանա եպիսկոպոսին։ Մեկին էլ ուղարկեք Կճավա միաբանություն խնդիրքով, որ հանգուցյալին չգերեզմանեն մինչև մեր նվիրակների Կճավա ժամանելը...

— Խնդրում եմ, հայր սուրբ, ինձ թույլատրեք մեկնելու Կճավա,— Հակոբն էր։ Արտասուքից խեղդված աչքերով, ակնդետ Գրիգորին, սպասում էր նրա պատասխանին, կանգնած դռան առջև։ Ոչինչ չհարցրեց, գիտեր, որ ուսուցչապետը սիրում էր ուշիմ և օրինապահ տղային և երբ անհայտացավ Անանիան, Հակոբը վշտից այնպես հիվանդացավ, որ Գրիգորը վախեցավ տղայի կյանքի համար և Անանիայի գաղտնիքը շշնջաց նրա ականջին, որը կախարդական ազդեցություն ունեցավ և ոտքի հանեց Հակոբին։ Դրանից հետո միայն Գրիգորին է հայտնի, թե քանի անգամ գաղտնի կերպով չափեց Նարեկ և Կճավա ճանապարհը, մինչև զրպարտիչները հոտն առան։ Այնպես որ Գրիգորը պարտական է Հակոբի սիրուն և նվիրվածությանը, որ տարիներ շարունակ ուներ նամակագրական սերտ կապ հայր Անանիայի հետ։

— Հայր սուրբ, ես պարտավոր եմ նրա մոտ լինել, ես պարտավոր եմ...— կմկմաց Հակոբը։

— Լավ, եթե ցանկանում ես գնալ, առանց ձգձգելու մեկնիր։ Քիչ անց պատրաստ կլինի նամակը, եղա՞վ...

Հակոբը համբուրեց վանահոր աջը և գնաց։

Գրիգորն այժմ իր ուսուցչի և արյունակցի հետ էր։ «Դու էլ գնացիր, հայր Անանիա, գնացիր... Հարազատներ, հոգեկիցներ այլևս չմնացին։ Ջարմանալի բան է կյանքը։ Մի քանի տարի առաջ իմ ծանոթ բարեկամներին տեսնում էի ցանկացած պահին։ Հիմա չեմ կարող այցելել նույնիսկ նրանց շիրիմներին։ Կար ժամանակ, որ ցանկություն ունեի հեռանալ այս աշխարհից, միանալ գնացող սրբազան մարդկանց։ Հիմա, հիմա չեմ ցանկանում, քանզի «Մատյանն» է ինձ կյանքի կոչում։ Հայր Անանիան չգիտեր նրա մասին։ Միայն դու գիտես, տեր, միայն դու, օգնական լեր, ավարտեմ իմ «Մատյանը», հետո... Հետո կհեշտանա մեռնելը։ Հետո էլ

մեռնել չի լինի, եթե կարողանամ այն ավարտել, էլ ի՞նչ մահ։ «Մատյանը» չի թողնի մեռնել։ Սիրելի ուսուցչապետ, գոնե հիմա իմացիր, երբ մի քանի տասնյակ էջ արդեն հանձնել եմ թղթին»։

Հետո վեր կացավ և սեղանից վերցրեց մի տրցակ գրված մագաղաթ։ Նայում, կարդում էր հիացմունքով։ «Աստվա՜ծ իմ, տուր ինձ այնքան կյանք, որ ավարտեմ իմ «Մատյանը», միայն այդքան, ոչինչ ավելի։ «Մատյանն» այնպիսին է, որ ես նախանձում եմ ինձ, ինքս ինձ, տե՜ր»...

***

Ոսկի աշուն էր։ Բերք ու բարիքի, նշանդրեքների ու հարսանիքների ժամանակ։ Այգիներում ու արտերում մարդաշատ էր։ Շինականները գիշերում էին հոլիկներում։ Պահը թանկ արժեր։ Կորցրած պահը ցորենի, մրգի, բերքի ու բարիքի կորուստ էր նշանակում։ Առավոտյան մութլուսին մարդկանց հետ արթնանում էր նաև երգը, որ ոլորվում էր այգիներում, կալերում, հարսանիքներում։ Մեղմ ժպտում էր մարդկանց ունկնդիր աշնան հոգնած արևը։ Երկինքը մաքուր էր կապույտ աչքի պես։ Լիճը կապույտ էր կապույտ աչքի պես։ Երկինքն ու լիճը հեռու հորիզոնում ձուլվում էին իրար, դառնալով մի մարմին։ Եվ կապույտը հաղթական արշավի մեջ էր։ Եվ լեռները, որ շրջանաձև պար էին բռնել և բոլորել լիճը, կապույտի արտացոլանքից կապտել էին և միացել երկնքին ու ջրին։ Աշունը դեղին, կարմիր, նարնջի գույներով էր ներկել ծառերը։ Կանաչն ամաչկոտ ճիգեր էր անում գետերի կամ աղբյուրների ափերին մի փոքրիկ տարածք գրավելու և ապրելու համար։ Ամենամեծ աշխուժությունը կալերում էր, ուր եզները քաշում էին մանուկներով լեցուն կամը։ Մի տեղ հարդը քամուն էին տալիս, ցորենը զտում և շեղջեր անում, մի այլ տեղ շինականը թեքված էր գործին, օրհներգում էր երկնային տիրոջն և իր օգնական ու եղբայր եզներին։

Քաշիր, եզո՛, քաշիր, ախպե՛ր,
Կարգին բանենք, լիանանք,
Որ ձմռանը դուք առատ կեր,
Մենք՝ առատ հաց ունենանք...

Գրիգորը քայլում էր գլխահակ։ Մարդկային ձայները, աշխատանքի եռուզեռը, բարի արեգակը դուրս էին կանչել տաղերգուին։ Աշնանային փափուկ բնությունը ինչ-որ փայփայող, մխիթարող ու մտերմիկ շունչ ուներ և սփոփում էր նրան։ Մի քանի օր առաջ էին թաղել այնքան թանկ ու հարազատ Անանիա Նարեկացուն, որի կորուստը համազոր էր հոր կորստին։ Թաղեցին մեծ շուքով, վաստակին ու մեծությանը վայել պատիվներով. Սուրբ Աստվածածին և Սուրբ Սանդուխտ եկեղեցիներէ արևմտյան ժամատան մեջ, Գրիգորի եղբոր՝ Հովհաննեսի շիրմի կողքին։ Այլևս անկարող էր մնալ, անկարող էր տեղավորվել վանքի գաղջ և նեղլիկ խցերում։ Աստվածածին աշխարհը՝ իր գույներով, ունկերը շոյող աղմուկներով սփոփում էր նրա ցաված սիրտը, զրպարտություններից ցաված նրա ունկերը։ Մարդկանց դիվային արարքները աղտոտում էին լույսն արեգական և մթնեցնում աչքերը։ Ամբողջ օրը միտքն զբաղված էր որոնելու և գտնելու այն ուղիները, որոնք իրեն մոտեցնեին երկնայինին՝ երկրային կնճռոտ հարցերը լուծելու համար։ Աշխարհը խարխափում է անորոշության և անբուժելի ախտերի մեջ, մարդիկ թաղվում են աններելի մեղքերի մեջ, իսկ երկինքն անհաղորդ է երկրի վիճակին և աստվածային բարձունքից սառն անտարբերությամբ դիտում է մարդկային հոգիների ու աշխարհի կործանումը։ Հարկավոր է խոսք խոսել աստծո հետ, ներկայացնել աշխարհի վիճակը և խնդրել երկնայինի օգնությունը, այլապես և աշխարհն է ափսոս, և աստվածային այն հսկայական ջանքը, որ ստեղծել է այս հրաշքը։

Կալվորների երգին խառնվել էին մանուկների կանչերն ու ծիծաղը։ Թե հոգեկան ինչ բավականություն էր կամին նստելն ու հնձած ցորենի վրա պտտվելը, Գրիգորը հիշում էր երանությամբ։ Նրա մեջ արթնացան մանկության օրերի երջանիկ պատկերները։ Կամը քշելու ցանկությունն այնքան մեծ էր, որ քիչ էր մնում շինականների ձեռքից վերցներ, չէ՜, ուղղակի խլեր ճիպոտը և թռչեր կամի վրա, երգով ոգևորեր ու ճիպոտով բզեր եզներին՝ մանկութ օրերի հանգույն։ Արդեն երևում էին հարկահանները, որոնք հենց տեղում ցորենաչափերով վերցնում էին ցորենն ու գարին։ Իհարկե, նման դեպքում երգն ու ուրախությունը լքում էին կալվորներին, իսկ լացի ու վայնասունի մեջ խլանում էին երգի ու հրճվանքի նվաստ ձայները։ Հեռվում աղմուկ, քաշքշուկ և վեճ կար։ Հարկահանները խոշոր հարկի դիմաց, որ անկարող էր եղել վճարել շինականը, արձակել և քշում էին նրա եզներին։ Աղաչանք-պաղատանքը ոչ մի արդյունք չէր տվել, և հուսահատության մատնված շինականը եղանը քաշել ու հարձակվել էր հարկահանի վրա, ցանկալով պատժել նրա անգութ արարքը։ Բախումը միայն պատահականորեն չէր ավարտվել ողբերգությամբ։ Կամը եզները փախցրել էին շինականի ոտքերի տակից, և շինականը բերանքսիվայր փռվել էր գետնին։ Վախեցած հարկահանը հրամայել էր ուղեկցող հսկիչներին՝ պատժել ըմբոստին։ Եվ նրանք անգթորեն ճիպոտահարում էին ընտանիքի հորը։ Կինն ու երեխաները այնպիսի լաց ու կական էին բարձրացրել, որ անկարելի էր սառնասրտորեն լսել։

— Արձակեցե՛ք շինականին,— ասաց Գրիգորը հարկահանին։

— Նա ցանկանում էր ինձ սպանել...— փնչացրեց հարկահանը։

— Նա քեզ նույնիսկ ձեռք չի տվել, իսկ դու նրան տանջամահ ես անում կնոջ և երեխաների առջև։

— Դու ի՞նչ ես բարբառում, աստծո մարդ, ինչո՞ւ ես պաշտպանում այս կեղտոտ շինականին, առանց այն էլ նրանք ոչ աստծո սպասավորներից են երկնչում, ոչ աշխարհիկ պետերից...

— Իսկ դու չգիտես ի՞նչ պատճառով, աշխարհիկ պետ։ Դու չկատարած հանցանքի համար նրան գանահարեցիր, դրանից առաջ նրանից խլեցիր եզները... Պարզ չէ՞, որ նա հետայսու քո կյանքի ու կայքի թշնամին է։ Ինչո՞ւ չես արձակում տանջահար շինականին։ Չէ որ քո հանցագործ գործողության պատճառով շինականները կարող են ընդվզել։ Երբ լցվում է համբերության գավաթը՝ ապստամբությունը պարտադրվում է...

Ինչպես երևում է հարկահանի համբերության գավաթը վաղուց արդեն լցվել էր, չարությամբ լեցուն աչքերը շանթ ու բոց էին արձակում։ Նա հևալով մոտեցավ Գրիգորին։ Կանգնել ու փնչացնում էր։

— Չլինի՞ նոր Սմբատ Զարեհավանցի է լույս ընկել, հը՞... Դու աստծուն պահապան կանգնիր, աստծո՛ւն։ Իսկ շինականին ինքը՝ տերը կպաշտպանի։ Իսկ հիմա, չգիտեմ ո՞վ ես դու, չքվիր այստեղից... Նա իր հընգեկը չի տվել, հընգե՛կը... Իսկ դու, ապստամբությո՛ւն...

— Քո ապօրինի արարքների համար դու պատասխան կտաս։ Ողջ գյուղը գործը թողած նայում է քո անմարդկային արարքներին, ես կդիմեմ արքայական տանն Արծրունյաց, դու նրանց էլ պատասխան կտաս...

Լավ կլիներ չասվեր վերջին նախադասությունը, քանզի դա ոչ միայն տպավորություն չթողեց հարկահանի վրա, այլ ընդունվեց հոհոցով։ Միջաղում էր փորը բռնած, թուլանալու աստիճան ուրախացել էր.

— Ո՞ւմ կդիմես, ո՞ւմ... Դիմիր աստծուն, ուրիշ ոչ ոքի։ Քո գործը երկնայինի հետ է, նրան էլ գանգատվիր։ Իսկ Արծրունյաց արքայական տան հետ մենք ինքներս գլուխ կհանենք։ Հարկը գիտե՞ս ում համար եմ հավաքում։ Արծրունյաց արքայական տան համար, այս Նարեկի վանքի ամորձատված միտբանության համար, քեզ համար, ինձ համար... Դե գնա՛, գնա՛, դիմիր, բողոքիր, անիծիր, տեսնեմ ի՞նչ ես անելու...

Սառել, մնացել էր։ Պատասխան խոսք չուներ։ Ցավոք, անտաշ ու գռեհիկ հարկահանը ճիշտ էր։ «Ի՞նչ գործ ունեիր նրա հետ։ Խիղճդ թույլ չտվեց անտարբեր անցնելու չարության և անգթության կողքով։ Սակայն այս պարագայում պարզվեց, որ խիղճը էժա՞ն, էժա՞ն ապրանք է։ Հարկահանը մանավանդ խղճի հետ առնչվել չի կարող։ Բավական է, որ նա խղճով առաջնորդվի և կրախվի պաշտոնեական պարտականության հրամայող անխղճությանը և կշպրտվի աշխատանքից դուրս։ Չէ՛, չէ՛, հարկահանը կատարում է իր պարտականությունը, ուրիշ ոչինչ... Շինականը, սակայն, մե՞ղք է... Գոնե հետը մի քիչ մարդավարի վարվեն...»։

Այնուամենայնիվ, շինականին արձակեցին։ Ծեծված ու արյունլվա, անօգնական՝ նա նստեց ցորենի խրձին և գլուխն ափերի մեջ արտասվում էր։ Նրա հետ և կինը։ Միացան նաև երեխաները, որոնք լալիս էին ոչ միայն իրենց հոր ծեծվելու և թշվառ վիճակի համար, այլև գովում ու մղկտում էին եզների՝ Նախշունի և Արթունի կորուստը։ Երեխաների լացը արթնացրեց նրանց հորն ու վերստին նետեց հարկահանի վրա։ Եղանը կայծակի արագությամբ բարձրացավ ու իջավ հարկահանի գլխին, և նա տապալվեց գետնին, գլխից արյուն էր հոսում, սակայն հեշտ ուշքի եկավ։ Բարեբախտաբար, շինականը եղանի տափակ կողմով էր հարվածել։ Նրա երկաթյա սուր մատները գործի չէին դրվել, այլապես մահն անխուսափելի կլիներ։ Շինականին կալանավորեցին ու տարան։ Ոչնչով օգնել այլևս հնարավոր չէր, և Գրիգորը թողեց կալերն ու քայլեց բարակած գետակի կողմը։

Աշնանային գետակն այնքան մաքուր էր և զուլալ, որ նրա մեջ պարզ երևում էր ձկների խայտանքը։ Գետակը սնվում էր աղբյուրների սառն ջրով, և նրա հիմնական բնակիչները կարմրախայտերն էին, որ նրբագեղորեն լողում էին ալիքներն ի վար, ալիքներն ի վեր, կապույտ մեջքերը և կարմիր խալազարդ կողերը ցուցադրելով արևի ճառագայթներին։ Ոչ մի կերպ չէր հաջողվում չանթել ձկներին։ Խաղում էր նրանց հետ, որ մոռանար կալերի տեսարանը։ Եվ խաղը, թեև հրապուրիչ, սակայն չէր կարողանում նույնիսկ մի կարճ պահ ցրել, մոռացնել կալերում կատարված ողբերգությունը։ Իսկ ձկներն իրոք շատ գեղեցիկ էին, ճկուն, ճարպիկ, շարաճճի։ Եվ շատ էին՝ վտառներով։ Մի քանի անգամ կարծես հաջողվեց բռնել, սակայն, ճապուկ ու լպրծուն, նրանք հեշտորեն դուրս էին պրծնում մատների արանքներից։ Չէ՛, չի կարող մոռանալ ծեծված և շղթայված շինականին։ Չի կարող մոռանալ արտասվող կնոջն ու բոկոտն մանչուկների լացն ու նրանց գովքը եզների մասին։ «Ի՞նչ անեմ, գնամ կալերը, սակայն ինչո՞վ կարող եմ թեթևացնել մարդկանց ցավերը, ինչո՞վ և ինչպե՞ս կարող եմ օգնել նրանց։ Ի՞նչ արժեք ունեն խոսքը, հորդորը, երբ հաշտ ու համատեղ են գործում ուժն ու իրավունքը։ Չէ, ես այնտեղ անելիք չունեմ, առավել ևս անելիք չունեմ այստեղ... Ո՞վ է տեսել, որ մարդ կարողանա մաքուր ջրում ձուկ որսալ։ Ձուկ որսալու համար հարկավոր է նախ ջուրը պղտորել...»։ Հատակի տիղմն ու ավազը խառնեց, խառնշկոտեց, պղտորեց և ձեռքը վերստին մտցրեց ջուրը։ Ձուկն առանց դժվարության բռնվեց։ Կուրացած ու չտեսնող աչքերով գեղեցկու-

հին թպրտում, գալարվում էր պինդ սեղմված ափի մեջ՝ բերանը բաց ու խուփ անելով, շնչահեղձ լինելով։ Բաց թողեց ձկանը։ «Գնա՛, մի՛ շարշարվիր, իզուր էլ կեղտոտեցի քո մաքուր աշխարհը։ Իզուր էլ վախեցրի, անհանգստացրի քեզ։ Մարդ արարածը անսխալ գիտի, որ ձուկը բռնելու համար հարկավոր է պղտորել ջուրը։ Պղտոր միջավայրում գործելն ավելի հեշտ է և արդյունավետ։ Ես պետք է նորից վերադառնամ կալերը։ Չգիտեմ, ինչո՞վ կարող եմ օգնել շինականներին, սակայն նրանց կողքին կանգնելը մտնում է իմ պարտականությունների մեջ։ Գնամ։ Ախր, կալն ու կութը չվերջացած, հարկահանները չափ ու կշեռքով ոչ թե կիսում են բերքն ու բարիքը, այլ ոչինչ չեն թողնում, օրը ցերեկով կողոպտում են շինականին։ Տասը տասնհինգ տեսակի հարկ են ուզում։ Գոնե տարին բերքառատ լիներ։ Էլ երաշտ, էլ կարկուտ, էլ հիվանդություն, էլ մորեխ։ Եվ հետո հարկերը։ Աստծո պարտքը՝ աստծուն։ Հայրենիքինը՝ հայրենիքին։ Իշխանինը՝ իշխանին։ Վերջում թե բան մնաց՝ շինականին։ Իսկ եթե չմնաց, սովը, մերկությունը՝ շինականին։ Չէ, գնամ կալերը։ Ջուկ որսալու համար հարկավոր է ջուրը պղտորել... կուրացնել, շշմեցնել...»։

... —Խնդրեցեք հարկահանին, թող վաղը գա հարկերը տանելու...

— Ի՞նչ օգուտ, հայր սուրբ, այսօր կամ վաղը, մեր հարկերը դրանից չեն թեթևանա, միևնույն է, մեր հարկերի հարկատուն մենք ենք...

— Ժամանակ կշահեք, եթե կարող եք, բերքի մի մասը թաքցրեք... Գիտե՞ք, որ կալված պատրաստի բերքից են վերցնում հարկերը...

— Որտե՞ղ թաքցնենք...

— Այդ արդեն ձեր հոգսն է, ճարեցեք աչքից հեռու, ապահով տեղեր։ Ծոծրակներն են քորում։ Ո՞ւր տանեն, ի՞նչ անեն։

— Լավ ես ասում, հայր սուրբ։

Սակայն հարկահանները չհեռացան գյուղից։ Մնացին։ Ավելին, ուտելիք և գինի պահանջեցին։ Քեֆի նստեցին ու ճրագվառոցին արդեն հարբած ու ուժասպառ քնել էին։ Շինականները կալված ցորենի մի մասը կարողացան թաքցնել։ Փրկվեց ահագին ցորեն։ Հաջորդ օրն անցավ առանց պատահարների։ Չկասկածեցին, որ պղտորվել էր ջուրը։ Չկասկածեցին, որ բավականաչափ ձուկ էր բռնվել։ Հարկահանությունը շարունակվում էր։

Հետո սարսափելի լուրեր լսվեցին Մանակերտից։ Հարկահանը ստիպել էր, որ պարտքի դիմաց կամին լծեն շինականին, նրա տղային ու կնոջը։ Ճիպոտելով մարդկանց՝ քաշել էին տվել կամը։ Կինն ընկել ու չէր բարձրացել։ Ամեն ինչ կորցրած շինականը, որից ուժով խլել էին նաև մարդկային ու ընտանեկան պատիվը՝ կնոջը լծել կամին, սպանել էր հարկահանին։ Պատժիչները պարտքի տակ չէին մնացել, սպանել էին

շինականին։ Ողբերգությունը սակայն այսքանով չէր վերջացել. որբացել էին շինականի չորս մանչուկները։ Գրիգորը սրտի ցավով էր ունկնդրում այս պատմությունը։ «Ես միշտ սիրել եմ մեր աշունը, երբ բերքն ու բարիքը լցնում են ամբարներն ու մառանները, երբ հնձաններում քամում են գինին, երբ արևի տակ չորանում են դդումներն ու տաքդեղները, չիրն ու չամիչը, մառաններում համովանում են մրգերի կախանները, երբ թընդում են հարսանիքների երգն ու պարը։ Սակայն աշունն ունի նաև ողբերգություններ, որոնք հասունանում են բերք ու բարիքի հետ միասին և աշնանը լիության հետ մեկտեղ մտնում շինականների տները, քանզի հարկերն ու պարտքերը մարելու ժամանակը աշունն է, այսինքն, օրինականացված կողոպուտի ծանր շրջանը։ Ինչո՞ւ, ինչո՞ւ են մարդիկ այսքան դաժանացել, դարձել ինչքի գերին ու ստրուկը և իրենց նմաններին դրժբախտացնողները, նրանց կենաց լույսը հանգցնողները, նրանց օջախները քանդողները։ Ինչո՞ւ։ Ո՞ւմ մեղադրել, ո՞ւմ արդարացնել, չգիտեմ։ Կյանքը «ինչուների» մի շղթա է։ Իսկ «ինչուները» պատասխան չունեն, և շղթան գնալով երկարում է, երկարում, սպառնալով շղթայել մարդկությունն ու աշխարհը։ Ասում են՝ աշխարհի կործանումը կանխագուշակված է, միայն հայտնի չէ ժամանակը, օրհասի օրը... Սխալ է, սխալ է։ Կործանումը չի գալու աղետի, ոչնչացման, կործանման ձևով։ Կործանումը սկսվել է աշխարհի ծնունդի հետ միաժամանակ... Յուրաքանչյուր ողբերգություն, որ ապրում է մարդ արարածը, յուրաքանչյուր ողբերգություն աստծո, մարդու, մարդկության, բնության դեմ, ամեն մի անմարդկային արարք՝ կործանումն է աշխարհի և մարդկության, և հակառակը։ Ամեն օր մեռնում է, ծնվում, հնանում ու նորոգվում աշխարհը և գնալով փոխվում է լավի ու վատի, վերածնվողի և կործանողի հարաբերությունը, հօգուտ վերջինների։ Ի՞նչ կլիներ աշխարհի վիճակը, եթե չլիներ մեծագույն կարգավորիչը՝ աստված, եթե չլիներ աստծո ահը։ «Բայց ես վեճ ունեմ քեզ հետ, ով անվիճելի, անքննելի, անճառելի երկնային։ Աշխարհն արարելիս դու ինչո՞ւ ես սխալներ, վրիպումներ թույլ տվել։ Ինչո՞ւ ես մարդկանց միջև խորթություն սերմանել՝ գույների հակադրումով. սևամորթ, դեղնամորթ և սպիտակամորթ, ինչո՞ւ... Գույների տարբերությունը ազգերի ու մարդկանց միջև սերմանել է թշնամանք և օտարացում, երկնայի՞ն։ Դա քիչ էր կարծես, քո ներողամտությունն ու հանդուրժողականությունը պատճառ են դարձել, որ երկնային տիրույթի միաստվածությունը խախտվի, այլ շաստվածություններ կանգնեն քո կողքին և վիճարկեն երկնային գահի նկատմամբ իրենց հավակնությունը։ Տեր մե՛ր, եզակի և միակ, հանդուրժողականությունը խարխլում է քո աստվածային հեղինակությունը։ Աստծուդ կողքին կանգնած Բուդդան և Մուհամմեդը ձրգ-

տում են ոչ թե երկնային տիրույթի վերաբաժանման, այլ տիեզերակալության՝ գահերի բռնի հափշտակման միջոցով։ Եվ երկնայինների այս ներհակությունը դառնում է կռիվ հավատի համար։ Եվ հանուն հավատի ու աստծո՝ հեղվում է ժողովրդի և մարդկության արյունը, որ կարմիր գույն ունի անկախ մաշկի գույնից ու հավատից։ Սա էլ քիչ էր կարծես, դու աչք փակեցիր աղանդների հանդեպ, որ շատացան, ինչպես սունկերը անձրևից հետո, որոնք թեև գուրգուրում են քո անունը, սակայն կրռվում են քո էության դեմ։ Այս ամենը խորթացնում և օտարացնում են ժողովուրդներին, ազգերին, մարդկանց... Հանուն հավատի զոհվելը, եթե ընդունելի և խնկելի է աստվածներին, ապա աղետ է ազգերին և ժողովուրդներին։ Տեր ամենազոր, անսա իմ ձայնին. մեր հավատը՝ ամենամարդասիրականը, որը սեր, եղբայրություն և խաղաղություն է քարոզում, խեղճանում, կորցնում է իր իսկական էությունը և զենք դառնում մարդկանց ձեռքին։ Իսկ ներհակ հավատներն ու աղանդները իրենց հերթին երկնային գահերից և երկրային տարածքներից իրենց բաժինն են ուզում, այս անգամ առանց աղոթքի, այլ արյամբ, և աշխարհը վերածում դժոխքի։ Ամենազոր և բարեգութ, փոխիր հավատիդ ուղղությունը, արա այնպես, որ մարդիկ հարազատանան, ոչ օտարանան։ Մոտենան, ոչ խորթանան։ Բարեկամանան, ոչ թշնամանան։ Սիրեն, ոչ ատեն։ Այդպես վարվիր, տե՛ր իմ, խնդրո՛ւմ եմ... Եվ ապա, սատարիր այն ազգերին, որ փոքր ածու են, որոնց միակ մեղքը սակավաթիվ լինելն է, սակավարյուն լինելը, երբ բռնակալ ազգերի կարծիքով՝ արյան սակավությունը հիվանդություն է, իսկ գերառատությունը՝ առողջություն։ Գտիր այն հնարքը, որ տուժած, զրկված, անիրավված ազգերն ու ժողովուրդները ստանան կորուստների արդար փոխհատուցումը, բարոյական ու նյութական համարժեքը, ապրելու վստահությունը, գոյատևելու իրավունքը։ Փոքրաքանակ լինելը մի՛ համարիր իրավազրկություն, ոչ էլ մեծաքանակ լինելը՝ իրավունք։ Սակավարյունությունը հյուծում է ազգը, արյան առատությունը՝ խեղդում։ Ազգի մեծությունը չափվում է ոչ միայն բազմանալու ընդունակությամբ, այլև անհատների անմահության հետ բարեկամանալու հանճարով։ Ոչ թե կործանելու, այլ ստեղծելու զորությամբ։ Ոչ թե ուրիշ երկրներ նվաճելու ուժով, այլ սեփական հայրենիքը պաշտպանելու արժանապատվությամբ և քաջությամբ։ Ոչ թե ուրիշի ազատությունը խեղդելու և շղթայելու բռնությամբ, այլ հանուն ազատության ապրելու և մեռնելու աներկբա կամքով։ Մի՛ նեղանա, քեզ սովորեցնելու ես ոչ հնարավորություն ունեմ, ոչ գիտելիքներ, իմ խնդիրքները համարիր իմ մարդկային իրավունքը, որի արդարացումը իմ մարդ լինելու, քո պատկերն ունենալու և հողեղեն աշխարհի տերը լինելու ճշմարտությունն է։

Վերադառնամ այսօրվա դեպքերին։ Ուժեղը թույլին հոշոտում է, տե՛ր, ի՞նչ պատասխան ենք տալու հոշոտվողին։ Մեղավորն արդարին բարոյականություն է քարոզում, տե՛ր, ի՞նչ պատասխան ենք տալու ցեխակոլոլ բարոյականությանը։ Ավազակը ազնվության քղամիդ է հագել, տե՛ր, ի՞նչ պատասխան ենք տալու արժեզրկված ազնվությանը։ Բռնակալը ազատության գաղափարն է գուրգուրելով շահատակում, տե՛ր, ի՞նչ պատասխան ենք տալու բռնադատված ազատությանը։ Անառակը սուրբ կուսանոցն է դարձրել անառակատուն, տե՛ր, ինչ պատասխան ենք տալու ոտնահարված սրբությանը։ Մի՛ նեղանա, ով բարեգութ, քեզ մեղադրելը թեկուզ սրբապղծություն է, բայց և՛ հեշտ է, և՛ անհնար։ Դու ես երկնային և երկրային աշխարհների տիրակալը, ուրեմն, ընդունիր աշխարհի մեղքերի գոյությունը որպես քո գթասրտության և ներողամտության հետևանք։ Միաժամանակ, դու ես ամենաարդարը, քանզի մեծ է քո հավատը մարդ արարածի նկատմամբ, որին տեղապահդ ես կարգել երկրում։ Իսկ նա ճարճատում է ազգիս անունից, նրա հոգսերից ու ցավերից։ Նա հեղինակողն է անարդարությունների, անաստվածությունների և նա է, որ իրավունք է նվաճել լինել միջնորդ քո և ժողովրդի միջև։ Եվ քանի որ անմաքուր խղճով և աղտոտ բերանով է գիմում երկնավորիդ, դու, մեծ բարեգութ, զանց ես առնում նրա միջնորդությունը, որը միջնորդություն էլ չէ, այլ անաստվածությունը աստվածությամբ քավելու, կոծկելու ցանկություն, միտումնավորություն անընդունելի՝ աստվածությանդ... Քեզ առնչվելիս, տեր իմ, հարկավոր է ունենալ քո կատարելությունը, քո վեհանձնությունը։ Իսկ քեզ նմանվելու համար դեռևս անկատար է մարդ արարածը։ Մարդը շատ է հեռու մարդուց, էլ ո՞ւր մնաց աստված...

ԱՐԱՐՈՒՄ

Ոգևորությունն անսահման է, ներշնչանքն՝ անհատնելի։ Ժամանակը կանգ է առել՝ գիշեր-ցերեկ չկա։ Քուն ու արթնություն խառնվել են իրար։ Քնելը նման է արթնության, արթնությունը նման չէ քնի։ «Մատյանը» բռնել է հոգուց, քաշում է անկողնուց, ճաշի և ընթրիքի սեղաններից։ «Մատյանը» հրամայում է։ Չի տեսել նման խանդավառություն, որ ամբողջովին կլաներ իր էությունը։ Մագաղաթի առջև բացվում է հոգին։ Իսկ հոգում ցավի ու մեղքի, խղճի ու զղջման, աղաչանքի ու ընդվզման անչափելի կուտակումներ կան։ Մերթ հեծեծում է, մերթ լալիս, մերթ գետնատարած խնդրում է ու աղաչում, մերթ մեղքն է խոստովանում ու ներում խնդրում, մերթ նահանջում է և խռովում, մերթ զայրանում է և

ցասման մեջ՝ ահագնանում, մերթ կոծում է և սգում կործանվող հոգու համար, մերթ հրճվում է ու ցնծում՝ փրկվող հոգու համար, մե՛րթ, մե՛րթ... Աշխարհի մեղքն ու ներումը, լացն ու հրճվանքը, աշխարհի կործանվածն ու փրկվածը, գտածն ու կորցրածը, այլանդակն ու կատարյալը ասես դրել են աստվածային կշեռքի նժարների վրա, և դատավորն ինքն է, վարդապետ և քնարերգու Գրիգոր Նարեկացին։ Իրարամերժ, հոգի ծվատող ու թևավորող զգացմունքների հորձանուտում կանգնած է նա և մարդկանց սեր ու գութ, խիղճ ու ազնվություն է բաժանում, և յուրաքանչյուր անձ կարող է գտնել իր հոգու փրկությունը, մխիթարությունը, իր բաժին ազնվությունը, իր կատարելության տենչանքը։ «Ամեն ոք իր մատյանն ունի իմ «Մատյանում»։ Ամենքինն է իմ «Մատյանը»։ Նրանցը, ովքեր կորցրել են իրենց աստծուն։ Ովքեր մերժել են իրենց աստծուն։ Ովքեր կորցրել են իրենց հավատը։ Ովքեր մերժել են իրենց հավատը։ Ովքեր չեն հավատում ոչ հրեշտակին, ոչ սատանային։ Ում որ կյանքը նետել է շավղից դուրս։ Հակամարտությունը, ինքնամարտությունը, ինքնաբզկտումը, ինքնամեծարումը «Մատյանը» դարձնում են արյան նման խաղացկուն, արյան նման կենդանի, արյան նման անհրաժեշտ, հոգին ապրեցնելու և հոգին մաքրելու համար։ Աստծո պարտապաններն ենք մենք, նրա ամենահանճարեղ ստեղծագործությունը, սակայն տերը երկնային, անճառելին, անքննելին, անքննադատելին երբեմն մոռանում կամ թերանում է և երես թեքում մեր մեղքերից ու արատներից։ Մեր պարտականությունները հաճախ մոռանում ենք և մենք։ Եվ աստվածամերժությունն է թափառում աշխարհում։ Մարդիկ մոռանում են աստծուն, աստված՝ մարդկանց։ Տեր, մեղավոր իմ բերանով հանդգնում եմ քեզ կոչել արթնության։ Արթնացիր, տեր։ Եվ ներդաշն դարձրու քո և մարդկանց հարաբերությունները։ Բուժիր մարդկանց ցավերը, բալասանիր նրանց հիվանդությունները, ապաքինիր նրանց հոգևոր և մարմնական ախտերից։ Աշխատիր, տքնիր, ջանա մարդկանց համար, միայն մարդկանց համար։ Նրանք քո նմաններն են իրենց պատկերով և քո գլուխգործոցը՝ աշխարհաստեղծման մեջ։ Կատարիր քո աստվածային պարտքը։ Ով երկնային, որքան մեծ են ու անսահման քո իրավունքները, այնքան էլ մեծ են քո պարտականությունները։ Գործիր այնպես, որ աշխարհը մարդկանց համար դառնա հայրենիք և սրբություն, որ մարդն արժանի դառնա մարդ հասկացությանն ու կոչմանը։ Այլապես, «միապես մատնե կորստյան և զղջումն ուժգնապես, և մեղանչելն մոլեգնաբար»։ Այո՛, տե՛ր իմ, որքան մեղանչում եմ մոլեգնաբար, նույնքան էլ ուժգնապես զղջում եմ կամ հակառակը։ Այստեղ է ողբերգությունը, երբ մեղանչելիս, թե զղջալիս միշտ զգում ես հավասարապես կորստյան մատնված։ Հանիր, հանիր մեզ այս վիճակից և այնպես վարվիր, որ ներելով կարողանաս մեզ փրկել, որ միանանք քեզ, բնակվենք քո մեջ։ Եվ այսպես մեղանչում ու զղջում շարունակաբար հաջորդում են իրար, և նրանց արանքում ճզմվում է մարդ արարածը։ Հարկավոր է, որ մարդը բնակվի աստծո և աստված մարդու մեջ»։

Գրվում է «Մատյանը»։ Եվ սպառվել է մոմը կանթեղի մեջ։ Եվ սպառվել է արևը՝ արևմուտքում։ Եվ հունական Պառնասը տեղափոխվել է Նարեկ, և լազուր երկնքում անընդհատ, անկանգ սավառնում են մուսաները, որ կանացի պատկեր ունեն՝ թռչնի թևերով պսակված։ Նրանք են, որ չեն թողնում Գրիգորը աչքերը գոցի, հանգստանա, կերակրի իր հյուծվող մարմինը, սրբի աչքերը վարագուրող հոգնության շղարշը, մի պահ շնչի խուցերի մեջ չբանտարկված դրսի մաքուր օդը։ Մուսաները սիրահարված են նրան։ Իսկ ում սիրում են մուսաները, նա դառնում է աստվածաշնորհ, դառնում է մեծ։ «Մատյանի» թերթերը դարսվում են միմյանց վրա։ «Մատյանը» զորանում է։ Վերադիրների, մակդիրների, փոխաբերությունների, հարաստությունների, դիմառնությունների հորձանքը, ոճական այլայլումները, համանիշային ու հոմանիշային կուտակումները, տարափոխությունների և պեսպեսությունների հորձանապտույտները, ոճական զարդեղենի այնպիսի հանճարեղ զգեստ են «Մատյանին», որ սպասող ընթերցողի մեջ առաջացնեն այնպիսի մի հաճելի գլխապտույտ, ինչպես լինում է երիտասարդ գինին ըմպելուց հետո։

«Մատյանը» շուտով պետք է ավարտվեր։ Արդյոք զգո՞ւմ էր Գրիգորը, որ «Մատյանի» ավարտումով պետք է ավարտվեր իր կյանքը մոմի նման, որ վերջին տարիներին բազմամոմ ջահի ուժգնությամբ էր վառվել, սպառելով ինքն իրեն։ Սպառվում էր, սակայն ոչ մոմի նման, այլ արևի, որ սպառում չունի, մահ չունի, այլ վերածնվում է ամեն առավոտ լուսո...

Գրիչը դրեց ներքև, մտածում էր։ «Հարկավոր է բարձրացնել մարդուն։ Մարդը առաքինությամբ և կատարելությամբ պետք է, պարտավոր է մոտենալ աստծուն։ Բայց ինչպե՞ս, մինչև աստծուն հասնելը՝ երկար, շա՜տ երկար է ճանապարհը, մեղքերից ազատվելու և մաքրվելու ճանապարհը վերջ չունի։ Մարդու էությունն այնպիսին է, որ նրա կյանքը հյուսվում է մեղքերից, զգացումից և մեղքերի քավումից. անընդհատ, անընդմեջ մարդը քայլում է, անցնում այս ճանապարհը։ Ուրեմն, մարդու կատարելությունը, որ ցանկանում է և տերը երկնային, և ինքը մարդը, ոչ այլ ինչ է, քան անմեղժանակության և անմեղության հաղթանակը մարդու հոգևոր աշխարհում, նրա էության մեջ։ Մարդը և հզոր է, և անօգնական։ Արժանի և կարեկցանքի, և գթասրտության։ Հզոր է, երբ պայքարում է ուրիշի մեղքերի դեմ, անզոր է սեփական մեղքերը քավելու և

զղջումը հոգու փրկություն համարելու խնդրում։ Պետք է հասցնել նրա գիտակցությանը, որ առաքինությունը սրբացնում և կատարելությունը գեղեցկացնում է մարդուն, որ մեկտեղված գեղեցկությունն ու կատարելությունը ի զորու են աստվածության դռները բախելու։ Մարդը տերն է աշխարհի։ Մարդը նաև իր հայրենիքի տերն է։ Հայրենիքը անվտանգ և գեղեցիկ պահելու համար մարդը պարտավոր է նաև զինվոր լինել, քանզի զինվորի մեջ միավորվում են երկրի և տերը, և ծառան, և փրկարարը։ Կատարյալ լինել նշանակում է ապրել նախ աշխարհի, նոր միայն իր համար։ Սիրիր մարդուն, քո նմանին, զի նա քո եղբայրն է։ Մի թողնի մեկնակ՝ հողմերի, փոթորկի ու մահվան դեմ հանդիման։ Աստված երկիրն արարեց այնպիսի անթերի ներդաշնակությամբ, որ մարդը գերադասի, ընտրի արդար, անսխալ, անխարդախ գոյությունը։ Արարիր, ասաց, ծառեր տնկիր, խոպանը այգու վերածիր, ջուր տուր անապատին, աղբյուր շինիր ծարավի, կամուրջ կապիր ճամփորդի, երգեր ու տաղեր հեղինակիր սրտերը ջերմացնելու համար։ Երկրի գաղտնիքները վերծանիր, որ անսայթաք լինի կյանքդ։ Դրախտը հետամահու մի թողնի, այլ կառուցիր կյանքի համար։ Մի քանդիր, մի ավերի, մի ամայացնի։ Մի շամփուր խորոված համար հարևանիդ եզը մի մորթիր։ Օջախ վառելու համար ամբողջ ծառը մի կտրիր։ Տաշած քարի համար ուրիշի տունը մի քանդիր։ Հարևանիդ օջախն անկրակ մի թողնի՝ անթեղ տուր։ Ի վերջո, մի սպանիր, մեռցնելը անմարդկային արարք է՝ հակաբանական և հակաբնական։ Ընդհակառակը, հարատև դարձրու կյանքը, շատացրու օրոցքների թիվը։ Մի շնանար։ Սիրով մաքրվիր, ոչ թե աղտոտվիր։ Մի խաբիր, որ քո գոյությանը հավատան, մի շողոքորթիր, որ անկեղծությունը չվիրավորվի։ Ամուր կառչիր հավատիդ, առանց նրա իմաստազրկվում է կյանքը։ Աստված ունեցիր, քանզի պարապ մնացած նրա տեղը կգրավի սատանան։ Ապրիր այսպես և աստված կունենաս, և աստված կբնակվի քո մեջ»։

Եվ շառաչեց «Մատյանը», ջրվեժի ուժգնությամբ նետվելով մարդկային հոգու խորխորատները։ Եվ ընդվզեց «Մատյանը» մարդկային հոգու լարձունքներից երկինք նետվող հրաբուխի նման։ «Մատյանը» բոլորի համար է։ Նրա ճառագայթող լույսի տակ ցոլում են, պարզվում մարդկային արատները։ Այնուհետև քայլ առ քայլ հետևում է նա հոգու մաքրմանը։ Եվ վերջապես հիմն է երգում մեղքերից ազատված, մաքրված հոգուն, Ջգիտի, ափսոս չգիտի Գրիգոր Նարեկացին, որ ինքը դառնում է առեղծված, դառնում է հայտնություն, աստվածություն միտող մարդ-արարած, հոգածին Քրիստոս, քանզի տառապանքը նրա մարդու համար է։ Եվ եթե մարդկությունը սպասում է հարությանը Քրիստոսի, ապա «Մատյանի» հեղինակը հարության կարիք չունի, որովհետև...

Թող որ հռչակված հասնի ազգերին, (Մատյանը)
Ժողովուրդներին քարոզի ի լուր,
Տպվի դռներին բանականության
Եվ զգայության սերմերի վրա դրոշմվի ամուր։
Ու թեպետ որպես մի մահկանացու պիտի վախճանվեմ,
Բայց այս «Մատյանի» հարակայությամբ կմնամ անմահ։

Նա գիտի, որ ինքն անմահ է, գիտի, որ «Մատյանն» առաջին երկն է, որ սկզբնավորում է մարդկային ու աստվածային հարաբերությունները։ Գիտի, որ այդ հարաբերությունները ավելի քան հարկավոր են մարդուն, որովհետև զղջացող, ապաշխարող կողմը մարդն է, որ աստծուց պահանջում է մեղքերի թողություն, մաքրվել, ցանկանում է իր կատարելությունը։ Նա աստծուն համարում է պատասխանատու և՛ իր մեղքերի, և՛ անմեղության, և՛ մեղքերի քավման, իր կյանքի վատի ու լավի համար։

... Ազգի մաքրությունը սկսվում է մարդ-անհատից։ Ազգը անհատների հավաքականությունն է։ Եթե մաքուր են անհատները, ազգը հզոր է և նրա ճանապարհը՝ բարձրագնա։ Եթե ազգի ներսում հավաքական մտածողություն չկա և ազգը գերի է մոսթ և անառողջ բնազդներին, ապա նա ազգ կոչվելու առավելություն չի կարող ունենալ, քանզի վերածվում է խառնամբոխի, որը չարիք է դառնում ժողովուրդների և մարդկության համար։ Ազգի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները պարտավոր են խառնամբոխից ձուլելու ազգն իսկական, ինչպես կրակով և տքնանքով ձուլում են ոսկին։ Ես կցանկանայի տեսնել ազգիս ձերբազատված անցավոր և անանց մեղքերից, տեսնել բութ ու մութ, օտար իշխողներից ազատված, ավարի ու ավերի մոլուցքից հեռու։ Փոքր է ազգս հայոց, բայց և մեծ է, քանզի նրա անհատներն են մեծ, երազանքը՝ շքեղ և բարությունն՝ անսահման։ Նա միայն սրով չի բացում կենաց ճանապարհը, այլ մի ձեռքին գրիչն է, որ բռնել է սիրով, մյուսին՝ սուրը, որ կրում է ճարահատյալ։ Եվ հավատացած եմ, որ գալու է ժամանակը, երբ՝

Բռնացողների դավերն ստանան անեծք ու նզովք,
... Զրպարտիչների զենքերը հատնեն,
Ընկնեն սրերը մահ տարածողի...
Ցիրուցան լինեն ուտիճ-ցեցերի տարմերն անպատկառ,
Պառակտված ցրվեն հրոսակները ավազակների,
Քայքայվեն խուժդուժ բարբարոսների հորդաները խոլ,
Քանդվեն ամրոցներն ստամբակների...
Բարձրաձողերը կեղծ դրոշների լինեն ջարդուբուրդ,
Հենց իրենք ընկնեն ինձ համար փորված վիհն անդնդախոր...
Կտրվի կապը միաբանության.
Հանապազաջան ավազակների...

Ես հայրենիքի կենաց համար եմ հյուսում իմ «Մատյանը»։ Ազգի, ժողովրդի կենսունակությունը տեսնելով միասնական մտածողության, հավաքական ուժի, ժողովրդական ազնվության և հավատի ամրության մեջ։ Բախտավոր ու սիրված չի կարող լինել այն ժողովուրդը, որն իր գոյությունը խարսխում է ուժի և բռնության վրա, ստրկացնելու և գերելու վրա, պարտադրելով ազգերին ու ժողովուրդներին իր իրավունքն ու իրավասությունը, տնօրինելու նրա բախտն ու ճակատագիրը, գերելով նրանց և նրանց մտածողությունը։ Փոքր է հայ ժողովուրդը, ինչպես փոքր են ոսկին և ադամանդը։ Ես կցանկանայի դառնալ ձգվող նրա ճանապարհի լույսերից մեկը, թեկուզ մոմի թույլ լույսն ունենայի, թեկուզ լոկ մեկին կամ մի քանիսին հասներ իմ լույսը, որով նրանք կարողանային գտնել գալիքի ոչ հեշտին ճանապարհը։ Հարատևելու միջոցը միայն թրի սրության մեջ չէ, այլ մտքի սրության, ոչ միայն բազկի, այլ մտքի զորության, ոչ թե ջարդելու և ավերելու, այլ կառուցելու և արարելու մեջ։ Ես հավատում եմ հայ ժողովրդին, քանզի քրտինք թափելը նա գերադասում է արյուն թափելուց։ Պաշտպանվելը՝ հարձակվելուց։ Աշխատելը՝ կողոպտելուց։ Գոյատևելը բնական և բանական արդյունքն է այս ամենի, և հայ ժողովուրդը կհասնի հեռավոր գալիքին։ Ցանկությունս՝ ժողովրդիս անմահությունն է։ Նրա անմահությունը նաև իմ անմահությունն է։ Իսկ իմ գործի անմահությունը՝ նրա անմահությունը։ Ներիր, իմ ժողովուրդ, եթե մեծամտություն համարես անարժանիս ինքնագնահատականը։

Անցան օրեր, տարիներ անցան։

Հյուսվեց «Մատյանը»։ Սուրբ գրքի կողքին հաստատապես հանգրվանեց «Նարեկը»։ Հայոց մեծերի կողքին հայտնվեց մեծագույնը։ Եվ որովհետև հոգածին էր, շտապեց և մահը։ Սակայն մահը սխալվել էր։ Գրիգոր Նարեկացու մահն ու անմահությունը տեղի ունեցան միաժամանակ։ Ավարտվեց «Մատյանը», փակվեց վերջին էջն ու հավիտենապես փակվեցին նաև աչքերը։ Հետո անմահությանը գումարվեց նաև սրբությունը։ Սրբացավ։ Եվ նա դարձավ հայոց անմահության պանթեոնի հավերժական բնակիչը։ Անցնում է նա անմահության ճանապարհը՝ առանց երկնչելու ժամանակից, փոթորիկներից ու եղեռներից։ Եվ այսպես մի ամբողջ հազարամյակ։ Առջևում հազարամյակներ, հավերժությո՛ւն...

***

Բանաստեղծը թաղվեց Նարեկի վանքում, Սուրբ Աստվածածին և Սուրբ Սանդուխտ եկեղեցիների արևելյան կողմում։ Նրա գերեզմանը, որ դարեր ու դարեր ուխտատեղի էր, և փոքրիկ մատուռը, որ կառուցված էր նրա շիրմին և միշտ զարդարված մոմերի հրավառությամբ, այլևս գոյություն չունի։ Հիմնահատակ կործանված է և հավասարեցված հողին, քանզի անհամատեղելի են սրբությունն ու թուրքը։ Նարեկից դեպի հյուսիս-արևմուտք, Վանա լճի հարավում խոյանում է մի լեռ, որի վերին ժայռոտ մասում կան եռահարկ անձավներ։ Եվ ավանդությունն ասում է, որ դրանցից մեկում ապրել և ճգնել է Գրիգոր Նարեկացին։ Քարայրից բացվում է Վանա ծովակի աննման համայնապատկերը։ Երևում են Աղթամար և Առտեր կղզիները։ Բարձրաբերձ ժայռից ջրվեժ է նետվում և փշրվում քարերին՝ անկման մեջ հյուսելով ծիածաններ և արթուն պահելով շրջապատը։ Ժողովուրդը նույնիսկ ցույց է տալիս քարայրի հատակի փոսիկները և ասում, որ դրանք Գրիգոր Նարեկացու ոտնահետքերն են ու ծնկահետքերը։ Ճգնակենցաղ բանաստեղծը հեծեծանքներով ու ծնկաչոք մաշել է անձավի հատակն ու աղոթել առ աստված։

Եվ ավանդությունն ասում է, որ Գրիգոր Նարեկացու մարմինը աստվածաբնակ է և հոգին՝ անմահ։ Նա միշտ, այսօր և հավիտյան, ժողովրդի հետ է, ժողովրդի մեջ։ Նրա «Մատյանին» հպվելով բախտավորվում է նորապսակը, չքեր ու ամուլ հարսները՝ լցվում մայրության սրբազան ավիշով, նկունը հաղթում հուսահատությանը, ցավերից ձերբազատվում հիվանդը, լուսավորվում կույրի աչքերը, ցավագարը լցվում չարքերին հաղթելու զորությամբ, հերոսանում վախկոտն ու անարին։ Եվ Գրիգոր Նարեկացին ապրում է, որպես մեծագույն տաղերգու, որպես հրաշագործ բժիշկ, որպես ազգուսույց ուսուցիչ, որպես մարգարե։ Եվ հայոց աշխարհում, այն գյուղում կամ այն տանը, ուր երբևէ հանգրվանել է «Նարեկը», գյուղի կյանքն ավելի բարեկեցիկ է եղել և «Նարեկ» ունեցող շինականն անպայման բախտավոր և ունևոր, որովհետև «Նարեկը» Սուրբ գրքի չափ զորավոր է, հինավուրց վանքի նման սրբազան, և այն տեսնելու, հպվելու, համբուրելու համար ուխտագնացների բազմություններ են այցելել ծնկաչոք՝ նվիրաբերելով ամենաթանկն ու ամենանվիրականը։

Նրանն է ապագան, անմահությունը, փա՜ռք նրան, հավիտյանս հավիտենից, ամե՛ն...

1985—1988, Կիրովական, Երևան

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ՄԿՐՏԻՉ ԴԻՎԻՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Պատմավեպ

Литературно-художественное издание

МКРТИЧ ДИВИНОВИЧ САРКИСЯН

ГРИГОР НАРЕКАЦИ

Исторический роман

Художник **А. Т. Нерсисян**

(На армянском языке)

Издательство «Аревик»

Ереван, 1989

Խմբագրության վարիչ՝ **Ս. Յ. Գասպարյան**
Խմբագիր՝ **Ա. Ա. Ղուկասյան**
Նկարիչ՝ **Ա. Տ. Ներսիսյան**
Գեղ. խմբագիր՝ **Գ. Բ. Խաչակյան**
Տեխն. խմբագիր՝ **Ա. Վ. Հովհաննիսյան**
Վերստ. սրբագրիչներ՝ **Մ. Յ. Խաչատրյան,**
Է. Ա. Սեդրակյան

ԻԲ *275*

Հանձնված է շարվածքի 6.06.89 թ.։ Ստորագրված է տպագրության 14.09.89 թ.։ ՎՏ 00711։ Չափսը՝ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 22,32 պայմ. տպ. մամ., 21,9 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 20.000։ Գինը՝ 1 ռ. 70 կոպ.։

«Արևիկ» հրատարակչություն, Երևան—9, Տերյան-91։

Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան փող. 23/1։

Типография № 6 Госкомитета Арм. ССР, по делам издательств, полиграфии и книжной торговли.

Ереван, ул. Туманяна, 23/1.